91.54
Բ 22

# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

# ԵՐԿԵՐ

# I

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

# АКСЕЛЬ БАКУНЦ

# СОЧИНЕНИЯ

## В ЧЕТЫРЕХ ТОМАХ

## ТОМ I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

Բ-22

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

# ԵՐԿԵՐ

## ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

## ՀԱՏՈՐ

## I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976

Ар 2
Б 22

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱԲԱԲՅԱՆ Ս., ԶԱՔԱՐՅԱՆ Ա., ԻՆՃԻԿՅԱՆ Ա.,
ԻՇԽԱՆՅԱՆ Ռ., ՀԱԿՈԲՅԱՆ Գ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ.

Հատորի խմբագիր
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բնագրերը պատրաստեց և ծանոթագրեց
ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆԸ

115984

Ա $\frac{70303}{703(02)-76}$ 66—75

# ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ գեղարվեստական արձակի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ակսել Բակունցի (1899—1937) երկերի գիտական հրատարակությունը չորս հատորով իրականացվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Նախկինում առանձին գրքերով հրատարակվել են գրողի պատմվածքների մի քանի ժողովածուներ, ինչպես և եղել են երկերի երեք հրատարակություններ՝ երկուսը Երևանում, 1955 և 1964 թթ., մեկը՝ Բեյրութում, 1955—1956 թթ.: Դրանց մեջ չեն ընդգրկված Բակունցի բազմաթիվ ստեղծագործություններ. հոդվածներ, այլ գործեր: Առավել լրիվը 1964 թ. երկհատորյակն է, որ կազմվել է գրողի երկերի՝ 1959 թ. լույս տեսած մատենագիտության օգնությամբ: Սակայն այդ երկհատորյակը ևս շատ պակասներ ունի. նրանում նախ՝ տեղ չեն գտել Բակունցի մի շարք կարևոր գեղարվեստական երկերը, այդ թվում 1910-ական թվականների ստեղծագործությունները, «Հովնաթան Մարչը» և այլն, ապա այնտեղ չկան գրողի գրականագիտական, հրապարակախոսական երկերի մի մասը, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատությունները:

Բակունցի մի շարք երկեր ունեն երկու-երեք տարբերակներ, որոնք երբեմն միմյանցից շատ են զանազանվում. ընդ որում, մի շարք նախնական տարբերակներ գեղարվեստական ուրույն արժեք ունեն և շատ կարևոր են հայ խոսքի մեծ վարպետի ոճական-ստեղծագործական աշխատանքը դիտելու և ուսումնասիրելու տեսակե-

տից: Այդ տարբերակները մինչև օրս մնում էին 1920-ական թվականների տարբեր հրատարակությունների էջերում և հետազոտողների տեսադաշտից դուրս էին մնացել:

Բակունցի երկերի ներկա քառահատորյակը ընդգրկելու է գրողի բոլոր պահպանված գեղարվեստական երկերը, գրականագիտական-պատմագիտական աշխատությունները ու հոդվածները, ինչպես նաև հրապարակախոսական, գյուղատնտեսական գործերի հիմնական մասը: Հրատարակվում են նաև պահպանված անտիպ նյութեր: Առաջին անգամն է, որ Բակունցյան մի շարք երկերի հիմնական բնագրերի հետ ներկայացվում են դրանց տարբերակները, ինչպես և երկերից յուրաքանչյուրին տրվում են անհրաժեշտ ծանոթագրություններ ու մեկնաբանություններ: Բոլոր նյութերը տպագրվում են ըստ բնագրային աղբյուրների: Վերականգնված են նախկին հրատարակություններում կատարված մեծ ու փոքր կրճատումները, վերացված են տեղ գտած փոփոխությունները ու աղավաղումները:

Հատորների մեջ նյութերը տեղաբաշխելիս նկատի են առնվել հեղինակի որոշ հակումները, մասնավորապես պահպանվել են նրա կազմած երեք պատմվածքաշար-ժողովածուների («Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը», «Անձրևը») ամբողջությունը: Դրա հետևանքով մասամբ խախտված է պատմվածքների դասավորման ժամանակագրությունը. օրինակ, 1910—1920-ական թթ. մի շարք ստեղծագործություններ, որոնք գրողը դուրս է թողել հիշյալ շարքերից, տեղ են գտել ո՛չ թե առաջին, այլ երկրորդ հատորում:

Եվ այսպես, հատորները ընդգրկում են հետևյալ նյութերը.

Ա հատոր՝ «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը», «Անձրևը» պատմվածքաշարերը:

Բ հատոր՝ պատմվածքներ, ակնարկներ, սցենարներ:

Գ հատոր՝ վեպեր, վիպակներ. «Հովնաթան Մարչ», «Կյորես», «Կարմրաքար», «Որդի Որոտման», «Խաչատուր Աբովյան» (վերջին երեքից պահպանված հատվածները):

Դ հատոր՝ Վարդան Այգեկցու «Աղվեսագրքի» թարգմանությունը, գրականագիտական, գրա-քննադատական, պատմագիտական, հրապարակախոսական և գյուղատնտեսական հոդվածները ու ելույթները, նամակներ, գրություններ:

Բակունցի երկերի սույն առաջին հատորը բաղկացած է չորս մասից. ա) Երկեր (հիմնական բնագրերը), բ) Այլ խմբագրումներ, գ) Բնագրային տարբերակներ, դ) Ծանոթագրություններ:

Առաջին հիմնական մասն ընդգրկում է հեղինակի 33 պատմվածքները՝ ըստ երեք վերոհիշյալ պատմվածքաշարերի: Այդ շարքերը երեք առանձին գրքերով հեղինակի կենդանության օրոք լույս են տեսել համապատասխանաբար՝ 1927, 1933, 1935 թվականներին: «Մթնաձոր» ժողովածուի պատմվածքներից չորսը՝ «Միրհավը», «Խոնարհ աղջիկը», «Ալպիական մանուշակը» և «Սարուն» հիմնովին վերամշակելով, հեղինակը զետեղել է իր մյուս պատմվածքաշարերի մեջ՝ առաջին երեքը «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուում, վերջինը՝ «Անձրևը» գրքույկում: Ներկա հատորում «Մթնաձոր» շարքի ամբողջությունը պահպանված է ըստ 1927 թ. համանուն ժողովածուի: Հիշյալ չորս պատմվածքները դրված են այդ պատմվածքաշարի մեջ, բայց ոչ 1927-ի խմբագրությամբ, այլ ըստ հեղինակի վերջին մշակումների: Առհասարակ բոլոր 33 պատմվածքները հատորի առաջին հիմնական մասում տպագրված են ըստ հեղինակային վերջին խմբագրումների: Ներկա հրատարակության գլխավոր խընդիրն է եղել հնարավորին չափ անաղարտ ներկայացնել, հեղինակային վիճակում պահպանել բակունցյան բնագրերը, ամեն կերպ խուսափելով «շտկումներից». մասնավորապես չեն փոխված լեզվական առանձին հնացած ձևեր, բառաձևերի անմիօրինակություններ և այլն: Հրապարակվող բնագրերում արված են միայն որոշ աննշան ճշգրտումներ (այն էլ հիմնականում ըստ հեղինակային մյուս տարբերակների), որոնք նշված են ծանոթագրություններում:

Հատորի երկրորդ և երրորդ մասերում ներկայացված են պատմվածքների սկզբնական տարբերակները: Պետք է նկատի ունենալ, որ Բակունցի գրեթե բոլոր այն երկերը, որոնք նախքան հիշյալ երեք ժողովածուների մեջ լույս տեսնելը տպագրվել են թերթերում, հանդեսներում և այլուր, ունեն տարբերակներ: Այլ խոսքով, արդեն հրապարակված որևէ ստեղծագործություն իր այս կամ այն ժողովածուի մեջ մտցնելուց առաջ Բակունցը փոփոխել է: Երկերի մշակման արդյունք հանդիսացող այդ փոփոխություննե-

րը երբեմն շատ են եղել, երբեմն՝ ավելի չափավոր կամ քիչ: Այսպես. պատմվածքների վերջին, մշակված բնագրերի համեմատ ունենք հիմնականում երկու խումբ տարբերակներ՝ ա) հեղինակային հետագա կամ վերջին խմբագրումներից շատ տարբերվող և բ) քիչ կամ չափավոր տարբերվող: Առաջին խմբի տարբերակները, թվով 9, բերված են ամբողջությամբ՝ հատորի «Այլ խմբագրումներ» բաժնում: Երկրորդ խմբի տարբերակները ներկայացված են «Բնագրային տարբերակներ» բաժնում, որտեղ նախնական բնագրերը բերված են ոչ թե ամբողջությամբ, այլ հատվածաբար (միայն այն հատվածները, որոնք տարբեր են հետագա կամ վերջնական խմբագրումների համապատասխան մասերից): Բնագրային հատվածները ներկայացնելու կարգը բացատրված է այդ բաժնի սկզբում:

«Այլ խմբագրումներ» բաժնում տեղ գտած բնագրերից չորսն ունեն ավելի վաղ տարբերակներ, որոնք նույնպես հատվածաբար ներկայացված են «Բնագրային տարբերակներ» բաժնում:

Չորրորդ բաժինը կազմում են ծանոթագրությունները, որոնցում տեղեկություններ են տրվում հատորում տեղ գտած երկերի նախորդ հրապարակումների, տպագրական բնագրերի, երկերի գրության ժամանակի ու հանգամանքների, նախակերպարների, նախապատմությունների վերաբերյալ, նշվում են կազմողի կողմից բնագրերում կատարված մասնավոր ճշգրտումները, ծանոթագրվում են հեղինակի գործածած որոշ անձնանուններ, տեղանուններ, բառեր, հատվածներ այլ գրական երկերից և այլն:

Հատորի այս չորս բաժինները կազմելիս հնարավորին չափ քիչ են օգտագործվել պայմանական հապավումներ:

Պատմվածքների հիմնական բնագրերի ներսում, տողերի վրա որևէ կարգի ծանոթագրությունների թվանշաններ չեն դրված: Տողերը համարակալված են, և բնագրային տարբերությունները, ծանոթագրությունները տրվում են ըստ էջերի և տողերի համարների:

Տարբերակները ներկայացնելիս և ծանոթագրությունները կազմելիս նկատի է առնված ինչպես հայ, այնպես էլ այլազգի դասական հեղինակների ամենանոր և լավագույն հրատարակությունների փորձը:

# ՄԹՆԱՁՈՐ

# ՄԹՆԱՁՈՐ

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում։ Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել։ Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքվա փտած կաղիններ ժողովում։

Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի։ Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում։ Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր։

Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու՝ երբեք չտեսած, մարդուց երկյուղ չունեցող։ Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը, թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց։ Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փախչում։

Բարձր են Մթնաձորի սարերը. դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մըթնաձորի անտառներին։ Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ գիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքով զրնգում է Մթնաձորում։

Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները։ Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թավալգլոր են լինում չոր տերևների վրա, դարան մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի մոտենալը։ Արջը գիտե վարազի ժանիքի թափը, նախահարձակ չի լինում։ Եթե տկար մի խոզ ետ մնա մյուսներից, արջը թաթի մի հարվածով ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լեշը ծածկում չոր ցախով ու տերևներով, քար դնում վրան, փնթփնթալով հեռանում, մինչև լեշը հոտի։

Եթե հանկարծ վարազները լսեն ետ մնացած խոզի ճիչը... Սրածայր թրերի պես շողշողում են ժանիքները, անշնորհք շարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրա։ Կատաղի ձիերի պես վարազները վրնջում են, ժանիքներով ակոսում կաղնու տակ, զարկում ծառի բնին։ Մթնաձորի ծերունի անտառապահը մի գարունքի տեսել է վարազի կմախքը, ժանիքը մինչև արմատը խըրված ծառի բնում, ծառի ճյուղի արանքում արջի սատկած քոթոթին։

Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը։ Մի հրեշ էր նա, անտառապետի տարազով, կակարդով գըլխարկը գլխին։ Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը։ Մեկ էլ, թաքստոցից դուրս կգար, կմռնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթ-

*նում և որջերում մեռում։ Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պես ծռմռատել Պանինի մտրակի հարվածների տակ։*

*Պանինը որսորդ էր։ Վեց շուն ուներ, մեկը մյուսից կատաղի։ Շների հետ որսի էր գնում Մթնաձորի խորքերը։ Ձմռան լուսնյակ գիշերներին, երբ վախից ոչ ոք չէր մոտենում Մթնաձորին, Պանինի շներն անտառի բացատում արջի հետ էին կռիվ կենում կամ հալածում էին խրտնած պախրային։ Պանինը վազում էր շների ետևից, հրճվանքից ճչում։ Գիշերվա որսը նրա համար հարազատ տարերք էր։*

*Առավոտը բացվում էր, ձյունի վրա արյան շիթեր էին երևում, այստեղ-այնտեղ խառնիխուռն հետքեր, խեղդված գայլի դիակ, կոտրատած ճղներ։ Մի փշակի մոտ նստում էր Պանինը, մինչև շները որսի միսն ուտեն։*

*Նա սպանած և ոչ մի կենդանու ձեռք չէր տալիս և շներին կշտացնելուց հետո վերադառնում էր տուն։ Եթե ճանապարհին տեսներ մեկին գողացած փայտը շալակին, Պանինի շները պիտի հարձակվեին նրա վրա, հալածեին, մինչև քափ-քրտինքի մեջ կորած, արյունլվա մարդը կարողանար մի տեղ պատսպարան գտնել։*

*Այսպես էր Պանինը։ Նրա սարսափը հեռուներում էր տարածված, նրա մասին բերնե-բերան պատմություններ էին անում։ Ոչ ոք չգիտեր ոչ նրա ազգությունը, ոչ հավատն ու ծագումը։ Ասում էին, որ նախկին սպա է, մարդ էր սպանել, նստել էր բանտում, հետո անտառ գնացել։ Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, ավելի ճիշտ՝ շներին հրամայել էր գզգզել կնոջը։*

*Այդպես էին պատմում անտառապահ Պանինի մասին։*

* * *

*Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ։ Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից էր հոգում։ Բացատներում միրհավ էր որսում, արտերի մոտ կաքավ*

ու լոր, թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնաձորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի քամակին, մինչև վարազները ջրի գային։

Ավին նշանը ճիշտ էր բռնում, բերդանի գնդակը վարազի ճարպոտ կողքին մեծ վերք էր բացում։ Վարազը թավալգլոր էր լինում, ցավից ժանիքներով հողը փորում, արմատներ պոկում, հետո խռռոցով գետին ընկնում։

Եվ եթե Պանինից երկյուղ չէր անում կամ տեղյակ էր լինում, որ անտառապահը Մթնաձորում չի, չոր ցախերից էլ մի շալակ էր անում, ծածուկ մի տեղ պահում՝ գիշերով տուն տանելու համար։

Այդ օրն էլ նա որսի էր գնացել։ Թարմ հետքեր կային ձյունի վրա։ Ավին մի հետքով գնաց և հենց որ բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ երկու աղվես։ Մինչև կրակելն աղվեսները փախան։ Այդ Ավու համար վատ նշան էր, որսը հաջող չպիտի լիներ։ Մի քիչ էլ ման եկավ, պախրայի հետք տեսավ, փնտրեց ու չգտավ։ Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չպիտի գար (նա լսել էր, որ անտառապահը հիվանդ է), Ավին գերադաս համարեց մի շալակ ցախ տանել տուն։

Իրիկնադեմ էր արդեն, երբ Ավին շալակի ցախը դրեց քարին, նստեց մի կոճղի՝ մի քիչ շունչ առնելու։

Որսի մի շուն երևաց, հոտոտեց Ավուն, անցավ։ Ավու շունչը փորն ընկավ։ Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների ետևից էլ Պանինը։ Ասես գետնի տակից բուսավ։

Մեկի դեմքը քաթան էր, մյուսինը կարմիր ճակնդեղ։ Պանինը թքոտեց, որպես Մթնաձորի արջ։ Եվ երբ բարձրացրեց կնուտը, Ավին էլ մեջքը ծռեց, գլուխը ձեռների մեջ առավ։ Ավուն թվաց, թե Պանինի ձեռքը քարացավ, կնուտը սառեց ձմռան իրիկնապահի ցուրտ օդում։ Պանինը կնուտը ետ քաշեց, և երբ Ավին գլուխը բարձրացրեց, նրան թվաց, թե Մթնաձորում մի սատանա է քրքջում։

Երկընտրանքը տարօրինակ թվաց Ավուն։ Կամ քսան ռուբլի տուգանք անտառից փայտ գողանալու համար,

կամ էլ Մթնաձորի մի արջ սպանել։ Եվ երբ Պանինը մի անգամ էլ կրկնեց իր առաջարկը, շրթունքները ետ տարավ ու խուլ ծիծաղեց, Ավին տեղից վեր թռավ, ցախը թողեց և եկած ճամփով ետ գնաց դեպի Մթնաձոր։ Անտառի և ոչ մի արջ Պանինի տուգանքի գինը չուներ։

Ավին նայեց բերդանի պատրոններին, չուխայի փեշերը հավաքեց գոտու տակ, փափախը պինդ կոխեց գըլխին։ Նա ձյունի վրայով նույնքան թեթև էր քայլում, ինչքան արջը չոր տերևների վրա։

Մի անգամ ետ նայեց Ավին անցած ճամփին. ոչ Պանինը երևաց, ոչ էլ շները։ Լուսնյակը մեծ ձյունագնդի չափ լույս էր տալիս, արտացոլում էր լուսնի լույսը ձյունի բյուրեղների մեջ։ Ավին պարզ տեսնում էր ծառի բները, եկած ճամփան, ընկած հաստաբուն գերանները։

Իջավ ձորը, լսեց թե ինչպես սառույցի տակ խոխոջում է ջուրը։ Ջրի ձայնը նրան հիշեցրեց եռման կաթսան, տունը, վառած օջախը։ Տանը երևի սպասում են արդեն։

Ետևից ճյուղի կոտրվելու ձայն լսեց՝ Թվաց, թե ձյունի ծանրոցից մի ճյուղ ջարդվեց։ Վեր բարձրանալիս Ավին զգաց, որ մեկը հետևում է իրեն։ Ետ նայեց, մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու, ճյուղն ուսին, չոբանի մահակի պես։

Ավին բերդանը մեկնեց, և երբ արջը թքտելով դեն գցեց ուսի փայտը, չորքոտանի դարձավ, բերդանը որոտաց, կրակոցի ձայնին ձորերն արձագանք տվին, ծառի ճյուղերից ձյուն թափվեց։ Արջը ոռնաց։ Բերդանի ծուխի միջից Ավին տեսավ, թե ինչպես արջը մի ոստյուն արեց, թաթերը բերդանի փողին մեկնեց։

Մթնաձորում սկսվեց անհավասար մի կռիվ մարդու և գազանի մեջ։ Արջը թաթովն էր տալիս, աշխատում գետնով տալ մարդուն։ Ավին մի ձեռքով պաշտպանվում էր նրա հարվածներից, մյուսով փորձում բերդանի փողը արջի երախի մեջ կոխել, կրակել մի անգամ էլ։

Ծառս էր լինում արջը ետևի ոտների վրա, ձյուն շաղ

տալիս, ընկնում, բարձրանում։ Հանկարծ արջը բերդանի փողը բերանն առավ, սկսեց կրծոտել։ Ավու ձեռքը սահեց բերդանի վրայով, մատը բնազդաբար սեղմեց կեռ երկաթին, բերդանը մի անգամ էլ որոտաց։ Արջը ոռնաց առաջվանից էլ պինդ, մեջքի վրա ընկավ, գլորվեց, որպես կըտրած գերան։ Սառույցին որ հասավ, կանգնեց ոտքի, փորձեց վեր բարձրանալ։

Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզզաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում։ Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր։ Ավին մինչև վերջն էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ։

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց։ Ավին շատ մոտ զգաց վիրավոր գազանի տաք շունչը, ծռվեց, և երբ արջը թաղվեց ձյունի մեջ, Ավին ետ վազեց, ձյունի մեջ ընկնելով, վեր բարձրանալով։ Արջը հետևում էր նրան։ Ավին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճղները ճանգռում էին դեմքը սուր մագիլների պես, սայթաքում էր, նորից բարձրանում։ Նրան այնպես էր թվում, թե Մթնաձորի բոլոր գազաններն են վազում իր ետևից։

Ծառի մի ճյուղը փշերը խրեց փափախի մորթուն, փափախն ընկավ։ Հենց այդ վայրկյանին նա մի ծանր հարված զգաց մեջքին, բրդոտ մի թաթ ճանկերը խրեց ծոծրակի մորթու մեջ։ Լսվեց մի կրակոց, բայց Ավին ոչինչ չզգաց։

Պանինը սատանայի պես քրքջում էր, ոտքն արջի դիակի վրա։

* * *

Ավին հիմա էլ ողջ է։

Չարհուրանքով կարելի է նայել նրան, երբ փողոցի անցուդարձ անողներից պահված, մի անկյունում քաշված, սրա-նրա համար տրեխ է գործում։

*Ավու Հացին չուխա է, տրեխներ, սովորական մարմին, առողջ ձեռքեր, որոնք շատ վարժ կաշին են ծակոտում, կաշվի թելերից հանգույցներ անում։ Եվ սովորական մարմնի վրա գլխի տեղ մարդկային գանգ, ամբողջովին կլպված, առանց մազի, առանց մորթու։*

*Արջը թաթի մի հարվածով ծոծրակի փափուկ մսի մեջ է խրել սուր ճանկերը և վիրավոր արջի ամբողջ գայրույթով իրան քաշել գանգի մորթին, մորթու հետ էլ գլխի մազերը, ունքերը, աչքերն ու քիթը։*

*Ավին շրթունքներ չունի։ Ոսկորների բաց ճեղքից երևում են ատամները, բաց է քթի խոռոչը, և երբ Ավին համրի պես խոսում է, շունչը քթի խոռոչովն էլ է դուրս գալիս։ Աչքերի խոռոչներում չորացած մսի կտորներ կան, ծառի վրա կիսաչոր. մաշկը ծալ-ծալ եղած ծիրանի պես։*

*Նրա գանգի վրա ողջ են մնացել միայն ականջները։ Նայում ես և չես կարողանում որոշել՝ ծեր է Ավին, թե դեռ երիտասարդ, որտեղից է գալիս նրա ձայնը, դուցե մարդ չէ, այլ խրտվիլակ, դուցե չուխայի տակ կմախք է և ոչ միս ու մարմին։*

*Սակայն նրա ձեռքերին միս կա և մաշկ, մատները վարժ շարժումներ են անում, և երբ Մթնաձորի անունն են տալիս, երևում է, որ ատամներն ավելի է դուրս գցում, կոկորդից ընդհատ ձայներ է հանում։*

*Ու չգիտես՝ զայրանում է, թե ժպտում հին որսորդը…*

115984

# ՎԱՆԴՈՒՆՑ ԲԱԴԻՆ

Գյուղում բոլորն էլ ճանաչում էին Վանդունց Բադուն, գիտեին, որ նրա տունը վերի հանդը տանող ճամփի վրա է, ջաղացներին չհասած, Աթանանց մեծ ընկուզենու մոտ։

Բադին գյուղի տավարածն էր։ Ամենից կանուխ նա էր զարթնում, նրա ձայնն էր հնչում գյուղի փողոցներում։

— Տավարը տարա հե՜յ, ա՛ խալխը, ետանաք ոչ...

Գյուղացիք այնքան էին վարժ նրա կանչին, որքան աքլորի կանչին։ Շատ անգամ ժամանակ որոշելու համար ասում էին, թե՝

— Բադին հալա տավարը տարել չէր, որ ես հանդումն էի,— կամ թե՝

— Հենց Բադին մի բերան կանչեց թե չէ, վեր թռա տեղից։

Բադին ինքն էլ չէր հիշում, թե քանի տարվա տավարած էր։ Նա հենց այն գիտեր, որ խոլերի տարին իրեն զինվոր էին կանչել, մնացել էր գյուղում։ Այն ժամանակ Աթանանց ընկուզենու մոտ ջաղաց դեռ չկար։

Ոչ ոք գյուղի հանդն ու սարը Բադուց լավ չգիտեր։ Անթիվ անգամ նա չափչփել էր Նախրի հետ սար ու ձոր։ Նախիրն էլ էր լավ ճանաչում, գիտեր, թե այս կովն ումն է, թե չալ կովը երբ է սուբահ մնացել, քանի ծին ունի, թե Քարամենց եզան պոզն ինչու է կոտրած։

*Ամեն անգամ նախիրը գյուղից քշելիս Հերիք էր մի անգամ նայեր, որ կարողանար որոշել, թե նախրից որ կովն է պակաս։*

*Երբ երեկոյան նախիրը գյուղ էր դառնում, աղբյուրի մոտով անցնելիս Բաղին էր, որ հարս ու աղջիկներին կըշտամբում էր, թե՝*

*— Պղնձաքարի սարում ավելուկը կանաչել ա, Սանդ աղբյուրի մոտ մոշը հասել...*

*Նախիրը գյուղում ցրելուց հետո, իրիկնապահին, Բաղին փայտին հենած մեկ էլ ետ էր դառնում տուն, Աթանանց մեծ ընկուզենու մոտ։*

*Տանը կինն էր և միակ որդին, որ հասնում էր ջահել տունկի պես։*

*Բաղու կինը, իր պես զառամած մի պառավ, ընթրիք եփելու ժամանակը գիտեր։ Տարիների ընթացքում ամեն ինչ, ամեն օր կրկնվել էր այնքան նման իրար, որ շարժումները մեքենայացել էին։*

*Երբ անիվի պես ճռնչում էր դուռը, և ներս էր մտնում Բաղին, մահակը դնում շեմքին ու հարցնում կնոջը.*

*— Հաթամի աղջիկ, հորթին ջրե՞լ ես...*

*Հաթամի աղջիկը իր կինն էր. հնուց սովորույթ ուներ նա կնոջն այդպես կանչելու։ Այդ սովորույթը մնացել էր այնպես հաստատ, ինչպես հարևան հաստաբուն ընկուզենին։*

*Հաթամի աղջկա պատասխանն էլ միշտ նույնն էր.*

*— Բա չեմ ջրե՞լ...*

*Հետո Բաղին բեզարած մարդու տնքոցով շեմքի մոտ տրեխներն էր հանում, թափ տալիս և շտկում առավոտվա համար։ Իսկ կինը օջախին էր նայում կամ ճրագի պատրույգը շտկում և մաքուր ավլած գետնին փռում թաղիքը հնամաշ։*

*Ապա համեստ ընթրիք՝ պանիր-հաց, եթե լիներ՝ տաք կերակուր, հանդից բերած կանաչեղեն, երբեմն էլ հարևանի ուղարկած մի ազիզ կերակուր, որ տարին մի անգամ կեփվեր Բաղու օջախում։*

Բաղու որդին՝ Հաբուլը, հասել էր այնքան, որ օգնում էր հորը։ Սակայն Բաղին չէր ուզում, որ Հաբուլը հոր փեշակը սովորի։

— Թող գրաճանաչ լինի, որ հետո գերեզմանս չանիծի։

— Կմեծանա, կպսակեմ, տուն ու տեղ կլինի, մի փեշակի ծայր կբռնի, հացի կտիրանա։ Ես էլ ծերության օրերում իր ջրերն ընկած կապրեմ, ոտքերս կդինջանան սար ու քոլ չափելուց։

* * *

Նահապետական վարք ու բարք ուներ Բաղին, միամիտ էր և արդար։ Նա ուզում էր, որ իր որդին էլ այդ ճամփով գնա, հյուրասեր լինի, աղաթ սիրող, մեծին հարգող, գյուղամիջում շենք-շնորհքով մի մարդ։

Մի անգամ էլ հանդում, մի զրույցից հետո, Հաբուլը հորը հարց տվավ, թե՝

— Ապեր, էդ ինչի՞ցն ա, որ մեր նախրում Իսանանք ինը կով ունեն, իսկ մենք՝ մի կով։

Բաղին ժպտաց քթի տակ։

— Բա դու նրանց թա՞յ մարդ ես։ Հերդ մի տավարած, իսկ Իսանանց ողորմած հոգի Ջաքի ապերը պատվով, կայքով մարդ էր։ Գեղը որ մի մեծավոր գար, նրանց տանը վեր կգար։ Ջաքի ապերը մովրովի ժամանակ մեդալ էր ստացել։ Դե տղերքն էլ խելոք են եղել, հոր թողած մեկը երկու են արել։

Տարին բոլոր Բաղի ապերը պահում էր Իսանանց ինը կովը, դրա համար ստանում մի սոմար ցորեն, երեք գըրվանքա շաքար, որ իրենց չէր հերիքում, և մի քիչ էլ փող։

Հաբուլը չէր սիրում, որ հայրն ամեն ամիս տնետուն պտտում էր, տավարածի բաժին հավաքում կամ թե կալին, մի պարկ ուսին, ման էր գալիս կալերում և իր բաժին ցորենն առնում։ Պատվին էր դիպչում, երբ հոր տեղակ ինքն էր ընկնում դռնեդուռ, հաց կամ դրամ հավաքում։

Ամեն անգամ Իսանանց խանութը մտնելիս՝ միջնակ ախպերը մի տեսակ ծաղրով ասում էր Հաբուդին.

— Ամիսը ե՞րբ թամամեց, որ եկար,—կամ թե՝

— Քանի՞ շաբաթ ա քո ամիսը...

Երբեք Հաբուդը չէր կարողանում հաշիվը կանոնավոր տանալ։ Կամ ասում էին, թե տանալիք չկա, կամ էլ, շատ որ համառում էր Հաբուդը, Իսանանց ախպերը բարկանում էր նրա վրա և ասում.

— Դու ինչացո՞ւ ես, հերդ կգա, նրա հետ հաշիվ կանենք։

Հաբուդը գիտեր, որ հայրը խոնարհ մարդ է, լեզուն կարճ։ Ինչ որ ասեին, համաձայն էր, մենակ թե համփա մարդկանց խաթրին չկպչեր։

— Ունևոր են, մենք էլ նրանց շվաքում կապրենք։

Այսպես էր ասում Վանդունց Բադին, տտացած կոպեկները տալիս Հաթամի աղջկան, որ պահի։ Մի օր պետք կգար, Հաբուդի հարսանիք կար, ապագայում տուն տեղ ունենալ կար։

— Հասնում ա հա՜, զատ չի մնացել,—ասում էր երբեմն Բադին իր կնոջն, ու երկուսով կարոտով նայում էին Հաբուդին։

— Թե սաղ մնամ, եկող աշունք հարսանիք եմ անելու։

Հաթամի աղջիկն ասում էր, որ գյուղում սազ աղջիկ չկա, որ պիտի հարևան գյուղից աղջիկ ուզի, տրտնջում էր, թե բան ու գործից ազատ չի լինում, որ մի գնա, տեսնի՝ ում աղջիկն է հարմար։

— Դու որ կարենաս, էս աշունք, քոչը սարովն անցնելիս, մի քիչ բուրդ առ, մանեմ, համ էլ քոլքից մի ձեռք տեղաշոր կարեմ։

Երկու պառավ խելք-խելքի մտածում էին՝ գալիքի մասին, երբ տանն աղմուկ կլինի, եկող-գնացող, խարխուլ խրճիթը կլսի մանկան ուրախ ճիչ։

Երբեմն էլ զրուցում էին, թե ինչ արհեստ՝ տնեն Հա-

բուղին։ Մայրն ուզում էր, որ նա գյուղական գրագիր դառնա կամ ծառայի պրիստավի մոտ, իսկ Բաղին արհես-տի էր կողմնակից։

— Հարամ հացը թող իմ սուփրիս չլինի,— ասում էր նա։ Վանդունց Բաղին գիտեր, որ պիսիրը կաշառք է ուտում, գյուղում նրանից շատ են դժգոհ, չէր ուզում, որ իր մահից հետո իրեն անիծեն։

Հաբուղն էլ համաձայն էր հոր հետ, նա էլ չէր սիրում պիսիր Ավանին, որ որսկան շան պես հոտոտում էր, թե որտեղից կարող է պոկել, երկու խոսք գրելու համար մի հավ առնել։

Պիսիր Ավանը Իսանանց հետ շատ մոտ էր, գնալ-գալ էր անում միշտ և շատ անգամ էլ հենց նրանց խանութում էր գործերը դըստում։

Բայց Հաբուղը թաքուն մի ուրիշ միտք էր անում. գնալ Բաքու, արհեստ սովորել։ Շատ անգամ էր հանգ անում հորից խնդրելու, բայց բերանը չէր զորում մի բան ասելու։

Նա ուզում էր աշխարհ տեսնել, ինչպես ասում էր նրա ընկերը, որ Բաքվում էր աշխատել և հիվանդ լինելու համար տուն եկել։ Նրանք երկուսով նստում էին ժամերով տան կտուրին, ընկերը պատմում էր, թե ինչքան ուժով է մաշինը, թե մի բան կա, որ դարձնես, ճրագը կվառես առանց կրակի, թե ինչպես են նավթ հանում հորից և էլ հազար ու մի բան։

Հաբուղը լսում էր ուշադիր, զգում մի անզուսպ ցանկություն՝ տեսնել այդ ամենը։ Բայց հենց որ տուն էր գալիս, հանգչում էր կրակը բորբոք, հաշտվում էր գյուղում արհեստ սովորելու մտքին։

Մի օր էլ հոր հետ միասին դուրգար Դավիթի մոտ գնացին՝ խերով-բարով Հաբուղին նրա մոտ թողնելու համար։ Ուստան մի քիչ հեմ ու հում արավ, վերջը խոստացավ երկու տարում արհեստին վարժեցնել։

Իրիկունն ուստան եկավ Վանդունց տուն, կերան, խը-

մեցին, դարդ դարդի տվին և այդ օրից դարձան սերտ բարեկամ։

...Կես գիշերից անց էր. չէր քնել ոչ Բադին, ոչ Հաթամի աղջիկը։ Միտք էին անում էգուցվա մասին գոհ ու բախտավոր։ Նրանց կողքին մուշ-մուշ քնել էր Հաբուդը՝ նեղ օրերի ապավենը միակ։

* * *

Մի առավոտ էլ գյուղում անսովոր իրարանցում ընկավ։ Գզիրը կտուրից կտուր կանչում էր զիլ ձայնով։

— Ա՛ խալխը, հե՛յ, թագավորի հրաման ա, ով որ սալդաթ ա էլել, պիտի հավաքվի քաղաքում, կռիվ ա Գերմանու հետ...

Քաղաքից եկողները պատմում էին, որ ամեն տեղ մեծ թղթեր կա պատերին փակցրած, փողոցներում մարդիկ իրար տեսնելիս կռվի մասին են խոսում, շատ զինվոր պիտի հավաքեն, կռիվը շատ տերությունների մեջ է, աշխարհս խառնվելու է իրար։

Գյուղացիք խմբերով հավաքվում էին դուքանի առաջ. գրագետ մեկը սկսում էր լրագիր կարդալ, լսում էր գյուղը անծանոթ անուններ ու վայրեր, քաղաքներ ու տերություններ և բնազդով զգում, որ ճանկռություն պիտի լինի, մեծ կոտորած ու զրկանք։

Իսանանց տանուտեր ախպերն ասում էր, որ կռիվը օգուտ է ժողովրդին, որ ռուսի թագավորի թախտը հաստատ է, ժողովուրդը շատ, և որ շուտով Գերմանի թագավորը հաղթվելու է։

— Սրան Ռուսեթ են ասում, մի տուտը հեն ա Սիբիր, մեկէլը Հնդստան. բա իսկի խան կարա դիմանա՞...

Ալևորներից ոմանք պատմում էին, որ «Եփրեմերդին» այդպես է ասում, գրված է, որ յոթ տերություն իրար պիտի խառնվեն, հացը պիտի թանկանա, թագավորի խարջը շատանա։

Ամենից շատ պիսիրն էր ուրախ։ Նրա շուրջն ստեղծվում էր գյուղի զոռբաների տղերքից դեզերտիրների մի խմբակ։ Նրանք կաշառում էին, չափաբերականը կեղծում, իրենց տեղ ուրիշին ուղարկում, որ իրենք գյուղում մնան, ինչ ուզեն անեն։ Մանր հաշիվների ու հին վրեժների հատուցման լայն ասպարեզ էր բացվել գյուղում։

Քաղաքի պատերից կպցրած թղթերը հուզել էին ճահիճն այն խաղաղ, ուր ամեն ինչ առաջ մեռել էր, և կարծես թե գայլի հետ գառն էր ապրում։

* * *

Հաբուդն արդեն նկատում էր գյուղում եղած փոփոխությունը։ Իսանանց դուքանում ներկերը թանկացել էին, ճոթ ու կտորը պակաս էր երևում, իսկ շաքարը կրակի գին ուներ։

Իսանանց տղերքը ճոթը պահում էին իրենց տանը, որ հետո ծախեն։

— Ճամփեքը փակվել ա. էս ներկերը Գերմանու ապրանք ա, էլ ե՞րբ կճարես դու էսպես ապրանք։

Հաբուդի աչքի գրողը գյուղի պիսիրն էր։ Մի անգամ պիսիրը խաչումենց հարսին, որ գնացել էր ամուսնուն նամակ գրել տալու, փիս խոսք էր ասել, ձեռ տվել, հարսն էլ լացակումած հեռացել էր նրա մոտից։

Գյուղում այդ լուրն իսկույն տարածվեց։ Մի քանի հոգի ուզում էին պիսիրի հախից գալ, բայց տանուտերը սպառնաց.

— Սիբիր կքշեմ նրան, ով կհամարձակվի գեղում խառնակչություն անել։ Դուք գիտե՞ք, թե ինչ տարի ա էս տարին։

Պիսիրը Հաբուդի աչքում է՛լ ավելի ընկավ, դարձավ գեղի վատ մարդը, գեղի արյուն խմողը։ Իսկ Իսանանց դուքանը նա էլ չէր գնում, տանն էլ շաքարով թեյ չէին խմում։

Իսանանց մեծ ախպերն ասել էր, թե գյուղից տավարածի տղան էլ որ սալդաթ գնա, ամեն ինչ լավ կլինի։

Վանդունց Բադին հանդից էր խոսում, թե վանքի ձորում խոտը թաղնել է, ագին ծաղիկ կովը պիտի ծնի, վերի հանդի կամուրջը փլվել է։ Երբեմն էլ պատերազմի մասին Հաբուղից էր հարցնում.

— Հաբուղ, բա էդ գերմանը խաչապաշտ չի՞։

— Խաչապաշտ ա։

— Բա ո՞նց ա միացել Թուրքի հետ։ Աստուծ դա ընդունել չի։

Հաբուղը ժպտում էր հոր միամտության վրա, մտաբերում Իսանանց տղոցը, պխսիրին և նրանց, որոնք հեռավոր դիրքերում կռվում են, ոտ ու ձեռից զրկվում, ցրտից սառչում, թագավորից խաչ ստանում։

Ինչո՞ւ համար այդպես եղավ։ Ինչո՞ւ Իսանանց տնից մի զինվոր չկա, իսկ Խաչումենց Բախչու երեք տղան էլ կռվում են։ Ինչո՞ւ է թանկանում շաքարը, էն ինչո՞ւ քաղաքում ժողովներ են անում, փող հավաքում, էն ո՞նց եղավ, որ վարժապետ Մինասը խումբ կազմեց, գնաց Վան, իսկ գաղթական ժողովուրդը կոտորվում էր սովից, ցրտից։

Մտածում էր Հաբուղը, և նրա անտաշ միտքը մեծ ցավով ճգնում էր պատասխան տալ, հաղթել արգելքներին, պահված գաղտնիքների դռները բանալ։

* * *

Մի օր էլ գժիր Ջաքին եկավ Վանդունց Բադու տունը՝ Աթանանց մեծ ընկուզենու տակ…

— Բարի օր, Հաթամի աղջիկ…

— Հը՛, Ջաքի, խե՛ր ըլնի։

— Խեր ա, բա խեր չի՞, տղադ որ գա, ասի էգուց քաղաք գնա, սալդաթ են կանչում։

Ասես մի մեծ քարով խփեցին Հաթամի աղջկա գլխին. ծնկները դողացին, աչքերը շաշվեց, ու հենց դռան շեմքին վեր ընկավ։

*Իրիկունը տավարածի տունը սգատան էր նման, ոչ հաց, ոչ սովորական զրույց։ Բաղին օջախի մոտ նստել, թրջած տրեխներն էր չորացնում ու միտք անում։*

*— Բա ո՞նց ա լինելու...*

*Բաղին ամեն ինչ կարող էր սպասել, բայց այդ բանին՝ երբեք։ Հաթամի աղջիկը ցնորվածի պես էր։ Նստել էր Հաբուդի մոտ, նայում էր նրան, նայում անկշտում, անլեզու անասունի պես ու միտք անում։ Հաբուդը պառկել էր խսրի վրա, մտածում էր, թե ինչպես պիտի ապրեն ալևոր հայրն ու մայրը, եթե ինքը հեռանա։*

*Այդ իրիկուն ամբողջ գեղի ցավն ասես թառել էր Վանդունց տան գլխին։ Մտքերը—ծա՞նր, անպատասխան, որ որոճում էին երեքն էլ խրճիթի խավարի մեջ, տապըլտկում տեղաշորի մեջ, մեկը՝ տնքում, մյուսը՝ հառաչում ու լալիս, մե՞ղմ, զսպված հեծկլտանքով։*

* * *

*Մյուս օրը Հաբուդը առավոտ կանուխ քաղաք գնաց։ Հաթամի աղջիկը այդ օրը մոռացավ Բաղու թաշկինակի մեջ հաց կապել։ Բաղին էլ չէր նայում, թե տավարը ուր է գնում, կուշտ է, թե սոված։ Նա միայն որդու մասին էր մտածում։*

*— Յարաբ չափսում պիտի գա՞, թե ոչ...*

*Կար մի րոպե, որ Բաղին ցանկացավ Հաբուդին կաղ կամ կռնատ տեսնել, որ տանը մնար։ Բայց հետո ինքն էլ սոսկաց այդ մտքից և հուսահատ աչքերը երկինք ուղղեց։*

*— Աստված, քո ստեղծած խեղճն եմ, դու մի ճար արա։*

*Վանդունց Բաղին մատաղ խոստացավ, եթե որդին զորակոչից ազատվեր։ Բայց այդպես չեղավ։ Հաբուդը չափսում եկավ, ու նրան էլ գրեցին նորակոչիկների ցանկում։*

*Ընկերների հետ տուն եկավ Հաբուդը, որ մյուս օրը նորից քաղաք վերադառնա, իսկ այնտեղից էլ՝ ուր ուղարկեն։ Հաբուդն ուրախ էր, որ քաղաքներ պիտի տես-*

նի, լեզու սովորի։ Բայց հենց որ աչքի առաջ կանգնում էին պառավ ծնողները, ուրախությունն իսկույն չքանում էր, որպես թեթև շամանդաղ։

Չափսի ժամանակ Իսանանց մեծ ախպերն ու պիսիրն իրար հետ փսփսում էին։ Չլինի՞ թե նրանք մի բան խաղացին նրա գլխին։ Եվ դառն ատելությունը ալիքի պես բարձրացավ նրա հոգում դեպի պիսիրը, որ Օհանի հարսին ձեռք էր տվել, որ նամակ գրելու համար հավ ու ճուտ էր ուզում, դեպի Իսանանք և նրանց պես համփա մարդիկ։

Չար լուրը շուտ էր տուն հասել։ Հաթամի աղջիկը շիվար, ձեռքը ծոցին՝ որդուց չէր հեռանում, ձեռքը մի բանի չէր կարողանում տալ, դատարկ էր թվում չորս կողմը, ասես հեղեղը քշել, տարել էր ամեն ինչ...

Հապա Հարութի հարսա՞նիքը։

— Հարո՛ւթ, կռիվը հեռու ա՞ մեր մահալից,—հազիվ զորեց հարցնել մայրը։

Որդին ժպտաց. ի՞նչ ասեր։ Ի՞նչ գիտեր մայրը, և ինչպե՞ս հասկանար նա, որ աշխարհը խառնվել է իրար, ու որդին հազար վերստից ավել պիտի գնա, անցնի քաղաքներ ու հասնի այնտեղ, ուր թոփի ձենից մարդու ականջ է խլանում։

Իրիկունը Բադին տուն եկավ։ Նա իսկույն հասկացավ ու միայն կարողացավ ասել.

— Հարութ, քե մատաղ, բա մենք...

Կեսգիշերից անց էր, ոչ ոք չէր քնել։ Հաթամի աղջիկը որդու կապոցն էր պատրաստում՝ գուլպա ու թաշկինակ, միրգ ու գաթա։ Ամեն մի իր ձեռք առնելիս չգիտեր, թե ուր դնի. արցունք էր, վարար ջրի պես հոսում էր։

Բադին ինքն իրեն սիրտ էր տալիս.

— Թագավորի ծառայություն ա, հնար չկա։ Թագավորի հողից ո՞ւր պիտի փախչես։

— Հարութ, քեզ լավ պահի, շատ ջահելություն չանես։ Օտար երկիր ա, կռիվ ա, ո՞վ ա գիտում ինչ կարող ա պա-

*տահի։ Ուշքդ տանը պահի, նամակ ուղարկի․ հալբաթ մի տեղով մեզ մի լուս կհասնի։*

*Ու ինքն իրեն, քթի տակ խոսում էր Թագին՝ օջախի մոտ, գլուխը կախ, թաց տրեխները ձեռքին։ Հազար ու մի միտք գալիս-անցնում էր նրա գլխով, սրտի խորքից թառանչ էր ելնում, և անարցունք աչքերը ճպճպում էին, որպես մարմրուն ճրագներ։*

*Մյուս օրը Հաբուղը գնաց։*

*Տարան, ճամփա դրին մինչև գյուղի վերջը, ասացին, լաց եղան, համբուրեցին հազար անգամ ու մենակ վերադարձան իրենց խարխուլ խրճիթը՝ Աթանանց մեծ ընկուզենու մոտ։*

*Գյուղի տավարն այդ օրն առաջին անգամ ուշ գնաց հանդ։ Տավարն էլ էր մոլորվել, ցաք ու ցրիվ բառաչում էր Վանդունց տան մոտերքում։*

* * *

*Անցան ամիսներ։*

*Հաբուղից նամակ էր գալիս։ Նրան ճակատ էին ուղարկել, մի անգամ վիրավորվել էր ոտից, պառկել էր լազարեթում, լավացել, ու նորից դիրքերն էին ճամփել։*

*Նամակների մեջ Հաբուղը գանգատվում էր։ Գրում էր, որ զորքը սոված է, շոր չունեն, ամեն շաբաթ մի դիրքից մյուսն են ուղարկում, հաշտության ոչ մի լուր չկա։ Մի անգամ էլ նա գրել էր, թե շուտով արձակուրդ է ստանալու, տուն պիտի գա։*

*Ծնողների ուրախությունն անսահման էր։ Հաթամի աղջիկն այդ նամակը ստանալու մյուս օրը գնաց Իսանանց արտը քաղհանելու։ Նամակն Իսանանք էին ստանում, նրանք էլ կարդում էին ու պատասխան գրում։*

*Հաթամի աղջիկը դրա փոխարեն երկու օր առավոտից իրիկուն անվարձ քաղհանեց Իսանանց արտը։*

*Հաբուղը գրում էր, թե թանկություն է, զորքը մի քանի տեղ կոտրատել է խանութները։ Էլ ուրիշ շատ բան էր գրել նա․ հայրը չէր հասկանում, թե ինչու է այդպես։ Դի-*

սիրն ու Իսանանց մեծ ախպերը զայրանում էին։ Մի նամակի մեջ էլ Հաբուդը գրել էր, թե՝ ապեր, «մենք ինչո՞ւ պիտի կռվենք գերմանացու հետ, մեր ի՞նչ հաշիվն ա»։

— Հայվան, քեզ սալդաթ են ուղարկել, էլ գլխիդ ի՞նչ ես զոռ տալիս,— ասաց Իսանանց տղան նամակը կարդալիս։

Մի օր էլ քաղաքից լուր բերին, թե հեռագիր է ստացվել, որ զորքը հեղափոխություն է գցել, թագավորին թախտից վեր են բերել։ Գյուղը նախ չհավատաց. տանուտերը, պիսիրը, նույնիսկ դզիր Զաքին փեղամիջում բոլորին էլ ասում էին, թե այդ լուրը սուտ է։ Իսկ տեր-Գևորգը, որ սաղմոս ու շարական անգիր գիտեր, համոզում էր, թե առանց չոքան ոչխար չի լինի, ժողովրդին մի գլուխ է հարկավոր, խառնակիչ մարդիկ են այդ լուրերը տարածում, գերմանի ագենտները։

Մի երկու օր անց քաղաքից երկու մարդ եկան, թևերին կարմիր շորի մի կտոր կապած։ Մեկը վարժապետ Մինասն էր, մյուսն էլ մի ջահել տղա։ Վարժապետ Մինասին գյուղացիք ճանաչում էին։

Վարժապետն սկսեց ճառ ասել, թե էլ թագավոր չկա, հիմա ազատություն է, հողը պիտի գյուղացուն տալ, ժողովուրդը սոված է, դրա համար էլ պիտի ջարդել գերմանացուն, կռիվ մինչև վերջ։ Ջահել տղան էլ խոսեց, հետո ընտրություն արին։

Իսանանց մեծ տղան, խաչումենց Օհանը և տանուտերը դառան կոմիտե։ Ժողովրդից մի մարդ ասաց, թե տանուտերին չեն ուզում, արնախում մարդ է, բայց դզիր Զաքին աչքերը նրա վրա այնպես ոլորեց, որ խեղճի լեղին ցամաքեց։ Տեր-Գևորգը վկայեց, որ տանուտերը խղճով մարդ է, ժողովրդին կարեկից ու հոգատար։

Ժողովից հետո նոր կոմիտեն, տերտերը, վարժապետ Մինասը, ջահել տղան, պիսիրը, դզիր Զաքին և էլի ուրիշ մի քանի հոգի Իսանանց տանը ճաշ արին, կերան-խմեցին, երեկոյան դեմ վարժապետն ու ջահել տղան մի քիչ կոնծած՝ վերադարձան քաղաք։

Հաթամի աղջիկն այդ ամենը պատմեց ամուսնուն։ Վանդունց Բադին նախ չհավատաց, թե ջրի խաբար է, ապա ինքն իրեն սիրտ տալ սկսեց.

— Կարող ա կռվին վերջ տան, Հաբուղը տուն գա։

Հաթամի աղջիկը բան չէր հասկանում այդ ամենից։ Նրա ականջին էր հասնում անկապ խաբարներ, լսում էր անհասկանալի խոսքեր։ Քաղաքի մեծավորին բռնել են, բանտ նստացրել, հիմա էլ նորից պիտի սալդաթ հավաքեն. մահ կամ ազատություն։ Թագավոր չկա, հիմա կռիվ կա։

Գյուղի կոմիտեն գործի էր անցել։ Իսանանք իրենց խանութի ապրանքն սկսել էին ավելի թանկ ծախել, ոսկի էին գանձում, պարտքի դիմաց ցորեն ու պանիր հավաքում, ուղարկում քաղաք։

Վարժապետ Մինասը մի անգամ էլ եկավ, ժողով արեց, խոսեց դաշնակցության մասին, մենշևիկին ուշունց տվավ և ասաց, թե ով դաշնակցական չի, նա հայ չի։ Գեղը տեղով մի ձայն տվավ, գրագետները մի թուղթ ստորագրեցին, որ պիսիրն ու վարժապետն էին կազմել։

Վարժապետ Մինասն ասաց, որ շուտով գալու են հողերը չափեն, հարուստից խլեն, աղքատին տան, չունևորին ճոթ ու կտոր են տալու, ամեն գյուղում մի կապերատիվ պիտի բացվի, ամեն գյուղում երկու բժիշկ, երեք ուսուցիչ պիտի լինի,— միայն թե հարկավոր է ձայն տալ դաշնակցականի ցուցակին, որ գնան, մեր ցավերը պաշտպանեն ամենամեծ ժողովում, որտեղ Ռուսաստանի բոլոր ազգերը պիտի հավաքվեն։

Գյուղացիք արին այն, ինչ որ ասում էր վարժապետ Մինասը։ Նրանք ավելի շուտ Իսանանց մեծ ախպորն էին լսում, ուշադիր նրա աչքերին նայում. ո՞վ կարար նրա դեմ խոսել, նրա խոսքից դուրս գալ։ Մեկը նրան ցորեն էր պարտ, մյուսը մի քանի արշին կտոր պետի առներ խանութից, մի գրվանքա շաքար,—ո՞վ էր գժվել նրան հակառակ գնար։

Հարուցից շարունակ նամակ էր գալիս։ Նա ուրախ էր, որ թագավոր է՛լ չկա, բայց գրում էր, թե այդ քիչ է, պիտի այնպես անել, որ ամեն մարդ իր հալալ քրտինքն ուտի։ Հարուցն ուրիշ շատ բան էր գրում նամակում, բայց Իսանանց տղան հորը չէր կարդում։

— Տղադ սարսաղացել ա, Բաղի ապեր, խելքը գլխից թռել ա։

Վանդունց Բաղին երբեք չէր հավատա, թե Հարուցը խելքը տանուլ կտա։ Նա գիտեր, որ որդին աչքաբաց տղա է, ո՞վ գիտե ինչ հաշիվ ուներ Իսանանց տղան Հարուցի հետ։ Նա հենց էն գլխից նրան չէր սիրում։

Հարուցը գրում էր, որ ինքը մի պոլկի կոմիտե է դառել, որ իրենց պոլկն էլ կռիվ չի ուզում։ Իրիկունը գալիս էր տուն, Հաթամի աղջկա հետ խոսում, հարցուփորձ անում, թե գյուղում ի՞նչ են ասում։ Մի իրիկուն էլ Բաղին թե՝

— Հաթամի աղջիկ, լսե՞լ ես, որ ասում են, թե մեր Հարուցը բալշևիկ ա դառել։

— Ի՞նչ...

— Բալշևիկ. Իսանանց տղան էր ասում։ Բալշևիկն էն ա էլի, որ ուզում ա հարուստ քյասիբ խառնի իրար, հավասարացնի։

* * *

Անցավ մի ամիս էլ։

Մի օր էլ Հարուցը տուն եկավ, առանց առաջուց հայտնելու։

Հենց երեկոյան դեմ, երբ մութ էր արդեն, ներս մտավ նա, շինելը ուսին, հաղթանդամ, բեղ ու միրուքով մի տղամարդ։

Վանդունց Բաղու խրճիթն իր հիմնելու օրից այնքան ուրախություն երբեք չէր տեսել։ Հարցուփորձ, գրկախառնումի արցունք և ուրախություն անչափ։

Հաբուզը հայտնեց ծնողներին, որ էլ զինվոր չպիտի գնա, էլ չի ուզում կռվել։

— Թող մի քիչ էլ Իսանանց տղերքը կռվեն։

Երկու տարվա բացակայությունից հետո, անհամար քաղաքներ թափառելուց հոգնած՝ Հաբուզը հանգիստ պառկեց հայրենի խրճիթում, խսրի վրա, պառավ մոր կողքին։

* * *

Մյուս օրը գյուղում ամենքն իմացան, որ Վանդունց Հաբուզը տուն է եկել։

Շատերն ուրախացան, Հաթամի աղջկան շտապեցին աչքալույս տալ։ Բայց Իսանանց տղան ու պիտիրը, մինչև անգամ գզիր Զաքին չուրախացան։

Իսանանց տղան նրանց ասում էր, որ Հաբուզը բոլշևիկ է դառել, նա գյուղում խառնակչություն պիտի անի, ջուրը պիտի պղտորի։ Եվ գզիր Զաքուն անմիջապես հանձնարարվեց հետևել, թե ում հետ է լինում Հաբուզը, ուր է գնում, ինչ է անում։

Առիթը շուտով ներկայացավ։

Գյուղում մի ժողովի ժամանակ, որին ներկա էր և վարժապետ Մինասը՝ քաղաքի կոմիտեն, Հաբուզը մի քանի խոսք ասեց Իսանանց տղի հասցեին։

Ժողով էին արել, որ տուրք նշանակեն քաղաքի կոմիտեի համար։ Վարժապետ Մինասը ճառ էր ասում, թե հեղափոխությունը վտանգվում է, գերմանացիք կաշառք են տվել բոլշևիկներին, որ ռուսաց զորքը քանդեն։ Հարկավոր է բանակը զորացնել, կյանքը զոհել հայրենիքի համար։

— Մեկը ես՝ պատրաստ եմ, երբ ինձ հրամայեն, թողնել տուն ու տեղ, գործ ու պաշտոն, գնալ կամավոր։

Այսպես էր ասում վարժապետ Մինասը և ճառում, կոկորդը պատռում, կուրծք ծեծում, ձեռքերը քամու ջաղացի թևերի պես շարժում օդի մեջ։

*Իսանանց մեծ տղան էլ խոսեց, թե պետք է ազգային տուրքը տալ, այդ սուրբ պարտք է և ավելացրեց, որ խառնակիչ մարդկանց էլ գեղի միջից պիտի հեռացնել։ Գյուղում մի քանի դեզերտիր տղերք կան, որոնց պիտի բռնել և քաղաք ուղարկել, թող թշնամու դեմ կռիվ գնան։*

*— Իսկ դո՞ւ երբ պիտի գնաս,— տեղից կանչեց Հաբուղը, որ մինչ այդ գլուխը կախ լսում էր և զայրույթից շրթունքը կրծոտում։*

*— Ձենդ, շան լակոտ,— որոտաց էն կողմից պիսիրը ու գզիրին աչքով արեց, որ վրա պրծնի։ Եվ մի քանի տղերք, պիսիրի մարդիկ, վրա պրծան, որ ծեծեն, բայց Հաբուղն իզուր չէր մնացել ճակատում։ Մի երկու հատ աջ ու ձախ խփելուց հետո գյուղացիք միջամտեցին և հեռացրին ախոյաններին։*

*Հաբուղը հեռացավ ժողովից, տուն գնաց, մորը հանգստացրեց և գիշերով, երկու հավատարիմ ընկերոջ հետ դուրս եկավ տնից դեպի քաղաք, մորը պատվիրելով, որ ոչ մի մարդու բան չասի, ինքը գալու է էգուց։*

*Այդ դեպքը Վանդունց Բաղու վրա վատ ազդեց։ Նա զայրացավ նրանց դեմ, որոնք օրը ցերեկով ժողովրդի մեջ համարձակվել են իր որդուն ձեռք տալ։ Իսանանց տղան այդ օրից նրա աչքի փուշը դառավ։*

*Մյուս օրը, երբ տավարը հանդ էր տանում, նա ուզեց իր որդու երեկվա ախոյանների կովերը ջոկի տավարից, բայց խիղճը չտվավ. անլեզու անասունն ի՞նչ մեղք ունի։*

*Տավարը քշելիս Բաղին լուռ միտք էր անում, թե ինչո՞ւ Հաբուղը գնաց քաղաք, ի՞նչ թղթեր էր, որ բերել էր նա իր հետ հեռու գիրքերից, ինչո՞ւ նա դժգոհ էր գյուղի կարգերից և հակառակ վարժապետ Մինասին։*

*Հաջորդ օրը Հաբուղը տուն եկավ, մի կտոր հաց կերավ ու սկսեց գրել։*

*— Հաբուղ, հերիք ա գրես, աչքդ գիրը կտանի,— ասում էր մայրը կեսգիշերին, իսկ Հաբուղը շարունակում էր գրել, ջնջել։ Լույսը բացվելու մոտ էր, երբ նա թղթերը ծա-*

լեց, գրեց ծոցում և մահակն առավ, ուզում էր դուրս գալ։

— Ո՞ւր, բալա....

— Հրես կգամ. գնում եմ քաղաք, գործ ունեմ, իրիկունը կգամ։

Բագին խնդրեց, թե մութ է, չար վախտ է, հազար թշնամի կա, սպասի, լուսով գնա։ Հաբուզը մտիկ չարեց։

— Բան չկա, խամ հո չեմ ես ճամփեքից,— ասաց ու դուռը ծածկեց։

Մյուս օրը երեկոյան դեմ գյուղում լուր տարածվեց, թե քաղաքում խառնակություն է եղել, բալշևիկները զորքի հետ միասին վրա են տվել, կոմիտեի շենքը ջարդել, ժողովուրդն սկսել է խանութները թալանել։ Հետո բալշևիկներին շրջապատել են, խմբի տղերքը վրա են տվել բալշևիկի կոմիտեի վրա և բոլորին բանտարկել։

Վանդունց Բագին և Հաթամի աղջիկն անհամբեր սպասում էին Հաբուզի վերադարձին։ Մի քար լռություն կար խրճիթի ներսում, նրանց սրտերում, և ոչ ոք չէր զորում հարցնել մյուսին, թե գուցե մի փորձանք է պատահել։

Հաբուզը չեկավ։ Առավոտ կանուխ իմացան, որ նրան էլ են բանտարկել։

— Բա՛, տեսաք էն շան թուլան. մեր սաղ մահալում վարժապետ Մինասի նման խելոք մարդ չկա, իսկ Վանդունց Հաբուզը՝ տավարածի տղան, նրան հավան չի,— այսպես էր ասում Իսանանց տղան, չարախինդ և ինքնագոհ, առավոտյան, երբ գյուղացիք հավաքվել էին նրա խանութի առաջ։

— Դե հիմա տեսեք թանկություն ով ա գցում, ե՞ս, թե՞ նա։ Մեզ հավան չէր, ա՛ խալխը, դե դուք դատավոր եղեք,—կեղծ անմեղությամբ դիմում էր նա գյուղացիներին։

Եվ հենց նույն օրը շթի գինը մեկին երկու թանկացավ։

* * *

Վանդունց Բադին այդ օրը տավարը չտարավ, գնաց գեղամեջ ու խեղճ-խեղճ հայտնեց, որ քաղաք է գնում իմանալու, թե ի՛նչ եղավ որդին։

— Էն ա բերդումը նստած, ի՞նչ ես դարդոտվում, ա՛յ պառավ,— ասաց գզիր Ջաքին։

Մի քանի հոգի խղճացին նրան, և իրենք տարան տավարը գյուղի։

Շատ տարիներ առաջ էր Բադին քաղաք գնացել։ Նա հիշում էր, որ քաղաքին չհասած խաչի աղենց քարվանսարան կա։ Կգնա, հարցուփորձով կիմանա։

Բայց դեռ գյուղից դուրս չեկած, Բադին իմացավ, որ քարվանսարան էլ է վառվել, որովհետև բալշևիկի ձիանները այնտեղ են կապված եղել։

Ո՞ւմ մոտ գնալ. հենց ուղիղ վարժապետ Մինասի մոտ։ Մեծ մարդ է, քաղաքում կոմիտե։ Կպատմի նրան, ձեռ ու ոտը կպաչի, գուցե Հաբուդին ազատեն։

Բադին քանի քաղաքին էր մոտենում, այնքան ավելի էր զգում, որ ծնկները դողում են, ոտքերը դժվար են առաջ գնում։ Մի երկու տեղ կանգնեց, փափախով ճակատի քրտինքը սրբեց, շունչ առավ ու նորից շարունակեց ճանապարհը։

Ահա և քարվանսարան։ Գերանները դեռ մխում են, սևացած պատերն են մնացել միայն։ Հենց քաղաք մըտնելուն պես Բադին փողոցում տեսավ մեկին, որ թևին կարմիր շոր ուներ կապած։ Ուժ արեց և ոտները քաշ տալով մոտեցավ նրան, խոր գլուխ տվեց։

— Վարժապետ Մինասի կանցելարը ի՞նչ տեղ ա,— հարցրեց։

— Ի՞նչ ես անում...

— Խնդիրք ունեմ, փորձանք է եկել գլխիս...

Ու աչքերում արցունք, Բադին սկսեց պատմել որդու մասին լսածը։

— Հըմ...— արեց մարդը, մատով ցույց տվեց սպիտակ մի շենք, որ այնքան էլ հեռու չէր։

Բաղին այդ շենքին մոտեցավ, բայց ներս չթողին, ասին՝ էգուց կգաս։

— Ախր ես ալևոր եմ, տավարն անտեր ա մնացել, բա իմ որդուց մի խաբար չիմանա՞մ,— ասեց ու նստեց շեմքին, սալահատակի վրա։

Ջռած աչքերով նայում էր չորս կողմ, անցուդարձ անողներին, լսում աղմուկը փողոցի, մտքի մեջ՝ Հաթամի աղջիկը, աչքերը լացակումած, տավարն անտեր, և Հարուդը, որ մի կտոր շիկացած ածուխ էր դարձել, խանձում էր սիրտը, անասելի ցավ պատճառում նրան։

Շենքի ներսից մի մարդ դուրս եկավ, նայեց Բաղուն։

— Դու ի՞նչ ես շնթռկել այստեղ...

— Աղա, ես Վանդունց Բաղին եմ, տավարած...

— Վանդո՞ւնց,— հարցրեց մարդը զարմացած։

Բաղին սիրտ առավ, սկսեց իր ցավը պատմել նրան։ Մարդը լսեց, ունքերը կիտեց, ապա Բաղու խոսքը թերի թողեց, մոտեցավ դռնապանին, կանչեց նրան մի անկյուն, ականջին ինչ-որ բան ասաց, ապա արագ-արագ հեռացավ, ծռվեց դեպի մյուս փողոցը։

Բաղին զգաց, որ մի ծանր հարված պիտի իջնի իր գլխին, կանգնեց մի ակնթարթ, ապա մոտեցավ դռնապանին։

— Քե մատաղ, ի՞նչ ասեց աղեն...

Դռնապանը երեսը մի կողմ շրջեց, շրթունքը սեղմեց, ապա հանկարծ կռացավ և Բաղու ականջին արագ ասաց.

— Որդուդ բերդում կրակել են էս գիշեր...

Դռնապանը հեռացավ։ Բաղին մի պահ սենց քարացավ։ Հետո հանկարծ մռնչաց ցավից՝ որպես գազան վիրավոր, և արցունքի երկու շիթ գլորվեցին խորշոմած այտերի վրայով։

Բաղին վազեց բերդի կողմը, շփոթվեց քաղաքի փողոցներում ու չգտավ բերդը...

Նրան ասացին, որ էլ ուշ է, իզուր է սպասեն։ Եվ գլուխը կախ ետ դարձավ նա եկած ճամփով՝ մենակ ու ձեռնունայն։

Էլ ոչ ոք չկար, ամեն ինչ կորավ։

Բադին հազիվ կարողացավ մինչև քարվանսարան հասնել, ընկավ հենց ճամփի վրա, մի քարի մոտ։ Գյուղացիք իմացան, եկան ու նրան գյուղ տարան։

* * *

Գյուղի գլխով շատ բան անցավ։

Բոլշևիկը նորից եկավ, և վարժապետ Մինասը Թավրիզի ճամփան բռնեց, բայց Արազի մյուս ափին մեռավ։

Բոլշևիկը գյուղ եկավ, ճամփեքը բացվեցին։ Իսանանց դուքանը դարձավ խրճիթ-ընթերցարան։ Իսանանց մեծ ախպերը պիսիրի հետ փախավ Պարսկաստան, և այն օրից մինչև հիմա խաբար չկա նրանց մասին։

Գզիր Զաքին էլ փախավ մոտիկ անտառը և էլ գյուղը չեկավ։ Գյուղացիք չգիտեին, թե ինչ եղավ նրա դին։ Հերու էր, որ երեխեքը անտառում ցախ ժողովելիս մարդու ոսկորներ գտան մի քոլի տակ։ Շատերն ասում են, թե գզիր Զաքու ոսկորներն են։

Վերի հանդը տանող ճամփի վրա, ջրաղացներին չհասած, Աթանանց մեծ ընկուզենու տակ Վանդունց Բադու տունն է։ Բադին է՛լ տավար չի պահում։ Տանը ոչ ոք չունի։ Հաթամի աղջիկը որդու մահից հետո երկար չապրեց։ Վանդունց Բադին մնաց մենակ, իր հին տնակի մեջ։

Նրա աչքերը լավ չեն տեսնում, ջրակալել են։ Ամեն օր շալակով սրա-նրա համար անտառից մի քիչ ցախ է բերում՝ մի փոր հացի համար, իր կյանքի վերջին օրերն է ապրում։

Երբեմն էլ անտառում ցախ հավաքելիս, երբ մի քիչ ծանր է լինում շալակը, իրեն-իրեն թոնթորում է Բադին.

— Աստված, քեզ ի՞նչ ասեմ, որ ինձ տեսար, Նրան տարար։

Իրիկունը տուն է դառնում մենակ, օջախի մեջ մի երկու կտոր աթար նետում և մեկնվում խսրի վրա...

Իսկ դրսում, առաջվա պես Աթանանց մեծ ընկուզենին մեղմորեն օրորում է իր ճյուղերը Վանդունց խարխուլ խրճիթի վրա...

# ԱՔԱՐՈՒՄ

## 1

Աքար գյուղը գեղանիստ է, շրջապատված անտառներով։ Անտառում դարավոր կաղնիներ կան և հին վանքի ավերակներ։ Ծառերի տակով պաղ առու է հոսում, գյուղի փողոցներով անցնելիս աղտոտվում և ներքև, չիմաններում ճահճանում։ Առավոտներն անտառից զովություն է իջնում գյուղի վրա և զովության հետ մայրենու և լորենու մաշկի հոտով հագեցած առողջ օդ։ Բայց արևը կեծանալիս՝ փողոցի աղբակույտերն են հոտում, գոմի բաց դռներից ելնող ամիակով հագեցած օդը չեզոքացնում է անտառի մաշկահոտը։

Աղբակույտում որդերի գլուխը տաքանում է, որդերը համաչափ շարժումով անաչք գլուխները դարձնում են աջ ու ձախ, ասես բոժոժ են հյուսում։

Աքարում կա քոս, արևից քոսը գրգռվում է, մեջքը պատին են քսում կամ դռան շեմքին, քերում ձեռքով, մինչև արյուն գա։ Աքարում աչքացավ կա, և երեխաները արևաքոռ ման են գալիս, աչքերը կարմրած, մի կեղտոտ շոր ճակատին։ Տավարը դաբաղ է ընկնում, կաղալով է քայլում, կճղակների արանքում սպիտակ որդերը ծծում են արյունատար անոթները, և կովի կուրծի մեջ ցամաքում է

կաթը, կովը ցավով է լիզում կճղակները, լեզվով գետին թափում սպիտակ որդերը։

Աքարը հին է՝ անհիշելի ժամանակներից։ Եվ այդ ժամանակներից էլ սովորույթ է մնացել հաճար ցանել ավազահողում, քլունգով փորել ոսպատեղը և կռացած, օրն ի բուն, ձեռքով պոկել ոսպի կարճ ցողունները, ոսպը ծեծել և ձմռան կարճ օրերին օրը երկու անգամ ոսպաճաշ ուտել կամ հաճարը ձավար անել, ձավարը մածնով ուտել։

Աքարն աղքատ է։ Եվ եթե երկու տարի հողերը չվարեն, անտառն իր մեջ կառնի Աքարին, քամին լորենու սերմերը շաղ կտա, թռչունները կաղին կտանեն կտուրների վրա, և հանգած թոնրի մեջ կաղինն իր արմատները կխրի։ Եթե անտառը չլինի, սարից եկող հեղեղը մի գիշեր կսրբի Աքարը, քարերով կջարդի կուժ ու խնոցի, կխառնի իրար տուն ու մարագ։ Հեղեղի երեսին հովանդ կովի հետ միասին տաշեղի պես կլողան սպիտակ որդերը։

Ոչ հեղեղ է լինում, և ոչ էլ անտառն է սեղմում Աքարին։ Հենց որ ոսպատեղում մի շիվ է բսնում, աքարեցու քլունգը շիվն արմատով է հանում և պահում այն հողը, որը լղար կովի պես ցամաք հյութ ունի։

Աքարի քառասուն ծխից մեկն էլ Հանեսի աղջիկ Շահանի ծուխն է։ Թեկուզ Շահանն արդեն տարիքով է և ութը տարվա այրի, բայց նրան գյուղում շարունակում են Հանեսի աղջիկ կանչել։ Գուցե նրա համար, որ Շահանի ածխագործ ամուսինը տարին բոլոր անտառի խորքերում էր ապրում և երբեմն գիշերով տուն գալիս, երեսի մուրը լվանում, մինչև լուսաբաց Շահանի հետ գլուխը մի բարձի դնում, առավոտյան էլ բարձի վրա թողնում մի քանի արծաթ, մինչև նոր գալուստ։ Եվ այդ կապից չորս տարվա ընթացքում երեք աղջիկ էր ծնվել, որոնց շեկությունը Շահանի ամուսնուն հիշեցնում էր իր մանկությունը, երբ դեռ ածխագործ չէր, գառան բուրդի պես մազեր ուներ գլխին։

Մի շաբաթ էլ ամուսինը չեկավ, և երբ Շահանն ան-

տարը գնաց, ածխահորի մոտ տեսավ ամուսնու կայծակնահար դիակը, խանձված, սևացած, ածուխի մի մեծ կտորի պես։ Այդտեղ էլ թաղեցին։ Շահանը շորերը շալակին տուն եկավ, լաց եղավ շորերի վրա, և երբ լացը հանդարտեց, ամուսնու արխալուղի գրպանում երեք աքասի գտավ։

Սեր չկար նրանց մեջ և ոչ էլ ատելություն։ Մի հարկի տակ ութ տարի ապրել էին և այդ տարիներում վարժվել էին իրար, ինչպես ձին է վարժվում ախոռին։ Մի ձմեռ անցավ, կաղնու տերևները կանաչեցին, և երբ Շահանը ուրիշի համար քաղհան անելիս բլրակի գլխից նայում էր անտառի խորքից բարձրացող ծխին, իհարկե, ամուսնուն էր հիշում, բայց կարոտ չկար և ոչ էլ քաղցր հուշ։

Գիշերները դռան կապն էր գցում և աղջիկների գլուխը դնում բարձի վրա, իր մարմնին մոտ առնում ծծկերին ու տաքացնում։ Դարձավ թուխս, փռեց թևերը, և թևերի տաքության տակ աճեցին Շահանի չեկ աղջիկները։ Պիտի մեծանային և սպասեին, որ թևավոր մի տղա առներ առաջնակին, հետո միջնակին, փոքրին։ Եվ ոչ մի թռչուն Շահանի հարկի տակ չպիտի բերեր և ոչ մի շյուղ։

## 2

Ութը տարի անցավ։ Հանեսի աղջիկը հացթուխ էր և քաղհան անող և շալակով ցախ բերող։ Ութը տարի թեժ թոնիրը խաշել էր դեմքը։ Դրանից էր, որ դեմքը փայլ ուներ, զոդած խոփի պես։ Թոնրի մոտից հեռանում էր, մի քանի տաք լավաշ կռան տակ, բաժանում էր աղջիկներին։ Սարյակն էլ կտուցով որդ է բերում, ճտերին տալիս, նրա փետուրներն էլ փայլ ունեն, բայց սարյակը թոնիր չի տեսել։

Ութը տարի Շահանի կալը ցորենի խուրձ չտեսավ, մարագի կտուրին անձրևը փոքրիկ փոսեր արեց, և ջուրը կաթեց գերանների վրա։ Սարդը ոստայն հյուսեց, և մի

ձմեռ էլ մարագի երկու գերանը ձյունի ծանրությունից կըեցին, հող թափվեց մարագում։

Երբեմն Շահանն ուշադիր նայում էր մեծ աղջկան՝ Սանդուխտին, ուզում էր նկատել, թե հասնո՞ւմ է աղջիկը՝ հունցած խմորի պես, ինչո՞ւ ուշ է ձևավորվում մարմինը, շարժումները դեռ մնում են մանկական, հարցերն անմեղ ու միամիտ։ Սրա-նրա հացատանը Շահանը լուրեր էր որսում, և երբ խոսք էր ընկնում աղջիկ տալու և առնելու մասին, Սանդուխտին էր մտաբերում։ Մի տեղ լիներ, տեղաց անել երեսի ջրով, բեռը թեթևանար, մնացած երկուսի մասին մտածեր։ Հանկարծ ոչ ոք չուզեր, աղջիկները դեղնեին սերմացու վարունգի պես և անպտուղ մնային նրանք։ Բայց չէ՞ որ շնորհքով էր Սանդուխտը, ամոթխած ու խոնարհ, աչքերը՝ կտավատի կապույտ ծաղիկներ։

Եվ մի օր էլ, երբ Ղազախի Օհանը փողոցում Շահանից ուզեց Սանդուխտին իր որդու համար, ոչ մի խոսք չասաց կտավատի կապույտ ծաղիկների մասին, հարցրեց, թե Սանդուխտի հետ կալն ու խանգարված մարագը կտա՞ Համեսի աղջիկը։

Երեկոյան միտք արեց, գնաց եղբոր հետ խոսեց։ Եղբայրն էլ համաձայն եղավ։

— Ինչի՞ դ ա պետք մարագը։ Դրանից էլ լավ տեղ...

Հոր տնից վերադարձավ, դարձյալ միտք արեց՝ Եվ Սանդուխտը չհասկացավ, թե ինչու մայրը նրա մազերը շոյեց, հետո կռացավ ճակատը պաչեց։ Թարմ լավաշի հոտ էր գալիս մոր ծոցերից, և երբ Սանդուխտը աչքերը կիսաբաց արեց՝ տեսնելու մորը, զարմացավ, թե ինչքան շատ փող ուներ նա։ Երդիկից լուսնի կաթնագույն շողքն էր ընկել, և Շահանի բաց արծաթների վրա շողքն էր ցոլցլում։ Սանդուխտին մեջ դեյրացու առնելու փողը կար, մի քիչ էլ ավել։

Մյուս օրը, երբ Ղազախի Օհանը կնոջն ուղարկեց աղջկատես, Շահանը Սանդուխտին լվաց և խնամքով հյուսեց

շեկ ծամերը։ Օհանի կինը հավանեց Սանդուխտին։ Նատում մտնելուց առաջ կալն ու մարագն էլ էր նայել։

Օրը շաբաթ էր, երբ Ղազախի Օհանը, տղան, Շահանն ու Սանդուխտը գնացին զագսում գրանցելու ակտը։ Կալ ու մարագի վաճառման թուղթը նախորդ օրն էին պատրաստել։

Սանդուխտը նոր դեյրա ուներ։ Երբ քամուց փոփռում էր դեյրայի տուտերը, սիրտն էլ հետը լայնանում էր։ Բայց Օհանի տղին նայելիս իսկույն ընկնում էր հաճույքի ալիքը, ետ էր քաշվում, պատյանի մեջ մտնում, ինչպես խխունջի շոշափուկները։ Մութ և անորոշ կասկած կար նրա սրտում, կասկածի հետ և ուրախություն, որ մոր փեշից բռնած եկել է բավական ճամփա, Աքարը թողնելով անտարի ետև։ Աշխարհն ի՞նչ մեծ թվաց նրա համար, դիմացի սարերը մոտիկ։

Եվ եղավ անսպասելին։ Բժիշկը ներս կանչեց Շահանին ու Սանդուխտին, աղջիկն ամաչկոտ շարժումով դեյրան հանեց, բժշկի աչքերն ակնոցների միջով տեսան վտիտ ուսերը, տափակ կուրծքը և ձյունի պես սպիտակ մարմինը։ Շահանը փորձեց ստել, թե հասած է, տեղտերն է սխալ գրել, Սանդուխտը հիվանդ է եղել, դրա համար էլ մարմինը չի հասել, բայց բժիշկն օրենքից էր խոսում և համոզում, որ աղջկա համար վատ կլինի։

Սանդուխտը հասկացավ, և երբ կոճկեց դեյրան, չուստերը հագավ, մոր փեշից բռնեց դուրս գնաց, տեսավ, թե ինչպես բժիշկը օրորեց գլուխը։ Դռան մոտ Շահանը բարկացավ աղջկա վրա, որ փեշից է բռնում ծծկերի պես։

Ղազախի Օհանն օրենքի մասին լսեց, ունքերը վեր քաշեց, մեկ էլ աչքերը փոքրացրեց։ Հենց այդ վայրկյանին նա որոշեց օրենքը զանց առնել, թռնել վրայով, որպես բարակ մի առու, կողպեք կախել Հանեսի աղջկա մարագի դռնից։

Ճանապարհին Սանդուխտն առաջից էր գնում, Շահանն ու Օհանը միասին, Օհանի տղան ետևից։ Մանրաշարժ ու ծանրամիտ էր Օհանի տղան, ոսկորը պինդ։ Խո-

տելիս պռոշը կախում էր. դրա համար էլ պռոշի մի անկյունից ծլուլն էր թափվում, որպես կտուրի նովդան։ Նայում էր Սանդուխտին, զոլավոր դեյրին, և ծլուլն ավելի շատ էր թափվում պռոշի նովդանից։

Շահանը ճանապարհին պատմեց բժշկի ասածը սպասելու մասին։ Բայց Օհանը կտրուկ հայտնեց, որ սպասել չի ուզում։ Աքարում աղքատ աղջիկ շա՞տ, ավեր կալ ու մարագ լի։

— Թող ապրեն, որ հասակն առավ, էն ժամանակ տանենք զագս. օրենքն ի՞նչ պիտի իմանա։ Դու հիմա պայմանը կապիր...

Այդպես էլ արին։ Սանդուխտին լացով ու խաբելով տարան, մայրը մինչև լույս մնաց նրա մոտ, խոստացավ ամեն օր գալ, ծեծով սպառնաց, մայրն էլ լաց եղավ։ Լուսադեմին Սանդուխտը կոտրեց իր խոսքը և վախով նայեց Օհանի տղին, որ ցորենով լի ջվալների մոտ պառկել, խռմփացնում էր։

Հաջորդ գիշերն էլ լաց եղավ Սանդուխտը, բայց գլուխը խոնարհեց Օհանի տղի հետ մի բարձի վրա։ Լուսաբացին սփրթնած, արցունքն աչքին մոր մոտ վազեց, փաթթվեց նրան, բայց մայրը ետ բերեց, դարձյալ համոզեց։

Ղազախի Օհանը նորոգել էր կոտրած գերանները և ջար թափել Հանեսի աղջկա կալ ու մարագի մոտ։

## 3

Չորս ամիս անցավ, Աքարի պատմության համար չորս վայրկյան էլ չէր անցած ամիսները։ Էլի հաճար էին ուտում, իսկ նորոգած մարագը մատնաչափ չէր էլ փոխել գյուղի ընդհանուր տեսքը։

Սանդուխտը հաշտվել էր վիճակին, անխոս էր մնում, եթե հարց տային, գլխի շարժումով էր պատասխան տալիս։ Թվում էր, թե ոչ միտք ունի և ոչ էլ ցանկություն, լի-

մոնի տրորված կճեպ է. անշունչ մի իր: Ինքն իր մեջն էր ամփոփվել, հայրական տունն էլ չէր գնում:

Եվ հանկարծ զգաց, որ կրծքի տակ մի բան է շարժվում: Վախեցավ, ձեռքը սրտին տարավ, հանգստացավ: Թվաց, թե ջրի մի կում շարժվելով կորավ կրծքի տակ: Մի քանի օրից հետո նորից շարժվեց, և մի կասկած սողաց այդ շարժումի հետ:

Սանդուխտը մայր պիտի դառնար: Մարմինը լարում էր բոլոր մկանները, հավաքում բոլոր հյութերը, արագորեն զարգանալու և հարմարվելու նոր վիճակին: Նա նմանվում էր խնձորենու մի ճյուղից կախված փոքրիկ խնձորի, որին արևը կարմիր գույն էր պարգևել, բայց նիհար ճյուղը հյութ չէր հասցրել, որ մեծանա, հասունանա:

Ջրի գնալիս՝ մանկամարդ մի ուրիշ հարս Սանդուխտին սովորեցրեց, թե ինչպես են վիժում: Սանդուխտը նախ վախեցավ, բայց հետո, երբ կուժը տեղը դնելիս կռացավ ու նորից կրծքի տակ շարժվեց, մի վճռականություն եկավ վրան:

Կատարեց այնպես, ինչպես հարսն էր պատվիրել: Սոված մնաց երկու օր, երրորդ օրը դեղին ծաղկի ջուր խմեց և երբ փորում անասելի ցավեր զգաց, շրթունքներն ու փոքրիկ բռունցքները ցավից սեղմելով, աննկատ վազեց գոմը, դուռը դրեց: Ցավը թնդելիս պիտի քարով խփել փորին...

Երեկոյան նախիրը հանդից տուն եկավ: Ղազախի Օհանը գոմի դուռը բաց արեց, հենց դռան մոտ արյուն տեսավ և հարսին՝ ուշաթափ ընկած:

Սանդուխտին տուն տարան: Լուսադեմին արյան վերջին կաթիլի հետ թռավ և նրա շունչը:

Շահանը լաց եղավ գերեզմանի մոտ էլ, տանն էլ: Այդ գիշեր նրա ծամերից մի փունջ սպիտակեց:

# ԱՑՈՒ ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ...

Առաջին աքլորականչի հետ զարթնում էր Պետին, տրեխները հագնում, տան առաջ հոսող առվակի ջրից մի երկու կից անում, երեսը լվանում, փափախով սրբում ու գեղի ծայրին կանգնում, որ կովերը դուրս անեն, ինքը սարը տանի պահելու։

— Ջառի աքիր, շատ ես կթել, հեյվանը մեղք ա, ջան չունի,— ասում էր Պետին պառավ կնոջ, որ մի տուն լիքը մանուկներ ուներ և մի կով։

— Ճար չունեմ, Պետի,— ու տնքում էր Ջառի բիբին, պառավ կովն առաջ արած։

Խնամողի աչքով էր Պետին նախիրին նայում։ Մի նայելուց իսկույն հասկանում էր, թե որ կովն է գիշերն անհանգիստ եղել, որն է շատ քաղցած։

Եվ երբ վերջի կովերը բերեին, մահակը ճոճում էր օդում ու զիլ կանչում.

— Հո՜, մարալ...

Պետին հնուց նախրապան էր։ Նա աչքը տավարի մեջ էր բացել։ Երբ երեխա էր, հորթերն էր պահում, իսկ հետո գեղի նախիրն էին տվել։

Ոչ ոք չուներ։ Դեռ հորթարած էր, երբ մայրը մեռավ, և Պետին մնաց կատարյալ որբ։ Գյուղն էր նրան պահում. մի օր մեկի տան, մյուս օր մյուսի գոմում կամ մարագում քնում էր մինչև լուսաբաց և էլի վեր կենում, նախիրը քշում։

Իր հայրական հին տունը խանգարվել էր, կտուրը խոնարհվել, գերանները օջախի ծխից սևացած կախվել էին, կտուրի հողն ու քարը թափել ներսում։ Վայրի կանեփը փարթամորեն աճում էր տան ավերակների վրա, և հարևանի հավերը քուջուջ անելուց հետո պառկում էին կանեփի շվաքում։

— Պետի՛, ա՛յ անժառանգ, բա ե՞րբ պիտի հորդ ամարաթը շինես,— հարցնում էին նրան։

Պետու ծաղկատար դեմքը ժպտում էր, հատ ընկած աչքը ծռում էր ու բերանը ձգում, ուսերը վեր քաշում։

— Սաղ գեղն իմ տունն ա.— կասեր, և մահակը էլի կճռճար օդում։

Երբ չուխան պատռում էր կամ արեխի թելն էր կըտրում, շալե շալվարի հին կարկատանները մաշվում ու մաշոտ ազդրերը բաց անում,— Ջառի աքիրն էր միշտ հանդիմանում, թե ինչու կնիկ չի առնում, հոր հանգած օջախը շենացնում։

— Պետի, փուչ մնացած, կարողությունդ ո՞վ ա ուտելու...

Հանդիմանում էր Ջառի աքիրը և չորացած աղբյուրի ակունքի պես աչքերը կկոցում, բրդի թելը, ոսկրոտ մատները դողացնելով, ասեղի ականջով անցնում և կարկատում Պետու շալվարը շալի։

Գեղի հարսներն էլ էին ծիծաղում Պետու վրա, բայց նա նեղանալ չուներ։ Ժպտում էր, և ճերմակ ատամների շարքը փայլում էր մուտ շուրթերի միջև։

Մի կաղ, ձեռքի մեկը չորացած պառավ աղջիկ կար գեղում, որ սրա-նրա փռած ցորենն էր պահում կամ կտուրի վրա մեկնած չորաթանը։ Աղջիկները նրան «Պետու հարս» էին ասում և ծիծաղում, իսկ պառավ աղջիկը, կաղ և ձեռքը չորացած, ունքերը կիտում էր, զայրանում, հայհոյում և հետո էլ ժպտում ամոթխած։

Մի միտք, որպես ամպի ճերմակ քուլա ամառվա լազուր երկնի վրա, ցանկալի մի միտք լողում էր հանդարտ պառավ աղջկա ուղեղում.

— Եթե այդպես լիներ, Պետին իրեն ուզեր...

Մարագում, դարմանի վրա պառկած, գիշերով հանկարծ Պետու միտն էր գալիս աղջիկների ծիծաղը, Զառի աքոր խոսքը, թե՝

— Կնիկ ա՞ռ, այ փուչ մնացած։

Միտքը ման էր ածում գյուղի ծանոթ տներում, աղջիկներին վերհիշում։ Մի պահ թվում էր իրեն, որ լավ կլինի, եթե կնիկ ունենա, իրիկունը տուն գա, մեկը լինի, որ տաք ապուր եփի և տեղաշորը փռի։ Բայց համար աղջիկ չէր գտնում։ Չէին տա, գեղում իրենից լավ և ունևոր մարդ շատ կար։

Մարմինը եռում էր, քոր էր զգում և քնաթաթախ երկար եղունգներով քորում էր մարմինը, ինչպես եզն է քորում վիզը՝ մի հաստ քարի կամ սյունի քսելով։ Միտն էր բերում և կաղ աղջիկը պառավ, և հետո միտքը մեղրաճանճի պես թռնում էր ուրիշ ծաղկի վրա, շնչում նոր բույր։

Եվ այդպես էլ մնաց։

Տարիներ անցան, տարիների հետ ջահելությունն էլ անցավ, և աշնան խոտի պես չորացավ տուն դնելու, կնիկ առնելու միտքը թաքուն։

*

* * *

Բացվում էր գարունը, հալոցքն էր սկսվում, և առվակներով ձյունաջուրը կչկչալով հոսում էր։ Գարնան արևը մեղմ տաքացնում էր գետինը, և ձմռան երկար գիշերներից բեզարած գյուղացիք արևկող էին անում, նստում պատի տակ, մի չոր գերանի վրա և զրուցում։

Բացվում էր գարունը, և գոմերում տավարը տաքից նեղվում էր, անհանգստության նշաններ էր ցույց տալիս, շուտ-շուտ դռան կողմը նայում և բառաչում լիաթոք։ Մոզիները գիժ և արջառները խամ ջրի տանելիս թռչկոտում էին ձյունի վրա, պոզահարում իրար։ Բուղաները չաղ, մսոտ ազդրերով, իրենց թաց ռունգերով գարնան տաք օդում

դուրեկան հոտ էին որսում, բառաչում և ոտքերով չլապինդ կիսահալ գետինը փորում։

Անհանգիստ էր և Պետին։

Տաքը նրան էլ էր նեղում, ավելի շատ էր քորում մարմինը և շուտ-շուտ նայում Այու սարին։ Սարը նրա նշանն էր։ Գարնան արևը հալցնում էր ձյունը Այու սարի, և կողերը քարոտ սևին էին տալիս։

Երբեմն գյուղի մոտակա հանդն էր գնում, ոտով ձյունը դեսուդեն հրում և տեսնում, որ նոր ծլող բեղի պես կանաչ խոտը ցցվել է ձյունի տակ,

Կենդանական մի հաճույք էր ապրում Պետին գարնան սկզբին։ Ձյունաջրի առվակների պես նրա երակներում արյունն ավելի էր եռում և ծիծաղում էր, կոկորդային ձայներ հանում։ Այդպես ախորժով վրնջում է ձին, երբ ախոռը ոսկեհատ գարի են լցնում։

Պետին գարնան պատրաստություն էր տեսնում, տրեխներն էր կարկատում, պարկի քուղերն էր ամրացնում, ուսին գցելու հնամաշ կարպետն էր փռում արևի տակ։

— Պետին կարպետն արևին է տվել,— ասում էին գյուղացիք, և այդ նշան էր, որ մի քանի օր հետո տավարը հանդ է գնալու։

Հոգատար մոր պես Պետին գոմից գոմ էր գնում, դիտողություն անում կովատիրոջ, որ այս կովին շատ կեր տա կամ գոմը տաք պահի։ Եթե մեկը կովի ծնելու ժամանակն էր ուզում իմանալ, Պետուն էր հարցնում, թե կովը երբ է բուղով եկել։

Պետին գիտեր, թե այս հորթը որ բուղից է, կամ այս կովը դժվար է ծնում։ Կովը ծնելիս նա անպատճառ պիտի գլխավերևը կանգներ, օգներ կովատիրոջ։

Եվ երբ լորձունքոտ հորթը թաց կոպերը հազիվ էր կարողանում շարժել, Պետին էր մաժում քիթ ու պռունգ կամ կովին շոյում։

— Ջան, հեյվանը շատ տանջանք ա քաշել... Համա տես է, էս էն ալա բուղի հորթն ա հա՞։



409—4

Կովը ծնելուց տան տերը մի բան պիտի տար Պետուն, մի հին արխալուղ, մի աման կաթնով կամ խոստանում էր կալին մի կոտ ցորեն։ Պատահում էր, որ կովը հանդին էր ծնում։ Նախիրը բերելիս Պետին հորթը ուսին էր դնում և նախիրն առաջ արած գյուղ մտնում։ Այսպիսի օրերին ժպիտն անպակաս էր նրա դեմքին։ Գիտեր, որ բարիք է շալակին տանում և ուրախություն կովատիրոջ համար։

Նախիրը հանդ տանելուց մի քանի օր առաջ նա իմաց էր տալիս, որ պատրաստվեն։ Ու ինչքան շատ նորություններ էր պատմում առաջին օրերին, երբ գյուղ էր վերադառնում։ Ձյունը հալվել էր, և ձյունի տակ մի կմախք կար ցցված։ Պետին մոտենում էր, նայում և որոշում, թե այդ այն ոչխարն էր, որ ձմեռը գայլը գյուղից տարավ։

Օրերն ավելի էին տաքանում, կանաչը բույս էր քաշում, բացվում էին ծաղիկները՝ կապույտ, դեղին, կարմիր, հազար բզեզ ու թիթեռ էին թռչում, մասուրի թփերի վրա ծիտն էր բույն հյուսում, և նախիրը փնչոցով արածում էր խոտը համեղ։

Պետու համար գարունը երջանիկ օրեր էր բերում։ Տարիներ շարունակ նույն հանդում ու սարում տավար պահելով՝ նա այնքան էր վարժ խոտին ու ծաղկին, որ անսխալ կարող էր ասել, թե որ ծաղիկն է կանուխ բացվում, որ խոտն է ցավի դեղ։

Երբեմն երբ նրա աչքին էր ընկնում մի շքեղ բզեզ կամ թիթեռ գունավոր թևերով կամ դիտում էր, թե ինչպես են մրջյունները աշխատում հերվա բույնը սարքելու,—Պետին գլուխը երերում էր և ինքն իրեն խոսում.

— Փառքդ շա՜տ, ա՛յ աստված, որ էսպես հրաշք բաներ ես ստեղծել...

* * *

Մի ամառ էլ տավարի մեջ ցավ երևաց։ Ագին ծաղիկ մի կով առավոտ նախիրը քշելիս միշտ ետանում էր մյուսներից, կանգնում ճամփի կիսին, թնչում։ Պետին զայրա-

ցավ, մահակով մի անգամ խփեց, բայց մինչև սարի տակը կովը չկարողացավ գնալ։

Պետին տեսավ, թե ինչպես կովի ոտքերը դողացին, ծոքեց փնչոցով և էլ վեր չկացավ։ Քթածակերից արնախառն թարախ էր գալիս, փորն ուռել էր, և հիվանդ կովը, որի ջուխտ աչքերում մի կսկիծ կար, նայում էր Պետուն։

Պետին շիվարել էր։

— Ի՞նչ եղավ սրան, յոնջա տված չլինե՞ն...

Դանակը հանեց, որ արյուն առնի, ականջի ծայրերից պատռեց մի քիչ։ Կովը ցավից գլուխը ձգեց, փորձեց կանգնել, բայց ոտքերը դողացին։ Տաք արյան շիթերը ցայքուն տվին կանաչի վրա, բայց հետո արյունը լերդացավ, իսկ կովը շլավացավ։

Պետին գնաց, որ ջուր խմի մոտակա աղբյուրից, ցրըված նախիրը հավաքի ձորի մոտ։ Եվ երբ վերադարձավ, կովն արդեն սատկել էր։ Արնախառն թարախը քթից թափվել էր, լեզուն կապտել, սառել ատամների արանքում, փորն էլ ուռել էր՝ ձգված թմբուկի պես։

Պետին նոր գլխի ընկավ, որ «սև ցավ» է։ Երեկոյան գյուղում էլ ուրիշ խոսելիք չկար։ Բոլորի դեմքին էլ տըխրություն կար. հարցնում էին իրար, թե որտեղից կարող էր ցավը պատահած լինի, շուտ-շուտ նավթի ճրագներով գոմ էին գնում, նայում ապրանքին։

Ասես սառը ջուր էին մաղել Պետու գլխին։ Իրեն կորցրել էր, շիվարել։ Մտքով հազար ու մի բան էր անցնում, թե ինչու համար ցավը պատահեց։

Ջառի աքիրն էլ մի կողմից էր կրակին յուղ ածում.

— Պետի, ցավը տվովի ա, փորձանք ա լինելու գեղում։

Եվ Պետին ավելի էր մտածում «փորձանքի» համար, բայց ավելի շուտ վախենում էր բժշկից, որ տարիներ առաջ մի անգամ էլ էր եկել գյուղը, տավարի ցավի ժամանակ։

Մյուս օրը երկու կով էլ սատկեց։ Լուր եկավ, թե հարե-

վան գյուղում էլ է կով սատկել։ Իսկ երեկոյան դեմ գզիրը կտուրներից ձեն էր տալիս, որ վաղը քաղաքից տավարի բժիշկ է գալու։

Պետին մեջքը դեմ էր արել գոմի դռան, հենվել մահակին, գզիրին էր լսում։ Միտն ընկավ Զառի աքոր խոսքը, թե՝

— Պետի, գեղի վրա փորձանք ա գալու։

Այդ իրիկուն նա բերանը մի պատառ էլ չդրավ։ Կոլոլվեց կարպետի մեջ և պառկեց հերվա չոր խոտի վրա։

Առավոտյան Պետին մոլորվածի պես էր։ Նրա կյանքի սովորական ընթացքը խանգարել էր հանկարծակի երևացած ցավը։ Օրվա այդ ժամին նա շատ քիչ էր գյուղում եղել և անվարժ էր իրեն զգում, ման էր գալիս գոմից գոմ, ապրանքին էր նայում։ Իսկ ապրանքը գոմերի առաջ կապոտած բառաչում էր սարի կանաչ խոտի համար։ Եվ տավարի ամեն մի բառաչը ցավ էր ազդում Պետու սրտին։

Օրը ճաշ էր դարձել, երբ երկու պահակի հետ բժիշկը գյուղ եկավ։ Պետին տեսավ նրան ձիու վրա, պսպղան ակնոցները աչքին, փայլուն կակարդը ճերմակ գլխարկի վրա։

Պետին տեսավ և ճանաչեց նրան։

Տավարը հանեցին գյուղի վերև, մի ընդարձակ կալ, կապոտեցին առաջուց պատրաստած բիհերից։ Տավարը նեղվում էր շոգից, բառաչում էր սարի կանաչի համար, իսկ տավարատերերը գլուխները կախ, ձեռները ծոցին կանգնել էին, ամենքն իրենց տավարի մոտ։

Եկավ և բժիշկը, պահակներին ուղարկեց, որ գոմերում փնտրեն, թե չկա՞ թաքցրած ապրանք։ Եվ պահակները որսի շան հոտառությամբ գոմերն ընկան։

Նրանցից մեկը, որ կես արշին բերան ուներ, մեկի գոմի դուռը բաց անելիս աչքին ընկավ շաղ աքլորը, աղբում քուչուչ անելիս։ Տեսավ աքլորին, կես արշինանոց բերանը ջրակալեց և թռավ աքլորի մի թևը պոկեց, արնակոլոլ աքլորը խուրջինի մեջ կոխեց։

Տան տերը կանչեց, աղաչեց, բայց նա սպառնաց, թե

բժշկին կասի, որ ապրանքը փախցրել է ուրիշ գյուղ, սպառնաց և անհարկու բռունցքը մոտեցրեց գյուղացու քթին։

Մի գոմում գտան թաքցրած մի կով, դարմանով լի քթոցների ետև։ Աղքատ մի տան միակ կովն էր, որ թաքցրել էին գոմի մութում բժշկի վախից։

Ամբողջ գյուղը հավաքվել էր գյուղի վերև, տավարի մոտ։

Երբ պահակները վերադարձան գոմից հանած կովը առաջ արած, բժիշկը ակնոցների ետևից հերսոտ աչքերով նայեց գյուղացիներին և ինչ-որ բան ասաց, մատն էլ թափ տվավ։

— Զարանում ա, որ ապրանք են թաքցրել,—ասաց մեկը։

Հետո սկսվեց քննությունը, որին սրտատրոփ սպասում էին գյուղացիք։ Նրանցից յուրաքանչյուրի սրտում ահ կար և կասկած, թե իր կովը կարող է հիվանդ դուրս գալ։ Էլ պրծնում չկար այն ժամանակ։

Բժիշկը սկսեց ծայրից։ Մոտենում էր ամեն մի տավարի, նայում լեզվին, աչքերին, պոչի տակին, ձեռքով նշան էր անում պահակին, առողջը հիվանդից ջոկելու։

Պետրին էլ էր այնտեղ։ Կանգնել էր հեռուն, նայում էր բժշկին, կովերին, գյուղացոց։ Ժխորի մեջ ոչ ոք ուշք չէր դարձնում նրա վրա, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Պետրու սիրտը թրթռում էր, հենց որ բժիշկը մոտենում էր մի կովի և ավելի երկար սկսում զննել։

Իրիկնադեմին քննությունը վերջացավ։ Տասներկու կով հիվանդ էին։ Վառելուց բացի փրկության ուրիշ միջոց չկար։

Եվ պահակները շտապեցնում էին գյուղացոց, որոնք փոսեր էին փորում հիվանդ տավարը վառելու։

Շատերը լալիս էին։ Հորթերը բակերում բառաչում էին, բառաչում էին և կովերը, ցավ կար և նրանց սրտում, որոնք բահ ու քլունգով արագ փորում էին խոր փոսեր։

Բժիշկն էր մենակ խաղաղ. սովորական բան էր նրա համար։

Երբ փոսերը պատրաստվեցին, հիվանդ կովերին քշեցին փոսերի մոտ։ Պահակներից նա, որ կես արշինանոց բերան ուներ, կացնի բութ ծայրով խփում էր կենդանու ճակատին, շշմում էր կենդանին անասելի ցավից, բառաչում և գլորվում փոսի մեջ։

Հետո սև նավթ թափեցին և խոտի խուրձեր, վառեցին նավթն էլ, խոտն էլ։ Մութի մեջ վառվում էին խարույկները, ճենճերահոտ էր բարձրանում, իսկ քամին նավթի ու խանձված մսի հոտը փչում էր հեռու, դեպի սարերը, ուր կանաչի վրա գիշերվա ցողն էր կաթում։

Բակում բառաչում էին հորթերը մինչև ուշ գիշեր, սուգ էր իջել գյուղի վրա։

Պետին անխոս, ցավը սրտում կանգնել էր վառվող խարույկների առաջ, միտն էր բերում սև կովը, որ կուրծքը կախ էր միշտ, և հանդից գալիս յուղոտ կաթը ծլլում էր։

Երբ խարույկները հանգան, Պետին շիվար ետ դարձավ, կոլոլվեց կարպետի մեջ, պառկեց հերվա չոր խոտի վրա։

Որբ մնացած հորթերը բառաչում էին, և հերվա խուրձը գլխի տակ, հնացած կարպետի տակ Պետին լալիս էր անօգ մնացած մանկան պես։

• • •

Մյուս առավոտ տավարը տանելիս Պետին սիրտ չարավ կալերի կողմը նայելու, գլուխը կախ անցավ։ Աղբյուրի մոտ Ջառի աքիրն էր, որ կովը բերել էր նախիրին խառնելու։ Եվ Պետին առաջվա պես նրան չասաց, թե՝

— Հեյվանը մեղք ա, քիչ կթի։

Բայց Ջառի աքիրը տնքալով իր խոսքն ասաց, որ՝

— Փորձանք ա գալու գեղի գլխին։

Առաջին օրերը շատ ծանր անցան։ Պետին չէր կարո-

ղանում մտահան անփ կրակով վառած տավարը։ Սիրտը մղկտում էր, նեղանում էր իրենից, երբ մտաբերում էր, թե ինչպես ինքը հիվանդ կովին սարի տակ մահակով մի անգամ խփեց։

Ժամանակն անցավ, ժամանակի հետ էլ գյուղը մոռացավ կորուստն իր։ Զմեռը եկավ։ Էլի առաջվա պես Պետին գոմերումն էր, ծանրած կովերին էր նայում, պարապությունից նեղվում և ձմռան վերջին նայում, թե երբ են երեվալու Այու սարի դուրս ցցված կողերը։

Զմեռն անցնում էր, հալոցքի հետ խոտ էր կանաչում, կանաչի հետ ջահելանում էր Պետին, եռում էր արյունը։ Բայց մտքից հանել էր կաղլիկ, մի ձեռքը չորացած պառավ աղջկան։

Զառի աքիրն էլ մեռել էր, և էլ ոչ ոք նրան չէր ասում թե՝

— Կնիկ ա՛ռ, այ փուչ մնացած, հորդ ամարաթը շինիր։

Պետին մերվել էր նախիրին, ընտելացել։ Նախիրից դուրս ուրիշ գործ չուներ նա, մտքերը նախիրից չէին հեռանում, սարերից դենը չէին գնում։

Միայն երբեմն, ամռան պարզկա լուսաբացին, երբ օդը մաքուր է, ապակու պես թափանցիկ, երբ հեռավոր սարերի գագաթները պարզ երևում են կապույտ հորիզոնում, նախիրն Այու սարի փեշերին արածացնելիս Պետին նստում էր մի բարձր քարի վրա և դիտում հեռուն, դաշտն անծայր, որի մեջտեղ կանաչ այգիների մեջ թաղված էր քաղաքը հեռավոր։

Մի անգամ էր եղել այնտեղ, երազի պես էր հիշում քաղաքը հեռու, առես չէր էլ տեսել, լսել էր հեքիաթի հետ, ձմռան երկար գիշերներին։

Նախիրը տուն քշելիս մի իրիկուն էլ նա գյուղում անսովոր իրարանցում տեսավ։ Ամռան իրիկուն էր, հնձից, հարից տուն դարձած գյուղացիք խոսում էին խումբ-խումբ։

Փողոցով անցնելիս Պետին լսեց, որ մեկն ասեց, թե՝

— Այ անդարդ մարդ, սալդաթ էլ չի գնալու։

Պատերազմ էր հայտարարված, գյուղը զինվոր պիտի տար։

Աշխատանքի խաղաղ օրերին այնպես էր երևում, թե սարերի ետև ընկած այդ գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտե։ Բայց այդ օր գյուղն անտես թելերով կապված զգաց իրեն, և մի բռունցք, զինված բռունցք հարված էր պատրաստում գյուղի համար։

Գյուղից զինվոր տարան։

Առաջին ամիսներում ասես ուրախություն կար։ Զինվորների առաջին խումբը դհոլ-զուռնով ճամփա ընկավ, բայց հետո գարնան ծիծեռնակի պես երևացին կռնատ տղերք, փայտե ոտքեր։ Գերությունից նամակներ եկան, օտար և անսովոր խոսքեր եկան հեռու քաղաքներից զինվորների նամակների հետ, և գյուղը կերպարանքը փոխեց։ Դհոլ-զուռնով էլ զինվոր չէին ճամփու դնում, լաց եղող շատ կար, գյուղում այրի մնացած հարսերի համարքը ավելանում էր։

Ամեն ինչ գյուղում տակնուվրա էր եղել։ Օրերը տարի էր դարձել, աղքատությունը ավելանում, հացի գինը բարձրանում, շաքարը դառնում հիվանդի դեղ։

Ու ասես վերջ չէր լինելու։

Պետին գլուխը քաշ իր գործին էր։ Գյուղում ասես նրան չէին էլ նկատում, առաջվա հանաքները չկար, սարում ծնած հորթը տուն բերելիս տան տերն առաջվա պես չէր ուրախանում։

— Պետի՛, մի խաբար բեր է՞, էդպես մի խեր խաբար բեր գերմանու պլենից։

Պետին ուսերը թոթվում էր, անխոս հեռանում։ Վարձն էլ էր քչացել, առաջվա չափ հաց չէին տալիս, շատերն էին փող տալիս հացի տեղ, թղթի փողեր, որի համարքը Պետին չգիտեր։

Հին շոր ոչ ոք չէր տալիս, շատերն էին հնացած շորեր հագնում։ Պետին ինքն էր գոմում, ճրագի լույսի տակ

սեղը թելում, շուխի հերվա կարկատանը բրդի թելով նորից կարում։ Հնացել էր ուսի կարպետը, և ոչ ոք չէր մտածում Պետուն մի նոր կարպետ տալու։ Պաշարի մեջ շատ անգամ էր միայն չոր հաց լինում. յուղն ու պանիրը գյուղը ոսկու հաշվով էր ծախում։ Առաջվա առատ ու լի օրերը չքացել էին։

Եվ երբ Պետին նախիրի հետ բարձրանում էր Այու սարի փեշերը, միտն էր բերում Զառի աքոր խոսքը.

— Փորձանք ա գալու, Պետի՛...

Միտն էր բերում, նայում քաղաքին, միտքը դանդաղաշարժ ծայրը ծայրին չէր հասցնում, մի ափի չէր հանգում։

Ձմեռը եկավ։ Նախիրը գոմերում էր, բայց առաջվա պես չէր։ Օրեր էր պատահում, որ սոված էր մնում, աշխատում էր գոմերում, բայց հացի չէին կանչում։ Ինքն էլ ամաչում էր հաց ուզի։

Նստում էր գոմի տաք անկյունում, լսում, թե ինչպես են որոճում կովերը, ուտելու պահանջ զգում։

Եվ մի հին միտք, որպես մանուկ օրերի հիշողություն, ելնում էր գլխի մեջ, շարժվում կանաչ թրթուրի պես։ Այդ հին օրերի ծածուկ միտքն էր, տուն ունենալու, օջախ շինելու ցանկությունը զուսպ, որ ծնվում էր առաջ, երբ կուշտ էր, և երակների մեջ եռում էր արյունը։

Ժպտում էր ինքն իրեն։ Տաղկատար դեմքի վրա ժպիտը փայլում էր մի պահ, հետո լուծվում, անէանում։ Կռանում էր գլուխը, հառում էր աչքերը մի կետի, միտք անում երկար, մինչև քունը հաղթեր։

* * *

Գյուղում մի օր էլ լուր տարածվեց, թե ազատություն է ընկել, զորքը տուն է գալու, թագավոր չկա, կռիվ չկա։

Տեսակ-տեսակ մարդիկ եկան գյուղ, հազար ու մի խոսք ասացին, ժողովներ արին։ Բայց այդ բոլորից գյու-

ղը միայն հասկացավ այն, որ դրությունը ծանրանում է, նոր փորձանքներ են պահված օրերում գալիք։

Զինվորները վերադառնում էին գիշերով, զենքով, առանց հրացանի. ծածկվում էին ցերեկով մարագներում, մոտակա սարն էին փախչում, երբ լսում էին, թե մարդ է գալու գյուղ ժողովի, նոր զորքի։

Աշուն էր, երբ լուր բերին, թե մոտակա շրջանում հայ, թուրք խառնվել են իրար, գյուղեր են կրակում, երկուստեք խմբերը դարձել են հրձիգներ վայրագ, արյունն են ոթում արանքում գյուղերի։

Գյուղում զենքը մահակից շատացավ։ Գնդացիրներ կային, խոսում էին թնդանոթի մասին։ Երեխաները զենքից էին խոսում, հաստ ու կենտ կրակոցները սովորական էին դարձել։

Զենքի հետ կողոպուտն էլ շատացավ։ Գյուղում ապահով չէր։ Քնելուց առաջ տան դռների կապերը ավելի էին պնդացնում։ Գողություն կար այգիներում, գյուղը հին հաշիվներ էր մաքրում և հրկիզում հարևանի արտը, տասը տարի սրտում պահած վրեժը հանում։

Համարյա ամեն իրիկուն դիրքապահներ էին շրջում գյուղի չորս կողմ։ Նոր մարդիկ էին եկել՝ խմբապետ, վաշտապետ, որոնք լավ սենյակներում էին ապրում, յուղ ու հավ պահանջում, հեռանում գյուղից մի քանի օրով և թալանով վերադառնում։

Գյուղը կծկվել էր, վախից կուչ եկել։ Բայց և կերուխում կար հարուստ տներում, ուր հրամանատարը հարբած կրակում էր տասնոցից պատուհանից դուրս, օդի մեջ։ Սոսկում էին ազդում գյուղի վրա գնդակները՝ թեժ արճիճ, որ վզզում էին ձմռան ցուրտ օդում։ Կես քուն, կես արթուն գյուղը հսկումի մեջ էր, մինչև լուսաբաց ականջը ահազանգի պատրաստ։

Տավարն էր, որ տաք գոմերում փնչոցով որոճում էր առաջվա պես, ծծկեր մանուկներն էին, որոնք անգետ,

անբան մուշ-մուշ քնում էին օրորոցի տաք պարուրների մեջ։

Պետին գյուղի գործերին չէր խառնվում։ Ժողով չէր գնում. հարցնող չկար, մարդատեղ չէին դնում։ Առաջվա պես գոմերում էր գիշերում, տավարի հետ կամ մարագի դարմանի մեջ։

Շնչագրում էին գյուղը, ցուցակներ կազմում, տասնյակների բաժանում։ Ու ամեն անգամ, երբ գյուղացիք հարցնում էին, թե էլ ով մնաց ցուցակ մտցնելու, մեկը հանաքով պիտի ասեր.

— Բա Պետին։

Մյուսները պիտի ծիծաղեին, ջահելները սրախոսեին, թե Պետին լավ թնդանոթ կնետի կամ հրաման կտա, և մեկն ու մեկն էլ հանկարծ, խոսքի մեջ, պիտի ասեր.

—Հանաքը դեն, Պետին աչքիս շատ ա այլակերպ։

Պետին այլակերպ էր դարձել։ Նա քաշվել էր, կծկըվել, շատ քիչ էր խոսում, շատ քիչ էր երևում մարդամեջ։ Ասես ծերացել էր. աչքերը փոս էին ընկել, ճակատի կնճիռները շատացել։ Քայլելիս գլուխը կախ էր պահում, մի բան փնտրողի պես։

Երբ խոսքը Պետու վրա գար, առաջարկ էր լինում Պետուն մի չուխա տալ կամ կարպետ։

— Էն ի՞նչ ա հալը, գաղթականը նրանից լավ ա։

Բայց գյուղն իր ցավերն ուներ, Պետու մասին հոգալու ժամանակ չկար։

Ձմեռն անցավ, հալոցքի հետ Այու սարի կողերն էլ բացվեցին, Պետին էլ ժիրացավ։

Կանաչը հերվա չոր խոտի տակ ծլել էր արդեն, գետինը ձմռան ամբարած խոնավությունն էր գոլորշիացնում։ Կաթում էին կտուրները, ցեխ էր փողոցներում, դուրեկան էր ջերմությունը գարնան արևի։

Պետին նախիրը հանդ տարավ։ Այս անգամ մահակի հետ նա հրացան էլ ուներ։

Իր օրում հրացանից չէր կրակել, նա խսկի ձեռք էլ չէր տվել։ Պետին շատ ուզեց հրացան չառնի, բայց ստիպեցին։ Վաշտապետը հերսոտեց, ոտը գետնին խփեց, Պետին էլ վախից տապ արավ, համաձայնեց։ Գյուղը վախ ուներ, թե կարող էին տավարը սարից փախցնել։

Ծիծաղում էին, երբ մի քանի ջահել սովորեցնում էին Պետուն հրացան բանեցնել։ Պետին վախվխելով ձեռք տվավ հրացանին, ձեռքը ետ քաշեց, կարծես կրակ էր, այրեց։ Եվ հրացանը մահակի պես ձեռքն առած՝ ամեն օր նախիրը սարն էր տանում։

Իր մտքում նա ավելորդ էր համարում հրացան առնել։ Սարում նրան բոլորն էլ գիտեին. քանի՜ ուրիշ հովիվ է եկել, միասին աղբյուրի մոտ հաց են կերել։ Պետին խոր համոզում ուներ, թե իր ճանաչը երբեք չի կրակի, տավարի չի մոտենա։

Շատ անգամ էլ, երբ հրացանի ծանրությունը նեղացնում էր նրան, գյուղից հեռանալուց հետո մի քարի տակ պահում էր հրացանը և գյուղ դառնալիս էլի հանում, ձեռքին բռնում։

Երեխաները ծիծաղում էին նրա վրա.

— Պետի՛, քանի՞ մարդ ես սպանել։

— Պետի՛, բա զորքդ ո՞ւր ա...

Երբեմն Պետուն թվում էր, թե վաշտապետը դիտմամբ է զենք տվել, որ ծաղր անեն, ծիծաղեն։ Այդ մըտքից նեղանում էր, կոտրվում և քաշվում գոմի մի անկյուն, որ մարդ չտեսնի։

Լուսաբացին, երբ Պետին աղբյուրի մոտ երեսն էր լվանում, իսկ կովերը հավաքվում էին աղբյուրի մոտ, Պետուն ասացին, որ ինքը սարում պիտի դիրքեր փորի։ Նախիրն այդ օր գյուղում պիտի մնար։

Պետին շփոթմունքից մոռացավ երեսը փափախով սրբել։ Ջուրը ծլլում էր դեմքից։ Մի պահ մտածեց, ուզեց հրաժարվի, բայց հիշեց, որ վաշտապետը ոտը էլի գետնով կտա։

Եվ մյուսների հետ ինքն էլ գնաց Այու սարի լանջին դիրքեր փորելու։

Գարնան ամպոտ օր էր։ Անձրևը մաղում էր մեղմ, խոնավության մեջ կար գարնան ծաղիկների, կանաչ խոտի բուրմունք։

Պետին հացը մի քարի տակ դրեց և տասնապետի ցույց տված տեղը սկսեց փորել։ Բավական հեռու մի ուրիշն էր փորում, նրա կողքին երրորդը, և այսպես գարնան ամպոտ մի օր, Այու սարի ծաղկոտ լանջի վրա երևացին խրամատի գոտիներ։

Փորում էր Պետին անվարժ շարժումներով, և քրտինքը սնդկի հատիկների պես գլորվում էր նրա ծաղկատար ճակատից։

Ամպերը մեկ էլ ետ քաշվեցին, գարնան արևը երևաց ամպի տակից, և բուրմունքն ավելի շատացավ։ Պետին թիկն տվեց մի քարի, նստեց հանգստանալու։

Հեռվում, այգիների մեջ թաղված քաղաքը դաշտի վրա օազիսի նման էր երևում։

Պետու ականջին հասավ կովի բառաչի ձայն, որ գյուղի կողմից էր գալիս։ Նա նայեց, բառաչի ձայնը մեկ էլ լսվեց։

— Ջա՛ն, մարալ. սոված ես մնացել,— ասեց ինքն իրեն և մտքում դրեց տավարն առավոտ կանուխ Այու սարի կողմը քշելու, ուր խոտը համեղ էր և առատ։

Թիկնել էր քարին, նայում էր դիմացի բլուրներին։ Արևի շողերի տակ ինչ-որ վեհություն կար Պետու չարքաշ, պղնձագույն դեմքին, փոս ընկած աչքերում անհուն բարություն կար և միամիտ սեր դեպի խոտը, կովը, ծաղկած սարերը։

...Դիմացի բլրի ետևից լսվեց հատուկենտ կրակոցի ձայն, Պետին ձգվեց հասակով մի, լսողությունը լարեց։

Եվ հանկարծ ընկավ խրամատի մեջ, ընկավ երեսնիվար, թաց հողի վրա։ Այդպես ընկնում է խոտը կիսաշոր, երբ գերանդին սլլալով կտրում է ներքևից։

Պատահական գնդա՞կ էր, թե դարանակալի խելագար ցանկություն, որ շիկացած արճճի հետ թռավ հեռվից, շաղ տվավ Պետու գանգը կանաչ խոտերի վրա։

Երբ տասնապետը եկավ խրամատին նայելու, տեսավ Պետուն՝ ընկած երեսնիվար։ Նոր փորած հողը ծծել էր արյունը կարմիր։

Խրամատի մի անկյունում էլ թաղեցին նրան։

Գյուղը հոգս շատ ուներ, լաց չեղավ Պետու համար։ Տավարն էր, որ առավոտյան բառաչում էր գոմում, սարի կանաչին կարոտ։

Իսկ գիշերվա անձրևը սրբեց, լվաց խոտերից կաթիլները Պետու արյան...

* * *

Այու սարի լանջին հիմա մի կտոր տեղ կա, ուր կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ։ Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետու։

## ԾԻՐԱՆԻ ՏԱՓ

Թեկուզ անունը Ծիրանի տափ է, բայց և ծիրանի ոչ մի ծառ չկա այնտեղ։ Գետի ափին, քարաժայռերի ճեղքերում մացառներ կան, քրքրված ցախավելի պես դիք-դիք ցցված։ Ծիրանի տափի առավելությունը քամիներից պաշտպանված լինելն է և ջրի մոտիկությունը։ Սարում, երբ գարնան սկզբին բորան է լինում, անձրևախառն քամի, չոբանը ոչխարը դեպի ձորն է քշում և պատսպարան տալիս լերկ Ծիրանի տափի ժայռերի եռև։ Այծերը մացառներ են կրծում։ Ոչխարը՝ գլուխը իրար շեքի մեջ՝ որոճում է։ Հոտի մեջ և ոչ մի ոչխար բորան օրերին գլուխը վեր չի հանի։

Ծիրանի տափը հիշատակելու արժանի ոչինչ չէր ունենա, եթե նա երկու գյուղի՝ Միրի և Մրոցի միջև անվերջ շարունակվող կռիվների, խռովք ու գրույցի առարկա չդառնար, եթե նրա համար տարիների ընթացքում բազմաթիվ անգամ մահակներով կռիվ չտային երկու հարևան գյուղերը՝ Մրոցն ու Միրը։

Երկու գյուղն էլ գետի ձախ ափին են ընկած, Մրոցը վերև, իսկ Միրը՝ ներքև։

Մրոցն ու Միրը հավասար ծխեր ունեն, և առաջներում, երբ մահակներով կռիվ էին տալիս Ծիրանի տափի համար, այնպես էր պատահում, որ մի տարի Մրոցն էր

հաղթում, հաջորդ տարին՝ Միրը կամ երկուսն էլ ջարդված վերադառնում էին, որովհետև Միրանի տափի համար համարյա հավասար թվով մահակներ էին զարկվում երկուստեք։

Մրոցն էլ էր այծ ու ոչխար պահում, Միրն էլ, վերի գյուղումն էլ կար եկեղեցի, ներքևի գյուղում էլ։ Շատ անգամ միաժամանակ էին բացվում ուշունցի պարկերը։ Վերևի գյուղում, պատի տակ նստոտած ալևորներից ոմանք հոնի կարմիր փայտերը մեկնում էին Միրի կողմը, հայհոյում.

— Միրն էլ չեն ա՞, վառես խանձահոտ չի գա։ Մեր աղբաշրումն են նրանք խմոր հունցում...

Գուցե հենց այդ ժամանակ Միրի ալևորներն էլ էին անիծում վերի գյուղերին և ջահելների սրտում պապենական ոխը թեժ պահում։ Բայց նրանք առիթ չունեին ասելու, թե Մրոցը վառես՝ խանձահոտ չի գա, թե նրանք աղբաշրով են խմոր հունցում, որովհետև Միրում երեխան էլ գիտեր, թե գետը վերից է գալիս, անցնում է Մրոցի կողքով, սրբում գետի մոտ կիտած աղբակույտերն ու մոխրանոցները և լվանում գետի միջով անցնող կովերի, եզների, ձիերի սմբակներն ու կճղակները։ Միրի հարս ու աղջիկ այդ ավելի լավ գիտեին, դրա համար էլ լուսաբացից վազում էին գետը՝ ջուր առնելու, մինչև ջրի պղտորվելը։

Միրի երեխաներն էլ գիտեին, որ գետը վերևից է գալիս, բայց հարկավոր էր մի քիչ հասակ առնեին և հասկանային, թե ինչու իրենց ալևորները վերի գյուղի հացեխն չէին ասում.

— Վառես, խանձահոտ չի գա...

Մրոցն էլ այծ ու ոչխար էր պահում, Միրն էլ, բայց Մրոցում այնպիսի մարդիկ կային, որոնք ամբողջ Միրի չափ ոչխար ունեին։ Կարելի էր առավոտ կանուխ գետից ջուր վերցնելով խմել նույնպիսի մաքուր և սառը ջուր, ինչպիսին վերի գյուղն էր խմում, բայց Միրը վերի գյու-



Գորիս (1900-ական թվականներ)



Ա. Բակունցը, որդին՝ Սևադան և կինը՝ Վարյա Ջիվիլյանը, 1927 թ.

ղի չափ կով չէր պահում։ Երբ Միրի լղար կովերը քարերի արանքում բուսած չոր խոտերն էին պոկում, Մրոցի կովերի լիք կուրծքը թաղվում էր կանաչ խոտերի մեջ, պտուկները քսվում էին ծաղիկների թերթերին, և ծաղկափոշի էր նստում վերի գյուղի կովերի կուրծքին։

Այդ մասին Միրի երեխաները պիտի իմանային, երբ չափահաս դառնային և հասկանային, որ կավե կճուճի մեջ պահած յուղի պաշարը կապ ունի սարի կանաչի հետ։ Երբ այս հասկանում էին Տիրանի տափի մասին գյուղում խոսք ու զրույց լինելուց հետո, նրանք խլշում էին ականջները, մահակի կոթն ավելի պինդ սեղմում և մյուսների հետ վազում Տիրանի տափը, եթե հավարն ընկներ, որ Մրոցի չոբանները ոչխարն ու տավարը քշել են ձորի կողմը։

Եվ թեկուզ ամառվա շոգին կանաչը խանձվում է, հողը ճաքճքում, էլի շոգից նեղացած նախիրը ժայռի շվաքում հանգստանում է, գետի սառնությունը հովացնում է նրանց մաշկը, և արևը թեքվելուց հետո, Տիրանի տափում նախիրն էլի ուտելու մի քիչ խոտ է ճարում, այծերը՝ մացառների վրա տերև։

* * *

Ոչ ոք չէր հիշում՝ ոչ Մրոցում և ոչ էլ Միրում, թե երբ ծագեց առաջին թշնամությունը Տիրանի տափի համար։

Եթե Մրոցին էին հարցնում, հազար ու մի պատմություն էին անում, թե իրենցն է Տիրանի տափը, «ինչիների» ձեռքով քաշած պլան ունեն, թղթեր կան։

— Էս է, ես իմ ձեռքերով եմ էնտեղ կուրգանի քարերը սահմանի վրա շարել...

— Իմ միտս է, որ հորս ոչխարը գիշերն էլ էր Տիրանի տափում մնում։

— Միրի սահմանը Տիրանի տափից էլ շատ դենն ա... էն մեր հայրական հողն ա...



409—5

Իհարկե, Մրոցը միայն այդ չէր ասում, և երբեք հոգի չէին խոսում, եթե մեկը հարցներ նրանց Միրանի տափի մասին։ Վրա էին տալիս, իրար հրմշտկում, ամեն մեկն աշխատում էր առաջ ընկնել և չինովնիկին պատմել իր մտքինը, իր լսածը հաստատելու, որ Միրանի տափը Մրոցինն է։ Շատերն այնքան էին հեռու գնում, այնպես էին հորինում, որ մոտին կանգնած հարևանն էլ չէր հավատում նրա ասածին, բայց լռում էր, մտքում ծիծաղում, գլխով անում, որ չինովնիկը հավատա նրա ասածին։ Չէ՞ որ խոսքը Միրանի տափի մասին էր, գետի ափին բուսած մացառների, գյուղի սահմանների է՛լ ավելի լայնացնելու մասին։

Բայց վեճը շատ խոսելը և բարձր կանչելը չէր որոշում։ Չինովնիկի գնալուց հետո Մրոցում շշուկով և շատ ծածուկ իրար մեջ հավաքում էին այն գումարը, որի մասին գիշերվա կերուխումի ժամանակ ակնարկել էր քաղաքից եկած «մեծավորը» և ավելացրել.

— Ձեր օգտի համար եմ ասում, դուք գիտեք, մենակ ինձ համար չեմ ուզում։

Չինովնիկը Միր էլ էր գնում։ Ներքի գյուղն աշխատում էր ավելի ճոխ ընդունել նրան, սրա-նրա տնից հավաքում էին համար իրեր, մի տնից մաքուր բարձ, մյուսից՝ գյուղի միակ լավ կարպետը, տունը զարդարում, հարսերի վրա բարկանում, որ փոշին չանեն, ապա, սենյակը սարքելուց, խոնարհ գլուխ տալիս եկվորին, ներս տանում։

Ոմանք եկողների ձիերն էին տեղավորում, գարի տալիս և խոնարհաբար ռամկի խեղճությամբ ժպտում մեծավորի պահակի առաջ, նրան էլ լավություն անում, մտածելով, որ գուցե այդ էլ օգնի Միրանի տափի անվերջ վեճին։

Միրում էլ էին բարձր ձայնով կանչում, աղմկում։ Նրանք գիտեին, թե ինչ են առել վերի գյուղում, հերքում

էին «պլանի» պատմությունը, մեկը մոտենում էր, իր ճղած գլուխը ցույց տալիս, պատմում, թե ինչպես են Մրոցի գյուղացիք մահակով խփել, մյուսը՝ հարևաններին բոթելով երեխային էր առաջ հրում, բաց անում ոտքը և շան կծած վերքերը ցույց տալիս։

Երեխան զարմացած և վախով նայում էր չինովնիկի պսպղուն կոճակներին, հայրը նրա ոտից պինդ բռնած բարձրացնում էր երեխային, որ «մեծավորը» ավելի լավ տեսնի։ Իսկ չինովնիկի աչքերը երեխայի ոտի սպիներից սահում էին գետնի գունավոր կարպետին և մտքում գին դնում կարպետին, կարպետը համեմատում Մրոցի խոստացած կաշառքի հետ։

Զարմանք էլ չէր, եթե մյուս օրը, Մրոցի աչքից անտես պահելու համար, Միրից մի քանի հոգի, գիշերվա կարպետը թաղիքի մեջ փաթաթած տանում էին քաղաք, չինովնիկի տունը։ Միրում էլ էին շշուկով ինքնատուրք նշանակում, կարպետի գինը տալիս տիրոջը, որ հարս ու աղջիկ ձմռան գիշերներին գունավոր թելերից մի նոր կարպետ գործեն և պատմեն հնօրյա չարքերից։

Եթե պատահեր, որ քաղաքից եկողը մյուս օրը համաձայնվեր անձամբ տեսնելու Ծիրանի տափը, համարյա ամբողջ Միրն էր գյուղից դուրս գալիս՝ որը ոտով, որը ձիով։ Գյուղի աչքաբաց, ազդեցիկ մարդիկ, «մեծավորի» ձիու սանձը բռնած, դարձյալ Ծիրանի տափի մասին էին պատմում և նույն հոգով այդ պատմությունն անում՝ ազդեցիկ մարդիկ չինովնիկին, գյուղի գզիրը՝ նրա պահակին։

Անհնար էր, որ մեկը կոտրատած ռուսերենով Ծիրանի տափին հասնելիս «մեծավորին» չպատմեր մի հին խոսք, թե ինչպես մի հարուստ մի տգեղ կին է ունենում և մի սիրուն աղախին, ինչպես մի օր երկուսն էլ գնում են սարը՝ ոչխարը կթելու, խանի չոբանը կարծում է, թե սիրունն է խանի կինը, և երբ խանը գալիս է, չոբանը ցույց է տալիս տգեղ կնոջը և խանին զարմանքով

հարց տալիս՝ խանն ապրած կենա, սրան էլ են զունով բերե՞լ…

Եվ այդ ասելիս պատմողը պիտի հարցներ, թե Մրոցի հողերի շարքերին Միրանի տափն է՞լ է հող, բայց «մեծավորը» քահ-քահ պիտի ծիծաղեր, և Միրի մի քանի միամիտ գյուղացի, որոնք անգիր կասեին այդ պատմությունը, չինովնիկի ծիծաղը հօգուտ Միրի կընդունեին։

Այսպես շատ տարիներ եկել են, գնացել, երկու գյուղից էլ շատ յուղ ու պանիր, գորգ ու կարպետ են տարել հազար ու մի չինովնիկ և տարածի համեմատ էլ հատկացրել Միրանի տափը՝ մերթ Միրին, մերթ Մրոցին, կռիվների աղբյուր ստեղծել, ամեն տարի մացառուտի կանաչ տերևները բացվելու հետ երկու գյուղումն էլ թնժացրել զայրույթը Միրանի տափի համար…

* * *

Խորհրդային օրերն եկան։

Երբ որ գավառական քաղաքից թշնամու խուճապի մատնված զորքերը հեռացան, և բեզարած կարմիր բանակայինները պառկեցին Ազգային խորհրդի դիվանների վրա, բանակի շտաբը քաղաքի հետ գրաված համարեց և հեռու ձորերը, որոնցից մեկումն ընկած էին Մրոցն ու Միրը։

Հարկավոր էլ չէր զորք ուղարկել, ոչ էլ թնդանոթ։ Տեղացի մի ագիտատոր անցավ ձորերով և պատմեց այն, ինչի մասին լսել էին ձորի գյուղերում։

Հենց որ լուր եկավ, թե գավառական քաղաքից փախել են նրանք, որոնցից ոմանք առաջվա չինովնիկի պես էին մտածում Միրանի տափի խնդիրը որոշելիս, երկու գյուղն էլ ականջները խլշեցին նոր օրերի լուրերին, աչքերի առաջ Միրանի տափը։

Եվ ձորերում քարոզող ագիտատորը հենց որ Միր գնաց և ընդարձակ կալում հավաքված ժողովրդին ճառ

ասաց, ձեռքերն օդում ճոճելով, զայրացած մի քանի անգամ կրկնեց «արնախումներ, գիշատիչներ», Միրում շատերն այնպես հասկացան, թե այդ բառերը վերի գյուղին են ուղղված։ Ճառից հետո եկվորին շրջապատեցին գյուղացիք, և առաջին հարցը Տիրանի տափի մասին եղավ. պատասխանը՝ թե «հողն աշխատավորինն»— ավելի երկմիտ դարձրեց Միրի բնակիչներին։ Ագիտատորի գնալուց հետո գյուղում ոմանք նրա պատասխանը հօգուտ Մրոցի էին մեկնաբանում։

Նույն ճառը կրկնվեց և Մրոցում։ Այնտեղ էլ ժողովուրդը խլշած ականջներով լսեց նրան, և երբ ագիտատորը հողահավասարման անունը տվեց, բազմությունը շարժվեց. թե մարդիկ կային, որոնց մտքերը հեռու էին, ցնցվեցին, մոտեցան խոսողին։ Շատ մարդ էր լսում նրան, և այդ րոպեին Մրոցում ոչ մի ուղեղ չկար, որի ծալքերում Տիրանի տափի պատմությունը չդառնար շվաքի պես։ Լսելուց հետո շատերը խոսեցին Տիրանի տափի մասին։

Կեսգիշերին Մրոցում մի քանի մարդիկ խոսում էին կտուրի վրա, որի տակ քուրսու վրա քնել էր ագիտատորը։

— Հը՞, ի՞նչ անենք...

— Չի վերցնի, հերսոտ ա...

— Բա էդպես գնա՞, ախր լավ չի լինի...

Առավոտյան, երբ քաղաքից եկած ընկերը ձին նստեց ուրիշ գյուղ գնալու, նրան բարի ճանապարհ ասացին, մոտեցան ձեռք տվին։

Երբ մոտեցավ և նա, որ կեսգիշերին կտուրի վրա խոսելիս ասել էր, թե «լավ չի լինի, թե էդպես գնա» և ուզեց աջը մեկնի և բարևելիս ձիավորի բռան մեջ դնի այն, ինչ պինդ սեղմել էր ձեռքում, աջը մեկնելիս աչքը ընկավ ձիավորի աչքին, և կիսով չափ մեկնած ձեռքը երկյուղից ետ ընկավ փափախի վրա, բռի մեջ՝ դրամ։ Ձիավորին ճանապարհելիս նա փափախը հանեց։ Նույն օրը կտուրի վրա խոսողները շատ հանդիմանեցին նրան, իսկ նա ուսերն էր վեր քաշում և ասում.

— Կարացի ոչ, աչքերը հերսոտ էր...

Մի գարում էլ ջուր տվեց, և այդ գարնանը քաղաքից հողաչափ եկավ երկու գյուղի սահմանները որոշելու։ Հողաչափը դեռ գյուղ չեկած՝ երկու գյուղումն էլ գիտեին նրա մասին այնքան տեղեկություն, կարծես այդ մարդը տարիներ էր ապրել նրանց հետ։ Մինչև նրա գալը երկու գյուղումն էլ նրա մասին էին խոսում։

— Ասում են շատ խղճով ա։

— Խմիչքեղենից հեռու չի...

— Որ հերսոտեց, էլ պրծնում չկա, գործը կքանդի...

— Աչքի մինն էլ մի թեթև շաշ ա...

Հողաչափի գալուց հետո խոսքն ու զրույցն ավելի շատացավ։ Դեռ Միրին չհասած, վերին գյուղից ձիավորներ էին եկել նրան իրենց մոտ տանելու։ Եվ որովհետև նա «խմիչքեղենից հեռու չէր», վերի գյուղը գնաց, որի մասին լսել էր քաղաքում։ Առաջին հաղթանակը թև տվեց Մրոցին, ջուր մաղեց Միրի գլխին։ Ծիրանի տափի բախտը կիսով չափ որոշված համարեցին։

Հողաչափը շաբաթից ավել մնաց, երկու գյուղում էլ կերավ ձու, կարագ, մեղր, քնեց մաքուր տեղաշորում, շատ անգամ էլ լսեց խանի և զուռնով բերած հարսի պատմությունը, Մրոցի ազդեցիկ մարդկանց խոսքը, որ իրենք Ծիրանի տափի պլանն ունեն։

Հողաչափը վերադարձավ։ Ճամփին նրա ձիու սանձից բռնում էին։ Երբ բռնողը Մրոցից էր, Ծիրանի տափն իրենց գյուղի համար էր խնդրում, իսկ եթե Միրից էր՝ Միրի համար։

Եվ երկուսն էլ համարյա նույն օրհնությունն էին թափում հողաչափի զավակների, տան և մեռած-կենդանի բարեկամների գլխին, աշխատում մի բան իմանալ, խոսքի միջից մի շող, որով լուսավորեին իրենց կասկածների մթությունը, մինչև քաղաքից մի լուր գար։

Իսկ հողաչափը հենց մի գլուխ ասում էր.

— Լավ կլինի, ինչպես սահման եմ դրել ո՞ր...

Եվ այդ լավը հօգուտ Միրի եղավ…

Քաղաքից այդպես հայտնեցին Միրին էլ, Մրոցին էլ, նույն ձևով գրած, նույն թղթի վրա. «Ծիրանի տափն ամբողջովին տալ Միր գյուղին, որպես աղքատ և հողազուրկ գյուղի»։

Թեկուզ թուղթը շատ փոքր էր և հասարակ, բայց ամենամեծ ռումբն էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրոցում, ինչ հանեց թուղթը։ Գալիս էին նայում թղթին, ձեռք տալիս, թեկուզ շատերն էին անգրագետ, և ձեռք տալուց, ուրիշին էին վերադարձնում թուղթը, որ կեծացած թիթեղի կտորի պես խանձում էր ձեռք տվողի մատները։

Նույն երեկոյան Միրում գյուղացիք խոսում էին, կասկածներ հայտնում։ Ճիշտ է, թուղթը չէր խանձում, բայց վստահություն էլ չէր տալիս։ Այդ փոքրիկ կտորի վրա ի՞նչ գրչով կարելի էր Ծիրանի տափի պատմությանը վերջ տալ։

— Հը՞, ըստեղ մի բան կա որ…

— Չէ, էսքան շուտ չէր լինի…

Մյուս օրը Միրից երեք հոգի քաղաք գնացին, մոտեցան մի երիտասարդի, որ հողային գործերն էր վարում, նրա սեղանին դրին Միրի համախոսականը։ Զարմացք բան էր գրած համախոսականում. երիտասարդը կարդաց, քթի տակ ժպտալով նայեց գյուղացիներին։

— Մեզ Ծիրանի տափի կեսը տվեք,— ասացին նրանք։

# ՄԻՐՀԱՎ

Աշուն էր, պայծառ աշուն...

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ։ Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը։

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը։ Նույնիսկ քարափի հատտաքում կաղնին խոնարհվում էր քամու առաջ։ Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա փչել էր մի պայծառ տխրություն։ Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը։

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում։ Սիմինդրի երկար տերևները թրերի նման զսվում էին իրար, պողպատի ձայն հանում։ Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ։

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը։

Դիլան դային նստել էր հնձանի պատի տակ, ընկուզենու չոր կոճղին։ Նա սովորություն ուներ ուշ աշնանը

վերջին անգամ այգին մտնելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու և հնձանը փակելու, որպեսզի ձմռան ցուրտ գիշերներին գայլ ու գազան չպատսպարվեն ներսը։

Ջորացած ոստերի և ցողունների մի կապ ժողովել էր, դրել մոտը։ Եվ հոգնությունից հանգստանում էր, աչքը հեռու սարերին։ Նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշշոցին։

Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղությունը դուրեկան էր։ Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև։ Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ։

Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ, նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագենա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից։ Շուտով կիջնի ձմեռ, և ո՞վ գիտի, բացվող գարնանը նորից պիտի ի՞նքը բանա այգու դուռը, թե՞ մի ուրիշ ձեռք։

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դռնակի երգը։

Այդպես մի անգամ էլ, շատ տարիներ առաջ, ճռնչաց այգու դուռը։ Էլի արև օր էր։ Հնձանի ստվերում ուռենու կողովների մեջ սև խաղողը շողշողում էր։

Ներսը՝ քարե տաշտի մեջ, Դիլան դային, մինչև ծնկները բաց ոտներով, ճմլում էր խաղողը, և արնագույն շիրան քարե տաշտից ծորում էր կավե կարասը։

Հնձանը շոգ էր։ Ճմլում էր խաղողը, ինքն իրեն դնդընում կայտառ մի երգ, և քրտինքի կաթիլները գլորվում էին, ընկնում շիրայի մեջ։ Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արյունը եռում էր իբրև թունդ գինի։

Դռան ձայնին Դիլանը գլուխը դուրս հանեց։ Այգում ոչ ոք չկար։ Ու հանկարծ, երբ սիմինդրի մարգերում երևաց գլխի զառ կապույտ մանդիլը, ինքը պահվեց դռան հետևը։

Կարծես հավք էր թաքնվել անտառի մթին խորշում։ Ապա վիզը երկարեց, ինչպես կաքավը դեղնած արտերում խշշյուն լսելուց, և մի ջահել կին դուրս եկավ սիմինդրի խիտ արտից։ Դուրս եկավ ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սորաց դեպի հնձանը։

Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղջիկը, որ այնպես զրնգան ծիծաղում էր, երբ առվակի մեջ կախում էր սպիտակ սրունքները, իսկ դրացու տղան՝ Դիլանը, ջուր էր ցնցղում նրա ողկույզի պես գանգուր մազերին։

Հարսը փափուկ քայլերով, ինչպես այծյամը ձյունի վրա, մոտեցավ հնձանին։ Դռան մոտ զրնգացին Սոնայի շալե շապիկի արծաթ սուրմաները, և ներս մտավ, ինչպես միամիտ հավքը վանդակի բաց դռնով։

Հանկարծ տեսավ նրան, ցնցվեց, ոստյուն արեց դեպի հետ, բայց մի կրակված ձեռք փակեց հնձանի դռնակը։

— Բաղը մարդ կգա, Դիլան,— դողալով խնդրեց նա։

Ու չիմացավ գինուցն էր, թե հնձանն էր տաք,— Դիլան դայլին չիմացավ։ Սոնայի ականջին շշնջաց.

— Կաց, անխիղճ...

Շշնջաց ու պինդ-պինդ փաթաթվեց նրան։ Այնքան դուրեկան էր նրա շույը վեր չարած, լաջվարդ հալավի հոտը, այնքան տաք էր հնձանը։

Սոնան օձի պես կեռումեռ արեց, փորձեց ազատվել նրա բազուկների օղակից, կարոտով խնդրեց, խոստացավ։ Որպես եղեգ ճոճվեց նրա դալար մարմինը, և մեջքը խոնարհեց... Անիմաստ մաքառումից հոգնած, հարսը սրտաբուխ նրան ընծայեց իր մարմինը, որպես անարատ զոհ։ Եվ նա ագահ համբուրեց հարսի կարմիր լար շրթունքը, անհագուրդ հիացավ ոսկեդեղձան հյուսերով, որ ծփում և խշշում էին լուսեղեն լանջի վրա։

Հետո թևը ջարդված հավքի պես Սոնան ամաչկոտ

դուրս թռավ հնձանից, մի անգամ էլ շրջորջաց այգու շաղոտ խոտերի վրա և նեքսը թողեց լաջվարդ շապիկի բույրը։

Իսկ զրնգան սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում։

* * *

Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանիշակը։ Առուների ափին, այգիներում, դաշտերից խուրձ կրելիս, ամառվա լուսնյակ գիշերներին խոտի դեզի մոտ,— ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք, և մի օր էլ մեծատան հարևանի շեմքով ներս մտավ Սոնան, հարսի քողը երեսին, քողի տակ արցունքից կարմրած աչքերը՝ պայծառ, որպես լեռնային ծովակ։

Հարսանիքից չորս ամիս հետո պատահմամբ հանդիպել էին իրար այգիների ճանապարհին։ Դիլանը նրան կանգնեցրել, հարցրել էր հալը, Սոնան թախիծով թոթվել էր ուսը և արագ հեռացել։

Հանդիպումը բորբոքել էր նրան, բայց առաջվա նման մոտիկ լինելու ցանկությունը, իբրև խոր երկնքում նազով ճախրող թռչուն, երբեք չէր իջնում նրա շեմքին։

Ու հանկարծ այդ հավքը թառեց նրա ուսին...

Ինչո՞ւ եկավ այգին, արդյոք Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպես այգում։ Դիլան դային մինչև վերջը չիմացավ այդ։

Մի քանի անգամ մոտեցավ, կամեցավ նրա հետ խոսել, բայց Սոնան խույս տվեց։

— Թո՛ղ, Դիլան, գնա քեզ համար...

Եվ էլ իրար չտեսան։

* * *

Դիլան դային միայն գիշերը տուն գնաց։ Ամբողջ օրը թափառել էր ձորում, եղել էր Հարևանի այգու շրջակայքում, աղբյուրն էր գնացել, փողոցի անկյունում կանգնել էր, բայց ոչ մի տեղ Սոնային չէր տեսել։

Լուսնյակ գիշեր էր, երկինքն անամպ։ Փչում էր գիշերվա հովը։ Դիլան դային պառկեց դեզի գլխին, նոր հարած խոտերի վրա ու քունը չտարավ։

Հազարավոր չորացած ծաղիկներ բուրում էին խոտի խուրձերի միջից, և լուսնյակ գիշերով նրան այնպես էր թվում, ասես այդ նույն դեզի վրա պառկել է Սոնան և խուրձերի մեջ թողել լաջվարդի բույրը։

Լուսաբացին հալվեցին աստղերը, գիշերվա լազուրը գունատվեց։ Երբ ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից, և ցողը շողշողուն կաթիլներ շարեց նարնջագույն քարերի վրա,—արևի առաջին շողերի հետ, գյուղի դիմաց, դեղնած արտերում զարթնեց կաքավը.

— Կա՛խ-կղա, չա՛խ-կղա...

Լսվում էր կաքավի թավ երգը։ Ավելի վերև, անտառի խորքից, կանչում էր միրհավը։

Դիլան դային վեր կացավ, ուսը գցեց կայծքարով հրացանը և երեսը դարձրեց դեպի սարալանջի անտառը, որտեղից կանչում էր միրհավը։

Սիրտ չուներ իջնելու այգին, տեսնելու հնձանը։

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հնձած արտերն էր կոխ տալիս, ոսկեգույն ծղնոտները և գլուխը կախ բարձրանում դեպի անտառը՝ արահետի կեռմաններով և թփերի միջով։

Ահա ճամփի եզրին՝ մասրենու պառավ թուփը, նրա մոտ տափակ քարը, որի վրա հովիվներն այժմ էլ աղ են ցանում ոչխարի համար... Խուրձ էին կրում միասին՝ ինքը, Սոնան։ Արևը խանձել էր աղջկա երեսը, ոսկեդեղձան հյուսերի ծայրը։ Դեղին ծղնոտի փշրանքներ կային մազերի արանքում։

Կալից ձիերը քաշում էին, հասնում այդ քարին և ձիերը կանգնեցնում։ Ինքը բարձրացնում էր Սոնային ձիու վրա, հետո իր ձին նստում և գնում արտերը խուրձի։

Մի անգամ էլ Սոնան խնդրեց, որ միասին նստեն։ Ու մի ձին հետքից քաշեցին։ Առջևը Սոնան էր նստել, հետևվում ինքը։ Մի ձեռքով սանձն էր պահում, մյուսով գրկել էր նրա բարակ մարմինը։ Աղջկա ծամերը քսվում էին նրա երեսին։

Իսկ մյուս առավոտը, երբ այդ քարին հասան, և ինքն առաջարկեց նորից միասին մի ձիու նստեն, Սոնան հայտնեց, որ մայրը հանդիմանել է իրեն և խստիվ պատվիրել առանձին նստելու...

— Ինչո՞ւ։

— Ամոթ է,— ասաց աղջիկը արդար ժպիտով։

Դիլան դային մոտեցավ մի դեզի, ձեռքը կոխեց խուրձերի մեջ և տաքություն զգաց։ Կեծացել էին խուրձերը, գիշերվա խոնավությունից հասկերը ամկել էին։

Երբ ծանոթ արտին հասավ, հենվեց կայծքարով հրացանին, միտք արեց։ Սոնան այստեղ մի ամառ քաղհան էր անում, կռանում էր ցորենների վրա, մատները փուշ էին մտնում։ Սոնան հնձվորի համար հաց էր բերում, քրտնում էր արևի տակ և քրտինքից շապիկը փակչում էր լանջին։

Լինե՜ր, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին։

Ետ նայեց Դիլան դային, եկած ճանապարհին նայեց։ Մարդ չկար. աշնան մերկ դաշտերն էին։ Ու միայն մասրենու կարմիր թփերն էին, և փայլուն մասուրները դեղնած տերևների արանքում։

Հանկարծ մի թփի ետևը լսվեց կաքավի ձայնը.

— Կա՛խ-կղա, շա՛խ-կղա...

Դիլան դային զգույշ քայլերով, կուզեկուզ մոտեցավ թփերին։ Հնձած արտում կաքավները հավաքում էին ընկած հատիկները, կտցահարում թափված հասկերը։ Մեկը

չէր, շատ էին։ Ցատկոտում էին, օրորում գեր մարմինները։ Գարնան երկու ճուտեր մի հասկի համար կռվում էին՝ կտուց կտուցի։

Դիլան դային չոքեց, նշան բռնեց։ Մի գեր կաքավ սպիտակ վիզը ձգեց, սկսեց չորս կողմը նայել։ Մյուսները լռեցին, տապ արին ծղնոտների մեջ։

Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան՝ տիմինդրի երկար ցողունները... Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փռռալով մի քանի հանգույց արին օդում, իջան արև առած արտերի վրա։

Ճանապարհը շարունակեց։ Քանի գնում թփերն ավելի էին շատանում, արտերի մեջ երևում էին հատուկենտ կաղնիներ՝ ծռված, կռացած, կայծակից խանձված։ Ասես պահապաններ էին կանգնել անտառի և արտերի սահմանում։

Արահետը բարակում էր։ Վերջին արտերն էր կոխ տալիս։ Անտառից հովը փչեց նրա դեմքին, ռունգերն ագահորեն ծծեցին անտառի խոնավ ու զով օդը։

* * *

Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ է սիրում բուն դնել ու կանչել միրհավը, մթին անտառների ոսկեփետուր թռչունը։

Անտառի մեջ մամռոտ ժայռեր կային, արջաբներ, քամուց ընկած դարավոր կաղնիներ, որոնց վրա սունկերը շար էին ընկել։ Ծառերի կիսաչոր ճղները մամռոտել էին, և կիսախավարի մեջ կարծես հետին ոտքերի վրա բրդոտ արջեր էին կանգնած։

Ժայռերին չհասած՝ դիմացից լսվեց հրացանի պայթյուն։

Աղմուկից դղնգաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խազալի վրա։ Մթնկա խորշում թպրտաց գիշերահավը։

Ո՞վ պիտի լիներ։ Կայծքարով հրացանի ձայն չէր։ Իսկ գյուղում ուրիշ բերդան չկար։

— Տեսնես ո՞վ է որս անում,— մտածեց նա։

Տերևները խշշացին։ Դիլան դային տապ արավ, պահվեց քարի ետևը։ Միրհավն էր. հանգիստ քուչուչ անելով փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները։

Դիլան դային թաքստոցից գլուխը հանեց նշանի, հրացանի փողը երկարեց քարի վրա։ Բայց հանկարծ թռավ միրհավը, հետքից մի ուրիշը, ապա երրորդը, չորրորդը...

Զգույշ է միրհավը, դժվար է նրան խփել։ Երբեմն այնքան մոտ է գալիս, ահա ուզում ես կրակել, բայց մի թեթև խշշոցից, նույնիսկ որսորդի խոր շնչառությունից,—բացում է թևերը, թռչում գնդակից արագ, ծղրտում, պտույտներ անում թանձր սաղարթի վրա և անձայն իջնում մի ուրիշ տեղ։ Զգույշ է միրհավը. քուչուչ անելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռանում և ապա նորից երկարում վիզը, չորս կողմը նայում։

Դիլան դային թաքստոցից դուրս եկավ, ճանապարհը շարունակեց։ Արդեն անտառի խորքն էր. տեղ-տեղ ծառերն անանց պատնեշ էին կազմել։ Տերևները հարյուրավոր տարիներ թափվել էին իրար վրա, արևերես չէին տեսել ու չէին փտել։ Ծառերի բները թաղվել էին տերևների կույտի մեջ, և ճյուղերը թխսամոր թևերի նման փռել ստվերում բուսած կապույտ սունկերի վրա։

Դիլան դային կոխ էր տալիս չորացած տերևները, թաղվում, ինչպես հարդի շեղջի մեջ, սայթաքում և ճղներից բռնելով ճանապարհը շարունակում։

Հասավ աղբյուրը, կռացավ, կուշտ խմեց։ Քիչ հետո ընկավ լորենիների ձորը։

Ներքև, քարերի վրա, այնքան շատ միրհավ կար... Արևը տաքացրել էր մամռոտ քարերը, ոսկեփետուր միրհավը, թևերին սև պուտեր, թռչում էր քարից քար, կանչում, կտցահարում հարևանին, էգի շուրջը պտույտներ անում։

Նշան բռնեց։ Երբ քարը կայծ տվավ և կայծից բռնկվեց վառոդը, հրացանի փողից բոց ու մուխ ելավ, ձորերը որոտացին ահավոր արձագանքով, ձորից թռան միրհավները՝ թևերը լայն, փափուկ բմբուլով, թևերը փռած աշնան արևի ոսկե շողերի տակ։

Միայն մեկը թպրտաց, մամռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ։

Դիլան դային վրա վազեց և վազելիս նկատեց, որ մի սպիտակ շուն, լեզուն հանած, ցատկեց թփուտների կողմը։ Որսկան շան շունչն ու Դիլան դայու ձեռքերը միասին ձըգվեցին դեպի արնոտ միրհավը։

Նրա մատները դիպան դեղին բմբուլներին, բայց վիրավոր միրհավը հանկարծ թևին տվեց, թռավ վեր։ Երկու փետուր օրորալով վայր ընկան, աշնան դեղին տերևների նման։

Դիլան դային ափսոսանքով նայում էր արնոտ միրհավի ետևից, երբ հանկարծ, շատ մոտիկ, լսեց ոտնաձայն։ Հետ նայեց, աչքերը զարմանքից լայնացան, և հրացանը բնազդմամբ ձեռքից վայր սահեց ծառի ետևը։

Անտառապահն էր, աչքերը՝ կաս-կարմիր ածուխ...

Մոտեցավ, բղավեց, և մինչև ուշքի կգար, նրա մըտրակը օդը ճեղքելով շափեց Դիլան դայու ուսը, մինչև թիակների ոսկորը, մրմուռը ծակծկեց, ինչպես եղինջի հարվածը բաց մսերի վրա։

Անտառապահը հարվածում էր նրան և զայրանում, որ Դիլան դային փախցրել էր նրա զարկած միրհավը։

Անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց՝ հուզմունքից հորանչում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թպրտում էր արնոտ միրհավը։

Անակնկալ հանդիպումը նրան շշմեցրեց... Նրանք արդեն հեռացել էին, երբ Դիլան դային ուշքի եկավ, նայեց նրանց հետևից, մտաբերեց շան կարմիր երախը...

Դիլան դային նստեց քարի վրա։ Ցավից նրա դեմքը կծկվում էր։ Մեջքը կարծես շիկացած շամփուրներով խանձել էին, աչքի տակը հարվածից տաքացել էր։ Երկար միտք արեց Դիլան դային, աչքը միրհավի երկու փետուրներին։ Մի անհուն դառնություն և կսկիծ ավերեց նրա շրջնաղ օրը։

...Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ։ Անտառում լռություն էր։ Միրհավը թռել էր հեռու... Մամռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած, դեղնագույն-սև պուտերով, իսկ թփի չոր ճյուղերին՝ արյան կաթիլներ։

Դիլան դային ձորով իջավ ներքև։

Երբեմն երազ էր թվում միրհավը, բայց մորակի տեղերը մրմնջում էին, աչքի տակ ցավ էր զգում, ոտքերը թեթև դողում էին։

Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին միայն մի վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է։ Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ, ինչպես Սոնայի մարմինը լաջվարդ շապիկի մեջ։

Տուն չգնաց։ Քարքարոտ արահետով իջավ այգին։ Ծռնչաց հնձանի դռնակը, ներս մտավ, մեկնվեց քարե հատակի վրա։

Երբ առավոտյան արևի շողքը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, Դիլան դային զարթնեց, տրորեց աչքերը և աչքի տակ ցավ զգաց։ Ուռուցքը չէր անցել։

Այդ օրը նա քարե տաշտում ավելի զայրացած էր ճմլում սև խաղողը և չէր զգում, թե ինչպես քրտինքը գլորվում է ճակատից, կաթում պղտոր գինու մեջ...

* * *

Աշուն էր, պայծառ աշուն...

Հնձանի առաջ նստել էր Դիլան դային, գլուխը խոնարհել կրծքին ու միտք էր անում արևի տակ՝ անցած-գնացած օրերի մասին։



409—6

Այդ աշնան հաջորդ ամառը Սոնան մեռավ երեխայի վրա, և լաց լացին նրա մայրը, ամուսինը, բարեկամները։ Ուրիշ աղջիկ գնաց նրա տեղը, Դիլան դային էլ կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաջվարդ շապիկը, արծաթե սուրմանները։

Դիմացի բլրակի լանջին գերեզմանատունն է։ Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը վաղուց լցվել են հողով, քարը թեքվել է մի կողքի վրա և թաղվել հողի մեջ։

Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին։ Արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ...

Քանի աշուն էր անցել այն օրից,—համարք չունի։ Գիտի, որ ինքը զառամել է արդեն, քայլելիս հենվում է փայտին, աչքը չի տարբերում աշնան անտառի գույները, ականջը սուր չէ մանրիկ ոտնաձայն լսելու։

Հնձանի առաջ խոխոջալով հոսում էր առվակը, գիշեր-ցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախճան և անքննելի զրույցն անում մամուռներին, քարերին...

Դիլան դային առվակի կողմը նայեց, ժպտաց։ Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում։ Այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր...

Ապա միտքը սահեց, արահետով անցավ դեպի անտառը։

Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա։ Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ,—տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտքերը պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը, և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով...

Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր։

...Դիլան դային վեր կացավ, հետ քաշեց հնձանի դուռը, երկաթե փակն ամրացրեց, մինչև մյուս գարուն։ Ապա կռացավ, դժվարությամբ շալակեց չորացած ոստերի և

ցողունների կապը և հոգնած ոտքերը ծերունու հուշիկ քայլերով փոխեց դեպի այգու դուռը։

Այգում էլ ոչ ոք չմնաց։

Միայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները. չորացած տերևներն անհանգիստ խրմբվում էին այս ու այն ակյունում, թպրտում հուսահատ և անմռունչ պառկում սև գուբի մեջ։

# ՀԱՆԱՎԱՆՔ

*Նախարարն անցավ Քասախ գետի ափով և այնտեղ, ուր գետը խոր անդունդի մեջ վշշում է, պղտոր ալիքները զարկում ժայռերին, քերում ժայռերը, հունը և ավելի խոր թաղվում ժայռերի մեջ,— բարձր ժայռերի գլխով անցավ Նախարարը և որոշեց կառուցել մի հոյակապ տաճար։*

*Գուցե այդպես չի եղել, գուցե եպիսկոպոս է անցել և ցանկացել Քասախի ափին տեսնել մի վանք, որ խոյանա տիրակալ՝ քարափի գլխին, պատուհանները նայեն ձորին, գետի ալիքներին, փրփրոտ սահանքներին, և կամարների տակ դպիրները կարդան շարական ու սաղմոս, ծլնգան զանգերը, և վանահայրն աղոթքի մեջ մոռանա աշխարհը, Նախարարի հարճին...*

*Հանավանքի քարերը չեն պատմում այդ մասին։*

*Բայց քարերի վրա գրեր կան այն մասին, որ Հանավանքը հնձաններ է ունեցել, խաղողի այգի, ձիթահան ու ջաղաց, որ իշխանները «հոգու փրկության» համար գյուղեր են նվիրել վանքին՝ արջառներով գեր, անտառներ՝ երեններով լի, գյուղեր և գյուղերում՝ հեթանոս ռամիկ․ Հանավանքի քարերի վրա հիշված է այդ մասին։*

*Քարափի գլխով նախարարը յոթերորդ դարում անցավ և երբ իր կամքը հայտնեց համհարզներին, նա չմտածեց, որ դարեր հետո միայն Քասախը պիտի մնա, ժայ-*

ռերը ձորի և շինականը ռամիկ, որ իր շալակով կրեց հսկա քարերը Հանավանքի։

Դարեր անցան, շինականը բազմացավ, և այնտեղ, որտեղ անտառներ կային, անտառներում երեներ, մնացին քարեր, փափուկ հողեր, որովհետև շինականին լավաշ հաց էր հարկավոր։

Ցամաքեց գետինը չբեր կնոջ արգանդի պես։ Առուներից հիշողություն մնաց և փոքրիկ ձորակներ, ձորակների մասին ավանդություն հին օրերից, թե կար ժամանակ, երբ ձորով փրփուր առուներ էին անցնում, անտառում պախրան կռանում էր՝ առվակից ջուր խմում։

Շինականը շատացավ, իշխանական անտառի ծառերը դարձան մարագի գերան, մարագները վառվեցին, բնակչությունը պահվեց քարանձավներում, և երբ արևը դարձյալ շողաց խաղաղ կամարի վրա, շինականը դուրս եկավ քարանձավից, ցորենը ծլեց փափուկ հողում, և գետնափոր տներում ձմռան ցուրտ գիշերներին շինականը դարձյալ շատացավ։

Երբ առուների ջուրը պակասեց, կացնահար եղան վերջին վաղերը, թմբերը հավասարվեցին, հնձանները պարապ թողին։ Անձրև եկավ, ձյուն ու քամի, անձրևը ծեծեց հնձանի պատերը, և հնձանները հավասարվեցին հողին, ինչպես խաղողի այգում թմբերը։

Հնձաններից էլ մնաց հիշողություն, ինչպես յոթերորդ դարու նախարարից։

Հանավանքի կտուրի վրա փշեր բուսան, փշերը հնադարյան կրաշաղախը ճեղքեցին, քարերը տեղահան արին, և ժաժքի մի գիշեր գմբեթը փլվեց, քարերն ընկան Քասախի մեջ, գետը փրփրաց և ծածկեց քարերը, որ դարեր առաջ շինականը պոկել էր, իր մեջքի վրա վերև բարձրացրել։

Լուսաբացին պառավ կանայք ավելի ջերմեռանդ համբուրեցին վանքի ծխից սևացած քարերը, այծերը մկկացին և ճարպիկ ոստյունով ընկած քարերի վրայով բարձրացան վանքի կտուրը, կտուրին բուսած թփերը կրծելու։

Տարիներ անցան։ Գյուղը տղի պես փակչել էր հայրենի հանդին։ Կուչ էր գալիս, երբ հարվածում էին, մըտնում էր պատյանի մեջ, որպես խխունջ, երբ լորձունքոտ շոշափուկները դիպչում էին տհաճ իրի՝ խանի սարվազին, սինոդի տուրքին, պրիստավի կնուտին։

Կուչ եկած ապրում էր գյուղը Հանավանքի պարիսպների տակ, անջուր հողերում հաճար ցանում, հաճարի բլիթներ ուտում, լղար եզան աղբից հարդախառն աթար շինում, աթարը ծեփում ուրարտական պարիսպների քարերին և հեթանոս պապերի դագաղ-կարասներում պահում աղած վարունգ։

* * *

Հերու գարունքին, երբ Արայի լյառը փեշերից ձյուն էր հալում և լանջը մերկացնում, ձյունաջրի պղտոր առվակները ձորակներով գլորվում էին դեպի Քասախի ձորը, Հանավանքում մի շինական, որի պապերը յոթերորդ դարում շալակով քար էին կրել վանքի պատերի համար, Հանավանքից մի շինական հերու գարունքին աչքը դրեց վանքի պարիսպների միջև ընկած հողակտորի վրա։

Շինականը ման եկավ վանքի չորս կողմն ընկած քարերին, նայեց սրբատաշ քարերին և մտքում դրեց կալ ու մարագ շինել վանքի քարերից, հողակտորն էլ՝ բոստան։ Եվ երբ կռացավ նայեց ձորին՝ տեսնելու, թե ճամփա կա՞ ձորից կժերով ջուր առնելու ամռան շոգին կալվորի համար,— երբ նայեց ձորին, նա չիմացավ, որ յոթերորդ դարու նախարարն էլ այդտեղ, քարափի վրա ցանկացավ տեսնել վանքը կամարակապ, նա չիմացավ, որ վանահայրն այդ քարափից նայել է Քասախի պղտոր ալիքներին և կարոտել նախարարի հարճին, կարոտել և կարդացել սաղմոս։

Հով էր քարափի գլխին, շինականին հովը դուր եկավ։ Կալին կալսածը հեշտ կլիներ քամուն տալ։ Եվ ինչքան

լա՜վ է, որ հնում պարիսպներ են կառուցել վանքի շուրջը։ Հարևանի այծերը չեն գա, բոստանի կանաչը չեն կրծի։ Պարիսպների ետև, կալ ու մարագի կողքին, տուն կշինի քարափի գլխին և կապրի՝ հարևանի աչքից հեռու պարիսպների ետևում։

Տանը, երեկոյան, մտմտաց մեկ էլ, ծանր ու թեթև արեց ցերեկվա իր ցանկությունը և հարմար գտավ։ Հարկավոր համարեց հենց մյուս օրը ծառեր տնկել, բոստանը փորել, պարսպի փլված տեղում մի դուռ կախել, որ այծերը չկրծեն բոստանի կանաչը։

Շինականն ամենից առաջ բոստանատեղը պատեց։ Քարեր շատ, նախշերով քարեր՝ նռով ու ողկույզներով, քարեր՝ քամուց, արևից գիրը տեղ-տեղ խանգարված քարեր։ Ինչ որ ձեռն ընկավ, առավ պատը շարեց, ուղղանկյուն մի պարիսպ, մարդաբոյ շարեց, բահն առավ, սկսեց փորել։ Հողի տակից կղմինդրի կտորներ էին դուրս գալիս, ջարդված կարասի, քարեր։ Բահով շպրտեց ջարդված կարասին, քարերից մաքրեց բոստանատեղը և ավելորդ քարերը գլորեց ձորից ցած։

Իրիկնադեմին քարի վրա նստեց, ծխեց։ Ձորից հով էր գալիս և շոյում քրտնած ճակատը։ Ծխեց, նայեց վանքի կիսավեր պատերին, խաչքարերին։ Շինականին ավելորդ թվաց հին Հանավանքը։ Ի՜նչ լավ բոստան կլիներ, սեխ ու ձմերուկ, քանի՜ հարյուր տարի դինջացել է Հանավանքի հողը։

Լիներ, նորից մի ժաժք լիներ, ինչպես առաջ, և եղածն էլ թափեր ձորը, մոռացվեր վանքի տեղը։ Դուրս կգար իր բոստանից, պարիսպը կընդարձակեր, վանքի տեղն էլ կմաքրեր, իր սահմանի մեջ կառներ և կողքի հին դամբարանները, քարերը կիսով չափ թաղված հողի մեջ, գիրն անընթեռնելի։

Կառներ իր սահմանների մեջ և իշխանական գերեզմանների վրա կցաներ սոխ ու սխտոր, ծիրանի տնկեր և

*ծիրանու արմատները կիջնեին ներքև, կմտնեին իշխանական ոսկրների մեջ, և ոսկրները համեղ ծիրան կտային։*

*Վանքը շվաք չէր գցի իր բոստանի վրա...*

*Շինականի վրա գյուղում թոնթորացին, խոսք եղավ Հանավանքում, թե չպիտի թողնեն, որ բոստան անի, տեղը հնուտ է, սրբավայր։ Խոսք եղավ և այն մասին, որ գյուղում բոստանատեղ չկա։ Շինականը բախտավոր է, հարմար հող է ճարել։ Թոնթորացին, հետո լռեցին։*

*Շինականի կինը հավան չէր մարդու արածին, բայց չբողոքեց։ Առավոտը կանուխ գնաց, համբուրեց խաչքարերը, երկու բարակ, իր մատների պես բարակ ու դեղին մոմեր վառեց, չոքեց՝ աղոթքի, բայց ոտնաձայն լսեց, հեռացավ։*

*Ժամհարն էր, եկավ վանքի մի անկյունում դարսած խոտից մի խուրձ տանելու։ Վանքի դռանը վառած մոմ ժամհարը վաղուց չէր տեսել։ Հանգցրեց մոմերը, գրպանը դրեց։ Երեկոյան գոմում տավարին ապուր տալիս պետք կգար։*

* * *

*Ձմեռը բիբարով տոլման ավելի համեղ էր շինականի համար։ Ուտում էր, մեծ պատառներ կուլ տալիս և ամանը մեկնում կնոջը։*

*— Թե կա, մի քիչ էլ գցի...*

*Բիբարը կծում էր լեզուն, տաքանում էր ստամոքսը, և դուր էր գալիս վանքատեղի բոստանի բիբարը։ Եվ ոչ մի վանահայր անցած դարերում ձմռան օրերին չի ստացել այնքան խաղաղ հաճույք, ինչքան շինականը՝ իր ցանած բիբարը բերանում։*

*Երբեմն գնում էր տնկած ծառերին նայում։ Մի քանի տարի էլ՝ կալ ու մարագը կլինի, և ամռան շոգին, կալից բեզարած կպառկի ծառի ոտքի տակ։ Ձորից հովը կբերի Քասախի ալիքների սառնությունը, միրգը կհասնի ամռան արևի տակ։*

Բայց այդպես չեղավ, մրգերը չհասան։

Թուղթ եկավ, մեջը գրած, որ Հանավանքը հնուտ է, արգելվում է վարուցանքս անել, ծառ տնկել, քարերը տանել տնատեղի համար։

Գարունքին, երբ հերվա պես ձյունը հալվեց Արայի լեռան փեշերից, եկան հողերը բաժին անելու։ Քարակույտեր դրին հնուտ հողերի և գյուղի սահմանի վրա։ Բոստանի ծառերը հանեցին։

Եվ այն, ինչ միտք էր արել հերու գարունքին, քարափի գլխից Քասախին նայելիս, կալն ու մարագը և տունը պարիսպների հետ, այդ ամենը շինականին հալվող ձյունի պես թվաց։

Կախված դուռը կրնկահան արեց, հանեց։

Այծերն էլի բարձրացան կիսախարխուլ պատերի գլխին բուսած մացառները կրծելու։ Քարից քար էին ցատկոտում։ Եվ երբ շաղախի մի կտոր վայր էր ընկնում, արձագանքը զրնգում էր կամարների տակ, աղավնիները թռչում էին, օդում պտույտներ անում և իջնում նորից։

Շինականը երբ կրնկահան արեց դուռը, նայեց Հանավանքին։ Ավելորդ թվաց նրան վանքը քարափի գլխին և համեղ՝ բոստանի բերքը...

## ԳՅՈՒՂԲԱՀԱՐԻ ՀԱՄԱՐ

*Կա մի գյուղ՝ քսան երդիկով, անունը Դրմբոն։ Առավոտ ծեգին քսան երդիկից ծուխ է բարձրանում, կրակը թանով ապուրն է տաքացնում։*

*Դրմբոնը ձորեր ունի դրնգան, սրածայր քերծեր, միմի շիշ փափախ, և ձորում դրնգան էշի զռոցը գիլ արձագանք է տալիս՝ դմբ-դմբ դրնգան։ Եվ երբ ձորերում արձագանքը մի ապառաժից մյուսին է խփում, այծերը քարի ծերպին նոսր մացառի կանաչ տերևները չեն ուտում, խլշած նայում են ներքև, ձորի անդունդին և մկկում։*

*Կա մի գյուղ՝ Դրմբոն, ճանապարհից հեռու, առանց դպրոցի, Դրմբոնում մի տերտեր՝ տեր Մարուքը խնուսցի։ Երբ «փաշայի» գաղթականության ալիքը պղտոր, տարիներ առաջ լափին տվեց Դրմբոնի ձորերին և հեռացավ, պղտոր ալիքը դրնգան ձորերում թողեց մի տաշեղ՝ խնուսցի տեր Մարուքին։*

*Պատահել է ճիշտ այնպես, ինչպես մանկական հեքիաթումն է գրված. «Երկինքը փուլ եկավ, մի կտորն էլ պոչիս ընկավ»։ Եվ այդ կտորը տեր Մարուքն էր, որ ընկավ Դրմբոնի պոչին։*

*Մի ամիս, երկու ամիս հիվանդանում է տեր Մարուքը, հետո տեղը լայնացնում, դառնում Դրմբոնի ծխատեր քահանա։ «Մենք քեզ հոտ, դու մեզ հովիվ», ասում են դրմբոնցիք։ Տեր Մարուքը երջանիկ օրերում է ապրում, խժռում, ինչպես թրթուրը կաղամբի համեղ տերևը, ան-*

դաստանով, պատարագով լղարած կողերը ճարպակալում։

Դրմբոնում կա մի կին՝ Գյուլբահարն այրի, երկու որբատեր, տունը՝ մեկը քան երդիկից, տեր Մարուքի քան ծխից,— տունը գյուղի ծայրին։ Գյուլբահարը՝ մարդաթող, Գյուլբահարը՝ «գարնան ծաղիկ»։ Եթե ապրեր Թլկուրանցին Դրմբոնում, Գյուլբահարի համար երևի կասեր.

— Գենա բահար, այլվի բահար,
— Այլվի կուտան սիրո խաբար...

Թլկուրանցու փոխարեն տեր Մարուքն է մտքում ասում, թե ի՞նչ փափուկ միս ունի Գյուլբահարն այրի։ Ճարպոտում է տերտերը, եռում է արյունը երակներում, և զատկին մասունք տալիս նրա ձեռքը կամացուկ շոյում է Գյուլբահարի թշերը։

Մի տարի, երկու տարի։ Գյուլբահարն է տերտերի փոխնորդը լվանում, փարաջան կարկատում։ Փոխնորդը թևի տակ Գյուլբահարի մոտ գնալիս տերտերը մութին է սպասում, գիշերին՝ անլուսին։

Մեկ, երկու. հոգևոր հորդորը դառնում է մարմնավոր, և ամեն անգամ, Գյուլբահարի տնից վերադառնալիս, տեր Մարուքն ավելի ախորժով է սղալում միրուքը, մեջն սպիտակած, շրթունքները ծպպացնում։ Այդպես հանգստանում է ճանճը, սեղանի վրա մոռացված շաքարի կտորը լիզելուց հետո։

* * *

Մի օր էլ Դրմբոն կոմսոմոլ մի տղա եկավ, ասեց, խոսեց, դրմբոնցի ջահելները խմբով ճամփա դրին նրան։ Մյուս օրն արդեն կոմսոմոլը Դրմբոնում բջիջ ուներ։

Գյուղն առաջ էլ դժգոհ էր տեր Մարուքի Գյուլբահարի մոտ գնալուց։ Դժգոհությունը խուլ էր։ Դրմբոնը չէր հավատում, թե քահանան անդաստանից բացի Գյուլբահարի համն էլ գիտե։

Դրմբոնը նահապետական, վագոնի երեսը չտեսած, Դրմբոնը՝ առանց երկաթ գութանի, կոմսոմոլն էլ հին ադաթով, պապական նամուսով։ Մի հարց, որպես սյուն, ցցվում է չահելների առաջ.

— Մեր գյուղի պատիվը գաղթական տերտերն էսպես ոտնատակ տա՞... Այ նրա կարգին, ճակատի մեռոնին...

Դրնգում է կոմսոմոլը, արձագանք են տալիս լուսավորչական ծերերը։ Յախշին՝ Դրմբոնի նախագահը, գործի է անցնում, հետևում են, պայման անում տեր Մարուքին բռնելու։

Զգույշ է տեր Մարուքը, զուսպ է, բայց սենյակի մթության մեջ ցանկությունները հաճելի «ելանեն, լեռնանան և իջանեն, դաշտանան»...

Չի լինում, չի դիմանում։ Մի գիշեր էլ, «տաքության մեջ» հարևանի երեխին ուղարկում է Գյուլբահարին կանչելու, տերտերի մրսած մեջքին գավաթներ փակցնելու։ Երեխան Գյուլբահարին է կանչում, հետո ծլկվում Յախշումոտ։

Վառվում է տերտերի տան կավե ճրագը, Գյուլբահարն իր ձեռքով է կախում կարպետը պատուհանից և երբ հանգցնում է կավե ճրագը, Յախշին կապում է դռան ռիզան։

Ասես արջ է թաթը կոխել ծառի փչակում բուն դրած մեղվանոցում։ Այդպես աղմկում է Դրմբոնը գիշերով, կանայք կտուրներից չանչ են անում Գյուլբահարին, մոթալ փափախների տակ հարյուր աչք է պեծին տալիս, մթնում մահակները շարժում։

Տեր Մարուքը՝ մթին սենյակում, թակարդ ընկած արջի պես մռնում է, խաչակնքում երեսին, իսկ դուրսը՝ գարնան վարար հեղեղի պես վշշում է Դրմբոնը, աղմուկից դրնգում են ձորերը...

— Այ ժողովուրդ կարգին խնայեք...— Մուխսին է կանչում, գեղի ալևորներից՝ հարգով, պատվով։

Յախշին ետ է տալիս ամբոխին աղմկող, մինչև լու-

սաբաց պահակ է դնում տերտերի դռանը։ Եվ մինչև լուսաբաց օջախի մոտ ջահելները խոսում են, պլան քաշում, թե ինչ անեն տեր Մարուքին։

Առավոտյան գյուղի մեյդանում, կաղնու շվաքի տակ, ուր ամռան շոգին Նախրից ետ արած հորթերն են դինջանում, կաղնու շվաքի տակ, գեղական ժողովը որոշում է տեր Մարուքին գյուղից հանել։

Երեք օր բերնեբերան, ձորերի արձագանքի պես, գիշերվա լուրն է տարածվում։ Խոսում են մոտիկ, հեռու հարևանները։ Մեկը թե՝

— Գնացի, որ երդը ծածկեմ, տեսա տերտերի տանը ճրագը հանգած։ Երդից կռացա, փսփսոց էր գալիս, իմացա, որ տերտերը Գյուլբահարի հետ պոռնկություն է անում։ Էդ միջոցին Յախշին գցում է ռիզանը։

Մի ուրիշը պատմությունն ավելի է ծաղկեցնում.

— Վազեվազ գնացի տերտերի տունը և հեռվից տեսա, որ տերտերը դուռը ծեծում է. նաև տեսա, որ մի շվաք տան աջի կողքով անցավ դեպի վերև...

* * *

Մի օր էլ թուղթ եկավ Յախշու անունով, դատարանն էր կանչում։ Ո՞վ էր սովորեցրել տեր Մարուքին գործը դատարանին տալ։

Էլի ժողով, էլի աղմուկ քարի գլխին ցինի բնի պես թառած Դրմբոնում։

— Սաղ գեղով վկա ենք, տեր Մարուքին հանենք մեր գյուղից...

Եվ քարվանը շարժվում է դատարան, ճանապարհին՝ աղմկելով, խոսքը մեկ անելով, մահակներով։

Դրմբոնը դատարանի կարգին ծանոթ չէ դեռ։ Եվ երբ քարվանը ներս մտավ, Մուխսին, որ գիշերվա աղմուկին կանչել էր, թե կարգին խնայեք, Մուխսին տեսավ տեր Մարուքին դատարանի անկյունում, նստարանի վրա կուչ եկած։ Եվ Մուխսին, թե՝

— Բա էս քո տեղն ա՞, տերտեր,— ասաց և սկսեց պատերից կախված նկարներին նայել։

Դատարանի լուսավոր սենյակի պատերին խառնիխուռն նկարներ են փակցրած։ Ահա մի պլակատ՝ կաթնարտելի մասին, թևավոր մի ուղտ, օդի ոլորտում թռչում է, տակը տպած «Կորչի իմպերիալիստական պատերազմը»։ Այդպես տպել են, բայց «պատերազմի» վրան դատարանի ցրիչը փակցրել է «դատարանը» և ստացվել է «Կորչի իմպերիալիստական դատարանը»։

Դրմբոնցիք նայում էին պատի նախշերին, Մուխսին թոթում էր Յախշուն— տես, ինչ նախշուն կով ա էն...

Դատավորը մեղադրականը կարդաց, և երբ Յախշին ասաց, թե չհասկացանք, դատավորը բացատրեց, որ խորհուրդը մեղադրվում է ինքնագլուխ և ապօրինի բանտարկության համար։ Մի կում սառը ջուր թափվեց Մուխսու գլխին, և նա շշմածի պես նայեց պատերին, դատավորին, կոշտացած մատներով փափախը ճմռթեց, ինքն իրեն հարցրեց, թե՝

— Էս ո՞նց ա, տեր Մարուքը գեղի պատիվը թափեց, հիմա Յախշին ա մեղավո՞ր...

Եվ երբ դատավորը Յախշուն հարցրեց, թե մեղավոր է ճանաչում իրեն, Մուխսին առաջ ընկավ.

— Մեղավորը տերտերն ա...

Յախշին խոսեց, Մուխսին, դրմբոնցիք։ Մեկն ասաց, թե գյուղի կանայք են դրդել, որ Գյուլբահարի գլխին այդ խաղն անեն, թե չէ՝

— Մենք էլ կսովորենք նրանից։

Այդպես են ասել Դրմբոնի կանայքը։

— Գյուլբահարն ինչպիսի՞ կին է, վարքի կողմից մաքո՞ւր է, թե ոչ,— հարցնում է դատավորը։

Դրմբոնցի մեկը, արծվաքիթ, քթում խոսող, տեղից կանչում է՝

— Գյուլբահարին իսկի կարողանո՞ւմ ենք պահել, ետ տալ էդ ճանապարհից։

Մի ուրիշը, որ խոսելիս ձեռքերը կրծքին է խաչում և խոնարհ գլուխ տալիս, մի իսկական դրմբոնցի, դատավորի հարցին, թե՝ առաջ էլ է՞ տեսել Գյուլբահարին տերտերի մոտ,— պատասխանում է.

— Մի անգամ եմ տեսել։

— Ի՞նչ էր անում...

— Չեմ կարա ասի, լեզուս պատ չի տամ ասեմ։

— Ուրիշին հո չե՞ս ասել դրա մասին։

— Դե, հոգի ունեմ տալու։ Երեք մարդու թաքուն ասել եմ, թե նրանք սաղ գեղով մին իմաց են տվել, մեղքը նրանց վզին լինի։

Դրմբոնցի չորանին են հարցնում՝ անգետ, անբան, փափախը գլխին, երկու ոտքով քարի կտոր։

— Անունդ ի՞նչ է,—հարցնում է դատավորը։

— Ի՞մ,— պատասխանում է ծոր տալով և քիչ անց ասում։

— Քանի՞ երեխա ունես։

— Ե՞ս,— ասում է, մտքերը ժողովում, ասես նոր է իր երեխաների համրանքն անում,

— Ի՞նչ գիտես։

— Ե՞ս...— և պատմում է, որ այդ գործից հետո տեր Մարուքը ժողովրդին խնդրել է, թե՝

— Ա հասարակություն, անց կացեք, ծեր քահանա եմ, սպիտակած միրուքիս խնայեցեք։

Դատավորը Յախշուց է հարցնում, թե ինչո՞ւ է ռիզան գցել, Մուխսին տեղից ձեն է տալիս.

— Բա թողնեինք շնություն աներ, էգուց էլ սաղ գեղը վարակե՞ր...

Յախշին պատասխան է տալիս, որ ռիզան գցելու մասին ժողովուրդը որոշում ունի։ Մի կոմսոմոլ ավելացնում է, թե Դրմբոնում կառավարության օրենքներին ծանոթ չեն։

— Էդ գործը մեր գյուղում շատ վատ բան ա, իսկ թե կառավարության օրենքին ընդունելի չէ, էդպես չենք անի...

*Տեր Մարուքն է խոսում։ Գյուլբահարն աղքատ կին է, տերտերն իր եկամուտից երբեմն բաժին է հանել նրան, շորերն է լվանալու տվել, իսկ ինչ որ ժողովուրդն է ասում, սխալ է, սուտ, ջահելների սարքած խաղ։*

*— Հայոց սինոդ որ իմանա, ինձ ի՞նչ կանի,— ասում է, նայում դրմբոնցիներին, «ծխատեր» քահանայի դիրքով։*

* * *

*Դատարանը Յախշուն մեղավոր ճանաչեց, բայց Դրըմբոնի պայմաններն ի նկատի ունենալով՝ ներեց։*

*Աղմուկով հեռացան դրմբոնցիք հաղթանակից վերադարձող բանակի պես։*

*Միայն տեր Մարուքն էր, հարցական նշան, միտք անում, թե էլ որտեղ կա Դրմբոն, ժամի զանգեր ծլնգան, շարական ու ժամշտոց և Գյուլբահար, Գյուլբահար...*



Ա. Բակունց (1931 թ.)




«Մթնաձոր» ժողովածուի շապիկը (1927 թ.)

# ՄԻՆԱ ԲԻԲԻՆ.

Մինա բիբուն ասել էին, որ երեկոյան հարսն ու որդին գյուղ պիտի հասնեն։ Եվ դեռ երեկո չեղած, նա կտրից տուն չէր ուզում գալ։

Կանգնել էր կտուրի վրա, մի ձեռքը ճակատին, մայր մտնող արևի շողերից աչքերը ծածկելով, նայում էր հեռուն, կածանի կեռումներ պտույտին և սպասում էր, թե երբ են երևալու։

Որդին օտար քաղաքից էր գալիս։ Տասը տարուց ավելի էր, որ գյուղ չէր եկել, մայրը նրան չէր տեսել։ Քաղաք էր գնացել դեռ պատանի, մախմուրի պես աղվամազով, իսկ այժմ վերադառնում էր կնոջ ու աղջկա հետ։

— Ա՛յ պառավ, բա օքմին չի երևո՞ւմ,— ներքևից կանչեց Ավան ամին։ Նա էլ սենյակում էր անհամբեր և շուտ-շուտ ձայն էր տալիս պառավին, լսողությունը սրած, ոտնաձայնի պատրաստ։

— Ջինգիլա քարի մոտ հրեն երկու ձի յա երևում, մին ոտավոր էլ կա,— պատասխանեց Մինա բիբին կտուրից և լարեց առավել տեսողությունն իր։ Նրա աչքերն ավելի փոքրացան, ձգվեց, ասես երկարացավ, որ ավելի լավ տեսնի, կանգնեց ոտքի թաթերի վրա։

Մի պահ հառեց կկոցած աչքերը Ջինգիլա քարին, փորձեց որոշել, թե ովքեր են գալիս։ Մի քիչ էլ, և հանկարծ Մինա բիբին ծնկներում թեթև դող զգաց. տափ ընկած



409—7

ձկան պես սիրտը թրթռաց, ներսում հրճվանքը ալիքի պես բարձրացավ, կոկորդին դեմ առավ։

Եվ շնչասպառ, կտուրից իջավ, տուն վազեց։

— Գալիս են, ա՛յ մարդ, հրեն է...

* * *

Մյուս առավոտ Մինա բիբին սովորականից կանուխ զարթնեց։ Գիշերը քունը չէր տարել։

Գիշերը երբեմն զարթնում էր, նստում տեղաշորի մեջ և ականջը սրում՝ տեսնելու, թե ով է զարթուն, ինչպես են քնել։ Մի անգամ էլ վեր կացավ, ճրագը վառեց, նայեց մեկ էլ, սակս տեսածին չէր հավատում։ Մոտեցավ և վերմակի կախ ընկած ռուսը կամացուկ շտկեց։

Նա մի ուզեց ալևորին զարթեցնի, մտքինն ասի, բայց հանգ չարավ։ Ճրագը հանգցնելուց առաջ մեկ էլ նայեց, ինչ-որ բան ասաց գորովով և շուլալվեց վերմակի տակ։

Առավոտ կանուխ ջրի գնալը, կովեր կթելը Մինա բիբուն ավելի հեշտ թվաց։ Ուրախությունից ջահելացել էր. երբեմն սենյակ էր մտնում, մտքինը մոռանում, նորից դուրս գալիս։ Կամ օջախի կրակին փչելիս, երբ աչքին էր ընկնում հովանոցը կամ մի ուրիշ իր, որ բերել էր որդին,— տնտղում էր ուշադիր, էլի իր տեղը դնում։

Երբ օջախի առաջ ամաններն էր լվանում, թեյամանը կպավ ափսեին և զնգաց։ Ավան ամին նեղացավ, թե կամաց, կզարթնեն, իսկ Մինա բիբին՝

— Ձեռքս չորանա։

Ասեց և շփոթմունքից շնկատեց. որ կաթը եռաց ու սպիտակ փրփուրը թափեց մխացող աթարի վրա։

Ավան ամին սրահի առաջ կանգնել էր և ուրախ ժպիտըն երեսին բարի լույս էր ասում փողոցով անցնող հարևաններին, որոնք մոտենում և աչքալույս էին տալիս։

— Փոխն էլ ձեզ լինի, ձեր ղարիբն էլ տուն գա։

Եկողին Ավան ամին մի թաս օղի էր առաջարկում ու մազա՝ չոր միրգ կամ պանիր-հաց։

Դեռ անցյալ տարի Նա իր մտքում դրել էր մի եզ մորթել որդու գալու առթիվ։ Եվ երբ այդ մասին խոսք բացեց պառավի հետ ու ավելացրեց, թե չի՞ լինի, որ եզան տեղ մի չաղ ոչխար մորթի, Մինա բիբին բողոքեց։ Խոստացած մատաղը պիտի անել, հազարից մի անգամ է այդ հարկի տակ այդպիսի ուրախություն։

Հետո Ավան ամին գոմ գնաց։ Նա մոռացել էր տավարին կանուխ ապուռ տալ։ Այդ առավոտ նա իր բազուկների մեջ մի առանձին ուժ զգաց, ավելի արագ գոմն ավլեց, խոտ ու դարմանը ավելի շատ տվավ։

Նրան թվաց, թե տավարն էլ է զգում, որ տանը ազիզ մարդիկ կան։ Կովերը տաք գոմում ախորժով խոտ էին ուտում, իսկ Ավան ամին կոշտացած ձեռքերով, որոնց ուռած երակներն ասես պարաններ լինեին,—շոյում էր կովերի մեջքը, փաղաքշական խոսքեր ասում։

— Ապե՛ր, հո շատ չես չարչարվել...

Որդին էր՝ Տիգրանը, որ զարթնել էր ու հոր ետևից գոմ եկել։

— Մի գա՛, գնա՛, գնա՛ տուն. սապոգներդ թրքոտ կանես, բալաս։ Մեր փեշակն ա, բա, պտի չարչարվենք, առանց էդ չի։

Գոմ գալուց առաջ Տիգրանը իրենց բակից նայեց գյուղին, խոտի սևացած դեզերին, աթարի բուրգերին, շնչեց գյուղի օդը՝ բակերում, փողոցներում կիտած աղբի, վառած աթարի ու կծծած խոտի, գոմերից դուրս եկած ու մեղի անդուրեկան, ծանր հոտով լցված գյուղի օդը։

Եվ այնպե՜ս խեղճ թվաց հայրենի գյուղը, այնքա՜ն հետամնաց։

Առաջին տպավորությունը գրավիչ չէր։ Քաղաքում երկար տարիներ ապրելուց հետո նրա հիշողության մեջ վառ էր մնացել միայն գյուղի գրավիչ կողմը՝ սարերը ծաղկաշատ, աղբյուրները պաղջուր, արոտները կանաչ, ուր խոտը տեղ-տեղ մինչև գոտկատեղն է հասնում։

Նա մոռացել էր, որ գյուղում կեղտ շատ կա, սապոնով երեսը չեն լվանում, մի ձեռք շոր ունեն, հագնում են այնքան, մինչև հնանա, սևանա. հետո կարկատում են հազար տեղից ու նորից հագնում։

Տիգրանը կանգնել էր գոմի դռան մոտ ու նայում էր, թե ինչպես հայրը աղբով լի քթոցը շալակին, ոտները կվաչրի մեջ ճլմփացնելով ներս ու դուրս է անում, գոմը մաքրում։

Նրա աչքին ընկավ հոր վզի ամուր ջիլերը, որոնք լարերի պես ձգվում էին, երբ հայրը ծանր քթոցի տակ վիզն էր երկարում։

— Գնա՛, գնա՛ տուն... նանիդ հիմա չայը գցած կլինի...

Տարիներ հետո, երբ քաղաքում Տիգրանը մտաբերում էր գյուղը հայրենի և հորն ալևոր, նրա աչքի առաջ կանգնում էր հայրը՝ վիզը ձգած, ջղերն ուռած՝ պինդ լարերի պես, աչքերն ավելի դուրս ընկած...

• • •

Առաջին օրերը հա գալիս-գնում էին հարևան ու բարեկամ։ Նրանք բոլորն էլ նույն ձևով էին արտահայտում իրենց հրճվանքը, համբուրում գյուղացու պինդ պաչով այտ ու աչք, ունք ու ճակատ։

Երբ մի անգամ էլ Անժիկին պաչեցին, նա թաշկինակով թշերը սրբեց, նոթերը կիտեց այնպես, ասես տհաճ էր գյուղացու պաչը։

Մինա բիբին նկատեց։ Նրան դուր չեկավ, որ Անժիկը սպիտակ, մաքուր թաշկինակ ունի։ Փոքրիկ աղջկան թաշկինակ չի սազում, լավ չի սովորի։

Միտք արեց Մինա բիբին, տխրեց։ Նրա մտքովն անցավ, որ որդին, հարսն ու թոռը գյուղում չեն ապրելու, քաղաքին են վարժ և էլի պիտի գյուղը թողնեն, հեռանան։ Իսկ ինքը կապված է գյուղին, Ավան ամուն, խնոցուն ու

*հին ճախարակին, որ շատ ձմեռներ լացել էր իր հետ, տաք քուրսու մոտ, սև նավթի ճրագի տակ։*

*Մի անգամ էլ Անժիկը թաշկինակով իր գդալը սրբեց։ Այդ նկատեց և Շարմաղ հորքուրը, որ ժպտալով նայեց Անժիկին.*

*— Մինա՛, տեսնո՞ւմ ես. թոռդ քեզ հավան չի։*

*Տիգրանն ուզեց տպավորությունը կոծկել և ասաց, թե նա քաղաքում էլ էր այդպես անում։ Բայց Մինա բիբին էլի տխրեց, կոտրվեց, ինչպես այն ժամանակ, երբ Անժիկը թաշկինակով երեսը սրբեց։*

*Անժիկի համար գյուղում շատ բան նոր էր։ Նա բազմաթիվ հարցեր էր տալիս հորը, թե ինչո՞ւ գյուղում պատառաքաղ չկա, ինչո՞ւ տատը շաքարը շորի մեջ է փաթաթում ու սանդուղի մեջ պահում։ Գյուղին անվարժ մանուկի հետաքրքրությամբ դիտում էր գյուղական ամեն մի աշխատանք ու հարցնում, թե ինչու են այդպես անում։*

*Մի օր էլ հարևանի մեկը ներս մտավ ու Տիգրանին խնդրեց մի բան գրել։ Ստորագրելու ժամանակ մարդը ծիծաղեց։ Անժիկի աչքին ընկավ նրա սպիտակ ատամները և այն, որ այդ մարդը գրիչը բռնել էր այնպես, ինչպես Անժիկը կբռներ գոմի թին։*

*— Հայրիկ, մեր առաջին խմբակում դրանից լավ են գրում։*

* * *

*Առաջին երկու շաբաթը շատ արագ անցավ, և ամեն ինչ մտավ իր հունի մեջ։ Գյուղն իր մեջ առավ նորեկներին, այլևս դադարեցին նրանց մասին խոսելուց, աչքալուս տալուց։*

*Միայն երբեմն գյուղի հարս ու աղջիկ հետաքրքիր նայում էին էլյայի զգեստին, կոշիկներին, գլխարկին։ Ոմանք ծիծաղում էին, գլխարկը համեմատում ծտի բնի*

հետ, ոմանք էլ ասում էին, թե այդպես ավելի լավ է, ավելի ազատ և աչքի էլ դուրեկան։

Տիգրանը գյուղի ժողովներին էր մասնակցում, ասում-խոսում ահել-ջահելի հետ, պատմում նրանց քաղաքի մասին, հեռավոր երկրների անցուդարձի մասին։

Գյուղացիք հետաքրքրվում էին, հարցեր տալիս նրան, իրենց ցավ ու կրակից պատմում։

Եվ շատ հաճախ հուսահատությունը թանձր քողի պես պատում էր Տիգրանին. այնքան շատ էր թերին, գյուղում աշխատանքն այնպես դժվար։ Բայց մեկ էլ նրա ներսում ուժգին գրոհով զարկում էր մակընթաց մի ալիք, ընդնազդորեն սեղմում էր բռունցքը, աչքերը կկոցում, ասես հեռվում տեսնում էր գյուղը գալիք։

Էլյան տան աշխատանքն էր անում, օգնում Մինա բիբուն։ Միասին աշխատանքի ժամանակ Էլյան սրտի դողով և ուշադիր լսում էր Մինա բիբու պատմածը գյուղի ներքինի մասին, թե ինչ է ապրում աղջիկը մանկամարդ, երբ նրան զոռով ամուսնացնում են տարիքով մեկի ունեցվածքի հետ, թե ինչպես են բուժում գյուղում, ինչ ծանր ցավով է վիժում ջահել հարսը՝ ծծկեր մանուկը գրկին։

Մինա բիբին միասին աշխատանքի ժամանակ՝ խնոցի հարելիս կամ բուրդ գզելիս, Էլյայի աչքի առաջ բացում էր գյուղի հազարամյա գիրքը, որի յուրաքանչյուր էջը տգիտության մի զոհի մարտիրոսագիր էր, սկեսրոջ ահի տակ, բռնակալ ամուսնու կրնկի տակ ընկած կնոջ տանջանքի նկարագիր կամ ծածուկ խեղդամահ արած մանուկների պատմություն։ Մինա բիբին մեկ-մեկ դեպքեր էր պատմում ու թեթև գլուխը շարժում։

Սոսկում էր պատում Էլյային, ու թվում էր, թե գյուղում, կիսամութ խրճիթների անկյուններում, դեռ մնում են դարերի թանձր խավարն ու ոգին չար։

Անժիկը պապի հետ էր լինում, երբեմն էլ հարևան երեխաների հետ։ Հասակակից մանուկները հավաքվում

էին նրա շուրջ և զարմացած նայում սիրուն սանրած մազերին, փոքրիկ սանրին՝ մազերի մեջ, կոճակավոր կոշիկներին։ Նայում էին գյուղի երեխաները, և ամեն մեկի սրտիկի մեջ ծնվում էր մի շատ մեծ ցանկություն՝ ունենալ այն, ինչ Անժիկն ուներ, նրա պես կաշվե սև գոտի կապել։ Մանուկներից յուրաքանչյուրն աշխատում էր Անժիկի ընկերությունը ձեռք բերել, նրա հետ ավելի մոտ լինել։

Համարյա ամեն իրիկուն քնելուց առաջ Մինա քիրին Անժիկին խնդրում էր իր հետ պառկել։ Պառավն ուզում էր գրկել թոռան և իր սմքած մարմնի թույլ ջերմությամբ նրա մատղաշ մարմինը տաքացնել, հուսադրել ինքն իրեն, թե վերջին շառավիղը չէ, միջուկը փտած արմատը դեռ շատ ծիլեր է տալու։

Բայց Անժիկը միշտ էլ մերժում էր.

— Քեզ մոտ լավ չի, իմ տեղաշորից չեմ հեռանա։

Անժիկն ավելին էր ուզում ասել։ Նա ուզում էր տատին ասել, որ նրա շապկից ծանր հոտ է գալիս, որ տատը ցերեկով բոբիկ է քայլում, գիշերն էլ առանց ոտքերը լվալու պառկում։

Քաղաքից բերած իր կապույտ վերմակի տակ Անժիկը քնելուց առաջ մտաբերում էր քաղաքը, իրենց դպրոցը, շարքերը պիոներական, կինոն, տրամվայն ու էլի հազար ու մի պես-պես բաներ։ Կապույտ վերմակի տակ Անժիկն իրեն քաղաքումն էր զգում, և այդ նրան դուր էր գալիս։

* * *

Գարնան արևն իրեն արդեն զգալ էր տալիս։ Գյուղի եռուզեռը շատացել էր։

Գյուղը հեռվից մի մեծ մրջնոցի էր նման, որ գարնան սկզբին սկսում է շարժվել։ Գարնան արևն ավելի արագ էր քայքայում բակերում կիտած աղբը, և կծծահոտն ավելի թանձր էր թվում, գրգռում քթի լորձունքոտ մաշկը և աչքերից արցունք հանում։

Գոմերում տավարը նեղվում էր, օդաներում գյուղացիք խոսում էին սարի մասին, ուր մատաղ կանաչն արդեն ծլում էր։

Մյուսների պես Մինա բիբին էլ էր պատրաստվում սար գնալու։ Նա մտքում դրել էր սար գնալուց առաջ Անժիկի հետ մատուռ գնալ։ Նրա կրծքի տակ, որպես մի թույլ կանթեղ, վառվում էր Անժիկին աղոթել սովորեցնելու ցանկությունը։

Ինչո՞ւ ծնվեց նրա մեջ այդ ցանկությունը.—ինքն էլ չգիտեր։ Պառավն ուզում էր կապել նրանց գյուղի հետ, Անժիկին դարձնել գյուղի մի խոնարհ աղջիկ և տարիների ընթացքում արմատախիլ անել այն ամենը, ինչ քաղաքն է տվել։

Ի՜նչ լավ կլիներ, եթե նրանք գյուղում մնային։ Իսկ Տիգրանը միշտ ասում էր, թե շուտով պիտի վերադառնան քաղաք, արձակուրդը լրանում է։ Արդյոք մեկ էլ կգա՞ն գյուղ, ինքը ողջ կմնա՞ մինչ այդ։

* * *

Գարնան մի գեղեցիկ առավոտ, երբ ամեն ինչ աշխույժ և գուրեկան է թվում, երբ մարդ ամենից քիչ է մտածում առօրյա հոգսերի մասին և իրեն ավելի մոտ զգում բնությանը, գարնան այդպիսի մի առավոտ Անժիկն ու Մինա բիբին գնացին դեպի ձորակ։ Տանը Մինա բիբին չէր ասել, թե մատուռ են գնում։ Նա վախենում էր, որ Տիգրանն արգելի Անժիկին։

Երբ դուրս եկան գյուղից, Մինա բիբին սկսեց Անժիկին պատմել, որ ինքը պառավ է, շուտով կարող է մեռնի։ Տատի տարօրինակ այդ պատմությունը, որ նպատակ ուներ երկյուղած տրամադրություն ստեղծել թոռան սրտում, վատ ազդեց երեխայի վրա։ Նա չգիտեր ինչ ասի և վարանքով նայում էր մոռի թփերին, որ մուգ կանաչին էին տալիս ճամփի երկու կողքին։

Հասան մատուռին։ Կիսախարխուլ մի շենք էր, ավելի

քարակույտի նման։ Մառանի մոտ, կածանից ոչ հեռու, հողի մեջ խրված էր ծխից սևացած մի խաչքար, որի մոտ գյուղի շները ճամփով գնալ-գալիս շատ անգամ կանգնում էին, ետևի մի ոտը բարձրացնում և միզում հենց խաչքարի վրա։

Մինա բիբին մոտեցավ, չոքեց, երկյուղած՝ խաչքարը համբուրեց մի անգամ։ Անժիկը զարմացած նայում էր նրան ու չէր հասկանում, թե ինչու է տատը համբուրում այդ սևացած քարը։ Մինա բիբին ոտքի կանգնեց, մոտեցավ Անժիկին և խնդրեց, որ նա էլ համբուրի։

— Չեմ ուզում, կեղտոտ է... Ես քարը չեմ համբուրի, էնտեղ ի՞նչ կա որ...

Մինա բիբին մնաց սառած, Անժիկի պատասխանը նրա համար անսպասելի էր։ Եվ մի պահ նա անշարժ կանգնեց խաչքարի մոտ, ինչպես մի երկրորդ խաչքար։

Հետո սթափվեց ու քայլերն ուղղեց դեպի մառան, կռացավ և կուզեկուզ ներս մտավ, որովհետև մառանի դուռը ցածլիկ էր։ Անժիկը հետևեց տատին։ Նա ուզում էր իմանա, թե ինչ կա մառանում, ինչ է անելու Մինա բիբին այնտեղ։ Ներս մտնելիս Անժիկի գլուխը կպավ դռան քարին։

—Թո՛ւհ, էս ի՞նչ դուռ են շինել...

— Թու չեն անիլ, բալաս, աստված կչանչի քեզ,— երկյուղած ասաց տատը, կարծես սրբազան մի գաղտնիք էր հայտնում։

— Աստված չկա՛, տատիկ,— բարձր և հաստատ պատասխանեց Անժիկը։

Մինա բիբուն թվաց, թե փուլ եկան մառանի պատերը, և պատից մի քար ընկավ գլխին։ Սարսափով նայեց Անժիկին, և հինավուրց մառանի մեջ տատիկին անհարազատ թվացին թոռան աչքերը ծիր։

Մտաբերեց որդուն, հիշեց, որ շուտով հեռանալու են, և անզոր գլուխը խոնարհեց մառանի խոնավ հատա-

կին։ Մատուռի մամռապատ քարերը լսեցին Մինա բիբու զապված հեկեկանքը։

Իսկ Անժիկը ձեռքը մեկնել էր մոռի կանաչ տերևներին, որոնք փարթամորեն փռվել էին մատուռի կտուրի վրա ։

## «ԽԱԳԼԱՑԱՎ»

*Տարօրինակ թվաց զուռնայի կանչը զիլ և դհոլի աղմուկն ընդհատ աշնան արևոտ ցերեկին, բլրի լանջին արևկող արած գյուղում։*

*Հարսանիք չէր և ոչ կերուխում կամ կնունք։ Այդպես չի փչում զուռնան ուռած թշերով, մի աչքը միշտ կիսախուփ զուռնաչին, երբ պարն է զլում, թնդում։*

*Առաջին պահ դժվար էր որոշել, թե ո՞ր գետնափոր խրճիթումն են նվագում։ Երբ զարմացած հարցմունք արի ծանոթ գեղականից, նախ չուզեց ասի, ապա մատը դիմացի տումն ուղղեց և ասաց.*

*— Տասն օր ա էսպես խաղում ա, գիշեր-ցերեկ…*

*Դիմացի տունը՝ կտուրը խոնարհած, մի քիչ թեք ընկած տուն էր, կտրին աթարի դեզ՝ շիշ փափախի պես, դեզի մոտ դեղին դդումի մի շարք։ Փողոցին նայող միակ պատուհանը ներսից շորով էր ծածկած։*

*Զուռնան նվագում էր ներսում, դմբում էր դհոլը, ինչ-որ մարդիկ ոտքերը գետնով էին տալիս սենյակի սալաքարին։ Փակ էր դուռը տան, բակում օքմին չէր երևում։ Եվ եթե մեկն անցնում էր փողոցով, շորով ծածկած պատուհանի առաջ չէր կանգնում, զուռնայի նվագը չէր լսում, այլ արագաքայլ էր անում։*

*Եվ՝ ծանոթ գեղականն իմ հեռացավ մի քիչ, նստեց փողոցում ընկած գերանի վրա, շփեց ճակատն ու ասաց, թե՝*

— Հայվանի ադաթ ա մեզանում էդ խաղը, խաղլացավը։

Չկարողացա իմանալ, թե ինչ ցավ է. բռնում է հանկարծ, ասում են, շատ միտք անելուց, հանկարծակի կոըըստից կամ հրճվանքից անչափ։ Հիվանդի ոսկորները ցավում են։

— Ցավը որդի պես, սաղ ջանով ման ա գալիս... Մին ծունկն ա ծակում, մեկ էլ փախնում սրտի տակ։ Պետք ա էդ որդին սպանեն։

Եվ սպանում են «խաղլացավով»։ Կիսամութ սենյակում նստոտում են վարձովի լալկան կանայք, հիվանդը նստում է նրանց մոտ։ Լալիս են կանայք վարձկան, սուգ անում, մղկտում, և հիվանդի սիրտը թուլանում է, մարելու պես լինում, մեկ էլ ծլունգ լինում ընդոստ, սկսում պարել խելագարի ցատկումներով անմիտ, գետնովն է տալիս իրեն, մարմինը կոտրատում և պարում, պարում ժամերով։ Քրտնում է, փրփրում, բայց թնդում է պարը։ Սենյակի անկյունում նստած զուռնաչին զլում է զուռնան, դհոլը դմբում է արագ, նվագն ասես թե ոսկրի մեջ է մտնում, և մարմինը՝ դհոլի դմբոցի հետ վեր-վեր է թռչում, ֆուտբոլի գնդակի պես։

Այսպես սկսվում է և երկու օր տևում։ Նվագում են գիշեր-ցերեկ, հոգնած զուռնաչուն ուրիշն է փոխարինում, դարձյալ զլում զուռնան, դհոլին խփում, և հիվանդը պարում է, մինչև ուշաթափ լինի։ Հիվանդին պառկեցնում են անկողնում, մի քիչ դադար առնում և հետո նորից սկսում։

Եթե երկու օրում չի լավանում, եթե հիվանդը դարձյալ գանգատվում է «որդի» ծակոցից, խաղալը շարունակում են, այս անգամ ավելի վայրենի, ավելի անիմաստ ու այլանդակ։

Զուռնի լայն բերանը մոտեցնում են հիվանդի ականջին, մեկը ձախ, մյուսը աջ, սկսում են փչել, ինչքան թոքերը կարող են շունչ պահել։ Դհոլն էլ դնում են հիվանդի գլխին և փայտե կոպալներով հարվածում դհոլի պինդ քա-

շած կաշուն։ Ինչքան ուժ ունեն, փչում են զուռնան, դհոլին կոպալները կարկտի պես են վեր թափում։

Հիվանդը ցնցվում է ցավից, հնչյուններից անախորժ, ոտքի է ելնում և նորից սկսում պարել։ Այդ ժամանակ է, որ ներս են մտնում երկու ուժեղ տղամարդ, և սկսվում է «խաղալու ցավի» զարհուրելին։

Հիվանդին գետնով են տալիս, ոտնահարում, փափուկ մսից քաշում, թևերից բռնում, ձգում, հրում մի պատից մյուսը, աքացի տալիս, երակներից բռնում, քաշում, մատները կոտրատում...

— Սաղ մարդը մի սհաթ էլ չի դիմանա էդ չարչարանքին,—ասում էր ծանոթ գեղականն իմ։ Իրեն էլ են կանչել, մի անգամ էլ ինքն է գնացել մարմինը ջարդելու։

— Էն մեջքի ճիլերից որ քաշում էի, ասում էի, թե հրես միսը պտի պոկվի... Ամա իրեն ցավ չի թվում...

Եվ ձեռքի բութն ու ցուցամատը կեռացրեց այնպես, ասես ցինի կտուց լինի։

* * *

Շատերից եմ հարցրել «խաղալու ցավի» մասին։ Բոլորն էլ նույնն են ասում։ Հիվանդին ջարդում են, տղամարդիկ աքացի են տալիս, կոները կոտրատում են, մարմինը կապտում է, արյուն է գալիս, բայց իբր թե հիվանդը ծըպտուտ չի հանում, «դուր է գալիս»։

Բեզարում են տղամարդիկ, հոգնում են կոները, քրտնում են սենյակի կիսամութում, ուր շնչելու էլ օդ չկա, որովհետև դուռ և պատուհան պինդ ծածկած է։ Հոգնածին ուրիշ զույգ է փոխարինում, զուռնան էլի զլում է, վարձկան կանայք անկյունի մութում ձեն-ձենի են տալիս, լալիս, երեսները չանգռոտում, իսկ հիվանդը պարում է կամ տղամարդիկ գլորում են նրան, գետնով քարշ տալիս և միշտ աշխատում «որդը որսալ»։

Այդպես օրեր են տևում, գիշեր-ցերեկ անընդհատ, մինչև հիվանդը կամ լավանում է, կամ մեռնում։ Պարից

բեզարած, ջարդուփշուր մարմնով պառկում է անկողնում, դադարում է զուռնան, կանայք էլ չեն լալիս, և երբ հանդըստի ժամը երկար է թվում, մեկը կանանցից մոտենում է հիվանդին, տեսնի՝ շնչո՞ւմ է դեռ...

* * *

— Հերու մեր գյուղում երեք հարս էին «խաղլացավով» հիվանդ... Մինն էլ երեխով էր,— պատմում էր ծանոթն իմ, փողոցի գերանին նստած. իսկ մի քիչ հեռու պատուհանը ներսից շորով ծածկած սենյակում զուռնան էր նվագում՝ միալար, ձանձրալի։

— Երկուսը լավացան, էն մինը երեխան փչացրեց, հիմի էլ ջան չունի...

Սովորաբար աշնան են սկսում բժշկել, «որդը» ցուրտըն ընկնելուն պես սկսում է շարժվել, վերքեր են դուրս գալիս։ Գյուղում պառավ կանայք կան, գիտեն, որ այդ «խաղալու ցավ» է։ Եվ ահա սկսում են պատրաստություն տեսնել, մոտիկ գյուղից զուռնա-դհոլ կանչել, երկու կամ երեք «դաստա», որ իրար փոխարինեն։

Ես չկարողացա ստուգել, թե ինչքան են ստանում զուռնաչին ու դհոլչին։ Խորհրդի նախագահի ասելով՝ օրական ութ ռուբլիով են պայմանավորվել։ Շատ սազանդար չի դիմանում, չի համաձայնվում նվագել, թեկուզ բարձր գնով։ Նոր սովորած զուռնաչիները միշտ էլ ուրախությամբ են համաձայնվում. սովորել կարող են, որովհետև նրանցից շնորհքով նվագ չի պահանջվում, այլ դարբնոցի փուքսի պես թոքեր։

— Օտարությունից ա եկել էս կինը, որ հրեն խաղում ա։ Քաղաքներում չեն կարողացել օգնություն անել... Ինչքան երևելի բժիշկների մոտ են տարել, բոլորն էլ ասել են, թե «չխոտկա» յա, բժշկվիլ չի, հայրենիք տարեք... Հիմի էստեղ բժշկվում ա։

Երբ ես աչքիս տակով նայեցի խոսակցիս մազակալած դեմքին, ականջներին՝ մեջը մի-մի մալանչ բուրդ,—

չկարողացա իմանալ, հեգնում է, թե՞ համոզված է, որ «էստեղ բժշկվում ա»...

«Խաղալու ցավ»-ով մեծ մասամբ կանայք են բռնվում, քիչ դեպքում՝ տղամարդիկ։ Այդ օրվա հիվանդն իր երկու որդուն զոհ էր տվել մի դժբախտ պատահարի, ցավից դարձել մտազբաղ, շատացել է հոգսը, և «որդը սրտում բուն ա դրել»։

— Ինքը չահել ա, համա որ տեսնես, էն ճիպոտը քեզ օրինակ։ Մաշվա՜ծ, դեղնա՜ծ, սերկևիլի կճեպ։

Հարցրի նրան, թե ինչպես է հիվանդը դիմանում այդքան անասելի չարչարանքի, ինչպես է, որ շունչը չի տալիս։

— Տվող էլ ա լինում, առանց էդ չի... Դուր ա գալիս զուռնի հավեն, զուռնի ձենը ոսկորի մեջ ա մտնում, ոնց որ ջուրը պլտում ա, ինքն էլ էդ ցավից թռնում ա։

Իբր թե հենց առաջին օրը հիվանդը ջոկվում է։ Եթե զուռնի նվագը նրան դուր է գալիս, լալկան կանայք իրենց սուգով, երգերով կարողանում են նրա աչքից արցունք քամել, եթե խաղը կոներն է ընկնում, ուրեմն նա «խաղլացավ» ունի, պառավները ճիշտ դիագնոզ են դրել, զուռնաչուն և կոները կոտրատող տղամարդկանց է մնում բժշկել։

Հիվանդին ուտելիք քիչ են տալիս. մի կտոր չոր հաց, մի գավաթ ջուր։

— Պետք ա սոված մնա, որ էն «որդը» դուրս գա։

Առաջ «խաղլացավը» ավելի խայտառակ միջոցով են բժշկել։ Եղել է զուռնան, անվերջ քաշկռտուքը, կանանց չիվանը, բայց մխացող աթարն էլ է եղել, շան չորացած կղկղանքը մխացող աթարի վրա։

Ուշաթափ հիվանդը պառկելիս է եղել վերմակի տակ, գլուխը ծածկել են վերմակով և մխացող աթարը՝ որպես բուրվառ, վրան կնդրուկ՝ կղկղանք, վերմակի տակ դրել կնոջ քթի առաջ, մինչև շնչահեղձ, թունավորված հիվանդը ջղային ցնցումներ է արել, վերմակը դեն շպրտել, ծառս եղել, որպեսզի զուռնի տակ պարի երիցս նզովված «չաղբանդ»...

*Հիմա մխացող աթարը մոռացված է, բայց խաղալը մնում է, օր ու գիշեր, զուռնով, դհոլով, կիտամութ սենյակում, քաղցած, հյուծված հիվանդի խելագար ցատկումներով «խաղլացավը» մնում է դեռ մեր խուլ, յոթը սարի ետևում պահված գյուղերում, որպես «հայվանի աղաթ»։*

*— Էսօր տասներկու օր ա խաղում ա... Երեք դաստա սազանդար են կանչել, հլա «որդը» շարժվում ա...*

*Վեր կացանք, ծանոթ գեղականիս հետ անցանք շորով ծածկած պատուհանի առաջ։ Սենյակից լսվում էր զուռնի ձայնը միալա՜ր, ձանձրալի, դմբում էր դհոլը, և անկարգ, մերթ թույլ, մերթ ուժեղ ոտնաձայներ էին լսվում սենյակից, ասես դագանակով խփում էին հատակի սալքարերին...*

# ՁՈՐԲԱՆ

*Տունը գյուղի ծայրին է, ճանապարհի կողքին։ Եթե գյուղը ման գաք, էլ ուրիշ ներկած դարպաս չեք ճարի։ Կապույտ ներկ միայն նրա հաստ ու ամուր դարպասի վրա կա։*

*Ու եթե բաց են դռները, փողոցից կարելի է տեսնել բակն ու տան սրահը։*

*Բակում բացօթյա մի արհեստանոց կա։ Մեծ ու փոքր մուրճեր, սղոցներ, պայտարի գործիքներ, անիվների օղեր, սռնիներ, նոր քաշած տախտակների կույտ, կլպած գերաններ, որ չորանում են արևի տակ։*

*Ամեն օր մի քանի բանվոր է աշխատեցնում։ Մեկը ցեխապատ է անում, նոր գոմի պատերը շարում, մյուսը քար է տաշում, իսկ ինքն էլ իր որդիների հետ լուսաբացից մինչև արևմուտ աշխատում է։*

*Իզուր չէ, որ գյուղում եթե մեկը լավ աշխատող է, ասում են՝*

*— Ձորբա Օսեփի ճանկն ընկնի, մի շաբաթ էլ չի դիմանա։*

*Ինքն էլ է աշխատում և արհեստավորին շուտ-շուտ ձեն տալիս.*

*—Հը՛, քեզ մատաղ, օրը պրծավ, հա՜, շուտ արա, էս շարքն էլ պատի, իրիկունը արաղ կտամ։*

*Վարձը կալին է տալու ցորենով։ Իսկ մինչ այդ եղածից բաժին է հանում։ Եթե մի՝ ծուռ գերան իրեն պետք չի,*

տալիս է արհեստավորին, տանի խանգարված կտուրի գերանը փոխի։ Կալին հաշվից դուրս է գալու։

Բակի անկյունում զինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանգոտած, խողովակը ծուռ։

Մորեխի տարին մի փութ կորեկով է առել։ Մտքում դրել է կաթսան հարմարեցնել արաղ քաշելու, իսկ մնացած երկաթեղենը ծախել։

Խոհանոցի մոտ ընկած է երկանիվ մի սայլ, կռիվներից մնացած։ Կարգի է բերել, ներկել և գործ է ածում, երբեմն էլ քրեհով տալիս։

Տան կից պարտեզն է, գյուղի ամենալավ պարտեզը, ծառերը շարեշար, զանազան տեսակի, պատվաստած։ Միայն նրա այգում կան պատվաստած ծառեր։

Պարտեզի մոտ բանջարանոցը, որի մի անկյունում մեղուների տասներկու արկղ կա կարգով շարած։

Պարտեզն ու բանջարանոցը բարձր ցեխապատով է պարսպած, փողոցից միայն ծառի վերի ճյուղերն են երևում։

Եթե մի հիվանդ մեղր ուզի կամ ձմեռը թթու խնձոր, Օսեփի ներկած դարպասն են ծեծելու։

— Չկա,— կասի,— ի՞նչ էր, մի քանի խնձոր.— կամ,— ճանճը էս տարի օգուտ չտվավ,— և եթե լավ գին տաս,—սպասիր տեսնեմ,— կասի և մառանը կիջնի։

Ընդարձակ բակն ընկած է տան առաջ, որ չորս լուսավոր սենյակ ունի, փեղկերով, ապակած։ Սենյակներում գորգ ու կարպետ կա, պատերին՝ խալի, երկու լավ մահճակալ, սպիտակ պղնձից ինքնաեռ, ափսեներ ու բաժակներ։

Օսեփն առաջ խանութպան էր, գյուղումն էր առուծախս անում։

Այն ժամանակից է պահել և պատերազմի տարիներում խալին ու սանդուղները լի պինդ թաքցրել մառանի մի անկյունում։

Խաղաղության հետ ամեն տարի նրա տունը լցվում է, պահածը դուրս է հանում և ավելացնում անընդհատ։

*Գյուղում նրան «քոռ գայլ» են ասում։ Եվ եթե խոսքը վեր է գալիս Օսեփի վրա, մի չահել վրա է բերում.*

*— Նրա ամբարում հլա ինչե՛ր կա...*

* * *

*Իսկ իրեն որ նայես, բամփես՝ տզի պես գետնին կփակչի. լղար՝ դարմանով պահած ձիու պես, այտոսկրները դուրս ընկած, կարճահասակ, կուզը մի քիչ դուրս ընկած։ Նայում ես դեմքին, ասես որդ կերած կարտոշկա լինի, աչքերը փոքրիկ, բզով ծակած, ունքերը կատարյալ բեղ, փափախի մազերից չի ջոկվում։*

*Բայց զորբա է։ Ջորս ձի ունի, սեփական գութան, որ նոր է առել։ Եթե ուզենա, գութանը մենակ լծելու չափ եզներ ունի... բայց մենակ չի լծում։ Հարաքաշ է անում, եզանց մի ջուխտ էլ գոմում պահում։*

*Ձեռքից եկածը չի խնայում։ Ձեռքափող է տալիս, տոկոս առնում կամ գարնան սերմացու տալիս, կալին մեկին երկու ստանում։ Եթե գյուղում մեկը որոշում է մի ոչխար մորթել միսը ծախելու, և եթե մենակ ուժը չի պատում, Օսեփը միշտ ընկերանում է, աժան պատահած ոչխարն առնում և մորթում։*

*Ականջին է հասնում, որ գյուղում մեկը ծախու գերան ունի կամ քարն է ծախում, ուժ չունի նոր շենք շինելու, Օսեփը աչքերը ճպճպացնելով գլխին կանգնած է, գինը նաղդ է տալիս։*

*Ինչպես էլ գիտե՛ հարևանի թույլ կողմը։ Մի ուռի տեսնի, կկանգնի, աչքի պոչով կնայի, մտքում կհաշվի, թե ...ննի տախտակ դուրս կգա, և ծառի տիրոջ տեսնելիս կ... այ.*

*Էն մարագիս մի գերան ա պակաս, ծառդ ծախիր ա...նեմ։*

*...առը դեռ արմատի վրա Օսեփի սեփականն է, մի տարի էլ կմնա, երկու տարի էլ, ոչինչ, ավելի է հաստա-*

Կաշի է ծախում։ Ձմեռն էլ աղվեսի մորթի հավաքում, ծախում քաղաքում։

Զորբան հին աղաթի փեշից այնքան էլ կախված չի։ Օսեփը առաջ էլ եկեղեցի չէր գնում։

Եվ եթե գյուղի կոմսոմոլն ընդունի, նա իր տղաներից մեկին կգրի նրանց շարքերում։

— Մենակ նալոգն ա, որ դժար ա, չենք դիմանում։

Տուրքն է և տուրքի հետ կապված մի շարք խնդիրներ, որ ինչքան էլ զորբան գլխին զոռ է տալիս, չի հասկանում, թե ինչու է այդպես։ Եվ իր մտքում որոշել է, թե՝— միջի մարդն է խառնակիչ։

Քաղաքից գալիս են շնչագրելու, ապրանքի և հողի ցուցակ անելու։ Օսեփն իրեն խեղճ է ցույց տալիս, նվաղած ձայնով ասում.

— Ունեմ, կա, ինչու, ապրի էս կառավարությունը։

Եվ եթե վիճակագիրը մեկ-մեկ հարցնում է՝ ձի, եզ, կով, Օսեփը, նախ կմկմում է և պակաս գրել տալիս՝ մի ձի, երկու եզ։

Բայց հետո տեսնում է, որ հարկաթերթի մեջ իր ասածը չեն գրել, այլ այն, ինչ ունի։ Դրա համար էլ ասում է, թե միջի մարդն է խառնակիչ։

Եթե ջահելները ժողովի ժամանակ նեղացնում են և ասում, թե՝

— Օսեփ ապեր, ունես տուր,— Օսեփը չարանում է, ձայնը երկինք բարձրացնում և սկսում պատմել այն, ինչ հազար անգամ ասել է և լսողն էլ հազար անգամ իմացել, որ սուտ է ասում։

Ի՞նչ է ասում։

Որ աղքատը ծույլ է, ինքը օրնիբուն աշխատել է, որ խանութն իրեն օգուտ չի տվել, որ զուր են կարծում, թե ունևոր է, և վերջում էլ ասում.

— Մի սաղ գեղի չափ հարկ եմ տալիս կառավարության, էլ ի՞նչ եք ուզում։

Եթե այդ չասի, պիտի ասի, որ մի քանի աղքատ տուն է պահում, իր արևի տակ են ապրում։

Օսեփի հարևան մի քանի աղքատ տներ կան, որոնց կանայք նրա տանը բուրդ են լվանում, հաց թխում կամ ուրիշ գործ անում։ Օսեփի հոտաղը միշտ այդ տներից կլինի, մաճ քշողն էլ, տավար պահողն էլ։

Եթե մի վռազ գործ լինի, Օսեփը ձեն է տալիս բակից, մեկն ու մեկին կանչում։

Աղքատ տներ են, որոնցից յուրաքանչյուրը մի եզ ունի կամ մի կով, երկու օրավար վար ունի, մի տուն լիքը ուտողներ։

Իրենց գործն անելուց հետո սրա-նրա համար աշխատում են, գլուխ պահում։

Օսեփը դրանց համար է ասում, թե իր արևի տակ են մեծանում. լսողն էլ գիտե, որ այդպես չէ։ Օսեփն է տզի պես փակչել նրանց և հացափոր աշխատեցնում։

— Բա խի՞ դողն ընկել էր ջանդ, որ ասում էին պայման կապի բատրակի հետ...

Այդ որ ասեին, Օսեփի ջանը իրոք որ դող էր ընկնում, վեր էր կենում, գեղամիջից հեռանում։

* * *

Գզիրը կտուրից ժողովի է կանչում։

Մեկ-մեկ հավաքվում են դպրոցի բակում և նստոտում պատի տակ, գետնին կամ քարերի վրա։

Ժողովը հարկի մասին է։

Քաղաքից եկած մի ընկեր այս տարվա հարկի մասին է խոսում, բացատրում, թե ինչու է քիչ։

Ուշադիր լսում են, հետո հարցեր են տալիս։ Հարցնում են, թե էլի առաջվա պես պիտի հավաքե՞ն՝ հարուստից շատ, միջակից քիչ։

Օսեփն էլ է ժողովի եկել։

Նա ոչ մի ժողով բաց չի թողնում, ամենից առաջ է խոսում, աշխատում է ծուռ ու մուռ ճանապարհներով, ա-

ռակներով իր մտքինը ասել, ուզածն իմանալ։ Եթե քաշվում է հարց տալ, մի ուրիշին է խնդրում, որ իմանա։

Եվ ամեն ժողովի, երբ խոսք է բացվում հարկի մասին, նա միշտ նույնն է ասում.

— Աղքատից էլ հարկ առեք, թող մի աբասի լինի, միայն առեք։

Առեք, ասում է, որովհետև աղքատը հարկ չտալով՝ ծուլության է վարժվում, ամեն տեղ նրա խնդիրն առաջ են ընդունում։

Այդ մի յուրահատուկ տեսություն է նրա համար, որի ճշմարիտ լինելուն Օսեփը երբեք չի կասկածում։

Աղքատը դատարանին խնդիր տալիս դրոշմատուրք չի վճարում։ Դրա համար էլ աղքատները դատարանին շատ են դիմում և ճնշում ունևորին։

Կամ թե աղքատ գյուղացին համոզված է, որ կառավարությունը հարուստից առնելու է իրեն տա, դրա համար էլ չի ուզում հարստանալ, սեփական տնտեսություն ստեղծել։

Մի խոսքով՝ մի ամբողջ տեսություն իր գործնական միակ առաջարկով, որ անում է Օսեփը ամեն ժողովի, երբ հարկի մասին խոսք է լինում։

— Մի աբասի էլ աղքատից առեք։

Մի անգամ էլ խորհրդի նախագահին Օսեփն առաջարկել էր դիմում տալ կառավարության և իրավունք խնդրել գյուղի հարկը գյուղում բաժանելու։

— Հարյուր մանեթ չեն ուզում գյուղի՞ց, թող երկու հարյուր մանեթ ուզեն, մենակ թե մեզ ասեն՝ էդ երկու հարյուր մանեթը դուք ձեր մեջ փայ արեք։

Գյուղխորհրդի նախագահը ծիծաղել էր.

— Ուրիշ տեղ չասես, Օսեփ ապեր, թե չէ կբռնեն քեզ։

Եվ մինչև հիմա ուրիշ տեղ չի ասել, բայց մտքից էլ չի հանել։

* * *

Նախիրի գալը ժողովը ցրում է։ Բոլորը վռազում են տավարը տեղաց անելու։

Նախագահն իզուր է կանչում։

— Ժողովը դեռ պրծել չի. հարցեր կա՞...

Բայց նախիրը «հարց հարցոց» է գյուղի համար։

— Այ տղա, բա էսպես էլ ժողովո՞ւրդ,— թոնթորում է Նախագահը, ինքն էլ իր տավարի մոտ գնում, որովհետև կտուրից արդեն ձեն են տալիս։

Գյուղի խոսք է, թե շինականի ապրուստի մասին Նախրապանից հարցրու։ Նա լավ գիտե, թե ով ինչ ապրանք ունի։

Նախրապանն է, որ նախիրը գյուղում ցրելուց հետո ժողովատեղին է եկել, մնացողներից մի բան իմանա։ Բայց բոլորը ցրվել են, ես եմ նստել քարին։

— Օսեփը շատ ա՞ զորբա,— հարցնում եմ Նախրապանին։

— Բա հայտնի բան ա, որ զորբա յա։ Էն տավարն ո՞ւմն ա,— ասում է և կողքիս նստում, տրեխի թելը կապում։

— Թամահը շատ ա է՜, հենց էն ա բերանը բաց ման ա ածում, թե որ քյասիբի թիքան կուլ տա։ Բայց վե՞րջը փուչ ա նրա։

Եվ երբ հարցնում եմ, թե ինչո՞ւ վերջը փուչ է, նա ուսերը թոթվում է, հետո գրպանից թութունի քիսան հանում, լցնում չիբուխի կավե գլուխը, մթնում կայծքարը պողպատին խփում և շրթունքները ծպպացնելով փստացնում։

— Դա մեզ լավ հայտնի յա նրա վերջի կյանքը... Օսեփը շունչը դինջ չի տալու...

Եվ առակ է ասում, թե ինչպես ագահ մի գյուղացու ասում են՝ լուսաբացից մինչև արևմուտ ոտով ինչքան գնաս, այդքան հող կտանք քեզ։ Մարդը գնում է, գնում.

*քանի արևմուտը մոտենում է, այնքան նա քայլերն է շտապեցնում։*

*Եվ մայրամուտի վերջին պահին ագահությունից բռնյով մի մեկնվում է, որ իր պառկած տեղն էլ զավթի։*

*Նախրապանը առակն ավարտեց ու մահակն առավ, որ գնա։*

*Մեկ էլ նայեց ինձ և ասաց.*

*— Հենց էն պառկած տեղն ա մնալու իրան, զորբա Օսեփին...*

# ՕՐԱՆՋԻԱ

Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ։ Երբ գարուն է լինում, տաքանում են Օրանջիայի քարերը, և խլեզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա, լեզուները հանում։

Այն ժամանակ, երբ շեն էր Մանասի խրճիթը, Օրանջիայի ձորակում մասրենիներ չկային, տան պատերի վրայով երկչոտ խլեզները չէին վազվզում, վայրի վարդերի տեղ բոստանում վարունգն էր ծաղկում։

Մի բարակ արահետ Օրանջիայի ձորակը միացնում էր գյուղի հետ։ Այժմ այդ արահետն էլ չկա։

— Մանաս, ինչո՞ւ տունդ Օրանջիայում շինեցիր, չգիտեի՞ր, որ Դավոյենց Առաքելն էլ աչք ուներ դրած ձորակին, ուր ձյունն ավելի շուտ է հալվում, և ձյունի տակից կանաչը ծլում։

Դավոյենց Առաքելը, եզան կաշվից տրեխները հագին, մի առավոտ աչքի տակով նայեց Օրանջիայի ձորակին, ուր նախրից ետ մնացած երկու հորթ էին արածում և մտքում դրեց ձորակում ամարաթ կառուցել։

Իսկ երկու շաբաթ անց Օրանջիայում Մանասն էր քարն ու կիր թափել, ոտքերը մինչև ծնկները վեր քաշած ցեխ էր շինում, ուստան էլ տաշած քարերն էր շարում։

Առաքելը գյուղում չէր։ Վերադարձին աչքի տակով նայեց շարած պատին, հերսոտեց և սրտում զայրույթը

պահեց, որ առավոտյան Մանասի երեսով տա, կռիվ անի Օրանջիայի համար։

— Հենց գիտես, թե դատ ու դատաստան չկա, էլի՞, որ զոռ ես անում,— ասաց Մանասը,— Օրանջիայում ես պիտի տուն շինեմ, Առաքել...

— Մանաս, իմացիր առաջդ ով ա կանգնած։ Ես Դավոյենց Առաքելն եմ, բա դու ո՞ւմ լակոտն ես։

Եվ ա՛ռ հա մի հատ Մանասի գլխին, ձեռքի դագանակով։ Իրար անցան, աղմուկ, աղաղակ եղավ։ Մանասին արնաթաթախ տուն տարան։

Առաքելն էլ նայեց հեռացողներին, պատի տակ գերանի վրա նստոտած մարդկանց, էլի սպառնաց և գնաց տուն։

Լսեցին, տեսան, բայց ծպտուն չհանեցին։ Վախենում էին Առաքելից. շշուկով պատմում էին, որ Առաքելը «չանդարմի» հետ կապ ունի, գյուղում լրտեսություն է անում, մեծամեծ չինովնիկների աչք ձեռքն է։

Երբ Առաքելը հեռացավ, մի ծերունի շշուկով ասաց հարևանին.

— Առաքելը մատնիչ ա, հերն էլ էր էդպես, հորն ա քաշել։

* * *

Երկու տան մեջ թշնամությունը հնուց կար։

Ձորակում շինվող տունը սուր փշի պես Առաքելի աչքը մտավ։ Իր այգու ցանկապատի արանքից երբեմն նայում էր տան պատերին, Մանասին, որ գլուխը շոր փաթաթած, վարպետին քար ու կիր էր տալիս։

Նայում էր Առաքելը ցանկապատի ետևից և ափսոսում, որ դագանակի ծայրը Մանասի ականջատակին չկպավ։ Բարձրանում էին տան պատերը, և պատերի հետ Առաքելի սրտում զայրույթն էր ծառս լինում, սանձարձակ ձիու պես։ Փափախի տակ մտքերը որդեր էին, լեշի վրա վխտացող զազիր որդեր։

Գնաց իր ծանոթ պրիստավի մոտ, նրա համար յուղ ու մեղր տարավ, պրիստավի տղի համար զատկին ճակատը ներկած գառ տարավ։

— Մանաս, տապ արա, Առաքելը պրիստավի տունը ջրի ճամփա է շինել։

Բայց Մանասի ջրաղացն էլի հերվա աղունն էր աղում։

— Հենց գիտեք, թե պրիստավից էլ մեծ մարդ չկա՞, իրա, եներալի դուռը կգնամ...

Առաքելը գնաց եկավ։ Օրանջիայի ձորակով գլուխը կախ անցավ, նոթերը կիտած։ Ոխ ուներ սրտում, աչքն էլ ուրիշ բան չէր տեսնում։

Մանասը տուն շինեց, կտուրը ծածկեց փայտով, չոր ցախով, կինն ու երեխան էլ հայրական հին տնից հանեց և արահետով անցավ, տեղավորվեց նոր տան մեջ։

Ասում են, որ հենց այդ օրերին պրիստավն իր մոտ է կանչում գյուղի մի քանի ազդեցիկ մարդկանց և մատը թափ տալով ասում.

— Հա՛. Առաքելին որ տանուտեր չեք ընտրել այս անգամ, էլ պրծնում չկա ձեզ։

Շատերն էլ ասում են, թե պրիստավը չի ասել, Առաքելի կողմնակից մարդիկն են այդ լուրը տարածել գյուղում։

Մանասը ձորակում բոստանատեղն էր փորում, երբ ականջովն ընկավ այդ։ Աչքի տակով նայեց գետնին, քարը մի պահ ձեռքին մնաց, քարը պատին դնելիս մտքում տպվեց, որ Առաքելը ոխը մի տեղից պիտի հանի։

Իրիկունը Մանասը դռան երկաթ կապին նայեց ու կնոջն ասաց.

— Ա՛յ կնիկ, մեզ մի շուն ա պետք, գյուղի ծերին ենք, ճամփի բերան։

...Ո՞վ էր՝ կանչեց, թե Առաքելը պիտի տանուտեր լինի։ Ժողովին մեկը կանչեց, հետո մի ուրիշ խումբ միացավ, վերջում որոշեցին կողմերի բաժանվել։

— Առաքելին ուզողը դեպի պատը,— կանչեց մե-

կը։ Մի խումբ քաշվեց դեպի պատը, հետո մի քանի հոգի միացան, և երբ գյուղի «իշխան» մարդիկ իրար բոթելով շարժվեցին դեպի Առաքելի պատը, ժողովուրդը հետևեց նրանց, աղի վրա գնացող ոչխարի պես։

Մանասի ոտքերը թուլացան, և ոտքերը քաշ տալով ինքն էլ գնաց բոլորի հետ, հոտից ետ ընկած կաղլիկ ոչխարի նման։

— Շեն կենա Առաքել քյոխվան,— ձայն տվին այս ու այն կողմից, փափախները գետնով տվողներ էլ եղան։

Մինչև հիմա էլ գյուղում պատմում են Առաքելի մասին։

—Յաման քյոխվա էր, ջանի կրակ էր։ Քանի՜ մարդ ա փչացել նրա ձեռքից։ Մի ձեռքը խանչալի կոթին էր, մինն էլ ղամչու։

Պատմում են, թե ինչպես Առաքելը գիշերով հանդ էր գնում։ Եթե տեսներ, որ մի ոչխար է ընկել իր կամ բարեկամի արտը, ոչխարն արտի մեջ մորթում էր։ Սարում, երբ լսում էին, թե Առաքել քյոխվան ման է գալիս, չոբաններն ահից ոչխարը մի վերստ էլ հեռու էին քշում։

Եվ պատմելիս ծերերից մինն ավելացնում է.

— Խեղճ Մանասն էլ նրա ձեռքով չփչացա՞վ, տունն էլ ավերակ թողեց...

* * *

Մանասը երբեմն միտք էր անում, թե Առաքելը ոնց հանելու համար գնաց տանուտեր եղավ։ Մտածում էր, բայց մտքինը ոչ ոքի չէր ասում։

Իսկ եթե ազգ ու բարեկամ էլի ասում էին.

— Մանաս, տապ արա, թրի սուր ժամանակն է...

Մանասը փափախը գետնով տալ չէր ուզում, էլի իր հին ասածն էր կրկնում։

Բայց Առաքելը չէր էլ ցույց տալիս, թե ինքը հաշիվ ունի Մանասի հետ։ Այն օրից, երբ տանուտերի շղթան վզովն անցկացրեց, պղնձե կնիքն էլ գրպանը դրեց, Առա-

քեյն այդ օրից ձևացնում էր այնպես, որ իբր թե Մանասին չի էլ տեսնում։

— Մանաս, զարթուն կաց, Առաքելը հանկարծ է քեզ նեղը գցելու։

...Երբ լուր եկավ, թե քաղաքներում գործադուլ կա, հեղափոխություն է ընկել, Առաքելն ականջները խլշեց։ Նույն գիշեր Առաքելի ձիու սմբակների տակից կայծեր թռան։ Պրիստավը հուսադրեց նրան.

— Ձեր գործին կացեք, ժողովուրդ, տարին խառն ա, չլսեմ, չիմանամ, թե լոթի-փոթի մարդիկ են գալիս, գիշերով թաքուն ժողով անում։

Իր շվաքից խրտնեց, թե իրոք վտանգ կար գյուղում, երբ մի շաբաթ հետո Առաքելը նորից գնաց պրիստավի մոտ։

— Պրիստավն ապրած կենա, գյուղում էլ են երևում խառնակիչ մարդիկ. մի տասը հատ ղազախ թող հետս գա, գյուղում երևան մի անգամ, ժողովուրդը կարգանդի։

Պրիստավը բեղերը ոլորեց, բեղը փաթաթեց մատին և ձգեց մինչև աչքատակ, ասես աչքն էր ուզում կոխի։ Բեղերը ոլորելիս թշերն ուռեցրեց, զուռնա փչողի պես։

Առաքելը կազակների հետ դեռ գյուղը չհասած, բոլորն էլ գիտեին, որ գալիս են։ Այդ երեկո շատ տներում ճրագ չվառեցին, շատերը մինչև լույս աչք էլ չփակեցին։

... էյ, պլաստուն կազակ, ինչո՞ւ այդքան շատ խմեցիր Առաքելի տանը, արյունդ գլխիդ տվավ, տաքացար։ Մանաս, կինդ այդ օրը երանի լվացք չաներ և լվացքը չփռեր պատին։ Որովհետև դիմացի ցանկապատի արանքից Առաքելը կազակին մատով ցույց էր տալիս կնոջդ, որ լվացք էր փռում։ Կազակ, մոռացա՞ր միթե, որ Դունյաշայիդ երկրում ձորակներ չկան, ինչպես Օրանչիան, ցանկապատի ետև վերջին անգամն էիր պռոշներդ լիզում։

Մինչև այժմ էլ գյուղում, երբ պատմում են Օրանչիայի մասին, մի ականատես միշտ էլ ավելացնում է.

— Սարքովի էր բոլորը, Առաքելը սատանի հունար ուներ...

— Մթնում էր, դռները կապում էինք, մտնում տները։ Լակում էին ղազախները, ընկնում քուչեքը։ Շաշկով էնքան հավի վիզ թռցրի՜ն...

— Էն տարին իմ մի երինջս տարան, որ էլ ինչ ասեմ է՜, աչքերս էլ հետը տարան...

Այդ տարուց շատ բան են պատմում, երբ խոսք է վեր գալիս Օրանջիայի մասին։

Մանասն այդ օրն անտառ է գնացած լինում։ Հունձը վերջացել էր, կալի ժամանակն էր։

— Ի՞նչ էլ բերք կար էն տարին... Կտուրների վրա, պատերի տակ դեզեր էին...

Մթնել էր, մեկ էլ Օրանջիայից մի ծկլթոց եկավ, հավարի ձայն։

— Հենց էն ա, ականջս ծկլթոցին էր, մեկ էլ մի անգամ կրակեցին։ Կրակոցից ձորերը գրնգացին։ Օրանջիայի ձորակը վառվում էր, ալավը երկինք էր հասնում։

Ամբողջ գյուղն էր այդ գիշերը թափվում ձորակը, բայց արդեն ուշ էր։ Խրճիթը, որի կտրին դեզեր կային, պատերի տակ թափված խուրձեր, խրճիթը վառվեց, նավթոտ փալասի պես։ Երբ լուսո դեմ կրակը հանդարտեց, խանձված ընկած էին Մանասի կինը, երեխան, կազակը։

— Է՜, ի՞նչ չարչարանք քաշեց գյուղը, քանի՜ մարդու ծեծեցին, ինչեր չարին... Մանասին տարան, ինչ ասես չարին, վիզ չառավ։ Հենց ասում էր, թե ես անմեղ եմ, ես չեմ ղազախին սպանել։ Ղազախներն էլ վկայել էին, որ Մանասն է սպանել։ Բա, էսպես բաներ...

Երբ Մանասին վագոն դրին դեպի հեռավոր տունդրաները, իզուր էր կայարանի ժխորի մեջ աչք ածում ծանոթ մեկին։

— Գնաց, էլ թե ինչ եղավ, տեղեկություն չկա...

...Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների վրա ծաղկեց մասրենին։ Ամեն գարնան Օրանջիայում այնքա՜ն վարդեր են լինում, դեղին, սպիտակ։

# ՄՐՈՑ

*Մրոցը մի ուրույն աշխարհ է, և երբ ձորի ափով անցնում ենք, մի անգամ էլ բարձրանում սարը և իջնում մի ուրիշ ձոր, այնպես է թվում, թե վերջին սարը ձեզ ծանոթ աշխարհի սահմանն էր, իսկ սարից դենը, դեպի ներքև, ընկած է անմարդաբնակ մի երկիր, որի անտառներում արջերը վայրի տանձ են հավաքում և լուսնյակ գիշերներին հաստաբուն կաղնիների մոտ գլորվում, կիսաշոր տերևների վրա արջապար խաղում։*

*Առաջին հանդիպած մարդն այն ձորում տարօրինակ է երևում. բայց շարունակեցեք կածանը, ձիու սանձը պինդ մի բռնեք, թողեք որ ձին կածանը հոտոտելով ձեզ տանի Մրոց։*

*Եվ երբ անցնեք սրընթաց մի գետակ, նրա ափին այգիներ տեսնեք, անպատճառ շան հաչոցի ձայն պիտի լսեք, եթե օրը ցերեկ էլ լինի։ Մրոցի շներն զգաստ են, նրանց ժանիքները շատ անգամ են գայլի մաշկ քերծել։*

*Հաչոցի ձայնը լսում է ձին, ականջները խլշում, սմբակներն ավելի արագ են դոփում կածանի քարերին, ձին բնազդաբար պատկերացնում է ախոռը, մեջը լի գարի։*

*Ումից էլ հարցնեք, ոչ ոք ձեզ չի ասի, թե ինչու գյուղի անունը Մրոց է։ Գուցե տերտերը մի պատմություն անի այն մասին, թե ինչպես «անօրենների» հարձակման ժամանակ, շատ դարեր առաջ, իրենց պապերը փախել են մի ուրիշ երկրից և պատսպարան գտել այդ հեռու ձորում,— գուցե տերտերը այդ փախուստի մասին պատմի, բայց այդ*

թեական է, և ոչ մի փաստ չի կարող բերել նա, բացի բանավոր վկայությունից, վաղուց մեռած պառավների ավանդական զրույցներից։

Ստույգ է միայն այն, որ Մրոցը հնուց ի վեր իր տեղն է, և, երբ դիտում եք տների հաստ պատերը, անտաշ քարերը, թվում է, թե անհիշելի ժամանակ, երբ Մրոցի լեռներն են գոյացել, լեռները գոգաձև հարթություններ են կազմել, որ գագաթների ձյունը հալչի և հոսի ձորերով,— լեռների գոյացման հետ միասին ապառաժի կտորներից ծնվել են Մրոցի բնակիչները, հարթավայրերում հաճար ցանել, ժայռի գլխին ցատկող վայրի քարայծներին ընտելացրել և սերունդների փորձով սովորել մածունից կարագ ստանալ։ Դուք այդպես եք մտածում, որովհետև Մրոցը հեռու է, մոռացված, ճամփան դժվար, ճամփի վրա կանաչ խոտ։

Հարկավոր չէ բարձրանալ Ծամի կտուրը՝ տեսնելու համար, թե ինչքան ձորեր կան Մրոցից վերև։ Եվ եթե ժամանակին հսկաներ են ապրել, իհարկե, այդ ձորերը նրանց համար հասարակ առուներ են եղել։

Ցույց ժամանակին և ոչ մի հսկա չի եղել, լեռան առվակներն են դարերի ընթացքում քերել փեշերը, ժայռեր գլորել, մաշել իրենց փրփուր ալիքներով կարծր քարեր և փորել խոր անդունդներ, ուր կուսական անտառներ կան, անտառներում՝ նույնքան կուսական արջեր, եթե կուսական նշանակում է մարդու երես չտեսած։

Այդ ձորերում է սնոտի հավատալիքների, քաջքերի և չարքի աղբյուրը, և հիմա էլ Մրոցում շատ ռամիկ անտառի մամռապատ քարանձավների մոտից անցնելիս՝ երկյուղած, շունչը փորն է նետում, տրեխներով զգույշ հուպ տալիս չոր տերևներին և շշուկ լսելիս ծնկներում դող զգում, թեկուզ այդ շշուկը տրեխի տակ ճռացող չոր ցախից լինի։

Եվ երբ ձմեռ է լինում, և ձյունի ծանրությունից անտառում շատ ծառեր են ջարդվում, Մրոցում քուրսու մոտ նստում են, մի ալևոր, որ հազար անգամ է շալակով ցախ

բերել անտառից, սկսում է պատմել այն մասին, թե ինչպես գիշեր ժամանակ, անտառով անցնելիս, ականջով մի ձայն ընկավ, կարծես մի կին, մի շատ ծանոթ կին, բարակ ձայնով կանչեց իրեն, ինչպես ինքն ասպանդակեց ձիուն...

Պատմում է, ոտքերը կախ տալիս թոնրի վրա։ Նրան ի՞նչ, թե աչքերը կիսախուփ անող թոռը վախից կուչ է եկել տատի փեշի մոտ, չգիտե՝ լսի՞ պապի գլխով անցածը, թե քնի տաք քուրսու մոտ։ Եվ եթե պապի պատմածին լսում է և գյուղի կոմսոմոլը (իսկ Մրոցում դեռ կոմսոմոլ քիչ կա) գիրկապ անելով սերտում իր գիրքը՝ «Ազատ ենք մենք, մենք ազատ ենք»,—նրա մի ականջը դարձյալ պապի պատմածին է, թեկուզ ժողովում լսած էլ լինի, որ անտառի քաջքը չիք է, հնարովի և սնոտի։

* * *

Մրոցն, իհարկե, գյուղխորհուրդ ունի, խորհուրդն էլ՝ նախագահ։ Բայց և ոչ մի զեկուցում չի ասի այն, ինչ կտեսնեք, եթե ապրեք Մրոցում, թերթեք նրա հնադարյան գիրքը։

Գյուղի վերևում հին քարայրներ կան, որոնց շվաքում նախիրից ետ արած հորթերն են նստում։ Անտաշ քարեր կան, կարգով շարած, շրջանաձև, շրջանի մեջտեղ՝ մի մեծ տափակ քար, որի վրա աղ են շաղ տալիս ոչխարի համար։ Այն մարդիկ, որոնք այդ քարերը ժայռերից պոկել, ցցել են գյուղի վերևը, գուցե ոչխար էլ չեն ունեցել։ Մրոցը դրա մասին չգիտե ոչինչ, միայն հնուց քարակույտերը հայտնի են որպես «Կռապաշտանոց»։

Մրոցը՝ նեղլիկ փողոցներ, փողոցներով առվակներ, նախիրը հանդից գալիս թրքոտ կճղակները լվանում է փողոցների ջրերում, և ամեն առավոտ-իրիկուն ջրերը պղտորվում են, ասես առուներով աղբաջուր է հոսում։

Գյուղի մեջտեղ հինավուրց ժամը, ժամի դռան՝ հարյուր տարվա թրիք։ Ժամի շվաքում մակաղել է ոչխարը,

*սար գնալուց առաջ աղբ է կիտել, տարիների ընթացքում աղբը հավաքվել է, դիզվել, և բոբիկ ոտքերով շատ կանայք աղբը կոխ տալով, մոտեցել են ժամի դռան խաչքարը պաչելու։*

*Գյուղի մեջտեղ, ժամից քիչ հեռու, Մրոցի խրճիթ-ընթերցարանն է։ Սովորական մի խրճիթ, որ մարագ էլ կլիներ, ներսում քարերի վրա ձգված տախտակներ, պատերին մի քանի պլակատ։*

*Մարդի աչքին մի պահ տարօրինակ է թվում, որ «Կռապաշտանոցի» տները կանգուն են մնացել մինչև խրճիթ-ընթերցարանի գալը, թեկուզ խրճիթում լրագրեր քիչ են լինում, որովհետև գյուղում գրաճանաչ քիչ կա։ Հեթանոս կրակարանը, խաչակիր եկեղեցին և նոր խրճիթ-ընթերցարանն ասես հազարավոր դարերի պատմություն գիտեն՝ այն օրից, երբ ապառաժի պես մի մարդ առաջին անգամ երևաց Մրոցի ձորերում, բրդոտ արջին դուրս քշեց քարանձավից, ինքը մեջը պահվեց։*

*Հարցրեք այդ մասին թեկուզ Մրոցի փիտունին, և նա զարմացած կնայի ձեզ, պատասխան տալ չի կարող, կշաղվի։ Ծվ պարծենկոտ կպատմի, թե ինչպես «Նիկոլ Թագավորի երեք հարյուր տարվա գոյության ընթացքում» Մրոցը մի զինվոր էլ չի տվել, ծննդյան մատյանները սխալ են գրվել, որ գյուղից ոչ մի մարդ «չգնա Սիբիր, ռուսանա»։ Կպատմեն ձեզ, թե ինչպես ամեն տարի զորակոչին մի քոռ, մի քաշալ ներկայացել են զինվորական ատյան սրանրա սուտ անունով, ազատել Մրոցի չոբանին կամ ինչպես մեկը ծախել է իր ամբողջ կայքը, կաշառք տվել՝ որդուն զորակոչից ազատելու համար։*

*Էլ ուրիշ շատ զարմացք բաներ կպատմեն Մրոցում, կզարմանաք, եթե իմանաք, որ Մրոցում շատ տներ մինչև այժմ էլ տոնում են մի ուրիշ նոր տարի, որին Նավասարդ են ասում, ինչպես հեթանոս Նավասարդի գիշերը զարթնում են, ճրագները վառում և լուսադեմին ճաշ անում։*

* * *

Մեծ դեպք էր Մրոցի համար, երբ մի օր էլ, ձիերի վրա բարձած, մի մեքենա բերին։

Նախագահը գիրկապ անելով կարդաց ստացած գրությունն այն մասին, թե «Ուղարկում ենք մի տրիեր. առաջարկում ենք, նախագահի անմիջական պատասխանատվությամբ, հսկել մեքենայի ցնոր կարգադրությունը»։ Եվ քանի որ թուղթը կնքված էր կնիքով, գրված էր պատշաճ ձեռով, նախագահը բացեց մտից մատյանը և գրեց. «Շըրջանից առ այն, որ գյուղումս եկավ մի մաշին ցնոր կարգադրություն»։

Եթե Մրոցի անտառներից հանկարծ մի փիղ դուրս գար և տնկվեր ժամի առաջ, այնքան էլ չէին զարմանա։ Ալևոր մարդիկ կհավատացնեին, որ փիղը մեծ արջ է, և գյուղը կհավատար։

Բայց ոչ անտառում և ոչ էլ ձորերում, ոչ մի ալևոր մեքենա չէր տեսել։ Եվ երբ նախագահը մեքենայի մոտ հավաքված չտես բազմությունը տեսավ, որ շրջապատել էր և ձեռքը վախվխելով մոտեցնում էր մեքենային, պարտք համարեց ցրել չտես բազմությունը։

— Զարմացք մարդիկ եք. կասես տեսել չեք, մաշին ա, էլի՞,— ասաց նա։ Երբ հարցնող եղավ, թե ինչու համար է մեքենան, ինքն էլ չիմացավ, թե ինչպես հնարեց, որ այդ մեքենան նամակներ է տանում ուրիշ քաղաք, ազգ ու բարեկամի և «ծտի թևով» նրանցից լուր է բերում։ Երբ հավատաց չտես բազմությունը, նախագահն ինքն էլ ճըշմարիտ համարեց իր հորինածը և ուրախացավ էլ, որ Մրոցում միայն ինքն իմացավ մեքենայի ինչ լինելը։ Նա մենակ չէր։ Առավոտյան ջրի գնալիս նախագահի կինը մյուսների առաջ պարծենալու առիթ ունեցավ։

Գիշերով մեքենան թողին նույն տեղը, գզիրը մի քանի անգամ հեռացրեց նրանց, որոնք զարմանքով շարունակում էին նայել և մտածեց, թե ի՞նչպես է այդ մեքենան նամակներ տանելու հեռու քաղաքներում ապրող իրենց բարեկամներին։

Տները ցրվելուց առաջ նրանք հազար ու մի ենթադրություն արին, նույնիսկ գզրին հարցրին, բայց գզիրն ուսը թոթվեց հեռացավ։

Իհարկե, Ատլանտյանի մյուս ափին բանվորը երբ մեքենայի վրա գրել էր «Made in U. S. A.», մտքով երբեք չէր անցել, թե ծովերով և երկաթուղիներով մեքենան այդքան հեռուները պիտի ընկնի՝ Մրոց։

...Թեկուզ մի շաբաթ էր անցել, բայց արդեն գզիրը բեզարել էր ժողովրդին մեքենայի մոտից հեռացնելուց, արգելելուց, որ ձեռք չտան։ Մրոցը դեռ մեքենայի մասին էր խոսում։

Երբ ագրոնոմը վերջին սարը բարձրացավ, սարի գագաթից երևաց Մրոցը, մտածեց այն մասին, թե ի՛նչ պիտի ասի գյուղացիներին, կտա՞ն արդյոք ցորեն կամ գարի տրիերով մաքրելու, ինչպես պիտի զարմանան կանայք, երբ տեսնեն, որ տրիերը ցորենն ավելի լավ է զտում, քան իրենք։

Նրա գալուստն էլ զարմացրեց Մրոցին, մանավանդ, երբ իմացան, որ մեքենան աշխատելու է։ Նախագահը երկմտեց, հետո հավատաց, որ «ցնոր կարգադրությունը» հենց այդ երիտասարդն էր։

Երբ գզիրը սրան-նրան հրելով ճանապարհ բաց արեց, ագրոնոմը մոտեցավ տրիերին։ Աշխատեցնելուց առաջ պտուտակը մի քանի անգամ դարձրեց և զարմացավ, երբ մեքենան մի անգամ դառնալուց հետո կանգ առավ։

Ավելի մեծ եղավ նրա զարմանքը, երբ ձեռքը կոխեց մեքենայի ներսը և հանեց մի կերպ ծրարած, ծրարը խմորով փակցրած, հասցեն ճրագի վրա չորացրած նամակներ...

## ՄԹՆԱՁՈՐԻ «ՁԱՐԴԸ»

*Կտուրի վրա նստած մի ալևոր, որ եզան մազոտ կաշի էր քերում և պատմություն անում քարերին նստոտած շինականներին,— երբ կանգնեց փեշերից մազը թափ տալու, աչքն ընկավ դիմացի ճամփին, ձեռքը ճակատին պահեց, որ արևի շողերը ջրակալած աչքերին չխանգարեն ճամփով եկողներին ավելի լավ տեսնելու։*

*— Կասես էն մինն էլ կնիկ ա...*

*Մյուսներն էլ ետ նայեցին, մի պահ մոռացան ալևորի պատմությունը։*

*— Ի՞նչ էլ անխիղճ մարդ են, ենիշումն (վայրէջք) էլ ձի կնստե՞ն։*

*— Ձին իրենցը լինեը, նստիլ չէին...*

*Ալևորը կաշին նորից սկսեց քերել ապակու կտորտանքով, և երբ եկողները պահվեցին դիմացի անտառակում, կտուրի վրա նստողներն առաջվա դիրքն ընդունեցին, ծերի պատմածը լսելու։*

*— Սաքա՛ն, դու կիմանաս, հըմի նրանց մեջ մի բան չի պատահե՞լ, որ էն անմարդ ձորերով, սարերով մենակ գալիս են,—դարձավ ծերը Սաքանին և ծիծաղեց։*

*— Դե ջահել են, առանց էդ չի...*

*— Հա՛, էդ ժամանակ էլ,—շարունակեց ծերունին իր պատմությունը,—ձորում շատ վախ կար։ Ա՛յ տղա, դուրս եկա Մթնաձորի գլուխը, աչքիս մի շողք երևաց։ Լուսնյակ էլ գիշեր էր... Հըմի ոչ շողքն ա հեռանում, ոչ էլ ես եմ*

կարում ես դառնալ։ Ասում եմ արջ ա, ինձ հլա չի տեսել։ Մին էլ...

Բայց հենց այդ րոպեին կտուրից լսեցին ձիու ոտնաձայն, ետ նայեցին։ Փողոցում կանգնել էր մի կին, տղամարդի գլխարկով։ Կինը պինդ բռնել էր ձիու սանձը, իսկ ձին ոտքով դոփում էր փողոցի թրիքը։

— Բարև ձեզ,— ասաց կինը։ Կտուրի վրա նստողները գլխով թեթև շարժում արին։

— Խորհրդի նախագահը տանը չի՞,— հարցրեց կինը։ Սաքանը, որ մոտեցել էր և ձիու սանձը բռնել, ասաց.

— Չէ՛, խոտատեղից դեռ չի եկել։

Կինը հարցրեց մի ուրիշի տուն։ Սաքանը մատով ցույց տվավ.

— Հրեն է՛, էն մեծ տանձու մոտ։

Եվ երբ կինը կոշիկների ծայրով հրմշտեց ձիու կողերին, Սաքանը տեսավ կնոջ բարակ գուլպաների վերի մասը, մի մատ լայնքի ժապավեն՝ գուլպայի վրա, ժապավենից վերև էլ վարդագույն միսը, որ կարծես նույն ժապավենն էր, մի քիչ բաց կարմիր։

Սաքանը՝ վերադարձավ, նստեց տեղը, կտուրի քարին։ Հարցրին նրան, թե կինն ո՞ւմ էր ուզում։

— Կնանոնց ժողովի համար ա եկել,— պատասխանեց Սաքանը։

Ալևորը շարունակեց Մթնաձորի պատմությունը պատմել այնքան դանդաղ, ասես ոչ միայն դժվար էր վերհիշում հինը, այլև հնարում էր, զարդարում հազար ու մի անակնկալ և միջանկյալ դեպքերով։

— Ես վազում եմ, ինքը իմ ետևից, կանգնում եմ, նա էլ է կանգնում։ Եվ ի՞նչ չարք ա, ի՞նչ հնարք ա... կռացա, որ քար վեր ունեմ...

— Սաքա՛ն, Սաքա՛ն,— ձայն տվավ մայրը կտուրից,— եկ է՛, կովը ծնում ա...

Սաքանը տեղից վեր թռավ, մահակն առավ և կտուրից կտուր անցնելով գնաց։

— Չթողամ, որ հորթին կոխ տա, հեյվանը խամ ա,— կանչեց ծերը հեռացող Սաքանի ետևից և ապա սկսեց պատմել, թե ինչ արեց «չարքը», երբ ինքը կռացավ, մի քար վեր առավ։

Իրենց կտուրին երբ հասավ, գոմի երդից Սաքանի ականջովն ընկավ կովի բառաչը։

— Սաքան, մի բան չպատահի,— ասաց մայրը, որ կովի ամեն մի բառաչը լսելիս բռունցքով կրծքին էր խփում և ասում.

— Ջա՜ն, Մարալ...

— Էսօր օրը չի,— ասաց Սաքանը և գոմի դուռը բացեց։ Դռան ճռռոցի վրա կովը ետ նայեց, իրիկնամուտի լույսն ընկավ դեմքին, և եթե Սաքանը կովի աչքերին նայեր, աչքերում առաջին երկունքի դժվարին ցավը կտեսներ։ Բայց Սաքանը մոտեցավ, ձեռքը կովի փորին դրեց, կախ ընկած պտուկներին նայեց, կաթով լի կրծքին։

— Խոտ բե՛ր, նանի,— և մինչև մայրը խոտ կբերեր գոմի քարերին փռելու, Սաքանը թևերը վեր քաշեց, էլի շոշափեց կովի կախ ընկած փորը։

√ Մարալի ցավերը ավելի շատացան։ Կովը հաճախ տեղը փոխում էր, ետ ու առաջ անում, գլուխն ախոռի տախտակներին դեմ տալիս, փնչոցով հոտոտում գոմի քարերը, իսկ երբ արգանդում հորթուկը ավելի էր շարժվում, Մարալը խրտնում էր ինքն իրենից, պոչով փորին խփում, կարծես շարժվողը մեջքի վրան էր և պոչի հարվածից պիտի թռներ, հեռանար։

Սաքանի փոքրիկ տղան եկավ գոմի դռան մոտ, պորտը քորելով ուզեց ներս մտնի, բայց նանին թևից բռնեց, տուն տարավ։

— Ծրագը բե՛ր, ո՞ւր ա էն հարսը,— հարցրեց Սաքանը։

— Չգիտեմ։ Կնանոնց ժողով ա Սրանոնց տանը, մի կնիկ ա եկել քաղաքից։

Սաքանը մոտաբերեց ձիու վրա նստած կնոջը, գլխին՝

տղամարդու գլխարկ, որի տակ ծամերը հավաքել, գունդ էր արել, կնոջ գույպան, ծայրին կարմիր երիզ։

Կովի կծկումները շատացան։ Ուռած փորը հեալու պես էր լինում, Մարալը ցավից թուլացել, հազիվ էր կանգնում ոտքերի վրա։

Սաքանը չկարողացավ էլ իր զգացմունքը հայտնել կնոջ բացակա լինելու առթիվ։ Բայց մայրը հասկացավ նրան և ասաց.

— Ախր էսօր օրը չէր...

Քիչ հետո Մարալը լիզում էր չոր խոտի վրա պառկած լորձունքոտ հորթին, որ աչքերը մերթ բաց էր անում, մերթ խփում։

— Վո՛ւյ, վո՛ւյ, նանի՛, պոչը ծաղիկ ա,— կանչեց Սաքանի տղան, որ կովի ծնելու ժամանակ հորից և տատից աննկատ ներս էր մտել և պահվել գոմի անկյունում։

Սաքանը ձեռքերը լվաց, գնաց կովի համար մարագից մի քթոց դարման բերելու։

— Չթողաս, որ շատ լզի։

Սրանենց տան մոտով անցնելիս Սաքանը կռացավ, թղթած պատուհանից ներս նայեց։ Գետնին նստոտել էին կանայք, նոր եկածը խոսում էր, ձեռքերը շարժում, երբեմըն էլ նայում ձեռքին բռնած գրքին։ Կինն առանց գլխարկի էր։ Սաքանին թվաց, թե շորերն էլ է փոխել։ Ձիու վրա նա սպիտակ չէր հագնված, թևերն էլ մինչև արմունկը բաց չէր։

Գետնին նստոտած կանանց մեջ Սաքանը իր կնոջն էլ տեսավ, շալը գլխին։ Այնպես խեղճ-խեղճ նստել էր։

Դռան մոտ ոտնաձայն եկավ, Սաքանն արագ ծռվեց փողոցով, կորավ մութի մեջ։ Մարագում դարմանը քթոցի մեջ լցնելիս Սաքանի աչքի առաջ սպիտակ շորերով կինն էր, գիրքը ձեռին։

Եթե գիշերով մեկը հանդիպեր Սաքանին, կնկատեր, որ քթոցը թարս է շալակել։ Սրանենց տան մոտով անցնելիս Սաքանը ուզեց մոտենա, բայց պատուհանում լույս չտեսավ, անցավ։

Կովը նստել էր խոտի վրա և որոճում էր, երբ Սաքանը դարմանով լի քթոցը դրեց գոմի անկյունում։

— Տանը ղոնաղ կա,— ասաց մայրը, հորթուկին գրկեց, հորթանոցը տարավ։ Կովը հորթի ետևից կամաց բառաչեց։

Սաքանը չհարցրեց, թե ով է հյուրը։ Զուխայի փեշերից դարմանը թափ տալով ներս մտավ տան շեմքից և հենց այն էր, որ մի անգամ էլ պիտի թափահարեր չուխան,— երբ գլուխը բարձրացրեց, տեսավ հյուրին, և ձեռքերը բարձրացրած մնացին։

— Ընկեր Ասյան էս գիշեր մեզ մոտ ա մնալու,— ասաց կինը Սաքանին։

Ասյան ժպտաց։

— Էն դուք էիք, որ կտուրի մոտ ճանապարհը ցույց տվի՞ք։

— Հա՛, ես էի,— ասաց Սաքանը, մոտեցավ բարով տալու և երբ սեղմեց հյուրի ձեռքը, Սաքանին այնպես թվաց, թե նրա ձեռքը նոր ծնած հորթուկի պես փափուկ էր։

— Ի՞նչ լավ հորթուկ է,— ասաց Ասյան։

— Կարելի ա, լավն ա,— պատասխանեց Սաքանը տեղավորվելով նրանից մի քիչ հեռու։

— Էդ էլ մեր դասն ա էլի, ընկեր Ասյա, սերտում ենք,—անկյունից ձայն տվավ Սաքանի կինը, սանդուղից բաժակները հանեց և ավելացրեց.

— Գնացել ա, հորթին պաչել…

Մի պահ երեքով էլ լռեցին։ Ասյան կարպետի վրա շորերով քնած փոքրիկին էր նայում, որ կրծոտել էր հացը, մորը սպասել և նստած տեղն էլ քնել։ Սաքանը ունքերի տակից Ասյային էր նայում, նրա սպիտակ բլուզին, թևերին և մատով սրբում կարպետի երեսը, թեկուզ սրբելու էլ բա՛ն չկար։

— Տեղավորեցի,— ասաց նանին, շեմքի մոտ հանգցնելով ձեռքին բռնած սև նավթի ճրագը։ Նանին ինչ լավ արեց, որ եկավ և խախտեց լռությունը։

Սաքանը թեթև հազաց, թուքը կուլ տվավ և, հայացքը Այսայի գլխի վրայով դիմացի պատին գցելով, հարցրեց.

— Ասիլն էլ ամոթ ա, բա ձեր հետի ընկերն ո՞ւր ա...

— Նա ձորում բաժանվեց, մոտիկ գյուղը գնաց...— պատասխանեց Այսան և տեղում ուղղվեց։ Գետնին նստելու անսովոր էր։ Սաքանի կինը նկատեց այդ, ծալքից մի բարձ հանեց, դրեց նրա մոտ։

— Թիկն տուր,— ասաց։

Երբ Այսան ուզեց թիկն տալ, ոտքերը մի քիչ մեկնեց և ձեռքով շրջազգեստի փեշերը հավաքեց։ Սաքանը աչքը կարպետի նախշերին գցեց, չտեսնելու համար այն, ինչ ձին քշելիս էր տեսել։ Միտն ընկավ ալևորի հարցը, թե՝

— Սաքա՛ն, դու կիմանաս, հըմի նրանց մեջ մի բան չի պատահե՞լ, որ սարերով...

Սաքանն ի՞նչ իմանար, գուցե չի՞ էլ պատահել, գուցե հարևան գյուղ գնացող ընկերը Այսայի եղբայրն է կամ հորեղբոր որդին։ Այսան կարպետի փունջերի հետ էր խաղում մատներով, երբ Սաքանը նայեց նրան, ասես ուզում էր ստուգի, թե ում հետ էր սարի ճամփին, գուցե պատահել է մի բան։

—Ուրեմն մշտական շրջում ես գյուղերը, ժողով անում, քարոզ տալիս,— հարցրեց Սաքանը։ Այսան ծիծաղեց և ծիծաղի միջից «հա» ասեց, գլխով արավ։ Թեկուզ Սաքանը նկատեց, թե ինչ մաքուր էին նրա ատամները և թե գլխով անելիս ինչպես մի փունջ մազ ծամից պոկվեց, ընկավ ճակատին,—տեսավ այդ, և դուր չեկավ Այսայի ծիծաղը։

Եթե կտուրի վրա եզան կաշի քերող ալևորը այդ րոպեին Սաքանին հարցներ, թե պատահել է մի բան նրանց մեջ, Սաքանը ոչ միայն կասեր, թե՝

— Ջահել են, առանց էդ չի...— այլև կհնարեր, կերևակայեր այդ բանի պատմությունը և կտուրի վրա նըստած մարդկանց կպատմեր նույն եռանդով, ինչպես ալեվորը՝ Մթնաձորի մոռացված «չարքի» մասին։

Սաքանի կինը սփռոցը գցեց, շարեց հաց, պանիր, մածուն։ Սաքանը մոտեցավ սփռոցին, հացի լավ տեղերից կտրեց, Այսայի առաջ դրեց, ուզեց մածնի ամանն էլ դնի նրա մոտ, բայց քաշվեց, ամանը ետ տվավ։

Հաց ուտելիս Սաքանի աչքը Այսայի փոքրիկ պատառներին էր։ Զարմանում էր, թե ինչպես է ուտում։ Այսան լավաշի բարակ կտորները ոլորում էր, կծում մի քանի անգամ և ծամում, հետո աննկատ կուլ տալիս։ Սաքանը լավաշը երկու կտոր էր անում, մատներով լավաշի վրա պանիր փշրում և հացը կոլոլում, ինչպես խոտի խուրձ։

Երբ որ Սաքանի կինը երեխան տեղավորեց և մոտեցավ սեղանին, սկսեց ուտել,—Սաքանին այնպես թվաց, թե իր կինը որոճում է պառավ կովի պես, հացը շաղախում թքի հետ և կուլ տալիս էլ վիզը մի քիչ երկարում։

Սփռոցը հավաքելուց հետո, մինչև Սաքանի կինը տեղաշոր բաց կաներ, մայրն Այսային հարցուփորձ արեց։ Երբ նա հարցրեց, թե երեխա ունի՞ թե ոչ, Այսան ծիծաղելով պատասխանեց.

— Նանի, ես պսակված էլ չեմ։

Նանին միայն մտքում ասաց «ոնց թե» և զարմացավ, որ հասակ առած աղջիկը անպսակ է դեռ, երեխա չունի։

— Ես կուսակցության մարդ եմ, նանի, ես իմ տերը չեմ,— ասաց Այսան, կարծես հասկացավ, որ նանին իր մտքում տարակուսեց, գուցե և կասկածեց նրա վարքի մասին։ Բայց նանին նրա խոսքի իմաստը չհասկացավ, թեկուզ հարսը շտապեց ասելու, թե ինչ է կուսակցությունը։

Երբ որ Սաքանի կինը քաշվելով, գլուխը մի քիչ կախ, սկեսուրին բացատրում էր և աչքի տակով նայում Այսային, ասես ուզում էր հարցնի, թե ճիշտ է սերտել դասը,— Այսան ներքին հրճվանքով էր նայում նրան։ Սկեսուրն էլ էր հարսին նայում. նա և՛ ուրախ էր, որ հարսը կուսակցության մարդ չի, և՛ կասկածում, թե չլինի վերջը ժողովներում շատ բան սովորի ու միտքը փոխի։

*Սաքանը քուրսու վրա գցած կարպետի ծոպերի հետ էր խաղում, ականջը կնոջ պատմածին։ Եվ երբ կինը ասելիքը վերջացրեց, Սաքանը տեղից վեր կացավ, գոմի ճրագի տեղը հարցրեց և ուսը քորելով գնաց գոմ։*

*Խոտի վրա աղվամազոտ հորթուկն էր պառկել, լեզվով պռունկներն էր լիզում։ Կովը մերթ խոտ էր ուտում, մերթ գլուխը դարձնում հորթի կողմը, մնչում։ Սաքանը ախոռի մեջ խոտ լցրեց, մի քիչ էլ կանգնեց կովի մոտ, ճրագը ձեռքին։*

*Երբ տուն եկավ, Ասյան արդեն պառկել էր։ Անկողնու մոտ նրա շորերն էր, միջին սպիտակ շրջազգեստը, որ Սաքանի աչքին ձյունի կիտուկի պես երևաց։ Երբ անցավ նա անկողնի մոտով դեպի սենյակի մյուս անկյունը, ուր իր տեղաշորն էր և երեխայի օրորոցը, քթով դուրեկան մի հոտ ընկավ, կասես մեկը քաղել էր սարի ծաղիկները, սեղմել, հյութը հանել և ջրի պես շաղ տվել քուրսուն, հատակին, ծխից սևացած օճորքին։ Բայց երբ նստեց իր տեղաշորի վրա, տրեխները հանեց, քթովն ընկավ գոմի կծծահոտը, տրեխներին կպած աղբի, հարդի կծծած կտորների հոտը։ Այդ անկյունում շլվացած վերմակի, հազար անգամ քրտինք ծծած շապկի, արևի տակ խանձված չուխի, անլվա մարմնի հոտը կար։*

*Սաքանը մորը պատվիրեց, որ մանգաղը հազիր անի՝ առավոտ կանուխ կովի համար կանաչ խոտ բերելու։ Շուռ տվեց հաստ վերմակի տակ, քունը կամաց իջավ բեզարած մարմնի վրա։ Նրան թվաց, թե օրորվում է ջրի երեսին, վեր ու վար լինում, ջրի երեսին օրորվում է և մի սպիտակ շոր։*

*Երբ կինը բարձրացրեց վերմակի մի տուտը և մեկնըվեց Սաքանի կողքին, Սաքանն աչքերը կիսաբաց արեց, տեսավ, որ ճրագն արդեն հանգել է։ Նա կամացուկ հարցրեց կնոջը, թե ինչու գլխատակին բարձի տեղ կարպետ է։*

*— Մեր բարձը նրան եմ տվել,— ասաց կինը և ավելի մոտեցավ նրան։ Սաքանի քթովն ընկավ կնոջ բերանից*

մի ծանր հոտ, թվաց, թե նրա ատամները ժանգոտել ու փտել էին։ Դարձավ մյուս կողքին, երեսը դեպի պատը և ինքն էլ զարմացավ, թե ինչպես մինչ այդ չի զգացել կնոջ բերանի հոտը։

* * *

Լուսաբացի շողքը երդիկից ներս էր ընկել, կարպետի վրա կաթնագույն շրջան գծել, երբ Սաքանը զարթնեց, տրեխները հագավ։

Այսայի մոտով անցնելիս նա տեսավ սպիտակ շորը, վիզը, ուսի մի մասը, ուսի վրա սպիտակ շորի բարակ մի կտոր։ Արագ մոտեցավ դռանը, մանգաղն առավ, դուրս եկավ։

Տան առաջ, առվի մոտ երեսը լվաց, սրբեց չուխի ծայրով, իջավ ձորը, այգում խոտ քաղելու։ Ճանապարհին Սաքանը մի միտք էր անում՝ մե՞րկ էր քնել Այսան, թե շապիկ կար հագին. եթե շապիկ կար, ինչո՞ւ ուսը բաց էր, գուցե կողքի սպիտակ շորը նրա շապի՞կն էր։

Կովը շուտ-շուտ գոմի դռանն էր նայում, հորթուկին լիզում, վիզը ախոռի փայտերին քսում, քերում։ Տանն արդեն զարթնել էին, տեղաշորը հավաքել, կինը օջախն էր վառել, թեյի պատրաստություն էր տեսնում, երբ Սաքանը թարմ խոտի երկու խուրձ շալակին եկավ տուն։

Խոտի խուրձը կովի առաջ շաղ տալիս Այսան էլ էր կանգնած Սաքանի կողքին։ Նա ծիծաղում էր, երբ հորթը դունչը մեկնում էր կանաչ խոտին, հոտոտում և ոտքերը երերալով փախչում, գլուխը թաղում մոր կուրծի մեջ։

Այսան խոտից մի քանի ծաղիկ ջոկեց, մոտեցրեց հորթին, կովն զգաց այդ, պոչը շարժեց, գլուխն արագ շարժումով ծռեց։ Եթե ախոռից կապած չլիներ, գուցե և զարկեր գլխով։ Այսան ետ կացավ, ծաղիկները ձեռքից ընկան։

Թեյը տաքացնելուց հետո Սաքանի կինը ջուր բերեց Այսային՝ երեսը լվալու։ Թեկուզ Այսան հակառակեց, ամանը վերցրեց, որ ինքը ջուր լցնի ձեռքին, բայց կինը մերժեց։

Սաքանը կանգնել էր գոմի դռան։ Նա տեսավ, թե ինչպես է լվացվում Այսան։ Մի քանի անգամ բերանը ջուր առավ, թշերն ուռցրեց, մատով քսեց ատամներին, ողողեց, ջուրը թափեց։ Սաքանի միտն ընկավ, թե ինչքան վատ հոտում էր կնոջ բերանը։

— Դե ամեն ինչ սովորովի յա, մորուց ի՛նչ ա տեսել...

Առավոտ թեյին Այսան էլի քիչ կերավ։ Մայրը մի կողմից էր ստիպում, կինը մյուս կողմից։

—Կե՛ր, ճանապարհ ես գնալու, կսովես...

Այսան, ծիծաղելով թե՝

— Իմ կերածը ինձ երեք օր հերիք է։

Նանին զարմացավ և մտքում որոշեց, որ Այսան վատառողջ է, ներսը փուչ է, երևի մի հիվանդություն ունի, որ շատ չի ուտում։

Հետո Սաքանը գնաց, հարևանի գոմից Այսայի ձին բերեց։ Կտուրի վրա հավաքվել էին մի քանի կանայք։ Այսան ինչ-որ բան էր ասում նրանց։ Սաքանը ձիու թամբն էր սարքում. նրա ականջին հասավ այն, որ Այսան խոսք տվավ նորից գյուղ գալու։

Ձին թամբած էր արդեն, երբ կանայք կտուրից իջան։ Այսան ձեռք տվավ նանուն, կռացավ երեխայի թուշը պաչեց, մոտեցավ, որ ձին նստի։ Սաքանը սանձն էր բռնել։ Այսան ձեռքը ձգեց թամբին, փորձեց բարձրանա և հենց քիչ էր մնացել, որ ոտքը դուրս պրծնի ասպանդակից, երբ Սաքանը պահեց նրա ոտքը, օգնեց բարձրանա։

Այսան ցտեսություն ասեց Սաքանին, ձեռք տվավ և իջավ ճանապարհով։ Կանայք ուղեկցեցին նրան մինչև գյուղից դուրս գալը, ձին պահեցին, մի քիչ էլ խոսեցին, հարևան գյուղի ճանապարհը ցույց տվին և բաժանվեցին։ Կանայք ցրվեցին գյուղի փողոցներով։ Այսան ձիու սանձը պինդ սեղմած, կոշիկի կրունկով զարկեց ձիու կողերին. ձին քայլերն արագացրեց։

Սաքանը մի պահ մնաց տեղում կանգնած, հետո մո-

*տեցավ գոմի դռան, բայց հիշեց, որ գնալիք տեղը այգին է, ետ դարձավ, իջավ ձորը։*

*Երբ որ նա Այսային օգնեց ձին նստելու և ոտքը պահեց, նրան այնպես թվաց, թե մատները խրվեցին մի փափուկ բանի մեջ։ Երբ կռացավ, ոտքն ասպանդակի մեջ դնելու, Այսայի զգեստի տուտը բարձրացավ, և Սաքանի աչքին ընկավ նրա սպիտակ շորը։*

*Ամբողջ օրը այգում ջուր արեց Սաքանը։*

*Ջուրը կապած էր ծառերի տակ, և մինչև ջուրը տեղ կհասներ, Սաքանը մեջքի վրա պառկում էր, աչքերը կիսախուփ անում։*

*Ծառերը ճղներն իրար էին տալիս, տերևները քըսվում էին իրար։ Երբ ճղները մի քիչ հեռանում էին իրարից, և ճղների արանքից Սաքանի աչքին էր ընկնում երկընքի կապույտը, Սաքանին թվում էր, թե ամպը սպիտակ շորն է, որ գիշերով իրենց տանն էր, անկողնի մոտ։*

*Մութ էր արդեն, երբ վերադարձավ տուն։ Բահը մի կողմ գցեց, գնաց կովին նայելու։ Վերադարձավ տուն, թոնթորաց կնոջ վրա, թե կովին ծարավ է թողել։ Կինն ուզեց ասի, թե ինքը բոստանն է քաղհան արել, տանը չի եղել, բայց տապ արավ, սփռոցը գցեց, շարեց հաց, պանիր, մածուն։*

*Սաքանը կերավ կուշտ, ուտելիս չծպտաց, գլուխը քաշ պահեց և վերջին պատառը կուլ տալիս բեղի տակ փնթփնթաց.*

*— Տեղս գցի. էն սրաքարը դիր դռան մոտ, որ առավոտը տանեմ։*

*Ասեց և գոտին արձակեց։*

*Երբ գլուխը դրեց բարձին, Սաքանը նորից զգաց այն հոտը, որ Այսայի շորերից էր գալիս։ Երեկ այդ բարձը նրա գլխատակին էր։*

*Սաքանը գլուխը թաղեց բարձի մեջ, լայնացած ռունգերով և խոր սկսեց շնչել։ Նրա աչքի առաջ օրորվում էին ուսը, մի սպիտակ շոր, փափուկ ոտքերը։*

Կինը ճրագը հանգցրեց և կամացուկ շուլալվեց վերմակի տակ։ Սաքանն զգաց, որ մեջքը տաքանում է, երեսը դարձրեց կնոջ կողմը։ Վերմակի տակ տուրեկան հոտ կար, և, երբ Սաքանը գրկեց իր կնոջ, նրան այնպես թվաց, թե իր կնոջ ուսն էլ բաց է, հագին ձյունի պես սպիտակ շապիկ ունի։ Կինը չհասկացավ, թե ինչու այդ գիշեր Սաքանը այդքան մոլեգին էր։ Եվ իր մտքում նա ներեց նրա երեկվա արածը, երբ երեսը շրջեց պատի կողմը։

Կինը մշշալով քնել էր, խրճիթի մի անկյունում նանին էր քնել։ Գիշերվա լռության մեջ գոմի պատի արանքից Սաքանը լսում էր, թե ինչպես է կովը գոմում որոճում։

Միտն ընկավ, թե ինչպես կովն ուզեց հարու տա Ասյային, երբ նա ծաղիկն էր մոտեցնում հորթի դնչին։ Սաքանը հիշեց և առաջին օրը, ինչպես էին նստել կտուրի վրա։ Տերը պատմություն էր անում, թե ինչպես լուսնյակ մի գիշեր Մթնաձորում «չարք» երևաց, ինչպես չարքը հետևում էր նրան։

— Ես վազում եմ, ինքն իմ ետևից, կանգնում եմ, ինքն էլ ա կանգնում...

Հենց այդ խոսքին էր, որ երևաց ընկեր Ասյան։

Մինչև կեսգիշեր Սաքանը կես քուն կես արթուն էր։ Լուսնյակը շողք էր գցել երդիկից, շողքը խաղում էր կարպետի վրա։ Լուսադեմին քնեց։

Երազում Սաքանի աչքին երևաց Մթնաձորը. սպիտակ շոր հագած մի կին ձորով վազում էր իր ետևից, մոտենում էր, որ բռնի, կանգնում էր կինը, ծիծաղելով ետ փախչում ձորն ի վեր։

# ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ

*Գարնանային առավոտը խոստանում էր պայծառ և արևոտ օր։ Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետը և ամեն քայլափոխի փնչում։ Քրտինքից խոնավացել էր ձիերի մուգ-կապույտ վիզը։*

*Արահետն օձապտույտ ոլորվում էր։ Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի խտանում էր անտառը, հանդիպում էինք հաստաբուն ծառերի, որոնց ճյուղերն իրար էին խառնվել և կախվել արահետի վրա։ Հաճախ էինք կռանում թամբից, գրկում ձիու վիզը, որպեսզի կախ ընկած ճյուղերը չքերծեին մեր դեմքը և փշերը չծակծկեին։*

*Լուռ էինք։ Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա։*

*Ընկերս կամաց սուլում էր մի երգ և ձիու քայլերի համեմատ թամբի վրա օրորվում։*

*— Այս կածանով տասներկու տարի առաջ գնացի Ձորագյուղ,— ասաց ընկերս։ Թվում էր, թե ինքն իրեն էր խոսում։*

*Նայեցի նրան։ Ժպտում էր․ կարծես միտն էր ընկել*

մի երջանիկ դեպք, որին ականատես են եղել արահետը և հին անտառը։

Ես հարցրի, թե ո՞ր քամին էր նրան շպրտել հեռու ձորերում ընկած այն գյուղը։

— Հենց այդ օրը բանտից նոր էի դուրս եկել։ Տասնըյոթ-տասնութ տարեկան երիտասարդ էի։ Այնքան եռանդ ունեի աշխատելու և այնպիսի կորով... Եթե մնացած լինե՞ր այդ երիտասարդությունը։

Արահետը վերջացավ և անտառի խորքում խառնվեց ավելի լայն ու փափուկ ճանապարհի, որ գալիս էր գետերի հովիտներից։ Ձիերը կանգ առան, խորը շնչեցին և ապա շարունակեցին քայլերը։

— Գիտես, երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես նույնքան պայծառ, ասես երեկ ես տեսել։ Մարդ մոռանում է անունը, տեղն ու տարին, թե երբ է տեսել այդ գլուխը, աչքերը. մոռանում է մանրամասնությունները, սակայն մնում են միայն գլուխը, աչքերը, կարծես մինչև մահ-գերեզման անջնջելի պիտի մնա այդ առաջին տպավորությունը։

Նա ինձ չթողեց, որ հարցնեի այդ դեպքի և նրա անջնջելի տպավորության մասին, որ այդ րոպեին լույս էր տալիս նրա հիշողության մեջ, ինչպես արևի ոսկե շողը՝ ծառերի մթնում։

— Շատ պարզ հիշում եմ այն օրերը, երբ որոշեցի Ձորագյուղ գնալ։ Հարկավոր էր քաղաքից հեռանալ, միաժամանակ չերևալ այնտեղ։ Եվ սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռու գյուղում։ Երկու միտք ինձ ոգևորում էր։ Նախ, որ ոչ մի աչք չի հետևի, հետքերս չի փնտրի, և երկրորդ՝ գյուղում պիտի աշխատեի։

Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Ձորագյուղի մասին, թե տեղն անառիկ է, օդը լավ, կողքին մթին անտառներ կան, որտեղ առատ է որսը, ես իսկույն համաձայնեցի։ Կարծեմ նույն օրն էլ ճանապարհ ընկա։

...Ձմռան սկիզբն էր, ձյունը նոր էր եկել։ Գիշերը հասանք հենց այս արահետին և բաժանվեցինք անտառի գլխավոր ճանապարհից։ Լուսնյակի տակ ձյունը շափաղ էր տալիս, ասես սպիտակ մարմար էր, որի մեջ արտացոլում էին ծառերի սև բները։ Զորագյուղցի ձիապանը արահետի գլխից մատը մեկնեց ներքևի ձորը.

— Հրեն է՛, մեր գյուղը։

Ձյունի սպիտակության վրա վերևից ես նշմարեցի փոքրիկ սև կետեր։ Գյուղի տներն էին, խոտերի և աթարի դեզերը։ Մի տան պատուհանից ճրագի սպիտակ լույս էր երևում, կարծես այդ մթին ստվերների մեջ մոլորվել էր մի մանրիկ աստղ։ Մի քիչ իջանք լանջով, և լսելի եղավ շան զրնգան հաչոցը, որ անտառում արձագանք էր տալիս, ինչպես կացնի զարկերը։

— Էն մեր Բողարի ձայնն է,— ասաց ձիապանը։ Ձին էլ կարծես հասկացավ, որ գյուղը մոտ է, որ Բողարն է հաչում, և քայլերն արագացրեց։

Իսկ ինձ թվում էր, թե գնում եմ շատ հեռու երկիր, որի մասին հեքիաթի պես պատմում էր աշխարհագրության դասատուն։ Մանուկները հաճախ ցնորում են հեռավոր երկրների մասին, ուր կարմրամորթ մարդիկ են ապրում, ծառերի վրա՝ գույնզգույն փետուրներով թռչուններ։ Եվ երբ նրանք տնից հեռանում են, նրանց թվում է, թե շատ մոտ է ցնորքի այդ աշխարհը։

Ես էլ այդպես էի մտածում, թեև արդեն պատանի էի։ Երևի անտառն էր այդպես տրամադրում, ձմեռային գիշերվա վեհությունը, քարաժայռերի անձև կերպարանքը և այն անորոշ ձայները, որ գալիս էին ձորերից ու անտառից։ Գուցե և հոգնածությունն էր մշուշել իմ գիտակցությունը։ Չեմ հիշում. միայն գիտեմ, որ առաջին անգամ Զորագյուղ գալը դարձավ իմ կյանքի լավ գիշերներից մեկը։

Ձիապանն ինձ տարավ իրենց տունը։ Ինչպե՛ս անուշ մրափեցի թոնրի մոտ, քուրսու վրա։ Բավական ուշ աչքս կիսաբաց արի և նայեցի երդիկին։ Ձմռան գիշերից մի քիչ

դեռ կար։ Ես նորից փաթաթվեցի վերմակի մեջ, ոտքերս կախեցի տաք մոխրի վրա, և քնի ու երազի սահմանում օրորվեց գիշերվա անիրական աշխարհը։

Ամաչեցի, երբ աչքերս բաց արի։ Վաղուց զարթնել էին մյուսները և սպասում էին ինձ, որպեսզի թոնիրը վառեն։

Դուրս եկա. բակից տեսա գյուղը, գիշերվա մեր ճանապարհը։ Հավաքնի մոտ Բողարը հաչաց ինձ վրա։ Նրա հաչոցն այլևս ահավոր արձագանք չուներ, և ոչ էլ կախված ժայռերն էին տձև։ Ձյունի վրա, կտուրների կարասների վրա շողում էր ձմեռվա նարնջագույն արևը. երդիկներից ծուխ էր բարձրանում։

Ինձ նույն օրն էլ տեղավորեցին մի տան մեջ, որտեղ և պիտի ապրեի։ Տան տերը՝ Օհան ապերը, նահապետական բարքով մարդ էր։ Հիմա մեր գյուղերում նրա նման մարդիկ այլևս չկան։ Ձմեռը նստում էր բուխարու մոտ, չոր փայտը դարսում կողքին։ Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և պատմություններ անում շահի ժամանակից, անցած գնացած օրերից, որսից և անտառից։ Իսկ եթե ոչ ոք չէր լսում նրան, մենակությունից թե ձանձրույթից, բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը։

Տանը չորս հոգի էինք։ Ես, Օհան ապերը, նրա պառավ կինը և տաս տարեկան Աշոտը, որ հավատարիմ ընկերս էր, երբ գնում էինք դպրոց, որովհետև շները դեռ ինձ վարժ չէին, հաչում էին կտուրներից և հետևի ոտքերով ձյուն մաղում ինձ վրա։

Դպրոցը գյուղի ծայրին էր, բլրակի վրա։ Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր։ Մի ընդարձակ սենյակ էր, փայտե հասարակ նստարանների երկու շարք, դիմացի պատից՝ գրատախտակը։ Անսվաղ պատերին ուրիշ ոչ մի զարդ չկար։ Պատուհաններին ապակու տեղ խմորով փակցրել էին յուղած թուղթ։

Միակ ժամացույցն ինձ մոտ էր։ Մի օր էլ բլրակը բարձրանալիս, ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց և մինչև տարվա վերջը

*մնացի առանց ժամացույցի։ Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք։*

*Երկու շաբաթ հետո քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում, շատերի տունը գիտեի, ոմանց ծնողներին ճանաչում էի։ Ժիր երեխաներ էին, բոց աչքերով, և այնքան արագ ընտելացանք իրար։*

*Օրապահի զանգին ես իջնում էի տան սանդուղքով, բլրակի գլխին չհասած տեսնում էի դպրոցի առաջ խմբված երեխաներին։ Խմբով էլ ներս էինք մտնում։*

*Դասերից հետո ես համարյա միշտ տանն էի։ Օհան ապերը գնում էր գոմը, տավարին ապուռ տալու։ Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, պառավը վառում էր օջախը կամ լվանում ընթրիքի ամանները։ Օհան ապոր չոր ցախերը դարսում էի բուխարիկում, պառկում կրակի առաջ և նայում, թե ինչպես են մոխրանում փայտի կտորները, ինչպես կրակի լեզվակները կայծերը թռցնում էին երդիկով։*

*Մութն ընկնելուց գալիս էին Աշոտն ու Օհան ապերը, տրեխները հանում և նստում կրակի մոտ։ Եվ մինչև պառավը ամանների ճաշը եփեր, Օհան ապերը սկսում էր մի հին պատմություն, որի վերջը լսելու համար ես և Աշոտը երբեմն խանգարում էինք նրա քունը։*

*— Հա, ո՞րտեղ մնացի,— արթնանում էր և, մինչև մենք հիշեցնեինք, գանգատվում էր.*

*— Պառավել եմ, քունս շուտ է տանում։— Եվ շարունակում էր կիսատ պատմությունը։*

* * *

*Ես ուշադիր լսում էի ընկերոջս, և թեպետ ծառերը դարձյալ ճյուղերը կախել էին ճանապարհի վրա, բայց այլևս մտրակով չէի պոկում նրանց տերևները։ Արևը բավական բարձրացել էր, ցողի կաթիլները գոլորշիացել էին։*

*— Ձորագյուղում մի որսորդ կա, վիգը ծուռ Անտոն են ասում։ Հիմա էլ մնում է, թեպետ բավական ծեր է։*

Նրա աչքերը լավ չեն տեսնում, դրա համար էլ որսի չի գնում։

Նրա մասին Օհան ապերը շատ էր պատմում։ Անտոնը մի անգամ անտառում արջի հետ է կռիվ կացել, արջը ջարդել է նրա հրացանը, կռացել է, որ գերանը վերցնի Անտոնին խփելու, բայց նա սպանել է արջին։ Օհան ամին պատմում էր, թե ինչպես է նա բնում աղվեսին բռնել։

— Իրեն որ տեսնես կզարմանաս։ Լղար, բոյը կարճ, վիզն էլ ծուռ։ Կասես, որ բամփես գլխին, տափին կփակչի,—ասում էր Օհան ապերը նրա մասին։

Ես մտքումս դրել էի նրա հետ որսի գնալ, թեև մինչև այդ որս քիչ էի արել։ Պառավը խոստացավ խնդրել հարևանի կայծքարով հրացանը։

Հենց հաջորդ կիրակի, առավոտ կանուխ, երբ երդիկներից դեռ նոր էր բարձրանում ծուխը, ես և Անտոնը բռնեցինք անտառի ճանապարհը։ Այդ օրը ես չորս անգամ կրակեցի։ Կրակոցից ծառի ճղներից ձյուն թափվեց, բայց իմ վառոդը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի։

Անտոնը սիրտ էր տալիս, թե առաջին անգամ այդ էլ շատ է։ Բայց ես տեսնում էի նրա ծաղկատար դեմքի խորամանկ ժպիտը։ Ինքը մի ծեր աղվես սպանեց և երկու մոշահավ։ Ծեր աղվեսն այնքան չարչարեց մեզ։

Անտոնը կրակեց, մուխի մեջ ես տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց։ Վրա վազեցինք, աղվեսն ատամները կրճտացրեց, պոչը կոխեց հետևի ոտքերի արանքը և փախավ։ Ձյունի վրա մնացին նրա հետքերը և արյան շիթեր։ Մի քանի տեղ ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, և ձյունի վրա թափվել էին մորթու մազերը։

Աղվեսին փնտրելու ժամանակ Անտոնը մի մոշահավ էլ սպանեց։ Միասին վազեցինք դեպի այն կողմը և փոսի մեջ տեսանք ծեր աղվեսին, որ կծկվել, կուչ էր եկել և դունչը մոտեցրել էր վերքին։ Նրա կախ ընկած լեզուն արնոտ էր։ Երևում էր, որ լիզել էր վերքի արյունը։ Անտոնն աղվեսին ուսովը գցեց, ես մոշահավերը վերցրի, և մենք վերադարձանք։

Գյուղին չհասած, անտառի բացատում, չոր ճյուղերի կոտրատելու ձայն լսեցի։ Ինձ թվաց, թե պախրան եղջյուրներով ծառի ճյուղերը դեն է հրում, որպեսզի չոր տերևներ հանի ձյունի տակից։ Հետ նայեցի։

Ութ-տաս տարեկան մի տղա ցախ էր դարսում ձյունի վրա մեկնած պարանին։ Մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ՝ պարանի չափ բարակ ճյուղը ձեռքին։ Նրանք մեզ ավելի վաղ էին տեսել և կանգնած նայում էին։

Ահա այդ դեմքն է, որ մեխվել է հիշողությանս մեջ, թեև այն օրից անցել է տասներկու տարի և այն էլ ի՜նչ տարիներ։

Ընկերս լռեց, ես նրա դեմքին տեսա երանության նույն ժպիտը, ինչպես առաջին անգամ, երբ մենք դեռ բարձրանում էինք արահետով։ Ասես աչքի առաջ, ձյունոտ անտառում, տեսնում էր աղջկան, ձեռքին չոր ցախը։

— Տեսա ու կանգնեցի,— դանդաղ շարունակեց նա,— և թեպետ Անտոնն ասաց, թե ո՛ւմ աղջիկն է, ասաց, որ ցախի են եկել, բայց ես նրան չէի լսում։ Հիշում եմ, որ մի անգամ էլ, երբ բացուտն անցանք և իջնում էինք գյուղի կալերի վրա, հետ նայեցի։ Չգիտեմ աղջիկը ժպտաց, թե չէ, բայց ինձ այդպես թվաց։ Գլուխը խոնարհեց ու փշրեց ձեռքի բարակ ճյուղը։

Մեր տան պատշգամբից ես տեսա աղջկանը՝ ցախը շալակին։ Մեր հետքերով նրանք իջան կալերի վրա։ Մոխրագույն շորեր ուներ, գլխին՝ տանը գործած բրդե շալ։ Ես պատշգամբից նայում էի այն կողմը, իսկ Օհան ապերը ինձ հարցնում էր մոշահավի մասին, Աշոտը նրանց փետուրներն էր պոկում, ես կցկտուր պատասխան էի տալիս և աչքի տակով հետևում, թե ո՛ր տունը պիտի մտնի ցախով աղջիկը։

Որքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է դպրոցում։

Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը, որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մեկն էր,

բոլորից զոկվեց և իմ աչքում դարձավ այն կետը, որի շուրջը պտտվում էր իմ ներքին աշխարհը։

Ուզում էի իմանալ աղջկա անունը։ Ես հորինեցի մի դաս, երբ աշակերտները պատմում էին իրենց ընտանիքի անդամների մասին։ Եվ որովհետև նրանք երկու քույր էին, դժվար չէր իմանալ, որ անտառում տեսած աղջկա անունը Խոնարհ էր։ Մյուս աշակերտներն էլ մատ բարձրացրին, իրենց տան մասին պատմելու և զարմացան, երբ ես գրատախտակի վրա գրեցի գումարման նոր վարժություն։

Խոնարհ, Խոնարհ... Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ և ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը։

Այդ դեմքը մերթ սուզվում էր անդունդը, որը սովորական էր դառնում, հիշում էի, որ անտառում մի ծեր աղվես ենք սպանել, երկու մոշահավ։ Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ես նայեցի, թե միայն ինձ թվաց։

Անտոնի հետ մի անգամ էլ որսի գնացի։ Բացատին երբ հասանք, ես մոտեցա այն գերանին, որի մոտ կանգնել էր աղջիկը։ Որսորդն իմ հետևից կանչեց, թե ճանապարհն աջ է ծռվում։ Գերանի մոտ ձյունը ծածկել էր աղջկա հետքերը։ Ոչինչ չէր երևում։ Միայն ծառի տակ ընկած էր մի չոր շյուղ։ Կռացա վերցրի։

Վերադարձին եկանք գյուղի ծուռ ու մուռ փողոցներով, որպեսզի անցնենք նրանց տան առաջով։ Այդ թաղի շները հաչոցով ինձ վրա վազեցին։ Բայց և այնպես կիսաբաց դռնից նրան տեսա բակում՝ գրկին մի խուրձ խոտ։ Ինձ տեսավ, դեմքն իսկույն մյուս կողմը դարձրեց, տուն մտավ։ Ես նկատեցի, թե ինչպես կարմրեց նրա դեմքը։

Այդ օրն այնքան ուրախ էի։ Օհան ապերն էլ նկատեց իմ ուրախությունը և ծիծաղելով ասաց, թե վիզը ծուռ Ան-

տոնի հետ անտառում երևի մի օյին ենք սարքել։ Ընթրիքից հետո բուխարու մոտ երբ նա ննջեց, ես արագ թերթեցի նրա շարականի գիրքը, բրդե թելը ուրիշ թերթի արանքում դրի, որպեսզի առավոտյան Օհան ապերը զարմանա, թե ե՞րբ կիսեց շարականի հաստ գիրքը, կարդա ու կասկածով նայի մեկ ինձ, մեկ՝ Աշոտին։

Ձմեռվա ընթացքում Խոնարհին երկու անգամ տեսա։ Մի ամիս հիվանդ էր և առողջացավ բարեկենդանի տոներից առաջ։ Ես շատ անգամ էի նրա մասին հարցնում նրա քրոջից։ Եվ ամեն անգամ տարբեր պատրվակով հեռվից հեռու, շատ անգամ իբրև թե պատահաբար, մեջ բերելով ուրիշ խոսք։

Դժվար էր միշտ պատրվակ գտնելը։ Հիշում եմ, երեք օր տեղեկություն չունեի, քաշվում էի հարցնել։ Հանկարծ փոքրիկ աղջիկը գնար և տանն ասեր... Չորրորդ օրը սովորականից շուտ եկա դպրոց։ Քույրը դեռ չէր եկել։ Կանգնել էի մուտքի դռան մոտ։ Աշակերտները վառարանի կողքին տաքանում էին։ Աչքս բլրակին էր։ Հանկարծ երևաց քույրը, ինձ տեսավ և կարծեց, թե հանդիմանելու եմ ուշանալու համար։ Աղջիկը քայլերն արագացրեց և ինձ երբ հասավ՝ շնչակտուր ասաց.

— Խոնարհն արդեն վեր է կացել...

Հետո ես իմացա, որ նա դեռ չորս օր պառկել է։ Աղջիկը սուտ էր ասել։

Բարեկենդանի մի օր Խոնարհին տեսա։ Մեր դիմացի կտրան աղջիկները խաղում էին, իրար ձյունով տալիս և երգեր ասում։ Տատերի ձեռքին խնձոր կար։ Նրանք նոր շորերով էին՝ կարմիր, կապույտ, կանաչ։ Նրանց մեջ էր Խոնարհը. Նրա հագին երկար զոլերով կարմիր չիթ էր։ Ձեռքերը պահել էր գոգնոցի տակ, կանգնել կտուրի ծայրին և նայում էր ավելի փոքրահասակ աղջիկներին, որոնք զվարթ ծիծաղով իրար հրմշտկում էին և վազվզում կտուրների վրա։

Պատշգամբից ես նրան գունատ տեսա և մի քիչ նի-

*հար։ Նոր շորերի մեջ նա երևաց ավելի բարձրահասակ, մեջքը բարակ։ Կապույտ գոգնոցի թելերը մեջքին հանգույց էր արել։ Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը, տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին։*

*Նորից տեսա Խոնարհի սպիտակ դեմքը, նրա մանրիկ աչքերը։ Կարմիր շորերով այդ աղջիկը ինձ թվաց որպես մի բարձրահասակ երեխա՝ գլխին նույն բրդե շալը, ինչ որ առաջ։ Տուն մտա նրան չխանգարելու համար, որովհետև մյուս աղջիկները քչփչացին, փոքրահասակներից մի քանիսը, որոնք դպրոցում սովորում էին, գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձնից։*

* * *

*Անտառն արդեն վերջացել և սկսվել էր լեռնային փարթամ մարգագետինը, որի հատուկ թփերը ապացույց էին, թե ժամանակին մարգագետնի սևահողերում աճել է կաղնին։*

*Կանաչների միջով հոսում էր գետակը, որի ակունքները անտառի մթին ձորերի աղբյուրներն էին։ Դրա համար էլ գետակի երեսին, կանաչ խոտերի հետ, լողում էին և չոր տերևներ։*

*Ձիերը հոգնել էին։ Լեռնային կանաչը գրավիչ էր և՛ մեզ, և՛ հոգնած ձիերի համար։*

*— Իջնենք, ձիերը թող հանգստանան,— ասաց ընկերս։ Ձիերը լեզվով դուրս հրեցին սանձի երկաթները և ագահությամբ պոկեցին խոտը։ Մենք պառկեցինք գետակի ափին, խոտի վրա։*

*— Օհան ապերը գրքեր շատ ուներ, հին գրքեր։ Մի կիրակի պատշգամբում նստած կարդում էի նրա հին գրքերից մեկը, կարծեմ Հուստինիանոս թագավորի մասին։ Ձյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունն արդեն զգացնում էր, որ գարունը հեռու չէ։ Այդպիսի օրերին կա-*

տուն էլ հեռանում էր թոնիրի տաք քարից և աչքերը փակած, փռվում արևի տակ։

Մեկը բարձրանում էր սանդուղքով։ Գլուխս վեր հանեցի։ Գիրքը ձեռքիս դողաց։ Կողքիս կանգնել էր Խոնարհը և մատներով խաղում էր գոգնոցի եզրի հետ։ Երբեք նա ինձ այդքան մոտ չէր կանգնել։ Դրանից էր, որ գրքի տառերը շաղվեցին, և գիրքը դողաց։

— Հայրս խնդրում է ճաշին գաս մեր տունը։

Ինքս էլ չիմացա, թե ինչու պատճառ բռնեցի գիրքը, ասեցի, որ չեմ կարող գալ։ Խոնարհը ձեռքի արագ շարժումով գիրքս ծալեց, և ես դեռ ուշքի չեկած, բակից կրկնեց հոր խնդիրը։

Չգնացի, բայց գիրքն էլ բաց չարի։ Անելիքս չգիտեի։ Փորձեցի տետրակներն ուղղել, չկարողացա։ Օհան ապերը եկավ, և մինչև իրիկուն միասին էինք։ Այդ օրը ես նրա հետ գոմը գնացի կովերին խոտ ու դարման տալու։

Չգիտեմ, ամեն տարի Զորագյուղում գարունն այնքան սիրո՞ւն է, ինչպես այն տարին։ Քարերն էլ էին շնչում գարնան բույրը։ Անտառի հազարավոր լորենիների հոտը գիշեր-ցերեկ գյուղի վրան էր։ Երբ դասերից հետո պառկում էի անտառում, լորենիների տակ, գլուխս պտտվում էր։

Ձորակներում հիմա էլ կան այգիներ։ Գարնանը ուռել և հասել էին խնձորենու բողբոջները։ Հարկավոր էր մի շաբաթ տաք եղանակ, որպեսզի բացվեին խնձորենու ծաղիկների կարմիր թերթերը և ձորակները բուրեին։ Հեռվից ծաղկած ծառերի սպիտակ ճյուղերը երևում էին ձյունով ծածկված, ասես գարունը ձյուն էր թափել ծառերի վրա, գունավոր և հոտավետ փաթիլներով ձյուն։

Գյուղի փողոցներից արևը գոլորշիացնում էր աղբաջուրը, կովերը ջրի գնալիս շլանում էին արևի լույսից, մնչում էին արջառները, հոտոտում, դես ու դեն վազում և ոտքերով փորում թաց գետինը։ Եվ ինչ դժկամությամբ էին նրանք ներս մտնում գոմի ցածր դռնակներից։

Գարնան արև օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է։ Դպրոցն արձակելուց հետո նույն ճանապարհով պիտի վերադառնամ և էլ երբե՛ք, երբե՛ք չպիտի տեսնեմ Ձորագյուղը։

Նրանց տունը չգնալու համար փոշմանել էի։ Մի օր էլ փողոցում մայրը հանդիմանեց, որ հրավերը չեմ ընդունել։ Ես ուզում էի, որ մեկ էլ կանչեր, թեկուզ մի թեթև ակնարկ աներ։

Այն ժամանակ սովորություն կար տարեվերջին դպրոցում կազմակերպելու հանդես։ Ես էլ էի պատրաստվում, և աշակերտները սովորում էին երգ ու ոտանավոր։ Հետո մեծահասակ աշակերտները տախտակներ բերին, տներից հավաքեցին գորգ ու կարպետ և սարքեցին բեմ։ Աշակերտներին պատվիրել էի, որ շատ մարդու կանչեն։ Եվ ամեն անգամ աչքս նրա քրոջ կողմն էր։

Կիրակին եկավ։ Գուցե և ոչ մի տարի այդ օրն այնքան բազմություն չէր հավաքվել գյուղի դպրոցում։ Բաց պատուհաններով գարունը այգիներից բերում էր ծառերի բույրը, դպրոցի կտուրի տակ սարյակները բունից բուն էին թռնում աշխույժ ճռվողյունով։ Նրանք էլ էին զուգվել, և այնպես փայլում էին սարյակների սև փետուրները։

Բազմության մեջ ես միայն մի գլուխ էի տեսնում, այս անգամ առանց շալի, մազերը կիսած և խնամքով սանրած։ Եվ ի՜նչ բարակ էին նրա շրթունքները։

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր նրա քույրը։ Կարպետը շարժվեց, բեմի ետևում երևաց Խոնարհը՝ իր գլխի սանրով կոկեց քրոջ մազերը։

Մանկան զիլ ձայնով և համարձակ, փոքրիկ աղջիկը ինչ-որ բան էր ասում։ Բազմությունը լուռ լսում էր։ Չէի լսում ես։ Կողքիս Խոնարհն էր։ Նրա աչքերում ուրախության ժպիտ կար։ Աչքերը փայլում էին սարյակի փետուրների նման սև։ Ձեռքը բռնեցի։

— Խոնարհ...— Ձայնս դողաց։

— Թո՛ղ,— ասաց ու ձեռքը մեկնեց քրոջը, որ ավար-

տել էր արտասանությունը, և որի դեմքը անսովոր հաճույքից կարմիր էր։ Դահլիճում ծափահարում էին. ոմանք ղանազան ձայներով, նույնիսկ ձեռնափայտի շարժումով իրենց գոհունակությունն էին հայտնում։

Քիչ հետո հանդեսը վերջացավ։ Ինձ թվաց, թե հանդեսը տխուր անցավ, և պղտորվեց գարնան օրը։ Ականջիս տակ նրա խոսքն էր՝ թո՛ղ։ Ձեռքիս էի նայում և ուզում էի ստուգել՝ բռնե՞լ եմ արդյոք նրա ձեռքը։ Ինչու այդքան ջերմ էին նրա մատները։

Հանդեսից հետո Խոնարհին մի քանի անգամ տեսա։ Պատահմամբ իմացա նրանց այգու ճանապարհը։ Դասերից հետո գնում էի ձորակը, պտտվում Օհան ապոր այգու կապույտ քարին, որից վերև ցանկապատի կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց։ Ոչ մի խոսք չէի կարող նրան ասել, թեկուզ մի քանի անգամ տեսա ցանկապատի ետև։ Հայրը գնում էր առաջից՝ չոր ցախի կապը մեջքին, աղջիկը՝ նրա հետևից, ջրամանն ու հացի շորը թևի տակ։ Հետս գիրք էի առնում, բայց չէի թերթում ոչ մի էջ, որովհետև ամեն մի ոտնաձայնի նայում էի ճանապարհին։

Մի անգամ միայն ցանկապատի ետևից ինձ նայեց և ժպտաց։ Թվաց, թե հացի շորը դիտմամբ վեր գցեց, որ կռանա և մի քիչ ավելի կանգնի։ Գուցե այդպես չէր, գուցե, իրոք, շորը սահեց ընկավ։ Հիմա էլ պարզ տեսնում եմ նրա դեմքը ցանկապատի փշերի արանքից։ Նույն աչքերն էին, ինչպես բարեկենդանի օրը կտուրի վրա։ Նրա աչքերի մեջ մանկական արտահայտություն կար, թեև տասնհինգ տարեկան էր, և ամուր կոճկած զգեստի տակ երևում էր հասուն կուրծքը։

Ընկերս լռեց։ Ձեռքով տրորեց ճակատն ու աչքերը, ասես ուզում էր հեռացնի այն դեմքը, որ հին տարիներից ժպտում էր այդքան պայծառ։

Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամպ, ասես արար աշխարհին հպարտությամբ ցույց էր տալիս, որ անհաս բարձունքում լողանում է արևի շողերի մեջ։

— Եկավ և վերջին օրը։ Դպրոցն արդեն արձակել էի. աշակերտներին բաժանել էի հին տետրակները, վերադառնալու պատրաստություն էի տեսնում։ Օհան ապերը առավոտը շարական չէր կարդում։ Վաղ լուսաբացին նա գնում էր այգի կամ վար ու ցանքի հոգսի հետևից էր։

Հրաժեշտը դժվար էր։ Տանն ընտելացել էին ինձ, ես դառել էի մտերիմ մարդ և՛ Օհան ապոր, և՛ Աշոտի, և՛ պառավ Նանի համար։ Բակում ձիապանը բարձում էր իրերս, Նանին պայուսակի մեջ դարսում էր գաթա և ճանապարհի պաշարը։

Խոնարհին մի քանի օր չէի տեսել։ Ինձ թվում էր, թե ես նրան էլ չեմ տեսնելու։ Եվ մի անգամ էլ տեսնելու պահանջը ինձ ստիպեց արագ-արագ անցնել գյուղի փողոցներով, մի վայրկյան կանգ առնել նրանց տան առաջ և բաց դռնով նայել բակին։

Խոնարհին բակում չտեսա։ Փողոցում մարդ չկար, բոլորն աշխատանքի էին, արտերում սկսվել էր քաղհանը, այս ու այն սարալանջից լսվում էր հորովելի ձայնը։ Մի տեղ աշունքվա մուգ-կանաչ արտերն էին, մի տեղ գարնան սև ցելը։

Օհան ապերը մի քանի խրատներ կարդաց։ Երբ նա կռացավ ու ճակատս համբուրեց, ես նրա բարի աչքերում արցունքներ տեսա։ Նանին ձիապանին պատվիրում էր ինձ լավ տանել և զգույշ մնալ, որ պայուսակը չընկնի, միևնույն ժամանակ գոգնոցով սրբում էր թափվող արցունքը։

Անցանք փոքրիկ ձորակը, աղբյուրը և ուռենու հաստ նովը, ուր ձմեռը կովերը ջուր էին խմում։ Ահա և Օհան ապոր այգու դռնակը։ Արագ բարձրացա ձորակով, դռնակը բաց արի, մոտեցա այգու կապույտ քարին. ցանկապատի ետևը մարդ չկար։ Այգում խաղաղություն էր, ծաղկաթափ էին ծառերը, և բողբոջների փոխարեն նշմարվում էին կանաչ ու մանրիկ պտուղները։

Դպրոցի մոտ երեխաները խմբվել էին։ Նրանք ինձ

տեսան և իջան բլրակով։ Որպիսի՜ միամիտ պարզությամբ նրանք ինձ բարի ճանապարհ ասեցին։ Մի քանիսը ծաղիկներ էին բերել։ Հենց որ մեկը ինձ մեկնեց ծաղիկը, մյուսներն էլ նրա օրինակին հետևեցին։

Աղջիկներից ոմանք լաց եղան։ Նրանք և՛ ժպտում էին, և՛ ժպիտի հետ սրբում էին արցունքը, որ ծորում էր աղբյուրի պես։ Լաց էր լինում և Խոնարհի քույրը։

Մեկը թե՝ «Ուսուցիչ, մեզ չմոռանաս»։ Լավ հիշում եմ Ծուտիկին, որը միշտ դպրոց էր գալիս հոր մեծ փափախը գլխին և երկար, հնամաշ տրեխներով։ Որբ էր Ծուտիկը, լռիկ-մնջիկ մի երեխա, որին բոլորը սիրում էին։ Խմբի մեջ Ծուտիկն էլ էր։ Մյուսների պես նա մոտեցավ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, քիչ մնաց ընկներ։ Ծուտիկը փաթաթվեց ծնկներիս։ Մեծ փափախի տակից տեսա նրա խելոք աչքերը։ Եվ այնքան խեղճություն կար Ծուտիկի աչքերում։

Ձիապանի կանչը ինձ հիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու։ Մանուկները մի անգամ էլ ձեռք տվին։ Կռացա և համբուրեցի Ծուտիկի ճակատը, ինչպես Օհան ապերը՝ իմ ճակատը։ Իմ աչքերում արցունք երևաց, արցունքի միջից մի անգամ էլ տեսա այգու դռնակը, դպրոցի ներկած թիթեղները։ Հետո ծառերը ամեն ինչ ծածկեցին։

Քայլում էի ձիապանի հետևից։ Մինչև զառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով։ Կանաչ արտերում քաղհան էին անում։ Մի քիչ վերև, սարալանջին, եզները դանդաղ քաշում էին արորը և հանգստացած հողը շրջում ակոսի մեջ։ Արտերում կանաչի մեջ երևում էին կարմիր-կապույտ ծաղիկներ։ Բացվում էր պուտը։

Սպիտակ քարի մոտ, գոգաձև ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մեջ տեսա Խոնարհին։ Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա։ Ի՞նչ էր ասում. նրա համար դժվա՞ր էր, որ ես հեռանում եմ Ձորագյուղից, չէ՞ որ ինձ ոչինչ, ոչինչ

չէր ասել այդ խոնարհ աղջիկը։ Հագին նույն գորշ զգեստն էր, ինչպես առաջին անգամ անտառում։ Արտի մեջ կանգնել էր, ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մոլախոտի մի կապ։

Ոչինչ չասացի, հեռացա։ Արահետով բարձրանալիս միշտ հետ էի նայում։ Կռացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման։ Եվ այդ երամից մեկը, գորշ շորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետը և միայնակ անցվորին։ Ձորի գլխին կանգնեցի և, երբ աղջիկը մի անգամ էլ բարձրացավ, նայեց իմ կողմը, ձեռքով արի։ Խոնարհն իսկույն կռացավ արտի վրա։ Ես արագացրի քայլերս ձիապանին հասնելու։

Երբ ընկերս լռեց, ինձ թվաց, թե գետակը նույն հանգով է պատմում, խոսում է նույն կերպ, ինչպես նա, որ մեջքին ընկած, փակ աչքերը երկնքին, անգիր ասում էր մի ծանոթ պատմություն, գրված Օհան ապոր հին գրքերում։

Վեր կացա, թուլացրի ձիու թամբի կապերը։ Ձիերը հագեցել էին կանաչից և մեզ նման մեկնվել էին գարնան արևի տակ։

— Հետո տասներկու տարի... Եվ ի՜նչ տարիներ։ Կռիվ, քաղց, երկրներ ու քաղաքներ, հազարավոր դեմքեր, տարբեր ցեղից, անցքեր՝ մեկը քաղցր, մյուսը դառն հիշողության հետ կապված... Եվ նրանց մեջ խոնարհի դեմքը, ցանկապատի փշերի արանքից երկու մանրիկ աչքեր, որպես սև ձիթապտուղ և բարա՜կ, կարմիր շրթունքներ։

Հանկարծ ընկերս կողքին դարձավ, վիզը ձգեց իմ կողմը։ Նրա աչքերն ավելի մեծացան։

— Գիտե՞ս, ես խոնարհին տեսա։

— Ե՞րբ։

— Երեկ։ Վերին գյուղում։ Դու քնել էիր, դպրոցի բակում հավաքվել էին գյուղացիները։ Խոսում էին հողի մա-

սին, գանգատվում էին, որ հողը առաջվա բերքը չի տալիս։ Այս տարվա ժանտախտից էին խոսում։ Շատ կովեր են սատկել, ոմանք ցել անելու եզ չունեն։ Հետո ինձ մոտեցավ մի կին, ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ, ոտքերի կաշին ճաքճքած։ Կնոջ փեշերից կախվել էին երեք կիսամերկ երեխա։ Նրանք մերթ ինձ էին նայում, մերթ մորը։

Կինն արցունքն աչքերին չորս փութ ցորեն էր խնդրում, մինչև հունձը։

— Հետո մի ճար կլինի,— ասաց։

Ամուսինն անցյալ տարի էր մեռել։ Ժանտախտից սատկել էր նրանց միակ կովը։ Իսկ տանն ուրիշ աշխատող չկար։

Ես ճանաչեցի խոնարհին... Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլի։ Ես ճանաչեցի խոնարհին։ Բայց չգիտեմ նա ինձ ճանաչե՞ց, թե ոչ։

...Անխոս նստեցինք ձիերը և անցանք գետակը։ Արևն արդեն դեպի մայրամուտ էր կախվել։

## ԼԱՌ-ՄԱՐԳԱՐ

### 1

Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր։ Երբ բոբիկ, արևից խանձված ոտքերով քայլում էր առվի եզերքով, բահով ճումբը առվից դեն գցում, որ ջրի հոսանքը սահուն լինի,— Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե ջրի պապակ արտերն ու ծարավ այգիները տապ արած, իրեն են սպասում։

Առվով ջուրը կապելիս նա ջրի հետ էլ գնում էր, մինչև ջուրը այգուն հասներ։ Արևից չորացած հողը, տեղ-տեղ ճաքճքած, ագահությամբ ծծում էր ջուրը, ճեղքերից օդի պղպջակներ էին դուրս գալիս, ձայն հանում, ասես հողը հազար պռոշ ուներ և անհագ ծարավ։

Ջուրը ծառերի տակ կապելուց հետո Լառ-Մարգարը պառկում էր ծառի շվաքի տակ, երկար բահը կողքին, աչքերը կիսախուփ անում, ննջում, մինչև ջուրը հասներ։ Հետո վեր էր կենում, ջուրն ուրիշ առվով անում, էլի ջրի հետ գնում։

Ամռան շոգին, երբ արևն այնքան մոտ է, ջերմությունը շատ, երբ շները շոգից տան ստվերում պառկում են, լեզուն հանած թնչին տալիս,— առվի եզերքին միշտ էլ կարելի է տեսնել Լառ-Մարգարին, ոտքերը մինչև ծնկները բաց, գլխին մի սպիտակ շոր, բահն ուսին։

— Լառ-Մարգարը լագլագի պես ջրերից ձեռք չի քա-

ջում,— ասում են գյուղացիք։ Եվ ճիշտ որ, Լառ-Մարգարը մի քիչ նման է արագիլին, ոտքերը բարակ ու երկար, ասես ոտքի վրա երկու ծունկ կա։

Լայն առվի վրայից շատերը չէին կարողանում անցնել, իսկ Լառ-Մարգարը մի մեծ քայլ էր անում և առվի մյուս ափին կանգնում։ Արևից խանձված դեմքի վրա սրածայր քիթը երկար կտուցի էր համեմատ, եթե սպիտակ բեղերը չլինեին։

Գյուղի ջրվորն է։ Գիշեր-ցերեկ առուների վրա է լինում, հսկում առուներին, ջուրը բաժանում, առուների մաքրության նայում։

— Լառ-Մարգար, արտս խանձվեց, ջուր հասցրու,— գանգատվում էին երբեմն։

— Կեցիր դհա, կրակ չեղավ, սրադ ուրբաթ է,— ասում է Լառ-Մարգարը։

Լառ-Մարգարը տեղացի չէ։ Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի է զարկել, վերջը ալիքը յափու է տվել և Լառ-Մարգարին իր թոռան հետ գցել այդ գյուղը։

Անցյալ գարունքին էր այդ։ Գյուղը նրան ջրվոր է վարձել։

— Ղարիբ մարդ է, ազգ ու բարեկամ չունի, ջուրը արդար բաժին կանի։

Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քաշած, բահը ուսին անցել առվով, գյուղում մի հանաքչի ասել էր.

— Տեսեք հա՜, գաղթական բիձեն լառի լագլագ լինի կասես։

Գյուղը նորեկին ավելի անուն էր դրել՝ Լառ-Մարգար։ Քչերն էին փորձում ջրվորին խաբել, հերթից դուրս ջուր գողանալ։ Վայ թե իմանար Լառ-Մարգարը. կթոնթորար, կկանչեր, բահը գետնով կտար։

— Ծառդ պտուղ չի տար, յավրիս, գողության մի վարժեցուր։

Լառ-Մարգարի համոզումն էր այդ։ Եվ երբ բարկանար, այդ խոսքը կասեր։ Իսկ եթե խոսքին կասկածող էր լինում, ավելացնում էր․

— Էս հասակս քաշեր, նո՞ր պիտի սուտ խոսիմ…

Այդ ասելիս Լառ-Մարգարը հանկարծ խեղճանում էր, ձայնը երերում էր։ Թողնում էր խոսակցին, բահն առնում և առվի հետ գնում, թեկուզ գնալն էլ միտք չունենար։

Հեռու չէր գնում։ Նստում էր առվի մոտ, նայում ջրի հանդարտ հոսանքին, չոր ծղոտներին, որոնք գալիս էին հեռուներից և ջրի հետ գնում։ Նայում էր առվի եզերքին բուսած կանաչին, և մտքերը նորից հանդարտվում էին։

## 2

Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, լուսնյակ գիշերներին, երբ բարդու վրա իր բնի մեջ հանգստանում է արագիլը, որ լուսաբացին լառ-լառ թևերը փռած իջնի ճահճուտի վրա,— Լառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր։

Ջրտուքի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա արծաթ փայլով պսպղում էին սերկևլու տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խշխշում։ Ամայի արտերի միջով անցնում էր Լառ-Մարգարը, ջուր տալիս ծարավ հասկերին։

Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տրորի թաց հողը, տեսնի՝ խո՞րն է ծծել ջուրը, Լառ-Մարգարը ջուրը վարար չի՞ կապել։

Լուսաբացին հալվում էին աստղերը ձյունի փնդերի պես, շառագունում էր արևելքը, արևի առաջին շողերը խաղում էին ամպերի հետ, ասես մի անտես ձեռք բյուր շողերով ամպի սպիտակ քուլաների վրա հազարավոր նախշեր էր նկարում, որ մի քիչ հետո ավրի նույն շողերով, մի ուրիշը նկարի, մինչև արևը ծագի։

Արևի առաջին շողերի հետ գոլորշի էր բարձրանում, տերևների վրայից, ծաղիկների գունավոր թերթերից, արտերից ու այգիներից գիշերվա խոնավությունն էր գոլորշիանում։ Գլխահակ ծաղիկները բարձրացնում էին իրենց գլուխը, նայում արևին, որ կեսօրին, երբ արևը թեժանա, նորից խոնարհեն։

Լառ-Մարգարը գիշերվա ցրտուքից բեզարած պառկում էր բարդիների տակ, ոտ ու ձեռը փռում, լայն ու հանգիստ։ Բարդիների մոտ հերվա չորացած գերաններ կային, փչակով գերաններ։

Եվ երբ Լառ-Մարգարը պառկում է գերանների մոտ, բարդիների տակ, այնպես է թվում, թե ինքն էլ փչակով մի գերան է, չորացած բարդի։

Լինում էին օրեր, երբ Լառ-Մարգարը ջուրը տալիս էր հերթի համաձայն, ինքը չէր ջրում։

— Քեֆսըզ եմ,— կասեր և կպատվիրեր, որ հերթով ջրեն մինչև ինքը գար։

Առվի ափն ի վեր քայլում էր, մինչև մոտակա ձորակը, ուր ծիրանիներ կային։ Պառկում էր ծիրանու տակ կամ քնում ժայռի շվաքում, կամ էլ մեջքի վրա դառնում, ոտքերը ձգում, հսկա մկրատի պես։ Կարծես մեկը խաչել էր ծիրանու տակ։

Ծառի ճղների արանքից վեր էր նայում Լառ-Մարգարը երկնի կապույտին։ Մի ճերմակ ամպ, թափանցիկ ու անձև, հանդարտ լողում էր լազուրի մեջ։ Լառ-Մարգարին թվում էր, թե երկինքը մի հսկա տաշտ է, մեջը լի լեղակած ջուր և ամպը՝ լվացքի մոռացված կտոր տաշտի ջրի մեջ։ Լառ-Մարգարը նայում էր ամպի կտորին. ինչքա՜ն հանդարտ էր լողում, ձևը փոխում, մերթ պռունկը ձգում, մերթ ետ քաշում։

Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի ետև պահված իրենց գյուղը կտեսներ, կտուրները եղեգով ծածկած, գյուղի մոտ բարդիները, իր ծիրանուտը, տան դռնակը, որի մոտ կարասի կտոր կար, մեջը ջուր՝ հավերի համար։

Ամեն առավոտ կանուխ Լառ-Մարգարի կինը հավաբնի դռնակը բաց էր անում, հավերը կղկղալով վազում էին նրա ետևից մինչև կարասի կտորը, ուր պառավը հավերին կուտ էր տալիս։

Մի հավք թռչում էր, օդի ոլորտում պտույտներ անում։ Եվ երբ Լառ-Մարգարը նայում էր ծիրանի ճղների արանքից, նրա ծերացած աչքերին այնպես էր թվում, թե հավքը լազուրի վրա միայնակ սահող ամպի կտորի հետ է խաղում։

...Կտավատը կապույտ ծաղիկներն էր բացել, ծիրանն արդեն դեղնել էր։ Վար էր անում, արորը փափուկ հողում ամռան ցելի ակոսներ էր ծրում։ Երբ մի անգամ էլ դարձավ, աչքն ընկավ արահետին։ Մասրենու մոտ պառավը կանգնել, ձեռքով էր անում։

— Գեղը խռովտուք կա, մարդ,—կանչում էր պառավը։

Եզներն արձակեց, արորը հողի մեջ խրած թողեց։ Վարից բեզարած եզները երեկոյան տան իրերով բարձած սայլն էին քաշում դեպի անծանոթ հեռուները։

Տեղահանության օրերն էին։

Սայլը ճռնչում էր օր ու գիշեր, փոշի կար ճանապարհին, շիվար դեմքեր։ Գյուղերը խառնվել էին իրար, ճանապարհին նոր խմբեր էին միանում քարվանին, նորեկներից հարցնում էին ետ մնացած հարազատների մասին, հարցնում էին գնալիք ճանապարհի մասին։ Եվ ոչ ոք հաստատ ոչինչ չէր ասում, մարդիկ կասկածից ավելի էին շվարում։

— Մա՛րդ, թոնիրին քարը մոռցա վրա դնել,— ասաց պառավը սայլի վրայից։

Լառ-Մարգարը որդու մասին էր մտածում ամեն անգամ, երբ սայլին նայելիս տեսնում էր կնոջը՝ թոռանը գրկած։

— Ամուր նստե՛, նայե, Թորոսիկը չմրսե...

Թորոսիկը մերթ քնում էր տատի գրկում, մերթ զարթնում, զարմացած հարցնում.

*— Պապե՛, դ՞ա կերթանք... Հո՛, ա՛ս ինչ երկեն գացինք, պապե...*

*Եվ երբ պապից պատասխան չէր ստանում, Թորոսիկը խռովկան էր դառնում, շրթունքը կախում, նայում սայլի վրայից գլխիվայր կախած հավերին։*

*Սայլը ճռնչաց շաբաթներ, փոշին ճամփի վրա անպակաս էր գիշեր-ցերեկ։ Ուրիշ ջրեր էին, ուրիշ երկրներ։ Մարգարը ինչքան էլ խմում էր, ծարավը չէր հագենում։*

*Երբ շոմշ առան մի ամայի ավազուտում, ոչ սայլ կար, ոչ զույգ եզները։ Փոքրիկ կապոցներ էին մնացել, Թորոսիկի երեսն արևն այրել, մաշկահան էր արել։*

*Պառավի մազերի վրա ճամփի փոշին նստել էր, մազերը դեղնել, աղոտ գույն էին ստացել։ Մարգարը տեսավ, որ աղետը կնոջ դեմքին նոր ակոսներ է ծրել։*

*...Լառ-Մարգարը երբ «քեֆսըզ եմ» կասեր և ծիրանուտի տակ պառկած ցերեկվա շոգին ծիրանի ճղների արանքով կնայեր երկնքի կապույտին, ամպի սպիտակ քուլային, որ ճերմակ լաթի պես մեկ սուզվում էր, մեկ էլ պռունկները հանում, թռչուններին, որոնք բարձրում պտույտ էին անում և հազիվ երևում սև կետի չափ,—Լառ-Մարգարը մտաբերում էր հարավի ավազուտները, շարվեշար վրաններ, վրանների վրա գունավոր լաթեր, որ տարագիրները բերել էին հեռավոր գյուղերից։ Ավազուտի մեջ հատ ու կենտ ծառեր կային, որ Մարգարի աչքին մեծ ավելներ էին թվում՝ խրված ավազի մեջ։*

*— Քար պիլա չկա, մարդ, աս ո՞ւր բերին մեզ,— գանգատվում էր Մարգարի կինը, որ ամեն իրիկուն իր տան բանալիներին նայելիս ափսոսում էր հավերին, տանը թողած իրերը։*

*— Գիտնայի նե, հետս կառնեի,— ասում էր։*

*Մի անգամ Մարգարը փորձեց որդու մասին խոսել, բայց պառավը փղձկաց, հեծկլտոցը կոկորդը սեղմեց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և պինդ, շատ պինդ գրկեց Թորոսիկին։ Մարգարն էլ խոսք չասեց որդու մասին։*

Ձմեռն անցավ, բայց և ոչ ոք չնկատեց գարնան գալը։ Ավազուտների վրա կոշտ, փշոտ բույսեր կանաչեցին, հետո չորացան։ Նրանց հետ էլ անցավ հարավի կարճատև գարունը, ավազուտները նորից լերկացան, կեծացան հրավառ արևի տակ։

Մարդահավաք արին, վրանների աշխատող ձեռքերը հանեցին նոր շինվող ճամփի վրա բանելու։ Մարգարն էլ գնաց։ Աշխատում էին օրնիբուն, հեռուներից քար էին կրում, հող էին բերում։ Հազարավոր բահ ու բրիչ ամեն օր փորում էին, ճանապարհը սարքում։ Մյուսների հետ Մարգարն էլ էր աշխատում։ Ծանոթներ կային, շինականներ։ Խիճ էին պատրաստում, և երբ արևը պահվում էր շեղջակույտերի ետև, ծառերը երկար ստվերներ էին ձգում, վերադառնում էին վրանները, որ արևածագին նորից գնան։

Մի իրիկուն էլ պառավն իրեն վատ զգաց, գանգատվեց սրտի ծակոցից։ Մարգարը ելավ վրանի առաջ քար փնտրելու, տաքացնելու, պառավի կրծքին դնելու։ Իրենց գյուղում այդպես էին անում։ Փնտրեց, ձեռնունայն ներս մտավ։

— Քար պիլա չկա, մա՛րդ, աս ո՞ւր եկանք,— տնքաց պառավը։ Էլ չխոսեց։

Եթե այդ ժամանակ այգիներից մի մարդ ձայն էր տալիս, թե՝

— Լառ-Մարգա՛ր, ջուրը բարակեց,—

Լառ-Մարգարը հանկարծ վեր էր թռնում տեղից, բահն առնում և դեպի ջրի բանդը գնում։ Եվ ոչ ոք չգիտեր, որ Լառ-Մարգարը առվի բանդը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր, գյուղից հազարավոր վերստեր հարավ։

Մարգարն էլի խիճ էր ջարդում, պառավն աչքի առաջին։ Ի՞նչ լավ կլիներ, եթե ճամփի քարերից գիշերով գողանար, պառավի գերեզմանի վրա դներ։ Ավազուտը կբացվեր, շնագայլերը կքրքրեին պառավին։ Քար պիտի դնել, ծանր քար՝ ավազի շեղջակույտի վրա։

Իր կյանքում Մարգարը երկու անգամ է ծեծ կերել.

մեկ երբ տղա էր, շան պոչից ցախավել էր կապել, մեկ էլ պառավի գերեզմանին քար դնելուց հետո։

Էլի արևի տակ խինճ էր կտրում, երբ երկու հոգի մոտեցան իրեն։

— Այս ծերո՞ւկը,— հարցրեց մեկը, և երբ մյուսը գլխով նշան արեց, զինվորականի՝ կռունկը մեխած սապոգը կրծքին զարկեց, կրծքի տախտակը դնգաց պարապ կարասի պես։ Քթից արյուն եկավ, և երբ երկրորդ անգամ սապոգով կողքին խփեցին, խինճը ճղեց Մարգարի բութ մատը։

Թահով առուն մաքրելիս, հիմա էլ, երբ Մարգարի աչքին է ընկնում բութ մատի սպին, մատներն ավելի պինդ են սեղմում թահի կոթը, բայց զայրույթն անցնում է, երբ միտն է բերում շեղջակույտի վրա դրած քարը։

—Կմնա՞ դեռ, քամին չմաշե՞ց, չգողցա՞ն։— Շատ կտար Լառ-Մարգարը, թե հարցին պատասխան տվող լիներ։

Երբ վրանները հավաքեցին, և վրանների տակ ծվարած ժողովուրդը ուրիշ երկրների ճամփան բռնեց, Մարգարն էլ շալակեց մնացած կապոցները, Թորոսիկի ձեռքը բռնեց։

Մարգարի շալակին, կնոջ աղլուխի մեջ ծիրանի կորիզներ կային։ Գյուղի ծիրանուտում մի ծիրանի կար, պտուղը մեծ ու համեղ։ Պառավն այդ ծիրանի կորիզներն էր հավաքել, պահել, որ գալ տարի տնկի տան առաջ։ Ծիրանի կորիզներն էլ պառավի հետ ճռնչան սայլի վրա շաբաթներ էին լուսացրել մինչև հեռավոր ավազուտները։

Երբ վրանները հավաքեցին և հեռացան, Մարգարը երկու միտք ուներ՝ Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում։

## 3

Տարիներ անցան։ Մի տեղ չգտավ Մարգարը, որ շունչ առներ։ Հեղեղի բերանն ընկած մրջյունի պես վեր ու

*վար էր անում, մագլցում մի ծղոտի վրա, բայց հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ։*

*Մարգարն աշխատում էր, գրկում իրեն և բերանի պատառը պահում Թորոսիկի համար, որ պապի թևի տակ մեծանում էր։ Մի օր էլ Թորոսիկը շոգենավի տախտակամածի վրա ելավ։*

*Պապն էլ էր, ուրիշ հարևաններ էլ, որոնք Կավալայի մոտերքն էին ապրում, վրանների տակ, պատմում անցած-գնացած առասպել-օրերից, ցերեկով աշխատում ագարակներում, նավահանգստում, քաղաքում։*

*Մարգարն ուրախ էր, երիտասարդացել էր։ Եվ երբ Թորոսիկը հարցրեց, թե՝*

*— Պապե, նավը մեզ ո՞ւր պիտի տանի,—*

*Մարգարը նայեց թոռան կայտառ աչքերին, աչքերի մեջ տեսավ անհետ կորած որդու պատկերը և զսպելով իրեն՝ ասաց.*

*— Մեր երկիր, յավրիս...*

*Այդ երկրի համար Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չուներ ընծա տանելու։*

*Նավը օրորալով ալիքներն էր ճեղքում իր սուր քթով, ալիքները հեռանում էին մի պահ, հետո մոտենում, զարկում նավին, փշրվում կոհակների։*

*Մարգարը տախտակամածից նայեց ծովեզրի լեռնաշղթային, որի սրածայր գագաթներին ամպը նազով էր նստել, նայեց և իր հին տան բանալիները կամացուկ հանեց գրպանից, տորբեց բռի մեջ, նետեց ծովը։ Փոքրիկ օղակներ ելան նետած տեղից, օղակները լայնացան, հալվեցին, մի մեծ ալիք եկավ, ծածկեց բանալու ընկած տեղը։ Բանալիներն արդեն սլվել, ընկել էին անդունդ։*

*Լառ-Մարգարը ոչ ոքի չասեց, թե ինչու արցունքներ երևացին աչքերին, երբ առաջին անգամ գնացքի պատուհանից Արարատի ձյունոտ գագաթը տեսավ։ Այդ երկրում պիտի ծլեին ծիրանի կորիզները։*

*...Եվ եթե մեկը հերթից դուրս ջուր էր գողանում, զայրանում էր Լառ-Մարգարը, խրատում.*

— Ծառդ պտուղ չի տա, յավրիս…

Եթե իր խոսքին կասկածող էր լինում, և Լառ-Մարգարն ասում էր, թե՝

— Էս հասակս քաշեր, նո՞ր պիտի սուտ խոսիմ,— իհարկե, գյուղում շատ քչերն էին իմանում, թե ինչ դառնությամբ է Լառ-Մարգարը այդ հասակը քաշել։

Իսկ եթե մեկին մի լավություն էր ուզում անել, Լառ-Մարգարը ժպտալով ասում էր.

— Կեցիր, ծիրաններս բոլորվնան, քեզի մեկ հատ պիտի տամ։ Նայե՛, ինտոր համեղ են։ Աստեղվանքը հիչ չկա իմինիս պես ծիրանի։

Լառ-Մարգարի փոքրիկ, ջրակալած աչքերում փայլատակում էր մի մեծ հրճվանք, մանավանդ, երբ գարնան ջրտուքին, առվի բանդը սարքելու համար դպրոցի մոտովն էր անցնում և ցեխապատի ճեղքից նայում, թե ինչպես դպրոցի բակում վազվզում են երեխաները, խաղում, կանչում, և երեխաների հետ խաղում է Թորոսիկը։

Իսկ դպրոցից մի քիչ հեռու, իրենց տան առաջ, ծիրանու տունկերն են ձգվում արևի տակ…

# ՍԱԲՈՒ

Նրանք անտառում են ապրում, և որովհետև անհիշելի ժամանակից ի վեր գյուղը խիտ անտառների մեջ է, ճանապարհներից զուրկ,— Սաբու գյուղի երեխան այնպես է կարծում, թե աշխարհն անվերջ անտառ է, որտեղ մարդը բացատներում ցանում է կորեկ, իսկ արջերը հավաքում են ընկած կաղինները, ծառերը ճղակոտոր անում և հագեցած պառկում կորեկի արտում։

Անտառն իր կնիքն է դրել Սաբուի վրա։ Ոչ միայն տփսեններն են անտառի փայտից, արորն ու չերեփը, այլև անտառից է նրանց ուտելիքի մեծ մասը՝ վայրի տանձն ու սալորը, զանազան ընդեղեն և արմտիք, որ նույնքան համեղ են նաև անտառի խորքերում ապրող վարազների համար։

Ոչ մի տեղ արջին այնքան լավ չգիտեն, որքան Սաբու գյուղում։ Երեխան էլ կասի, թե արահետի թարմ հետքը արջինն է, թե գայլ է անցել և կամ պախրան է իջել ձորը՝ ջրի։ Նրանց պատմությունների մեծ մասը վայրի գազանների մասին է։

Ահա առասպել մի հերոս, անունը Գեուշ, որի գերեզմանի սուր քարը հիմա էլ սրբատեղ է Սաբու գյուղում։ Ծերունիները երիտասարդ որսորդներին ավանդում են Գեուշի պողպատե թրի մասին, որի մի հարվածով նա կիսում էր արջի գլուխը։ Մի այլ հերոս, որի վրա հարձակվել են երեք արջ, կոխ է բռնել մարդը նրանց հետ, մեկին

սպանել, ապա բարձրացել ծառը, ոտքի թաթը թողնելով գազանի երախում։

Շատ տներում պատերից կախ արջի մորթիներ կան, դռան ճակատին մեխել են պախրայի գլուխը, ճյուղավոր եղջյուրներով, գանգի խոռոչում՝ խոտ, աչքերի փոսում գունավոր փալաս։ Բաց բերանից չոր խոտի ծղոտներ են երևում, ասես պախրան գիշեր-ցերեկ խոտ է ուտում։ Ո՞վ գիտե, գուցե վերջին ժամուը դեռ մնացել է ատամների արանքում, երբ Սաբուի որսորդը ծառի ետևից պախրայի վրա կրակեց կայծքարով հրացանը։

Կա մի հին ավանդ Սաբու գյուղում։ Մթնած այդ աշխարհում հին առասպելների հետ հավասար մնացել է այդ ավանդը։ Եվ ինչպես անտառի գազանը մնացել է անսաղարտ, Սաբու գյուղում այդ հնօրյա հավատքը մնացել է, ինչպես անտառի կուսական թավուտը։

Մագաղաթյա մի ձեռագիր խոսում է վաղեմի արևորդիների մասին, որոնք տեղավորված էին Արաքսի ձախ ափի լեռնաշխարհի վրա։ Եվ աշխարհն այդ կոչվում էր Արևիք։ Բարձր չինարներ կային արևորդիների աշխարհում, և ամեն առավոտ արևածագին չինարների տակ արևին ծունր էին դնում։ Գուցե և կրակապաշտ Իրանից մի կայծ թռել է Արաքսի այս ափը և դարձել ուրույն հերձված։

Այդ աշխարհում է Սաբուն։ Այնտեղ էլ կան բարձր չինարներ, սակայն արևին ծունր չեն դնում, գուցե նրա համար, որ խավարաձոր անտառներում քիչ են արևոտ օրերը։ Հիմա էլ չինարները սուրբ են, և չար աչքի դեմ նրանց բներին կապում են գունավոր փալասներ։

Սաբու գյուղում թուրքեր են։ Որովհետև ավանդավոր են եղել, հնում հալածել են նրանց և ենթարկել ծաղրի։ Սաբուն ավելի է քաշվել իր պատյանի մեջ և պինդ փակչել հին հավատքին։ Տարիներ շարունակ թավուտները մնացել են սաղարթախիտ, արևի շողը չի թափանցել խորքի ստվերուտը, փտել են ընկած գերանները, և հողի հետ բորբոսնել է գերան ու տերև։

Սարուն մազ չի խուզում. թեղ ու միրուք կարելը համարում է մահացու մեղք։ Դրա համար էլ մարդիկ երկարամորուս են, բրդոտ։ Մազ է պատել այտոսկրին, մազոտ են ականջի խոռոչները։ Ճակատի մազերը կախվում են մինչև ունքերը, և ճակատը չի երևում։ Նրանք ծիծեռնակի թևի նման սև միրուքներ ունեն։

Սարուն մռայլ է։ Անտառն է վարժեցրել ունքերը կախ և կացնի կոթից պինդ բռնած լուռ ման գալ ծառերի տակ։ Կացնով կարելի է ոչ միայն գերան կտրել, այլև ջարդել արջի գանգը առասպել Գեուշի պես։

Խուսափում են ուրիշ գյուղից աղջիկ ուզել։ Շատ հազվադեպ են ուրիշները համաձայնվում աղջիկ տալ Սարուին, որովհետև աղանդը գաղտնի ծեսեր ունի, որոնց մասին հարևան գյուղերը հազար ու մի պատմություն են պատմում։ Եվ քանի որ ծեսը կատարում են այն ժամանակ, երբ գյուղում օտար մարդ չկա, դրա համար էլ ճշգրիտ ինչ շատ քչերը գիտեն, թեև ոմանք պնդում են, որ իրենք այդ ծեսին ականատես են եղել։

Սկզբում Սարու գյուղում ընդունված կարգ է եղել, որ մի կին մի քանի մարդու հետ ապրի, բայց Իրանից եկել է աղանդի մեծը և հայտարարել, որ մարգարեն այլևս նման ծես չի ընդունում։ Այդ վաղուց է եղել, թեև հիմա էլ շատերը ասում են, որ Սարու գյուղում այդ ծեսը դեռ մնում է մոխրի տակ անթեղած կրակի նման։

Կա մի գիշեր, երբ ոչ լուսնյակ է երևում, ոչ աստղեր։ Ամպ է իջնում անտառների վրա, ամպը ձորակներով սողում է մինչև գյուղը, իբրև ծուխ փաթաթում տուն ու մարագ։ Այդ գիշեր ամպի հետ գազաններն անցնում են գյուղի փողոցներով։ Արջը թաթը կոխում է կավով ծեփած քթոցի մեջ, լիզում մեղրը, գայլը լիզում է գառան տաք արյունը։ Շներն խզուր են կաղկանձում, թաքնվելով դեզերի մեջ։

Այդ գիշեր Սարու գյուղի երեխաները գլուխները կոխում են բարձի տակ, ոմանք լաց են լինում։ Եթե լույս

լինեը, Սաբու գյուղի աղջիկներին ու կանանց կարելի էր տեսնել աղոթատան կտուրի վրա իրար մոտ կանգնած, որպես գայլից խրտնած հոտ։

Ներսում խավարի մեջ մի քանի հոգի ողբ ասող կանանց նման աղիողորմ հեծկլտում են, ասում աղոթքի արաբերեն բառերը։ Ամեն մի երգից հետո ներսը մութի մեջ ձգվում են հարյուրավոր բրդոտ ձեռքեր դեպի երդիկը, վերից կանայք հերթով ներքև են կախում իրենց գունավոր գոտիները։ Աղոթատան բազմությունից մեկը խլում է այդ գոտին և ապա, երբ վերջին աղջիկն ամոթխած արձակում է բարակ գոտին, աղոթքից հետո բազմությունը խուժում է դեպի անտառ, քարշ տալով կանանց և աղջիկներին, որոնց գերի են վարում հենց այդ գոտիներով։

Այդ գիշեր ոչ լուսին կա, ոչ աստղալույս...

Հին աղոթատանը մինչև լուսաբացի վերադարձը հեծկլտում և աղոթում են պառավները։

—

Արաքսի մյուս ափին մի գիշեր երևաց ոտքից գլուխ կանաչ հագած սեյիդը, հին աղանդի մարգարեն, որ երբեմն հեռավոր Իրանից ծպտյալ անցնում էր սահմանը և հասնում մինչև Սաբու։

Սեյիդն անցավ սահմանը, և նրա մետաքս զգեստի փեշերին, երբ ձին ճեղքում էր գետը, Արաքսի ջուրը ցողեց պղտոր կաթիլներ։

Այդ գիշեր Սաբու գյուղում մանկամարդ մի աղջիկ տորքի առաջ գորգ էր գործում։ Բարակ ծամեր ուներ աղջիկը, ծամերի ծայրից կախ էին մետաղյա բոժոժներ։ Աղջիկը գլուխը աջ ու ձախ էր դարձնում, դեղնած մատներով բռնում գունավոր թելերը, թելը թելին հագցնում, ապա ծանր սանրով կոփում հանգույցները։ Դարսվում էին իրար վրա հանգույցները, ծնվում էին նախշեր, նաև ճյուղեր, տերևներ, տերևների մեջ երկու թև, որ աղջկան թվում էր երգող թռչուն։ Ամեն անգամ, երբ աղջիկը սանրը զարկում

*էր հյուսածին, շարժվում էին գույնզգույն կծիկները, զրնգում էին և ծամերի բոժոժները։*

*Երբ ձիավորներն անցան փողոցով, շները հաչեցին կանաչ աբայի վրա։ Աղջիկը գլուխը թեքեց, սեյիդը ճրագի լույսով տեսավ և գորգը, և տորքի առաջ նստած աղջկան։ Նրան թվաց, թե աղջիկն ինքը մի գունավոր նախշ է գորգի վրա։*

*Այդ տարին էլ եկավ մթին գիշերը։ Եվ երբ խավար աղոթատան մեջ դադարեց առաջին երգը, կանաչ աբայի երկու թևեր ձգվեցին վեր, դեպի երդիկ։ Վերևից կանայք հրեցին մանկամարդ աղջկան, և մութի մեջ մի քանի կանացի ձեռքեր արձակեցին աղջկա անմեղ գոտին և նրա բարակ մատները երդիկով կախեցին գոտին։ Ամոթխած զրնգացին ծամերի բոժոժները։ Այդ գիշեր մի գայլ պիտի լիզեր գառան անբիծ արյունը։ Եվ երբ անտառում աղջիկը ահից ճչաց, բնի մեջ քնած մի միրհավ զարթնեց և փոխեց տեղը։*

*Առավոտյան սեյիդը նոր պատգամներ կարդաց։ Նրա ամեն մի խոսքը սրբազան օրենք էր Սաբուի համար։ Եվ այն, ինչ հայտնեց նա աղջկա ծնողներին, ընդունվեց իբրև մարգարեի խոսք։*

*Հարկավոր էր գործն ավարտել, որովհետև գորգը պիտի կախվեր սեյիդի տան պատից, իսկ աղջիկը պիտի քաղցրացներ նրա դառն ծերությունը։ Գորգի թերի մնացած նախշերը խառնիխուռն դուրս եկան։ Գույները տեղ-տեղ վառ էին, ասես հրդեհվում էին գույները, տեղ-տեղ ավերված, գորշ։ Աղջկա մատները դողում էին, երբ բռնում էր գունավոր կծիկները։*

*Շները մի անգամ էլ հաչեցին, երբ ձիերը գլուխները թեքեցին դեպի հարավ։ Մի ձիու վրա փռված էր գորգը, վրան՝ աղջիկը։ Աղջիկը վերջին անգամ նայեց պարապ տորքին, մորը, տեսավ հայրենի անտառը, և գորգի նախշերի վրա արցունք կաթեց։*

* * *

Հիմա Արաքսը կաթիլներ չի ցայտում կանաչ աբայի փեշերին։ Անտառների մեջ դեռ մնում է Սաբուն։ Սև միրուքով մարդիկ գերաններ են կացնահատում և ժողովում վայրի տանձ։

Մյուս ափին Իրանի լերկ ապառաժներն են, արևից խանձված տափարակները։ Գյուղերը կանաչ օազների պես են, ժայռերից կախված պարտեզներ, որոնց միջով առուները հոսում են և ավազ խառնում Արաքսի պղտոր ջրին։

Այն ափի գյուղում մի պառավ կին, երբ առվի ջրի մեջ լվանում է մաշված գորգը, ձեռքը ճակատին դրած, նա նայում է հեռու, ուր անտառների մեջ պահված է հայրենի Սաբուն։

Խոնացած գորգի նախշերը առվի ջրում հանկարծ պայծառանում են, և պառավին այնպես է թվում, թե ծամերի ծայրին հնչում են մանկության անուրախ բոժոժները։

# ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Արփենիկ Չարենցի հիշատակին

*Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը։ Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին։*

*Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները։ Ո՛չ մի երկաթյա դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին։*

*Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում։ Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և հղկում հունի կապույտ որձաքարը։ Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները։*

*Պարիսպների գլխին բուն են դրել ցինը և անգղը։ Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին։ Ապա բարձրանում է քարե արծիվը, կտուցը կեռ թուր, մագիլները՝*

*սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ։*

*Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն։ Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ։ Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին։ Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը հոնք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան։*

*Ներքևը, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ։ Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ։ Շոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառավ մի շինական հորանջում է տան սավերում, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածը։*

*Ե՜վ գյուղում, և՜ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են։ Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը՝ Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քարերն են և նույն քարե արծիվը։*

*Քանի՜ սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները փռել ցախերի վրա, եղեգնով պատել վրանները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր։*

* * *

*Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր։ Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են և չեն տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը։*

Երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, համարյա թե կռացել՝ հավասարակշիռ մնալու,— վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ, մելամաղձոտ ու հուսահատ, ինչպես ամայի ձորը, տխուր քարափը և հեռավոր գյուղը։

Բերդի գլխին նստած ամպը վարագույրի պես մեկ հետ էր քաշվում, երևում էին պարիսպները, մեկ ծածկում էր կատարը։ Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում։ Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ, և ավերից դարձող նրա համհարզները ճոճում էին նիզակները։ Ակնոցների արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս, և նա լսում էր հնօրյա ձիերի դոփյունը։ Ինչ դժվար էր նրա համար քարափը, որով քարայծի նման մագլցում էին երբեմնի տերերը։

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը։ Նա փնտրում էր հին ճանապարհը և չէր տեսնում վրանների առաջ, մոխրի մեջ խաղացող կիսամերկ երեխաներին, այծերին, որոնք զառմանքից վեր ու վար էին անում գլուխները։

Ցետրե գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնություններ չէր որոնում։ Նրա ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը։ Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը։

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ։

Երբ նրանք հասան վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա։ Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց կողմը։ Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաչելով

վազեցին ձիերի վրա։ Երրորդ ձիավորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել։ Շները հաչելով մինչև բերդի պարիսպները ուղեկից եղան ձիավորներին, հետո իրար հետ խաղալով վերադարձան։

Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ։ Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, ինչ-որ գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը։ Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում, քարի վրա, տեսավ փորագիր խոսքեր։

Երրորդ ձիավորը, որ ձիերի սանձերն արձակել ու պարսպի մոտ նստած ծխում էր, հնագետի կանչից վեր թռավ։ Նրան թվաց, թե օձը խայթեց ակնոցավոր մարդուն։

Ֆետրե գլխարկով մարդը նկատեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը։ Բերդի մուտքը նկարելիս՝ մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից մի անգղ կռնչյունով թռավ բնից, պտույտներ արեց բերդի գլխին։ Նրա ձայնին մյուսներն էլ հավաքվեցին։

Ձիերը, անգղների կռնչոցից վախեցած, խլշեցին ականջները, իրար մոտեցան։ Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը։ Աչքերն անգղների պտույտի հետ էին, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ։ Ի՞նչ ահեղ թափ կար նրանց պտույտում։ Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց և ընկավ քարի վրա։

Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ թաշկինակով, մահակին հենվելով բարձրացավ բերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին։ Մարդը տեսավ ակնոցավորին մի քար տեղահան անելիս։ Եվ երբ պահակին հարցրեց, թե

ովքե՞ր են եկվորները, ի՞նչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին կարասի մեջ թաղված են ոսկե գանձեր։

Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը։ Ու գնում էր ինքն իրեն խոսելով։ Ի՞նչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը։ Քանի անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը։ Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում։ Քանի՜ կով կառներ...

Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է։ Նա չուխան շպրտեց, չուխայի հետ էլ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց։

Բերդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակ, ծաղիկը ծիրանի գույն։ Հնագետը չէր տեսնում ոչ մանուշակ, ոչ խոտ։ Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ։

Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկա ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ։ Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը։

Ցերեկ գլխարկով մարդը երբ նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնագետին, տետրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում, քարե արծվի բունը, պարսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ։

* * *

Կեսօրից անց նրանք բերդից իջան։ Հնագետը մի անգամ էլ պտույտ արեց բերդի չորս կողմը, տետրում մի քան նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին։

Այս անգամ ամենից առաջ գնում էր երրորդ ձիավո-

րը։ Եթե հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, նկարիչը հիշում էր մանուշակները և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը,—երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներ էին, պանիր ու մածուն։

Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն արձակեց, սանձով կապեց ձիերի ոտքը ու ներս մտավ վրանի նեղլիկ դռնից։ Քաղցած ձիերն ագահությամբ մռութները կախեցին թարմ կանաչի վրա։

Վրանի մուտքի առաջ, օջախի կողքին, մի փոքրիկ տղա մոխրի մեջ սունկ էր խորովում։ Անծանոթ մարդկանց ներս գալը նրան զարմացրեց, չիմացավ սունկը թողնի՞ կրակի վրա, վազի մոր հետևից, թե՞ սունկն էլ հետը տանի։ Երբ վրանի մոտ նա լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ, խորոված մի սունկ հանեց մոխրից և դրեց օջախի քարին։

Մայրը ներս մտավ, գլխի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրա, մոտեցավ և վրանի անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրերին։

Երրորդ ձիավորը հնագետի պայուսակից կոնսերվ հանեց։

— Մենք սոված ենք, քույրիկ։ Թե մածուն ունես, տո՛ւր, համ էլ թեյ գցիր։ Շաքար ունենք...— ասավ նա։

Կինը մոտեցավ օջախին, տղայի սունկերը դեն դրեց, կռացավ ու փչեց մխացող աթարներին։ Նրա գլխի շորը հետ ընկավ, ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը։

Նրա հայացքը սևեռած մնաց մխացող օջախին, մոխրի մոտ չոքած կնոջը։ Ո՞րտեղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր, սպիտակ ճակատ և մուգ մանիշակագույն աչքեր։ Երբ կինը վեր կացավ, եռոտանի կասկարան բերեց օջախի վրա դնելու, հանեց ծխից սևացած թեյամանը, նկարիչը շատ մոտ տեսավ նրա աչքերը և մոխրի փոշին ունքերի վրա, մազերի վրա։

Ինչքան շատ ժամանակ էր անցել այն օրից։ Եվ մի՞թե

հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները։ Կաքավաբերդի կնոջ դեմքն արևը մի քիչ այրել էր։ Բայց աչքերի ձևը նույնն էր, ինչ որ մյուս կնոջ, որ դարձյալ բարակ մեջքով էր և բարձրահասակ։

Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս և արագ շարժումներով։ Ամեն անգամ, երբ նա կռանում էր, բարձրանում կամ բոբիկ ոտքերով քայլում էր խսիրի վրա, զրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմանե-րը, փոքրիկ զանգակների ձայն հանում։ Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև մերկ ներբանները։

Այն կինն էլ ուներ խշխշան շորեր, հագնում էր գորշ գույնի վերարկու, սև թավիշե գլխարկ, որի երկար քո-րոցը նարնջագույն գլուխ ուներ։ Հեռու էր, շատ հեռու։ Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հաս-նում է այն ծովին, որի ափին, ավազի վրա, մի օր նստել էին՝ կինը և նկարիչը։

Պահակը բաց արեց կոնսերվի երկրորդ տուփը։ Հնա-գետը սփռոցից ու պղնձե ամաններից գլուխը չէր բարձ-րացնում։ Տղան սունկը կերավ և աչքերը սևեռեց կոնսեր-վի փայլուն տուփին, սպասելով, որ դատարկեն։ Մարդը տեսավ նրա հայացքը և կոնսերվի տուփը մեկնեց տղային։

Տղան տուփը թափահարեց, վրանի առաջ պառկած շունը կուլ տվավ մսի կտորները և լիզեց քիմքերը։ Ապա դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մոտ, նրանց ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը, որ շատ նորություն էր այդ քարափների վրա։

Կինը նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին։ Նա խառնում էր կրակը, աթարներն իրար մոտ քաշում, և երբ ծուխն ամպի պես բարձրանում էր ու դուրս գալիս վրանի եղեգնյա պատերի արանքով, կինը, աչքերը մուխից պա-հելու համար ձեռքը բռնում էր ճակատին։

Ցետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները,

*թվում էր քրմուհի՝ հոտանու առաջ ծխի շարժումները գուշակող։*

*Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՛ քայլել, չի՛ նստել մխացող աթարի առաջ։ Առավոտյան ծովը բրոնզե հայելու պես տարուբեր էր լինում և լիզում ափերի կրաքարերը։ Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում։ Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճյուղը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու հետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները։ Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, և սիրտը ձուլվեց ծովի հետ։*

*Հետո ուրիշ օրեր եկան։ Այնքան պատահական եղավ ճամփաբաժանը և այնպես պարզ։ Մտքի մեջ մնացին մի զույգ մանիշակագույն աչքեր, գորշ գույնի վերարկու և հովանոցի ծայրը, որով կինը ավազի վրա խոստումներ էր գրում և ավերում։*

*Թեյամանի մեջ ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց։ Կինը կողովից հանեց պնակները և ծաղկավոր բաժակները շարեց սփռոցի վրա։ Երբ նա կռացավ սփռոցի վրա, թիկունքից ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վար։ Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ և սպիտակ պարանոց, որի բարակ մորթու տակ երևում էին կապույտ երակները։ Տղան դատարկ տուփը ձեռքին ներս վազեց։ Վրանի դռնից մի խումբ մանուկներ զարմանքով նայում էին խսիրի վրա նստած հյուրերին։ Որքան մեծ եղավ տղայի ուրախությունը, երբ նա ստացավ երկրորդ տուփը։ Այս անգամ նա դուրս չվազեց, այլ նստեց խսիրի վրա, մայրը նրա համար ևս թեյ լցրեց, իսկ ֆետրե գլխարկով մարդը շաքարի մի մեծ կտոր գցեց տղայի բաժակը։*

*Տղան զարմացավ, և երբ շաքարից պղպջակներ բարձրացան թեյի երեսը, նա մատը կոխեց բաժակի մեջ՝*

չաքարը բերանը տանելու։ Թեկուզ տաք թեյը վառեց մատը, բայց ծպուտ չհանեց։ Այնքան համեղ էր կիսահալ շաքարը։ Հնագետը քթի տակ ծիծաղեց, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից։ Կինը նորից ջուր լցրեց թեյամանի մեջ և ուրախ ժպտաց երեխայի չարաճճի արարքի վրա։

Ֆետրե գլխարկով մարդը տեսավ այդ ժպիտը, ինչքան ծանոթ էր... Երևի նույն դեմք ունեցող մարդիկ նույն կերպ են ժպտում։ Կնոջ վերին շրթունքը աննկատ դողդողաց, ժպիտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպիտից աչքերը փայլեցին։

Հանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի և քանդակների նկարներ, թերթեց և քարե արձվի բունը պարսպի գլխին ու սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին։ Ծանոթ էին դիմագծերը, միտքն այնքան էր աշխատել նրա վրա տարիներ առաջ։ Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը։

Միայն տղան տեսավ մոր նկարն սպիտակ թղթի վրա։ Նրան այնպես թվաց, թե ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ, ինչպես աղբյուրի վճիտ ջուրը։

Քիչ հետո ձիերը վրանի առաջ էին։ Երրորդ ձիավորը ձիերի գլխին հագցնում էր սանձերը, պնդացնում թամբի կաշվե կապերը։ Եվ երբ պայուսակը կապեց թամբին, մոտեցավ մնաս բարով ասելու օջախի մոտ նստած կնոջը։ Կինը տեղից վեր կացավ, գլխի շորն արագ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երրորդ ձիավորի մեկնած ձեռքը։ Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին։ Այս անգամ կինը ձեռքը կրծքին սեղմեց և խոնարհեց գլուխը։ Ֆետրե գլխարկով մարդը տղային տվեց արծաթ դրամ ու շոյեց նրա մազերը։

Ձիերն իջնում էին Կաքավաբերդի քարափով դեպի Թասուտա ձորը։ Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք

հոգի, որոնցից ամեն մեկը մտքի մեջ հյուսում էր իր նախշը։ Ճանապարհի երկու եզրին թուսել էին ալպիական մանուշակներ։ Ցետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր եռոտանին և այն բարակիրան կինը։

Ջիերի սմբակի տակից քարեր էին թռչում, քարերն աղմուկով գլորվում էին ձորը։ Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ, կիսավեր պարիսպներ, նրանց հիմքի մոտ ալպիական ծիրանագույն մանուշակներ...

* * *

Իրիկնացավ։

Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գոտկում՝ պողպատե փայլուն մանգաղը։ Բեզարած էր մարդը, ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ, և մեջքը ցավում էր։ Դրա համար էլ նա դանդաղ էր բարձրանում, մահակը դեմ տալիս քարին, երբեմն կանգնում շունչ առնելու։ Երբ կանգ էր առնում, նրա կորացած ծնկները դողում էին։

Հնձվորը ցերեկվա մարդն էր, որին երրորդ ձիավորը պատմել էր բերդի գանձերի մասին։ Իր արտից նա տեսավ ձիավորներին, և նրան թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակներում հենց այն գանձերն են, որ հարյուր տարիներ մնացել են քարի տակ, որի վրա ինքը շարունակ նստել է, երբ բերդի ավերակներում պահում էր այծ ու ոչխար։ Ա՞յդ միտքն էր նրան զայրացրել, թե հոգնությունը,— մարդը մռայլ էր, որպես իրիկնապահին անտառում որսի դուրս եկող սոված արջը։

Նա հասավ առաջին վրանին, ոտքով զարկեց շանը, որ պոչը շարժելով առաջ էր վազել տիրոջը դիմավորելու,

ապա գոտուց մանգաղը հանեց, շպրտեց մի անկյուն, փայտը դրեց օջախի մոտ և լուռ նստեց խսիրի վրա։

Օջախը մխում էր։ Թեյամանում եռում էր տաք թեյը։ Ծալքատեղում, բարձի վրա, երկու կտոր շաքար կար։ Հնձվորը դեռ տրեխները չէր հանել և գուլպաներից թափ չէր տվել կորեկի փնչերը, երբ սուրմաների զրնգոցով, երկար զգեստի ծալքերն իրար քսելով, ներս մտավ նրա կինը, կնոջ փեշից կախված տղան՝ կոնսերվի երկու դատարկ տուփ ձեռքին։

Տղան դեպի հայրը վազեց, տուփերը ցույց տալու։ Հայրը հասկացավ, որ ձիավորները նստել են իր խսրի վրա։ Տղան ցույց տվեց և արծաթ դրամը, որ տվել էր նրան մի բարի քեռի։

Հայրը ոտքով դեն հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ։ Գլորվեցին տուփերը, տղան էլ գլորվեց։ Ապա տղան ցատկեց և վազեց տուփերի հետևից։ Երկու տուփը ձեռքին նա փաթաթվեց մոր փեշերին և սկսեց լալ։ Հայրը ձայնը մեղմացրեց, տղային կանչեց, խնդրեց նրա արծաթ դրամը։ Տղան արցունքների միջից ժպտալով մոտեցավ հորը, դրամը բռի մեջ։ Ապա նա պատմեց, թե հյուրի ծոցում կար մի փայլուն իր, մեջը սպիտակ թերթեր։ Արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա և դրեց ծոցը։

Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում։ Աչքերը լայնացան, նա գունատվեց՝ Մայրը նայեց տղային, հրդեհվեց դեմքը, հայրը տեսավ կնոջ դեմքի կարմիրը։ Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում։ Հաջորդ վայրկյանին մարդը գազազած արջի նման ոստյուն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին։

Սուրմաները զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը։ Եռոտանու վրա դրած թեյամանը թեքվեց։ Մահակի ջարդված ծայրը թռավ ծալքի վրա։ Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց։ Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ վրանի դռանը անձայն հեկեկալու։

*Տղան դատարկ տուփերը ձեռքին հետևեց նրան և պահվեց մոր փեշի տակ։ Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերավ կորեկ հացը և փափախը գլխի տակ, մեկնվեց խսիրի վրա։*

*Հետո Կաքավաբերդի գլխին լռություն իջավ։ Օջախներում հանգավ կրակը, եղավ խավար գիշեր։ Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ։ Ոչխարը պառկեց կանաչի վրա։ Խսիրի վրա մեկնվեց և կինը՝ թաղիքի տակ ծածկելով տղային։*

*Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների վրա, և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը։ Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա։*

*Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...*

# ՍԵՎ ԾԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱԾԱՆԸ

# ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ

*Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպես հանգած մոխիր։ Կռանում եմ թղթի վրա, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից, ու դողալով թերթում եմ տետրը... Հետո պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը։ Ես շոշափում եմ մտրակը, և Յոլակը խելոք աչքերով նայում է ինձ, նայում է և հանդիմանում։ Ինչո՞ւ էիր մտրակում։ Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին։*

*Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս վրա իջնում է անդորր։ Յոլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները։ Անընդհատ բարձրանում ենք, անցնում առապար ու քարափ։ Քրտնած ձին մռութը կոխում է ջրերի սպիտակ փրփուրի մեջ և սանձերի երկաթների միջով ծծում սառցահամ ջուրը։ Ինչքան վեր ենք բարձրանում, այնքան մոտ է արևը, և արևը խանձում է դեմք, զգեստ, ձեռք,—այնքան սառն են ջրերը, օդը ջինջ, և լսելի է ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը։*

*Յոլակը վրնջում է և արագացնում քայլերը։ Ճանապարհը լայնանում է։ Ահա մի արտ՝ քարե պատով։ Նոր հասկերը սվսվում են լեռան հովից։ Գյուղը մոտ է, ձին փռռացնում է ռունգերը և խայտալով կրծում սանձը։*

*Ճանապարհից վերև, բլուրի լանջին, մեկը ջրում է մուգ-կանաչ առվույտը։ Ես լսում եմ, թե ինչպես առվի ա-*



409—13

վազի մեջ զրնգում է նրա ծանր բահը։ Իսկ երբ բարձրացնում է բահը, արևը լուսավորում է բահը, և թվում է, թե ջրվորի ուսին բռնկված ջահ է։

— Սա՞ է Ջյանբերդի ճանապարհը...

Ջրվորը բացականչում է ոչ «հա», ոչ «հո»։ Հարցս կրկնում եմ։ Մարդը բահը խրում է առվի ավազի մեջ և գալիս է դեպի ինձ։ Ինչքան մոտենում է ջրվորը, այնքան ավելի բարձրահասակ է երևում։ Ես նայում եմ նրա բաց կրծքին. թվում է, թե նրա ձայնը պիտի խռոխտ թնդա։ Ջրվորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ, ասում է «մեր աչքուն» ու ձեռքը տանում դեպի ճակատը։

Ամենևին էլ խռոխտ չի նրա ձայնը, այլ բարակ ու քաղցր։ Ծերունի է. սպիտակ են ոչ միայն բեղերը և ունքերը, այլև կրծքի մազերը, որ հիշեցնում են խճճված մացառուտ։

Հարցս կրկնում եմ։

— Հա,— ասում է,— մըր գուղն ի... Իդա դար լե շրջվե...— ու գրպանից հանում է ծխախոտի քիսեն։ Առաջարկում եմ գլանակ։ Նա ժպտում է, կարծես ուզում է ասել, որ բարակ գլանակը նուրբ է նրա համար, սակայն վերցնում է և դնում ականջի հետևը։ Ապա ոլորում է մատի չափ հաստ «ծգարան»։

— Յոնջան քո՞նն է։

Նա կուշտ ծծում է ծխախոտը, կուրծքն ուռչում է, չոր կաշվի նման ճռռում են թոքերը։ Ռունգերից և բերանից ծխի քուլաները բաց թողնելով, գլխով է անում։

— Վարկայության նախագահ բերեց հերու։ Անուշ բուս է։ Ինա կուտ (ցորեն) լե մեր է,— գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը։ Ես դժվարանում եմ որոշել նրա արտը, բայց գիտեմ, որ ջրվորը հեռվից ճանաչում է նույնիսկ իր արտի կարմիր պուտերը։

— Մըր բախտ կապած ենք գդալ ջրի... Մըր հողեր լե ցրվուկ։ Էհ, հացի տեղ արուն շատ կերանք։ Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն։

Նրա ուսից կախված է հարդի տոպրակը։ Տարվա այս ժամանակ նրան ինչի՞ է պետք հարդը, և ինչո՞ւ է տոպրակը ուսից կախ։

Նա ինձ պատասխանում է, որ ինքը գյուղի ջրբաժանն է և գիշերները առուների ջրերն ինքն է բաշխում մանր և ցրված հողակտորների վրա։

— Իսկ հա՞րդը։

Հարդը ջրաչափն է։ Ջրբաժանը ոսկեգույն հարդը շաղ է տալիս առուների ջրերի վրա և որոշում հոսանքի արագությունը, ջրի ծավալը։

— Մուրո՜ո... Մո՜ւ...րո՜ո,— վերևից լսվում է մի զիլ ձայն,— ջուր խլսա՜վ։

— Տղա լաո՜...

Ծերունին առավ բահը ու վազեց վերև, երևի ջրի բանդը։

Հետո ես և Յոլակը շրջեցինք «դարը», իջանք ձորակը, նորից բարձրացանք, և սարահարթի վրա երևաց լեռնային գյուղը՝ առանց ծառերի, առանց այգիների, օղակված կանաչ մարգագետիններով և բաց առուներով, որոնց ջրերը արևամուտին վարարում են, կեսգիշերին աղմկում խոր ձորերում, իսկ երբ արևը զարթնում է, լռում են՝ լեռան սառույցներից իջնող այդ առուները։

* * *

Սպիտակ եզան հետ մտանք բակը։ Եզը գնաց դեպի միակ դուռը, որի ճակատին փակցրած էր աղբ, աղբի վրա՝ ձվերի ներկած կճեպներից խաչ։ Եզը միակ դռնից ներս մտավ, և մենք՝ նրա հետևից։ Գնացինք մութ միջանցքով, ապա մի դուռ բացվեց դեպի ձախ, մթնի մեջ կորավ սպիտակ եզը, նրա հետևից՝ իմ հոգնած ձին, որ լեռների մաքուր օդից հետո անախորժությամբ էր շնչում գոմի կծու հոտը։

Հետո միջանցքի աջ կողմը նույն հանգով երգեց մի այլ դուռ, և բոցերի լույսով, մուխի մեջ երևաց ոսկե ծա-

մինկներով մի աղջիկ, Ազնոն, դուստրը իմ վաղեմի ծանոթի, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին։

Ազնո, Ազնիվ... Երբ հիմա թերթում եմ իմ ուղեգրությունների տետրը, որի էջերի արանքում գտնում եմ չորացած ծաղիկներ և սուսամբարի տերևներ, ես երկա՜ր, երկար նայում եմ դաշտային թիթեռնիկի թևին, որի ոսկեփոշին փայլում է, ինչպես այն օրը, երբ մարգագետնի վրա թիթեռը ծծում էր ջրախոտի ծաղիկները։ Թիթեռնիկի թևի վրա ես կարդում եմ՝ «Ազնո»... Եվ մտածում եմ, որ Ազնոն հիմա դպրոց է գնում և կտուրների վրա չինչ ձայնով այլևս չի երգում.

Քանց լուսին ամպի տակով,
Դու ջուր կերթաս ջուխտ ղորակով։

Եվ այլևս չի պատասխանի այնպես, ինչպես այն օրը, երբ միասին նստել էինք իրենց բարձր կտուրին, և լեռան միամիտ աղջիկը պատասխանում էր իմ հարցերին.

— Ազնո, կինո տեսե՞լ ես։

— Հարա օրի չըմ տեսե. չուր մը զարկեր է պատ, կցուցե ձի, աղջիկ, օրխորդ, կարտոֆել։

— Կարմիր բանակ լսե՞լ ես։

— Կարմիր բանակ չուր է, քցեր են դրոշակի վրա։

— Ազնո, աստված կա՞։

— Հարա։ Աստված կանաչ ճնճղուկ է։

— Հապա երկի՞նքը։

— Երկինք զինչիլով կապուկ է եզան կոտոշին։

— Ազնո, որ մեծանաս ի՞նչ ես դառնալու։

— Կեղնիմ օրխորդ։

Ազնո, Ազնիվ...

Բոց էր բարձրանում խոր թոնրից, գլվում էր օդը սնդուսի խողովակների մեջ և թվում էր, թե գլվում էր գետինը բոցերի ուժից, մխի սև քուլաներից, որ հրեղեն սյունի հետ գալարվելով՝ ձգվում էր մինչև լեռնային երկնքի սառն աստղերը։

Իմ վաղեմի ծանոթը կրակի մոտ պատմում էր ջրի և ջրբաժանության, քարոտ հողերի և հանդերի մասին։

— Ինչ եղեր է չեղեր է, գացեր է։ Եղանք գոմշու կոտոշ, կպանք գիրար։ Սև թոն եկավ, արուն առու եղավ։ Մըր փողպատ ազատինք Մոտկանա երկրեն, մըր Տալվորիկի հուղերեն։ Ախ ու փախ, գիշեր-ցերեկ չփլախ, սոված, ռութ։ Լենինի լույս մեզ ազատություն տվեց։ Մենակ մըր սահման նեղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կնեղվի։ Մըր հողերի սահման ղըռ քար է։ Ժողովուրդի նեղություն քարից է։ Մըր հոգին լե կառավարություն, մըր ջան լե...

Նա հույս ուներ, որ Զյանբերդի ժողովուրդի հողերի սահմանները կլայնանան, քար ու քարափ կանաչով կպատեն, լեռան գագաթին, սառույցների տակ կկառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ձորերով անպտուղ չեն հոսի սառույցների ջրերը։

Նա պատմում էր, որ գյուղի երկու թայֆաները՝ «բարակ» և «հաստ» թայֆան հետզհետե հաշտվում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ո՛չ Մոտկանա երկրից և ո՛չ Տալվորիկից, այլ Զյանբերդից։ Եվ որ ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ հիշում են իրենց ձորերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծքը, այնպես, որ կովերը հորթ էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մեջ նստած։

—Երեկ ամպ էր, էսօր պարզ արև...

Իմ ծանոթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով և դառնությամբ։ Նրա սերունդը տեսել է և՛ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ, և՛ գաղթ։ Երբ նրանց քշում էին հարավ, խփում էին—և՛ հարավից, և՛ հյուսիսից։ Հրդեհվում էր մի անտառ, և նրանք եղնիկների խմբերի նման, այրվող ծառերի միջից, եղջյուրներով բացում էին իրենց ճանապարհը։ Նրանց քշել են արև-

*մուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հյուսիս և բնակություն հաստատել այս բարձր լեռան վրա։*

*Իմ ծանոթը պատմում էր, որ ոմանք հին սերնդից հրաժարվում էին հերկել Ջյանբերդի հողերը, որովհետև նրա սահմաններում թաղված են և թուրքեր։ Որ դեռ երկար տարիներ նրանք իրենց մեռելները ուսերի վրա, լեռներից իջել են դաշտի գյուղերը, որպեսզի նրանց թաղեն հին վանքերի պատերի տակ։ Նա ասում էր, որ Ջյանբերդում ես կտեսնեմ շատ խաչեր՝ դռան ճակատին, եզների եղջյուրներից կախ, կավե կարասների վրա, թոնրի շրթունքներին, նույնիսկ այն խրտվիլակների կրծքին, որոնց ցցում են արտերում՝ ճնճղուկների դեմ։ Որ Ջյանբերդում ապրում է մունջ Սևդոն, որը հագնում է մազեղեն կոշիկ՝ «խարուկ», ինչպես Մոտկանա երկրում, որն «իր բերնին նալ է զարկել» և չի խոսում նրանց հետ, որոնք Մոտկանից չեն։*

*Ջյանբերդում միայն մի մարդ կա, որի առաջ խոնարհվում է համառ Սևդոն։ Այդ մարդը Հազրոն է, ինչպես անվանեց իմ ծանոթը՝ լեռան գյուղերի ամենալավ մարդը։*

*Բայց մեր զրույցը խանգարվեց, որովհետև լսվեց ոչխարների մայունի աղմուկը։ Ազնոն տեղից թռավ, դուրս եկան և մյուսները, նրանց հետ՝ ես։*

*Լեռներից գյուղի վրա իջնում էին այծերի ու ոչխարների հոտերը։ Ի՜նչ աշխույժ աղմուկ էր, ի՜նչպիսի զվարթություն, կանչեր, շան կաղկանձ, պղնձե կովկիթների զրնգոց, բառաչ, մայուն և հովիվների սուլոցներ։ Կարծես ավար էին բերում գյուղը, և կին, աղջիկ, երեխա ու տղամարդ փողոցներից դեպի բակերն էին քշում այծ, ոչխար, հորթ։*

*Իմ ծանոթի բարձր կտուրից ես նայում էի Ջյանբերդին, Արարատյան դաշտին, որտեղ կանաչներով շրջապատված գյուղերը հետզհետե սուզվում էին երեկոյան մութի մեջ, և ավելի պայծառանում էին քաղաքների կրակները։*

Երբ հիշում եմ այդ երեկոն, քաղաքների կրակները և դաշտի վրա իջնող գիշերը, Զյանբերդի ներքևի կտուրի վրա տեսնում եմ մի մարդու, թիկունքը դեպի ինձ, դեպի լեռան գագաթը, երեսը դաշտի կողմը, և լսում եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվագը։

* * *

Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր և լեռների գագաթները՝ ապառաժներ։ Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին, կանաչում էր վայրի խաղողը, և նրա որթը մագլցում էր պղնձագույն ժայռերի վրա։ Աճում էր և վայրի հոնը, երբեմն թուզը։ Իսկ բարձրերում, որտեղ քարափների վրա ցրված էին նրանց աղքատ հյուղակները, ցանում էին կորեկ և վաղահաս ցորեն։ Երբ հասնում էր կորեկը, ձորերից բարձրանում էին գազանները։ Մարդիկ արտերի եզրին խարույկ էին վառում, որպեսզի արջերը չտրորեն կորեկը։

Նրա մանկությունը խաղացել է այդ քարափների վրա։ Ինչպես Ֆավն, այդ պատանին փող է նվագել քարանձավների ստվերում, և նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը։ Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարերն են քերծել դեմքը, ցուրտը և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպես լեռան լանջը։ Նա կռվել է գազանների հետ և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով քշում էին նախիրը, ոչխարը, առևանգում կին ու երեխա։

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կիջնի ձորերը, կհավաքի միրգ և ցախ, ձմեռը կլսի հին զրույցներ՝ Ձենով Օհանի, Մսրա Մելիքի և Թլոր Մանուկի մասին։

Բայց պայթեց պատերազմը, եղավ զորաժողով, բռնություններ, հրդեհեցին դաշտի գյուղերը, հրդեհանձիգները ձորերով բարձրացան մինչև լեռների գագաթները,

մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացաններ որոտացին, և շողացին սրեր, ամպերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը։ Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան։

Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ, կերավ ընդեղեն, և՛ ալուճ, և՛ մասուր,— ապա հոգնած, ահը աչքերի մեջ, գնաց հարավի կողմը, գնաց մերթ իբրև քուրդ հովիվ, մերթ իբրև քաղցած գայլ և հասավ անծանոթ մի աշխարհ, որտեղ ոչ լեռներ կային, ոչ լեռնային լույս աղբյուրներ։ Շոգ հարթավայր էր, պղտոր, դեղին գետերով, որոնց ջրերի մեջ չէին երևում այն կապույտ առվակները, որ իջնում էին իրենց լեռների սառույցներից։

Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրավուն սրինգը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա։ Հազրոն շոգից խանձված շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպես լեռնային գյուղերում ջուր են խմում կավե դորակներից։ Ջրի նման գլգլում էր նրա նվագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում։

Լաց լացեց կինը, փոքրիկ աղջիկը քնեց մոր ծնկների վրա, լացեց և Հազրոն, հետո թեթևություն իջավ սրտի վրա, ինչպես կապույտ ամպը նստում էր Մարութա բարձր սարին։ Ապա սրբեց արցունքը, ուսն առավ աղջկան, առավ կնոջը և հետ նայեց։ Փոշի էր նստել հեռվի լեռների վրա, և չէին երևում իրենց բարձր լեռները։

Հազրոն ասավ կնոջը.

— Էսօր դուման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի։

Բռնեցին մի ճանապարհ, մոլորվեցին հազար ճանապարհներում, հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հազրոյի քոչը ելավ այս բարձր լեռը։

* * *

Հանդարտվում էր գյուղի երեկոյան աղմուկը։

Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս։ Մարգագետինները ծխում էին դաղձի բույր։ Բարակ լուսինը դողդողում էր, և նրա լույսի տակ եղների շողիքը օրորվում էր արծաթյա օղակների նման։ Դադրած եղները ննջում էին, և լուսնի տակ նրանք նման էին մարմարե արձանների։

Ներքևի կտուրի վրա հավաքվել են գյուղի հոգնած մշակները։ Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին են, ինչպես գեր եղները։

Ես բարձրանում եմ կտուրը։

Այնտեղ չորս փոքրիկ աղջիկներ կան և մի տղա։ Մի բարձրահասակ մարդ զբաղվում է նրանց հետ։ Աղջիկները հարձակվում են փոքրիկ տղայի վրա, իսկ տղան հրում է նրանց, ապա իրար են խառնվում ու գլորվում կտուրի վրա։ Բարձրահասակ մարդը քրքջում է, մյուսների խոսակցությունը դադարում է, և լեռնցու բոց աչքերով նրանք նայում են երեխաների կռվին։ Ցավից ճչում է մի աղջիկ և վազում կտուրի վրա նստածներից մեկի, ըստ երևույթին հոր, գիրկը։ Հայրը ծիծաղում է.

— Հաբա աղջիկ, գռիվ տփոնք է։

Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գըրկում է տղային, որ կորյունի նման կռվում էր հասակակից երեք աղջիկների հետ։

— Բա՛րեն ղուրբան, հերիք,— ասում է մարդը։ Իսկ տղան նրա գրկի մեջ թպրտում է, կարծես հիմա պիտի թռնի չիվար աղջիկների վրա։

Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ, և նրանք փայտե սանդուղքով իջնում են ցած։

Տիրում է լռություն։ Միայն բարձրահասակ մարդը զվարթ քրքիջով հանգստացնում է տղային.

— Բարեն ղուրբան, չէ՞ աղջիկ լե մեղք է...

— Մինչև էնի չզարկեր, ես լե չզարկի,— բողոքում է տղան։

— Հազրո,—կանչում է նստած ստվերներից մեկը,— չալե՛ս։

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հազրոն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանոթը։

— Խանամին, խանամին...

— Յար խուշտա...

Տղան արագ իջնում է նրա գրկից և վազում ներքև։ Հազրոն մոտենում է ինձ և մեկնում ձեռքը։

— Բարի տեսանք։

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում, ճերմակ մազեր և կեռ արծվաքիթ։ Նրա աչքերը փայլում են երիտասարդական ավյունով։

— Կխաղա՞ք,— նայում է մյուսներին։

Ես երբեք, երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը բարձր լեռան մի գյուղում։ Հազրոյի տան կտուրը, նրա նվագը և հսկաների հին պարը։

Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրնգից։ Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դեպի գյուղի կողմը, և հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խուշտան»։ Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը։ Հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով։ Նվագն ավելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ։ Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից։

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը։ Երբ մի շարքը մյուսին հետ էր մղում՝ ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին

նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամոթի և պարտության համար։

Հազրոն նվագում էր իր ծիրանի փողը, նվագում էր նոր զվարթությամբ այն երգը, որ իբրև երիտասարդ ֆավն նվագել էր իր հայրենի քարանձավներում, այնտեղ, ուր ամպերը հյուղակներից ցածր են լողում, և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը։

* * *

Նրանք գնացին։

Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես։ Տուն գնաց և այն փոքրիկ տղան, նրա թոռը։ Լուսնի տակ ես դիտում էի նրա կարմրավուն փողը։ Նա ծանր էր և կարծես ձուլված էր ծանր մետաղից։ Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում։

Իսկ Հազրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը։ Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում։ Պապի մոտ հաճախ է լինում այն փոքրիկ տղան, նրա առաջին թոռը։

Աստղերի և լուսնի տակ փռվել էր Արարատյան դաշտը։ Մասիսների ձյունոտ գագաթների սպիտակ ցոլքը լույս էր գցում մինչև երկնքի խորքը։ Հեռվում, ուղտերի քարավանի նման ձգվել էին Հայկական պարի լեռները։

— Կտեսնե՞ս էն գուղ, կրակների ձախ կողմ։

Հովվական կրակների ձախ կողմը, դաշտի վրա, երևվում էր մի սև կետ։

— Հոնի զիմ նշանածն ա թաղուկ։

Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում։ Նա նստում է այնքան, մինչև հանգչում է կրակը, հետո տխուր, տխուր նվագում է ծիրանի փողը և այն երգերը, որ նվագում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կինը՝ գյուղական աղջիկ։ Հետո թեթև հոգով գնում է աղջը-

*կա տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թոռների հետ և մենակ ճանապարհ ընկնում դեպի լեռը, դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը։*

*— Հազրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում։*

*— Մեր քարափների վրա՞։— Եվ լռում է։*

*— Հեյ վա՜խ ջահելություն, թռար...*

*Եվ նորից վերցնում է փողը։*

*Նվագում է, այս անգամ ոչ թե լեռնականների կռվի երգը, որից բորբոքվում է արյունը,— այլ հովվական պարզ մի երգ։ Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ցինց ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի։*

*— Հազ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին։ Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ-զուլալ տխպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն։ Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանցրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...*

*— Հազրո, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը։*

*— Զիմ փող կիտամ իմ քաջարծիվ թոռնիկին։*

* * *

*Փողոցում խաղաղություն է։*

*Քնել են հոգնած մարդիկ, և փողոցի լապտերների լույսի տակ օրորվում են քաղաքի տները, նրանց սև պատուհանները։ Լեռներից զով է իջնում քաղաքի վրա, և գիշերային զովը բերում է սուսամբարի բույրը, լեռների հստակ օդը և մաքուր ջրերի ձայնը։*

*Ես զգում եմ ուղևորության իմ տենդը, նրա մեջ տուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպես հանգած մոխիր։ Լեռների վրա վրնչում է իմ ձին՝ ինչպես սանձարձակ ուրախությունը, ինչպես սպիտակ ջրվեժը, որ իջնում է բարձրերից, թափով կտրում դաշտը, խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի հետ գնում դեպի անեզր ծովը։*

*Զյանբերդ, Զյանբերդ...*

*Դու դառնում ես անպարտելի ամրոց, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին հնչում են հաղթության երգերը։*

*Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը։*

## ՆԱՄԱԿ ԽՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

*Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր, որի ներքևի մասը, գետնից մի մետրաչափ բարձր, կոկիկ տաշած էր, քարե աթոռի պես սարքած։*

*Կնստեր իր տեղը, կկռթներ հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեքեր և, եթե զրուցընկեր չունենար, ինքնիրեն կխոսեր ու քթի տակ կժպտար։ Երբ նա ժպտում էր, նրա կապույտ աչքերը փոքրանում էին, և աչքերի տակ շարվում էին բարակ կնճիռներ։*

*Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր։ Կովերը արոտից էին տուն գալիս, վարից՝ հոգնած ու դանդաղ քայլերով եզները, պառավ ատամների տակ ծամելով ճամփի եզրից պոկած խոտը։ Ու նստած տեղից պապս մեզնից մեկին մի բան էր պատվիրում.*

*— Էգուց Ալա եզը վարի չտանեք,—կամ թե՝ — Մի տեսեք էն քուռակն ինչի՞ է կաղում։*

*Հետո պիտի վեր կենար, խոտը հոնի փայտով հավաքեր և մոտեցներ Ալա եզին կամ շոյեր քուռակի հիվանդ ոտքը։*

*Մութն ընկնելուց ժամի զանգերը ծլնգում էին։ Առաջին ծլնգոցին պապս փափախը կհաներ, կխաչակնքեր, թեկուզ այդ պահին կանգնած լիներ Ալա եզան մոտ։ Եվ խաչակնքելիս հոնի փայտը ձեռքից բաց չէր թողնում։*

Մենք բոլորս էլ գիտեինք, որ խաչակնքելուց հետո ձայն է տալու։

— Նազու աղջիկ, դուները բաց արա…

Նազու աղջիկը տատս էր, ծերությունից մի քիչ կռացած, ականջի մեկը խուլ։ Ու Նազու աղջիկը դռնակը բաց էր անում, դռնակը ճռռում էր, ինչպես սայլի անիվը սառույցի վրա։

Դռան շեմքին նստելն ուներ և մի ուրիշ նպատակ։ Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջովն էր անցնում։ Ուրիշ գյուղից եկողը մեր տան կողքով պիտի գնար։ Հանդից տուն դարձողները՝ որը մի խուրձ խոտ շալակին, որը՝ լուծի կապերն ուսին ու բեզարած եզներն առաջն արած, որը՝ էշի վրա, ոտները գետնին քսելով,— մի խոսքով, իրիկնապահին ով անցներ փողոցով, պապս պիտի ասեր «բարի իրիկուն»։ Պապս էլ նրանց պիտի հարցներ, թե վարը պրծա՞ն կամ թե այսինչ սարի խոտն ինչպե՞ս է։

Մի անծանոթ մարդ եթե անցներ փողոցով, պապս մեզանից մեկնումեկին շտապ կասեր.

— Հենց էր ղարիբ լիներ… Շուտ հասի կանչի, թող մեր տունը գա…

Վազում էինք և մինչև չիմանայինք, թե ո՞ւմ հյուրն է, նրան բաց չէինք թողնում։

— Պապի, էն ղարիբը Խաչանենց ղոնաղն էր, նրանց տունը գնաց։

Ու պապս պիտի միտք աներ, թե նորեկը Խաչանենց որի՞ հյուրն է, ե՞րբ է եղել նրանց տանը, ի՞նչ ծանոթություն կար նրանց միջև։ Եթե կասկածեր, կնոջը պիտի հարցներ.

— Նազու աղջիկ, հերո՞ւ էր, թե մեկէլ տարին, էն որ Խաչանենց Ադամի տղան սարուշենցի բրուտին կանչեց։ Էն ղարիբը նմանեցնում էր բրուտին։

Տատս, եթե խուլ ականջն էր դարձրել նրա կողմը, պիտի գլուխը թեքեր, մի անգամ «հը՞» ասեր և ապա հայտներ իր կարծիքը սարուշենցի բրուտի մասին։

Անասունները տեղավորելուց հետո, եթե ամառվա գիշեր էր, պապս տնքալով բարձրանում էր թախտը, արխալուղի կոճակներն արձակում և հնձվորի նման գլխին կապում սպիտակ շորը։ Հողի գավաթի մեջ սառած սպասից մի քանի գդալ ուտելուց հետո՝ թիկնում էր բարձին և ննջում։

Առավոտ ծեգին ամենից կանուխ նա էր վեր կենում։ Քաղցր քնի մեջ, մանավանդ, երբ լուսաբացին զովը պաղեցնում էր օդը և քունն ավելի անուշ դարձնում, պապս ձայն էր տալիս մեզ.

— Դե, վերեք, հրեն արևը դուրս եկավ հա՜...

Մենք ավելի էինք ներս խցկվում վերմակի տակ ու սկսում սուտ խռմփացնել։ Ու մեկ էլ մի ձեռք վերմակի տակ խուտուտացնում էր մեր կրունկները։ Ծլնգ էինք անում, նստում անկողնում և տրորում մեր քնատ աչքերը։

— Դե հա՜, վերեք... Տղամարդն էլ էդքան քնի՞։ Հրես ձմեռը էնքան արջաքուն տա՛ք...— ասում էր և հոնի փայտի ծայրով դիպչում մեր մարմնի բաց մասերին և ինքն էլ մեզ հետ ծիծաղում։

— Վերեք, ես ձեր ժամանակ կարգին տղամարդ էի։ Հրես ձեր պառկելու վախտը մոտենում ա հա՜, վերե՛ք...

Մենք այն ժամանակ ութ-տասը տարեկան երեխաներ էինք։ Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չշոկեինք, թե ով ում տրեխն է հագնում, պիտի կռվեինք իրար հետ, թե ո՞վ է եզները տանելու և ո՞վ է գնալու վարի։ Բայց ավելորդ էր մեր խոսքն ու կռիվը, որովհետև պապս արդեն որոշել էր աշխատանքը, իսկ Նազու աղջիկը մեր պաշարի կապոցները կախել էր բակի ցից փայտերից։

Եվ արևածագին սկսվում էր գյուղի ծանր աշխատանքի առօրյան։

Ձմեռն էր լավ։ Աշխատանք քիչ կար, տավարը գոմումն էր, խոտն ու դարմանը՝ մարագում։ Պապս ոչ նըստում էր դարպասի քարին և ոչ էլ պառկում բակի թախտի վրա։ Արև օրերին նրա փոխարեն հավերը, սառած գետինը

*կոխ տալով, մոտենում էին, վիզները երկարում, թռչում ու շարվում թախտի վրա, գլուխները ծածկում թևերի տակ։*

*Պապս քուրսու մոտից չէր հեռանում։ Նա սովորություն չուներ գյուղի հրապարակը գնալու։ Քուրսու մոտ կնստեր, բրդե շալը ուսին կգցեր ու կմտմտար, երբեմն ինքն իրեն կժպտար, բարի և անչար մարդու ժպիտով։*

*Մանավանդ ձմեռը հյուրն անպակաս էր։ Ով էլ լիներ, ինչ գործով էլ գար, մի օրվա փոխարեն պապս նրան պահում էր երկու, երեք օր։ Եթե հեռու գյուղերից իր վաղեմի ծանոթը կամ թուրք «քիրվան» նրան տեսության էր գալիս, մեր տունը դառնում էր հարսանքատուն։ Նըստում էին մինչև աքլորականչը, պատմում անցած օրերից, վերհիշում մեռած մարդկանց, վաղուց եղած դեպքեր ու վաղեմի պատմություններ։*

*Մենք էլ էինք նստում այնքան, մինչև քունը հաղթեր, գլուխներս հենեինք քուրսու թախտին, մինչև տատը բոթեր մեզ, զարթեցներ ու վեր կենայինք, որպեսզի վերմակի տակ մի քիչ էլ լսեինք նրանց զրույցը։*

*Պապս այնքան էր պատմել իր գլխով անցածը մեզ և հյուրերին, որ հենց խոսքի կծիկը ետ տար թե չէ, մենք պիտի իմանայինք, թե ո՞րն է պատմում՝ այն, ինչ եղավ գյուղի ավերակ մատուռում, երբ ջահել ժամանակ պապս ընկերների հետ գրազ էր բռնել, գիշերով գնացել փափախը դնելու մատուռի ներսը, ու մի աղվես դուրս էր թռել, վախից պապս գյուղի ճանապարհը կորցրել և մինչև լույս բոստաններում պտույտ էր տվել,—թե ինչպես սարում գայլերը հարձակվել էին ձիու երամակի վրա, ինքը պահվել էր ձիերի արանքում և մի կերպ ազատվել։*

*Պատմությունն անելիս պապս միշտ կամ ջահել օրերին էր երանի տալիս, կամ էլ առանձին շեշտով խոսքը վերջացնում.*

*— Աշխարհքս միշտ կմնա, ասա՛ մարդը սևերես չմնա...*

Աշխարհի չար ու բարուց անտեղյակ, միամիտ երեխաներ էինք։ Մեզ համար ամենից հզորն ու սարսափելին գյուղի գզիրն էր։ Տանուտերը, որը նստում էր Հարեվան գյուղում, մեր գյուղի գործերը տեսնում էր գզիր Իբիշի ձեռքով։ Մեկ էլ գզիրը տնկվում էր կտուրի վրա կամ կռանում էր և երդիկից կանչում.

— Քյոխվից հրաման կա... Տերության խարջը երեք օրում ուզում են։ Ջտվողին՝ Սիբիր։

Եթե հրամանը հասարակ էլ լիներ, Իբիշը խոսքը վերջացնում էր սպառնալիքով։ Ոչ մի խնդիր և ոչ մի աղերս չէր կարող փափկացնել նրա սիրտը։

— Ուզում ես թագավորի հողից ինձ քշեցնե՞ն... Չէ՛, չէ՛, բե՛ր։ Ես ի՞նչ պատասխան պիտի տամ քյոխվին։ Ուզում ես խալխի մեջ ինձ խայտառակ անի՞։ Բե՛ր, թե չէ Սիբիր, հա՜...

Գզիր Իբիշը մեզ սարսափելի և հզոր էր թվում, որովհետև պապս, որ մեր աչքում անվախ մարդ էր, գայլ ու գազան տեսած,— նա էլ էր խեղճանում, երբ գզիրը կանչում էր երդիկից կամ թե երբ դարպասի քարին նստած ժամանակ գզիրը մոտենում էր և չոր ու կոշտ հայտնում տանուտերի հրամանը։

—Մեր տան կերած աղ ու հացը քոռացնի աչքերդ, Իբիշ...

Պապս էր ասում այդ խոսքերը, երբ գզիրը հեռանում էր այնքան, որ չլսի ասածը։

Եվ ամեն անգամ, երբ գար ու գնար Իբիշը, պապիս ժպիտը կորչում էր, մոռանում էր մեզ էլ, տունն էլ, եզն ու կովն էլ։ Ամեն մի այցից հետո նա խոր թառանչով ասում էր.

— Ախ, Եգոր, մի էստեղից դուրս գայիր... Յարաբ աչք ա լինելո՞ւ քեզ տեսնեմ...

Այդ որ ասեր, մենք էլ էինք տխրում, չնայած մեզնից ոչ ոք չէր տեսել մեր քեռի Եգորին, որին տարիներ առաջ աքսորել էին։

Նրա աքսորման մասին հակասական պատմություններ կային, որոնցից ոչ մեկը ճշմարիտ չէր։ Գիտեինք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է և իբրև թե հրացան է քաշել հրամանատարի վրա։ Մեզ համար մութն էր այդ պատմությունը. չէինք տեսել ոչ նրան, ոչ էլ գիտեինք այն երկիրը, որտեղ, ինչպես պապս էր ասում, «ամառ-ձմեռ ձյուն է»։ Իր որդու մասին պապս մեզ հետ չէր խոսում և եթե ձմռան գիշերներին քուրսու մոտ նստած հյուրերից մեկն ու մեկը պատահմամբ կամ անզգույշ հարցով հիշեցնում էր նրան այդ մասին, պապս «է՜հ» էր անում, ուսերը թոթվում և, մի քիչ լուռ մնալուց հետո, շարունակում զրույցը։

Այդ դեպքը մի ստվեր էր մեր լույս օրերի վրա։ Մեծերը տխրում էին, տատս արտասվում էր, երբ նայում էր սնդուկում պահած որդու գուլպաներին։ Եթե մենք նրան հարցնեինք, թե հեռո՞ւ է քեռին, նա պատասխանի փոխարեն պիտի կռանար, համբուրեր մեզ, մի-մի բան էլ ձեռքներիս դներ։

Ամիսներով մոռացվում էր այդ պատմությունը։ Վար ու ցանքի հետևից էինք ընկնում, աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թվում էր, թե մեր ընտանիքում ոչինչ չի պատահել և մեր տան գլխին չի ծանրացել ոչ մի հոգս։

Սակայն անհայտ աղբյուրներից երբեմն լսվում էին լուրեր, մանավանդ հարևան գյուղերում, և այնտեղից էլ այդ լուրերը, որպես շշուկ, հասնում էին պապիս ականջին։ Մերթ ասում էին, որ նրան տեսնող է եղել, և ուրիշի անունով ապրում է այսինչ քաղաքում. պապս ձի էր նստում, գնում լուրը ստուգելու և հուսահատ վերադառնում։ Մերթ պատմում էին, թե սահմանն անցել և գնացել է Իրանի հողը և իբրև թե նամակ է ուղարկում մեզ, բայց նամակը ճանապարհին բռնում են։

Սոսկալին այդ անհայտությունն էր, որովհետև եթե ստույգ իմացվեր, որ նա այլևս չկա, լաց կլինեին, և

տարիների հետ կհալվեր մորմոքը։ Սակայն մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ։

Պատահում էր, որ ձմռան գիշերին մեզնից մեկն ու մեկը հանկարծ զարթնում ու գլուխը հանում էր վերմակի տակից։ Այդ գիշերներին շատ անգամ տեսնում էինք տատիս ու պապիս քուրսու մոտ նստած։ Երբեմն նրանք լուռ ննջում էին։ Տատս հանկարծ սթափվում էր, աչքերը տրորում, մոտեցնում բրնձով լի ամանը և մատով մեկ-մեկ ընտրում բրինձը։ Նրանք իրար հետ խոսում էին, ամեն գիշեր համարյա նույն ձևով, նույն հանգով։

— Բա ի՞նչ ասաց։

— Կտեսնեմ... ասում էր շատ ա դժվար...

— Հը՞։

—Դժվա՛ր ա, դժվա՛ր...

— Տվածնիս աչքերն առնի, բա հիմա ինչ է ուզում...

— Ճարներս ինչ, պիտի տանք... Տեսնենք մի խաբար կբերի՞։

Ու մենք հասկանում էինք, թե կա մի մարդ, որ, եթե մտքում դնի, ստույգ լուր կբերի մեր Եգոր քեռուց։ Ո՞վ էր այդ մարդը, մենք չգիտեինք։ Հայտնի էր, որ երբեմն գզիր Իբիշը մեր տնից յուղ ու պանիր էր տանում նրա համար։ Մի անգամ էլ երկու ոչխար տարավ ու հենց գոմի շեմքին երդվեց, որ անպատճառ նրան կասի։ Գզիրը ոչխարը քշեց Հարևան գյուղը, որտեղ ապրում էր տանուտերը, և որի տանը շատ անգամ լինում էր պրիստավը։

* * *

Աշնան մի օր պապս, որ առավոտ կանուխ ձի էր նստել ու գնացել Հարևան գյուղը, ուրախ-ուրախ ձիուց

միշավ, սանձը հանեց ձիու գլխից, ու մինչև ձին ներս կմտներ գոմի դռնով, շտապեց մեզ հայտնելու, որ տանուտերից տեղեկացել է, թե քեռիս ողջ է և գտնվում է այսինչ քաղաքում։

— Անունն ինչ էր էն անտերի... Տես է՛, հուշ եմ ասել։ Լեզվիս պտկին էր, ամբողջ ճանապարհին ասում էի, որ մտահան չանեմ։

Հարկավոր էր խնդիր ուղարկել ամենաբարձր տեղը՝ հենց իրեն՝ ռուսաց թագավորին, ինչպես ասել էր տանուտերը։ Պապիս պատմածը մեզ թվում էր հեքիաթ։ Եվ մինչդեռ տատս ուրախությունից շփոթվել ու անվերջ աղ էր լցնում ապուրի մեջ ու խառնում, մենք զարմացած նայում էինք մեր կարճլիկ, մազը սպիտակ պապին, որի կապույտ աչքերը պայծառացել և վառվում էին հույսի հրճվանքով։

— Պապի, թագավորը նամակդ որ ստանա, ի՞նչ պիտի անի։

— Կկարդա, հրաման կտա պրիստավին, որ Աղամով Եգորին, որտեղ որ է, սաղ-սալամաթ հասցրեք իրեն հորը։

— Բա ո՞նց է գնալու նամակը։

— Էհ, դուք հլա աշխարհքի որտե՛ղն եք... Փոշտ կա, յասաուլ կա, պրիստավ կա։ Տանելու են թագավորի ձեռքին դնեն։ Քյոխվան ասում էր, որ պիտի լավ թղթի վրա գրել տաս, ղալամն էլ ոսկի պիտի լինի, թե չէ ընդունիլ չեն։

Ու մանկական վառ երևակայությամբ պատկերացնում էինք ոսկե գրիչը, որով փայլուն թղթի վրա գրում են պապիս խնդիրքը, բառերը պսպղին են տալիս, նամակը սարերի վրայով և թռչունի թևով հասնում է ոսկե մի տուն, և թռչունը նամակը դնում է թագավորի թախտին։

Այդ իրիկուն տատս չոկեց պանրի յուղոտ կտորները, լցրեց մի մորթու մեջ և բերանը կապեց։ Երբ պապս պատվիրեց պոչը ծաղիկ երինջին գիշերը կուշտ խու-

տալ, մենք հասկացանք, որ նա յուղ ու պանրի հետ քաղաք է տանելու և պոչը ծաղիկ երինջին, որը մեր բոլորի սիրելին էր, մեր աչքի լույսը։

Սակայն ոչ ոք չառարկեց։ Առավոտ կանուխ բոլորս ոտքի էինք, և մեզնից ամեն մեկն աշխատում էր ավելի շոյել երինջի մեջքը, խոտի մեջ եղած չոր ծաղիկները չոկել ու տալ նրան։

Պապս ձիու թամբին կապեց յուղն ու պանիրը և երինջին առաջ արավ։ Դարպասից դուրս գալուց, երինջը հետ նայեց դեպի կիսաբաց դուռը ու բառաչեց։ Գոմից նրան ձայն տվեց նրա պառավ մայրը։

Երբ ձին ու երինջը ծածկվեցին բոստանների պատերի ետևը, ու միայն երևում էր պապիս փափախը, որ սև կատվի պես վազում էր պատի վրայով,— մենք մի քիչ էլ կանգնեցինք ու ներս մտանք։

Երկու օր հետո պապս վերադարձավ։ Իր խնդիրքը գրել էր տվել Միրզա Դավիթին և տանուտերի օգնությամբ հանձնել փոստը։ Պոչը ծաղիկ երինջն էլ էր գնացել, յուղն ու պանիրն էլ։ Փոխարենը պապս բերել էր թղթի մի փոքրիկ կտոր, որ նրան տվել էին նամակն ընդունելուց հետո։

— Նազու աղջիկ, լավ տեղ դիր, աչքի լույսի պես պահիր։ Պատասխանն էդ թղթովն ա գալու։ Թե որ կորա՛վ...։

Եվ փոքրիկ թուղթը, որ շորի մեջ ամուր փաթաթելուց հետո տատս դրեց սնդուկի մեջ, մեզ համար դարձավ և՛ ամենից թանկը, և՛ ահավորը։

Ի՞նչ կար այդ փոքրիկ թղթի մեջ, ո՞ւր է մեր պոչը ծաղիկ երինջը, մորթեցի՞ն, թե՞ բառաչում է ուրիշի գոմում։ Մտածում էինք այնքան, որ հոգնում էինք, քնում ու երազի մեջ տեսնում երինջին, որ խոտի տեղ ախորժում ուտում էր թուղթ...

Մի ձմեռ անցավ, բայց նամակի պատասխանը չեկավ։ Ամբողջ գյուղը գիտեր այդ մասին, և պապս մի-

*ամիտ պարծանքով պատմում էր, որ ինքը ռուսաց թագավորին նամակ է ուղարկել։ Մեր տունը հյուր եկողներին նա նկարագրում էր, թե ինչպես է Միրզա Դավիթը խնդիրքը գրել։*

*— Է՜, մենք էլ ասենք ապրում ենք։ Էնպես ղալամ ունի, որ քարին դնի, քարը կճաքի... Ինձ որ տեսավ, երեսիս նայեց, թե Արություն ապեր, ուզո՞ւմ ես ասեմ, ինչի ես եկել ինձ մոտ։ Ասաց, թե դու ուզում ես, որ թագավորին նամակ գրեմ տղիդ համար։ Մնացի զարմացած։ Օրենքի գրքերը բաց արեց կարդաց, կարդաց, մինը դրեց, մյուսը վերկալավ, վերջը գտավ։ Ոսկե ղալամը դրեց թղթի վրա... Մի զարմացք էր որ։ Էդպե՜ս էլ գիր, էդպես էլ զորություն...*

*Ունկնդիրն իր հիացմունքն էր հայտնում Միրզա Դավիթից և նրա գրչից, ինքն իր հերթին անում մի պատմություն նրա իմաստությունից և հնարագիտությունից։*

*— Ասենք թե անունը միրզա է, բայց ադվակատից էլ գիտուն է։*

*— Պապի, բա պատասխանը ինչո՞ւ չի գալիս...*

*— Ա՜յ որդիք, հենց իմանում եք, թե թագավորը ունի-չունի էդ հոգսն ունի՞։ Կռիվ կա, ժողովուրդին կերակրել կա։ Օրը ես հազար ասեմ, դու երկու հազար իմացի,—էդքան նամակ ու խնդիրք ա ստանում։ Հալբաթ մի օր էլ մերը ձեռքը կհասնի... Բա էս թուղթն ինչի՞ համար են տվել։ Էդպես էլ վրան գրած է. Արություն Ադամովից նամակ ռուսաց թագավորի վրա։*

* * *

*Եկավ գարունը։ Մի օր էլ գզիր Իբիշը ձայն տվեց, որ Հարևան գյուղում ժողով կա։*

*— Թազա պրիստավ են դրել, ա՜յ ժողովուրդ, թազա քյոխվա են ընտրելու։ Տունը մի մա՜րդ...*

*Տանուտերի ընտրությանը պապս չգնաց։ Ալա եզն այդ օրը տնքում էր, նրա պնչերից ծորում էր ժահրոտ*

լորձունք։ Պապս տաք մոխիր էր կապել եզան ճակատին՝ շոյում էր նրա մեջքը և փաղաքշական խոսքեր ասում։

Մի քանի օր անց, երբ հիվանդ եզը ոտքի կանգնեց ու ոտքերը զգուշությամբ փոխելով սկսեց լիզել բակի քարերը,— պապս դարձյալ նստել էր իր սովորական տեղը, աչքը հանդից տուն դարձողներին։ Ու մեկ էլ երևաց գզիրը։

— Թազա պրիստավը քեզ էգուց առավոտ կանչել ա։ Վախտով էնտեղ լինես, թե չէ ասում են հերսոտն ա…

— Խեր լինի, Իբիշ...— հարցրեց պապս, տեղից վեր կենալով։

— Հաստատ տեղեկություն չունեմ։ Ինձ էղպես ա հրամայել։

— Ո՞վ։

— Թազա քյոխվան, Մուքելանց Առստամը։

Պապս էլ ոչինչ չհարցրեց։ Իբիշը հեռացավ։ Լավ նշան չէր Առստամի մասնակցությունը։ Նա հին հաշիվ ուներ պապիս հետ։

— Ի՞նչ էր ասում բայղուշը,— հարցրեց տատս։

— Առստամը կանչել ա, թազա քյոխվան։

— Հը՞,— պապս նորից կրկնեց։

— Պատասխանը եկած չլինի՞,— ասաց տատս։

— Կարող ա։ Վախտն ա. եկած էլ չլինի, հրես որտեղ որ ա կհասնի։ Համա ասեց պրիստավն ա կանչում։ Հ՞ը, — դարձավ նա մեզ։

Մենք հաստատեցինք, որ Իբիշն այդպես ասաց. և որպեսզի ավելի ստույգ իմանայինք, պապս մեզ ուղարկեց նրա մոտ մի անգամ էլ հարցնելու։ Գզիրը նախ մեզ վրա բարկացավ, թե չենք թողնում, որ հանգիստ հաց ուտի, ապա մեզ հայտնեց, որ պապիս կանչողը պրիստավն է, բայց ինքը հրամանը ստացել է Մուքելանց Առստամից։

— Հենց քու ասածն ա լինելու, Նազու աղջիկ,— ասաց պապս մեզ լսելուց հետո։— Երևի պատասխանը եկել

է կամ թե ո՞վ գիտի, Թագավորի կողմից մի հարցմունք պիտի անի։

Քնելուց առաջ պապս ինձ պատվիրեց առավոտը կանուխ վեր կենալ։ Ես նրան պիտի ուղեկցեի և այնտեղ նրա ձին պիտի պահեի, մինչև պապս ներկայանար պրիստավին։

Ուրախությունս անչափ էր։ Ես պիտի տեսնեի հարևան գյուղը, պապիս թարքին նստած պիտի բարձրանայի սարի գագաթը, որ մեր բակից անչափ հեռու էր երևում։ Վերջապես ես պիտի տեսնեի պրիստավին։ Այս մտքի վրա ուրախությունս տեղի էր տալիս ահավոր երկյուղի։

Լուսաբացին մի անգամ ձայն տալուց իսկույն վեր թռա և արագ հագնվեցի։ Բակում պապս հագցնում էր ձիու սանձը։ Քիչ հետո երկուսով նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք։

Երբ հեռացանք գյուղից, ամեն ինչ ինձ համար նոր էր և անծանոթ։ Իմ հարցերին վերջ չկար։ Ու դեռ մեկի պատասխանը չստացած, մյուսն էի տալիս, իսկ պապս դողդոջ ձայնով պատասխանում էր, երբեմն կանչում ձիու վրա և սանձը ձգում, երբ ձին ոտքը դիպցնում էր քարին։

— Հրեն է՛, էն սպիտակ տունը, կտուրն էլ կարմիր,— ցույց տվավ պապս սարի գագաթից,— պրիստավն էնտեղ է նստում։

— Պապի, որ Թագավորը գրած լինի, թե իրավունք եմ տալիս, քեռին քանի՞ օրում կգա։

— Մի աչքը ճպելում։ Թագավորի համար ինչ։ Ուզենա մի օրում հազար ոչխար մորթել կտա։

— Հազար ոչխա՞ր...

Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ էինք։ Ինչքա՜ն նորություն կար ինձ համար։ Այստեղ փողոցներն ավելի լայն էին, տներն ավելի գեղեցիկ։ Փողոցում շատ ժողովուրդ կար։ Խանութների առաջ մարդիկ խռնվել էին

իրար՝ յուղ էին ծախում, կով, բուրդ, մեկը գովում էր իր ապրանքը, մյուսը՝ բարձրաձայն սակարկում գնորդի հետ։ Մի քանի հոգի բարևեցին պապիս։ Այդ ինձ ուրախություն պատճառեց։

— Էս հեռու տեղը ո՞րտեղից են իմ պապիս ճանաչում,— մտածեցի ես։

Սպիտակ տան առաջ իջանք, ձին քաշեցինք բակի ստվերը։ Սանդուղքի վրա նստել էին գյուղացիներ՝ հայ, թուրք, ոմանք զրուցում էին իրար հետ, ոմանք պատի ստվերում պառկել էին, գլխատակին աղլուխի մեջ փաթաթած պաշարը։ Պապս մոտեցավ և խառնվեց նրանց։ Մի րոպե ես նրան իմ աչքից կորցրի. սիրտս ահ ընկավ և երբ տեսա նրա սև փափախը, կանչեցի.

— Պապի՛...

Ժպիտն երեսին մոտեցավ, պատվիրեց որ ձիուն լավ նայեմ և չթողնեմ, որ մոտենա մյուս ձիերին։

— Քեզ քացի կտան, աչքդ վրան պահիր,— և հուսադրելու համար ասաց.— Թե որ պատասխանը եկած լինի, քեզ համար խուրմա եմ առնելու...

Նրա խոսքը կիսատ մնաց. սանդուղքի գլխից մեկը կանչեց.

—Աղամով Արություն։

Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց արագ հասնելու սանդուղքին։ Աստիճանների վրա նստած գյուղացիները նրան տեղ տվին անցնի։ Հետո պապիս սև փափախը ծածկվեց դռների ետևը։

Ձիու սանձից պինդ բռնած, ես աչքս չէի հեռացնում փակ դռներից։ Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում պսպղան կոճակավոր մարդիկ, աստիճաններին նստած մարդկանցից ոմանք ոտքի էին կանգնում և նրանց խոնարհ գլուխ տալիս։ Իմ աչքին բոլորն էլ պրիստավ էին, ու ես չէի կարողանում ջոկել, թե նրանցից որն է ավելի մեծավորը։

— Պրիստավն էն է՞,— հարցրի ես կողքիս նստած

մի գյուղացու, որի գլխին փաթաթած կեղտոտ շորի վրա և երեսին կային արյան չորացած կաթիլներ։

— Էն ուրյադնիկ Վասոն ա. պրիստավն օթախումն ա,— ասաց նա։ Ես չհարցրի, թե ուրյադնիկը պրիստավի ի՞նչն է։ Սակայն հետաքրքրությունս ավելի սաստկացավ։ Եթե ուրյադնիկն այդքան շատ ոսկի կոճակներ ուներ, ապա ինչեր կլինի պրիստավի հագին։ Իսկ թագավո՞րը…

Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսը մեկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին։ Սանդուղքի քարին նստած մարդկանցից ոմանք իջան և կանգնեցին բակում։

Հանկարծ դռները բացվեցին, երևացին մի քանի ձեռքեր, իրար խառնված մարմիններ, անթիվ փայլուն կոճակներ և այդ ամենի մեջ պապիս ալեհեր գլուխը։

Ձեռքերն իջնում էին նրա գլխին։

Ու մինչև ես բարձր կանչեցի և ձիու սանձից բռնած վազեցի սանդուղքի կողմը,—պապս արդեն թափ էր տալիս փեշերը։ Վերևից մեկը ոտքով շպրտեց նրա սև փափախը։ Դռները նորից փակվեցին։

Մի քանի հոգի սիրտ արին և մոտեցան մեզ։ Սակայն ոչ ոք ծպտուն չհանեց։ Իսկ երբ սանդուղքի վրա երևաց ուրյադնիկը, նրանք իսկույն հեռացան։ Պապս փոշոտ գլխարկը թափ տվեց ու դարձավ ինձ.

— Ձին պահի, բալաս… Պատասխանը չկա։

Բերանից արյուն եկավ։ Ես տեսա նրա ջարդված ատամը։ Արյունը թքի հետ խառնված կաթում էր նրա արխալուղի վրա։

Ձին մոտ քաշեցի։ Մեր գյուղացի մեկը օգնեց ինձ ու պապիս՝ ձին նստելու։

Մենք անխոս ճանապարհ ընկանք։

Պապս գլուխը կախել էր և ձախ ձեռքով բռնել ծնոտը։ Ես պինդ գրկել էի նրան, գլուխս հենել մեջքին։ Լսում էի նրա ընդհատ շնչառությունը։

Նա հեկեկում էր։

էլ չկարողացա ինձ զսպել, և արցունքներս, ամբարտակը պատռած ջրի նման, ժայթքեցին դուրս։ Ես ավելի պինդ փաթաթվեցի նրա մեջքին։

Երեկոյան, երբ պապս, տատմների ցավից տնքալով, հազիվ լսելի պատմում էր, թե ի՞նչ եղավ ներսը, երբ ներկայացավ պրիստավին, երբ Մուքելանց Առստամը պրիստավի ականջին փսփսաց,— պրիստավը փրփրեց, հայհոյեց և ոտքը գետին տալով բղավեց.

— Ես քեզ ցույց կտամ, թե ինչ ասել է թագավորին նամակ ուղարկել։

Պապս իզուր էր փորձել թարգմանի միջոցով հայտնելու, թե ինքը ռուսաց թագավորին նամակ է ուղարկել միայն իր որդու՝ Եգոր Աղամովի մասին։

— Բերանս բաց արի թե չէ, մի անգամ խփեց։ Աչքերս սևացան... էլ միտս չի, թե ինչպես դուրս գցեցին... Առստամը բեղի տակ ծիծաղում էր...

* * *

Այն օրից շատ տարիներ են անցել։ Պապս վաղուց է մեռել։ Նրա գերեզմանի հողը նստել է, և թեք է ընկել գերեզմանաքարը։

Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է։ Երբ հիշում էր այն օրը, դեմքն այլայլվում էր, և աղոտանում էր նրա հույսը։ Սակայն հետո նորից հուսադրում էր իրեն էլ, մեզ էլ։

— Նազու աղջիկ, ես մեռնում եմ։ Հուր հավիտյան պարտական մնաս, թե՞ պատասխանն ստանալիս չգաս և իմ գերեզմանին իմաց չտաս,— ասել էր նա վերջին լուսաբացին։

Նրանից մի տարի հետո մեռավ և տատս։

Նազու աղջիկն էլ դատարկ ձեռքով էր պառկել նրա կողքին։ Ու նրա հետ թաղել էին և թղթի այն կտորը, որ իբրև թանկագին ավանդ պառավը պահում էր սնդուկի մեջ։

Ու այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Ադամովը։

...Շատ տարիներ են անցել։ Այդ անցյալը ինձ համար դարձել է հիշողություն, որ հետզհետե ընկղմվում է մոռացության անդունդը։ Միայն երբեմն աչքիս առաջ երևում է իմ Արթին պապի ալեհեր գլուխը, նրա կապույտ աչքերը և խեղճ ժպիտը։ Սակայն հանկարծ ավերվում է և այդ պատկերը, նրա ժպիտը դառնում է ցավ, և ծնրունու ջարդված ատամից նրա արխալուղի վրա ծորում է արյունը։ 10

## ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ

*Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները։ Նրանք խրտնած ոչխարի պես փախչում են ձորերով։ Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնուսները։ Քարափոր տներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը։*

*Լուսանում է. լեռան ետևից ելնում է արևը, մամուռից պոկվում են անձրևի կաթիլները և ջինջ արցունքի նման շողշողում։*

*Տերրասաձև բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահռելի։ Ահա մեկը՝ ռնգեղջյուրի մռութը հառել է մի ուրիշի, որ նման է վիթխարի գորտի։ Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես ծագող արևի դեմ խոնարհվել է հեթանոս քրմուհին։ Նրանցից բարձր՝ քարե արծիվը ճիգ է անում թևերը թափահարելու և չի կարողանում։*

*Այս մեր գյուղի, մեր Գյունեյ թաղի թիկունքն է, մի խավար լաբիրինթ, որի խոր ձորերում բարակ առուն վշշում է փրփրած հեղեղի նման, ուր ծառի ոտքի տակից գլորված ավազը խուլ արձագանքում է։*

*Ավելի խորը Դրնգանն է, լռակյաց, հիվանդոտ և աղքատ մարդկանց բնակավայրը, ուր ամառվա երկար արևը հազիվ մի ժամ ջերմացնում է։ Տարին բոլոր այդ ձորերում ստվեր է, խոնավություն։ Մարդիկ ապրում են քարանձավներում և բարձրանում են քարե սանդուղքներով։ Ուռենու մամռոտած փչակով ժայռից ժայռ ջուր են բե-*

րել ու քարերի վրա բազմացրել ընկուզենի։ Հորդ անձրևին ավազախառն հեղեղը ահագին վշշոցով իջնում է ժայռերից, աղմկում, քամուց ընկուզենիները խշշում են, ձգում են արմատները և կռանում ձորի վրա։

Մեր Գյունեյ թաղն արևոտ է, գետի ափին։ Ճանապարհը ձգվում է գետի եզրով, անցնում կամուրջի հին կամարների վրայով և քարափի լանջով գնում դեպի քաղաքը։ Ջրաղացները սահմանն են։ Քարափի գլխին նավթի պահեստն է, որի ստորոտով ջուրը շառաչելով իջնում է ջրաղացների վրա։

Արևը չորացնում է ժայռերի խոնավությունը։ Տաք ու փափուկ գոլորշի է բարձրանում աթարի դեզերից, բակերից ու բոստաններից։ Անա զիզին փեշերը շաղաթաթախ, քաղում է կանաչ պամիդորը, գոգը լցնում։ Շեմքի առաջ չոր խսիրի վրա մեկնվել է կատուն, մռռում է, աչքերը կիսախուփ անելով։

Անա զիզին կուզեկուզ բարձրանում է քարի վրա և կանաչ պամիդորները շարում պատուհանի փայտերին, որ ավելի շուտ կարմրեն...

* * *

Յոթ-ութ տարեկան երկու մանուկ բարձր ժայռի գլխից նայում են Գյունեյ թաղին, դողդողացող գոլորշուն, Անա զիզու բոստանին, աթարի դեզերին... Դիմացը, ընդարձակ տափարակի վրա, քաղաքն է։ Արևի տակ շողշողում են թիթեղյա կտուրները, կարծես տները ծածկված են ապակիով։ Ապակեշող տների մեջ ցոլանում է «ռուսաց ժամի» ոսկեզօծ գմբեթն ու խաչը։ Արևի ճառագայթներն արտացոլում են այնպես փառահեղ, կարծես գմբեթն է արևը, որ հրդեհվում է տների և կանաչ պարտեզների մեջ։

Գետի ափին կանայք ցորեն են լվանում։ Նրանք կռացել են և ձեռքերը ջրի մեջ հետ ու առաջ են տանում։ Մի քանի կտուրների վրա դեղնին են տալիս դդումները.

*ամայի բակերում օրորվում է արևի տակ փռած գույնզգույն լվացքը։*

*Մանուկները միատեսակ են հագնված՝ երկուսն էլ տրեխավոր, չթե հասարակ շապիկ։ Նրանցից մեկի գոտին ծոպավոր է, կապույտ փնջերով։*

*Աջ ու ձախ խոր ձորեր են... Ահա Գայլաբունի ձորը՝ հատակը մութ ու խոր. վշշոց է գալիս ներքևից, ջո՞ւր է վազում, թե սառը քարանձավներում շաչում է քամին։ Քար են գցում և կռացած ականջ դնում։ Ապա լուռ իրար են նայում. նրանք չեն կարողանում որոշել՝ ջո՞ւրն է վշշում, թե՝ քամին։*

*Վայրի աղավնիների երամը փռռոցով անդունդից դուրս է թռչում և գլորվող քարի աղմուկից վախեցած, ճախրում արևի տակ, ապա նորից իջնում մութը։ Արևի տակ փայլփլում են նրանց ճերմակ թևերը։ Հետո ներքևից հարյուրավոր թևեր թափահարում են և հետզհետե սուզվում անդունդը։ Մանուկները լսում են լուռ և, երբ այլևս ձայն չի գալիս ներքևից, կամաց հարցնում են.*

*— Ո՞ւր կորան...*

*Վեր են կենում մանուկները, հացի կապոցն առնում և բարձրանում դեպի բրուտի քարանձավները։ Մարդկանց ոտքերը և ձիերի սմբակները փորել են նեղ արահետ։ Որտեղ քարը փուխր է, փոս է ընկել։ Իսկ կարծր տեղերը պսպղում են կապույտ փայլով։ Այդ արահետի կապերն են՝ սանդուղքաձև, որոնց հասնելիս ձին գլուխը կռացնում է, հոտոտում և ապա զգուշությամբ ոտքը փոխում, ինչպես սառույցի վրա։*

*Եվ ինչ շատ են արահետները, որ կոշտացած ձեռքի երակների նման ցանց են կապել քարափների, ժայռերի ու քերծերի վրա, ճյուղավորվում են, բաժանվում իրարից, մեկը մի ձոր է իջնում, մյուսը բարձրանում մի քարափ, մի տեղ լայնանում, մյուս տեղը բարակում,— և դարձյալ խառնվում իրար։*

*Կա ձմեռվա ճանապարհ, որ անցնում է արևկող*

տեղերով, վտակների ավազոտ հունով, կա գարնան ճանապարհ, կա այծի արահետ, որ բանուկ է, երբ կանաչում են քարափի ծերպերին բուսած թփերը։ Այծերը ժայռի ողորկ լանջով քայլում են, դունչը մեկնում մի ծաղկի, որ գլուխը կախել է անդունդի վրա։

Մանուկները գնում են ծանոթ արահետով. մյուս կածանները նրանց անծանոթ են և երկյուղալի։ Ո՞վ գիտե ինչ մութ ձորեր են մտնում. ա՛յ, հենց այս մեկը, որ կեռմաններով իջնում է Հյումբաթի ձորը, այնտեղ, ուր ապրում է լխեմնը, գանգուր մազերով այն կենդանին, որ գայլի նման չորեքթաթ է գնում, իսկ ծիծաղում է ինչպես մարդը։

Ջինջ ուրախություն է պատում ինձ, երբ գրում եմ այս տողերը ժայռերի մեջ կորած երկու մանուկների, գանգուր մազերով լխեմնի և բրուտների քարանձավի մասին, որի կիսամթում բրուտը ոտքով պտտեցնում է փայտե «չարխ»-ի կլոր տախտակը և դեղին կավից կերտում գավաթ ու կուժ։

Ես և իմ ընկեր Անդոն հաց ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար։ Գունավոր աղլուխի մեջ Անա վիզին փաթաթել է լավաշ, խորոված սխմինդր, սխտորած լոբի, մի քանի վարունգ և մի քիչ պանիր։

Բրուտի քարանձավը երկու մասից է՝ առաջինն ավելի ցածր, երկրորդը՝ բեմի չափ բարձր։ Առաջին մասում «չարխ»-ն է, ջրի կուժը և կավե ցեխը. երկրորդ մասում բերնի վրա շարված են դեռ չթրծած կժեր, կուլաներ, գավաթներ և դորակներ։ Քարանձավը դուռ չունի։ Տուն գալուց բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները։

— Ա՛յ արևնիդ կծեմ, եկա՛ք,— կանչում է բրուտ Ավագը քարանձավի ներսից։ Իսկ մենք հևհև ներս ենք մտնում։ Էլ սարսափելի չեն ժայռերը, երբ հնչում է այդ թավ, կրծքային ձայնը։

— Ա՜յ ձեզ մատաղ, էս կողմը նստեք, էդտեղ փոս է...

Դրսի արևից հետո մեր աչքերը դժվար են տեսնում քարանձավի ներսը։ Իսկ բրուտը կարծես ուրախացած մեր ներկայությունից, ավելի արագ է շարժում ձեռքերը։ Նրա ոսկրոտ մատների արանքից լպրծուն կավը հոսում է անընդմեջ, ապա մատները գրկում են կավե սյունը։ Դառնում է չարխը, ձգվում է կավե սյունը, բարակում, ապա նստում է նրա բռունցքի տակ։ Այս անգամ ձեռքը թաթախում է կավաջրի մեջ և կոխում կավե գնդի մեջ։ Անորոշ է ձևը, բայց ձեռքերը այդ հարափոփոխ զանգվածին կերպարանք են տալիս։

— Էս ա հա՜,— և ճղփում է կավը, կարծես ճահճուտում բադ է կռնչում։ Թռչում են ցեխաջրի շիթերը։—Էս կուժն էլ պրծնեմ,— և տնքում է բրուտը, ամբողջ ուժով սեղմում կժի ներսը,—վեր եմ կենալու...

Արդեն չարխի վրա ֆռռում է կժի նման մի բան։ Ոսկրոտ մատները սեղմում են վիզը, և հլու կավը ձգվում է, բարակում է կժի վիզը։ Մնաց ունկը շինի և ոսկրով նախշի կողերը։

— Հե՜-հե՜-հե՜յ, Եգոր հե՜յ,—դմբդմբալով, պատեպատ գնում է նրա կանչի արձագանքը։ Բոլոր կժերը, դորակները գվգվում են։ Եգորը նրա հարևան բրուտն է. ապա լսվում է պատասխանը, կարծես արձագանքը հետ է գալիս՝ «հո՜ւ-հո՜ւ...»։

— Անդո՛, վազի՛ ասա գա, հաց ուտենք...

Ես մնում եմ մենակ։ Տեսնում եմ ինչպես է հագցնում ունկը, քարանձավի ճեղքից հանում է հին ոսկորները, որոնցով նրա պապերը դորակների և կժերի վրա գծել են նույն նախշերը։ Բրուտը ոսկորի ծայրը սրբում է թևով և գծում ո՜վ գիտի որպիսի քարանձավաբնակ մարդու խաղ։

Իսկ չարխը շարունակ դառնում է։ Բրուտի աջ ոտքը իջնում է փոսը, բարձրանում, մարմինն օրորվում է։ Ապա հանկարծ չրխկում է մի բան, չարխը դանդաղում է,

*ձեռքերը պոկում են կուժը և բարձր պահում։ Այդ բոլորը տևում է մի ակնթարթ։*

*— Բարի վայելում,— նույն ակնթարթում ասում է բրուտ Ավագը և քարից բռնելով դուրս գալիս փոսից։*

*Գինի՞ պիտի խմեն այդ կժից, թե աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի, և ո՞վ է այն հարսը, որ մեջքը օրորելով այդ կուժը պիտի կրի,— բոլորին, այդ անհայտ հարսներին և աղջիկներին է ասում բրուտ Ավագը պապերից լսած խոսքը։*

*— Հո՛-հո՛-հո՛,— հռհռում է Եզորը, փակելով մուտքը։ Նա հանկարծակի է հայտնվում, և հռնդոցը սարսուռ է մաղում ինձ վրա։*

*Արև ենք դուրս գալիս։ Ջոր ցեխից տախտակ դարձած զոգնոցը թխթխկացնելով, մեր հետևից լոք լոք է անում Եզորը, կաղ ոտը քարշ տալով։*

*— Հը, բաչօղլի, Գյումեյ թաղը ո՞նց ա... Մեռնողն ա շատ, թե ապրողը։*

*Ես աչքերս բարձրացնում եմ նրա կողմը և չեմ պատասխանում։ Նա նորից է հռնդում՝ «հո-հո-հո», բայց արևի տակ սարսափելի չէ նրա ծիծաղը։ Խղճահարություն է իջնում ինձ վրա, երբ տեսնում եմ նրա գզգզված մազերը և ցեխի շիթը այտի վրա։ Նա ինձ թվում է բարի մարդ, ինչպես բրուտ Ավագը, և ես մտածում եմ, թե ինչո՞ւ նա գյուղում չի երևում, ինչո՞ւ նրան անվանում են «շաշ»։*

*— Անդո, աշխարհում խելոքն է շատ, թե՞ սարսաղը...*

*— Սարսաղը։— Իսկ բրուտը բաց է անում Անա զիզու պաշարը։*

*— Ա՛յ մալադե՛ց,— բղավում է նա։— Պահ, պահ, խիա՛ր, կանաչ խիա՛ր...— և առողջ ատամներով կիսում է վարունգը։*

*...Այժմ էլ, երբ գրում եմ մեր հին Գյումեյ թաղի մասին, օրերի մշուշից մոտենում է ինձ չոլախ Եզորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը սպիտակ մառախուղի միջից։*

Ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը, խոնավությունից փտած շապիկը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից։ Եվ նորից հռնդում է անասնական խրխինջով, ցցվում են մազերը, ինչպես տատասկի թուփը։

Պրոմեթեո՞ս էր նա, բանտարկված բրուտի քարանձավներում, թե՞ մի խեղճ սատիր...

* * *

Ահա մեր գետը, մեր զուլալ գետը։ Կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել։ Հորթերը վախվխելով, պոչները վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սարսռալով հետ գալիս։ Սառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ է նստում, ամպի տակ սառույցի հաստ շերտեր։

Իսկ երբ վարարո՜ւմ է... Կոճղեր է բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ այն, նոր հուն ճեղքում՝ ավերելով բոստան ու մարգագետին։ Հին կամուրջի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շպրտում կամարի հիմքերին, ասես զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի։

Գարնան մթնկա գիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է տարածում գետափի տներում, Դրնգանի ձորերում։ Ջաղացները լռում են, ջաղացպանը վառած լապտերը ձեռքին գիշերը մոտենում է գետին՝ տեսնի չի՞ բարակել։

Գյուղից ներքև, մի բարձր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում ժայռերից պոկված հսկա քարերի արանքում։ Ամեն տարի հեղեղն այդ քարերի վրա կիտում է ջարդված ծառեր, կոճղեր, թփեր, թռչունների քանդված բներ։ Գետը հասնում է քարե այդ մաղին թե չէ, կորչում է, ջրերը շառաչով ներքև են թափվում և կատաղած դուրս գալիս Նեղը։

Նեղը, Լաստի խութի կարանը... Բնական այդ մեծ

*քարայրում, որից սև ջուր է դուրս հոսում, իբրև թե ապրում է օձերի թագավորը, գոհարապատ թագը գլխին։ Անա գիզին ձեռքերը ծնկներին է խփում և աղաչում, որ Նեղում չլողանանք, ոչ էլ կարանի մոտ, այլ բաց տեղերը, ուր գետը փռվում է և հանդարտ հոսում ավազուտի վրայով։*

*— Հա՛, գիզի, հա՛... Մոտիկ տեղ ենք գնում։*

*Եվ Անդոն, ծաղկատար երեսով իմ ընկերը, նայում է ինձ, շարժում հաստ ու կարմիր շրթունքները, ձեռքով նշան անում դեպի ներքև, դեպի գետի արմունկը, փրփուր ջրվեժների մոտ։*

*Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար, պոչը երերում, ծվծվում ու գնդակի պես իրենց նետում ջրի երեսին պտույտ անող մժեղների երամը։ Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես նրանք թռչում են փրփուրի վրայով, կորչում ջրվեժի փոշու մեջ, նստում ցից քարերի ծայրին և անվախ ծվծվում, այնինչ չուրջը գետը կատաղությամբ կրծում է քարերը։*

*— Անդո, ա՜յ էն մեկին կարա՞ս խփես...*

*Անդոն կուզեկուզ մոտենում է, քարը բռան մեջ։ Քարի հետ ջրածիտը թռչում է և կորչում փրփուրի մեջ։*

*— Թե իմացա՜ր նրանք որտեղ են քնում...*

*— Նրանք չեն քնում։*

*Իսկ Անդոն օրորում է գլուխը։*

*— Նրանք ջրի վրա ճոճք են շինում, մեջը քնում... Թե գիզին թողար մթնով գայի, բոլորին կբռնեի...*

*— Բա լի՞սեմնը։*

*— Լիսեմնը էստեղ չի գա։ Նրա տեղը վերի ձորն է։*

*Ժայռերի ստվերոտ կողերը պատած են մամուռով։ Ջրի ցնցուղները թռչում են վերև, հասնում նրանց։ Ու երբ ժայռի տակով անցնում ենք, մամուռի ջուրն արճճի ծանրությամբ կաթում է մեր բաց գլխին։*

*— Էն ի՞նչ էր ֆշշաց...*

*— Սո՜ւս, օձ կլինի... Էստեղ օձի բներ են։ Որտեղ քեղ կա, էնտեղ էլ օձը։*

Ու սարսափով, վախից զգույշ կոխելով, ցատկում ենք քարից քար, ընկնում գետափի բանուկ ճանապարհը։

— Անդո՛, քեղն ո՞վ է տնկում։

— Օձը,— լրջությամբ և մեծի շեշտով պատասխանում է ընկերս։ Եվ համոզումը, որ օձը հողի մեջ թաղում է քեղի սերմը, ինչպես գիգին՝ կոտեմը, ու հետո ծլում և մեծանում է լայնեզր, ճեղքված տերևներով քեղը, որի տերևի կպած տեղը մրմռում է,— այդ համոզումն արմատանում է իմ մեջ։

— Անդո՛, էդ քեզ ո՞վ է ասել։

— Ջոլախ Եգորը։

— Բա նրան ո՞վ է ասել։

— Ո՞վ պիտի ասի։ Իրա գլխիցն է դուրս բերել։

Ու եզը չհասած, շորներս հանում ենք, կռնատակին դրած վազում։ Արդեն փրփուրների միջից մեզ են կանչում արևից խանձված մանուկները։

Անդոն քարից գցում է իրեն, օդի մեջ պտույտ անում և թաղվում փրփուրի ամենախոր տեղը։ Ապա գորտի նման դուրս է թռչում, պառկում տաքացած քարերի վրա։

— Անդո՛, կովը քեզ կուտի՞։

— Չէ՛, կատակի։

— Գոմե՞շը։

— Չէ՛։

— Ձի՞ն։

— Չէ՛... Մենակ ուղտը կուտի։

— Բա նա չի սատկո՞ւմ։

— Չէ՛, ուղտը ոչ օձից կվախի, ոչ քեղից։ Նրա թուքը լեղի է, օձի կծածի նման կվառի։

— Ո՞վ ասեց էդ։

— Ուղտապանը,— և մեջքի վրա ընկնում է ջուրը։

Իսկ ես նայում եմ ամառվա հստակ երկնքին։ Մի ծուռվիզ ամպ լողում է, կարծես տափարակում արածում է տկլոր ուղտը։ Նայում եմ ամպին և մտածում, թե Անդոն ե՞րբ է հարցրել ուղտապանից։ Երևի նավթ առնելուց.

*պահեստի առաջ հաճախ շոքում են ուղտերը, որոնք տիկերով նավթ են բերում։*

*Մեր լողալու չափը կապտելն էր։ Խշրտոցով իրար էին կպչում մեր ատամները, և, ինչքան էլ սեղմում էինք ծնոտներս, չէր հաջողվում ատամների կտկտոցին վերջ տալ։ Արևը թեքվում էր, ստվեր էր ընկնում գետի վրա, ու սկսվում էր բարակ քամին։*

*— Է՜ հերի՜ք... Դուրս ե՜կ։*

*Վերադառնում ենք այգիների ճանապարհով։ Քար ենք գցում այս թթենուն, այն ընկուզենուն, ցանկապատի վրա կախ ընկած մոշն ենք ուտում, ամեն աղբյուրից ջուր խմում, մինչև հասնենք կամուրջի գլուխը։*

*— Անդո՜, Անա զիզին հրեն դռանը։*

*— Դու առաջ անցի։ Որ հարցնի, ասա Մեծ այոր բաղում թութ էինք ուտում։*

*Իսկ Անա զիզին երեկոյան դեմ մեր բակն էր գալիս ու մորս հանդիմանում.*

*— Ո՞ւր է էն փուշը... Ջեռս ընկնի, ականջը հլորեմ։ Հալավը քար ու քոլի են գցել, ճղոտել։*

*— Մեր անիրավն էլ գոտին է կորցրել,— պատասխանում է մայրս։*

*Երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր չարաճճի արարքները, թե առավոտից մինչև իրիկուն անհաց կորչում ենք այգիներում, «վաթսուն անգամ մտնում ջուրը դուրս գալիս» և կապտած վերադառնում։ Նրանք գանգատվում էին մեզանից, իսկ Անդոն գլուխը պատից վեր էր հանում և աչքով անում։*

*— Աղջի, ծեծած աղ չունե՞ս, մի բուռը տաս,— վերջացնում էր Անա զիզին։*

*Նրանք տուն էին մտնում, իսկ մենք ծլկվում էինք դեպի ձիթհանքը, մեր խաղերի իրիկվա տեղը։*

* * *

Նստել եմ ծիրանի ծառի տակ, տաքանում եմ ինչպես քարը, ձյունից մրսած գետինը, ծառերը, որ դեռ մերկ են և արդեն թխանում են արևի ջերմությունից։

Մերկ ծառերի արանքից երևում է քաղաքը, գունավոր տները։ Մխի ու փոշու կապտագույն շղարշ է փռված քաղաքի վրա։ Ավելի հստակ են երևում մոտակա կավե տները, այգիների մեջ ընկած ամայի հնձանները։

Քամին խշշացնում է չոր տերևները, որոնք թռչում են քարերի վրայով, իրար հրում, փաթաթվում ոտքերիս և քչփչում, ինչպես առվակը. գարո՜ւն է, գարո՜ւն է...

Քաղաքի կողմից քամին ձայներ է բերում։ Լսելի է, թե ինչպես մեխում են տախտակը։ Թա՛խկ, թա՛խկ, հնչում է թիթեղագործի փայտե մուրճի խուլ ձայնը։ Մի շուն կաղկանձում է։ Բլուրի վրայից ես տեսնում եմ կաղկանձող շանը, որ ոտը քարշ տալով դուրս է թռչում մի փոքրիկ հյուղակից։ Նրա հետևից դուրս է գալիս մի կին, որ ինչ-որ բան է շպրտում շան կողմը։ Մի՞թե այդ հողաթումբը տնակ է, և մարդիկ են ապրում այնտեղ։ Նույնիսկ դուռ ունի, որովհետև կինը դուռը վրա է դնում և մի բան շալակած իջնում գետի կողմը։ Այնտեղ երկու կին լվացք են փռում քարերի վրա։ Նրանցից մեկը կռանում է, լվացքը լողլողում գետի մեջ, մյուսը քամու առաջ փռփռացնում է կապույտ, կարմիր լաթերը և ապա մեկնում։ Առաջին կինը մոտենում է նրան. նա ձեռքերով ինչ-որ բան է ասում նրանց։ Երևի անիծում է շանը։ Եթե այդ կինը բլրակի վրա լիներ, կտեսներ, որ շունը վերադարձել է, պառկել փակ դռան առաջ, իբրև հավատարիմ պահակ և լիզում է իր ցաված ոտքը։

Սև ժապավենի նման սողում է գնացքը։ Ծուխը բարդ-բարդ հետ է գնում ու նստում դաշտերի վրա։ Շոգեմեքենան սուլում է. քամին բերում է նրա խուլ փնչոցը։ Երևի հիմա ուղևորները վագոնների պատուհաններին են սեղմել իրենց ճակատը և սպասում են, թե երբ կերևան կա-

յարանի շենքերը։ Երևի կա մի աղջիկ, որի համար ամենից դժվարը այդ րոպեներն են։ Նա էլ ունի մի խրճիթ, որի դուռը փակել ու հեռացել է։ Պերրոնի վրա կդիմավորի նրան մեկը, և աղջիկը սրտի դողով կբացի սիրո դռնակը։

Քամին խշշացնում է տերևները։ Չքանում է գնացքը... Փակում եմ աչքերս, և տերևների խշշոցը հիշեցնում է ինձ լուռ ընթերցանության ժամը դասարանում։

Դասարանում... Ծիրանի ծառը ստվեր է գցել տետրակիս վրա։ Արևի շողը փայլփլում է մատիտի ծայրին և արտացոլում եղունգիս վրա։ Մեկը բոթում է թևս։

— Մեծատառ Ժ-ն ո՞նց է։

— Է՜...

— Մի շվի կտամ։

— Այ, տե՛ս,— և ցույց եմ տալիս։

— Վերջի՛ նստարա՛ն, լռությո՛ւն,— սաստում է ամբիոնին կռթնած ուսուցիչը։ Ծռռում են նրա կոշիկները։ Մենք թեպետ վայելչագրության տետրակի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս։

Շատ է խանգարում ծիրանի ծառը, որ բուսել է մեր դասարանի միակ պատուհանի առաջ։ Երբ փչում է քամին, աղմկում է ծառը, ճղներով թրխկացնում պատուհանը։ Նրա ստվերն ու արևի դեղին բծերը թրթռում են իմ տետրակի վրա, օրորվում, ինչպես ջրածտի ճոճքը։

— Վազի՛ր, զանգը տուր,— և օրապահը թռնում է տեղից։

Սկսվում է ամենից զվարթ և աղմկալի երկու րոպեն, մինչև զանգը հնչի, և վազենք բակը։ Բոթում ենք իրար, կսմթում, մի խոսքով ելք է ստանում հոգնությունից և ակամա լռությունից զսպված մեր մանկական զվարթությունը։

Այս չոր ծիրանի տակ նստած, գարնան այս պայծառ օրը, երբ ուրախ արևը մեղմել է քարերի մռայլությունը, ես գրում եմ իմ մանկության, ծիրանի ծառի և իմ ընկեր Անդոյի մասին, և ինչպես դեղնած տերևները խշշալով

փարվում են ոտքերիս և քչքչում, այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում.

— Ինձ էլ գրի՛ր։

Նուշիկն է։ Վիզը բարակ, դեղնած աղջիկը։ Նրա սև աչքերը խոշոր են ու տխուր։ Նա հաճախ է լաց լինում։ Հայր չունի, իսկ մայրը ուրիշների դռանը լվացք է անում։ Երբ ցրտում է կամ խոնավ է գետինը, Նուշիկը ներս է մտնում, մրսած մատները գոգնոցի տակ։ Երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է՝ հաց է և խորոված կարտոֆիլ։

Նուշիկը մեզ հետ է լինում։ Մնացած աղջիկները վախենում են Անդոյից և նրան ձեռք չեն տալիս։ Մի անգամ Մաշոն (նրա հայրը նստում էր նավթի պահեստի առաջ և, երբ հաճախորդ չէր լինում, նարդի էր խաղում «ռուսների» հետ),— Մաշոն մի անգամ դասարանում Նուշիկին ասաց, որ նրա մայրը լվացքից մի կտոր գողացել է։ Նուշիկն արտասվեց.

— Մամաս գող չի՛։

Ուսուցիչը ներս մտավ։ Դասն սկսվեց։ Իսկ Նուշիկի նիհար ուսերը ցնցվում էին։ Կուչ էր գալիս, կարծես մրսում էր։

—Մաշո՛,— ասաց դասամիջոցին Անդոն,— տեսնո՞ւմ ես էս դանակը։

Մաշոն տեսավ դանակը և արտասվելով վազեց ուսուցչի մոտ։

— Դու քեզ լավ չես պահում, Անտոն... Փողոցային երեխայի նման ես։

Ուսուցիչը խլեց դանակը, իսկ մյուս օրը Անա զիզին եկավ մեր տունը։

— Աղջի, մեր ղմալթին ձեր տանը չի՞...

«Ղմալթին» կեսը ժանգոտ դանակ էր, կոթը ոսկոր։ Անա զիզին նրանով էր քաղհանում կոտեմի մարգը։

Անդոն Մաշոյին ցույց տվեց «ղմալթու» ծայրը և վախեցրեց։

*— Թե վարժապետին ասել ե՞ս...*

*Ու Մաշոն վարժապետին չասաց։ Անա գիզին գարնանը ղմալթին փոխարինեց սուր ոսկրով։*

* * *

*Երեկո է. սարերի սպիտակ գագաթներից կապույտ ցոլք է բարձրանում։ Պարզ երևում է լեռնաշղթայի թեքը։*

*— Հորիզոն կոչվում է երկնքի և երկրի միացման գիծը...*

*Կրկնում եմ մտքիս մեջ այն, ինչ շատ տարիներ առաջ բարձրաձայն պատասխանում էի աշխարհագրության դասին։*

*— Դո՛ւ ասա, Անտոն...*

*Անտոն կրկնում է։*

*—Նստի՛ր։*

*Ներս է մտնում ավագ ուսուցիչը։ Ոտքի ենք կանգնում։ Մինչև շաբաթվա վերջը Թոշակ չբերողը կհեռացվի դասարանից։ Ավագ ուսուցիչը գլուխը բարձրացնում է, նայում լուռ դասարանին։ Ապա նա հեռանում է։ Կապույտ գլոբուսը պտտվում է աշխարհագրության դասատվի ձեռքին, և մենք խմբով կրկնում ենք.*

*— Երկրագունդը կլոր է՛...*

*Նուշիկն ուշանում է և «է»-ն ասում է առանձին՝ դողացող ձայնով։ Աղջիկները ծիծաղում են. Նուշիկը գլուխը խոնարհում է, իսկ վարժապետը քանոնը բարձրացնում է, քանոնի հետ բացվում են մեր բերանները, և մենք նորից ենք կրկնում, որ երկրագունդը կլոր է։*

*Երեկոն կապույտ է։ Ծուխը ծալվեծալ փաթաթվում է ժայռին, ինչպես վայրի խաղողի որթը։ Ծխում է Դրնգանը, կրակները շարժվում են։ Այնտեղ մարդիկ իջնում են գետափի գոմերը։ Մի կով աղիողորմ բառաչում է... Գյուղը գիտե, որ բառաչողը Նարգիզն է, որի հորթը քարովն է ընկել։ Կովը լիզում է հորթի խոտով լցրած մորթին և չի զգում անասնական ջերմություն։*

— Անդո՛, բա թոշա՞կը։

— Թող նանը վերջացնի։

Անա գիգին կթում է բառաչող Նարգիզին, խոսում է նրա հետ, աղաչում, և կովը հանդարտում է, կարծես հասկանում է նրա լեզուն։

— Նանի՛։

— Հե՜յ։

— Բա թոշակն ուզում են։ Վարժապետն ասել է...

— Նանին քեզ մատաղ։ Նարգիզն էլ ցամաքել է, որ կաթը ծախենք։ Սպասի, հրես հերդ կժերը կտանի Գետերը։

Աշնանը բրուտները կուժ ու կարաս են տանում Գետերը և բերում են բրինձ, բուրդ, ցորեն։ Գետերը հեռու է։ Զոլախ Եգորը պատմել է, որ այնտեղ բուսնում է բամբակ, որ բրնձի արտերում թևավոր օձեր կան, քարերի տակ՝ սև կարիճներ։

Երեկո է... Քաղաքի փողոցները լույս են։ Խանութներում շողշողում են պղնձե սամավարներ, հայելիներ, ափսեներ։ Անդոն հոգնել է։ Ձեռքին թաշկինակն է, մեջը թարմ ձվեր։ Վերջացել է վայելչագրության տետրը։ Իսկ ձվերը չեն առնում։

Հոգնած գնում է բարձր տների առաջով։ Մեծ լուսավոր պատուհաններ են։ Նրանք էլ են շողշողում ինչպես խանութները։ Այնտեղ ապրում են «ռուսներ», Մաշոն, խանութի տերերը։ Այս մեկը Ներսես բեյի տունն է, իսկ նրա կողքին ապրում է պրիստավը։ Նա շատ շներ ունի, բարակ, նիհար շներ, որոնք ամբողջ օրը քնում են և թռչկոտում են, երբ պրիստավը գնում է որսի։

— Այ տղա, ի՞նչ ես ծախում,— կանչում է մի ծանոթ ձայն։

Մաշոն է։ Աղջիկն իջնում է վերևից։ Դարպասի դուռը բացվում է։

— Էս իմ տյոտյայի տունն է։

— Քանի՞ ես տալիս ձվերը,— հարցնում է կինը։

Անդոն կարմրել է։ Նա չի ուզում, որ Մաշոն իմանա, թե ինքը ձու է ծախում։ Անդոն չի ուզում, որ դասարանը խոսի։ Իսկ ուսուցիչը պահանջում է վայելչագրության տետրը։

— Ձվերը ծախու չեն,—կտրուկ ասում է Անդոն և գլուխը բարձր պահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր թաղը։

—Ես ուսումնարան չեմ գնում,— ասում է նա առավոտյան։ Բայց Անա զիզին թախանձում է, և նա գալիս է ինձ հետ։

—Անդո, նանին քեզ մատաղ, հրես հերդ կժերը կտանի...

* * *

Հայոց «ժամը»։

Սպիտակ կամարներ և նկարներ՝ ոսկեզօծ շրջանակների մեջ։

Նուշիկի մայրը լալիս է... Մի քանի կանայք հեկեկում են, ինչպես կհեկեկան ուրիշի դագաղի վրա։

Մեր դասարանը երգում է տխուր երգեր, երկա՜ր, երկա՜ր...

Նուշիկի համար ենք երգում։ Աղջիկը ձեռքերը խաչել է, ինչպես թևերը ծալում է սառած թռչունը։ Գլուխը մի քիչ թեքել է և հանգիստ քնել։ Երեսը առաջվա դեղին է, բայց գլխավերևը կարմիր ծաղիկներ են և սպիտակ մոմեր։ Ծաղիկների կարմիրը խաղում է նրա դեմքին, երբ թրթռում են մոմի կրակները։

Նուշիկի դագաղը հասարակ տախտակ է։ Վարպետը լավ չի ռանդել—մեխը երևում է։

— Ոտքը կծակի,— մտածում եմ ես և տխուր երգում Նուշիկի համար։

Անդոն չկա, նա չի եկել։

— Ես չեմ երգի... Չեմ ուզում։

— Դու քեզ անկարգ ես պահում,— բարկացավ ու-

սուցիչը։ Իսկ Անդոն լուռ հավաքեց գրքերը։ Դասարանն սպասում էր։ Ուսուցիչը նորից պահանջեց, որ նա էլ միանա խմբին, որովհետև Անդոյի ձայնը զիլ է և քաղցր։

— Չե՛մ գա,— համառեց Անդոն։

Ուսուցիչը դասացուցակը ամբիոնին խփեց և գնաց ուսուցչանոց։ Որտեղ որ է կգա ավագ ուսուցիչը։

— Անդո՛...

— Ասացի չեմ գնա։

Մտնում է «ավագը»։ Նա նրան անվանեց կամակոր, համառ, պահանջեց, որ խմբին միանա։

— Դո՛ւրս կորիր այստեղից,— գոռաց «ավագը»։ Աղջիկներից մի քանիսը գունատվեցին։ Անդոն վերցրեց գրքերը և գլուխը բարձր բռնած անցավ նստարանների արանքով։

— Անպատկա՛ռ,— շպրտեց նրա հետևից «ավագը»։

Անդոն դասարանի դուռը պինդ փակեց։

...Մենք ուղեկցում ենք դագաղը։ Փոքրիկ փոս է։ Կարծես ծառ պիտի տնկեն։ Դագաղն իջեցնում են։ Հեռանում ենք. մնում են մայրը և հարևան կանայք։

Գերեզմանատանը շատ մանուշակներ են բուսել։ Մենք մոռանում ենք Նուշիկին և փնջեր ենք կապում։ Իբրև փոքրիկ գազան՝ պատի վրայից ներքև է թռչում Անդոն։ Աղջիկները նրանից փախչում են։

— Ես ուսումնարան էլ չեմ գնա՜,— տխուր կրկնում է իմ ընկերը։

* * *

Քաղաքից խճուղին դուրս է գալիս, սլաքի նման ձգվում, կամուրջի մոտ կեռ տալիս, ապա ոլոր-մոլոր բարձրանում բարձր սարը։ Ու գնում է, գնում է խճուղին, ինչպես գետը, բազմաթիվ լեռնային արահետներ խառնըվում են նրան, և ինչքան գնում է, այնքան շատ է ծեծված, այնքան հին է ճանապարհը, և բազմաթիվ բանակ-

ներ, ժողովուրդներ տրորել են ճանապարհը, անցել՝ մեկը հյուսիս, մյուսը հարավ։

— Բռնի էս ճանապարհը, գնա՛, գնա՛ ու չի վերջանա։ Աշխարհը մեծ է, աշխարհը ծայր չունի։

Բրուտ Ավագը ինձ հողե փարչ է տվել և հողի մարդու օրհնություն։

— Ծարավես՝ կխմես։ Կուռդ դալար մնա...

Գիշերն անձրև է եկել, խոնավ է գետինը։ Կառքը աղմուկ չի հանում։

Ընկղմվում է Դոնգանը, քարերը ծածկում են մեր արևոտ թաղը, միայն գետափի տներն են երևում և ընկուզենիները։ Եվ ինչքան բարձրանում ենք, այնքան խոյանում է Ցից քարը։ Նրա տակն են բրուտների քարանձավները։

Երեկոյան հորթերն եկան, նրանց հետ հորթարած Անդոն.

— Գնում ե՞ս։

— Հա՛։

— Գնա՛։

Տխուր է Անդոն։ Հոգնել է, բայց չի գնում տուն։

— Էգուց հորթերն էն կուռը կտանեմ...

Կառքը բարձրանում է։ Սարի վրա ամպ է նստում։ Մեր թաղը չի երևում։ Շուտով այս ամպը կիջնի սարի վրայով և կփռվի մեր ձորերի վրա։

Մեկն ամպի միջից վազում է, ձեռքով է անում, կանչում է։ Զարմացած կառապանը քաշում է ձիերի սանձը։ Կառքը կանգնում է։

— Անդո՛,— և դուրս եմ թռչում կառքից։

Գյուղի երեխաները, երբ հրաժեշտ են տալիս, ոչ համբուրում են իրար, ոչ ձեռք են սեղմում։ Նրանք նայում են իրար, ինչպես մունջ մարդիկ։ Հեռացողը հեռանում է, ով մնում է տեղը, նայում է նրա հետևից մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը։

Կառապանը մեզ բաժանեց։

— Ճանապարհին կուտես,— և Անդոն իր տոպրակից հանում է բոված սիմինդր, որ ամեն առավոտ պատրաստում է Անա զիզին։

— Ունեմ, քեզ պահի...

— Չէ՛, իմը ա՛ռ,— և գլորվում են անիվները։

Ամպը կախվում է, Անդոն ու մեր հորթերը կորչում են ամպի մեջ։ Ջորը լցվում է կաթնագույն ամպերով։ Թաց գետինը խլացնում է վազող ձիերի դոփյունը։ Իսկ կառքը գնում է. լսվում է զանգակների ծլնգոցը. կարծես աղջիկները մանր ծափ են տալիս։

Հոգնածությունը նինջ է բերում։ Գլուխս հենում եմ մեկի տաք թևին։ Քնում եմ, ինչպես ծիծեռնակի ձագը մոր թևի տակ։ Երազում կառքը ամպերի վրայով է թռչում, դեպի խոր երկինքը։

Ահա աստղերը... Նրանք մեծանում են, նրանք շարժվում են։ Նրանք աստղեր չեն, այլ դեղին ու սպիտակ զառնուկներ, որոնք ձիերից խրտնած փախչում են, և զրնգում են նրանց պղնձյա զանգակները։

Աչքերս բաց եմ անում։ Մթնում է, ուրիշ սարեր են։ Մեր եկած տեղը ամպ է։ Երևի անձրև է մաղում մեր արևոտ թաղի վրա։

• • •

Քաղաքը տափարակի վրա է։

Դեպի արևելք, ուր մինչև հիմա էլ մնում են անհայտ շենքի ավերակները, տափարակը հանկարծ կտրվում է, կախվում խոր ձորի վրա, որի անդնդում մռայլ խոխոջում է մեր գյուղի գետը։

Տափարակը վերջանում է քարափի գլխին։ Ուղղաձիգ ժայռերի լանջով ընկնում է սպիտակ արահետը, որ տաք անձրևից հետո շողշողում է կրաքարի փայլով։

Միայն մարդիկ են անցնում այդ ճանապարհով։ Ոչ ոք չի կարող շալակին բեռ տանել այդտեղով։ Նեղ է, դժվարին կապեր, օձապտույտ կեռմաններ։ Իսկ ներքևը՝

ձորի երկու ափին, այգիներ են՝ քարերի վրա, քարակույտերի մեջ։ Ջուրը խոր է, ձորը տաք է... Մինչդեռ քաղաքի փողոցներում դեռ սևացած ձյուն կա,— ձորից տաք գոլորշի է բարձրանում, և սառած օձերը պառկում են քարերի փափուկ մամուռի վրա։

Ձորն ահավոր է, ձորում ամայի տխրություն է։

Մի քանի քարափոր մարագներ կան, որոնց մեծ մասի դռները կանաչել են։ Նրանց տերերը վաղուց չկան, խոնավ քարայրները նրանց մահից հետո տաք հարդի շեղջակույտ չեն տեսել։ Մարագների առաջ հին թթենիներ են, դարձյալ անտիրական։ Ով սիրտ ունի, ոտքի ջլերը պինդ են, իջնում է կեռմաններով, թափահարում թթենին, և քարերի վրա թափվում է սպիտակ, սև ու կարմիր թութը։

Այդտեղ են կարանները...

Բնական խոռոչներ են, որոնք խոր գնում են քաղաքի տակ։ Ո՞վ գիտե որտեղ է վերջը այդ մթին անցքերի։ Ամառվա շոգին այնտեղ սառն է, պատերը լպրծուն։ Բազմաթիվ ոսկորներ կան ներսը, ամբողջ կույտեր ժանիքների, ծնոտների, ողերի։ Դուք վառում եք կավե ճրագը և կռացած ներս մտնում, չոքեչոք գնում, քարերի վրայով մագլցում, կորչում քարի հետևը։ Դուք մեկնում եք ձեր ձեռքը մի դեղին կույտի, կարծում եք քար է, ձեր մատները խրվում են թաց ավազի մեջ, որ բարակ շերտով ծածկել է ոսկորների կույտը։ Եվ ճրագի լույսի տակ շողշողում է վարազի փայլուն ժանիքը, ու սարսուռը քարայրի սառնության հետ թափանցում է ձեր ոսկորների մեջ։

Առաջներում քաղաքի տափարակը, մեր թաղերը, ամբողջ ձորը խիտ անտառ է եղել, մթին խոռոչներ ու թավուտներ։ Մարդուց առաջ ձորերում ապրել են գազանները, և քարայրները եղել են նրանց որջերը։

Արևը թեքվում է սարի հետևը։ Քաղաքում զարթնում է երեկոյան աղմուկը։ Ջորանոցների կողմից լսվում է գիշերահավաքի փողի ձայնը... Բոլորովին մոտիկ կող-

պում են մի դարպաս։ Իսկ «ռուսաց ժամի» ոսկեփայլ գմբեթն ու խաչը դեռ լողում են արևի ալիքների մեջ։

Քարափի վրայով լայն ճանապարհ է, որ գալիս է Հեռավի այգիներից, անտառից, մեր գյուղի ցրված հանդերից։ Գյուղի ճանապարհն է, որ թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից։ Նույն խոչն ու խութը, նույն քարերը, տաք փոշին, ջարդված հասկերը, չորացած խոտը և անասունների աղբը։ Նույնիսկ գետինը գյուղի հոտն ունի։

Այդ ճանապարհը միայն մեր գյուղինն է։ Առաջ, երբ քաղաքը չկար. երբ քարափի կարաններում ապրում էր զանգուր մազերով լիսեմնը, մեր ճանապարհը հեշտ էր և անցնում էր այնտեղով, ուր քաղաքի բուլվարն է և «ռուսի ժամը»։ Տարեցտարի ճանապարհը հետ է գցվել, և եթե մի քիչ էլ քաղաքը հրեր, գյուղի ճանապարհը պետք է ընկներ հեղեղատի վրայով։

Ամառ երեկոները սպիտակ շորերով աղջիկներ ու տղաներ գալիս են ու քարափի վրա նստում։ Նրանք նվագում են մանդոլին, կիթառ, նրանք երգում են ռուսերեն, ապա բարձր ծիծաղում են, և ձորի քարանձավներում նրանց առույգ ծիծաղն արձագանք է տալիս ահավոր կերպով, ասես ձորը քրքջում է նրանց հիմարության հանդեպ։

Ելնում են աստղերը։ Երեկոյան դեմ նրանք դեռ աղոտ են, բայց շարժվում են, կարծես տիեզերքի անհուն խորքերից նրանք մոտենում են մեզ, ինչքան մթնում է՝ այնքան ավելի մոտ են աստղերը, այնքան ավելի շողշողում են՝ դեղին, սպիտակ, կապույտ...

* * *

Անդոն պառկել է կողքի վրա։

Նրա դեմքը կոշտացել է, շրթունքները հաստ են։ Վերին շրթունքի վրա դեղին աղվամազը փայլում է, ինչպես նոր ծլած սիզախոտը։ Աչքերն են առաջվանը՝ սև, ժիր, անհանգիստ։ Նա պոկում է խոտը, թափում է։ Այդ նրան

*ձանձրացնում է. աչքն ընկնում է ծղնոտի փշրանքին, ծղնոտը մոտեցնում է շրթունքին։ Հանկարծ լսվում է աղջկա հնչուն ծիծաղ։ Ծիծաղում է մի առողջ կուրծք։*

*Գլուխս դարձնում եմ այն կողմը։*

*— Ճանաչեցի՞ր,— հարցնում է Անդոն։— Մաշոն է...— պատասխանում է և ծամծմում ծղնոտի կտորը։*

*— Թիֆլիս է կարդում... Երկու տարուց կվերջացնի գիմնազը։*

*— Իսկ էն տղերքն ով են...*

*Էն մեկը Ներսեսենց բեյի տղան է, էն երկուսը սմատրիտելի տղերքն են, էն կանգնածը Սոնյան է։*

*— Նա մի դասարան ցածր էր։*

*— Ասում են լավ աղջիկ չի։*

*— Ի՞նչ է անում որ...*

*— Տղաների հետ միշտ գնում է բաղերը։*

*Այնտեղ կիթառ են նվագում։ Մաշոն երգում է, մի թավ ձայն մեղմ երկրորդում է նրան։*

*Անճանաչելի են թվում Սոնյան, Մաշոն։ Ինչպես ընկղմվող քարը, իմ հիշողության մեջ դողդողում է մեր դասարանը, ծիրանի ոսկեզօծ ծառը և ապա սուզվում մոռացության խավար խորքը։ Նրանք ուրիշ աշխարհից են, մենք ուրիշ։*

*Առաջ էլ այդպես էր... Ատելություն է ծնվում իմ ներսը դեպի այդ խումբը, որ ուրախ նվագում է, երգում։ Եվ օտարի պես նայում եմ նրանց կողմը։*

*— Անդո, հիշո՞ւմ ես Նուշիկին։*

*— Նուշիկը լա՜վ աղջիկ էր...*

*— Մայրը մնո՞ւմ է։*

*— Հա՛, էլի լվացք է անում։*

*Մեր հարևանները հեռանում են, մեր խոսակցությունն ընդհատվում է։ Մաշոն մեծացել, գեղեցկացել է։ Նայեց մեր կողմը, երեսը շրջեց։ Նա թափ է տալիս փեշերը, ինչպես առաջ, երբ նստարանից վեր էր կենում։ Նրանք հեռանում են, մթնում դեռ երևում է Մաշոյի սպի-*

տակ սիլուետը: Ինձ թվում է, որ նա գլուխը խոնարհում է և հիշում մեր դասարանը, մեր մանկությունը:

Էլ ուրիշ շատ զգացումներ են զարթնում իմ սրտում, ջերմ զգացումներ: Իմ սրտում էլ ատելություն չկա, և ես անտարբեր նայում եմ մթնում հալվող սպիտակ շորերով Մաշոյին:

* * *

Ամեն երեկո մենք հանդիպում ենք իրար նույն տեղը՝ ես ու Անդոն: Նա պառկում է կողքի վրա, ես նստում եմ քարին: Նա դեպի քաղաքն է նայում, դեպի գյուղի ճանապարհը, որով անցնում են այգիներից և արտերից վերադարձող հոգնած մարդիկ և եզներ:

Ներքևը, ուր հին մարագներն են, առավոտ կանուխ հավաքվում են մշակները: Անդոն նրանց հետ է: Քար են ջարդում և պայթեցնում են քարափները նոր առվի համար: Անդոն գիշերը քնում է տախտակների վրա և հսկում է մուրճերի, քլունգների կույտը:

«Իլիստրիկի» են կառուցում Բաղիրովի տղաները: Նրանք քաղաքում տներ ու խանութներ ունեն, նրանց մեծ եղբայրը Բաքու հարստություն է դիզել և վերադարձել է մեր քաղաքը էլեկտրակայան կառուցելու քարափի տակ, ուր գետը սահանքներ է գոյացնում:

Անդոն մշակ է, քար է ջարդում ցերեկը, երեկոյան ինձ պատմում է «իլիստրիկի» մասին, մշակների մասին և այնպիսի բաներ, որ չեմ կարդացել իմ գրքերում:

Երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին: Ես նրան պատմում եմ գիտեցածիս ամենալավը, կարծես ընծայում եմ իմ վերքերի ամենագեղեցիկը, ինչպես երեխա ժամանակ: Նա տնտղում է իմ ընծան և կարծես դժգոհ է, որ ուզածը չեմ պատմում:

Իսկ ինքն ինչե՞ր գիտի...

Վերի գյուղի ուսուցիչն ասել է, որ պատերազմը շուտ

չի վերջանա, և պիտի լինի «ահեղ հեղափոխություն», որ անտառում երկու զինված մարդ հարձակվել են փոստի վրա, սպանել են ստրաժնիկին, փոստը կտրել, որ Ներքի կարանում գիշերը մինչև լույս կարտ են խաղում, որ միրզա Դավիթի տղա գիմնազիստ Վանոն ամեն օր հոր դախլից փող է գողանում և տանում տալիս, որ մեր հայոց լեզվի վարժապետ Մինասի տանը «կոմիտե» է նստում և նրանց ներքնահարկը լիքը զենք է…

— Ո՞վ քեզ ասաց, Անդո…

— Իմացել եմ։

— Չի կարող պատահի, վարժապետին խսկույն կբռնեն,— առարկում եմ ես։

— Վարժապետը զենքը հենց կառավարությունից է ստանում։

Անդոյի աշխարհն ավելի հետաքրքիր է, ավելի խորը։ Մարդիկ երկուանում են իմ աչքին. վարժապետը ցերեկը դաս է տալիս, իսկ մթանը իջնում է ներքնահարկը և համփուշտ հաշվում, Վանին գրքերը թևի տակ առավոտը գնում է «սմատրիտելի» տունը, իսկ գիշերը կարանում թուղթ է խաղում։

— Անդո, ուզո՞ւմ ես սովորել…

— Իմ սովորելը վերջացավ։ Ապերը հրեն հիվանդ…

— Արի քեզ դաս տամ։

— Գիշեր-ցերեկ բանի եմ, ո՞նց սովորեմ… Հրես մոնտյորից թե գողացա մի բան սովորեմ…

…Այն ամառը ես մենակ էի բարձրանում բրուտների քարայրը, նստում էի բրուտ Ավագի դռանը, ծերունին ցեխոտ ոտքով դարձնում էր չարխը և անսպառ հետաքրքրությամբ լսում իմ պատմածը։ Երբեմն Ջոլախն էր գալիս։

Ամպամած մի օր մենակ իջնում էի բրուտների կածանով։ Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից վախեցած աղավնիները անհանգիստ ճախրում էին։

Ես զգացի մի ծանրություն, մի ծանր տխրություն։ Կարծես մի բան հասել էր, ինչպես պտուղը, ահա վայր պիտի ընկնի, և թեթևացած ճյուղը պիտի ձգվի։ Ես չգիտեի, որ իմ սրտի ծանրությունն այդ մռայլ ձորերն էին, տխուր արահետը, որով շատ քիչ մարդ է անցնում։ Ինչքան իջնում էի, այնքան արագացնում էի քայլերս, կարծես հետևում թողնում էի այդ ծանրությունը։

Երբեմն, տարիներ ընդ մեջ, եղել եմ մեր թաղերում։ Սակայն ամպամած այդ օրից հետո էլ չեմ բարձրացել բրուտների ճանապարհով։ Ինձ պատմել են, որ այնտեղ էլ ոչ մի չարխ չի պտտվում, որ մի մեծ ժայռ փլվել և տակովն է արել այն քարայրը, որտեղ աշխատում էր չոլախ Եգորը։

* * *

Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր։ Դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը... Մեր քարափն է, խավար ձորը, որտեղ ոչինչ չի երևում։ Մյուս ափը լույս է։ Քարերը սպիտակ են, ինչպես ձյունի կույտերը գարնան հալոցքի գիշերը։ Կարմիր ու սև եզները նստել են քարերի մոտ, նրանք անշարժ որոճում են, և թվում է, թե քարերը կարող են եզներ դառնալ կամ թե եզները, եթե շատ նստեն, կքարանան։ Մեկը փաթաթվել է մաշված կարպետի մեջ և քարի տակ քնել է...

Որքան պրպտում եմ, չեմ կարողանում որոշել, թե ե՞րբ եմ տեսել մթին ձորի լուսավոր ափը, կանաչ խոտերի վրա հանգստացող սև եզները։

Իսկ քարափի գլխին կանգնած ստվերն իմ ընկերն է, բրուտի տղան։ Նա սեղմում է իմ ձեռքը։ Ես փողոցի անկյունից հետ եմ նայում։ Դեռ կանգնել է քարափի գլխին, և դժվար է որոշել, թե որ կողմն է ուղղված նրա հայացքը։ Նա ձեռնափայտ չունի, բայց կռացել է այնպես, կարծես ծնոտը հենել է փայտին։

Նույն կառքը, նույն ճանապարհը, որ շողշողում է

մթի մեջ, ինչպես փրփուր ջուրը։ Նույն զանգուլակները և տխուր ձանձրույթը։

Եվ հանկարծ մթնում վառվեցին ճրագները, կարծես միանգամից լույսի ալիքներ ծփացին քաղաքի վրա, ինչպես քամուց ծփում է հասած արտը։

Ես մտածում եմ, որ Անդոն իջել է ձորը, Դամուրի ավերակ մարագը, որ կենդանացել է, խորացել, որովհետև ներսը մեքենաներ են դարսել և պողպատներ հագցրել ժայռերին։ Հիմա բանտարկված գազանի նման մոտորը մռնչում է խոնավ քարանձավում, որի կտուրից ջուր է կաթկթում։

Անդոն կրակ է արել դուրսը, մուտքի մոտ, որտեղ Քարը փորել են և խոռոչում օջախ սարքել։ Նա պղնձե սևացած թեյամանը կախել է կրակի վրա, և բոցը թըրթըռում է ձորում։

Շուտով բոլորովին կմթնի, օջախի կրակը կհանգչի, Անդոն կփաթաթվի մեքենայի ծածկոցի մեջ և հոգնած աչքերով մինչև լույս կնայի կարմիր լամպին, պղնձյա սլաքներին և փոկերին։ Հոգնած կոպերը կծանրանան աչքերի վրա, սակայն նրա զգաստ լսողությունը կհետևի փոկերի աղմուկին։

Սարից փչում է սառը քամին։ Կառքը բարձրանում է դեպի կատարը... Ներքևում թարթում են բազմաթիվ ճրագներ, նրանք հսկում են քաղաքի վրա։ Ճրագները հանկարծ ուժեղացնում են լույսը, ապա մեղմում։ Կառքը կորչում է սարի մյուս երեսը։ Իմ մտքում հրաժեշտի խոսքեր եմ ասում քաղաքին, Գյունեյ թաղին, մեր Ցից քարին և իմ մանկության ընկեր Անդոյին։

— Երեք անգամ եթե լույսերը սպիտակեն, ուրեմն մացիր...

Այդպես ասաց Անդոն, երբ դուրս եկանք քարանձավից։ Նա ինձ համար էր անում, այդպես ինձ էր հրաժեշտ տալիս։

Երրորդ անգամ ես չտեսա, թե ինչպես հանդարտե-

ցին ճրագները։ Քաղաքի վրա սպիտակ, կաթնանման լույս էր...

Սարի մյուս երեսը խավար էր։ Լուսինը ցածր էր, և սարի կատարը ծածկում էր ձորը լուսնի սպիտակ մանգաղից։ Կառքը գլորվում էր ցած, թվում էր, թե անդունդն ենք իջնում, անհատակ անդունդը։

Այսպես անդունդում սուզվում էր մեր Գյումնեյ թաղը, երբ իջնում էր խավարը, քաղաքը ողողվում էր առատ լույսով, իսկ գյուղում հանգչում էր վերջին կավե ճրագը։

Քարափի գլխից Անդոն նայում էր գյուղի կողմը և դառնացած ասում, որ պղնձե լարերը չեն անցնում գետի մյուս ափը, քարերի մեջ կորած մեր խավար գյուղը։

* * *

Իբրև վաղեմի պատմագիր, դողացող ձեռքերով ես գրում եմ իմ պատմության վերջին էջերը։ Հարկավոր է պատրույգը բարձրացնել, և մինչև ձեթը հատնի, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը։

Հիմա էլ մնում է մեր քարափը, իբրև հսկայի մատ՝ ցից քարը մեր թաղի գլխին։ Ուզում եմ, որ այս անզարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը։

Վրա հասան դառնաշունչ օրերը, ինչպես ցուրտ աշուն։ Արտերում հասած ցորենները ծլում էին, հողի մշակները մրսում էին խրամատներում և անվարժ ձեռքերով շարժում հրացանի փականակը։ Արճիճե կարկուտը ծեծում էր քարերն ու քարափները, հրանոթի գնդակը շառաչելով պայթում էր ծմակներում, սարսափահար անում մարդկանց ու գազաններին, ջարդում դողահար ծառերը։

Ձորեց ձմեռը, մահվան նման սառն ու անողոք։

Քաղաքում գզգզված մազերով մի մոնտյոր, մազութից սևացած շորերով, սանդուղքն ուսին, իբրև լապտերավառ, տնետուն է ման գալիս։ Մի տեղ բուքը պղնձե

*թելերն էր կտրատել, մյուս տեղը գնդակը փշրել էր լամպը։ Տրապնելը ճեղքել էր սյունը, սպիտակ բաժակները ցած էին կախվել և աղիողորմ զրնգում էին, երբ քամին իրար էր խառնում թելերը։*

*Մոնտյորն ամեն տեղ լինում էր։ Նա լսում էր, թե ինչ են խոսում տներում հավաքված մարդիկ. նա տեսնում էր, ով ինչպես է ապրում։ Մի անգամ նա տեսավ Մաշոյին ձյունի նման սպիտակ շորերով, մազերի մեջ՝ թառամած մանուշակներ։ Նա իջնում էր սանդուղքով, մի սպայի հետ թևանցուկ, իսկ Անդոն կապկպում էր էլեկտրալարը։*

*Կինը գլուխը վեր բարձրացրեց։ Նրա հայացքում կար պաղ անտարբերություն, կարծես սյունի վրայից նայողը Անդոն չէր, այլ անմարմին մի խրտվիլակ։ Սպան որսաց կնոջ հայացքը, զննող աչքերով նայեց վերև։ Անդոն դանդաղ կապկպեց լարերը, աչքերը չհեռացնելով սպայից։*

*Թշնամին էր, Լեռնա-Հայաստանի հետախույզ բաժնի սպան։ Եթե նա գիտենար, որ բոլորովին մոտիկ, սյունի տակ ընկած կաշվե պայուսակի մեջ պահված թուղթը կմատներ մոնտյորին, ինչպիսի գազանային ուրախությամբ սյունից կիջեցներ նրան և կքշեր խոնավ զնդանը։*

*Երբեմն ճրագները թարթում էին երկու անգամ, երեք անգամ։ Ամբողջ քաղաքն ընկղմվում էր խավարի մեջ, և ապա հանկարծ լույսերը բռնկվում էին։ Անդոն էր այդպես անում, երբ նրան պատվիրում էր մեկը, որին Անդոն երբեմն տեսնում էր քաղաքի խուլ թաղերից մեկի ներքնահարկ տանը։*

*Եվ այդ գիշեր քաղաքի զանազան անկյուններից մի քանի հոգի զարտուղի ճանապարհներով, այգիների արանքով, իջնում էին ձորը։ Հին քարանձավում ձեթի ճրագի լույսը ճոճվում էր սևացած պատերի վրա։ Ճրագի շուրջը նստողների ստվերները թրթռում էին պատերի վրա,*

կարծես ստվերները ճիգ էին անում իրենց թևերը կտրելու ճրագից։

Ամենից բարձր խոսողը մի վիթխարի տղամարդ էր, որ ցերեկը իջևանատան կամարի տակ նստած պայտ էր ծեծում։ Մեղմ, ջերմ ձայնով խոսում էր այն ընկերը, որ ապրում էր ներքնահարկ տանը և ցերեկը դնում էր սև ակնոց։ Նա հաղորդում էր տեղեկություններ զինվորների ու զենքերի մասին և հրահանգներ, որ ստացվում էին ընդհատակյա ճանապարհով։ Երբեմն քաղաք էին գալիս գյուղերից և հեռու հանքերից. գալիս էին զարտուղի ճանապարհներով, երբեմն օրը ցերեկով՝ իբրև ածխավաճառ, իբրև ձին պայտարի մոտ բերած գյուղացիներ։

Անդոն անխափան չէր լսում նրանց։ Եթե ձորում մի շշուկ լսվեր, նա դուրս էր թռչում։ Դրսի հսկողությունը նրա վրա էր։ Նրանից լավ ոչ ոք չգիտեր ձորի ժայռերը, մութ քարայրները և նեղ արահետները։

Բուքը խաղում էր ձորում։ Մրսած գայլերը իջնում էին Դրնգանի անտառից, հոտոտում մարդկանց հետքերը, մոտենում քարայրին։ Ապա սարսափահար փախչում էին մեքենայի աղմուկից, լույսից, թեթև սուլոցից փախչում էին և նորից ոռնում քնի մեջ ընկղմած թաղերի վրա։

Լուսադեմին քարանձավի մարդիկ մեկ-մեկ ցրվում էին։ Նրանք նեղ առապարներով և այգիների ճանապարհով գնում էին դեպի քաղաքի լուռ փողոցները։ Գնում էին և հետքերը կորցնում։ Ձորն իսպառ ամայանում էր։ Անդոն հանգցնում էր ձեթի ճրագը, պահում պատի ճեղքի մեջ և վերադառնում մեքենայի մոտ։

Երբեմն քարի տակից հանում էր տպագիր առաջին լոզունգը, որ ստացել էին սուրհանդակի հետ։ Նա փակում էր դուռը, թուղթը մոտեցնում կարմիր լամպին։ Խոնացած թուղթը արնագույն էր դառնում, և սև տառերը պողպատի սառնությամբ ասում էին.

— Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին...

Դրսում ոռնում էր բուքը։ Քաղաքի ու նրա բնակիչների վրա ծանրացել էր երկաթի խեղդող մի կափարիչ, ծանր, ինչպես ձմռան խավար գիշերը։

Պայծառ վառվում էր միայն մի կարմիր ճրագ, որի լույսի տակ մի երիտասարդ կամք հզորանում էր փշրելու խավար կափարիչը։ Ու նորից էր կարդում տպագիր թուղթը բրուտի տղան, Անա գիզու չար Անդոն։

Հնչում էր լուսաբացը։

* * *

Այն գարնանը ձյունը դժվար վեր կացավ։ Քարերը մերկացել էին, բայց նրանց հյուսիսային կողմը դեռ մնում էր ձյունը, որ լուսնյակ գիշերներին կապտին էր տալիս։

Բրուտ Ավագը էլ վերև չէր բարձրանում։ Գետերի ճանապարհը փակ էր, ամեն քարի հետևը մահ։ Էլ չէին առնում ո՛չ գավաթ, ո՛չ կարաս։ Նա Գյումեյ թաղի եզների հետ ման էր գալիս տաք ձորերում։ Մաշված եզները կոշտ լեզվով լիզում էին կանաչ մամուռը։

Նրանք հոգնում էին և փնչալով նստում քարերի արևադարձ կողմը, որոճում անշարժ, ինչպես քարերը։ Եզնարած Ավագը փաթաթվում էր կարպետի մեջ և կուչ գալիս եզների արանքում։

Երբեմն եզները մոտ էր քշում ձորին։ Դիմացը՝ մյուս ափին, ամբարտակն էր, քարափի տակով անցնող առուն և փայտե նովը, որով ջուրը շառաչով թափվում էր և դարձնում «իլիստրիկու մաշինը»։

Ցերեկը քարայրն ամայի էր, դուռը կողպ։ Բրուտ Ավագը նստում էր քարի գլխին, ինչպես մեկը այն հեքիաթային ձևերից, որ կերտել էր մութ տարերքի քմահաճույքը։ Այդ արձանացած մարդը ամայի ձորի վրա մաղում էր այն տխուր երգերից, որոնց հնչյունները մաքուր են, ինչպես արցունքը և հնամյա, ինչպես անտառի խշշոցը, գետի անվախճան զանգատը։

Բառեր չկային և ինչի՞ էր պետք բառը, երբ այդ ձորում ամեն ինչ նրան ասում էր որդու մասին, նույնիսկ քարանձավի փակ դուռը, օջախի սևացած պատերը։ Մի՞թե բառը կարող էր անոթ դառնալ և պարփակել նրա հույզերը, որ խռնվել էին, ինչպես վերևում փոթորիկի հանդիպած կռունկների երամը։

* * *

Կարմիր բանակի 84-րդ բրիգադը վրան էր զարկել լեռնաշղթայի երկարությամբ։ Հյուսիսից և արևելքից կարմիր գնդերը կիրճերով, ծերպերով առաջ էին գալիս, փշրելով սպարապետի զորամասերի հուսահատ դիմադրությունը։ Արևմտյան ճակատում, ուր անխորտակելի պարսպի պես կանգնել էր 84-րդ բրիգադը, առաջին թեթև ընդհարումներն էին։ Թնդանոթների երախները մունջ նայում էին քաղաքի կողմը։

Օղակված քաղաքը դարձել էր ռազմական ճամբար։ Ու թեև վխտում էին զինավառված խմբեր, գայլավաշտեր, սակայն նրանց բոլորի դեմքին խարանված էր անխուսափելի պարտությունը, ինչպես վախճանը՝ մահամերձի երեսին։ Մի կանաչ հիդրա ջղաձգությամբ շարժում էր ծանր մարմինը, կծկվում էր, ինչպես փախուստ փնտրող օձը։

Իսկ ռազմաճակատը մոտենում էր, ինչպես ամեհի ալիք։

— Գալիս են,— ասում էին իրար։ Ոմանք ավելացնում էին «մերոնք», ոմանք՝ «նրանք», իսկ մնացածները միայն հաղորդում էին, որ գալիս են։

Գիշերը քաղաքում լույսեր չէին վառվում։ Լիալուսինն էր ցոլում պղնձյա լարերի վրա և պարտեզներում հոսող ջինջ առուների մեջ։

Ու մի օր, արևի հետ, թնդանոթի արկը թռավ քաղաքի վրայով և պայթեց զորանոցների մոտ։ Առաջին պայթյունը կարծես նրա համար էր, որ հաստատեր, թե գալիս են...

84-րդ բրիգադը խոսում էր արճիճի լեզվով։

Սաստկացավ խուճապը։ Գայլավաշտերը հրաման ստացան նահանջի ճանապարհը բռնելու։

Մարդիկ փակեցին դուռ ու լուսամուտ, ովքեր ունեին դուռ ու լուսամուտ։ Փողոցներից դեպի տները քաշվեցին նրանք, որոնց համար զենքը ծանր բեռ էր։ Զարթնեց հույսը, թե շուտով նորից կառնեն մանգաղն ու գերանդին։

Անա գիզին քաղաքի փողոցներում մոլորվել էր վախից, անհանգստությունից։ Այդքան երկար նա երբեք չէր եղել քաղաքի փողոցներում։ Խեղճ մայրն ագահ լսում էր այն ամենը, ինչ խոսվում էր առաջխաղացող բանակի մասին։

Իր սենյակում, հետախույզ բաժնի սպան, ատամները կրճտացնելով, պատմում էր գունատ Մաշոյին, թե ամբողջ ձմեռ ձորից սիգնալ է տվել այն տղան, որ իրենց տան առաջ լուռ ու մունջ կպցնում էր էլեկտրալարը։ Պատմում էր և պատուհանի վրա ամրացնում գնդացիրը։

Իսկ շտապ ու շփվար Մաշոն լցնում էր սնդուկները, կողպում, կապկպում։ Նա լավ չէր հասկանում ամուսնու ասածը, ինչպես դժվար դասը...

* * *

Մյուս օրը լռեան հետևից հրետանին սկսեց ռմբակոծումը։ Քաղաքում այս ու այնտեղ լսվեցին պայթյունի որոտներ։ Եկեղեցու խաչը թեքվեց, ճռճվեց, ինչպես ճյուղը։ Ապա հանկարծ ընկավ ընկուզենու վրա և խրվեց գետին։

Միանգամայն անսպասելի կերպով ձորի կողմից քաղաք մտան չորս ձիավոր։ Նրանց առաջից գնում էր մեկը, ոսկեգույն ձիու վրա։ Նրանք մի վայրկյան կանգնեցին քաղաքի սահմանագլխում, ապա, երբ որոտացին թնդանոթները, նրանցից երկուսը քշեցին գերեզմանա-

տան կողմը, փոփռացնելով փոքրիկ կարմիր դրոշակները։ Նրանք դրոշակները խրեցին գերեզմանատան բլուրի վրա, որպես հրետանու նշանացույց։ Ապա քարափի բաշով քշեցին դեպի կամուրջը։

Այս անգամ թնդանոթը խփեց ուղիղ քարափին։ Քարից կտորներ թռան դեպի ձիավորները։ Ներքևից լսվեց պայթյուն։

— Դրոշակը շարժիր,— գոռաց ոսկեգույն ձիավորը, արագ նայելով ձորի կողմը։

Մուխի մեջ կանգուն էր էլեկտրակայանը։

Ու ձիավորը փրփրած ձին սասպանդակեց դեպի կամուրջը, որտեղով քաղաք պիտի մտներ կարմիր հեծելազորը։

Ոսկեգույն ձիավորը ճեղքեց ամայի հրապարակը և քշեց կարճ փողոցով դեպի կամուրջը։

Այդ վայրկյանին պատշգամբից արճիճ տեղաց գնդացիրը։ Մի կին ճչաց։

— Վա՜յ, բալա ջան...

Ձիավորը թեքվեց մի կողմի վրա և կախվեց, ինչպես հնձած հասկը։ Փրփրած ձին խրտնեց ու սլացավ։ Հեծվորի ոտքը մնաց ասպանդակի մեջ։ Տաք մարմինը քարեքար դիպչելով շաղ տվեց արյուն և ուղեղ։

Փողոցի մեջտեղը շնչահեղձ պառկել էր Անա զիզին և լիզում էր որդու տաք արյան առաջին շիթը... Լիզում էր հողը, արյունը, երեսը քսում էր գետնին և չանգռում անմռունչ գետինը։

* * *

Այն կողմերում այժմ էլ գարնանն ամպ է նստում։ Մեր Գյունեյ թաղը կորչում է, ամպի միջից երևում է Ցից քարը։ Բայց երբ քաշվում է ամպը, երևում են քաղաքի տների կտուրները։

Ռուսաց «ժամի» տեղը կանաչ պարտեզ է։ Ջորը փոխվել է։ Այնտեղ սպիտակին են տալիս եկեղեցու տա-

*շած քարերը։ Նոր հիդրոկայանն է, արևառ և ընդարձակ։ Քարափից ներքև է իջնում լայն ճանապարհը։ Գարնանը դպրոցական երեխաներին տանում են ձորը և նրանց բացատրում են, թե ինչպես են աշխատում մեքենաները։*

*Նորոգ երկիր, նոր մանուկներ...*

*Դիպվածը ինձ էլ նետեց մեր հին թաղը։ Ես հաստատ քայլերով կոխում էի այն ճանապարհները, ուր խաղալով անցել է իմ մանկությունը։ Ահա Նեղը, փրփրան ջուրը, քեղի թունավոր թփերը։ Իմ ընկեր Անդոն ասում էր, որ օձերը իրենց լեղին պատրաստում են նրա տերևից։*

*Բիբլիական Հովբի նման խարխուլ տան առաջ նստել էր բրուտ Ավագը։ Նա գրկեց ինձ և ինչպես կույրը, շոյեց դեմքս։*

*— Անդոն, իմ Անդո՜ն...*

*Արցունք չերևաց նրա ցավից կծկվող դեմքի վրա, թեև ձայնը խուլ հեկեկանքից դողում էր։ Կարծես աչքերի հետ ցամաքել էին արցունքի ակները։*

*Մեր թաղի գերեզմանատանը թաղված է Անա զիզին։ Գերեզմանաքար չկա, ո՛չ գիր, ո՛չ հուշարձան։ Գարնանը կանաչում է թումբը, մոլախոտերը խեղդում են վաղահաս ծաղիկներին, սաես ապահով են, որ չի զարթնի Անա զիզին և նրա ոսկորե «ղմալթին» էլ չի քաղհանի։*

*Երեկոները քարափին շարվում են ուրիշ աղջիկներ, նրանց մանդոլինը նվագում է նոր երգեր։ Եվ երբ հոգնում են, սկսում են պարզ զրույցը։ Տղաներից մեկը ցույց է տալիս ձորի ճեղքված քարը և պատմում է բրուտի տղա Անդոյի կյանքն ու մահը։*

*— Կարմիր հեծելազորը քաղաք մտավ կամուրջի կողմից... Հրացանների վրա նրանք բերում էին Անդոյի արյունոտ մարմինը։*

*Էլ ի՞նչ։ Վա՞յր դնեմ գրիչս...*

*Բայց ինչո՞ւ են դողում մատներս այս ծով ուրախությունից։ Որ ես ժամանակի խոր ծալքերից իմ թույլ*

*գրիչով վե՜ր հանեցի իմ մանկության ընկեր Անդոյի հերոսական դեմքը։*

*Ախ, ինչքան նոր Անդոներ կան այս թուխ պատանիների մեջ, որոնք հին քարափի գլխին, իբրև անգիր գրույց, թերթում են սկզբի լույս էջերը։*

*Ու դեռ մի անգամ ևս համայն աշխարհում մեր թընդանոթները հզորագույն կշառաչեն հին խոսքը.*

*— Խաղաղությո՜ւն խրճիթներին, պատերա՛զմ պալատներին։*

# ՍԵՎ «ՀԱՑԸ»

I

*Հանգչում էր քաղաքի աղմուկը։*

*Կարծես դաշտ էր, ուր լուսաբացին՝ առաջին ավտոյի աղմուկից, սկսվել էր ճակատամարտի ժխորը, կեսօրին թեժացել, երեկոյան դեմ միսկարները հավաքել էին պղինձը, դարբինները դարսել էին մուրճերը, լռել էին մեքենաները։*

*Երեկոյի տաք անձրևը նոր ծաղկած ծառերին, մայթի քարերին ու ծանր կավահողին բաշխել էր զով, պղտոր ջրի լճակներ ու ծանր ցեխ։ Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք և անգլուխ կարավանի նման դանդաղ ու մունջ պտույտ էին անում փողոցներով, քսվում կտուրներին։*

*Տների բարձր հարկերը չէին երևում ամպի սպիտակ քուլաների մեջ։ Նրանք օրորվում էին, իրենց հետ օրորում տները, հեռագրասյուները, էլեկտրական լամպերը և նրանց ցոլքը՝ անձրևաջրի պղտոր լճակներում։*

*Ամբողջ քաղաքի վրա բարձր աշտարակից ռադիոն թափում էր գարնանային երգի տաք ելևէջներ։ Աշտարակի ներսը մի աղջիկ մաքուր ձայնով երգում էր բամբակի դաշտերի և հասած արտերի երգը։ Բազմաթիվ ռուպորներ այդ զվարթ երգը մաղում էին քաղաքի վրա։*

Բարձրախոսների տակ խումբ-խումբ մարդիկ լուռ լսում էին, մշակը՝ հենված պատին, լրագրավաճառը՝ թերթերը թևի տակ, տղան՝ աղջկա թևը գրկած, կառապանը՝ «կոզլու» վրա,— նույնիսկ ձիերը կախել էին ականջները, քրտինք էր գոլորշիանում նրանց մարմնից, ձիերը մրսում էին խոնավությունից, բայց նրանք էլ անշարժ լսում էին։

## 2

Լևոնը գլխավոր փողոցից ծռվեց դեպի ձախ։

Անկյունում նրա ականջին ընկավ երգը, տեսավ լուռ լսողների խումբը։ Նա գլուխը վեր բարձրացրեց և զարմացավ, կարծես առաջին անգամ էր տեսնում սյունին կապած բարձրախոսը։ Երգը վրդովեց նրա մտքերի ընթացքը, բայց երբ ծռվեց դեպի նեղ փողոցը, մտքերի հոսանքը նորից մտավ ծանոթ հունը։ Ու գլուխը կախ գնաց, կոխոտելով թանձր ցեխը և անձրևաջուրը։

Թևի տակ պորտֆելն էր։ Եվ նրա միտքը շարունակում էր աշխատել այն թվերի և հաշիվների հետ, որոնցից նոր էր բաժանվել։

Նա շատ անգամ է նստում մինչև կեսգիշեր այն սենյակում, որի պատուհանից երևում է քաղաքի մեծ մասը, բլուրները, ճանապարհները, որոնք կեռ ու մեռ գնում են, գնում են անվախճան՝ դեպի ուրիշ քաղաքներ ու գյուղեր։ Այդ ճանապարհներով Լևոնն ուղարկում է բազմաթիվ մեքենաներ դեպի գյուղերը և նրանց դաշտերը, որտեղ կա ջուր, արև և քրտինք։

Այդ սենյակում Լևոնի գրասեղանն է։ Նա փռում է բազմաթիվ աղյուսակներ, ցուցակներ, վերցնում է մատիտը, գլուխը կախում նրանց վրա և հաշվում։ Եվ գնում են տրակտորները, գութանները, քաշում են երկաթե փոցխերը, և շարքացանները գարնան խոնավ հողի մեջ թափում են սերմեր, ծլում է բամբակը, աղջիկները քաղհանում են, ծաղկում է բամբակը, աղջիկներն իրենց գոգը լցնում են սպիտակ բամբակով, ու բամբակը գնում է

դառնալու գույնզգույն չիթ, աղջիկները հագնում են նախշուն չիթը և երբ խաղում են նրանք, թրթռում է մարմինը, քամին փոփռացնում է դեյրան, և ծաղկավոր դեյրան ծփում է, ինչպես արտը։

## 3

Լևոնը կանգնեց դռան առաջ, ձեռքը տարավ գրպանը, շոշափեց բանալին, որ գրպանում տաքացել էր։

Բանալին դարձավ երկու անգամ, և ապակյա դուռը բացվեց։

Մութ նախասենյակում նա վարժ շարժումով իր մըշտական տեղը հանեց կալոշները։ Մի փափուկ բան քսվեց ոտքերին, մռռաց։ Մաշիտա մայրիկի Վանա կատուն էր։

— Փիսո՛...

Կատուն հետևեց նրան մինչև սենյակի դուռը, ապա առաջինը ներս մտավ, երբ Լևոնը քաշեց սենյակի դուռը։

Ճրագը վառեց և պորտֆելը գցեց սեղանին։

— Փիսո՛...

Փիսոն մեջքը ուռցրեց. նրա ծովի գույնի մորթը, որ լույսի տակ ծխագույն էր, ալիքաձև շարժվեց, ուսերից մինչև պոչը։

Իսկ Լևոնը չշոյեց կատվի ուռուցիկ մեջքը։ Կատուն ցած թռավ թախտից և ծանր պոչը քարշ տալով դուրս եկավ սենյակից, իր կատվային դժգոհությունն արտահայտելով խռով քայլքով։

Լևոնը նստեց թախտի ծայրին։ Նա զգաց անտարբեր հոգնություն և ինչպես օտարական սկսեց դիտել իր բնակարանի իրերը։ Աչքն ընկավ կանաչ ծաղկամանին, որ կնոջ բազուկի ձև ուներ՝ բարակ մատները միացել էին իրար, կարծես նրանք կենդանի մատներ էին և բռնել էին դաշտային ծաղիկների փունջը։

Լևոնն ավելի խոր դիտեց ծաղկամանը։ Մինչ այդ նա չէր նկատել, որ ծաղկամանը չի մերվում սենյակի մյուս իրերին,—կոշտ և չներկած սեղանին, երկաթյա մահճակա-

լին, որի նման հազարները կան հիվանդանոցներում և զորանոցներում: Իսկ գրքերի դարակին հենած հրացանն ուղղակի թշնամաբար էր թեքվել դեպի ծաղկամանը: Փողի բերանը գազազած աչքի պես նայում էր կնոջ ապակյա մատներին:

Բոլոր իրերը իրենց կարճ և գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանը: Եթե նրա սենյակի իրերն իրենց կյանքը պատմեին, մահճակալը պիտի ասեր, որ ինքը երկաթից է շինված, չորս տարի վրան պահել է վիրավոր զինվորների մարմինը: Ապա նրա վրա պառկել է կուրսանտը, մի համագումարի պատգամավոր, հետո երեք ամիս ընկած է եղել ձյունի և անձրևի տակ, մինչև ընկեր Լևոնի գալը: Թեթև նորոգումից հետո նա անխռով իր վրա պահում է Լևոնի չորս փութը:

Գրքերի դարակը կարճ կվերջացներ՝ «ուռի էի և դարձա դարակ»: Սեղանը կզանգատվեր իր կոտրած ոտքից և մլեկներից, որոնք ձմեռը քնում էին նրա ճաքճքած տախտակների արանքում, որպեսզի ամառն անհանգստություն պատճառեն կենվորին: Միայն մահճակալի տակ ընկած չեմոդանն ու կողովը կարող էին պատմել արկածներով լի ճանապարհորդությունների մասին:

Վերջապես պատից կախած մաշված գորգը կարող էր պարծենալ, որ իրեն գործել է Լևոնի մայրը, որ բարձր քարափների գլխին թառած գյուղում, արևի տակ իրեն փռում էին, և հավերը կոխոտում էին, մի երեխա չորեքթաթ գնում էր հավերի հետևից, և երբ հավերը հեռանում էին, երեխան աշխատում էր բռնել արևի շողերի մի խուրձ, որ պսպղում էր գորգի վարդերի և նուռերի վրա:

Իսկ ծաղկամա՞նը...

Նա օտարական էր, անակնկալ պայմաններում ձեռք բերված: Փողոցում վաճառախաղ էր անապաստան երեխաների օգտին: Լևոնը հանդիպեց Լուսիկի ընկերուհուն և հարցրեց, թե ի՞նչ լուր Լուսիկից: Աղջիկը, որ վաճառախաղի կազմակերպողներից էր, հաղորդեց լուրը և նրա թևից քաշելով մոտեցրեց սեղանին:

Հինգ տոմս միանգամից վերցրեց. երեքը՝ փուլ էր, մեկին բաժին ընկավ ռետինե տիկնիկ, մյուսին՝ ծաղկամանը։ Տիկնիկը հենց այնտեղ նա նվիրեց մի փոքրիկ աղջկա, իսկ ծաղկամանը Լուսիկի ընկերուհին դրեց նրա պայուսակը, խոստացավ ծաղիկներ բերել և ավելի մանրամասն պատմել Լուսիկի մասին։

Խոստացավ ու չեկավ

Այստեղ հրացանը կորոտար և կփշրեր ծաղկամանը, եթե նրա հետ կապված չլիներ մի ուրիշ անձնավորություն, որի հանդեպ սենյակի բոլոր իրերը, նույնիսկ կողովն ու չեմոդանը խորապես երախտապարտ էին, որովհետև այդ անձնավորությունը ամեն օր սրբում էր նրանց փոշին և տեղափոխում, երբ արևը անհանգստացնում էր։

Այդ Մաշիտա մայրիկն էր, որի այդ սենյակ մտնելը եղավ ծաղկամանը բերելու մյուս օրը։ Ներս մտավ պառավը, Վանա կապույտ փիսոն հետևից։ Կատվի ոտնաձայնն ավելի լսելի էր, քան Մաշիտա մայրիկի թեթև քայլերը։

— Էսնա խորոտ ի,— ասաց պառավը և առանց հարցնելու ծաղկամանի մեջ խրեց հասարակ ծաղիկների մի փունջ։

Սենյակի տեսքը միանգամից փոխվեց։ Նույնիսկ լերկ պատերը զվարթացան, որովհետև արևը ծաղիկների և ծաղկամանի ստվերը գցում էր պատի վրա։ Կարծես գրքերի հետևը թաքնվել էր մի կին և վեր բարձրացրել մերկ բազուկն ու ծաղկեփունջը։

Միայն մանկության գորգի վարդերը դժգոհ էին։ Թարմ և իսկական ծաղիկները խլում էին նրանց առաջնությունը։

## 4

Վանա փիսոն խռոված դուրս գնաց և նորից ներս մտավ, խաղալով Մաշիտա մայրիկի կծիկի հետ։

— Ինկե՞ր ես, տղա։ Չայ պիտե՞մ։

— Եթե տաք է։

— Տաք է։ Խալիվոր նոր խմեց... Գնա դողցուց իմ խեղճ։ Իմ ճար ի՞նչխ կելնի, Լևո՛ն։

— Ես զանգահարել էի բժշկին, չեկա՞վ։

— Եկավ, սատծու լուս խասնի էնոր մեռելաց... Դեղ իտուր. էլմ էնի... Լերդն ի սսաց,— և ապա դառնալով կատվին,— քելի, փիսո՛, քելի՛, չայ պիրենք...

Հիվանդը պառավի ամուսինն էր, նույն միջանցքում ապրող դերձակը, որին համարյա բոլոր տնվորները, մանավանդ երեխաները, «պապե» էին կանչում։ Նիհար, քնքուշ դիմագծերով մարդ էր «պապեն», ամբողջ տարին նույն մաշված վերարկուն ուներ, նույն բրդե շալվարը, որ բազմաթիվ կարկատաններից ծանրացել էր։

Մաչիտա մայրիկը և «պապեն» Բաղդադից եկած գաղթականներից էին։ «Պապեն» լռիկ էր, ավելի հաճախ երեխաների հետ էր խոսում։ Մեծերին տեսնելուց մի կողմ էր քաշվում, կարծես ամաչում էր։ Իսկ Մաչիտա մայրիկը, կամ ինչպես «պապեն» էր սսում, «հանըմը», հաճախ էր բակ դուրս գալիս և զրուցում հարևանուհիների հետ։

Նրա խնամքի առարկան հավերն էին, որոնց համար «պապեն» բակում բուն էր շինել։ Հավերը նրա երեխաներն են,— ծիծաղելով ասում էին հարևանները։

Նրանք շատ սխալ չէին։ Մաչիտա մայրիկը ոչ միայն կերակրում էր, այլև հավերին խոսեցնում էր։ Նրա հավերը անուններ ունեին, բնավորություն։

— Էսօր Կապոտս քեֆսըզ էր, կուտ իսկի չկերավ։

— Խմոր թալե առաջը...

— Էն իմանըզ խորոզը չարչրեր ի գիշերը,— զայրանում էր Մաչիտա մայրիկը։

Ծվ ամբողջ բակը պիտի իմանար, որ «խորոզը չարչարել է կապույտ հավին», որ հերվա թխսամայրը ձուի է նստել, որ «էն կանդար կուտ կուտի անիրավ Զալը, մի խատ ծյու չի թալի...»։

Մաչիտա մայրիկը սպառնում էր Զալը մորթել, բայց անցնում էր գարունը, ամառը, հավերը պառավում էին,

ծանրանում, իսկ նրա սպառնալիքը չէր իրագործվում։ Հավը մեռնում էր բնական մահով, պառավը լաց էր լինում ճշմարիտ և անարատ արցունքով։

Նրանց կյանքի սկիզբը պարզ և հանդարտ էր հոսել։ Ապա հանկարծ սևացել էր երկինքը, սևացել էր և գետինը, պայթել էր ջարդը, հրդեհը, գաղթը։ Անցած ճանապարհներին թողել էին բազմաթիվ անքար դամբարաններ, որոնց մեջ ամփոփված էին սովից, սրից, տապից և ծարավից մահացած մշակներ ու մանուկներ։ Բաղդադում «պապեն» ստացել էր տենդ, որից հյուծվել էր և դեղնել։

Փոխադրվելու առաջին օրից «պապեն» ու «հանըմը» սկսել էին անկաշառ բարեկամություն Լևոնի հետ։ Մաչիտա մայրիկը ավլում էր նրա սենյակը, սրբում էր փոշին, երբեմն թեյ էր առաջարկում, փոխարենը Լևոնը հատուցում էր բժշկին զանգահարելով, բնակարանի լույսի և առօրյա այլ կարիքների օգնելով։

— Մաչիտա հանըմի հոգևորդին է Լևոնը,— ասում էին հարևանները։ Իսկ պառավը խանդաղատանքով էր խոսում նրա մասին, ակնածությամբ տալիս նրա անունը և նույնիսկ հարևանների առաջ պարծենում այդպիսի մարդու բարեկամությամբ։

«Պապեն» նրա սենյակը ոտք էր կոխում ամիսը մի կամ երկու անգամ և բավականանում էր բարևով։ Իսկ մայրիկը պատմում էր իր աշխարհից, որի սահմանները հասնում էին մինչև դարպասը։ Մանր պատահարներ, կցկտուր խոսքեր, հարևանի տան լսածը և վերջապես հավերի գլխովն անցածը,— ահա նրա զրույցի առարկան։

Սակայն կար և մի մտերիմ «թեմա», որի շուրջը Մաչիտա մայրիկի խոսակցությունը ակնարկներից այն կողմը չէր անցնում, և որին Լևոնը պատասխանում էր բարյացակամ ժպիտով։

## 5

— Դհա կուզե՞ս...

— Չէ, մայրիկ, տաքացա։

*— Տնավեր, էն կազախի կիսու չափ է՞լ չկաս... էն կանդար չայ, ես իմ աստված, հավատալու չի...*

*«Ղազախը» նույն միջանցքում ապրող բարձրահասակ ռուս ուսանողն էր, որից Մաջիտա մայրիկը քաշվում էր։ Ոչ մի բառ ռուսերեն չիմանալով, Մաջիտա մայրիկը մտերմացել էր միայն նրա փոքրիկ աղջկա հետ, որի թևից բռնած երբեմն տանում էր հավաբնի կողմը և կուտը տալիս աղջկանը, որ նա ցրի։*

*— Լցե՞մ։*

*— Չէ, մայրիկ,— և Լևոնը տեղից վեր կացավ։— էսօր ոտքս ցավում է։*

*— Յարալու ո՞տքդ է...*

*— Հա՛։*

*— Ոսկորն է... Ծղանակ որ նամացավ, խտա ոսկորիս մեջն է։ Որ արև էլավ, օդը չոր՝ հե՛չ...*

*Մաջիտա մայրիկը բաժակը վերցրեց, սեղանից սրբեց շաքարի փշրանքը։ Լևոնը մոտեցավ գրքերի դարակին, մեջքը դարձրեց դեպի պառավը։ Չէր երևում՝ գրքերի՞ն է նայում, թե ծաղկամանին։*

*Պառավի մտքովն անցավ, որ առիթը հարմար է ավելի որոշ ակնարկելու նրա մասին, բայց այդ րոպեին Լևոնը հանկարծ շրջվեց.*

*— Խոնավ է, բայց լավ գիշեր է...— և կարծես ինքն իրեն վերջացրեց.— քնել չեմ ուզում, թեև շատ եմ աշխատել...*

*—Գարուն է... Անուշ օր կբացվի վաղ։*

*— Ամպած է երկինքը։*

*— Մասսի կլոխ պարզ ի... Լուսո մոտ լուսնակ կելնի...*

*— Այո՜ո՜...*

*Այդպիսի անորոշ բացականչություններից Մաջիտա մայրիկը խորշում էր։ Նա այնքանն էր հասկանում, որ այդ րոպեին Լևոնի միտքը անմատչելի հեռուներն է։*

*—Քելի՛, փիսո՛...—Կատուն մռաց։ Լևոնը մատներով թմբկահարում էր դարակի տախտակը։*

— Նայի, որ «պապեն» շուտ առողջանա…

— Ղուրբան քեզի, Լևոն, օր չուրիլուս միտքս էտա ի՛

Եվ պառավը դուրս գնաց «բարի գիշեր» ասելով։ Միջանցքում փոշմանած կանգնեց և հանդիմանեց իրեն, որ առիթը բաց թողեց և ակնարկ չարեց, որ Լևոնին պակասում է «խորոտ կնիկ», որպեսզի օրերը ուրիշ լինեն, ուրիշ…

Իրոք որ Մաշիտա մայրիկը կորցրեց ամենահարմար առիթը, որովհետև Լևոնի վրա իջել էր այնպիսի խաղաղ ժամ, երբ մարդ բացում է ներսը և հանդարտ թերթում, ինչպես իմաստուն մի գիրք։

Գարնան գիշե՞րն էր առիթը, ռադիոյի ե՞րգն էր դաշտերի մասին, թե՞ ծաղկամանն էր,— դժվար էր ասել։ Գուցե բոլորը միասին, ավելացրած այն գոհ տրամադրությունը, որ ունի մարդ, երբ հաջող ավարտում է աշխատանքը։ Գուցե և ուրիշ մութ բան, ինչպես բողբոջի բացվելը, ջրերի խոխոջը։

Լևոնը բաց արեց պատուհանի փեղկը։ Սառը քամին ներս խուժեց հողի խոնավ բույրով։ Մի րոպե թարմացավ ճակատը։ Մոտեցավ սեղանին, քաշեց արկղը։

Թղթերի, բլոկնոտների, նամակների և նկարների խառնիխուռն կույտեր էին։ Կային նագանի փամփուշտներ, որսորդական դատարկ պատրոններ, զմուռսի կտորներ և այլ անպետք ու պիտանի մանրուք։

Նա հետ տվեց մի փաթեթ։ Փոքրիկ թերթիկի վրայից իրեն էր նայում Լուսիկը, այնպես, ինչպես այն տարին։

— Շուտով երեք տարին կլրանա,— մտքում ասեց Լևոնը։

Եվ այն, որ շուտով երեք տարին կլրանա, այն, որ Լուսիկի բաց ճակատին մի խոպոպ էր կախվել, որ նրան խանգարում էր գրել, և այն անկրկնելի գարունը,— այդ ամենը նրա սիրտը վրդովեցին անհանգիստ հույզերով։ Նա աչքին մոտեցրեց նկարը, ապա դժվարությամբ հետ տա-

*բավ, պահեց թղթերի տակ, թափով հետ մղեց սեղանի արկղը։ Թափից մեղմ զրնգաց կաթնագույն լուսամփոփը։*

*Լևոնը տեղում կանգնեց, ձգվեց, մկանները տրաք-տրաքվեցին։ Մի ախորժ ջերմություն զգաց, և չքացավ անհանգիստ վրդովմունքը։*

*— Քունս չի տանում... Գնամ Ասաքի մոտ։*

*Նայեց ժամացույցին. ժամանակ կար։ Կարծես այն, որ ժամանակ կար, ավելի հաշտ դարձրեց իրեն այդ վըրդովմունքի և վերհիշողության հանդեպ։*

*Եվ վարագույրն ընկավ ծածկված նկարներից։ Առաջին պահ նա զարմացավ. ինչքա՜ն բան է հիշում Լուսիկից։ Իսկ ինքը կարծում էր, թե չնչին են հետքերը։*

*Նկարներ են՝ կախված հիշողության պատից։ Ահա կատաղած պղտոր գետը ձորի մեջ։ Դեղին քարերը փրփուրի միջից ցցել են իրենց շողշողուն գլուխները։ Այդ քարերի վրայով, պղտոր գետով անցնում է ինքը, Լուսիկի թևից բռնած։ Եվ դեռ քրքջում են։ Ահա Լուսիկի ոտքը սայթաքեց, քիչ մնաց գլորվեր փրփրած ավազանը։ Գրկեց մեջքը և ցատկեց ափը։ Չոր ցախ ժողովեցին, փոքրիկ խարույկը թեժացավ, փռեցին Լուսիկի թաց գուլպաները։ Իսկ աղջիկը բոբիկ ոտքերը դրել էր տաք մոխրի վրա։ Բոցը խաղում էր աղջկա մերկ սրունքների աղոտ հայելու մեջ։*

*Այս նուրբ նկարը... Լուսնի տակ ճանապարհը սպիտակել է, կարծես մաքուր գետ է հոսում մութի մեջ։ Հորիզոնի խորքում շողշողում է Արարատի սպիտակ գլուխը։ Կապույտ երկնքի կոր հայելու խորքում արտացոլվում է ուրիշ գագաթ։*

*Սայլը ճռռում է ամառվա հանգով։ Գյուղից են գալիս։ Բացօթյա միտինգ էր, իրիկնադեմին երգ ու պար։ Ոմանք ոտով են։ Աղջիկները սայլի վրա են։ Լուսիկը երգում է.*

**Նռան կլեպ պառըզ,**
*Նեյնիմ, ամա՜ն-ամա՜ն...*

*Երգում է հոգնած, բարակ ձայնով։ Սայլը ճռռում է երգի հանգով, օրորվելով գնում են եզները։*

Այս մեկը խավար է։ Այս ամենատաք նկարն է։ Գույները կարծես դողում են, ինչպես Լուսիկի շրթունքները, երբ ծաղկած ծիրանիների փողոցից մտնում էին լուսավոր պողոտան։

Ծաղկած ծիրանիների փողոցը... Նույնիսկ փողոց չի կարելի հաշվել, որովհետև ծայրը հետզհետե բաժանվում է նեղ ճանապարհների, որոնք պատերի արանքով տանում են դեպի այգիները և այնտեղից ձգվում լերկ բլուրի առապարները, ուր գարնանը մակաղում է քրդերի ոչխարը։

Այս նկարը խավար է, որովհետև նրանք մութն ընկնելուց էին մտնում այդ փողոցը, որի բնակիչները արևի մայր մտնելու հետ փակում էին տների և պարտեզների փոքր դռնակները։ Փողոցը մինչև լուսաբաց մնում էր նրանց ու նման զույգերի, որոնք իրար չէին ճանաչում, լռում էին, երբ լսվում էր ոտնաձայն և քաշվում էին այն խորշերը, որտեղ մութն ավելի թանձր էր, և ծիրանի ճյուղերը ծածկում էին լուսնյակի ու աստղերի լույսը։

Լսվում էր մի ոտնաձայն, Լուսիկը սեղմվում էր նրա թևին, շունչը պահում։ Անցորդը ուշ մնացած մարդ էր, որ շտապում էր փոքրիկ դռնակներից մեկը բախելու և կամ հարբած էր՝ գնում էր օրորալով. գնում էր՝ կամ հայհոյում, կամ տխուր երգում։

Պատի տակ առուն էր, երեսը բաց, ջուրը սառը։ Սարերից էր գլորվում առուն, և նա բլուրի այգիներում շառաչում էր իբրև լեռնային վտակ։ Իսկ հետո ներքի տափարակում, բրնձի ու բամբակի դաշտերի մեջ, նրա շառաչը մեռնում էր, և հանդարտվում էր աղմկոտ խոխոջը։

Նրանք նստում էին առվի եզրին, և երբ հանգչում էր զրույցը, լուռ լսում էին ջրերի ձայնը։ Նայած թե ի՞նչ էին խոսել, Լուսիկն ի՞նչ էր ասել։ Լևոնը սրտնեղել էր նրանից, թե երկուսն էլ ոգևորված խոսել էին սովորելու, աշխատանքի և ո՞վ գիտե էլ ի՞նչ պայծառ ապագայի մասին։

Եթե սրտնեղել էին, թվում էր, թե առուն էլ չարացել է... Երբ խոսք էր լինում, որ պիտի բաժանվեն, որովհետև

Լևոնը գնալու էր Մոսկվա սովորելու, կարծես առուն վըշտակցում էր Լուսիկին, իսկ երբ ծիրանիների տակ զրույցը դառնում էր առօրյա դժվար աշխատանքի և պայքարի շուրջը, լսելի էր, թե ինչպես ալիքները խփում են քարերին, որոնք խանգարում էին նրանց անարգել ընթացքը։

Եվ ինչ խոսել էին՝ ջուրը տարավ։ Համբույրները, հանաքները, այն, որ կավե պատը փոշոտում էր Լուսիկի դեյրան, շունը, որ ցած թռավ և նրանց վախեցրեց,— բոլորը չքացել են, մնացել է ջինջ հիշողությունը և մի կըսկիծ, որ երբեմն մրմռում է, ինչպես ոտքի սպին։ Սակայն այդ սպին նա տեսնում է, շոշափում է, և մեղմում է ցավը։ Իսկ այն մյուսի հետքը... Այ, հենց հիմա. շրթունքները չեն ասում, բայց մտքում կրկնում է.

— Ինչքան լավ աղջիկ էր Լուսիկը...

Մտքում կրկնում է, կարծես թե այդ լավ աղջիկը մեռել է։ Բայց Լուսիկը կա. շուտով ինժեներ կդառնա այն քնքուշ աղջիկը։ Նրա մատները գծագրելու են, նրա հատակագծով տներ են շինելու։

Այսպես հասարակ եղավ բաժանումը։

— Ցտեսություն, ընկեր Լևո՛ն...

Առաջին և վերջին անգամ նա այդպես ասաց։ Իրեն ուղարկեցին շրջան, աղջիկը գնաց Մոսկվա։ Հետո ի՞նչ... Խնդրել է, գուցե թե հաջողվի և ինքն էլ գնա։ Բայց այնտեղ կարո՞ղ է կրկնվել ծիրանիների փողոցը...

Անցյալ տարի Լևոնը մի անգամ անցավ այդ կողմերով։ Պատահաբար եղավ... Փողոցի աջ կողմը բարձրանում էին նոր տները։ Նրանց մի մասը կիսավարտ էին։ Փողոցի երկայնքով շարել էին կապույտ որձաքարը։ Մնում էր ծիրանիների փողոցի ձախ պատը, պատի հետևը՝ ծառերը։ Նույնիսկ տեսավ առուն և այն պատըշգամբը, որի տակ մի անգամ հորդ անձրևից պատսպարվել էին։

Ցերեկը, աշխատանքի ժամերին, նա հիշում էր Լուսիկի խոսքերը, երեկվա պատահածը, ուրախությունից և

երիտասարդական ավյունից ժպտում էր ինքն իրեն, և ավելի թեթև էր ընթանում աշխատանքը։ Եթե սենյակում մարդ չէր լինում, նա երբեմն սուլում էր... Սուլում էր և հեռախոսի փողի մեջ ու խնդրում էր, որ Լուսիկը փողը պահի ականջի մոտ։

Նրա հիշողության մեջ տաք ներկերով այդ նկարն էր, ծաղկած ծիրանիները, երեսը բաց առուն և կավե բարձր պատերը, որ պարփակում էին իրենց մեջ և՛ խոխոջ, և՛ ծաղիկների բույր, և՛ անթափանց լռություն։ Կարծես քաղաքը և նրա ձայները չէին հասնում մինչև այդ խուլ փողոցը։

— Կշտացա՞ր,— ծաղրի տոնով հարցրեց Լևոնը և տեղից վեր կացավ։ Կարծես ուրիշն էր հիշողը, և նա համբերությամբ սպասում էր, որ այդ ուրիշը հագուրդ տա ներելի թերությանը։

Վարագույրն իջավ նկարների վրա։

Սենյակի մեջտեղը կանգնել էր ուրիշ մարդ։ Նրա աչքը ծաղկամանի վրա չէր, ոչ էլ միտքը՝ ծաղկած ծիրանիների փողոցում։ Սենյակի մեջտեղն այն մարդն էր, որի մասին ոմանք ասում են, թե բնավորությունը խիստ է, նույնիսկ կոշտ։ Նա տոկուն և համառ աշխատողի համբավ ունի։ Այն հարյուրները, որոնք աշխատում են նրա հետ, զարմանքով են պատմում նրա անսպառ եռանդի մասին։

Նրանք գիտեն, որ ընկեր Լևոնի ամբողջ եռանդը լափում է հազարավոր մեքենաների հայթայթման և մատակարարման բարդ աշխատանքը։ Ցերեկը բազմաթիվ մարդիկ ներս են մտնում նրա սենյակը։ Հեռախոսները զանգահարում են, աղմկում են դռները, մեքենագրուհիները, մարդիկ։ Մի տեղից հեռագրով պահանջում են տավոտ և բենզին, ուշանում է տրակտորների տեղափոխումը, և ահա թափվում են ահազանգի հեռագրեր, որ հողը եռում է, կորչում են օրերը։ Եվ հարյուրավոր վայրերից այսպիսի բազմաթիվ թելեր, ինչպես ճառագայթներ, կենտրոնանում են այս կիզակետի մեջ։ Ներս ու դուրս են անում

մարդիկ, որոնք եկել են շրջաններից, աշխատանքի վայրերից։ Ահա մեկը մանվածապատ սկսում է «նաղլը», իսկ Լևոնը մի քանի ճշտակի հարցերով տեղն է գցում խոսակցությունը։ Լսում է նրան, հեռախոսը զանգահարում է նորոգման արհեստանոց, և մտքի խորքում միաժամանակ բարձրանում է նոր խնդիր, նոր աշխատանք։

Սենյակի մեջտեղը ահա այդ մարդն է, որի մի օրը վերջացել է, և ահա վերադարձել է տուն՝ հանգստի։ Կբացվի առավոտը, և հարյուրավոր մարդիկ նրան կտեսնեն նույն տեղը, նույն մտազբաղ դեմքով։

Միջանցքում կախված է շինելը։ Դուրսը խոնավ է։ Լևոնը հագնվեց և կոճկվեց մինչև վերջին կոճակը։

Տաք շինելը ձգում է մեջքը, և այդպես նա իրեն կայտառ է զգում։

Հանգցնում է լույսը և զգուշությամբ բացում ապակյա դուռը։ Հարևանները քնել են։ Միայն «ղազախի» ձայնն է լսվում։ Երևի կարդում է։

## 6

Դիմացը՝ փողոցում, էլեկտրական խոշոր լամպն է։ Սպիտակ մշուշը շարժվում է վերևերով։ Նա շարժվում է, իսկ թվում է, թե օրորվում է լամպը։ Եվ մշուշը մաղում է նուրբ անձրև։

Լևոնը գոհ է, որ վերցրեց շինելը։ Եվ գոհունակությունը նա արտահայտում է ձեռքերը գրպանը կոխելով, թևերն ավելի սեղմելով իրանին։

Նա գլուխը վեր բարձրացրեց։ Դիմացի սպիտակ տունը ձգվել էր և մշուշի մեջ ավելի բարձր էր թվում։ Վերի հարկում մի քանի պատուհաններ լուսավոր էին. նրանք մշուշի միջից էին երևում, և կարծես մի ուրիշ տան հարկ էր։

Մշուշն անցնում էր ծվեններով։ Ահա մի ամպի վերջին քուլաները՝ շղարշի նման թափանցիկ։ Նրանց արան-

քից երևում էին սարերը։ Իսկ Արարատի լերկ կատարը շողշողում էր աստղալույսից։

— Ճշմարիտ էր Մաչիտա մայրիկը... Վաղը արև պիտի անի։

Լևոնը մայթի վրայով գնաց դեպի վեր։ Առվի եզրին երիտասարդ լորիներ էին, իրարից հավասար հեռավորության վրա։ Նա հիշում է, որ աշնանը տնկեցին բարակ լորիները։ Գարնանը նրանք ծաղկեցին, բացի մեկից։

Երրորդ գարունն է։ Տասը գարուն հետո նրանք այնքան կբարձրանան, որ կհասնեն երկրորդ հարկի պատուհաններին, և մարդիկ լորիների հովի տակ անց ու դարձ կանեն։ Փողոցը կդառնա անփոշի, մաքուր, լորիների փողոց, նրանք էլ կծաղկեն, ինչպես ծիրանին...

Լևոնը ձեռքը մեկնեց մի ծառի, մատներով սեղմեց։ Ծառին ոչինչ չասաց, որովհետև ծառի հետ չեն խոսում, բայց եթե խոսեր, նա աշխատանքի մարդու անսահման ուրախությունը պիտի հայտներ, որ ծառերը մաքրում են օդը, հով են անում և շոյում են աչքերը։

Նա կտրեց փողոցը, զգուշությամբ կոխելով անձրևից թրջված և լապտերների լույսից փայլփլող սալաքարերը։ Դիմացը վիթխարի շենքն էր, որի կեսը դեռ չէին ծածկել։ Մի քանի պատուհան արդեն լուսավոր էր։

Լևոնը փողոցից նայեց։ Դեռ չավարտված սենյակում սեղանի վրա գլուխը կռացրել էր Սողոմոնը։ Նա կամ հաշվում էր, կամ գրում։ Միայն ձեռքն էր շարժվում։

Խճուղային վարչության Սողոմոնը՝ հաղթանդամ, ծանրախոս, դանդաղաքայլ։ Երկու օր առաջ կոմիտեի նիստում նրա զեկուցումն էր։ Մի քիչ «սեղմեցին»։ Սողոմոնը նեղն էր ընկել։ Լևոնն էլ ուզեց խոսք վերցնի և ավելացնի, որ ճանապարհների նորոգման վրա անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում, որ շատ գյուղեր տրակտոր և շարքացան չի կարելի տանել միայն-ճանապարհ չլինելու պատճառով, բայց ականջին հասավ Սողոմոնի ռեպլիկը՝ ուղղված մի ուրիշին.

— Բուջե չկա, բուջե... էդ անդերը հինչավ չինեմ...

Հոգնած ժողովը ծիծաղեց նրա բարբառի, նրա պարզամտության և զայրույթի վրա։

Բայց և այնպես նույն օրը Լևոնը զանգահարեց նրան։

Պատուհանի ետևից երևում էր Սողոմոնի գլուխը։ Լևոնը հիշեց այն նիստը, սակայն միտքը թռավ հեռու, քաղաքացիական կռիվների տարին, այն լեռնոտ գավառը, որտեղ այն տարին ապրում և պայքարում էին ինքը, Սողոմոնը, որին Սուղի էին ասում, Ասաքը, որին քաղաքում ճանաչում են իբրև ընկեր Սահակ և ուրիշները։ Մի քանիսը սպանված, ոմանք այստեղ, ուրիշները ցրված խորհրդային անծայրածիր երկրներում՝ Թուրքեստանից մինչև Սառուցյալ օվկիանոսի ափերը։

Եվ շարունակեց քայլերը, մտքում՝ Սուղին, Ասաքը, այն լեռնոտ գավառը, քաղաքացիական կռիվների տարին։

Այն ժամանակ Սուղին հազիվ գրաճանաչ էր։ Ամառնաձմեռ հագին ռետինե տարօրինակ թիկնոց էր, որի նմանը անցյալ աշնան ինքը նավի վրա տեսավ, նավաստիների հագին։ Ո՞րտեղից էր ընկել այդ թիկնոցը։ Նստում էին ժողովի, Սուղին ձանձրանում էր վեճերից, բայց երբ հարցը գալիս էր ապստամբության, նրա աչքերը լայնանում էին, ոտքի էր կանգնում և բռունցքը ճոճում.

— Հուպ տո՛ւ... Իմ ասմունքն էլ էդ ա։

Առաջին տարիները գավառում նրան այդպես էլ կանչում էին. «Հուպ տու Սուղի»։

Իսկ Ասաքը ծանր էր, տարիքից ավելի ծանրախոհ։ «Ուրբաթախոս» էր, ծխախոտը բերանից անպակաս։ Ինչ էլ ձեռքն ընկներ, ծխում էր. մախորկա, տերև... Նրա ծխախոտի կծու հոտը ջղայնացնում էր Սուղուն։ Երբ մի ժողովում հարց էր դրված թշնամու թիկունքը մարդ ուղարկելու, Սուղին Ասաքի թեկնածությանը հակառակեց.

— Նրա բերանից մրահոտ ա գալիս... Քառասուն վերստի վրա նրան էդ շնահոտից կճանաչեն։

Մի ուրիշ լայն փողոց վերևից գալիս և կիսում էր այն

փողոցը, որով գնում էր Լևոնը։ Խաչաձև կտրվածքի մեջտեղը հետ ու առաջ էր գնում հերթապահ միլիցիոները։ Նա ձանձրացած էր քայլում, կարծես կարոտում էր ցերեկվա ժխորին։

Փողոցների խաչաձև կտրվածքն անցնելուց Լևոնի ընդհատված մտքերը նորից ծանոթ հունն ընկան։ Ասաքը շատ է փոխվել... Այն տարին նրա երեսին ժպիտ չէր երևում. այժմ կենսուրախ է, անհոգ։ Գուցե այդ անհոգությունն է նրա նիհար մարմինը գերացրել, կլորացրել։

Տուն ունի, կին ունի, չորս երեխա... Սենյակների ներսը խառնիխուռն, գրքերը երեխաների կոտրատված խաղալիքների կողքին, այստեղ-այնտեղ մանր ու մեծ մահճակալներ, որոնց վրայից կախված են լաթեր, երեխաների սպիտակեղենը և ուրիշ շորեր, որ Ասաքի կինը չի հավաքում, երբ Լևոնը ներս է մտնում, որովհետև նրանից չեն քաշվում։

— Երևի երեխաները քնած են... Կիմիկը՝ չէ՛։

Կիմիկը եթե քնած լինի, Լևոնի ձայնից կզարթնի, կկանչի մյուսներին, և կսկսեն կախվել, քաշքշել, աղմկել։ Կսկսվի այն, ինչ Ասաքը ծիծաղելով անվանում է «ղարաչու բազար»։

Այդ աղմուկի մեջ Ասաքը կարողանում է աշխատել, երեխաները թռչկոտում են, բարձրանում նրա վրա, քաշքըշում, իսկ նա երեսը պատի կողմը դարձրած կարդում է։ Երբ շատ են աղմկում, վեր է կենում, դուռը բաց անում և բոլորին քշում բակը։ Քշում՝ ինչպես հավի ճտերը։

Կենսուրախ է Ասաքը։ Այդ կենսուրախության մեջ չի կորել նրա երբեմնի լրջությունը։ Կես հանաքով, կես լուրջ նա գանգատվում է, որ «փորի մակարդակը նորից է բարձրացել», բայց հանաքից հետո խոսքը դարձնում է առօրյայի խնդիրների շուրջը։

Եվ հին «ուրբաթախոսը» հառնում է Լևոնի առաջ...

Ահա սարալանջը. հրաբխային ավազ է։ Դժվար է բարձրանալ, որովհետև ավազը սահում է, ոտքերը կարծր

գետնին չեն հասնում։ Բայց նա չի կարողանում ոտքի կանգնել։ Մի ոտքը ծանրացել է, ծունկից ցած տաք է։ Լևոնը չի նայում, բայց զգում է, որ արյուն է լցվում կոշիկի մեջ, և ավազը խառնվում է արյունին։

Մեկը նրան վեր է բարձրացնում։ Գրկել է մեջքը և բարձրացնում է. ամեն րոպե դժվար շնչելով ասում.

— Հրես հա՜, հրես հա՜... Շուռ եկանք սարի ետևը։

Ներքևի այգիներից անկարգ կրակոցներ են։ Գնդացիրը կրակներ է մաղում լեռան լանջին։ Լևոնը հիշում է, որ լուսաբացին թշնամին անակնկալ ներս խուժեց։ Նահանջեցին։ Բայց ո՞րտեղից հայտնվեց Ասաքը։ Նա ուզում է հարցնել, բայց վերքը ցավում է։ Ու չի տնքում։ Ատամները սեղմել է... Ասաքի գլխին ծղոտից գործած մի չտեսնված գլխարկ է։ Երբեք այդ գլխարկը նա չէր ծածկում։ Լևոնը մինչ այդ նման գլխարկ չէր տեսել։ Եվ ատամները սեղմելով նա հարցնում է նրան, թե ո՞րտեղից է այդ գլխարկը, և ինքն էլ զարմանում է այդ անպատեհ հարցից։

— Հրե՛ս, հա՛... Շուռ եկանք սարը։

Տարիներ հետո Լևոնը մի անգամ էլ Ասաքին հարցրեց այդ գլխարկի մասին։ Ասաքը դժգոհ և քթի տակ ասաց, որ «կազմակերպել» էր մալական ֆուրգոնչուց։

— Գլխիս մեջ մեխվել էր, որ անգդակ փախչելն ամոթ է...

Այլևս չէր հիշվում «մալականի» գլխարկը։

## 7

Այստեղից սկսվում են նոր տները։ Նրանց ուղիղ շարքերը ձգվում են դեպի բլուրները և այգիները։ Լամպերի շարքը ձգվում է հեռու։ Ինչքան հեռուն ես նայում, լամպերն ավելի սեղմ են իրար։ Վերջին լամպը չի երևում։ Նշանակում է շատ երկար է լամպերի շարանը։

Լևոնի սիրտը լցվում է ջերմ ուրախությամբ, ինչպես փողոցի լորենին շոշափելուց։ Տների կառուցմանը նա չի

մասնակցել, բայց նրա սրտում էլ զարթնում է հաղթողի զվարթ ուրախությունը։

— Մենք ենք շինել... Մերն է։

Այստեղ էլ մշուշը հոսում է կտուրների վրայով, մաղում է գարնանամուտի տաք շաղը։ Շենքերի պատերը, թիթեղյա կտուրները թացանում են։ Թիթեղն էլ առաջին անձրևի տակ է, իսկ քարերը մթին ընդերքում ոչ անձրև են տեսել, ոչ մշուշն է լիզել նրանց։

Լևոնը կանգնել է նոր փողոցների սահմանագլխին։ Այս կողմը հին տներ են։ Ահա մի տան փայտե նովդանները ծռվել են։ Դարպասը կախվել է։ Ներսը մարդիկ գուցե դեռ արթուն են, սակայն ձայն չի լսվում ներսից, և ոչ էլ ճրագ է երևում։ Նեղ պատուհանները փոքր են, ինչպես մութ զնդանը։

Ահա մի ուրիշը, նոր տան կողքին... Քանդել են նրա բակի պատերը, ցանկապատը հանել են, և հազարավոր սայլեր, մեքենաներ այդ հին բակով կրել են ավազ, քար, ցեմենտ, տախտակ։ Կուչ է եկել հին տունը։ Նրա ճակատի կողմը երևում է կայծակնաձև ճեղքը։ Կարծես կնճիռի ծալք է։ Երևի մեքենաների դղրդոցից, քարերի գետին ընկնելուց հին տան պատերը ճաքել են։

Իսկ այս մեկը շրջապատված է տաշած քարերի կույտով։ Ահա փողոցի մի մասը կտրել են տախտակներով և թողել են փոքրիկ դռնակ, որպեսզի տան բնակիչները երթևեկեն։ Ուրեմն այստեղ էլ պիտի կառուցեն։

Նոր քաղաքը հրում է։ Նրա բարձր տները նայում են քաղաքի մյուս մասերում անկարգ ցրված նոր տներին և կարծես ձայն են տալիս սեղմելու, իրար միանալու և գետնի երեսից վերացնելու հողաշեն փլեկները։

— Այն փողոցը այս կողմերն է...

Ծաղկած ծիրանիների փողոցը։ Նայում է վեր, Ասաքի տան կողմը։ Մի քիչ տատանվում է և քայլերն ուղղում ներքև։ Եվ արդարացնում է իրեն.

— Ես չեմ տեսել այն կողմի տները...

*Ու քայլում է, ձեռքերը գրպանը։ Քայլում է և չի զգում, որ շաղ է նստում շինելի վրա, ցեխ է թռչում փեշերին։ Մի պատուհան բաց է... Լևոնը նայում է վերև։ Նրան դուր է գալիս, որ կենվորը գարնան այդ մշուշին բաց է արել պատուհանը, և մշուշը ներս է մտնում։*

*Ռադիոն երգում է բաց պատուհանից։*

*— Ուրեմն դեռ ուշ չէ,— մտածում է Լևոնը։ Մի քանի կանայք և տղամարդիկ ծիծաղելով անցնում են դեպի նոր տները։ Նրանք կինոյից են գալիս և ուրախ են, որ նոր տներում լուսավոր, ընդարձակ սենյակներ ունեն։*

*Լևոնը մեխվում է տեղը.*

*— Այ քեզ սատանա,— ասում է և շարունակում քայլերը։*

*Ռադիոյի աղջիկը երգում է.*

*Նրան կլեպ պոոշգ...*
*Նեյնիմ ամա՞ն - ամա՞ն...*

*Լևոնը դանդաղ է քայլում և ափսոսում է, որ այդ խոսքն ասաց։ Նայում է աջ և ձախ։ Ո՞ւր է ծաղկած ծիրանիների փողոցը... Ձախ կողմն էլ բարձրացել են շենքեր, նույնիսկ բարձր տներ վարդագույն տուֆից, կապույտ բազալտից։ Ահա այն պայտաձև տունը... Տունը երկար-երկար պատշգամբներ ունի, հարյուրավոր պատուհաններ բացվում են փողոցի վրա։*

*Բայց ո՞ւր են ծիրանիները...*

*Կարծես երկար տարիների օտարությունից վերադարձել է և փնտրում է այն տունը, որտեղ անցել էր իր մանկությունը։ Փնտրում է և չկա, և որովհետև չկա, ավելի է բարձրանում նրա հուզմունքը, նրա կարոտը։*

*Մինչ այդ՝ նա երբեմն հիշում էր այդ փողոցը։ Այն միտքը, թե ծառերն ու կավե պատը և այն փոքրիկ պատշգամբը դեռ մնում են,— այդ ամենը հեշտ էին դարձնում մոռանալ Լուսիկի հետ կապված կյանքը։ Կուզենա՝ մի անգամ էլ կգա ծանոթ փողոցը։*

Բայց հիմա չկա ոչ պատը, ոչ այն տունը, որի պատշգամբի տակ հորդ անձրևին պահվել էին, իսկ Լուսիկը սառը ձեռքը կոխել էր նրա թևքը։

Լևոնը հասավ մինչև անկյունը։ Պատշգամբով տան տեղը սև քարից կիսավարտ տուն էր, որի մի թևը մյուս փողոցի վրա էր շրջվում։ Նրա կողքին երկհարկանի տուն էր։ Այնտեղ արդեն բնակվում էին։ Երևում էին թաղարի մեջ դրված ծաղիկներ և թփեր։ Նրանց կանաչ տերևները կպել էին լուսամուտի ապակիներին։ Կարծես դժգոհում էին սենյակի օդից և կարոտում գարնանամուտի տաք մշուշը։

## 8

Երկհարկանի տան կողքին մշուշի միջից ցցվում էին բարձր սյուները։ Սպիտակին էին տալիս հանգած կրի գուբերը։ Գետնից մի քանի մետր բարձրացել էր պատերի գլուխը։

— Մեծ տուն է...

Լևոնը տախտակների, քարերի արանքով մոտեցավ։ Մի փոքրիկ սանդուղք էր դրված, որով ցերեկը բանվորները քար են տանում, մինչև պատերը բարձրանան, և սյուներից կախեն վերելակները։

Նա բարձրացավ սանդուղքով։ Ու միտն ընկավ մի մոռացված դեպք, որ երբեք, երբեք չէր հիշել։ Ինչպե՞ս էր ընկել մտքից... Գնացել էին ձորի կողմը։ Ամառ գիշեր էր։ Այնքան թափառեցին... Լույսը բացվում էր, երբ իջան քաղաք։ Տների պատուհանները բաց էին։ Առավոտի այն ժամն էր, երբ գիշերվա տապը գիջում է հովին, և խոր քուն են առնում մանավանդ երեխաները։

Այսպիսի մի սանդուղք հենված էր հողե պատին։ Լուսիկը խնդրեց բարձրանալ կտուրը։ Ներքևը լույս փողոցներն էին, կիսաքուն դռնապանները ավլում էին փողոցները, ջուր ցանում։

Ցածր կտուր էր, բակում բարդիներ, որոնց տերևները դեռ նոր սկսել էին դողալ լուսաբացի հովից։

— Լավ է մեր քաղաքը, չէ՞...— հոգնած հարցրեց Լուսիկը։

Լևոնի պատասխանը քաղաքին չէր վերաբերում։ Լուսիկի դեմքին կարմիր պուտեր էին, գիշերվա հետքերը։

— Իջնենք սառը ջրով լվացվենք...

Բարդիների տակով գնում էր ջուրը։ Մի կին ջուր էր առնում, քանի մարդիկ չէին զարթնել, և չէր պղտորվել առուն։ Նա նայեց, հասկացավ և ժպտալով ասաց.

— Փեշքիր բերե՞մ...

— Ո՞վ է,— լսվեց մի ձայն տախտակների կույտի հետևից։

Լևոնը կանգնել էր պատի վրա և կիսամթնում հիմքերի ձևից, գերաններից փորձում էր հաշվել սենյակների թիվը։ Մի ստվեր, գորշ անձրևանոցի մեջ փաթաթված, մոտեցավ։

— Բարև, ընկե՛ր...

— Բարև։ Ո՞վ ես,— հարցրեց անձրևանոցով մարդը։

— Շենքին էի նայում...

— Վայ, ընկեր Լևո՛ն, չճանաչեցի... Ներողություն։ Գնանք, գնանք բուդկան... Կրակ եմ արել,— և մարդը նորից մեկնեց ձեռքը, իջեցրեց նրան պատից։

«Ձայնը ծանոթ է, բայց չեմ հիշում»,— մտածեց Լևոնը և խոսքը դարձրեց շենքի վրա.

— Ի՞նչ շենք է...

— Սա, ընկեր Լևոն, բնակչինկոոպն է շինում... Համա ասում են ուսումնարան է։ Էդքանը մեզ հայտնի չի։ Էլ ո՞նց եք, լա՞վ եք... Մի անգամ ձեզ տեսա, ասի մոտենամ, մեկ էլ... Էս էլ իմ բուդկան։

Նրանք տախտակների ետևն անցան։ Մարդը տաշեղներից կրակ էր արել, վրան թեյամանը կախել...

— Հիմա էլ ըստի եմ բանում... Գիշերապահ եմ։

Կրակի մոտ ճանաչեց։ Օսեփն էր, ղազախեցի Օսեփը։

Երեք տարի առաջ նրա մոտ էր եկել տրեխներով, մորթե վիթխարի փափախը գլխին։ Ներս էր մտել և սարեցու զրնգան ձայնով ասել.

— Ինձ քու մոտ են ղարկել...

— Ի՞նչ կա։

— Ինձ պիտի ունթունես...

— Ո՞րտեղ։

— Հո մեծամեծի գործ չեմ ասում... Ղարաուլ, բան։ Կարամ լավ փայտոն քշիլ, ձի պահիլ։ Մի խոսք, ամեն բան ձեռովս վեր է գալիս...

Եվ իսկույն ավելացրել էր, որ գյուղից նոր է եկել և որ մեկից հեռացել է «կնկա պատճառով»։

Օսեփը դարձավ գիշերապահ։ Մի երեկո, երբ ինքը ներս մտավ հիմնարկը, Օսեփը միջանցքի ծայրից բղավեց.

— Ընկեր Լևոն, էս սհաթիս մի կնիկ թելեպոնով քեզ հարցրեց։ Ասի ըստի չի... Նհենց քաղցր էր խոսում։

Լուսիկն էր հարցրել։

— Ընկեր Լևոն, բախտս բերեց... Գնացի Աշտարակուց մի աղջիկ առա. իմ ուզած օղլուշաղն է... Դեյրա եմ առել, մի ջուխտ բատինկա։ Տես,— և նա արձակեց անձրևանոցի կոճակները,— խստակ մաքուր... էս սաղ նրա շնորհքն է... Համա էս գործս ուզում եմ փոխած... Այսուհետ ինձ համար չի։ Ես ըստի մենակ, նա ընդի...— և կրակը խառնելով ավելացրեց.

— Ասենք, պատահած վախտը գալիս է... Դե, տան հաշիվը ուրիշ...— Ապա անհամբեր հարցրեց.

— Հմի՞ որդի ես, ընկեր Լևոն. քո կուշտը որ գործ լինի, էլի կգամ...

Լևոնը նայում էր կրակին։ Նրա ականջովն էր ընկել մի խուլ ձայն, որ փետնի տակից էր գալիս։

— Էս ջրի ձա՞յն է, Օսեփ...

— Հա, ըստի մի արխ կար... Խանգարում էր, տափի տակը գցեցին։ Էս նրա ձենն է։

Ծաղկած ծիրանիների փողոցի առուն։ Քարերի տակ, մութի մեջ գնում են ջրերը, և նրանց ձայնը խուլ է հնչում։

Լևոնը վեր կացավ։

— Չայ խմի...

— Չէ, գնում եմ։— Եվ մի քիչ մտածելուց հետո հարցրեց.

— Օսե՛փ, էստեղ ծիրանի ծառեր կային...

— Ճշմարիտ, քո ասածն ա, ընկե՛ր Լևոն... Հրե մի հատը մնում է...

Տախտակների կույտերի ետևը մնացել էր մի ծիրանի։ Երևի նա մնացել էր, որովհետև տախտակները դարսել էին առաջը։ Իսկ պատի հետևի շարքը չկար։ Նրանց տեղը խիճերի, ավազի շեղջեր էին։

— Ըստի աղաք էլ եկած կլինես, որ հարցրիր...

— Հա, ես էս փողոցում ապրել եմ... Ասի տեսնեմ ի՞նչ կա...

— Ինչ կա՜... Պալատներ կան, ընկեր Լևոն... Սրա մի հատը մեր գեղում լիներ, սաղ ժողովուրդը մեջը կհավաքվեր։

— Էդ էլ կլինի, Օսե՛փ...

— Էն վախտը կնիկս կառնեմ կգնամ գեղը... Սիրտս մեր սարերը շատ ա ուզում, է՜...

Օսեփը նրան ուղեկցեց մինչև փողոցը։ Դժգոհեց, որ Լևոնը թեյ չխմեց։

Լևոնը վերադարձավ դեպի Ասաքի տան փողոցը։ Քայլում էր խաղաղ ուրախությամբ, իր այցելությունից գոհ։ Մի անգամ էլ նայեց նոր շենքերին։

— Եթե Ասաքը քնած չլինի... Երևի նա էլ ինձ նման քիչ է լինում այս կողմերը։ Մեր ընկերներից շատերը չեն տեսնում այն բոլորը, ինչ կառուցում ենք։ Չեն տեսնում...

Ապա նորից հիշեց ծիրանիների փողոցը, Լուսիկի կապույտ զգեստը և առուն, առուն, որ կայտառ շառաչով գալիս էր անարատ ձյուներից։ Մի՞թե այդքան խոր հիշողություններ է թողել այն աղջիկը, այն անհոգ գարունը՝

Ո՞ւր մնաց ծաղկած ծիրանիների փողոցը... Նրա սրտում խոխոջաց կարոտի մի մթին հուշ, ինչպես հին առուն գետնի տակ։

Քայլում էր և չէր զգում ոչ մշուշ, ոչ շաղ։ Չլսեց և ռադիոյի երգը։ Իմաստուն տխրությամբ նա հարցնում էր, թե նրանք, որոնք ապրելու են քարակոփ այս բարձր շենքերում, պիտի գիտենա՞ն, որ այստեղ եղել է կառուցողներից մեկի ծաղկած փողոցը և ոչ թե ցամաք անապատ...

## 9

Լևոնը ծռվեց Սահակի տան կողմը։

Բեռնատար ավտոները, որոնք շինությունների համար քար, ավազ էին բերում, այդ փողոցով էին անցնում։ Նրանց անիվները խոր ակոսներ էին գծել ցեխի մեջ։ Այդ փողոցով էին անցնում և գյուղերից եկող սայլերը, որովհետև հին ճանապարհը նորոգում ու լայնացնում էին։ Հաղորդակցությունը գետի նման իր հունը շուռ էր տվել այդ փողոցով։

Լևոնը գնում էր սայթաքելով, ոտքերն զգույշ կոխելով ցեխի մեջ շարած քարերի վրա։ Լապտերների լույսից ցեխն ու գուբերի պղտոր ջուրը փայլում էին խավար փայլով։

Վերևը մութն էր։ Տներն ավելի նոսր էին, լապտերները քիչ։ Շուտով պիտի ծռվել... Արդեն երևում է Ասաքի տունը... Լույսեր կան, ուրեմն քնած չեն։ Երեխաները պիտի աղմկեն։ Ասաքի կինը պիտի վառի պրիմուսը... Եվ նույնը պիտի ասի, ինչպես միշտ։

— Լևոն, խելք ես արել, որ ընտանիք չունես... Մենակ ապրելը հանգիստ է։

Վերևը մութն էր։ Մթնում լսվեց մտրակի շառաչ։ Անիվներ ճռնչացին։ Մեկը բղավեց.

— Դենը պահի՛, դենը պահի՛...

Անիվները ճռնչացին։ Մի րոպե հետո մթնից դուրս եկան մի զույգ գոմեշներ։ Լապտերը լուսավորում էր

նրանց լայն ճակատները և սև եղջյուրները։ Մի քիչ առաջացան։ Երևաց երկրորդ զույգը, բայց սայլը չկար... Ապա երրորդ զույգը, նույնիսկ զրնգաց շղթան, որով միացրել էին լծերը։ Գոմեշները ուժ էին անում, ձգվում առաջ։ Նրանց ոտքերը ցեխի մեջ սայթաքում էին։ Նրանցից մեկն ընկավ հետևի ոտքերի վրա և ամբողջ ծանրությամբ կախվեց լծից։ Մթնից մի մարդ դուրս թռավ և մտրակեց։ Գոմեշը փնչաց։

— Ի՞նչ են քաշում...

Լևոնը կանգնել էր քարի վրա և հետաքրքիր նայում էր։ Գոմեշները դանդաղ էին շարժվում։ Խավարի մեջ այնպես էր երևում, կարծես վերջ չունի նրանց շարքը, և մի ահռելի ծանրություն գետնի մթին խորքից գոմեշները քաշում են լույս աշխարհ, քաշում են և դեռ ծայրը չեն հանել։

Լևոնը մի քանի քայլ արեց։ Մի խումբ երիտասարդներ վազեցին գոմեշների վրա։ Մի քանիսը մոտեցան առաջին անիվներին։ Վերջին անիվները բավական հեռու էին։ Նրանք առաջին անիվների հետ միացված էին հաստ գերաններով, որոնց վրա մի վիթխարի և տարօրինակ բեռ էր, որ մշուշի մեջ աղոտ էր երևում։ Կարծես փոքր շոգեմեքենա էր, ջարդված խողովակով։

— Արտա՛շ, քար դիր տակը, քա՛ր...

— Սպասի գոմեշները նաֆաս առնեն...

— Ի՞նչ էլ ցեխ է...

— Սրանց ցեխը մերից շատ է,— ասաց մեկը, որ հենվել էր գոմեշին։

— Ի՞նչ է էդ, ընկերնե՛ր,— հարցրեց Լևոնը։

— Սև «հաց», ընկե՛ր,— պատասխանեց նա, որ կանգնել էր առաջի լծի կողքին։

— Արտա՛շ, մի հարցրու տեղը... Գուցե իմանա,— մթնից կանչեց մի երիտասարդ։

Առաջին կանգնողը՝ Արտաշը, Լևոնից հարցրեց, թե ո՞րտեղ են հանձնում հավաքած մետաղը։ Լևոնը հիշեց

իրենց պահեստի մոտ մի կիսավեր շենք, որտեղ կիտված էին ժանգոտած մետաղի կտորներ։

— Շրջաբերական են ուղարկում, ալարում են շնորհքով գրեն տեղը,— հանդիմանեց Արտաշը։

Երիտասարդները Ախտայի շրջանի գյուղերից մեկի կոմերիտականներն էին։ Տարիներ շարունակ նրանց գյուղի ներքևն ընկած էր եղել այդ հնադարյան ձևի կատոկը, որի չորս կողմը գարնանը խոտ էր կանաչում, և հովվի շները շոգից նեղվելով թաքնվում էին ներսը։

Ընկած էր եղել, ժանգոտվել էր, ծանրությունից մի քիչ թաղվել հողի մեջ։ Կոմերիտականները մեծ դժվարությամբ հանել էին, դրել գերանների վրա և նույնպիսի դժվարությամբ, ցեխ կոխոտելով, հրելով գոմեշներին և աղմկելով՝ իջեցրել էին քաղաք։

— Արտա՛շ, տեղն իմացա՞ր,— կանչեց նույն ձայնը։ Մթնից կանչողը ծիծաղեց։ Նա ինչ-որ բան ասաց, բայց չլսվեց։

—Բաց կլինի՞ էնտեղ...

— Տո դե սպասի է,—ընդհատեց Արտաշը, որ ոգևորված պատմում էր իրենց կրած դժվարությունները։

— Երկու հարյուր փութ կլինի,— և երեսը դարձրեց դեպի հետ։

—Երեք չես ասում,— վրա բերեց մի ուրիշը։

Գոմեշների շնչառությունը հանդարտվում էր։ Հոգնած կենդանիները ոտները փոխնեփոխ բարձրացնում էին։ Նրանք մինչև կուրծքը ցեխի մեջ էին։ Կարծես ճեղքել էին ցեխի հեղեղը։

Արտաշն էլ էր ցեխոտված։ Այտի վրա պարզ երևում էր ցեխի չորացած շիթը։ Մթնից նորից կանչեցին, թե իմացա՞վ պահեստի մասին։

— Իմացա՛, բայց պարզ չի...

— Դե հա՜... Գոմեշները սառան։

Այդ կանչին բոլորը շարժվեցին։ Ոմանք բարձրացրին մտրակները գոմեշների վրա, ոմանք վազեցին՝ անիվները հրելու...

— Դեսը հա՜, դե՛սը…

— Հը՛, հը՛…

— Մարալին, Մարալին…

— Մարալ հա՜…

Գոմեշները ձգվեցին, շղթան զրնգաց, անիվները ճռնչացին։ Լսվեց մի խոր տնքոց։ Տնքացին մարդիկ, անասունները, և առաջին անիվները գլորվեցին։ Լևոնի ձեռքերը խրվել էին անիվի ճաղերի ցեխին։ Նա մյուսների հետ մի կողմ քաշվեց, երբ անիվները դուրս ելան ցեխից։

Շարժվեցին գոմեշները…

Արտաշի հետ փողոցի մեջտեղով մտազբաղ գնում էր Լևոնը, գնում էր ցույց տալու պահեստի տեղը, գնում էր Արտաշի հետ խոսելով և, երբ գոմեշները դժվարանում էին քաշել, նա հետ էր գալիս անիվը հրելու։

Ո՛չ ցեխ կար, ո՛չ անորոշ կսկիծ…

* * *

Մաչիտա մայրիկը առավոտ կանուխ զարմացած նայում էր Լևոնի շինելին, որից գիշերը ջուր էր կաթկթել հատակին։

— էս կանդար չամուռ… Դյո՞ր ի կնացե գիշերը մեր տղեն։

Ծվ գլուխը խորհրդավոր շարժեց։

Դուրսը արև էր, ինչպես նա գուշակել էր։ Արևի ճառագայթները պատուհանից ներս էին ընկել և խաղում էին գորգի վարդերի և նուռերի հետ։

Լևոնը խորը քնի մեջ էր։ Թախտի առաջ ցեխոտ սապոգներն էին։ Նա ուշ էր վերադարձել ու չէր հանվել։ Վերարկուն էր քաշել վրան։

Երբ գորգի վարդերի վրայով ցած սահեր արևը և խաղար նրա ունքերի և արտևանունքների հետ, Լևոնը պիտի զարթներ և պիտի սկսվեր աշխատանքի առօրյան։

## ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

### 1

*Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը,—խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում։ Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը, երբ պառավի դողացող ձեռքերը ձգվում էին դեպի դռան մաշված ունկը։ Խավար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնգոցը և Շարմաղ բիբու ջինջ ձայնը.*

*— Քո փառքը շա՜տ, էսօր էլ զանգերը զարկին,— մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրիկնապահի զանգերն ավետում էին անանձնական անդորր։*

*Նա կանգնում էր դռան շեմքին, աչքը դեպի Ներքևի բլուրները, որոնք անսահման հեռվում ձուլվում էին մայրամուտի մուգ-կապույտ երկնքի հետ և կազմում եզրը մի անգո աշխարհի, որին յոթանասուն տարի անդավաճան հավատում էր այդ միամիտ կինը։*

*Կանգնում էր դռան շեմքին և կարծես թե տեսնում էր պղնձյա զանգերի տխուր զողանջները, ինչպես մթնող երկնքի տակ նազով ճախրող աղավնիները։ Նա հավատում էր, որ երեկոյան զանգերի հետ երկնային մի օրհնություն թրթռալով ներս է մտնում ու քսվում հին տան*

սևացած քարերին, նրա այրվող օջախին, ինչպես ներս կմտներ գետնի երեսով սողացող մշուշը։

Եվ այդ հին հավատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները։ Եկեղեցի չէր գնում. ոչ աղոթք գիտեր, ոչ ծանոթ էր եկեղեցական ծեսերի։ Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրա իջնում էր մի խաղաղ երեկո, ճախրում էին ոսկեթև աղավնիները. և այդ ամենը ռամիկ հավատով նա ընդունում էր որպես անքննելի խորհուրդ, որ մնացել էր գյուղական աղջկա անուրախ մանկությունից։

Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը հետ քաշեց և ոտքը շեմքին դրեց, հանկարծ հետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խուպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ ղողանջը։

Տանեցիները, որոնք սփռոցի չորս բոլոր նստած լուռ ընթրում էին,—արձանացան և զարմացած իրար նայեցին։ Ահ կար նրանց աչքերում։ Նույնիսկ փոքրիկ Երեմը բնազդով զգաց, որ խուպոտ ձայնը բոթ է գուժում։

— Է-հե՜-հե՜յ,— ալիք-ալիք դիզվեց ձայնը.— Ժողովո՜ւրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղա՜ա՜ք, հե՜յ-հե՜յ... Ով չտանի, թագավորի հրամանով տունը, տեղը, է-հե՜-հե՜յ...

Եվ ձայնը հեռանալով նվազեց, որովհետև գզիրը ուրիշ կտուր բարձրացավ և երեսն ուրիշ թաղի կողմը դարձրեց։

Շարմաղ բիբին չլսեց, թե զանգերն ինչպես լռեցին և ո՞ւր կորան նրանց վերջին թավ ելևէջները։ Դուռը դժգոհ վրա դրեց, և դուռը չերգեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգստաց պառավ շան նման։

— Ջո՛ւ, բայղուշ, հենց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկավ, տեղը նստեց, և երեխա-

ները տատի ներկայությունից սիրտ առան,— Սիմոնը խոր հառաչով, կարծես ինքն իրեն, ասաց.

— Էսօր Մինասի տղան էր պատմում... Ասում էի սուտ կլինի, ա՛ռ քեզ...

— Ապի, յանի թագավորն էդքան ձի ինչի՞ ա հավաքում,— հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ութ տարեկան Շողերը։

— Ես ի՞մ, —ուսերը վեր քաշեց հայրը,— կռիվ ա, բալա ջան... Մարդ են ջարդում, ձիեր են կոտորում։ Ժողովուրդ տո՛ւր... Թագավորի հրաման ա։

— Փո՛ւ, փո՛ւ...

Անհայտ էր, թե Երեմը այդ բացականչությամբ իր զարմանքն էր արտահայտում, թե՞ պաղեցնում էր տաք ապուրը։ Մայրը սկսեց նրան կերակրել և ահը սրտում ամուսնուն հարցրեց.

— Մեր Ցոլակը չափումը կգա՞,— բայց Սիմոնը, որ անակնկալ մտքերի հետ էր, չլսեց նրա հարցը։

Ցոլակը նրանց ձին էր, կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ։ Երկար, ալիքաձև պոչ ուներ Ցոլակը։ Եվ ասում էին, թե մի հին և ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ձին, որ Սիմոնը գնել էր երկու տարի առաջ, փոխարենը տալով իրենց էշը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն։

— Տուն եմ, երեխաների տեր եմ, առանց ձիու հնար չկա,— ասել էր նա և ուրախության ժպիտով առաջին անգամ ձին քաշել աղբյուրը։ Հենց այդ օրն էլ նրան անվանել էին Ցոլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը՝ Սիմոնի մանկության տարիներին։

— Հակառակի պես հայվանն էլ ջանով ա,— ասաց Սիմոնը և սթափվելով խոր մտքերից, դանդաղությամբ հացի փշուրները փեշից սփռոցի վրա թափելով,— տարվա էս ժամանակ ձին էլ էդքան ջանով լինի։ Հալբաթ էսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ, փափախի մորթու միջից

ծղնոտները մեկ-մեկ դեն գցելով, դուրս եկավ գյուղամեջ, դրացի հարևաններից իմանալու ավելի ստույգ տեղեկություն։

Դարպասի մոտ Սիմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արոտից վերադարձել և ախորժակով խժռում էր սարի թարմ խոտի խուրձը, երբեմն մռութով քրքրում խուրձը և փնտրում սուսամբարի տերև։ Սիմոնը տխուր նայեց. Ցոլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալուսին մեղմ շողշողում էին։

Նա մի անգամ էլ տեսավ, որ ձին նիհար չի և չար վրդովանքով կանչեց.

— Սատկած, քիչ կեր էլի, տրաքվելու չե՞ս հո...

Կանչեց ու խուրձը դրեց գոմի կտրան։ Ձին մեղմ վրնջաց և վիզը մեկնեց դեպի խուրձը։

— Հը՞, բոյը կարճ չի՞, նանի... Ջափումը թե չգա,— դարձավ նա մորը, որ հավաքնի մուտքը կալել ու կանգնել էր նրա կողքին։

— Ես ի՞մ, այ որդի...

— Ռուսի ղազախը սրա վրա կարո՞ղ է նստի... Չէ՛, չեն տանի,— հուսադրեց իրեն Սիմոնը և քայլեց փողոցով։

Շարմաղ բիբին նայեց որդու օրորվող մարմնին, մինչև նա հալվեց մթնում և կենդանական խանդաղատանքով ինչ-որ բան մրմնջաց, որ չգիտես աղո՞թք էր, օրհնությո՞ւն, թե՞ աղոտ հույսի ակնկալություն։

## 2

Մութն էր, երբ Սիմոնը տուն եկավ։ Գոմում կապած ձին լսեց տիրոջ ոտնաձայնը, նորից վրնջաց։ Սիմոնը խղճահարվեց. նա ճրագը վառեց, խոտի խուրձը գրկեց և ներս մտավ գոմը։ Ցոլակն ուրախությունից վրնջաց, մի քանի քայլ արեց, փորձեց կապը կտրել, բայց չկարողացավ։ Սիմոնը խուրձը մսուրը դրեց և, երբ ձին մռութը կոխեց մեջը,— ձեռքով շոյեց Ցոլակի փափուկ մեջքը։

Ընդարձակ գոմի անկյունում նստել էր պառավ կովը։ Երկու այծերը, որոնք բարձրացել էին մսուրի վրա, Սիմոնին տեսնելով ցած թռան և միրուքներն օրորելով մոտ վազեցին։ Սակայն Սիմոնը չմոտեցավ ոչ կովին և ոչ էլ այծերին։ Նա մի պահ կանգնեց, ապա ձիու ոտքերի տակ թափված խոտը ժողովեց և դուռը դրեց։

Երեխաները քնել էին։ Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, դժվարությամբ թելում էր հաստ ասեղը, որպեսզի կարկատի որդու գուլպաները։ Նրանց տան վաղուցվա կարգն էր այդ։ Երբ Սիմոնը քաղաք գնար, մայրն էր հոգում նրա ճանապարհի պատրաստությունը։

Խրճիթի հին դուռը ճռռաց, պառավը ասեղը թողնելով՝ անհանգիստ հարցրեց.

— Հաստա՞տ ա...

— Բա հո սուտ չի...

— Ի՞նչ են ասում։

— Ասում են բոյը հաշիվ չի, եթե ձին առողջ է, կտանեն...— և դարձավ մորը.— Նանի, Յոլակի էն մեծ տոպրակն ո՞ւր ա, հետս դարման եմ տանելու։

Շարմաղ բիբին վեր կացավ մեծ տոպրակի միջի քուրքը թափելու։

Քնելուց առաջ Սիմոնը մի անգամ էլ գնաց գոմը։ Պառավ կովը այդ անսովոր այցից զարմացած, մինչև վեր կենար ու որոճալով մոտենար գոմի դռան, Սիմոնը ձիու համետն ու չվանները սարքեց, դրեց ախոռի մոտ ու դուրս եկավ։

Դուրսը աստղալույս գիշեր էր։

Գյուղում մեկ-մեկ հանգչում էին կրակները, և կրակների հետ լռում էին ձայները։ Ներքևը, գետափի մարգերում, կանչում էր գիշերահավը։ Արտերից, դաշտերից և հեռվի անտառից հովը բերում էր զով սառնություն և հազարավոր խոտերի բույր, որի մեջ ավելի սուր զգացվում էր սուսամբարի և արդեն չորացող դաղձի կծու հոտը։



409—19

Սիմոնը նստել էր դարպասի քարին, և քարի նման հոգսը ծանրացել էր նրա սրտին։ Հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հավասար աշխատում էին ինքն ու Յոլակը։ Իսկ ա՞յժմ... Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն, այնպես, ինչպես անցյալ ամառ շատ տներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին։

Սակայն հոգնությունը հաղթեց, ու ներս մտավ տուն։

— Հակառակի պես անիրավի մեջքը կասես հինայած լինի,— նորից հիշեց Սիմոնը։

3

Լույսը դեռ չէր բացվել, երբ Սիմոնը ճրագը ձեռքին մտավ գոմը, Յոլակին համետեց ու դուրս քաշեց։ Հարևան բակերում ճրագներ էին շարժվում, ճռնչում էին դռները, ինչ-որ ձայներ էին գալիս։

Սիմոնը լսեց իր հարևանի՝ Սաքու տղայի ձայնը։ Նա բարկացած կանչում էր հարսի վրա, թե ինչու ձիու չվանը լույսով չի գտել։

Դռանը կանգնել էին Շարմաղ բիբին, կինը և նրա փեշից բռնած քնաթաթախ Շողերը, որ չէր լսել մոր խոսքին և լացով հագել շորերը, որպեսզի տեսնի, թե ինչպես են ճանապարհ գցում Յոլակին։

Տխուր ժամ էր, երբ Սիմոնը դռնից հանեց ձին։ Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկյանին, որ աղի արտասվեն։

Յոլակը գոմից երբ դուրս եկավ, վրնջաց և ականջները խլշեց։ Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեց և աղիողորմ ասաց

— Ջա՜ն,— ու սրբեց արցունքը։

Շողերը մոտ վազեց, երեկվա խոտի փշրանքից մի

*բուռ մոտեցրեց ձիուն։ Ցոլակի տաք ռունգերից մի ջերմ շունչ շոյեց աղջկա սառած ձեռքերը։*

*Սիմոնն ամրացնում էր ճանապարհի պաշարը, կապում հարդով լի պարկը և միաժամանակ տնեցիներին պատվիրում, որ ցերեկն այծերը հեռու չքշեն, որ եթե արև լինի՝ հնձած խոտի կիտուկները շրջեն և, եթե ջրի հերթն իրենց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն։ Հենց այդ խոսքին Սաքու տղան կանչեց.*

*— Սիմոն, բա չպրծա՞ր...*

*— Եկա՛, եկա՛։*

*Եվ Ցոլակի սանձը քաշեց։ Տանեցիները դանդաղաքայլ հետևեցին մինչև հարևանի դուռը, ասես հուղարկավոր էին մի թանկագին դագաղի, որին ուղի էին գցում մահվան անվերադարձ ճանապարհով։*

*Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր. լաց էր լինում և Շողերը, լալիս էր նրա մայրը։ Փողոցին չհասած, մայրը լսեց Երեմի ձայնը.*

*— Ապի՛, ապի՛...*

*Դռան շեմքին կանգնել էր մերկ երեխան ու բարձրբարձր հեկեկում էր և կանչում հորը։ Բայց ուշ էր։ Սիմոնը Սաքու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորների։*

*Մայրը վերադարձավ, գրկեց տղային ու տուն մտավ։ Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և պահվեցին բլուրի ետևը։*

*Արևը նոր-նոր շողերով ոսկի էր թափում բարձր սարի կատարին, երբ վերջին ձիավորը երևաց դարիվերի գլխին և անհետացավ, ինչպես սև ուրու։*

## 4

*Ձիավորները սկզբում լուռ էին, ոմանք առավոտի զովից ընդարմացել ու կարկամել էին։ Սակայն բոլորն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմա-*

տում իրար, ուշի-ուշով դիտում, որպեսզի որոշեն, թե ո՞րը նորից կվերադառնա այս ճանապարհով, և որի՞ սանձն ու սարքը տերը շալակած տուն կբերի, որպես մեռած մարդու զգեստներ, որոնց վրա այնպես դառնաղի ողբ են երգում գյուղի կանայք։

Գնում էին մեկ-մեկ, խումբ-խումբ։ Մեկը գրպանից հաց էր հանել, մյուսն ագահությամբ ծծում էր չիբուխը, երրորդը կախ էր արել ոտքերը, աչքը ձիու ականջներին և լուսաբացի նինջով օրորվում էր ձիու հետ։

Բայց երբ սարի հետևից արևը բարձրացավ, կարծես ջերմացավ տխուր ու լուռ ձիավորների սիրտը։ Ամենից առաջ խոսեց դարբին Ավագի տղան՝ շիլ Իվանը, որ սարը բարձրանալիս սահել և հասել էր մինչև ձիու գավակը։

Նա ընդհատեց իր տխուր երգը և միամիտ պարզությամբ ասաց.

— Ես աստծու քոռ հավատն անիծեմ... Ի՛մ աչքս էսպես արեց։ Իմ ձին որ քոռ լիներ, ես էս սարի գլխին ի՞նչ ունեի։

Մի քանիսը ծիծաղեցին։ Սաքու տղան մտքում բարկացավ նրա վրա.

— Անդա՛րդ հեյվան...

— Հրեն Հիբանի ձին տեսեք,— շարունակեց Իվանը, ուրախ, որ ընդհատեց ծանր լռությունը,— կասես ղազախի ձի լինի։ Հիբան, պրիստավը քեզ էդ ձիով տեսնի, քեզ էլ հետը կտանի...

— Ի՞նչ պակաս կավալեր ա,— ձայն տվավ մեկը։— էն օրը Քարոտի առվով էնպես թռավ, որ մնացինք արմացած։

— Մի տեսեք է՛... Տերտերն իրա ձին ժամհարին ա տվել։ Այ, ինչ եմ ասել հալալ ախպերություն,— խոսքը փոխեց դարբնի տղան։

— Ա, քիչ յավա-յավա խոսիր, է՛յ...— կանչեց Տուղունց Աքելը, որ գյուղում ավել անունով հայտնի էր որ-

պես «աղվես խեղդող», երիտասարդ ժամանակ ձեռքով աղվեսը խեղդելու համար.— տերտերը հիվանդ տեղով կարող ա՞ ձի նստի։

— Դե սար մնացել ա, որ մեզ համար աղոթք անի, էլի՛,— կծու հեգնեց մի ուրիշը։

Ընդհանուր խոսակցությունից բացի, ծայր առան և մասնակի զրույցներ։ Ոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար մի պատմություն սկսեցին, ոմանք էլ խոսում էին պատերազմի և նրա արհավիրքների մասին։

— Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշավու կողմերից... Լավ չի գրում. ասում է՝ էս է մի ամիս է ծմակի մեջ, գիշեր-ցերեկ թոփերը տրաքում են։ Մինչև անգամ չոլ դուրս գալն էլ ա երկյուղալի...

— Իմ հորեղբոր Սիմոնն էլ ա գրել։ Լազարեթից ա գրում, համա տեղը հայտնի չէ։ Մի տեսակ անուն են ասում... էն օրը տերտերը ինչքան ման եկավ գրքերում, չգտավ։ Ասում ա էդպես քաղաք Ռուսեթու հողումը չկա։

— Նրա ի՞նչն ա որ...

— Ոտիցն ա կպել։ Գրում ա, որ ծանր չի, մի ամսից պիտի դուրս գա։

— Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիվն ինչո՞վ կվերջանա,— դարձավ նրան դարբնի տղան։ Շատերը ծիծաղեցին, որովհետև Շուշունց Աքելը իր ողջ կյանքում իրենց գյուղից և գավառակային ավանից այն կողմը չէր եղել։

Ինքը՝ Աքելը, դժգոհ սաստեց.

— Անհամ անհամի տղա...

Քիչ հետո խոսք ընկավ ձիերի պետական գնի մասին։

— Թեկուզ անունը փող, ի՞նչ կառնվի դրանով...

— Երկու բեռ գարի...

— Էդ էլ չես առնի։

— Դե գոնե գինը տային։

— Տային էլ, որտեղից ես ձի առնում։ Մեր գյուղից որ էսքան ձի են պահանջել, դու տես ամբողջ գավառից քանիսն են բերել...

— Այ տղա, էս հո կարգին զորք ենք,— և դարբնի տղան բարձր կանչեց.

— Սլուշա՛յ... Ափիցեր Աքել Շուղոմցով...

— Ա, հերիք տնազ տաս Աքել ամուն։

— Աքել ամիս նեղանալ չի... Դե, շարքով գնացեք, տեսնեմ ով ա ետ ընկել,— ասաց Իվանը և ձին ճանապարհից հանեց։

— Թամամ հաշիվ... Աբրահամի ձին չկա՝ էն ա բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գելը ցրիվ ա տվել, մեկ էլ Կոստանդ աղայի սպիտակ ձին...

— Կոստանդը հիմա քնած, ձին էլ ոսկի գարին առաջը... Վեր կկենա, յուղ ու մեղր կուտի, ձին կթամքի և Կաթնաղբյուր մեզ կհասնի։ Նա հո քո հավասարը չի՞,— ասաց Գիլանց Մուքին։

— Մի հաշիվ չի՞... Էս գլխից հենց նրա ձին են տանելու,— ասաց Սիմոնը և տխուր նայեց Ցոլակին, որ ականջները խաղացնելով գնում էր մյուս ձիերի կողքով։

— Ոնց չէ,— առարկեց Իվանը,— քո Ցոլակը առաջի նոմերը կհանի, նրանը չէ... Թող Շարմաղ հոքիրն ինչքան ասես լաց լինի,— ձայնը տխուր մեղմացրեց Իվանը։

Սիմոնը վրդովվեց։

— Ուրեմն Կոստանդի սպիտակ ձին ու Ցոլակը մի հավասարի են... Նա սպիտակ ձիու արժեքը մի բեռ ոսկի է տվել։ Ես ի՞նչ եմ տվել...

— Էս է, սև ու սպիտակ էնտեղ կջոկվի,— ասաց դարբնի տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց պատմել, թե իբրև գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ և ծովը կապել ռուսների հազար-հազար զորքի վրա...

## 5

*Արևը բավական բարձրացել էր, երբ ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գիլանց Մուքու առաջարկով իջան հանգստանալու։ Նրանք ձիերն արձակեցին աղբյուրից ներքև ընկած արոտներում, իսկ իրենք տեղավորվեցին աղբյուրի մոտ և բաց արին ճանապարհի պաշարը։*

*Այդ աղբյուրը, ուտելու պահանջը, գուցե և այն, որ ճանապարհին հոգնելու չափ խոսել էին պատերազմից, ձիերի հավաքից և օրվա չարիքներից,— այդ ամենը աղբյուրի մոտ նրանց զրույցը փոխեց խաղաղ և սովորական առօրյայի հունով։*

*Կարծես հունձի ժամանակն էր, և ինչպես միշտ, ծփում էին լեռան լանջերի բարձր խոտերը։ Եվ ինչպես ամեն տարի, ահա նրանք ձիերով եկել են սարը։ Հիմա կզրնգան գերանդիները, լորը կթռչի խոտերի միջից, և լեռնային կաքավը կկարդա կանաչ սաղմոսը։*

*Դարբնի տղան հանկարծ նկատեց, որ Շուղունց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս է հագել։ Եվ այդ բուռն զվարճություն պատճառեց մյուսներին։*

*Նրանց զվարթ ծիծաղը լռեց, երբ Գիլանց Մուքին, որ արդեն ալեհեր ծերունի էր, բարձրացրեց օղու առաջին թասը։*

*— Բարի լույս բացվի մեզ վրա և մեզ նման չարքաշ մշակների վրա... Բարով տեսնենք մեր գավակների ազատությունը սրի բերանից։ Ողջություն լինի և արդար լիություն։ Դու մեր սրտովն անես,— և ալեհեր գլուխը դարձրեց դեպի ջինջ երկինքը, կարծես նրա անհուն խորքից մի աչք քաղցր նայում էր այդ խեղճ մարդկանց։*

*Սիմոնը լուռ էր։ Նա թիկնել էր քարին, թրջում էր հացը պաղ ջրի մեջ և դանդաղ կրծում։ Երբեմն նայում էր արածող ձիերին, որոնք գլուխները չէին բարձրացնում ցողապատ խոտից։ Գյուղի ձիերի հետ արածում էր և Յոլակը։*

*Սիմոնը մերթ աչքի տակով համեմատում էր ձիու*

բարձրությունը մյուս ձիերի հետ և տեսնում, որ Ցոլակը նույնիսկ Գիլանց Մուքու ձիուց էլ կարճ է, մերթ հայացքը գցում էր սարալանջի կողմը։ Եվ դժվարին մտքերը խռնվում էին ուղեղում ու ելքը չէր տեսնում։ Ահա՝ նորից դառնը կչոքի դառն աղքատությունը, վիզ կծռի ուրիշին, որ իր խուրձերը տուն բերեն, որ խոտը սարից բերեն։ Ցոլակին կտանեն, և հնձած արտում խուրձերը անձրևից կսևանան...

— Թե Գիլանց Մուքու ձին հավասարվի Ցոլակի հետ... Թե չէ՝ նրանից կարճը չկա...

— Սիմոն, հրե՛ն,— հանկարծ կանչեց դարբնի տղան, և Սիմոնը ցնցվեց։

Նա գլուխը հետ դարձրեց։

Հեռվից խաղալով և խայտալով վազում էր սպիտակ ձին, քամին փոփռացնում էր բաշը, և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները։ Փոշի չէր բարձրանում գետնից, և թվում էր, թե ձիու արագավազ ոտները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մեջ։

Արևը դեմից էր և արևը ոսկեվորել էր ձիու մարմար ճակատը, արծաթաձույլ ասպանդակները և պողպատյա սանձը։ Ձիավորը ձիու հետ միաձույլ էր, և թվում էր, թե արևմուտքի գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմարիոնե մի հեծյալ և արշավում էր որպես չքնաղ տեսիլք։

Գյուղացիների զրույցը դադարեց։ Բոլորը նայում էին նրա կողմը։ Նույնիսկ ձիերից մի քանիսը բարձրացրին իրենց գլուխները և հափշտակված, անասնական ահով նայեցին սպիտակ ձիուն։

Շուղունց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր։

— Այ ձի... Հազար մանեթ գին ունի։

— Տերն էլ պակաս փող չունի։

— Էդ ձին ինձ տան, կռիվ չգնացողը մարդու տղա չի,— ասաց դարբնի տղան։

— Նրա վրա ամենաքաշը գեներալ կնստի...
— Վրան նստողն էլ գեներալ է։

Երբ ձիավորներին հասավ, Կոստանդ աղան սանձը ձգեց և հազիվ կարողացավ պահել ձիու գլուխը։ Կապույտ քրտինքի փրփուրը նստել էր ձիու սպիտակ մորթի վրա։ Ձին կարմիր ռունգերը փնչացնում էր, կանգնած տեղը ոտքերն անհանգիստ դոփում։

— Դուրս գալը մի սհաթ կա՞, Կոստանդ աղա,— շողոքորթ կեղծությամբ հարցրեց Շուղունց Աքելը, որին շշմեցրել էր այդ տեսարանը։

— Սհաթին չեմ նայել... Մինչև դուք ձիերը նստեք, ես բազար կհասնեմ։ Չեմ կարողանում գլուխը պահեմ, ձեռքերս կտորեց...

Դարբնի տղան կամաց վրա բերեց.

— Տո՛ւր ինձ, ես կպահեմ։

Կոստանդն ուզեց ինչ-որ բան ասի, սանձը մի քիչ թուլացրեց. սպիտակ ձին նույն վայրկյանին զգաց այդ, և տիրոջ խոսքը մնաց կիսատ։

Գյուղացիները տեսան սպիտակ ձիու ամեհի ոստյունը։ Մի ակնթարթից ձին պահվեց սարի հետևը։

— Հրեղեն ձի սրան կասե՛ն...

Քիչ հետո գյուղացիները քաշեցին իրենց ձիերն ու ճանապարհ ընկան։

## 6

Երկու լեռնաշղթայի արանքում, նեղ հովտի վրա, որի մեջտեղով գլորվում է լեռնային կապույտ գետը,— ընկած է այն փոքրիկ քաղաքը, դեպի ուր այդ օրերը լեռնային կածաններով և դժվար արահետներով գնում էին մարդկանց և ձիերի անընդմեջ շարքերը։

Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գոգերում, ինչպես լեռնային արծվի բները, ծվարել են քարակոփ գյուղերը։ Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար։ Նրանք գալիս էին բարձրա-

*վանդակի տափարակից, որի մեջտեղը ադամանդի նման ջինջ լիճն էր, եղեգների երիզով, քարոտ ափին՝ հին գյուղը, որի կիսավեր վանքը քարափից ցոլք էր գցում ջրերի վրա, և թվում էր, թե ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք, ու սպիտակ բադերը գիշերում են նրա մռայլ խորաններում։*

*Եվ ով Հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանոթ կետին, որտեղից հանկարծ բացվում էր գետահովիտը, շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղյա կտուրները,— ով հասնում էլ այդ կետին, ահով էր նայում ներքև, ինչպես արջառը, որին քշում են սպանդանոց և ահա թաց ռունգերով շնչում է թարմ արյան հոտը։*

*Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն և երկարաձոր, ինչպես տխուր երգը, կարծես վերջի հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խմել էին, տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը և ամայի գոմերին։ Մեկը թավ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչյուն, և բարձրանում էր հետևի ոտքերի վրա, ինչպես գազազած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իջնել այդ անվերադարձ ուղիով։*

*Երբ ձիավորները քաղաք հասան, հրապարակում ասեղ գցելու տեղ չկար։ Փողոցները, արտերի միջնակները, նույնիսկ տների բակերը սևացել էին ձիերի հազարավոր խմբերից։*

*Կային հազար գույնի ձիեր՝ որձ, էգ, ծանրած և ծեր, քուռակներով և դեռ անծին, թամբած ու մերկ։ Նրանց կապոտել էին՝ որին քարից, որին ծառից կամ գետնին խրած սեպից։ Կային և իրար կապած ձիերի խմբեր։ Մեկի առաջ խոտ էր, մյուսինը հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից։ Քաղցած ձիերը պոկոտում էին փողոցի չոր և հազար ամբակի տրորած խոտը։*

*Ձիերն իրար հետ կռվում էին. ամեն անկյունից*

վրնջոցի ձայն էր լսվում։ Մի տեղ, ձիերի բազմության մեջ, քուռակը իր մորն էր կորցրել և բարակ վրնջոցով կանչում էր, վազվզում, մռութը մոտեցնում ուրիշ մայրերի։ Շոգից կատաղած որձաձիերը կտրատում էին կապերը և ամեհի կրքով հալածում էգերին, իրար կրծոտում և արնոտում բաշ ու ազդրեր։

Այդ ժխորին խառնվում էր տերերի կանչն ու աղմուկը, հարայհրոցն ու բղավոցը։ Հայ, թուրք իրար էին խառնվել։ Պետական հրամանը բոլոր գյուղերում կրկնվել էր պաշտոնական կարգադրության գորշ նմանությամբ և մարդկանց ու ձիերի այդ ահագին բազմությունը քշել քաղաք։

Հրապարակի մի անկյունում. տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա, դագաղի նման նեղ սեղանի շուրջը նստել էին իշխանավորները։ Նրանցից հեռու ոտքի վրա էր ստորադաս պաշտոնյաների՝ ուրյադնիկների, տանուտերերի և գյուղական գրագիրների խումբը, իրենց պաշտոնական տարազով, շքանշաններով և պղնձյա ծանր մեդալներով։ Ավելի հեռու՝ հպատակների բազմությունն էր, որ ծովի նման ծփում էր։ Եվ բոլորի աչքերն ուղղված էին սեղանի շուրջ նստած չինովնիկների կողմը, որովհետև նրանք էին որոշում ձիու և ձիատիրոջ բախտը։

Գյուղի տանուտերը կարդում էր ձիատիրոջ ազգանունը. բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպես կրկեսում՝ ըմբիշը։ Ապա նրա ձիուն մոտենում էին մի քանի հոգի, տնտղում, ատամները նայում, թղթի վրա ինչ-որ նշումներ անում։ Մի վայրկյան խորհրդակցելուց հետո՝ սեղանի մոտ նստած պրիստավը ձեռքով նշան էր անում։

Ահա այդ նշանն էր, որ հայտնի էր դարձնում ամեն ինչ։

Եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձին անպետք էր։ Ձիու տերը սկզբում երկյուղով, ապա ուրախությունից դողացող ոտքերով քաշում էր ձին և արագ

հեռանում։ Իսկ եթե նշանը տախտակների մոտ կանգնած ռուս զինվորներին էր ուղղած, ապա նրանք իսկույն մոտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը շպրտում տիրոջ կողմը, ձին հեռացնում էին, հանձնում ուրիշ զինվորների, որոնք բազմության և տիրոջ աչքի առաջ միահավասար կտրում էին ձիու պոչը, բաշը խուզում և բաշի մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր։

Ձիատերը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն բռնվում էին նրա վրա, և, ինչպես պարտված ըմբիշ, նա մնում էր գլուխը կախ։ Բազմությունը լուռ դիտում էր այդ տեսարանը։ Ապա տանուտերը կանչում էր նրան, և շշմած մարդը սթափվում էր, հավաքում այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, չվանները, համետը,— և այդ իրերը շալակած անցնում էր հրապարակով դեպի բազմությունը, ձեռքում բռնած թղթի կտորը, որի վրա նշանակված էր ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը։

Գյուղացիները երբ քաղաք իջան, ձիերը կապեցին հրապարակից հեռու։ Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝ ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց։

Առաջին հանդիպած ծանոթին, որ նրանցից կանուխ էր եկել, իսկույն հարցրին.

— Հը, շա՞տ են տանում...

— Էլ մի ասեք, զուլում ա...

Սիմոնը տեսավ իր վաղուցվա ճանաչ Թուրքին և նրան մի կողմ քաշելով առանձին հարցրեց, թե ինչպիսի ձիերն են ազատվում, արդյոք կարճահասակ ձին է՞լ են տանում։

— Ձիու ոտքը պիտի կոտրած լինի կամ խոր վերք ունենա, որ ազատվի... Թե չէ՝ բոյը հաշիվ չի...

Սիմոնի ոտները թուլացան։

Մինչև այդ խոսակցությունը նա դեռ մի աղոտ հույս

ուներ, որ այնուամենայնիվ հույս էր։ Այժմ այդ էլ ցնդեց։ Նա հուսահատ մոտեցավ ձիուն։

— Ցոլա՛կ,— և ձին վրնջաց այդ ծանոթ կանչից։ Կարծես հիմա խոտ պիտի գցեին նրա առաջը։ Սիմոնը հարգով լի պարկը կոխեց նրա գլուխը։

— Ցոլակ... Գնում ես էլի...

Քիչ հետո Գիլանց Մուքին հոգնած վերադարձավ։ Նրա այտերի դեմքի վրա դառն անհուսություն կար։ Եվ հուզված, հևացող շնչով ասաց գյուղացիներին.

— Հիմա Քարագլուխն են կանչում, հետո գիլբիրեցիք են գնալու, նրանցից հետո՝ մենք...

Սիմոնը մի վայրկյան մտածեց, տոպրակը ձիու գլխից հանեց ու ձին քշեց։

— Էդ ո՞ւր, Սիմոն,— ձայն տվավ Սաքու տղան։

— Տանեմ գետը... Կաթնաղբյուրից ջուր չխմեց։

Այդպես փախչում են սարսափից։ Այդպես փախչում է հոտը, երբ կայծակն ահռելի որոտով խփում է մոտակա ժայռին։ Այդպես դողահար վազում է գազանը, երբ հրդեհվում է անտառը։

Սարսափահար փախչում էր Սիմոնը, մոլորվելով քաղաքի փողոցներում, անվերջ մտրակելով ձիուն։ Կարծես նրա հետևից էին ընկել հրապարակի բոլոր զինվորները, և նրանք, որոնք նստել էին դագաղի նման նեղ սեղանի շուրջը։

Ահա հասավ գետափի խուլ փողոցը։ Այնտեղ էլ ձիեր կային. նրա նման գյուղի մարդիկ, յուրաքանչյուրն իր ձիու սանձից բռնած և սարուկի հեզությամբ իր հերթին սպասող։ Նրանք տեսան փախչող ձիավորին, և ոմանք կարծեցին, թե ահից սարսափած ձիավորը փախչում է դեպի հեռվի լեռները, ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը։

—

Հոգնած ձին մտրակի հարվածից մի քիչ արագացնում էր քայլերը, ապա նորից գնում բեռան տակ մեծացած գյուղական ձիու ծանր քայլերով։

Ահա հետ մնաց վերջին տունը, և բացվեց կարտոֆիլի դաշտերը։ Սիմոնը դանդաղեցրեց ձիու ընթացքը և շունչ քաշեց։ Նրան քաղաքի սահմանից դուրս ավելի հեշտ թվաց։ Այն հեռվի լեռներից, որոնց լանջին իրենց գյուղն էր, մի անապական զով զարկեց նրա քրտնած դեմքին։

Սիմոնը ծռվեց դեպի աջ, գետը տանող նեղ ճանապարհով։ Ձին զգաց գետի սառնությունը և առանց մտրակի արագացրեց քայլերը։

Գետակի հունն իջնելուց առաջ Սիմոնը երկյուղով շուրջը նայեց և տեսավ, որ ամայություն է։ Միայն ներքևը, ուռիների ստվերում, ննջում էին կովերը։ Ու երբ ծարավ ձին գլուխը կռացրեց ջրի վրա, Սիմոնը ցած թռավ, սանձն ամուր կապեց ձիու առաջին ոտքից և սկսեց հետևի ոտքերը կապոտել։

Ցոլակը կուշտ խմելուց հետո փորձեց գլուխը վեր հանել, բայց չկարողացավ։ Եվ մռութը հնազանդ ու մունջ նորից կախեց գետի կապույտ ջրերի վրա։

Սիմոնն անսովոր արագությամբ ձիու համետը հանեց։ Արևի տակ փայլփլեց ձիու ողորկ և գեր մեջքը։ Ապա նույն արագությամբ կռացավ և գետնից վերցրեց մի չեչաքար։ Երբ առաջին անգամ նա չեչաքարը Ցոլակի մեջքին քսեց, ձին հովություն զգաց, խաղացին նյարդերը, և հաճելի գրգռից մեջքի մաշկը դողդողաց։

Ապա հանկարծ ձին մեջքին զգաց ծակծկոց։ Ձին փորձեց հեռանալ, բայց չկարողացավ, որովհետև ոտքերն իրար պինդ կապված էին։ Նորից փորձեց գլուխը վեր հանել, դարձյալ չկարողացավ։ Իսկ ցավը հետզհետե սաստկանում էր, որովհետև Սիմոնը հուսահատ կատաղությամբ չեչաքարը քսում էր նրա մեջքին։ Մի քանի րոպեից մաշկը պլոկվեց և արնոտեց քարը։

Ցոլակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում։ Սիմոնն ամբողջ ծանրությամբ ընկել էր ձիու մեջքի վրա և քարը հա քսում էր։ Արդեն նոր բացված վերքից

*արյան կաթիլները դուրս էին ցայտում և գլորվում հեացող կողերի վրայով։ Իսկ Սիմոնն ավելի արագ էր քերում, կարծես չեչաքարն ուզում էր թաղել Ցոլակի այնքան գեր ու ողորկ մեջքի մեջ։*

*Ձին այլևս չդիմացավ, շրջվեց կողքի վրա և մեջքը կիսով չափ թաղեց գետի մեջ։ Ցավից և անսովոր վիճակից Ցոլակը ցնցում էր ոտքերը, փռնչում ռունգերով, վիզն ու գլուխը քսում գետափին և փորձում ոտքի կանգնել։*

*Սիմոնն արնոտ չեչաքարը մի կողմ գցեց, ինչպես մարդասպանը դաշույնը, և սարսափով նկատեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, երբ ալիքը զարկում է ձիու մեջքին։*

*—Ձլինի՞ տամար տրաքեց...*

*Ցոլակի աչքերի առաջ մթնել էր։ Գլխիվայր դառնում էին քարերը, գետափը, և թվում էր, թե գետափի փափուկ մամուռը կախվել է երկնքից։ Հաճելի էր ջրի մեջ և բնազդաբար կենդանին ավելի խորն էր թաղվում լպրծուն տիղմի և ջրային խոտերի մահիճում։ Իսկ վիզն ու գլուխը չէր բարձրացնում կապույտ քարերի բարձից։*

*Սիմոնն արագ արձակեց կապերը, սանձը, ինքը կիսով չափ մտավ ջուրը և փռալով, աղերսելով, հրելով ու քաշելով մի կերպ բարձրացրեց ձիուն։*

*Ցոլակը դողում էր։*

*Նրա մեջքի աջ կողմը ափսեի չափ վերք էր բացվել, և երևում էր կարմիր, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած միսը։ Արյունը շարունակում էր կաթկթել, բայց մի քանի տեղ արդեն լերդանում էր։*

*Սիմոնը հանցագործի հապճեպությամբ արյան հետքերը լվաց ձիու կողերից, իր ձեռքերից, տիղմի բարակ շերտով ծածկեց վերքը, ջրախոտերով ծածկեց, ապա շտապ համետեց ձին և դուրս եկավ ճանապարհը։*

*Ձին հազիվ էր քայլերը փոխում։ Սիմոնն ինչքան էլ կանչում էր, ոտքով փորին խփում, փաղաքշական խոսքեր ասում, ձին չէր արագացնում քայլերը։*

Եվ Սիմոնն ու Ցոլակը նույն փողոցներով գնացին դեպի Հրապարակը։ Երկուսն էլ գլխիկոր էին։ Մարդն իր դաժան խոհի հետ էր՝ կտանե՞ն այժմ, թե ոչ, ձին հազիվ տնքում էր, պղտոր աչքերի առաջ գլխիվայր կախված մի չնաշխարհիկ արոտ...

## 7

Իսկ Հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր դեպքից։ Փողոցներում խռնված բազմությունից ոմանք բարձրացել էին պատերի և պատուհանների վրա, որ ավելի լավ տեսնեին, թե ի՞նչ է կատարվում մեջտեղը։ Ոմանք բարձրացել էին ձիերի վրա։ Ոտքի էին և կենտրոնում՝ սեղանի շուրջը բոլորած մարդիկ։

Մի կապտավուն ձի՝ երկար, ծալվեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազում էր Հրապարակով։ Նա երամակի ձի էր, սնվել էր լեռներում, երբեք հեծվոր չէր նստել մեջքին, սանձը չէր դիպչել մռութին, սմբակները պայտ չէին տեսել։ Այդ ձին էին ուզում բռնել զինվորները, որոնք երկար պարանները թևերին փաթաթած շպրտում էին գերության օղակը, հենց որ ձին մոտենում էր նրանց։ Բայց ձին ամեհի ոստյուն էր անում, թռչում օձի նման գալարվող օղակի վրայով և փախուստի ելք փնտրում։ Զինվորների մյուս խմբերը գազանային ոռնոցով կտրում էին նրա ճանապարհը և հետ փախցնում դեպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ։

Գյուղացիները շունչ պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նժույգի գազազած վազքը։ Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օղակի վրայով։ Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շղթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը։

Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը, որոնց

զինվորները կապել էին փշալարի ցանկապատի տակը,— մոռացել էին, որ ձիերի սանձերն ու չվանները շալակած, ոտքով պիտի բարձրանային դեպի լուռ գյուղերը, որոնց դաշտերում այլևս չէին վրնջալու փշալարով անջատված ձիերը։

Հանկարծ բազմությունը հառաչեց. լսվեց խուլ գվվոց, ինչպես հողմի շառաչն անտառում։ Զինվորները վազեցին փշալարի կողմը։ Մի վայրկյան ճեղքվեց բազմությունը, ինչպես ծովի սև ալիքները, երբ երևում է մութ անդունդը,— ապա նորից կլանեց ամեն ինչ։

Կապտավուն նժույգը վերջին հուսահատ ոստյունն էր արել, փորձել էր թռչել փշալարի վրայով և ընկել էր լարի երկաթյա սուր փշերի վրա... Ճեղքվել էր կուրծքը, փորը և վշշում էր արյունը լարերի վրա, մահվան հրապարակի վրա և մեռնող նժույգի ջինջ աչքերում ընդմիշտ սառչում էր հեռվի կապույտ լեռնաշխարհը...

Զինվորները ձիու սառած մարմինն իջեցրին փշալարից։ Բժիշկն արձանագրություն կազմեց և վերադարձավ սեղանի շուրջը, որպեսզի նույն գորշ տաղտկությամբ շարունակեն գործը։

Սիմոնը յուրայիններին նույն տեղը չգտավ։ Նրան ասացին, որ արդեն իրենց գյուղացիներին կանչում են։ Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ հասավ հրապարակը, որի մի կողմը կանգնել էին դարբնի տղան, Գիլանց Մուքին, Աքելը և մյուսները։ Գրագիրը կարդում էր անունները։

— Այ մարդ, ո՞ւր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեն։ Ասացինք հրես կգա։

Ամենից առաջ Շուղունց Աքելին կանչեցին։ Դողդողալով նա առաջ անցավ, մի անգամ էլ հետ նայեց համագյուղացիներին, կարծես նրանց ներկայությունը հուսադրում էր նրան։

Մոտեցան և զննեցին նրա ձիուն։ Ու մեկ էլ զինվորները վրա տվին, ձիու համետն արձակեցին և շպրտեցին Աքելի կողմը։ Ձեռքը վերևից հայտնեց վճիռը։ Զինվորնե-

րը քաշեցին ձին։ Աքելը հրապարակում մնաց մի րոպե, նայեց ձիու հետևից և անխոս վերադարձավ, մեջքին ձիու համետը։

Դարբնի տղան սրախոսեց.

— Ափիցեր Աքել Շուղումցով,— բայց ոչ ոք չծիծաղեց։ Դարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկվեց և դեմքի վրա սառեց, որպես դառնության կնիք։

Հետո Ռուստամենց ճակատը նշան ձին տարան։ Գնաց և տերտերի ձին։ Ժամհարը գլուխը կախ եկավ։

— Հիմա ես տերհորն ի՞նչ պատասխան եմ տալու...

Չորրորդ հերթը Կոստանդինն էր։ Գյուղացիները զարմացան, երբ լսեցին նրա ազգանունը, որովհետև Կոստանդը նրանց մեջ չկար։ Դարբնի տղան նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մեջ ինչ-որ փսփսոց ընկավ։

Հրապարակի մյուս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի հետևից։ Թվաց, թե նույնիսկ չնայեցին նրա կողմը, և ձեռքը վերևից նշան տվեց, որ Կոստանդն ու ձին հեռանան հրապարակից։

Այդ այնքան արագ կատարվեց, որ գյուղացիներից շատերը չհավատացին իրենց աչքերին, թե այդ «խեղճ» գյուղացին Կոստանդ աղան է։ Նրանք մնացել էին ապշած։ Իսկ Կոստանդը կեղծ ուրախությամբ հետ տարավ ձին և անհայտացավ։

Դարբնի տղան Սիմոնի ականջին շշնջաց.

— Տեսա՞ր, որ ասում էի...

Բայց Սիմոնը չլսեց։ Նրա ականջին հասավ իր ազգանունը և Ցոլակի սանձից բռնած, մտավ հրապարակը։

Երբ մոտեցավ, վերցնել տվին ձիու համետը, և մի ակնոցավոր ռուս, որ անասնաբույժն էր, քիթը վեր քաշելով կռացավ վերքի վրա։

— Զտարան,— անցավ Սիմոնի մտքով։ Բայց մարդը բարկացավ և մատը թափ տվեց Սիմոնի վրա։ Նա հայհոյում էր։

Սիմոնը վախից դողաց, գունատվեց և նստեց համետի վրա։

Զինվորները Յոլակին տարան։ Սիմոնը տեսավ, թե ինչպես իր ձիու երկար պոչը սուր մկրատով կտրեցին։ Եվ իսկույն աչքին այնպես երևաց, ասես Յոլակը մեծացավ և դարձավ ղազախի ձի։

Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա։ Նա սթափվեց և բեռը շալակին վերադարձավ յուրայինների մոտ։

8

Արևն արդեն թեքվել էր, երբ գյուղացիները ճանապարհ ընկան տուն։ Ազատվել էին միայն ութ ձի, որոնց վրա բարձել էին մնացած ձիերի համետները։ Գյուղացիներից ոմանք իրենք էին շալակել ձիերի սանձերն ու չվանները։

Ազատված ձիերը, որոնցից երեքը ծուռտ էին, մեկի մեջքն էր փոս ընկած, երկուսը քոս էին, իսկ Հաբեղանց ձիու երկու կողոսկրը չկար,— ազատված ձիերը հազիվ էին քայլում ծանր բեռան տակ։

Սիմոնը գլուխը կախ գնում էր մյուսների հետ։ Դարբնի տղան էլ լուռ էր, որովհետև ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու։

Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը։ Մայրամուտի արևը աջ կողմից նրանց ոսկեվորել էր։ Նեղ արահետով գնում էին նրանք իրար հետևից, ինչպես կռունկի երամ, և թվում էր, թե բեռների տակ կքած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կլաներ նրանց։

Սիմոնը ձիու չվաններից և սանձից զգում էր Յոլակի ողորկ մարմնի ծանոթ հոտը։ Եվ մի միտք, ծանր բեռից ավելի դժվար ծանրությամբ, նստել էր նրա գլխում, և նա խոնարհել էր գլուխը։ Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արնոտ չեչաքարը։

— Հենց իմ փիսությունը մնաց, Յոլա՛կ... Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես... Յարաբ տեսնես արյունը ցամաքե՞ց։

*Եվ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը, որով բռնել էր քարը…*

*Բռի մեջ ստացականի կտորն էր, վրան Ցոլակի գինը և իր ազգանունը։*

*Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, ներկել արնոտ գույնով։ Լեռների սև ստվերները ավելի վառ էին ցոլացնում ամպերի կարմիրը։ Կաթնաղբյուրի արոտներում և սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կարդում և ոչ լոր էր ճկում։ Քնել էին քարերը, խոտերը, անբան հավքերը, և լեռների վրա իջել էր իմաստուն մի երեկո։*

*Կաթնաղբյուրից նրանք ջուր խմեցին և հացի փշրանքները թափեցին սառը ջրում։ Մութն ընկնում էր, և ճանապարհ դեռ շատ կար։*

*Սիմոնը նայեց ներքև… Ա՜յ, այստեղ արածում էր Ցոլակը. նրա ատամների արանքում երևի դեռ մնում է այս դաշտերի խոտը։ Իսկ ինքը պառկել էր այս քարի տակ, և մի լույս ճառագայթ խոստանում էր զվարթ վերադարձ։*

*Ու հետո նայեց Սիմոնը։ Այնտեղ, ներքևը, խավար էր, խավարի մեջ քաղաքը, և քաղաքի փշալարյա վանդակում աղիողորմ վրնջում էր իր հույսը, իր Ցոլակը։*

*Հանկարծ Կաթնաղբյուրից ներքև, քարերի վրա, զրնգացին ծանր պայտերը։ Գյուղացիները ճանապարհից դուրս եկան և մի կողմ քաշեցին բեռնած ձիերը։*

*Հեծվորը Կոստանդ աղան էր, սպիտակ ձիու վրա…*

*Միայն Շուղունց Աքելը կիսաբերան ընդունեց նրա ողջույնը։ Մյուսները քարի նման լուռ էին։ Դարբնի տղան ատամները սեղմելով զայրացավ.*

*— Տեսա՞ր, Սիմոն, սևն ու սպիտակը…*

*Սպիտակ ձին մի վայրկյան ցոլաց մթնող արևի շողերում և չքացավ դեպի նարնջագույն ամպերը։ Կարծես մարմարինե մի արձան արշավում էր դեպի պատվանդանը, որ իր անհաս բարձունքից ահ ու սարսափ մաղի ռամիկ գյուղացիների վրա։*

## 9

*Կես գիշեր էր, երբ տուն հասան։*

*Դռան մոտ կանգնել էր Շարմաղ բիբին, ճրագը ձեռքին։*

*Սիմոնը ներս մտավ, տոպրակն ու սանձը գցեց մի անկյուն։ Անկողնից վեր թռավ Շողերը։*

*— Ապի՛, բա Ցոլա՞կը։*

*Աղջկա միամիտ հարցին, որպես պատասխան, դուրսը, լեռնային գյուղի սառը խավարում, վրնջաց անմայր մի քուռակ։ Կարծես բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրություն։*

*Շարմաղ բիբին սարսուռով վրա դրեց դուռը, և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր արևելյան թախծոտ մի երգ։*

*Պառավը լալիս էր...*

*Հետո քանի երեկո իջավ, և զանգեր զարկեցին, բայց մինչև մահ, իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի ղողանջը որպես անանձնական օրհնություն ներս մտավ նրանց սև խրճիթը...*

28—30

# ՊՐՈՎԻՆՑԻԱՅԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

## 1

*Ճշմարտության դեմ կմեղանչենք, եթե այս տարածությունը, որ կոչվում է Աստաֆյան, անվանենք փողոց, որովհետև մեր քաղաքում այս փողոցը հռչակված է նաև իբրև ժամադրավայր, նավահանգիստ այն հին մակույկների համար, որոնք հանդարտ օրորվում են վերից վար, այսինքն՝ «անցնում են և բարձրանում»։ Նա և պատկերասրահ է, այն տարբերությամբ, որ պատկերները զբոսնում են, և մի օրվա ընթացքում հետաքրքրասեր մեկը կարող է տեսնել նաիրյան հոգևոր կուլտուրայի բազմաթիվ ներկայացուցիչների։ Այս փողոցն ունի նաև վատ համբավ. եթե մեկը կամենում է ցույց տալ իր բացասական վերաբերմունքը մի տեղեկության կամ կարծիքի մասին,— ասում է՝ «Աստաֆյան փողոցի զրույց է»։ Վերջապես կարելի է մեջտեղ բերել մի այլ ապացույց, որով աներկբա կդառնա այն, որ այս տարածությունը սովորական առումով փողոց չէ, այլ ունի այնպիսի հատկանիշներ, որոնցից զուրկ են քաղաքի մյուս փողոցները։ Նկատված է, որ այստեղ երկար տարիներ ժամադրվողներին, հանգստացողներին, փողոցում վիճաբանողներին և առհասարակ այս տարածության սիրահարներին հատուկ է*

մի առանձին քայլվածք՝ մի տեսակ հոգևոր երթ, երբ մարդը թեքում է վիզը, գնում է իրանը օրորելով, աչքերի առաջ մեռած մառախուղ և մառախուղի մեջ անիրական մի աշխարհ։ Մեր ծանոթներից մեկը, որ մասնագիտությամբ բժիշկ է, տպագրության համար պատրաստ ունի մի գիտական շարադրություն, որով ապացուցված է համարում մի առանձին՝ նոր տերմինով ասած՝ «էրիմենյան ախտի» գոյությունը և միանգամայն գիտականորեն բացատրում է այն պակասությունները, որ հատուկ են այս փողոցի սիրահարներին։

Կարող ենք թեթևակի պտույտ անել մեր քաղաքի մի քանի փողոցներում, որպեսզի համոզվենք, որ քաղաքի փողոցներից ոչ մեկը չունի այն առանձնահատուկը, միակը և անկրկնելին, ինչ որ այս թյուրիմացաբար փողոց կոչվող տարածությունը։

Քաղաքն ունի Կույր փողոց, որ վերջանում է այգիների ճանապարհով. Տպագրիչների փողոց, որտեղ մեծ մասամբ ապրում են պղնձագործ արհեստավորներ. Բաղնիքի փողոց, ուր երկու ատամնաբույժ կա, և պարսկական հին բաղնիսից մնացել է միայն մի խոր գուբ, որ հետզհետե լցվում է բակերի աղբով։ Կան փողոցներ, որոնց բնակիչները տառապում են հարատև հարբուխով, կարճակյաց և տխուր մարդիկ են, ինչպես գերեզմանափորները և ժամագործները։ Կան զարմանալի փողոցներ, որոնք ունեն ցածր դռնակներով պատեր և երգող ջրեր. Կանուխ է իջնում մութն այդ փողոցներում, և խավարն ավելի թանձր է, քան հարևան փողոցում, որտեղ գիշերային ժամերին կարելի է տեսնել արթուն և զվարճացող բնակիչների։ Պատահել է մեզ տեսնել հին փողոցներ, որտեղ ամեն քայլափոխի մի բան գրավել է մեր անզբաղ ուշադրությունը։ Մի տափակ կտուրով տան ամբողջ ճակատը զարդարված է գունագեղ աղյուսներով, որոնց համակարգության մեջ կա թաքնված իմաստ. մի ուրիշ տուն ունի երազային պատշգամբ, կապույտ ճաղերով, և թվում

է, թե ահա ցածր դռնակը կբացվի և նշաձև աչքերով մի աղջիկ դուրս կգա պատշգամբ և, ինչպես երազ, նորից կանհետանա։ Ահա մի գետնափոր տուն, որ դրսից լուսամուտ չունի, և գորշ պատի մեջ չի երևում դուռը։ Կարծես դեղնած այգիներում ամայի հնձան է, որտեղ այլևս չկա ո՛չ միրգ, ո՛չ երգ։ Սակայն գետնի տակից լսվում է երեխայի լաց, և գետինը թնդում է փայտե օրորոցի զարկերից։ Ու չքանում են պատերը, տեսնում եք մորը՝ կռացած օրորոցի վրա, և մոռացված մի երգ օրորում է ձեր մանկությունը։ Ահա մի ուրիշ փողոց, որի միջով գնում է բարակ գետը։ Տները գետափին են, և շատ պատշգամբներ կախված են ջրերի վրա։ Տնից տուն կամրրջակներ են, որ գարնան հեղեղին բարձրանում են վեր։ Ի՞նչ քաղցր է զով գիշերը քնել ջրերի վրա կախված պատշգամբում, լսել ջրի ձայնը և զգալ գետի հունով սարերից իջնող հովը։ Իսկ եթե պատշգամբի վրա շողք է գցել դեղձենին, և նրա ստվերի միջով ջրերի մեջ լողանում են աստղերը, իսկ եթե գետի մյուս ափին, կավե պատի հետևը, քնել է մի աղջիկ, ինչպես եղնիկը անտառի խազալի վրա...

Այդ փողոցից կարելի է մտնել մի ամբողջ քաղաք, քաղաքի մեջ քաղաք, բազմաթիվ խճճված անցքերով, ինչպես մրջնոցը, մանվածապատ և բոլորովին նեղ փողոցներով, որոնցով հազիվ է անցնում պաղպաղակ վաճառողի սայլակը,— կավե տների և կիսաշոր շինարինների մի լաբիրինթ, որտեղ խլրտում է արհեստավորների և մանր տնատերերի մի ահռելի բազմություն։ Այստեղ մի տուն կքել է ռադիոյի կայմի ծանրության տակ, մի ուրիշի փոքր դռնակին կպցրել են թիթեղի կտոր՝ «նորոգեմ պրիմուս», իսկ տերը մտել է կիսաքանդ պատի ճեղքը։ Այս փողոցներում ապրում են ամենաօրինապահ և միլիցիոների կարգադրությունը երկյուղած բարեխղճությամբ կատարող քաղաքացիներ։ Երբ քաղաքի կենտրոնական փողոցներում դեռ նոր են կախում տոնական դրոշները,

այս թաղի տների վրա արդեն ծփում է դրոշակների ծովը։ Ու թեև երիտասարդները գլխավոր փողոցներից լուր են բերում, որ տոնը վերջացել է, այստեղ դրոշակները դեռ ծածանվում են, մինչև գա ինքը հերթապահ միլիցիոները և կարգադրի, որ հանեն դրոշակները։

Բայց կան և լուրջ փողոցներ՝ քարակոփ տներով և մայթերը սալահատակ։ Այդ փողոցներով անշշուկ սուրում են շքեղ ավտոներ, այնտեղ ծառերն անգամ միահավասար և միանման են ու չեն շարժվի ամեն պատահական քամուց, մինչև չշարժվի ծայրինը, և սոսափը, որպես հրաման, չանցնի սաղարթից սաղարթ։ Նրանց գրանիտե քարերը զրնգում են գեղեցիկ նժույգների դոփյունից և ներշնչում ակնածալի պատկառանք։

Մենք ակամա շրջեցինք քաղաքում՝ Տպագրիչների փողոցից մինչև գետափը, եղանք ասիական թաղի լաբիրինթում, տեսանք այն խաղաղ փողոցի երազային պատշգամբը, նույնիսկ հասանք այն փողոցը, որտեղ կան վանդականման տներ և պատուհաններ, որոնց ետևից, երբ լուռ է փողոցը, կարելի է լսել աղջկա սրտամորմոք երգ և դռան ճեղքից տեսնել արևելյան գեղեցիկ բակը՝ վարդենիներով, որոնց վրա դեռ կարմիր են վարդերը, երբ թափվում է առաջին ձյունը։ Մենք եղանք և այն փողոցներում, որտեղ չկան բարդիներ, և որտեղ գրանիտե հունի մեջ գնում են ջրերն առանց խոխոջի, առանց շառաչի։ Բայց այդ փողոցներից և ոչ մեկը չի կազմում քաղաքի հպարտությունը և մեր նկարագրության առարկան։ Ավելին. նրանք բոլորը փողոց են, հաղորդակցության անոթներ, և նրանցից ոչ մեկի անունը չի կապված երազների, բամբասանքների, այլատեսակ շաղակրատությունների, դատարկապորտ թափառումների և ժամանակի վատնման հետ, ինչպես այս փողոցն է, որի նկարագրությունը հիմա կանենք, ապա կպատմենք մի ուրախառիթ դեպք և նրա հետ կապված մի անանուն մարդու եղերական վախճանը։

## 2

*Տները նշմարվում են առավոտի մշուշով, լապտերների լույսը աղոտանում է: Չի շարժվում և ո՛չ մի տերև, ո՛չ մի ծառ: Ամեն ինչ քնած է լուսաբացի խոր քնով: Հոգնած ձիերը պառկում են տաք աղբի վրա և վզները երկարում: Այդ նշան է, որ շուտով կբացվի առավոտը: Հեռվի ճաճանչներից լսվում է գորտերի կռկռոցը, որ ավելի վեհաշուք է դարձնում լուսաբացի խորհրդավոր երկունքը: Լուսինը ջրային շուշանի նման լույս է տալիս տիեզերական օվկիանում: Իսկ աստղերը սկսում են անէանալ, որովհետև վաղուց է ասված՝ «երևելն արեգական անէանան աստեղունք»:*

*Ահա ճաճանչներից բարձրանում է տաք գոլորշին, որ դողդողում է շատ բարձրերում: Մի րոպե, և սառը հոսանքը ցած է իջնում: Արդեն խշշում են բարդիների բարձր կատարները, իսկ ներքևի ճյուղերը, խավարի մեջ, դեռ անշարժ են: Ապա լուսավորվում են վերևի ճյուղերը, տերևները դողում են, և դողը կամաց-կամաց սահում է ցած: Կարծես մի խավար քող ընկնում է ծառերից, և նրանք հագնում են ծիրանի շապիկ: Փողոցը դեռ նիրհում է: Լուսադեմի զովից քաղցր նինջ է իջնում ժամապահ միլիցիոներների վրա, որոնց սև սիլուետներն ընդունում են զանազան դիրք: Ահա մեկը հենվել է հեռագրասյունին և անշարժ է, ինչպես սյունը: Մյուսը ծեր գրենադերի նման կռթնել է հրացանին, երրորդն անշարժ նայում է առվի ջրին, որ նրա համար երգում է սեր և խնդություն: Վաղ առավոտյան ո՞վ գիտե, ո՞ր Շուշանն է միտն ընկել: Չորրորդն արձանի պես է, որպես մի ահեղ մոնումենտ՝ ճանապարհի մեջտեղը: Մի խոսքով, լուսաբացին փողոցը նման է զինվորական արձանների հաղթական ալեյի:*

*Գետի երեսով արդեն փչում է սառը հոսանքը, և խոնավանում է գետինը: Փողոցի ծայրին երևում է անտիրական մի շուն, որ դունչը վեր ցցած քշում է ուղիղ ներքև:*

*Նրա քթովն է ընկել ինչ-որ քաղցր բույր, որ մեյդանի կողմից բերում է քամին։*

*Ահա լուսավորվեցին այս փողոցի ծառերը, որոնց գեղեցկությունը վաղեմի մի օր գովել է այն նշանավոր պոետը, որի անունը մեզ համարձակություն ներշնչեց ավելի մանրամասն նկարագրելու լուսաբացը, քան այդ թույլատրում է չափի զգացումը։ Եվ վերջապես, մի այլ բանաստեղծ, որից առավել քանքարով ոչ ոք չի նկարագրել բարդիները, լուսինը, ջրերի երգեցիկ զրույցը,— մեր ներկայությամբ մի թուխ մաշկով աղջկա, որ նման էր եթովպուհու, ասաց.*

*— Ձեր մազերը նման են այս ծառերին,— հետո թափահարեց ծառը և հազարավոր նարնջագույն տերևներ տեղացին կայտառ աղջկա ուսերի վրա...*

*Ահա լուսավորվեցին այդ ծառերը, ելան դռնապանները՝ ավելներով, թիակներով, դույլերով և սկսեցին հարդարել փողոցը։ Նրանք էլ գնացին, և ապա արևը ոսկի տեղաց Արարատի գագաթին։ Արդեն սուլեցին գործարանները՝ մեկը զիլ և ուրախ, մյուսը խռպոտ, երրորդը՝ երկարածոր, ինչպես տխուր սեգյահ։ Փողոցում զարթնեց աղմուկը։ Տասը, քսան, հետո հարյուրներ, միայնակ կամ խմբերով, ելան տներից, եկան մյուս փողոցներից, և բանվորների բազմությունը լցրեց այս փողոցը։*

*Ոմանք դրսում են կոճկում բաճկոնը, ոմանք տրորում են աչքերը և գնում են լուռ ու լուրջ։ Կան տարիքով մարդիկ, որոնք հազար-հազար անգամ անցել են այս փողոցով, և տարիների ընթացքում նրանց ոտքերը վարժվել են մի չափի, որով անվրեպ հասնում են աշխատանքի վայրը։ Հինգ րոպե, և փողոցը լցնում են կաշեգործները, հյուսները, դարբինները, մոնտյորները, հնոցապանները,— գործարանային աշխատանքի բոլոր ներկայացուցիչները։ Կան հյուսներ, որոնք երեսուն տարի նույն կողովը ձեռքին, նույն հաստ մատիտը ականջի հետևը, գնացել են այս փողոցով։ Կարելի է տեսնել ներկարարների,*

որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում են բոլոր ներկերի հետքերը՝ գաջից մինչև օլիֆ: Ահա «արճիճե» բանակը, ահա և կաշեգործները, որոնք վաղնջական ժամանակներում եղբայրակից էին բանաստեղծական արվեստին:

Աշխատանքի այդ բանակը անտարբեր է փողոցի գեղեցկության: Եթե մեկը երազում է այս փողոցում՝ նրան անվանում են «ավարա»: Եթե վարպետը բարկանում է աշակերտի վրա և հանդիմանում, ապա հիշատակում է և այս փողոցի անունը. «Դու լավ կարաս Աստաֆյանը չափես...»: Գործարանները շտապող այս մարդիկ չեն սիրում փողոցի երկարությունը: Նրանք, երբ վերադառնում են աշխատանքից, հատկապես տարիքավորները, շատ են գանգատվում այս երկար փողոցից. «Գնա՜, գնա՜ թե վերջանա...», «Ե՞րբ կազատվենք սրա ձեռից...», «Ա՜խ, մի ոտքերս կտրվեն գետնից, գոռալով գնամ, գոռալով գամ...»: Եվ այս բոլորն այն փողոցի հասցեին, որ համեմատաբար լուռ է և մյուս փողոցներից ավելի մաքուր է, մայթերն ամուր են, իսկ լանջը՝ արծաթյա պնակի նման ողորկ: Եվ այս բոլորն այն ժամանակ, երբ ներկարարների ծանր կոշիկներն ամուր դոփում են, այնինչ փողոցը, կարելի է ասել, կուլ է տալիս իր սեփական փոշին, որ հեշտ լինի նրանց երթը:

Սակայն բարակում է այս հոսանքը, և միայն հեռվից, կաշեգործարանի մոտերքից լսվում է ներկարարների հաստ կոշիկների դոփյունը: Նրանք դեռ գործարան չեն հասել: Փողոցում երերում է փոշու ծխագույն շղարշը: Դարձյալ երևում են հատուկենտ մարդիկ: Նրանցից մի քանիսը շտապում են, մյուսները ծանրաքայլ են: Շտապողները հետ մնացած բանվորներն են, ծանրաքայլ անցորդները՝ ծառայողների բանակի առաջապահները, որոնք թևերի տակ մատյան, համրիչ կամ թղթի կապոց՝ գնում են իրենց հիմնարկը կիսատ բալանսը լրացնելու կամ քաղվածքներ գրանցելու և կամ հենց այնպես, մի քանի րոպե վարիչի աթոռի վրա նստելու և երազելու ո՞վ գիտե որպիսի հեռանկար:

*Նրանք առաջապահներն են, իսկ բանակը դեռ թեյ է խմում և հաճախ նայում ժամացույցին։ Մի քանի րոպե ևս, և ահա փողոցը հեղեղում են գործավարները, մեքենագրուհիները, հաշվապահները, վիճակագիրները, հաշվետարները, քարտուղարները, մանր բաժինների վարիչները, որոնց մեջ, ինչպես սարյակը ճնճղուկների երամում, կարելի է տեսնել և վարչության պետերին։ Այս բանակը առաջինի ոչ կարգապահությունն ունի, ոչ ծանրախոհ լրջությունը։ Միայն գլխավոր հաշվապահներն են իրենց քայլվածքով ներշնչում ուժ և վստահություն։ Իսկ մանր հաշվետարները, որ միայն թվաբանական չորս գործողություն են կատարում հաշիվների հետ,—կարծես դպրոց են գնում։ Հապա մեքենագրուհիները... Կա այնպիսին, որ փողոցումն է ավարտում իր տուալետը, կա, որ հենց գլխավոր հաշվապահի քթի տակ վեր է քաշում գուլպան և կորացնում իր ոտքը (և ի՜նչ ոտք, սրտեր խոցող կեռ յաթաղան...)։ Կա և այնպիսին, որ մինչև հիմնարկի մուտքը զարմանալի արագությամբ տեղեկանում է գիշերային պատահարների մասին, մի քիչ բամբասում է, մի քիչ զվարճանում և մի քիչ նախանձում։ Ահա սրանց են ասում «Աստաֆյանի օրիորդներ», սրանք են, որ փողոցը լցնում են երփնաբույր օծանելիքներով, օդի մեջ թողնելով աննյութական ժապավեն, երբ նրանց բարակ մատներն արդեն խաղում են ունդերվուդի ստեղների հետ։*

*Առավոտյան այդ ժամին փողոցում կարելի է լսել զանազան տեմբրերի ծիծաղ, գլխավոր հաշվապահի կուշտ վրնջոցից մինչև մանր հաշվետարի անպատեհ քրքիջը։ Սակայն այդ ամենը ոչինչ են այն խոսակցությունների աղմուկի մեջ, որով հեղեղվում է փողոցը։ Ահա Մատժողկոմատի գործակատարը հանդիպեց Պտուղբանջարակենտրոնի գործավարին. մի բարև, և նրանք ընդհարվում են գրության սխալ նոմերի, տողիրը չլինելու, «մեր պատասխանը» ուշացնելու և էլ ով գիտե ինչպիսի՛ առիթով։ Մի ուրիշ տեղ բռնվել են իրար Վասիլ Պետրովիչը և Կո-*

յուղու վարչության ծախսարարը։ Վասիլ Պետրովիչը սպառնում է Բողոքների բյուրոյով և ավելի բարձր ինստանցով, եթե Կոյուղու վարչությունը չմուծի տախտակների արժեքը։ Իսկ ծախսարարը կրկնում է. «Վարկը բաց անեն, իսկո՛ւյն, իսկո՛ւյն, Վասիլ Պետրովիչ, հե՛նց նույն օրը...»։ Ահա Պետարխիվի աշխատակիցը պատմում է գիշերվա երազը, պատմում է և միաժամանակ ընկերոջ թևից քարշ տալով մոտենում՝ կարդալու թարմ մահազդը։ Մենք կարող ենք այս օրինակները բազմացնել, որպեսզի չկարծեն, թե այդ ժամին Աստաֆյան փողոցով անցնում են միայն սեթևեթ մեքենագրուհիներ և կամ թե մանր հաշվետարներ. ո՛չ, այդ բազմության մեջ կան պետական բարձր խելքեր, գլուխներ, որոնք ընդունակ են կառավարելու մի ամբողջ նահանգ, և ոչ թե միայն մի դրամարկղ։ Կարող էինք բազմացնել գործի մարդկանց թիվը, բայց մինչդեռ մենք խոսքով էինք, նրանք արդեն անցան իրենց գործին։

Անցավ և մարդկային այս ալիքը, եղավ ժամը տասը։ Աստաֆյանը նորից ամայացավ։ Արդեն արևը բավական ճանապարհ է կտրել և գնում է դեպի այն սառն ամպը, որ մոլորվել է վերևի կապույտում։ Ծառերը ստվեր են գցում մայթերի վրա, և մայթերի ստվերով ծանրաքայլ անցնում են կոլեգիայի անդամները, որոնք վաղ առավոտյան իրենց բնակարաններում ընթացք են տվել մեծամեծ գործերի։ Արագ վազում են ցրիչները՝ դեպի հիմնարկները, փոստը, բանկերը,—տանելով հեռագրեր, ծրարներ և բազմաբովանդակ գրություններ։ Բայց ահա գալիս է այն ժամը, երբ կոլեգիայի անդամը լսել է երկու բաժնի զեկուցում, երբ կենսաթոշակ ստացողը նստել է «Հառաչանքի ծառուղու» նստարանի վրա, երբ դպրոցում աշակերտները կորցնում են ուշադրությունը և խծբծում են նստարանների վրա,— մի խոսքով այն ժամը, երբ փողոցի մաքուր հայելին շողշողում է, և լրագրային կիոսկի ստվերում քուն է մտել մշակը,— այն ժա-

մը, երբ քաղաքի ամենաշքնաղ կանայք, ընդամենը ութ-ինը հոգի, իրենց մանուկների հետ, և եթե չունեն՝ մենակ, դուրս են եկել արևին ցույց տալու իրենց զգեստները, իրենց երեսները, քայլվածքը և իրենց։

Այդ ժամին Աստաֆյանը դառնում է լեռնային լիճ։ Եվ լողում են այդ լճի վրա նրբիրան կանայք, այնպես, որ նույնիսկ արևը խանդոտ է նայում այդ փողոցին։ Եվ ի՜նչ բույր, մշկենու ի՜նչ հոտ... Ահա գնում է մեկը և գիտե, որ քաղաքի ամենագեղեցիկ ոտքերն իրենն են. գնում է և ոտքերը փոխում այնպես կաքավաքայլ, կարծես ափսոսում է կոխել գետինը։ Ահա մի ուրիշը՝ երկար և սև արտևանունքներով, որոնց տակից նայում են մթին աչքերը, ինչպես աստղերը՝ ջրհորի մեջ։ Կան և կապույտ աչքեր, այնքան վճիտ, որ նրանց մեջ արտացոլում է զգեստի ծփանքը, ինչպես անտառի շորորը՝ լեռնային լճակի մեջ։ Կան և հոլանի բազուկներ, և էլ ինչե՞ր չկան ու ի՜նչ ձևեր, ձևերի որպիսի կորություն, ամենը նուրբ...

Լավ է դադար առնել այստեղ։

## 3

Հետաքրքիր չեն մյուս ժամերը՝ մինչև երեքը, չորսը, և նույնիսկ այդ ժամերն էլ հետաքրքիր չեն, որովհետև ցանակները աշխատանքից հոգնած շտապում են հացի և հանգստի։ Նրանք արագ են անցնում և ուշադրություն չեն դարձնում փողոցի եռուզեռին, այլև բարձրաձայն չեն խոսում իրենց ծառայության և առտնին գործերի մասին։ Եթե որևէ մեքենագրուհի մի քիչ կանգնում է վիտրինի առաջ և դիտում կանացի գլխարկները,— ուշադրության արժանի չէ նրա տխուր դիրքը։ Կարելի է լսել զույգ տրտունջներ, որ շոգ է, սակայն այդ չի վերաբերում փողոցին, որովհետև շոգը արևն է թափում։ Նրանք չեն նկատում, որ հենց այդ ժամին փողոցի ծառերը շարժում են իրենց ճյուղերը, որպեսզի զովանան ծառայական անձանց հոգնած մարմինները։

Հետո երկարում են ստվերները, արևը հանգստի է

գնում։ Հետզհետե կենդանանում է փողոցը։ Դուրս են գալիս նրանք, որոնք հետկեսօրյա քնից ծանրացել են, և նրանք, որոնք սպասել են ձգվող ստվերներին։ Սկսվում է Աստաֆյան փողոցի իսկական կյանքը, նրա վեհությունը, այն ժամանակը, երբ նա դադարում է փողոց լինելուց և դառնում է զբոսարան, ժամադրավայր, երազատուն, մի խոսքով հայրենի տուն, որտեղ շրջում են հորեղբոր որդիները և մորաքրոջ աղջիկները, հորեղբայրները, քեռիները և պապերը։ Ամենից անհամբերը երիտասարդներն են։ Ահա Գետառի կողմից արագ գալիս է մի դեռատի պատանի։ Նա սանրել է մազերը, փայլում են կոշիկները և ձեռքին ծաղիկների փունջ ունի։ Նա չի տեսնում ոչ խոշընդոտ, ոչ մյուս փողոցների երթևեկը։ Նրան թվում է, թե Աստաֆյանը մի անմարդ այգի է, որտեղ ծառերը բուսել են ստվերի և հառաչանքների համար։ Մի անմարդ այգի, որտեղ նրան սպասում է մի մանկահասակ աղջիկ և միամիտ մի զրույց։ Այդ դեռ սկիզբն է. և երբ վառվում են լապտերները, Աստաֆյան փողոցում կարելի է տեսնել նման պատանի զույգեր, որոնք հեռուները չեն գնում և ոչինչ չեն զգում մարդաշատ մայթերի վրա, բացի առավոտի նման բացվող իրենց սերը։ Նրանք իրարից որոշ հեռավորության վրա են կանգնած և շատ-շատ աղջիկը երկարում է իր բարակ բազուկը ծառից մի տերև պոկելու, իսկ տղան ծառի բունը գրկած շարունակում է սիրային շատախոսությունը։ Իջնում է գիշերը, երևում են ուրիշ զույգեր, որոնք գնում են փողոցն ի վեր դեպի համալսարանի բարդիները և ուշաթափվող աղբյուրը։ Գիշերային տարաժամին այդ կողմերում կարելի է տեսնել արձանի նման անշարժ զույգերի, որոնք բռնկվել են անհաղթահարելի կրակով։ Եթե բարդիները կարողանային խոսել և քարերը լեզու առնեին, այն ժամանակ կարելի էր լսել զարմանահրաշ պատմություններ՝ ավելի հետաքրքիր, քան հազար ու մի գիշերների հեքիաթները։ Իսկ եթե յուրաքանչյուր զույգ

իր այցելությունը հավերժացնելու համար մի քար գցեր այդ կողմերը, այն ժամանակ մենք կունենայինք Բաբելոնի աշտարակի չափ բուրգեր և հյուսիս-արևելյան քամին փոշի չէր մաղի մեր քաղաքի վրա։

Իսկապես որ զարմանալի փողոց է Աստաֆյանը...

## 4

Այնուամենայնիվ ամենահրաշալի այդ ժամերի նկարագրությունը չի կարող գերել մեր գրիչը և մեզ ստիպել մոռացության տալու մի էակի, որին մենք պետք է անվանենք անանուն մարդ, որովհետև մի առանձին բան չի ավելանա, եթե հիշատակենք նրա անունը և ազգանունը, նկարագրենք նրա դեմքը և պատմենք նրա կյանքը, թեկուզ համառոտագրած։

Ահա վրա հասան այն ժամերը, երբ փողոցում, չհաշված նրանց, որոնք շտապում են տուն, մնացել են նրա հավատարիմ երկրպագուները։ Այդ մի քանի զույգ սիրահարներ են, որոնք իրարից չեն կարողանում բաժանվել, ապա մտավորական խավի ներկայացուցիչներ, որոնք ճեմելով վիճում են ո՞վ գիտե ինչպիսի անլուծելի խնդիրների մասին, ապա նրանք, որոնք նվվում են, ինչպես գիշերային բուն, և վերջապես նրանք, որոնց զգացմունքների կապանքներն արձակվել են և այդ տարածության վրա զբոսնելով գոհ են, որ վերևից ժպտում են հայրենի աստղերը, ոտքերի տակ հին հողն է, ջրերը գալիս են երկրի խորքերից, և ջրերը նրանց պատմում են հին օրերի մասին։

Գիշերային այդ ժամին քաղաքի այն խուլ փողոցներից, այն ասիական լաբիրինթից, որ, ինչպես ասացինք, քաղաք է քաղաքի մեջ և որտեղ խլրտում է մանր տնատերերի մի բազմություն,— դուրս է գալիս մի վտիտ մարդ, մի անանուն մարդ։ Նա կանգնում է երեք բարդիների առաջ, նայում է ներքև, տեսնում է փողոցի գետինը, որ շողում է լույսերի տակ և լսում է ջրերի ձայնը։ Հետո նա բարձրացնում է բարակ վերարկուի



409—21

օձիքը և մայթի վրայով գնում է դեպի վեր։ Փողոցի վերջում նա անհայտանում է և երկար ժամանակ չի երևում։ Նա նստում է մի փոքրիկ բարձրության վրա և այնտեղից նայում է քաղաքի լույսերին, դաշտին և հեռվի լեռներին։

Մութի մեջ ցցվում է Արարատի սպիտակ գագաթը։ Ստորոտը, որտեղ ձյուն չկա, կորչում է մութի մեջ և երևում է միայն ձյունոտ գագաթը, որ հեռուներում դողում է ինչպես վիթխարի ամպ։ Նրա աչքին ահա երևում է այդ սպիտակ գագաթը և քաղաքը, որի կրակները քանի հեռանում, այնքան խառնվում են իրար, և ստացվում է կրակների ծփացող ծով։ Սակայն այդ անանուն մարդը խորշում է կրակների ծովից և հայացքը դարձնում է դեպի լեռան գագաթը։ Ապա նայում է Աստաֆյանի ուղիղ սլաքին և փակում է աչքերը։

Ի՞նչ էր նրա ցնորքը, ի՞նչ կդարձներ նա այս փողոցը։

Նա կփակեր փողոցի բոլոր մուտքերը կավե պատերով, կթողներ միայն մի դռնակ, որով մտներ միայն սայլը։ Նա հողին կհավասարեցներ բոլոր քարաշեն տները և նրանց փոխարեն կկառուցեր կավե խրճիթներ, նրանց կտուրին չարդախ, որպեսզի լուսնկա գիշերներին բնակիչները բարձրանային վերև, և լուսնակը շողք գցեր փայտե օրորոցների վրա։ Նա կկտրատեր բոլոր լարերը և բնակիչներին կհրամայեր, որ ձմեռը ձեթ վառեն, մնացած ժամանակ ելնեն արևի հետ և պառկեն մթնով։ Ելնեն արևի հետ և աշխատեն իրենց պարտեզներում, այգիներում, ցանեն սոխ ու սխտոր, ոսկեհատ ցորեն և հնձաններում ոտքերով ճմլեն խաղողը։ Նա կցանկանար տեսնել համեստ աղջիկներ, արծաթյա մախչայով, գլխանոցներով, երկար-երկար ծամերով, որոնց ծայրերին լինեին ուլունքներ։ Աղջիկները սափորներով գինի բերեին հնձաններից, մարեն մառանից հաներ սպիտակ լավաշ և յուղ և պանիր, ինքը նստեր կտուրի վրա, ներքևը ջրերը խոխոջային, վերևը երկնքի խոր կապույտը։ Եվ ցոլք տար Բարձր լեռը։ Հավիտյան այդպես մնար այս

փողոցը, բերդի պես դրսից անջատված խոր խրամատներով, կապույտ ծուխը բարձրանար վերև, և ծխի միջից ինքը նայեր Արարատին ու հիանար։ Թող ամբողջ աշխարհում թագավորեր երկաթը, և միայն այստեղ իշխեր կավը, քարը, փայտը... Դրսից չհասներ ոչ մի հնչյուն, ոչ մի օտար աղմուկ, և ոչինչ չվրդովեր նրա հանգիստը։

Անեղծ մնար պրովինցիան...

Այդ էր նրա ցնորքը։

Հետո նա լսում էր այն ձայները, որ բերում էր քամին լեռներից։ Նա զգում էր քամու բերած բույրերը և որոշում, որ լեռան վրա արդեն բացվել է մանուշակը, որ բադերը բարձրացել են գետերի հոսանքով մինչև լեռնային մարգագետինները, որ հասկերը լցվում են կաթնագույն հեղուկով, ահա գալիս է տաք շեղջի բույրը, ուրեմն ցորեն են ծեծում, և կարմրել է խնձորը։

Նստում էր այդ անանուն մարդը բարձրության վրա և մտածում էր մի անէական աշխարհի մասին։ Նրա աչքի առաջ բացվում էր բլուրների, լեռների և դաշտերի մի ընդարձակ տարածություն, մի ամբողջ երկիր։ Սպիտակ և բարձրահասակ եզները ահա քաշում են արորը, պարարտ սևահողը ծալվում է իրար վրա, երգում է մշակը՝ պարզ երգեր, հետո աղջիկները հաց են բերում, մշակ ու սերմացան նստում են սև հողերի վրա, աղջիկները ժողովում են դաղձ, եզներն արածում են կանաչ արոտներում։ Մայր է մտնում արևը, հոգնած մշակները և եզները տուն են վերադառնում, օջախներից բարձրանում է ծուխը, և լըսվում է շների ուրախ աղմուկը։

Նրա անիրական աշխարհում միայն այդ կար՝ գյուղեր՝ խաղաղության մեջ, ծառեր՝ երգերի համար, ջրեր՝ որ ոռոգում են արտերը և պարտեզները, շներ՝ որոնք հաչում են լուսնի վրա, մարեններ՝ հաց թխելու համար և գզրարներ, որոնք ձմեռը նստեին օդաներում, գզեին բուրդ և մինչև լույս հեքիաթներ պատմեին։

Ամեն գիշեր այդ անանուն մարդը լինում էր այդ եր-

կրրում։ Ահա գնում է ջրելու պարտեզը։ Ձյուն է նստել, և ձյունի վրա նա տեսնում է գազանների հետքեր։ Անձրև է իջել, և տաք գոլորշի է բարձրանում ձիերի մեջքից, որոնք սեղմվել են իրար և ննջում են։ Խշշում է անտառը. մինչև լույս նրա խորքում վառվում է հովիվների խարույկը։

Երբեմն նրանք, որոնք կեսգիշերից ուշ անցել են այդ փողոցով, լսել են տխուր երգի և նվագի ձայն։ Ոմանք ենթադրել են, որ այն կույր երաժիշտն է փչում իր սրինգը, ոմանք վերագրել են մենավոր սայլապանին, որը քշել է սայլը դեպի գյուղական ճանապարհը և սայլի հետ օրորալով երգել իր միամիտ երգը, ոմանց նույնիսկ թվացել է, որ այդ խուլ ձայնը գալիս է աստղերից,— սակայն ստույգ է, որ երգողը այն վտիտ մարդն էր, որ ուներ մաշված, հնաձև վերարկու և նիհար մարմին։

Ինչպես լաց, ինչպես մորմոք ու կարոտ, հնչում էր նրա խեղճության երգը, և նա գոհ էր, որ իրեն լսում են լեռներից իջնող քամին, ջրերը, բարդիները, այն ձյունոտ գագաթը, որ սահմանն էր նրա անիրական աշխարհի։ Այդ վտիտ մարդը իջնում էր փողոցի վրա և հիացած փողոցի խաղաղությամբ, ջրերի ձայնով ու ծառերի սոսափով, քայլում էր դանդաղ և չէր տեսնում անցնողներին։ Նա հասնում էր մինչև այն երեք բարդին և ապա կորչում էր նեղ փողոցների լաբիրինթում, կարծես մտնում էր գետնի տակ, ինչպես մի ոգի կամ մի սև բզեզ։

## 5

Այն բանակը, որ առավոտյան կանուխ աշխատանքի էր գնում և դժգոհում էր հեռավորությունից,— մի օր շրջվեց դեպի այս փողոցը։ Սկսվեց այն, ինչ անջնջելի կմնա մեր քաղաքի պատմության մեջ։ Բահերով և բրիչներով զինված մի բազմություն գրոհի դիմեց։ Փորեցին գետինը, և արևի տակ շողաց այն հողը, որ երբեք արևի երես չէր տեսել։ Հող լցվեց մայթերի վրա, առաջացան խրա-

մասներ և գուբեր, խճաքարերի կույտեր, որոնք վերջ տվին այս փողոցի սիրահարների հոգևոր երթին։ Փողոցը դարձավ եռացող աշխատանքի կաթսա, և նրանք, որոնց ուրախացնում էր այդ դժվար աշխատանքը, ապրում էին գործի հաջողությամբ, պայքարում էին հաղթանակի համար։ Քաղաքից դուրս արդեն հաստատ քայլերով, մետր առ մետր, քաղաքին և նրա փողոցներին էին մոտենում պողպատյա գծերը։ Հողաթումբերը և խրամատները ուղենիշեր էին, և որքան բարձրանում էին նրանք, մինչև վեր, մինչև քաղաքի վերջը, այնքան լեռնանում էր ուրախությունը։

Եկավ և այն օրը, երբ առաջին վագոնը սուրաց այս փողոցով... Խնդություն էր և ազատության աղաղակներ։ Կարծես զրահագնացք էր, որ քաղաքի բնակիչներին բերում էր փրկություն բազմադարյա ստրկությունից։

Փողոցն ուրիշ դարձավ։ Թեքվեց պրովինցիայի դեղնած արևը։ Բացվեց մի վիհ, և այդ վիհը կլանեց այն միակը և անկրկնելին, որ հայտնի էր որպես Երևան քաղաքի Աստաֆյան փողոց։

Մի գիշեր այն անանուն մարդը, որ վերջին սիրահարն էր այս փողոցի, դուրս եկավ նեղ փողոցների լաբիրինթից, որտեղ ամեն մի տան մեջ, ամեն մի ներքնահարկում խոսում էին այդ վիթխարի հաղթանակի մասին։ Դուրս եկավ մարդը, նայեց իր երեք բարդիներին։ Նրանք կանգուն էին, և երբ սլացավ լույսերով ողողված վագոնը, նա բնազդաբար սեղմվեց բարդիներին։ Ապա արագ-արագ բարձրացավ վեր, դեպի այն բարձրությունը։

Այնտեղից նա տեսավ ռելսերը, որ ձգվում էին փողոցի ամբողջ երկարությամբ։ Նրանք գնում էին հեռու, խառնվում ուրիշ ուղիների, անցնում աշխարհից աշխարհ։ Հետո նա հենվեց քարին, տեսավ դաշտը, տեսավ և այն ձյունոտ գագաթը։ Նույնն էր, ինչպես ամեն գիշեր։ Ապա կամեցավ կավե պատերով փակել բոլոր մուտքերը,

որպեսզի դրսից ոչ մի հնչյուն չհասնի իր փողոցին։ Եվ ճանապարհ ելավ դեպի այն անիրական աշխարհը...

Հանկարծ, ներքևում, կապտագույն ռելսերի վրա, նա տեսավ մի վիթխարի տուն, լույսերով ողողված, որ շարժվում էր ամեհի թափով, գալիս էր աղմուկով և զանգերի ղողանջով, գալիս էր, որ բարձրանա լեռը, խլի իրենից և այդ բարձրությունը։ Նրան թվաց, թե ռելսերի վրայով գալիս է մի ահեղ դագաղ, որից փրկություն չկա, ահա ղողանջում են զանգերը, և այդ վտիտ մարդը տեսնում է դագաղի բաց կափարիչը։

Նրա ստվերը անհետացավ։

Հետո պատահմամբ գտան մի վերարկու, որ կոթնել էր քարին, մի զույգ մաշիկներ և մի հնաձև գլխարկ։ Այդ ամենն այնպես էր, որ կարծես մեջը մարդ կա, գլխարկի տակ՝ գլուխ, վերարկուի մեջ՝ իրան, և կոշիկների մեջ՝ ոտքեր։ Բայց ոչինչ չկար։ Կարծես մարդը շորերի միջից հրաշքով դուրս էր եկել և անհետացել։ Այդպես իր հին շապիկից դուրս է գալիս օձը։

Բայց ասում են, որ մի վտիտ մարդ, այլ տարազով, երեկոները, երբ հանդարտվում է քաղաքի աղմուկը, Աբովյան փողոցի վերջում սպասում է տրամվայի վագոնին։ Մարդը մտնում է ներս, նստում և պատուհանից նայում է դուրս։ Տրամվայը նրան տանում է քաղաքից դուրս, և այդ մարդն անհանգստության նշաններ է ցույց տալիս, երբ երևում է այն Բարձր լեռան գագաթը։ Նա խնդրում է արագացնել ընթացքը, ուրախությունից դողում է և համոզված է, որ ինքը բարձրանալու է այն լեռան գլուխը և տեսնելու է իր ցնորքի աշխարհը։

# ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

## 1

*Ես հարցնում եմ Ավագին.*

*— Մնո՞ւմ է այն վարագույրը...*

*— Մնում է։*

*— Իսկ մա՞յրը...*

*— Մայրը դեռ հավատում է։*

*Հետո բարձրանում է մի այլ վարագույր, և երևում են արևի շողերով ողողված Արաքսի տափարակը, առափնյա դեղնած եղեգները, որոնք հազիվ օրորվում են գետի զովից։*

*Ավագի հետ հասնում ենք հնձած արտերի սահմանին և նստում միայնակ չինարու տակ։ Ընկերս սրբում է քրտնած ճակատը և արևից այրված աչքերը դարձնում մութ սաղարթի կողմը։ Ճյուղերի վրա նստել են գեր սարյակներ և դաշտային գորշ ճնճղուկներ։ Նրանք անհանգստանում են, և թվում է, թե հարցնում են իրար, թե ի՞նչ մարդիկ ենք, հրացան չկա՞ մեր ձեռքին կամ քար չե՞նք առնի։ Ապա հանդարտվում են, որովհետև ծեր սարյակը հանդիմանում է նրանց անտեղի հուզմունքի համար։ Այնուամենայնիվ թռչունները բարձրանում են վերևի ճյուղերի վրա։ Նրանք կորչում են տերևների արանքում, և չի դադարում թռչնային անհանգիստ զրույցը։*

Շոգից և հոգնությունից ծանրանում են իմ կոպերը, և երբ փակում եմ աչքերս, լսում եմ հազարավոր զերանդիների խշշոց, նույնիսկ հատկերի վայր ընկնելը։ Հետո սաստկանում է այդ խշշոցը, զով է լինում, և լսում եմ բազմաթիվ նիզակների իրար զարկելը։ Աղմկում են եղեգները... Երևի գետի հունով լեռներից իջնում է սառը հոսանքը։

Ապա մեկնվում եմ Ավազի կողքին և աղմկող եղեգների արանքից նայում Արարատին։ Երևում է լեռան մուգ-կապույտ ստվերը, վրան ձյունի նման սպիտակ ամպ։ Երբ օրորվում է եղեգնը, օրորվում է և լեռան կապույտ ստվերը, հազիվ նշմարելի դողում է գագաթի սպիտակ ձյունը, որ ցուրտ ցոլք է տալիս շիկացած օդում։

Ու լիաթոք շնչում եմ զովը, որ իջնում է լեռան բարձր գագաթից, ամպի նման սպիտակ ձյուներից և այն կապույտ, ինձ համար հավիտյան անհասանելի ամպերից...

Գետնի կավն արևից ճաքել է։ Խոր ճեղքերից բարձրանում է խանձված հողի բույր։ Մի սարդ հյուսել է ոստայնը ճեղքի վրա. ծղնոտի ծայրը մոտեցնում եմ ոստայնին, և հողի մթին խորքից դուրս է վազում քաղցած զազանը՝ բրդոտ մի սարդ և ամեհի արագությամբ պտույտ է անում ոսկեգույն թելերի վրա, անհամբեր փնտրելով որսը։

Ծղնոտների արանքում մի սև բզեզ գլորում է աղբի կլոր գունդը։ Ահա նա, աղբակեր սկարաբեյը, այն բզեզը, որին եգիպտացիք անվանում էին սրբազան, որովհետև հավատում էին, թե նա է գլորում երկրագունդը, ինչպես այս կլոր աղբը։ Մի րոպե նա սևին է տալիս ծղնոտների մեջ, ապա աղբագունդի հետ գլորվում հողի ճեղքը։

Ես մատներով տրորում եմ կավը, ամենահին նյութը, որ կա այս տափարակում։ Քանի՜ ոտքեր, քանի՜ սմբակներ և անիվներ անցել են այս կավի վրայով, ինչքա՞ն է ծեծել ձյունը, և՛ հողմը, և՛ արևը, և՛ անձրևը։

Անմռունչ, հավիտյան համր կավ...

Ահա հեռվում երևում են այգիների գորշ պարիսպները և տների պատերը՝ կառուցված նույն հին կավից։ Արևը խանձել է, քամին և անձրևը պոկել են պարիսպների կատարները, մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրածայր։

Նստել են կավե հին պատերն այս ընդարձակ դաշտում, ինչպես չոքած ուղտեր։ Նրանցից մեկը ցցել է վիզը, մյուսի միայն սապատն է երևում, երրորդը չոքել է առաջի ոտքերի վրա, կարծես հիմա պիտի իջեցնի և հետին ոտքերը։

Գնա մինչև հին Բաբելոն, էլամների աշխարհը, մինչև Աղի լիճը և Միջագետքի խանձված դաշտերը, ամեն տեղ կտեսնես այս բիբլիական կավը, մահարձանի պես մի չինար և սրբազան բզեզներ։

Իսկ այս դաշտում ինչքան արագ են մահանում պարիսպները, երկաթե անիվները տրորում են բրդոտ սարդերին, և արգավանդ կավը ուռճանում է նոր սերմերով։

— Վե՛ր կաց, Ավագ, զովն ընկավ...

* * *

Նրան անվանում էին Սեթ, և որովհետև հայրը վաղուց էր մեռել, կոչում էին մոր՝ Երանուհու անունով՝ Երանի տղա Սեթ և կամ՝ Երանի Սեթ։

Կարճ էր հասակը, թե բարձր, թավ էր ձայնը, թե բարակ, և գիտե՞ր նա սրինգ նվագել, սիրե՞լ էր նա մի աղջկա և հենց այդ չինարու տակ մեզ նման հանգստացե՞լ էր նա, երբ վերադառնում էր Արաքսի ափերի արտերից,— այդ բոլորն ինձ չպատմեց իմ ընկեր Ավագը կամ գուցե և պատմեց, սակայն իմ հիշողության մեջ ժամանակը խունացրեց այդ պատմության պայծառ գույները։ Եվ հիմա, երբ գրում եմ նրա մասին, որին չեմ տեսել, ես իմ ընկերոջ պատմածից հիշում եմ այն, որ Երանի Սեթը գյուղի ամենալավ սերմնացանն էր։

Այս կողմերում Արաքսը գարնանը ելնում է իր ափերից, վարար ջրերը տիղմ են փռում լայն տափարակի վրա, և առափնյա եղեգնուտները դառնում են կանաչ կղզիներ։ Սերմնացանը ցանում է սերմը, երբ հետ են գնում ջրերը, և գետնին նստում է թաց տիղմը։ Նա հանում է ոտքերը, մինչև ծնկները վեր քաշում և փայտյա կոտը պարանոցից կախ՝ գնում է օրոր և հավասար քայլերով։ Գնում է և աջ ձեռքով լիաբուռն վերցնում ծանր հատիկները, որ մի վայրկյան շողում են արևի տակ, ինչպես ճնճղուկների երամը և ծանրությամբ ընկնում հողի մեջ։

Ահա այդպիսի սերմնացան էր Սեթը, հողի մշակ։ Ուներ մի մայր, մի հին տնակ, երկու բարդի, որի կատարին ամեն տարի ծանոթ արագիլը նորոգում էր բույնը և պառավ Ծրանի համար բերում գարնան խնդություն, ինչպես մյուս արագիլները՝ գյուղի մնացած տների համար։

Երբ արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չէր բռնում, ուրեմն հետ էին գնացել Արաքսի ջրերը, և ժամանակն էր, որ Սեթը կախեր կոտը, սերմ ցաներ, իսկ մայրը ելներ փորելու բակի մարգերը, որոնց կեսը փշացնում էին հարևանի հավերը, իսկ սոխի մարգում պառկում էր իր՝ Ծրանի կատուն։

...Այս ամենապարզ պատմությունն է, ամենից հասկանալին։ Գյուղը դաշնակների թիկունքում, գյուղում գաղտնի պատրաստություններ ապստամբության, երբ հարավից արշավեր կարմիր հեծելազորը։ Ահի գիշերներ, բռնություն, վախ, կողոպուտ։ Գիշերներ, երբ դեպի դիրքերն էին քշում սովահար մի բազմություն, երբ դիրքերից հետ էին փախչում նրանք, որոնք ուզում էին քրտինք թափել հողի վրա, արտերը ջրել և ունենալ խաղաղություն իրենց խեղճ խրճիթներում։

Երբ գյուղում հարավից լսեցին թնդանոթի առաջին որոտը, և նահանջող թշնամին ետ դարձրեց ձիերի գլուխը, թշնամու թիկունքում պայթեց ապստամբությունը.

որպես արձագանք այն առաջին որոտի, որ խրճիթներին ավետեց ազատություն դաշնակցական գերությունից։

Արև էր, էլի արագիլներ կային, և յուղոտ փայլով արևի տակ շողում էր արգավանդ տիղմը։ Հանկարծ գընդակների տարափ տեղաց եղեգնուտների կողմը, որտեղ սպիտակ ձիավորների դեմ ամրացել էին մի խումբ ապըստամբ գյուղացիներ։

Սեթը չոքեց այն չինարու տակը, և որոտաց նրա հրացանը։ Արշավող ձիավորների վախեցած երամը շաղ եկավ, ապա նորից գունդ կազմեցին և թաց հողերի վրայով ձիերը քշեցին դեպի միայնակ ծառը, որ սև ստվերը նետել էր ամայի դաշտում։

Երեկոյան կարմիր հեծելազորը գյուղը մտավ։

Միայն մյուս առավոտ, երբ եկան և ծանր թնդանոթները, դաշտի բարակ արահետով, եղեգնյա պատգարակի վրա, ընկերները տուն բերին սպանված սերմնացանի մարմինը։ Նրա սրունքները մերկ էին, մի կողքի վրա չորացած տիղմ էր և խանձված արյուն։ Երևում էր միայն սառած աչքը, որ նայում էր անշարժ, ինչպես գորշ ամպը անհունի խորքից...

Նա արնաքամ սողացել էր թաց հողերի վրայով դեպի եղեգները, դեպի ջուրը, կոշտ մատներով չանգռել էր գետինը, ցեխոտել էր մատները և անզգայության մեջ ցեխոտ մատներով սեղմել էր թրատված ուսը։ Հետո Երեսն ի վայր թաղվել էր սառը հողում՝ որպես ոսկեհատ սերմ։

Ես նայում էի մի ցածր դռնակի, որի տակը ո՛չ ձայն կար, ո՛չ շարժում։ Արևամուտին այնքան բարձր էին երևում բակի երկու բարդիները։

— Երան հորքուրը ո՛չ տղայի դիակը տեսավ, ո՛չ թաղումը։ Երբ նրան հայտնում են, որ ահա բերում են, նա ճչով դուրս է վազում, բայց մինչև շեմքը չի հասնում... Չորս օր մնում է ուշաթափ։ Ասում էին, որ կմեռնի...

## 2

Լեռնային գյուղերում այս շենքը կնմանվեր հին մայրագի։ Կտուրին կլիներ կլոր անցք, և տափակ մղաններով բարձր կալից հարդի տաք շեղջերն ալիք-ալիք կմղանեին ներս։ Հետո անցքը կփակեին չոր ցախով, և մի անտիրական շուն կձմեռեր հարդի վրա, մարտի վերջին շունը կցնկներ վեց ապօրինի լակոտ, որ հղիացել էր ցուրտ աշնանը, ցանկապատի տակ։

Այդպես կլիներ լեռնային գյուղերում։

Այս շենքը եղել է հարթավայրի գյուղի եկեղեցին։ Հանել են վարագույրը, սրբերի պատկերները։ Դարբինը տարել է մկրտության քարե ավազանը և այժմ կարմրած խոփերը նետում է ավազանի պղտոր ջրի մեջ։ Մնացել են քարե երեք աստիճանները, որով իջնում են գետնափոր ակումբը, երկու պղնձյա աշտանակները, որոնցից կախում են նավթի լամպեր. մնացել է եղեգնյա կտուրը և ջահերի նման կախված եղեգները, որ ճոճվում են, երբ բացվում է դուռը։ Ակումբի եղեգնյա կտուրի տակ ապրում են հին աղավնիները, և երբ դուրսը բուք է լինում, նրանք ծվարում են միխից մգլած նիշերում, այնտեղ, ուր պահում էին արծաթյա անոթները։

Նոր նկարներ են զարդարում սպիտակ պատերը, և հին կամարների տակ հնչում են նոր խոսքեր։ Այդ գետնահարկ շենքում աղմկում են երիտասարդ սերնդի զվարթաձայն զրույցները։

Դռան գլխին, քարի վրա, առաջին տարին քանդակեցին մի մուրճ և մի մանգաղ, ներքևը՝ անպաճույճ գրերով գրեցին՝ «Կեցցե»։ Այդ անզարդ քանդակից այժմ ցոլում է առաջին հավատացողների սրբազան պարզությունը, այն անկրկնելի հմայքը, որ ունի սկզբնական օրերի անվարժ ոճը, երբ նոր մարդը հնի թանձր խավարից թռչում է դեպի նոր արշալույս և առաջին հետքերն է դրոշմում քարերի վրա, թղթերի վրա և պայծառ խնդությամբ սկսում է իր նոր էջը։

Առաջին դրոշները դառնում են սրբություն, հերոսներն անմահանում են, և գալիս են նորոգ գուսաններ՝ նրանց և այն հերոսական օրերի մեծարման երգերով։

Եվ ահա նոյեմբերյան տոներին եղեգնյա կտուրով այդ ակումբում եղավ մի սովորական դեպք։

Վառել էին բոլոր ճրագները, և կամարների տակ դեռ մութ էր։ Նույնիսկ թվում էր, թե ճրագների լույսից ավելի էր թանձրանում խավարը։ Լուսավոր էր բեմը, և բեմի լույսը հազիվ էր հասնում առաջին շարքերին, որտեղ փայտյա ցածր նստարանների վրա իրար էին սեղմվել կանուխ եկած հանդիսականները։

Դռնակն անդադար բացվում էր, նոյեմբերյան քամին ներս էր փչում, օրորվում էին եղեգները, և ճրագների լույսը դողում էր։ Մարդիկ, որոնք ներս էին մտնում այդ դռնակով, իջնում էին քարե երեք աստիճաններով, նրանք կորչում էին մութի մեջ, երևում էին ծխախոտի կրակները, ինչպես գիշերային լուսավոր բզեզներ։ Հետո առաջանում էին դեպի լույսը։

Աղջիկները զարդարում էին բեմը։ Ի՞նչ կարող է լինել դաշտերում, նոյեմբերյան օրերին... Դեղնավուն փշատերև թուփեր, դեռ կանաչ մասրենու ճյուղեր և դաշտային արցանգեզներ, որոնք ծաղկում են ցրտերի հետ և միայնակ վայելում աշնան արևը։ Աղջիկները դեղնավուն փշատերև թփերից, մասրենու կանաչ ճյուղերից և աշնան դաշտի ծաղիկներից հյուսել էին մանյակներ ու պսակներ, բամբակի բացված կնգուղները հագցրել էին պսակներին և այդ ամենը նկարների կարմիր երիզների հետ հյուսած՝ կախել պատերից։

Անկյունում դրոշներն էին, որոնք հսկումի էին կանգնել մի պարզ և արդեն կարմիրը մաշված դրոշակի, որի վրա նույն անպաճույճ մուրճն էր ու մանգաղը, ինչպես քանդակել էին դռան ճակատին։ Այդ ապստամբության առաջին դրոշակն էր, որ պարզեց գյուղը, երբ հարավից որոտաց ազատության առաջին թնդանոթը։

Դուռը բաց էին անում, ներս էր մտնում նոյեմբերյան քամին, օրորվում էին եղեգները, նվաղում և ապա բռնկվում էր ճրագների լույսը, և ծփում էին դրոշակները։ Ինչպես հին զինվոր, որ խանձվել է ահեղ մարտերում, ապստամբության խունացած դրոշակը կարծես մեղմ շշունջով ավանդում էր ոսկեզօծ նորերին այն պայծառ օրերի դաժան պարզությունը, երբ իրեն բարձրացրին հողի մշակները, որպես փրկության փարոս և ապստամբության նշան, ինքը փողփողաց խրճիթների վրա, լսեց գնդակների մետաղաձայն աղմուկը, տեսավ առաջին զոհերի արյունոտ մարմինները և, երբ պղնձե փողերը հնչեցին թաղման նվագը, խոնարհվեց նրանց գերեզմանների վրա։

Բեմի մարդկանց հետաքրքրության առարկան այն նոր վարագույրն էր, որ քաղաքից նվեր էին բերել երկու երիտասարդ բանվոր։ Նրանք վերևից ամրացրել էին վարագույրը, մնում էր, որ ձգեին պարանը, և վարագույրը ծալվեծալ իջներ։ Սակայն այդ հանդիսավոր րոպեն թողել էին վերջը, երբ կհավաքվեին բոլորը, և իրենք՝ քաղաքից եկած երիտասարդները, խոսք կառնեին ողջույնի և կասեին իրենց ա՛յդ, ինչպես և մյուս նվերների մասին։

Դռնակը նորից բացվեց, մեկը լուցկի վառեց քարե աստիճանները լուսավորելու, և մի ամբողջ խումբ իրար հետևից ներս մտան։ Լսվում էր ծանր կոշիկների դոփյուն. ապա նրանք դուրս եկան մթնից, և հանդիսականները նրանց մեջ տեսան մի անծանոթ մարդու, որ հասարակ շինել էր հագել և ձմեռային գլխարկ։ Նա խարխափելով էր գալիս, որովհետև ներսի տաքից գոլորշի էր նստել ակնոցների հաստ ապակիներին։

Մյուսների հետ այդ մարդը բարձրացավ բեմը, և նրանք, որոնք զրուցում էին կամարների տակ, առաջ եկան ու խիտ նստեցին, այնպես որ վերջի շարքերը հազիվ էին նշմարվում։ Նա սրբեց ակնոցները և հետաքրքրությամբ նայեց շուրջը։ Աղավնիները լուսավոր բեմից և այդքան մարդկանց աղմուկից անհանգիստ

*թպրտացին կտուրի տակ, մի քանիսը ճախրեցին լույսերի և մարդկանց վրա, ապա կորան մութի մեջ։*

*Մարդը ժպտա՞ց աղավնիների թպրտոցի վրա, թե՞ ջերմություն զգաց և հստակ ձայնով սկսեց իր պարզ զրույցը։*

*Լսե՞լ եք դուք այն արթուն խոսքը, որ հոսում է, ինչպես իմաստուն զրույցը, երբ առաջին վայրկյանից խոսողն իրեն է բևեռում բոլորի ուշադրությունը, երբ չկա ինքը՝ խոսողը, իսկ նրա ճշմարիտ մտքերը մուրճի նման հարվածում են և բախում խոր դռներ, երբ խոսքի մեջ կա անխորտակելի ճշմարտություն, որ հարթում է իր ճանապարհը ուրիշների սրտում և ուղեղների մեջ, երբեմն փայլում բարձր մտքերով և երբեմն զարմացնում իրերի ու մարդկանց ճշգրիտ ճանաչողությամբ։*

*Նա խոսում էր այնպես, կարծես պատմում էր միայն մեկին, այն սրտագին մտերմությամբ, որ ունի պատմողը լսողի հանդեպ։ Նա պատմում էր այն չարքաշ օրերի մասին, որ անդարձ անցել են, խաբեբայության, սուտի, շահագործման, հոգևոր այլասերման, ծեծի և բռնությունների այն ժամանակների, երբ սով կար, և՛ սուր, և՛ բանտ, և՛ կեղեքում։ Երբ պատմում էր այդ ժամանակներից, շատերը վերհիշում էին պատկերներ, որոնք անջնջելի դրոշմ էին դրել նրանց հիշողության մեջ։ Ով քաղց էր հիշում, ով որդուն՝ որ անվերադարձ գնաց պատերազմ, ով հիշում էր իր դառն ապրուստը, երբ բախում էր ունևորի դուռը, և ում մեջքի վրա խարազանի հետքերը ցավում էին, որպես հին վերք։*

*Հետո նա դարձավ ապստամբության օրերին, իբրև միակ ելք, իբրև հոյակապ թռիչք դեպի ազատությունը, որպես միակ ճանապարհ, որ մարդուն հանեց լուսավոր ափը։ Նա հիշատակեց ստեղծագործ աշխատանքը, երբ անապատները հագենում են ջրից, և ուրախանում է մարդն իր ոռոգած դաշտերով, երբ ծուխ է բարձրանում գործարանների ծխնելույզներից, և հերոսը դժվար աշ-*

խատանքով հալում ու կոփում է իր կամքը, որպես ամրակուռ պողպատ։

Նա անսպասելի վերջացրեց... Բոլորովին հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու։ Մի վայրկյան լուռ մնացին, հետո բարձրացավ ծափերի աղմուկը։ Կարծես հազար-հազար աղավնիներ թպրտացին ու թափով ճախրեցին։

Հնչեց երգը, եղավ նվագ, ապա նոր ողջույններ, դարձյալ զվարթ երգ, դուրս եկավ այն երիտասարդ բանվորը և խոսեց հախուռն ավյունով։ Նա թվեց նվերները, և այդ վայրկյանին ծանրությամբ իջավ նոր վարագույրը, որ բերել էին նրանք գյուղական ակումբի համար։

Զարմանքի ալիքը գնաց մինչև վերջին շարքերը։

Վարագույրի վրա ամբողջ հասակով նկարված էր մի վիթխարի սերմնացան, փայտե կոտը պարանոցից կախ, մինչև սրունքները բաց ոտքերով։ Լույսի տակ շողում էին այն ոսկեգույն հատիկները, որ աջ ձեռքով նա շաղ էր տալիս արգավանդ ցելերի վրա։

— Երանի Սեթն է...

— Իսկը Սեթը...

— Աչքերը, աչքերը...

— Էս մեր հողերն են... Ա՜յ էն ղամիշները, էն մեր լեռը...

Գիտե՞ր այդ անհայտ նկարիչը Երանի Սեթին և այս գյուղը, նրանց հողերը,—դժվար է ասել։ Գուցե նրա համարձակ երևակայությունը ազատ ճախրել և երկնել էր այդ պատկերը, որպես ամենից հարմարը գյուղական բեմի համար։

Առաջին տպավորությունը մնաց անջնջելի։

Թեթև ծփում էր վարագույրը, սերմնացանը ծալվում էր, և ներքևից այնպես էր թվում, կարծես քայլում է սերմնացանը, և գետի զովից օրորվում է եղեգնուտը։ Իսկ խորքում՝ կապույտ մշուշի մեջ, հազիվ նշմարելի երևում էր զույգ Արարատը, ինչպես նոյեմբերյան պարզ գիշերներին երևում է գյուղի կտուրներից։

*Երկու կին, որոնց ազգական էր պառավ Երանը և նրա նահատակ որդին, ջերմ հավատով ընդունեցին ամբողջի կարծիքը, որ իրոք վարագույրի վրա Երանի Սեթն է։ Նրանցից մեկը վեր կացավ և փոքրիկ ձեռքը մոտեցրեց սերմնացանի բոբիկ ոտքերին։ Կարծես իր ձեռքի ջերմությունն ուզում էր հաղորդել անկենդան պատկերին, իբրև ջինջ սիրո նշան։ Մյուսը և մի ուրիշ կին մեղմ հառաչեցին ու լաց եղան մեռած սերմնացանի համար։*

*Այդ գիշեր արցունքը սրբագործեց մի ոսկի առասպել։*

* * *

*Քանի Նոյեմբեր անցավ...*

*Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով, և ծփում է վարագույրը, և բոց աչքերով մի սերմնացան սև հողերի վրա առատությամբ շաղ է տալիս ոսկի հատիկներ։*

*Գալիս է արդեն խուլ մի պառավ, եղեգնյա ավելը ձեռքին։ Սրբում է հատակը, զայրանում է աղավնիների վրա, երբ նրանք նստում են պղնձյա աշտանակների վրա, որ դրված են վարագույրի երկու կողմը։ Նա ավլում է ակումբի բակը, ապա նորից ներս է մտնում և մաքուր ձեռքով սրբում վարագույրի փոշին։*

*Երբ ոչ ոք չի լինում ներսը, պառավ Երանը հանդարտ զրուցում է որդու պատկերի հետ։*

*Հետո մայրը համբուրում է որդու անկենդան ոտքերը։*

* * *

*Փողոցի անկյունում ինձ հանդիպում է իմ ընկեր Ավագը։ Ես հարցնում եմ նրան.*

*— Մնո՞ւմ է այն վարագույրը...*

*— Մնում է։*

*— Իսկ մա՞յրը...*

— Մայրը դեռ հավատում է...

— Լավ է, որ ոչ ոք չի փշրել այդ առասպելը։

Հետո Ավագն ինձ պատմում է նորություններ գյուղից և գյուղի մարդկանցից։

Փողոցով անցնում են մարդկանց զորասյուներ, թնդում է նվագախումբը, և ես լսում եմ պղնձե փողերի հաղթական երգը։

Հետո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան, որ մեր սև ցելերի վրա ցանում է ոսկեհատ սերմեր։

# ԱՆՋՐԵՎԸ

# ՀՅՈՒՄԲԱԹԻ ՁՈՐ

Գյուղը երեք թաղ ունի՝ Հյումբաթի ձոր, Միջին մահլա և Գյունեյ թաղ։ Երեք թաղն էլ ձորերի մեջ են, տները գետնափոր, փողոցները քարայծի ճանապարհ։ Հնուց բերդ է եղել Հյումբաթի ձորում, ապահով թաքըստոցներ, որոնց հետքերն այժմ էլ մնում են, որպես նեղլիկ անցքեր սեպաձև ժայռերի լանջին։

Սրածայր ժայռեր են կողք-կողքի շարված, փոքր ու մեծ, մեկը ծուռ, կողքին թեքված, փուլ եկող դեզի նման, մյուսն ուղղաձիգ, որպես բարակ բարդի։ Ջյունն ու անձրևը դարերի ընթացքում քերծել են ժայռերի կողերը, լվացել և դարձրել ողորկ, հազար ու մի ձև տվել, կերտել ու քանդակել տարբեր պատկերներ։ Թվում է, թե մեկը հսկա թռչուն է՝ թառած քարի գլխին, մյուսը՝ գորշավուն գորտ, երրորդը՝ կնոջ կիսանդրի։

Մի քիչ ներքև, տձև ժայռերի տակ Հյումբաթն է, բլրակի վրա՝ Միջին մահլան, արևկող երեսին՝ Գյունեյ թաղը։ Մութն իջնելուց ինչքա՞ն մռայլ են թվում վերի ժայռերը, ինչպես հսկումի կանգնած առասպելական հրեշներ։ Հին քարանձավներից, ուր առաջ մարդն է ապրել, մթնով ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում և երկա՛ր ոռնում։

Անհիշելի ժամանակներից մարդիկ ապրում են

Հյումբաթի ձորում։ Նույն քարանձավում այժմ էլ ապրում է մի սերունդ, որի հին պապերն այդ քարանձավում իրենց մերկությունը ծածկում էին գազանի մորթով, մարդիկ, որոնց բրածո բազուկների հաստ ոսկորները այժմ երանության ու նախանձի ժպիտ են հարուցում մանրացած սերնդի աչքերում։

Հին անտառից ոչինչ չի մնացել, ավանդությունից բացի։ Այնտեղ, ուր այժմ մի զույգ լղար եզ ծանր կամն է քաշում, կամի վրա նստած ծերունին շոգ օրին միտն է բերում պապի պատմածը կալատեղի և այն օրերի մասին, երբ Գյունեյի լանջերին խիտ անտառ էր, ձորում շամբուտներ, որտեղ վարազ էին որսում մելիքները։

Այժմ լերկ են լանջերը, արևը խանձել է ժայռերի մամուռը, անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բսնող խոտերը, կուրացել են աղբյուրները, որոնց երակներն անտառի խոնավությունն էին ծծում և ջուրը ցայտում քարի ճեղքերից։

Հյումբաթի ձորում ոչ կռիվ է եղել և ոչ կոտորած։ Տարիների հետ պառավել է գյուղը, ուժասպառ եղել տարիքն առած ծերունու պես։ Դրա համար էլ այնքան շատ են ավերակները, դուռը հողով ծածկած գոմեր, որոնց մսուրում քանի տասնյակ տարի ոչ մի հորթ դարման չի կրծել։

Ահա երբեմնի փողոցը… Ամեն գարնան վերից իջնող հեղեղը մի քիչ խորացրել է հունը, տարիների ընթացքում դարձրել խորխորատ։ Կամարակապ աղբյուրի մի պատը փլվել է, քարե խողովակից իղուր է ջուր ծլլում, որովհետև և ոչ մի մարդ չի կռանում խողովակից ջուր խմելու։ Հեղեղը փորել է տան հիմքերը, կրապատը կախվել է խորխորատի վրա։ Մի տարի, երկու-երեք ձյունաշատ ձմեռ, գարնան արագ հալոցք, վարար հեղեղի մի զարկ, և կփլվի խարխուլ պատը։

Աղբյուրի կողքին հին ձիթհանքն է։ Մելիքներն են շինել և ստիպել, որ շրջակա գյուղերից կտավատ հավա-

քեն ձեթ քաշելու։ Չիթհանքի թանձր պատերն են մնացել և կլոր քարը, որ դարձրել են գոմեշները, գիշեր-ցերեկ պտույտ տվել, քարի տակ տրորել բոված կտավատը։

Հիմա էլ ժայռի գլխին մնում են Մելիք-Բախտամի ամարաթի բարձր պատերը, նրա բանտը, մելիքի ախոռները, մուտքը սրբատաշ քարերից և գեղեցիկ քանդակներով։ Կա մատուռի պես մի շենք, ծաղկանկար քանդակներով, հատակը սալքար, դիմացի պատին՝ ժանգոտ երկաթի օղ։ Մատուռի պես այդ շենքում Մելիք-Բախտամի ձին կերել է ռամիկի մատներով մեկ-մեկ ընտրած ոսկեհատ գարի և Իրանից քարվանով բերած քիշմիշ։

Հյումբաթի ձորով գետ է անցնում, որի մյուս ափին այգեստանների մեջ, գունավոր կտուրներով փոքրիկ քաղաքի տներն են։ Հյումբաթի ձորում, Միջին մահլայում և Գյունեյ թաղում ոչ կռիվ է եղել և ոչ էլ կոտորած։ Այն ժամանակ, երբ քաղաքի տեղը շամբուտ էր և անտառ, ձորի բոլոր տներից ծուխ էր բարձրանում։ Եվ երբ առաջին մովրովը հրամայեց տափարակի վրա կառուցել սպիտակ քարե զորանոցը, Հյումբաթի ձորի աստղը թեքվեց։

Գետի կամրջով գյուղից հեռացավ նա, ով ոսկի ուներ, և, երբ բարձրացան մելիքների ջրաղացի գլուխը, մի անգամ էլ նայեցին հսկումի կանգնած ժայռերին, քոչը վայր դրին սպիտակ զորանոցի մոտ և տափարակի վրա փորեցին նոր տների հիմքը։

Այսպես առաջացան քաղաքի տները։ Եվ ուղտերը, որոնք Քիրմանի շալ բարձած, ծանր հակերի տակ տնքալով չոքում էին Հյումբաթի ձորի հրապարակում՝ փոքրիկ կրպակների առաջ, իրենց գլուխները սպիտակ զորանոցի կողմը դարձրին և շամբուտները կոխելով մտան քաղաքի առաջին փողոցը։

Այդ օրից սկսվեց և Հյումբաթի ձորի արնաքամ լինելը, որովհետև քաղաքը նստում էր կոկորդին, տները փռվում էին ամենալավ հողերի վրա, աղբյուրի ակունքից ամենից առաջ ջուր էր խմում քաղաքը։

Հյումբաթի ձորի հին կրպակները հիմա էլ մնում են, կիսով չափ խանգարված, պատերը խարխուլ, կտուրների վրա կանեփի փարթամ թփեր։ Նեղլիկ փողոցներում, ուր աջ ու ձախ հին խանութների հետքերն են, մելիքների շուկան, հիմա անցուղարձը քիչ է։ Լծից բեզարած մի եզ գործից դառնալիս գուցե վիզը քսի կրպակի սուր անկյունաքարին, վիզը քորի այնտեղ, ուր գունավոր շալի հոտը բուրում էր, որպես Իրանի սաբզա։

Սպիտակ զորանոցն այն ապահով վայրն էր, դեպի ուր մելիքների ջրաղացի ճամփով գնում էին կրպակների տերերը, քաղաքում մեծ խանութներ բացում, խանութների փեղկերը ներկում, ոսկետառ ցուցանակներ կախում և ոսկիները հողե կճուճների մեջ դարսելու փոխարեն պահ տալիս բանկին։

Վաղուց արդեն համարձակ մի սովդաքյար բացել էր մեծ քաղաքները տանող ճանապարհը և առաջին ապրանքի հետ ուրախ լուր էր բերել Մորոզովից ու Ցինդելից։ Վերջին մելիքները հագան Մոսկվայից բերած գուլպաներ, և նրանց ջրակալած աչքերը տեսան, թե ինչպես կամարակապ ախոռում ձմռան գիշերին վրնջում է ձին, գարու մեջ փնտրում Մելիք-Բախտամի քիշմիշը։

Բերդի քարերը մեկ-մեկ ընկան, երբ տափարակի վրա բարձրացան սպիտակ զորանոցի պատերը։ Մելիքների բանտում սարդը ոստայն հյուսեց, ժանգը դեղին սերմեր մաղեց բանտի երկաթ բանալիների վրա։ Մելիք-Բախտամի վերջին ժառանգը մեռավ հեռու մի քաղաքում, որպես ռուսական գնդի հրամանատար։

Հյումբաթի ձորի ժայռերը տեսան, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից, շալակով տարան և փոխարենը քաղաքից ստացան նավթ, շաքար։ Գորգերն ուրիշ քաղաքներ ուղարկեցին։ Ոչխարները քչացան, ձորում ապրողներին մնաց քաղաքում ձեռք բերել բո՛ւրդն էլ, նե՛րկն էլ և գարնանը պատրաստ գորգեր տալ բրդի տերերին։

*Թվաց, թե այդ օրից տորքի երկաթներն այլ կերպ վնգացին, և երբ ձմռան գիշերով սպիտակահեր մի կին ձորի աղջիկներին հին նախշերն էր սովորեցնում,— ձմռան գիշերին ճրագի պատրույգի հետ մխում էր պառավի սիրտը, երբ հիշում էր չքնաղ գորգերը, որ տարան։*

*Քաղաքը մեծացավ։ Հյումբաթի ձորում, Միջին մահլայում և Գյունեյ թաղում մնացին հացթուխներ, գզրար կանայք, լվացարարներ, գորգագործ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրա-նրա դռանը օրահացի աշխատող աղջիկներ և մանուկներ, որոնց ամենամեծ հրճվանքը քաղաքում օրնիբուն լվացք անող մոր վերադարձն էր, գոգնոցի ծալքում պահած համեղ պատառը։*

*Այսպես հալվեց ձորի գյուղի աստղը։*

* * *

*Մելիքների ջաղացի գլխից մեկ մեկ կարելի է համրել երեք թաղի տները, ավերակները, տեսնել, թե ինչպես դանդաղ քայլերով մի էշ բարձրանում է կածանով, հետևից տերը բզում է, կանչում և կածանի դժվար տեղը հրում էշին, օգնում բարձրանալու։*

*Գետի ափին կանայք ցորեն էին լվանում աշնան արևոտ մի օր, երբ երեք թաղն էլ քարափից դիտելուց հետո, իջանք ձորը։*

*Խաղաղություն կար ավերակներում, կրպակներում, ձիթհանքում, ջուրն իզուր ծլլացող աղբյուրում։ Ամեն տարի մի քար է ընկել պատից, մահը թեթև է թվացել, բողոք չի եղել, ոչ մի թաղ չի տեսել հրդեհ, գերանները փտել են առանց մխալու, քարերը չեն շիկնել կրակից, և նստել է մամուռը։ Մի կրպակի դուռ գոց էր այնպես, ասես սովդաքյար տերը ճաշի էր գնացել կամ գերեզմանօրհնեքի։*

*Ման եկանք գյուղում, տեսանք շեն տները՝ հատ ու*

կենտ, պառավ լնդերի դեղնած ատամների պես։ Հարևանի ավերակ տունը դարձրել են գոմ ու մարագ։ Այնքան շատ են պարապ, կիսախարխուլ տները, դարպասը գոց, ծանր կողպեքները վրան։ Թվում է, թե հանդ են գնացել, ներսից ձայն չի լսվում, տան առաջ, դարպասի քարերի ճեղքում բուսել է խոտը։

Մի քանի կտուրների վրա դրում կար շարած, տեղ-տեղ արևի տակ փռել էին գունավոր լաթեր։ Մի հին ու մեծ տան միակ պատուհանի քարին, արևի տակ, պամիդոր էին շարել։ Եվ միակ ապացույցը, որ կարող էր համոզել, թե այդ տանն ապրողներ կան, պատուհանի կիսակարմիր պամիդորն էր։

Թեև քաղաքը հեռու չէր, եկած ճանապարհը մեզ ծանոթ, բայց և այնպես ուրիշ աշխարհ թվաց Հյումբաթի ձորի այդ անկյունը, որի բնիկները կարծես ուրիշ ցեղի մարդիկ էին։ Եվ միակ հարցը, որ դառնում էր մեր գլխի մեջ, մի «ինչու» է այն մասին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ, ինչո՞ւ չեն հեռացել մի ուրիշ, հարմար տեղ։ Հանկարծ եթե ժայռերից մեկն ընկնի կամ մի քար գլորվի վերևից։

Բակում խաղացող երեխաները մեզ տեսան, զարմացած խաղը թողին։ Երբ մեզնից մեկը ջուր ուզեց, ջուր բերող երեխայի անունը հարցրեց, թվաց, թե նա ջուր չէր ուզում, այլ ստուգում էր, թե արդյոք այդ երեխան մեզ նմա՞ն է խոսում։

— Որ տան կտուրին դրում եք տեսնում, ուրեմն էնտեղ ապրում են,— ասաց բնիկներից մեկը, որ կամրջի գլխին միացել էր մեզ։— Երեկոյան էլ կրակներով կիմանաք։ Քանի ճրագ են վառում, էնքան էլ տուն կա։ Մնացածը արջաբներ են։

Երեկոն հաստատեց այդ։ Մութի հետ հատ ու կենտ ճրագներ վառվեցին։ Մութը չասեց մեզ արջաբներում կենողների մասին, բայց մանրիկ լույսերի թարթոցը կամացուկ պատմում էր, որ Հյումբաթի ձորում քսան ճրագ

կա, Միջին մահլայի գետափի մասն է ողջ, Գյումեյ թաղի ծայրը։ Մնացածն ավերակ տներ են ու մութի մեջ խառնվում են ժայռերին, և չի լինում որոշել՝ ո՞րն է ժայռ և որը երբեմնի բնակավայր։

---

Մեկ մեկ հավաքվում էին հեռու թաղերից, ներս մըտնում ընդարձակ սրահը, տեղ բռնում փայտե նստարանների վրա։ Երբ գզիրը մի անգամ էլ պտույտ արեց փողոցներում բարձր կանչով, շներն այս ու այն կողմից ձայն տվին ու հանդարտեցին. գզիրի հետ մի քանի հոգի եկան հեռու քարանձավներից։ Սրահի կիսամութում փափախները մակաղած ոչխարի պես էին, չիբուխների կրակները՝ խոտերի մեջ լույս տվող բզեզներ։

Խոսքը հողի մասին էր, հարմար մի տեղ նոր գյուղ հիմնելու մասին։ Երևի շատ հնում, երբ վաչկատուն ցեղերը երկրե-երկիր էին գաղթում, նոր աշխարհներ գրավում, այդ աշխարհի մասին հազար առասպել բերնեբերան էր անցնում և ոգևորում անցնելու դժվար կիրճեր, սար ու ձոր, անջուր ավազուտներ։

Նոր գյուղի խնդիրը Հյումբաթի ձորի համար երջանիկ աշխարհի առասպելի պես էր, նրանք իրենց հանդերի անուններն էին տալիս, մեկի ջուրը գովում, մյուսի խոտը։

— Մենակ էս ձորից դուրս գանք...

Փափախների տակ պսպղում էին աչքերը, որպես չիբուխի կրակներ, երբ մեկը ծանոթ բանտի նկարագիրն էր անում և ուրվագծում վաղվա գյուղը, լայն ճանապարհը և ճանապարհի նման ազատ կյանքը։

Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախագահը քվեարկության դրեց նոր գյուղատեղը փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի ետև մի պահ չերևացին փափախները, թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած օճորքը։

Ծրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս։ Ծրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում։ Եվ ուրախ աղմուկով դուրս եկան։ Այսպես էր սկսում իր չուն վաչկատուն ցեղը անցած դարերում։

Սանդուղքի գլխին Գյունեյ թաղից մի ալևոր մոտեցավ մեզ։

— Մի ուտս գերեզմանումն է. ես կարող է չտեսնեմ էն նոր տեղը, բայց տարեք... Գնացե՛ք Հյումբաթի ձորի դժոխքից։

Սանդուղքի գլխից մի պահ նայեցի, թե ինչպես մահակով քարերը շոշափելով ծերունին կորավ մութի մեջ։ Լսելի էր, թե ինչպես նա մահակի ծայրով զարկում էր քարերին, ճանապարհը փնտրում։

Կրակները չէին երևում։ Մութի մեջ հազիվ էին նշմարվում գյուղի գլխի ժայռերը, մելիքների ամարաթի պատերը։ Ժայռերը թանձր ստվեր էին կախել գյուղի վրա, ամարաթը թվում էր որպես կանգուն դղյակ, որի խավար խուցերում գուցե շրջում է Մելիք-Բախտամը, որպես ուրվական...

# ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

*Տնտեսությունը պլանով վարելու համար ձմռան մի գիշեր Վասիլը մտքում դրեց օրագրի պես մի բան պահել, նշանակել եզան վարն ու կերը, ինչքա՞ն հաց են ուտում ամեն ամիս, քանի՞ խուրձ խոտ է հարկավոր իր երկու կովին, ե՞րբ է ծնելու կովը, քանի՞ ձու է քաղաք տանում ծախելու և այլն։*

*Ապագա հեռանկարների մասին մի քիչ մտածելուց հետո Վասիլը շուռ եկավ կողքին և, գլուխը բարձի վրա հարմար տեղավորելով, քնեց այն խոր ու հանգիստ քնով, որպիսին երևի ունենում է նավի կապիտանը, փոթորկից հետո նավի սարք ու կարգը դիտելով, մինչև խաղաղ նավահանգիստը։*

*Վասիլի տնտեսության միակ ճեղքը հարևանի պարտքն էր, և այդ ճեղքից հազար ու մի անախորժություն էր ներս մտնում, վրդովում նավի կանոնավոր ընթացքը, ճոճում, ուղղությունը կորցնում, ահ ու սարսափ տարածում նավաստիների՝ մոր, կնոջ, քրոջ ու երեխաների մեջ։*

*Այդ գիշեր, երբ ձմռան քամին ոռնում էր այնպես, ինչպես հազար պարտատեր միաբերան կոռնային, Վասիլի գլխում ծագած միտքը՝ օրագիր և հաշիվ պահելու մասին, անշուշտ ներքին և անքակտելի կապ ուներ*

պարտքի անխուսափելի հատուցման հետ։ Ամենայն հավանականությամբ բարձի վրա գլուխը հարմար տեղավորելուց առաջ, նրա գլխում ծագել է և երկրորդ միտքը՝ նավի ճեղքը Տիգրանուհով ծածկելու մասին։

Նրա օրագիրը հին, թերթերի ծայրերը մաշած երազահանի լուսանցքների վրա է գրած և կազմի կողին։ Վասիլն ամեն օր չի գրել։ Երևում է, որ գարնան սկզբին, երբ առավոտից մինչև իրիկուն քրտնել են ինքը, գոմեշը և տան անդամները, ժամանակ չի եղել ամեն օր գրելու։ Մատենագիրը բավականացել է միայն շաբաթվա կարևոր դեպքերն արձանագրելով լուսանցքի վրա, մինչև քունը հաղթեր։ Իսկ գարնան սկզբին միշտ էլ քունն է հաղթել, և երկու-երեք բառ գրելուց հետո գրիչն ընկել է ձեռքից, նույնիսկ միտքը կիսատ թողնելով։

Վասիլի օրագիրը սկսվում է տան անդամների ցուցակով, որ, ըստ երևույթին, կազմված է հաջորդ առավոտյան ուտելուց հետո, քանի որ թերթի անկյունում Վասիլի բութ մատի հետքը կա, թաթախված ինչ-որ պղտոր և մի քիչ էլ յուղոտ հեղուկի մեջ։

Ըստ այդ ցուցակի նավի վրա ութ մարդ էր՝ ինքը, մայրը, կինը, չորս երեխան և Տիգրանուհին։ Անունների դիմաց տան անդամների տարիքն է և այն կապը, որ ունի տան անդամը Վասիլի հետ։ Այսպես՝ «Տիգրանուհի, քույր, 16 տարեկան»։ Վասիլի կենդանի ինվենտարը երկու կով է, մի գոմեշ, ութ հավ։ Կովերն ու գոմեշը անուններով են, առանց տարիքի և տան անդամների ցուցակին անմիջապես կցած։ «Տիգրանուհի, քույր, 16 տարեկան» և հետո «Ծաղիկ կով»։

Որովհետև Վասիլը գեղագիտական նպատակի հետամուտ չի եղել, օրագրից չի կարելի որոշել, թե ինչպես էին Տիգրանուհու մազերը՝ սև, թե շեկ, աչքերը կապույտ էին, թե թուխ։ Միակ հիշողությունը նրա արտաքինի մասին գրված է մայիսի 6-ին. «Տիգրանուհու համար առա

դեյրա»։ Դիմացը նշանակված է գինը, որից երևում է, որ կտորը հասարակ չիթ է եղել։

Կա մի ուրիշ հիշատակություն, առանց ամսաթվի. «Տիգրանուհու համար չուստը չառա»։ Երազահանի այդ երեսին տպված է հետևյալը. «կոշիկ կամ տրեխ տեսանելն մեծ կորուստ է, երազն յոթն օրն կատարի»։ Կարելի է ենթադրել Տիգրանուհու տխրությունը չուստեր չունենալու համար, և թե ինչպիսի երազ է թվացել մի զույգ չուստը։ Ստույգ է, որ Տիգրանուհին բոբիկ ոտքերով է գնացել քաղհանի, ինչպես նշանակել է Վասիլը մի քանի օր հետո։

Վասիլը շատ օրեր մանրամասն է գրել։ Օրինակ, հունիս 11-ին նշանակել է. «մայրս գնացել էր իր եղբոր որդու տունը ղոնաղ 4 օրով։ Վարսենիկը (կինս) զբաղված էր տանը մանր գործերով։ Կովը տվավ 12 գրվանքա կաթ, Ծաղիկը՝ ոչ։ Տիգրանուհին գնացել էր ջաղաց ալյուր աղալու, բայց նոբաթ չլինելու պատճառով եկավ տուն։ Չէր աշխատում գոմեշը, հանգստանալու համար գնացել էր դաշտն արածելու։ Եկավ անձրև։ Բաղալի տղան տվեց իր պարտքը—կես կոտ ցորեն։ Առա մի բահի կոթ։ Եվս մի շաբաթում հավերը 12 ձու ածեցին, որից 5-ը ծախեցինք, ընդամենը 10 կոպեկ»։

Ամբողջ օրագրի մեջ հունիս 11-ը նշանավոր է երկարապատում և մանրամասն լինելով։ Խոսելով ապահովագրման թերթիկի մասին, որ երևի նույն օրն է ստացել, Վասիլն ավելորդ չի համարել հետևյալ խորհրդածությունն անել. «կառավարության կողմից եկավ շրջիկ և խոսեց ապահովագրման մասին նաև բուրժուական կողմանից։ Ժողովուրդը բոլորը հասկացան միաբերան, կեցցեք դուք միություն»։

Անցյալ տարվա օրացույցով հունիսի 11-ին կիրակի էր։ Ըստ երևույթին այդ կիրակին Վասիլն անմահացրել է գինով և երեկոյան դեմ փիլիսոփայել «միության» և «բուրժուական կողմանից»։ Մի քանի օր հետո, հունի-

սի 16-ին Վասիլը գրել է. «Տիգրանուհին անորոշ աշխատանք էր անում։ Գաղթականը տարավ կես կոտ ցորեն գինու դիմաց»։

Այդ ամսին Վասիլն առաջին անգամ հիշատակում է պարտքը։ Գրելով, որ թրթուրն ուտում է կաղամբի տերևները, Վասիլն ավելացնում է. «պարտքից դուրս եկանք տասը մանեթ Տիգրանուհու աշխատանքի դիմաց, և տվի 12 մանեթ փողով»։

Տիգրանուհու մասին տեղեկությունները հուլիսին կցկտուր են։ Երևում է, որ ամբողջ ամսվա ընթացքում աղջիկն աշխատել է եղբոր պարտքի դիմաց։ «Տիգրանուհին քաղհան էր անում հարևանի բոստանը պարտքի դիմաց»։ «Առա եղան մի հատ։ Տիգրանուհին լոբի էր քաղում պարտքի կողմից։ Առա ծամոն վերքի համար։ Փոր եմ արել, հետո գնացի ցախ բերելու։ Ծաղիկը ցամաքեց անհայտ պատճառից»։

Հուլիսի վերջին նա գրել է. «Տիգրանուհին գնաց վերին արտը խուրձի, պարտքի դիմաց։ Եվս տվի ձեռաց 3 մանեթ»։ Թե ի՞նչ խուրձ է վերին արտում և ի՞նչ աշխատանք է արել Տիգրանուհին այդ արտում,— պարզ չի երևում։ Նույն օրը Վասիլը գրել է. «Վարսենիկը հիվանդ է. Տիգրանուհին եկավ ոտքին վերք։ Առա ծամոն վերքի համար»։

Վարսենիկի հիվանդությունը վերջացել է հաջորդ օրվա լուսաբացին։ Վասիլը գրել է. «ծնվեց ինձ ևս մի աղջիկ»։ Եվ ուրիշ ոչինչ։ Այդ ամբողջ շաբաթը նա մի նախադասություն է նշանակել. «պարտքից մնաց քառասուն»։

Աղջիկն ըստ երևույթին մի շաբաթից ավել չի ապրել։ «Գիշերս մահացավ նորածինն առանցի անունը դնելու»,— գրել է Վասիլը։ Հին երազահանը նույն երեսի վրա, Վասիլի գրածից մի քիչ ներքև ասում է. «երազն բարի է և կատարվի ավուրն», իսկ Վասիլը դիմացը նշանակել է. «առա կաղին երեխաների համար 16 կոպեկ, ևս

նավթ, գրվանքում մի կոպեկ պակաս, գումարով 30 կոպեկ»։

Տիգրանուհու մասին հետագայում եղած հիշումները միշտ էլ «պարտքի դիմաց» են կամ «պարտքի կողմանից»։ Նա բուրդ է լվանում, կալ է կալսում, լոբի է քաղում բոստանում։ Ինչ-ինչ նկատառումով Վասիլը կարեվոր է համարել օգոստոս 21-ին նշանակել, որ այդ օրը Տիգրանուհին չի աշխատել, «ոտքը մտել է փուշ»։

Օգոստոսը Վասիլի տարեգրության մեջ նշանավոր է դրամական հաշիվներով։ Համարյա ամեն երեկո գրել է փոքրիկ հաշիվներ՝ օրվա ծախսը. «Հնձվորին մի օր ներքի արտում մի մանեթ 60 կոպեկ», «Մանուշարից առա գերանդի, պարտք մնացի 60 կոպեկ», «չրվորներին մի փութ ցորեն»։

Վասիլի մատյանում Տիգրանուհու չուստերի մասին մի անգամ էլ հիշատակված է օգոստոսի վերջին։ Թեև Վասիլը օրագիրը շարունակել է մինչև տարվա վերջը, սակայն շատ քիչ են հիշատակումներ Տիգրանուհու և նրա չուստերի մասին։

Վերջապես Վասիլը գնում է մի զույգ չուստ, սակայն Տիգրանուհու անունով գնած չուստերը դառնում են Վարսենիկի սեփականություն, իբրև թե նրա ոտքին մեծ լինելու պատճառով։ Այդ առթիվ շատ մակերեսային դատողություն է արել Վասիլը, մոտավորապես այն ձևով, թե աշխարհը փուշ է, լավությունն էլ է կորչում, վատությունն էլ։

Չենթադրե՞լ արդյոք, որ ընդհարում է եղել Վարսենիկի և Տիգրանուհու միջև չուստերի համար, մեկը լաց է եղել, նորից բոբիկ ոտքերով («առի ծամոն վերքի համար») արտը գնացել «պարտքի դիմաց», մյուսը չուստերը պահել է հայրական տնից բերած սնդուկի մեջ։ Ինչպե՞ս հասկանալ Վասիլի գրածն այն մասին, թե «Տիգրանուհին խռովեց, զոռով բերեցինք կալատեղից»։

Սեպտեմբերին ծնում է Վասիլի երկրորդ կովը։

Այդ օրը նա ուրիշ բան չի արձանագրել։ Սեպտեմբեր ամսվա նշանավոր դեպքերից է և խոտի հաշիվը։ Անցյալ տարի ցանած առվույտը երկու անգամ հարելուց հետո Վասիլը շատ մանրամասն ելք ու մուտքի հաշիվ է կազմել։ Եվ մուտքը գերազանցել է («մաքուր եկամուտ խոտի կողմանից»)։

Մի շաբաթ հետո ստացած գարու մասին գրելիս, հանկարծ մի՞տն է ընկել Տիգրանուհին, թե գարու հաշիվն անելիս տանը վայնասուն է ընկել, ձեռքը դողացել է, ծածկել է երազահանը, վեր կացել։ Ինչպե՞ս է եղել, այդ ամենևին հայտնի չէ։ Գրված է միայն հետևյալը.

«Տիգրանուհին մահացավ առանցի կարծիքի, տեղոց տեղ, լավ թաղեցինք. եղավ ծախս ութը մանեթ փողով, և մի փութ գարի տերտերին, գումարով 9 մանեթ 70 կոպեկ։ Նաև առի երկու մոմ»։

Տիգրանուհու մասին էլ ուրիշ ոչինչ։ Տասնվեց տարի ապրեց, աշխատեց, մահացավ նույնպես հանկարծ, ինչպես այն նորածինը, որի մասին հուլիսի վերջերին հայրը գրել է՝ «Գիշերս մահացավ նորածինն առանցի անունը դնելու»։

Օրագրում Տիգրանուհու մահվան առթիվ ուրիշ մանրամասնություն չկա։ Վասիլը երազահանի այդ էրեսն էլ շրջել է նույն բութ մատով, որի կնիքը կա երազահանի շատ երեսների վրա։

Հաջորդ երեսը, որ գրվել է երկու օր հետո, սկսվում է այսպես.

— Պարտքից մնաց տասնչորս...

# ԵՎ ԲԱՏՐԱԿԸ ԹՌԻՑԼ ՏՎԱՎ ԻՐԵՆ...

*Սրապը տավարը տեղավորեց, դավթարը կռնատակն առավ և գնաց կանցելար։*

*— Սրա՛պ, ճրագը վա՞ռ թողնեմ,—հարցրեց մայրը, ասեղի ծայրով պատրույգը վեր հանելով։*

*— Կարող ա ետանամ, գործս շատ ա էս գիշեր։*

*Մի քիչ հետո մայրը ճրագը հանգցրեց, մտավ վերմակի տակ, կամաց կսկծալով, որ Սրապի գործը շատ է, աչքերը գիրը կտանի։*

*Կանցելարում Սրապը ճրագը վառեց և կռնատակի դավթարը բաց արեց։ Անգիր գիտեր Մրոցում ով ինչ ունի, քանի՞ մանեթ հարկ է ընկել, գյուղում ի՞նչ է պատահել հերու, մեկէլ տարին, հունիսին, հուլիսին։*

*Սրապը սպիտակ թղթի վրա սկսեց շարել. «գյուղումս գոյություն ունի փոկ և խորհրդի պատոսհանները ջցված են. կա և սանիտարական սեկցի 6 անդամով, որից մարդ հինգ հատ և մի կին»։*

*Մի քիչ էլ մտածեց, նայեց կանցելարի սևացած օճորքին, աչք ածեց չորս կողմ, ասես պատերի քարերի վրա փնտրում էր գրելիքը։ Ունքերը իրար հավաքեց և շարունակեց.*

*«Գյուղս ունի ելից և մտից մատյաններ և գրությունները մտնում են և դուրս են գալիս՝ ինչպես կարգն է»։*

Վերջակետից հետո մի երկու անգամ ծոծրակը քորեց, թաթախեց թանաքը, մի սատկած ճանճ ընկավ գրչի ծայրին, մատով ճանճը դեն գցեց և հերսոտած գրեց.

«Նաև գյուղումս հակախորհրդային հեղափոխականներ չկան»։

Էլ ուրիշ շատ բան գրեց Սրապը, գրեց, որ մի կրահոր են շինել, որ անասունների մեջ հիվանդություն չի եղել, քերծից երկու եզ է գլորվել, գողություն չի եղել, գրեց, որ «գյուղս աստիճանաբար լավանում է» ։

Կավե ճրագի պատրույգը վառվում էր, լույսը մերթ աղոտանում էր, մերթ զորանում, պատերի վրա ճրագից ստվերներ էին թրթռում։

Սրապը կանցելարի մտից մատյանի մեջ մտցրեց և «շրջաբերական միլպետից ամուսնացողների մասին կյանքի մեջ կիրառելու, նաև աղվեսի մորթին թանկ ծախելու մասին», հետո դուրս եկավ, նստեց կանցելարի դռանը։

Տներում ճրագ չկար, հոգնած մրափով քնել էր գյուղը։ Մրոցը՝ հեռու ձորում ընկած, կուչ էր եկել քերծերի տակ, տաք արել։ Գյուղի ներքի ծայրում մի շուն կաղկանձում էր։

Նայում էր Սրապը քնած Մրոցին, հովը ծեծում էր բաց կուրծքը, և Սրապը լիաթոք շնչում էր ամռան գիշերվա զովությունը։ Դուրս եկավ, որ ամբողջ գյուղում միայն ինքն է արթուն, գրում է գյուղի մասին, և ճրագը կանցելարի պատուհանից անթարթ աչքի պես նայում է գյուղին։

* * *

Սրապը ներս մտավ, գրածը կարդաց, հանգ արեց ճրագը հանգցնի, բայց միտն ընկավ Դավթի բարակը և օրվա զրույցները նրա մասին։

Գրե՞լ թե ոչ։ Կիմանան, Մրոցը մատի փաթաթան կշինեն, իսկ թե չգրի, վայ թե երեսովը տան, որ գյուղում եղածը ծածկել է և չի գրել։

Դավթի բատրակը՝ Տիկոն, բոյը կարճ, բրդոտ, ոնց որ սարի արջ։ Խոսելիս գլուխը կախում էր, աչքերը գետին գցում, խոսքի կեսը կուլ տալիս։ Տիկոն փոքրուց չոբան էր։ Գյուղում նրան տեսնելիս տնազ էին անում։

— Տիկոն ուլի հետ ա ծիծ կերել,— ասում էին, ծիծաղում։ Տիկոն էլ էր ծիծաղում։ Իբրև թե Տիկոյին մայրը չի ծիծ տվել, այլ մի պառավ այծ։

Թուցե Տիկոյի մասին գյուղում ուրիշ խոսք ու զրույց չլիներ, բացի այդ հանաքից, որ հազար անգամ էին ասել, եթե Տիկոն չաներ այն, ինչի մասին գյուղում խոսում էին։

— Տեսա՞ր ինչ արեց Տիկոն...

— էն բրդոտ քոթոթը...

— Տիկոն էլ գյուղում չի երևա՞,— ասում էին ընկերները։

Երկու օր առաջ Տիկոն թողել էր տիրոջ տունը, ոչխարը՝ փարախում, մահակն առել ու լուսաբացին դուրս էր եկել գյուղից։

Երեկոյան Սրապին իմաց էին տվել, որ Տիկոն չկա, և Դավթի ոչխարը ուրիշն է տարել։ Սրապը մարդ էր ուղարկել Տիկոյին փնտրելու, մարդը վերադարձել էր առանց հետքը գտնելու։

— Տեսնես սարն անցավ ո՞ւր գնաց...

Սրապը մթնով գնացել էր Դավթի տունը, հարցնելու, թե ի՞նչ է եղել։

— Մանո՛ւշ, պետք ա բոլորն ասես, թե չէ վրադ պրատակոլ կկազմեմ, վերջը դու գիտես,— սպառնացել էր Սրապը, բայց սպառնալիքը չէր օգնել։

Մանուշը մի գլուխ լաց էր եղել, երդվել, որ սուտ լուր է, թշնամու սարքած, որ Տիկոն այդ գիշեր գոմումն էլ չի քնել, ոչխարի փարախումն է եղել։

Սրապը տեսել էր, որ հնար չկա, չի ասում։

— Դու գիտես, Մանուշ, Դավիթի պատասխանը կտաս։ Ես իմ քննությունը վերջացրի։

Ասել և տնից դուրս էր եկել։

Բայց գյուղում ուրիշ բան էին պատմում։ Չարևան կանայք փսփսում էին, պառավները շանչ էին անում դեպի Մանուշը։

— Ցեղդ լիրբ ա, Մանուշ,— ասում էին նրանք շանչ անելիս։

Ո՞վ էր իմացել, ո՞վ էր տեսել այդ բոլորը,— Սրապը այնպես էլ չիմացավ։ Երբ նրան հայտնեցին, թե գյուղում այդպիսի բան է պատահել, Սրապը նախ չհավատաց։

—Տիկոն չի անի, նամուսով տղա է,— ասաց։ Բայց լուրն ավելի էր տարածվում։ Առավոտ կանուխ ջրի գնացած կանայք վկայում էին, որ տեսել են Տիկոյին Մանուշի տնից դուրս գալիս, չոբաններն ուրիշ բան էին ասում, թե Մանուշը Տիկոյի պաշարում միշտ յուղ ու պանիր էր դնում, փուլպա է գործել նրա համար, թե Տիկոն սարում ասել է.

— Այ մի Դավիթը գնար քաղաք, ես էլ փարախում չէի քնի։

Փողոցում մի քանի ալևոր մարդիկ Սրապին հանդիմանել էին, թե Մրոցն իր օրում այդպիսի բան չի տեսել։

— Մեր գյուղի իշխանն էլ դու ես,— ասացին,— կտրի՛։ Միանգամից կտրի արմատը, որ էլ չժառանգի, գյուղս չվարակի...

— Կանեմ, ապեր, կանեմ, քանի ես կամ, գյուղումս պետք է լրբությունը ջնջվի,— հայտարարեց Սրապն ալևորներին և մտքում որոշեց անելիքը։

Հենց այդ երեկոյան էր, որ նա գնաց Մանուշի մոտ՝ քննության։ Երբ սպառնաց և տեսավ, որ սպառնալիքն էլ չի օգնում, դուրս եկավ։

Ճանապարհին Սրապը հիշեց, թե ինչքան գեղեցիկ է Մանուշը և մի պահ զարմացավ, կարծես նրան առաջին անգամն էր տեսնում։

— Անիրավիդ աղջիկը քաշած պատկեր ա, էլի՛,— մտածեց Սրապը և քայլերն ավելի արագացրեց.

— Հապա թե Դավիթն իմանա...

* * *

Սրապը երբ մտավ կանցելար, ուզեց ճրագը հանգցընի, միտն ընկավ Տիկոն, Մանուշը, գյուղի զրույցը։

Պե՞տք է հայտնել, թե ոչ։

Մեկ էլ մտածեց Սրապը, մոտեցավ գրածին, գրիչը թաթախեց և սկսեց գրել շրջմիլպետին.

«Սույնը տարվա հունձին գյուղիցս բացակայում է Դավիթ Խաչիկյանցը, որն որ գնում է և գյուղումս մնում է Դավիթի կնիկ Մանուշը, նաև նրանց բատրակը»։

Մինչ այստեղ Սրապը գրեց առանց դադար առնելու։ Գրչի ծայրով վեր հանեց ճրագի պատրույգը, քունքը քորեց և շարունակեց գրել.

«Եվ Մանուշն ուրբաթ գիշերը մնում է մենակ, որն որ քնում է իր սենյակում։ Եվ Մանուշը գոմից կանչում է բատրակ Տիկոյին և ասում, որ ինքը վախենում է մենակ քնելու, և քնում են միասին»։

Սրապն ուզեց հերիք համարի գրածը, բայց նորից կարդաց և ավելացրեց.

«Եվ բատրակը թույլ տվավ իրեն մինչև այն աստիճան...»։

* * *

Երբ դավթարը կռան տակ Սրապը քնած Մրոցի փողոցներով գնում էր դեպի տուն, ճամփին միտք անելով,— նրան այնպես էր թվում, թե մի ծանր քար գլորվել է իր խղճից։ Զեկուցման մեջ ասված է այն ամենը, ինչ որ պատահել է գյուղում։

Սենյակի մթնում տրեխները հանելիս մի անգամ էլ Սրապի միտն ընկավ Մանուշը, և ինքն իրեն ասաց.

— Անիրավիդ աղջիկը քաշած պատկեր ա, էլի՜...

26

## ՄՈՒՐՈՑԻ «ՁՐՈՒՑ»-Ը

*Երկրորդ օրն էր՝ Մաղդաչում էինք։ Ալագյազի լանջի ամենաբարձր գյուղերից մեկում, որտեղից բացվում է հիանալի տեսարան դեպի դաշտը։ Ներքև փռված էր Արագդայանի տափարակից մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափարակը, գյուղերն ու քաղաքները, որ ցամաք դաշտում կանաչ պարտեզների էին նման, երկաթուղու սպիտակ կայարանները, անբաժան ակացիաներով ու բարդիներով։*

*Ես և ընկերս նստել էինք քարին, հիացմունքով դաշտին էինք նայում և փորձում գտնել ծանոթ գյուղերը։ Արևը կախ էր ընկել մայրամուտի կողմը։ Սարից զով քամի էր փչում, ողջ դաշտը ողողված էր արևի լույսով, և արծաթի հայլուցքի նման պսպղում էր ոչ միայն Արաքսի օձանման հոսանքը, այլև մի քանի փոքրիկ լճակներ ու գյուղական առուներ։*

*Մեր եռևը Մաղդան էր՝ տափարակ կտուրներով նոր տներ կանաչների մեջ։ Երկու կին կտուրի վրա ցորեն էին քամում։ Օդը չինչ էր և թափանցիկ. արևի տակ փայլփլում էին ցորենի քիստերն ու թեփը, երբ ոսկեգույն փոշու հետ խառնված ցորենը կանայք մաղում էին և օրորվում։*

*Մեզնից մի քիչ հեռու արտերն էին։ Ոտքերը վեր քըշ-*

*տած մի մարդ ջուր էր անում։ Լսում էինք, թե ինչպես էր բահը զրնգում, երբ խրվում էր ավազոտ հողում։ Ջրաակից երգի ձայն էր լսվում.*

*Կռունկն իջել է գյուղին...*
*Յարս ման կգա չոլին...*

*Երգը մերթ ընդհատվում էր, մերթ շարունակվում։ Ընկերոջս հետաքրքրությունը շարժեց այդ։*

*— Ի՞նչ անելիս կլինի էն երգողը,— հարցրեց նա։ Ես փորձեցի երգի ընդմիջումներից որոշել, բայց չկարողացա։ Ընկերս չհամբերեց, մի քայլ արեց ու նայեց ձորակի կողմը։*

*— Հնձվոր է,— կանչեց նա։— Հենց որ կռանում է, լռում է...*

*Մեր գլխավերևը՝ բլրակի ետևից, լսվեց մի ձայն՝ «հոլե՜, հոլե՜...»։ Մեկը սուլեց։ Ետ նայեցինք։ Ոչխարի հոտը բլուրից իջնում էր։ Մի այծ բարձրացել էր քարի գլուխն ու ամբոմբացնում էր միրուքը։ Բլրակի գլխին կանգնել էր հովիվը՝ մահակին կռթնած։ Կանգնել էր արձանի նման ու նայում էր մեզ։ Երևում էր, որ նա վաղուց է տեսել մեզ։ Ապա սկսեց իջնել։ Հեռվից արդեն նկատելի էր, որ նա կաղում է։*

*— Ես կաղ չոբան կյանքումս չեմ տեսել,— ծիծաղեց ընկերս։*

*Հովվի հագին տեղական, թևերը կտրած «փոթ» էր, մորթը դեպի դուրս։ Պայուսակը ցնցվում էր, երբ նա քարից քար էր թռնում։*

*— Տեսնես էս սարի գլխին նա մեր օրերից ի՞նչ գիտե,— ասաց ընկերս ու ափսոսանքով ավելացրեց.— շվին չեմ տեսնում, թե ունեցել էր՝ փչել կտայինք...*

*Հովիվը մոտեցավ։*

*— Բարի տեսանք,— ասաց և գամփռին սաստեց։ Շունը նստեց։*

*—Անունդ ի՞նչ է,— հարցրեց ընկերս։*

*— Մուրո՛։*

— Մուրո, բա շվի չունե՞ս։

— Փո՞ղ։— Եվ ծպացրեց։

Նրա մի ոտը կարճ էր։ Կանգնելուց մատերի ծայրը հազիվ էր գետնին դիպչում։ Դեմքը ծաղկատար էր, ձախ աչքի տակը՝ ճոթռած։ Նրա զգեստը, գդակը, դեմքը, ձեռքերը համարյա հողագույն էին, արևից խանձված, քամուց ծեծված։ Սակայն մի քաղցրություն կար նրա միամիտ, մի քիչ կոշտ դեմքին։

Մուրոն նստեց։

— Մուրո, կարդալ գիտե՞ս։— Նա ծիծաղեց։

— Ուստի՞ց։

Ընկերս սկսեց հարցուփորձը։ Մուրոն գյուղի հովիվն էր։ Գյուղում մի «քոլիկ» ունի, որի դուռը դեռ չի կախել։ Քնում է ոչխարատիրոջ տանը՝ հերթով։ Ոչ ոք չունի։ Սասունում էլ որբ է եղել։

Հանկարծ ընկերս հարցրեց նրան.

— Մուրո, դու Լենինի անունը լսած կա՞ս...

— Հբա ի՞մալ,— մի քիչ սրտնեղեց նա։—Ես Լենինի զրուց լե գիտեմ...

— Ի՞նչ զրուց, մի ասա լսենք,— խնդրեց ընկերս։ Մուրոն ամաչելով մեզանից «ծգարա» խնդրեց ու սկսեց.

— Լենին ուռուս էր։ Յուր հեր լե չքավոր էր, պապ լե. գնաց կարդալու, էս յան, էն յան, մի հուսումարան ռաստ էկավ, ասավ՝ չքավոր եմ, ինձի կառնե՞ք, կուզեմ կարդացվոր էղնիմ։ Առան. մի քանի վախտ կարդաց, որ ուսում թամմեց, խելքի էկավ։

«Որ խելքի էկավ, իմացավ, թե աշխարհքի վնաս ուստից կեղնի։ Մտածեց, մտածեց, տեսավ, որ վնաս ռուսի թագավորից կեղնի։ Թուփ արեց իրենց հուսումարանի տղոց, թե՝ ընկերներ, էնքան որ կարդացվոր եք, իմա՞լ կեղնի, որ չքավոր դառը դատի, հարուստն ուտի, ինք մնա շլուտ, սոված, ռութ, մի կարկատած լեֆ լե չունի, որ մեջ պառկի։

«Ընկերներ ասին. էղեր, չէղեր է, էդպես էղեր է,

էդպես էլ մացել է։ Լենին ասավ. աշխարհն էսպես չի մնա, էսօր ամպ է, էգուց պարզ արև։ Մինչի մենք ընկերություն չանենք զիրար, թագավոր էլ մզի կմորթե, հարուստ էլ մզի կճնշե, հող էլ մզի չօգնե։ Մկրատ իրեն է, կտոր էլ իրեն է․ Ջուդր ուղիղություն կասեմ, որ մինչի թուր հարուստի բերան չառնի, պարզ խոսք չի ասի։

«Ընկերներ համոզվեցին, արին կազմակերպություն սարքենք։ Սարքին. Լենին ասավ, ընկերներ, ուժով կացեք, որ պիտի կռիվ տանք։

«էդ վախտ թագավոր մի հավատարիմ մարդ կունենա։ Կկանչի էդոր, կասի, որ երթա պտուտ գա երկիր. կուզեր իմանա, թե՝ ժողովուրդն ի՞նչ կասի չի ասի թագավորից։ էդ մարդ յոթ տարի ման կգա, վերջը կգա թե՝ թագավոր, լավ խոսք քիչ իմացա։ Թագավոր թախտից կիջնի, թե ինչ տեսել ես, չես տեսել՝ զմմեն էլ պատմի։

«Կասի՝ թագավոր, իմացած եղիր, որ էսպես տավերկու տարեկան մի տղա, անուն Լենին, քեզ փորձանք կբերի։ Թագավոր վախուց հրաման էտուր, թե տավերկու տարեկան Լենին քշեք աքսորյան...»։

Արևը թեքվում էր կարմիր ամպի ետևը, իբրև հոգնած հնձվոր, որ վրան է առնում թաղիքը։ Ծկում էին ծտերը, քարից քար թռչում, կարծես չէին ուզում, որ երեկո լինի։

Մուրոն ծուխը խոր քաշելով, շարունակեց.

— Քշեցին աքսորյան, էլի չխրատվավ։ Լենինի ախպեր, որ իմացավ, թե պստի ախպեր աքսորյան է, ասավ. էլնիմ էրթամ ինչքան թագավոր կա մորթեմ։ էդ խաբար էլ շուտով հասցուցին թագավորին, թագավոր էս անգամ կատղավ, ոտք գետին զարկավ՝ թե բռնեք բերեք, իդա մանչ վի՞ր է։

«Բռնին բերին։ Թագավորը հարցուց՝ ո՞վ ես, ասավ՝ Լենինի ախպերն եմ. ասավ՝ անունդ ի՞նչ է, ասավ՝ Ալեքսան։ Աս խոսք ասել էր, չէր ասել, թագավոր թուր հանեց զարկեց, արյունք ծով արեց։ Լենինն իմացավ, ասավ. «Վա՜յ, իմ Ալեքսան...»։ Շատ արցունք թափեց

*ախպոր համար, բայց էլի ուժովցավ, ասավ՝ ընկերներ, եկեք գազեթ սարքենք։*

*«Ընկերներ համոզվան, գազեթ հանին, ասին՝ դու ամբողջի գլխավորն էղի։ Լենին ասավ՝ թե կռիվ պիտի տանք, ով զենք չունի, թող առնե, ուժով միանանք, թագավորի վրա քշենք։ Էս էլ որ իմացավ թագավոր, կատղեց, մարդ ձամփեց, որ աքսորյան Լենինին մորթեն։*

*«Էս անգամ չքավոր բանվորներ ասին, որ թագավոր մեր Լենին սպանե, հաբա մզի ուղիղություն ո՞վ ցույց կիտա։ Զընք թորգի, ասին, մենք լե կերթանք կռիվ կիտանք թագավորի վրա։ Լենին ժողովք արեց, նամակ գրեց զմմեն չքավոր բանվորներուն, թե պատրաստ կացեք, էս ֆլան ամիս կռիվ կէրթանք թագավորի վրա։*

*«Առավ իր ընկերներ, իր զենք կապեց, էդ ֆլան ամիս Լենին էկավ ուռուս թագավորի պալատ։ Կանչեց՝ ե՛լ, ես աքսորյան Լենինն եմ։ Ուժեղ կպան զիրար, շատ արյուն թափին։ Լենինի թուր ճեղքեց թագավորի գլուխ, երկու կես արավ, թագավորին տապալեց, էնոր տուն, քուլֆաթ զարկեց, ջարդեց, լավ հողեր, լավ դուքըններ, ինչ որ թագավորն ուներ, զմմեն ոսկի, հարըստություն բաժանեց չքավորներուն, ասավ՝ գնացեք ձեր քեֆին ապրեք... Չքավոր բանվորներ ուհաթցան։ Լենին հավաքեց իր ընկերներ, ժողովք նստան, որոշում գրին, որ էլ կռիվ չէղնի։ Ելավ մի բարձր քար, ասավ։*

*— Ժողովուրդ, խաղաղ ապրեք։ Էլ մզի կռիվ չկա...*

*«Եղավ խորհրդային իշխանություն...»։*

*Մուրոն լռեց ու, գլուխը ոչխարների կողմը դարձնելով, հոտի առաջնորդ այծի վրա կանչեց այնպես, որ հատուկ է ընտան հովիվներին և որի հնչյունը ոչ մի կերպ չի կարելի տառերով գրել։ Տեսնելով, որ կանչն անհետեվանք անցավ, Մուրոն նստած տեղից քար շպրտեց այծի կողմը։*

*Մարմնի մյուս պակասություններից բացի, Մուրոն նաև ձախլիկ էր։ Սակայն այդ նրան չխանգարեց քարը*

հասցնելու ճիշտ այն կետին, որ հարկավոր էր՝ այծը հետ տալու համար։ Եվ ոչխարներն էլ այծի հետևից գլուխները դարձրին դեպի արևմուտք։

— Մուրո, իսկ ի՞նչ պատահեց Լենինին հետո,— անհամբեր հարցրի ես։

— Զրուց չիլսավ դհա, կեցի...— Եվ շարունակեց.

«Թագավորին որ զարկեց, հարուստ չիլսավ։ Որ փախավ, որ լե ահուց մահացավ։ Մնաց մի հարուստ մարդ։ Զօր նստեց միտք արավ, գիշեր չուրի լուս միտք արավ, թե հնարքով Լենին չնջի հողի երեսից։ Վերջը հնարք գտավ։ Կանչեց մի աղջիկ, ասավ՝ աղջիկ, ոսկի կուզե՞ս. ասավ՝ կուզեմ։ Աղջիկ էլավ գնաց Լենինի դռան մոտ կեցավ։ Պահապաններ եկան հարցրին՝ աղջիկ, դու վի՞ր ես. ասավ՝ չլուսի աղջիկ եմ, Լենին իկա խնդիր ունեմ։ Լենին իլավ դուրս, ֆայտոն նստավ։— Ֆայտոն նստեր էր, չէր նստեր, աղջիկ էզարկ. Լենին ասավ՝ դրան մի սպանեք, իմացեք, թե ո՞վ ճամփեց։ Իմացան, որ էն հարուստ ճամփեց, հարուստի փոր-փոր լե տրորին, եղավ հավսար։

«Մի քանի վախտ անց Լենին հիվնդցավ։ Որ հիվընդցավ, կանչեց իր ընկերներ, իր կնիկ, իր զորք, ասավ՝ ընկերներ, ես կմեռնեմ, իմ խրատներ, իմ խոսք կմնա աշխարհի երես։

«Լենին մեռավ... Յոթ օր, յոթ գիշեր սուգ արին, տարան մի բարձր տեղ թաղին, որ արևուց մոտ էղնի...»։

Մուրոն տեղից վեր կացավ, պայուսակն ուսը նետեց։

— Համլա զրուց (այսպիսի զրույց),—ասաց և խոնարհ գլուխ տալով հեռացավ, փայտը քարեքար դիպցնելով։ Քայլելուց նա ցնցվում էր, կարծես ամեն քայլափոխին պիտի ընկներ, եթե մահակը քարին դեմ չտար։

— Տղա լաո, իդա կուտ (ցորեն) վի՞ր է,— առուների մոտից կանչեց մեկը։

Մուրոն հավաքում էր ոչխարը։ Լսելի էր նրա մեղմ

*սուլոցն ու ձայնը.— «Հոլե՜, հոլե՜... քըսս, քըսս...»։ Քիչ հետո ոչխարի գլուխը թեքեց դեպի գյուղը։*

*— Հը, ո՞նց էր...— հարցրի ընկերոջս։*

*— Երբեք չէի սպասի...*

*Մենք նստեցինք, մինչև իրիկվա նրբին լազուրը հալվեց մութի մեջ, թանձրացավ խավարը, և դաշտն ու դիմացի լեռնաշղթան սուզվեցին մթնում։ Արաքսի արծաթ գոտին նիրհող թռչունի նման պահվեց եղեգնուտների մեջ։*

*Եվ ինչքան թանձրանում էր մութը, այնքան վառ էին փայլփլում էլեկտրական լույսերի շղթաները։ Ահա Երևանը, Սարդարաբատի կայարանը, Վաղարշապատը, Այղրի ջրհանը։*

*Կարծես մութ օվկիանի վրա լողում էին հրավառ նավեր...*

# ՁՈՐԵՐԻ ԼՈՒՅՍԸ

## 1

*Տեղատարափ անձրևին նա բախեց տան դուռը։ Ներսը քնել էին որդին, հարսը և թոռը։ Ապա անձրևախառն քամին ծեծեց դուռը, ներսում ճրագ վառեցին։ Դուռը բացվեց, և անձրևի տարափի հետ տուն մտավ Սիդերո Սավվան։*

*Նա գործիքների կաշվե պայուսակը դրեց անկյունում, կախեց երկաթե ձողով կավե ճրագը, որ հանգցրել էր քամին։ Եվ ասաց որդուն.*

*— Լազր, որդիս, ես եկել եմ, որ գնամ, որովհետև երևաց այն նշանը... Ես քնեցի գետնի տակ և երբ զարթնեցի, տեսա հանգում էր իմ ճրագը։ Հետո դամ-դամ մի ձայն եկավ, Լազր, մի զորավոր ձայն...*

*Որդին հասկացավ, որ հայրը մահամերձ է։ Այն երկյուղը, որ համակել էր հորը, անցավ որդուն, անցավ և հարսին։ Կարծես դրան շեմքին ինքը մահն էր՝ անձրևախառն այդ փոթորկին, երբ կայծակի հրեղեն լախտը խփում էր լեռների լանջերին։*

*Հայրը զգեստները հանեց, մաքուր լվաց ձեռքերը և երեսը, հանձնեց իր զարմանալի մուրճը, հագավ սպիտակ շապիկ, և երբ եղավ լուսաբաց, օրորալով դուրս գնաց գերեզմանատուն։ Նրա հետևից գնացին սարսափա-*

հար բարեկամները, որոնցից ոչ մեկը չհամարձակվեց հետ պահել նրան։ Նրանք գիտեին, որ Սիդերո Սավվան, որ կնշանակի Երկաթ Սավվա,—ուրիշի խոսքով երբեք հետ չի դարձել մի անգամ բռնած ճանապարհից։

Կամրջի վրա որդուն ասաց.

— Լազր, այս գետի ափին մի աղբյուրի ջրի մեջ կփնտրես իմ մեծ դանակը և որտեղ գտնես, գնա՛ այնտեղից ինչքան թռչում է մեղուն և կգտնես մեծ գանձեր՝ քեզ և աշխարհի համար...

Հետո համարյա վազեվազ բարձրացավ գերեզմանատան բլուրը և ընկավ, ինչպես հասկը՝ մանգաղի զարկից։ Նա պառկել էր կողքի վրա, երեսը դեպի իր կնոջ խոնավ ոսկորները։ Պառկել էր մաքուր շապիկով, ինչպես ամուսնության առաջին գիշերը։

Եվ դեռ ուրիշ առասպելական զրույցներ հերոսացնում են այն զարմանալի վարպետին, որից մնում է միայն երկու քանդակ և պողպատե մի գործիք։ Իսկ ինչ նրա գերեզմանն է, այդ խառնիխուռն թափած քարի փշրանքներ են, մնացորդը այն նշանավոր արձանի, որ բարձրացրել է ինքը՝ վարպետ Սավվան իր կնոջ գերեզմանի վրա՝ մարմարից, բազալտից և մոխրագույն կրաքարից։

Այդ մահարձանի վրա քանդակել է նա երկու ողկույզ, մյուս էջին՝ մի նիհար բորենի, սուր ժանիքներով, մի այլանդակ գազան, որ նայում է նույն այդ ողկույզներին։ Երրորդ երեսին միայն բորենին է, ավելի նիհար, ավելի ահավոր, ցցել է դունչը դեպի երկինք, և թվում է, թե ոռնում է մենակությունից և ահից։ Վերջին երեսը պարապ է, և միայն շրջանակներն են հիշեցնում չորս կողմի համաչափությունը։

Ցանկացե՞լ է Սավվան ասել, որ նույնիսկ բորենին կանհետանա և կմնա տիեզերական լռությունը՝ անմարդաձայն և անշունչ, երբ բորենին ոչնչացնում է ծաղկած այգին։ Գուցե հոգնել է բազուկը և այլևս չի գտել ոչ մի գաղափար պատկերելու վերջին ամայությունը։ Բայց նա

ձև է տվել ամբողջ արձանին. այդ նետ է, սուր ծայրը դեպի երկինք, կարծես ահա պիտի թռչի նետը և մեխվի երկնքի կողը։

Մի ջերմեռանդ հույն, որի մոտ են եկեղեցու բանալիները, երբ ցույց տվեց Սավվայի երկրորդ հիշատակը, ասաց, որ այդ սուրբ Գեորգի գլուխն է։ Միամիտ մարդ... Եկեղեցու մայր դռան վերևը, Սավվա Սիդերոն քանդակել է կանացի մի գլուխ, մի լուսավոր երես, որի փափուկ այտերի վրա կան փոսիկներ, և աչքերը ժպտում են։ Երկու ֆալլուս գրկել են կնոջ պարանոցը և թվում է, թե հենց այդ է նրա ժպիտի պատճառը։

— Իսկ սրանք ոսկորներ են խաչի նման... որովհետև Սավվան մեծ վարպետ էր և սուրբ մարդ,— հավատացնում էր այն ջերմեռանդ հույնը, ձեռքին ծանր բանալիները։

Երբ «Ոսկե գահի» բարձրության վրա Լազրը դողդոջ ձայնով երգեց իր հոր՝ Սավվա Սիդերոյի գովքը, մի քաղցր երգ, որ հորինել էին նրա բարեկամ վարպետները, ես լսում էի խաղի վերջին անընդհատ կրկնվող «Սավվա... մարմարա... Սավվա Բարբարա», որ նշանակում էր.

Սավվայի սիրած մարմար...
Սավվայի սիրած Վարվառ...

Իմ աչքի առաջ ելնում էր երկու ողկույզը և բորենին, ամայի անապատը, ապա նրա կինը՝ սպիտակ Բարբարան, կնոջ մարմարե պարանոցի վրա իբրև ժանյակ անարատ ֆալլուսը։

## 2

Որդին գնաց հոր ճանապարհով։

Նա ևս դարձավ քարի վարպետ, սակայն չէր սիրում այն, ինչ Սավվա Սիդերոն՝ մահարձաններ և քանդակներ



409—24

եկեղեցիների վրա։ Նա երբեք չմտավ եկեղեցի, գուցե նրա համար, որպեսզի չտեսնի հոր քանդակը և չհիշի այն անձրևախառն փոթորիկը և խավար գիշերը, հոր սպիտակ շապիկը և մահը։

Լազրը գնաց Շիրվան, Իմերեթ, եղավ Մասիսի կողմերը, շրջելով հասավ մինչև Սև ծովի ափերը, հետո գնաց Գիլան, եկավ Գետաբեկ։ Եվ որտեղ նա գնաց, տներ կառուցեց, գետերի վրա կապեց կամուրջներ, աղբյուրների առաջ՝ քարե ավազաններ՝ մարդկանց և անասունների համար։

Սավվան նրան սովորեցրել էր, թե ի՞նչ կա գետնի խորքում, եթե ջրերը սև ժանգ են դնում քարերի վրա, և լեռան վրա խոտը փարթամ չի բարձրանում։ Այն կաշվե պայուսակը, որ մաշել էր հոր մեջքը, որդին ուսն առավ ու շրջեց երկրից երկիր, և երբեք ժանգ չնստեց պողպատե գործիքների վրա։

Որդին այդ բոլոր վայրերում հորից ավելի եռանդով փնտրեց պղինձ, երկաթ և օնիքս-մարմար, ոսկի և կվարց, և գրաֆիտ, և սրաքար։ Նա փորում էր լեռան լանջերը և ձորերի հատակը, բարձրանում էր լերկ գագաթները և խփում այն ժայռերին, որոնք իրենց էին քաշում կայծակի թրերը։ Զրնգում էր և՛ ժայռը, և՛ հոր մուրճը։ Նա զննում էր ժայռի բեկորը և անսխալ որոշում, թե ի՞նչ կա նրա խավար ընդերքում։ Երբեմն նա գտնում էր մաքուր երկաթե շերտ, լեռան կողի վրա։ Նա ինքն էր հանում ծանր մետաղը, որից գյուղական դարբինները թափում էին խոփ և ծեծում սուր գերանդի, երբեմն փակում էր իր փորած հանքահորը, երբ նկատում էր, որ հանքը խորն է և քիչ են իր ուժերը։ Այդպես տարիների ընթացքում նա սովորեց թափանցել լեռների խորքը, նայել հարյուրավոր մետր ցած և այնտեղ տեսնել ավազի և խճի տակ թաղված պղինձը և մարմարը, սև երկաթը և գունավոր կվարցը։

— Լազր, հայրդ իսկապես գետի մե՞ջ էր գցել իր

դանակը...

— Գցել էր գետի մեջ...

— Իսկ դու գտա՞ր դանակը...

— Ես գտա դանակը։

Եվ Լազրը պատմում էր հանքաքար փնտրողների հին սովորությունը։ Աղբյուրների ջրերի և գետերի մեջ նրանք նետում էին երկաթի կտոր և ժամանակի ընթացքում երկաթի վրա նստում էր պղինձը, եթե ջրի մութ ակունքներում պղնձաքարի շերտեր կան։ Մի այլ ձևով նրանք փնտրում են մարմարը և առանձին ուշադրությամբ են զննում այն վայրերը, ուր առատությամբ թափված է կուպրի նման սև և փայլուն «սատանի եղունգը»։

— Իսկ գտա՞ր դու այն գանձերը, որի մասին ասում էր քո հայրը՝ Սավվա Սիդերոն։

Նա լռում է։

— Այդ զրույց է... Բայց տես մեր գերեզմանատունը... Այ իմ մոր սպիտակ մարմարը և հորս գերեզմանը։ Մինչև այստեղ թռչում են մեր մեղուները։ Եվ ինչ պակաս հարստություն է այն սարը։

Մկանուտ ձեռքը մեկնում է դեպի դիմացի լեռան գագաթը, որտեղ ձյունի մաքուր փայլով շողում են մարմարի վիթխարի քարերը, և երբ իջնում է ամպը, թվում է, թե մինչև երկինք է հասնում սպիտակ մարմարը։

## 3

Այս վայրը կոչվում է «Ոսկե գահ»։

Կլոր հարթավայր է լեռնային թանձր խոտով։ Կանաչը կարմրում է, երբ խոտերի մեջ բարձրանում է կարմիր պուտը, կապույտ է զանգածաղիկներից և սպիտակ՝ երբ բացվում է լեռնային մեխակը, կարծես մեկը ներկեր է տարել, և կանաչ մարգագետինների վրա անկարգ կաթկթել են ներկերը։

Այդպես է այդ հարթավայրը, երկու կողմը բլուրներ, հետևը բարձր լեռը. լեռան դիմաց անդնդախոր ձոր,

որտեղ աղմկում է լեռնային մի անանուն ջուր։ Եթե լիներ մի հսկա և նստեր «Ոսկե գահի» հարթավայրին, նա թևերը կհեներ բլուրներին, մեջքը՝ այն բարձր լեռան և ոտքերը կկախեր խոր ձորի վրա։

Բայց մենք ժամերով գնում ենք «գահի» կանաչների միջով. երբեմն խանգարում է խոտը, որ հասնում է մինչև մեր կուրծքը, և երբեմն էլ քամուց ծովի նման ծփում է բարձր կանաչը և քամին խլում է Լազրի խոսքերը։

...Գնացել է նա գետի հոսանքին հակառակ և ուշադիր նայել է ջրերին, նա հասել է մինչև գետեզրի այն աղբյուրը, որի ավազանների մեջ ընկած էր պղնձապատ երկաթը։

Գետի ջրի մեջ նա գտնում է մարմարի մի զարմանալի կտոր։ Նա փշրում է քարը և տեսնում նրա կապույտ փայլը, այն հազիվ նշմարելի երակները և հազարավոր ոսկեփայլ աստղիկները։ Նա մտաբերում է, որ գարնանը չափից ավելի բարձրացել էր գետը։ Ուրեմն ձյունհալի ժամանակ կամ գուցե գարնան պղտոր հեղեղը լեռներում քերել է մի անհայտ լեռ, և հեղեղը գետին է հանձնել այդ չնաշխարհիկ մարմարի կտորները։

Գնում է հոսանքի հակառակ մինչև գետի ակունքները՝ ցրված-փռված խոր ձորերում, լեռների վրա, մինչև բարձր գագաթների սառն աղբյուրները։ Նա սպասում է մի տարի, նորից է հորդանում գետը, և ավելի շատ են երևում այդ քարերը։ Այդ տարին նա համոզվում է, որ ձախ վտակներն են բերում քարը և եռապատիկ համառությամբ շարունակում է մարմարի որսը։

Եվ գտնում է հանքավայրը մի ամայի լեռան գագաթին, որտեղ միայն ամառվա ամիսներին հնչում է հովվի սրինգը, և ապրում է քարարծիվը։

Հետո շալակեց մարմարի նմուշները, իջավ այդ լեռներից և գնաց Լեռշինարդ։

— Կայրին, որ չէին հավատում, թե մեր սարերում

կա էդպես մարմարիոն... Իսկ ասում էի սա որտեղի՞ց է։ Ես հո չեմ շինել։

Լեռն եղան պայթեցնողները և մարմարի վարպետնե-րը։ Շատ անգամ պայթեց դինամիտը, մինչև ճանապար-հը հասավ լեռան գագաթը, և այդ ճանապարհով եզներն իջեցրին մարմարի առաջին քարը։

Ձորերը լցվեց զվարթ աղմուկով։

Լազրը, Երկաթ Սավվայի արդեն ծերացած որդին, դեռ թարմ ավյունով նրանց հետ էր, որոնք ճեղքում էին լեռը, պայթեցնում էին ժայռերը և գետնի մութ ընդերքից դուրս հանում մարմարի ծանր քարերը։

Նա նայում է մինչև սայլերը ծածկվեն լեռան հետե-վը, ապա նայում է ձորի մեջ ընկած իրենց գյուղին։ Եվ մարմարի որսորդը գոհ է, որ իր և աշխարհի համար գտավ այդ գանձը։

* * *

Բարձում են օրվա վերջին սայլերը։

Սայլապանները երկաթե շղթաներով բարձրացնում են մի քար, որ ծանր է հարյուր փթից։ Երբեմն բարձում են և քար, որ քաշում է երկու տոնն։ Ապա մոտեցնում են սայլը, և մարմարը դանդաղ իջնում է սայլի վրա։

Ի՞նչ ահով են եզները նայում այդ սպիտակ քարե-րին, որ իջնում են շղթաների զրնգոցի և մարդկային աղ-մուկի մեջ։

Լազրը ինչ-որ բան է ասում սայլապանին, ապա շո-յում է քարը։

Նա քարին զարկում է մի տարօրինակ գործիքով, որ և՛ մուրճ է, և՛ կացին, և՛ բրիչ... Զնգում է մուրճը, և ար-ձագանք է տալիս քարը։

— Երկու հազարից ավելի արժի։

Ես նայում եմ նրա գործիքին. նույնիսկ կարող է աղոցել քարը, նայած որ կողմից կհագցնես կոթը։

— Լազր, ո՞րտեղից է քեզ այս...

Իմ ձեռքին է Սավվա Սիդերոյի նշանավոր հիշատակը։

Լեռան կատարին սողում է ամպը, և շողքն ընկնում է մարմարի ժայռերի վրա։ Նրանց սպիտակության մեջ լողում է նույն ամպը։ Հետզհետե խոնարհվում է արևը, զարթնում է լեռների երեկոն։ Թվում է, թե ցածրանում է երկինքը, և թափանցիկ օդի մեջ բոլորովին մոտ են երևում աստղերը։ Բայց աստղերից ավելի պայծառ թարթում են նոր տների ճրագները, և ձորերը ողողվում են մարմարի կաթնագույն լույսով։

33

# Ա Ն Ձ Ր Ե Վ Ը...

Մթին սարերի ամպերից, կապույտ ձյուներից և սառն աղբյուրների ակունքներից գլոր-գլոր իջնում է Զորագետը, գարնանը՝ հեղեղների աղմուկով, ամառվա տապին՝ զով կոհակներով և աշնանը՝ դեղնակարմիր տերևներով, որ հավաքում են ջրերը ձորերում։ Հետո ջրերի վրա, նուրբ արահետների վրա ծանրանում է ցուրտ մառախուղը, և լոռեցիների բարձր աշխարհում մաղում է ձյունը։

Տխրություն, ահ, լեռնային երկրի երկա՜ր ձմեռ...

Արդեն տերևաթափ են թղենիները։ Անտառում երևում են հացենի ծառերը նարնջագույն տերևներով, կաղնիները՝ բաց դեղին և կարմիր տերևներով, տանձիները, որոնց շուրջը չոր խազալի վրա գիշերում է մի գազան։ Ծառից ընկնում են տերևները, ահավոր կանչում է կույր մոշահավը, և բոլորովին մոտիկ, դեղնած սաղարթի մեջ փայտահարը կտուցով թմբկահարում է կեղևը։ Անտառում մառախուղ է։ Կաթում է խոնավությունը մամուռների վրա, ծառերի վրա և քարափների լանջին։ Մի խանգարված մատուռի առաջ դեռ մխում է չոբան Սաքոյի կրակը։ Ես զգում եմ ոչխարների՝ անձրևից տաքացած բրդի հոտը։ Հետո իրար եմ հավաքում կրակը և մոխիրների տակ կարդում գերեզմանաքարի երկաթագիրը՝ «Ե-

ըեմիա սուրբ ծերունի»... Խշշում են քարափի ուռիները։ Բարձրերում բուք կա, և լեռնային բաղերը մառախուղի միջով իջնում են դեպի տաք ձորերը։

Ահա քարանձավը... Նստել է որսկան Ջատին, ոտքերի առաջ եղջերուն փռել է բարակ վիզը և սառած աչքերով նայում է գորշ մշուշին։ Քամուց ծփում է որսկանի սպիտակ միրուքը, նրա ոտքերի վրա բուսել է մամուռը։ Կարմիր մատուռներ կան մատների վրա։ Նա նայում է ինչպես եղջերուն, չգիտես խեղճ աղերսով, թե՞ անբարբառ աղոթքով։ Գուցե խարույկ է եղել նրա մոտ։ Վառել է չիբուխը խարույկի կրակից և գիշերվա ահից կուչ եկած թուխ մանուկներին պատմել քարանձավներում քրքջացող այսերի և մարդագող ալքերի հեքիաթը, երկա՜ր, ինչպես լեռնային երկրի ահավոր ձմեռը։

Գվվում է ձորն անհայտ աղմուկից, դողում է գետինը, դողում են ծառերը, և տարափով տեղում աշնան անձրևի ծանր կաթիլները։

Գվվում է քարանձավը, և լսում եմ մի ձայն, որ արձագանքի պես հնչում է մութ փչակից.

... Էս խոր ձորերում
Էս է՝ չորս քսան տարիս լրացավ,
Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,
Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ։

Խշշում են մասրիները, որ բուսել են քարափի լանջին, որոնց խառնվել են այն տեսիլք ծերունու մեռած մազերը։ Հետո աղմկում է ամբողջ անտառը, քամին է շառաչում, և հողմահալած մառախուղը կորչում է փչակներում, մթին քարանձավներում։ Կաղնիների բաց դեղին սաղարթի միջից աշնան արևը լուսավորում է փափուկ արահետները։

Խաղաղ խնդությամբ իջնում եմ գետափը։

Վերևում՝ քարանձավների առաջ, մնացին այն լուսերես ծերունիները, որոնք ապրեցին «ամեն մեռնողին երանի տալով», ոտքերի առաջ մի մեռած եղջերու...

* * *

Գետը։

Գետի վրա, պողպատյա լարերից կախված օրորվում է մի կամուրջ։ Այն ափին բարձրացել է հիդրոցենտրալի բազմահարկ շենքը, որի վիթխարի ապակիներն արտացոլում են Լոռու ձորի ժայռերը, անտառը, ավերակ մատուռը և այն երեք տունը, որ ծվարել են քարափի գլխին։

Շենքի ներսը՝ այս ձորերին անծանոթ եռուզեռով խլրտում են մարդիկ, որոնք հերոսական ջանքերով և դժվար զրկանքներով հաստատեցին լույսի այս ամրոցը։ Ահա երկաթակուռ բետոնի անկործան և անփոփոխ հունով Ձորագետի ջրերը բարձր ժայռից իջնում են ծանր տուրբինների վրա։ Ամեհի թափով պտտվում է սյունը, հարյուրավոր մեքենաներ դարձ են անում, ռիթմով դառնում և վերևի ընդարձակ դահլիճում գեներատորը երկնում է հազար-հազար կիլովատ։

Մեքենաների ժխորի մեջ լսում եմ տարիների համառ աշխատանքի պատմությունը.— «Երեք ագրեգատ, յուրաքանչյուրը 10.500 ձիու ուժ... բացի այդ՝ մի պեյլտոն ագրեգատ... ընդամենը 32 հազար ձիու ուժ։ Օդային ֆիդերները տանում են այդ ուժը դեպի պղնձաձուլարանները, դեպի ցիանամիդի և գրանիտի գործարանները, դեպի Ստեփանավան։ Հետագայում մի գիծ կմիանա Քանաքեռի հիդրոկայանին, իրար կմիանան Լենինականը, Երևանը, և հիմք կդրվի Հայաստանի էներգետիկ հզոր հանգույցին»։

Զվարթ աղմկում են մեքենաները, և դժվար է լսվում այդ պատմությունը։ Բաց լուսամուտից ներս է մտնում անտառի գաղջ բույրը և նոր ներկած վահանների հոտը։

Մեկը կանգնել է ամպերոմետրի մարմարե տախտակների մոտ և ուշադրությամբ նայում է պղնձե սլաքների ընթացքին։ Նա երբեմն բաց պատուհանից նայում է դիմացի լեռներին, անտառին և այն երեք տանը, որ կուչ են եկել քարափի գլխին։

Նրա կապույտ աչքերից, նիհար և բարձր հասակից երևում է այդ լեռների մարդը, անբան հովիվների շառավիղը՝ լոռեցի բանվորը։ Ոչ ահ կա սրտում, ոչ խոնարհ վախ աստծուց, թավադից, չարքից ու չարչուց։

Լոռու ձորում կնստի ձմեռը, և ծմակներում կոռնա քաղցած գազանը, հոտոտելով նա կհասնի մինչև քարափի եզրը և ահից ետ կդառնա, երբ տեսնի լույսերով ողողված ձորը։

Ձմռան գիշերը լուսավոր դահլիճում մարդը կլսի մեքենաների զվարթ աղմուկը, ապա նոր ճանապարհներով կդառնա տուն և իր թուխ մանուկներին կպատմի, որպես մի առասպել, այն ժամանակները, երբ քար ու քարափների վրայով, մեջքը կքած, մեջքին ծանր բեռ, բարձրանում էր լոռեցին իր գյուղը՝ խավարի ու աղքատության մագիլներում։ Այն ժամանակները, երբ «մի տուն լիքը մանուկներ» ահով էին լսում և բուքի ոռնոցը, և պարտքատիրոջ ոտնաձայնը... Ապա կանցնի նորօրերի պատմությանը, երբ Լոռու ձորում մի խեղճ Զատի սպանեց թավադին և «զակոնը» նրան քշեց Սիբիր։ Կավանդի և հերոսական նոյեմբերը, որպես նոր պատմության սկիզբը, կպատմի և նրանց մասին, որոնք այս ամայի ձորում բարձրացրին լույսի առաջին ամրոցը...

...Դուրսը մաղում էր բարակ անձրև ջրերի վրա, արահետների վրա և դեղնակարմիր անտառի վրա...

Այն կապուտաչյա լոռեցին մերթ նայում էր պղնձե սլաքներին և մերթ արահետին, որով մի օր իջավ քարափի գլխին ծվարած տներից և այստեղ, այս նոր ամրոցի կառուցման հետ, նրա ներսն ամրացավ մի նոր հավատ, նոր բարբառ...

* * *

Ես նայում եմ նրան և հիշում իմ երկրի հին պատմությունը։

Քարերն ու մագաղաթներն ավանդում են նրա քաղաքների կործանումը և սուր, և գաղթ։

Ինչպես մի եղեգն՝ նա խոնարհել է գլուխը հողմերի առաջ և խաղաղության ժամին նորից հառնել։ Նա սարսափահար փախել է իր գյուղերից, ինչպես նախիրը՝ հրդեհվող անտառից, ապա տուն է շինել քարափների վրա, և անձրևախառն քամին ծեծել է նրա հողաշեն խըրճիթը։

Մեր երկրի ժայռերի վրա հաղթողները սնապարծ ոճով փորագրել են ավարառության և կողոպուտի պատմություններ, իսկ խավար խուցերում պատմագիրը հորինել է նույնքան սնամեջ առասպելներ հին փառքի մասին։

Ռամիկն անմռունչ պառկել է խանի, թավարի և սպիտակ ցարի մտրակի տակ, երբեմն ըմբոստացել, որպեսզի մյուս օրն ապավինի իր տխուր երգերին և նորից քաշի հին լուծը։ Նա հերկել է ուրիշի հողը, սերմել է արյուն-քրտինք, իսկ արյունի բաժին առել են ռեսը, վանքը և ռուբլու արքան։

Նրա կորշ հյուղերի վրա երկինքը մաղել է տրտմության անձրևը։

Ես նայում եմ այս նորօր մարդու աչքերին և կարդում նոր պատմությունը։ Դեռ ինչպիսի շենքեր պիտի բարձրանան մեր լեռների լանջերին և ձորերում, ինչքան քաղաքներ պիտի հառնեն տափարակների վրա, և զվարթաձայն հնչեն կառուցողների նոր երգերը։

Երկրի և մարդկանց վրա, հերկած հողերի վրա, իջնում է աշնան բարեբեր անձրևը...

## ՄԻ ԱՆԳԱՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ...

*«Ավրորա»-ն խարիսխ էր ձգել Բալթիկ գործարանի առաջ։ Ավելի հեռու «Իմպերատոր Պավել» հածանավն էր, նրա մոտ՝ նշանավոր «Վիոլա»-ն, որտեղ հուլիսյան օրերին Ցենտրոբալթիկ շտաբն էր, և ապա կայմերի մի ամբողջ անտառ օրորվում էր գորշ-կապարագույն ծովի վրա։*

*Ստեֆան Բորգան՝ «Ավրորա»-ի ծերունի նավաստին, վախտայի հերթապահն էր. նա ծծում էր ծխամորճը և անշարժ նայում քաղաքի կողմը։ Արև էր, հյուսիսի սառն արև, որի սպիտակ շողերը հրդեհել էին Իսաակիի տաճարի գմբեթը։ Տախտակամածի պղնձե ճաղերը փայլում էին արևից։*

*Վախտայի կամրջակից նա դիտում էր քաղաքը։ Փողոցներում սովորական շարժում էր. կամուրջների վրայով անցնում էին տրամվայներ, ավտոներ։ Ջուխոնցի երկու նավավար, հասարակ նավակները տակառներով բարձած, հանդարտ թիավարում էին։ Երբեմն երևում էին փոքրաթիվ զորամասեր, որ անհայտ էր, թե ո՞ւր էին գնում։ Կազակների մի էսկադրոն անցավ արքայական կամուրջի վրայով։ Հեռվից նկատելի էր նրանց թրերի փայլը։ Եվ նույնիսկ նրանց երգը հին էր, կարծես Պիտերում ոչինչ չէր փոխվել։ Ամեն ինչ առաջվանն էր, ինչպես նևան, ինչպես նրա գրանիտյա ափերը։*

Բորգան շրջվեց դեպի «Իմպերատոր Պավել» նավը, և նրա դեմքի վրա շողաց ժպիտը։ Ահա կայմերից բարձր ծածանվում է կարմիր դրոշը, առաջին կարմիր դրոշը, որ բարձրացրին Բալթիկ ծովի նավաստիները։ Եվ Բորգան հիշեց այն օրը, երբ լողացող սառույցները ծովի խորքը տարան միչման Բուլիչի արյունոտ դիակը։ Միչմանը հայհոյել էր կարմիր դրոշի առաջին պահակին, պահակը կրակել էր նրա վրա, և նրա ծանր մարմինն ընկել էր բորտից ներքև։

Վախտայի կամրջակի վրա ծանր քայլում էր Ստեֆան Բորգան, ծծում էր ծխամորճը և քթի տակ երգում էստոնական անուրախ «Զասմա»-ն։ Ներքև՝ տախտակամածի վրա եռում էր նավաստիների սովորական առօրյան։ Ոմանք ավազով և ծանր խոզանակով լվանում էին տախտակամածը, մյուսները խաղում էին ոսկորներով, ոմանք թնդանոթների շղթաների մոտ կանգնած խոսում էին։

— Ասում են արդեն տպում են հայտարարություններ, որ իշխանությունը մեզ է անցնում։

— Իսկ Կերենսկին ֆրոնտից կազակներ է կանչել, երկու դիվիզիա...

— Ձեռքերը կարճ են... Չի հասնի։

— Ախ, եթե մեզ ուղարկեին Ձմեռային պալատի դեմ, ես գիտեի ի՜նչ կանեի...

— Ի՞նչ կանեիր։

— Ե՞ս... Կանանց բատալիոնից տասը հոգու գերի կառնեի և, հասկանո՞ւմ ես... Մանավանդ այն հաստլիկ Ֆենյային։

Նավաստիները հռհռացին։ Նույնիսկ Բորգան, որ կամրջակից լսում էր նրանց զրույցը, ժպտաց։ Նա կամեցավ միջամտել խոսակցությանը, բայց նկատեց ծանոթ ավտոն, որ շրջվեց դեպի ափը, ուղիղ «Ավրորա»-ի դիմաց։

— Գալիս են,— կանչեց նա, և տրապը հանդարտ նստեց գրանիտի վրա։

Եկողները Ռազմահեղափոխական կոմիտեի և Կարմիր նավատորմիղի ներկայացուցիչներն էին։

* * *

Թանձր ծուխը լցվել էր կամարակապ սենյակը, որ նման էր գետնահարկ խուցի։ Ճրագը ծխի մեջ ավելի աղոտ էր լուսավորում, և նրանք, որոնք կռացել էին Պետրոգրադի քարտեզի վրա, ստիպված էին գործածել նաև մոմ և լուցկի, ավելի պարզ տեսնելու փողոցները, կառուցվող բարիկադները, կամուրջները, որ հարկավոր էր ըստ կարիքի բարձրացնել, և վերջապես շենքերը՝ փոստի, հեռագրատան, բանկերի, մինիստրությունների և մանավանդ զորանոցները, որ պետք էր անհապաղ գրավել։

— Ուրեմն նորից եմ հիշեցնում Ցեկայի կարգադրությունը,— խռպոտ ասաց Պոդվոյսկին,— առանց խուճապի, առանց երկյուղի... մենք պիտի բանտարկենք ժամանակավոր կառավարությունը, Կերենսկուն, գլխավոր շտաբը... Պետք է գրավենք Ձմեռային պալատը, այնտեղ են նրանք բոլորը։ Պա՞րզ է...

— Պարզ է,— պատասխանեցին այս ու այն կողմից։

— Ընկեր Պոդվոյսկի, գիշերապահները կարո՞ղ են խարույկներ վառել,— հարցրեց մեկը։

— Դու էլ ինչի՞ մասին ես հարցնում,— կշտամբեցին նրան։

— Հանդա՛րտ, ընկերներ։ Ժամանակը թանկ է։ Խարույկ չվառեք, որովհետև տաքանալու համար կրակի մոտ կհավաքվեն զանազան քաղքենիներ, իսկ այդ հարկավոր չէ։

Անընդհատ ներս ու դուրս էին անում գնդացիրի ժապավեններ կապած և ձեռքի նռնակներով զինված նավաստիներ, բանվորներ, կարմիր գվարդիականներ։

Նրանք ծանրախոհ մտնում էին այս և այն սենյակը, որոնք միանման էին, ինչպես խուցեր, և հաղորդում էին լուրեր, ստանում հրահանգներ և զենք։ Բակում անընդհատ աղմկում էին մոտոցիկլետներ, ավտոներ. սուրհանդակների ձիերը դոփում էին փողոցներում։

Գալիս էին զորամասերի պատվիրակներ, որոնք հայտնում էին իրենց կամքը՝ կռվելու ապստամբող բանվորների հետ կողք-կողքի։ Ոմանք միայն չեզոքություն էին խոստանում։ Նրանք հեռանում էին ընկճված և իրենց հետ դեպի զորանոցներն էին տանում լուրեր ապստամբության մասին։ Երբեմն գիշերային հետախույզները տեղեկություններ էին բերում քաղաքի շրջակայքում թշնամու կասկածելի զորաշարժերի մասին։

— Իսկույն ուժեղացնել հսկողությունը կամուրջների վրա... Կարմիր գվարդիականներին ուղարկել երկաթուղու կայարանները... Զինաթափել «Աստորիայի» սպաներին։ Դիմադրության դեպքում անխնա եղեք։ Ընկե՛ր Մոկշին, ստուգեցեք ժամանակը։

— Տասնմեկից տաս պակաս։

Եվ երկուսն էլ նայեցին ժամացույցներին։

— Տասներկուսին ինձ զեկուցեք, որ «Աստորիա»-ն մեզ այլևս չի խանգարի։ Շտա՛պ։

Խավար միջանցքների քարերի վրա լսվեց սապոգների մետաղյա ձայն, ապա աղմկեցին երեք բեռնատար մեքենա, և զինված նավաստիների խմբերը սլացան դեպի «Աստորիա»։

— Ուրեմն օղակել Նևայից մինչև Մարսյան դաշտը, ապա Մոյկայից մինչև Մարինսկի պալատը։ Հրետանին խփում է պալատի հրապարակի ուղղությամբ։ Գրեցի՞ր, Վասյա... Հետո զրահապատները...

Բայց հանկարծ ներս մտավ մեկը, որին երկու ժամ առաջ ուղարկել էին շտապ հանձնարարության։

— Նրանք փակեցին դարպասները... Բայց պատու-

հանների վրա գնդացիրներ կան։ Սպասում են կոզակների երկու էսկադրոնի։

— Փակել Միլիոննի փողոցը և Նևայի գետափը մինչև կամուրջ։ Դադարեցնել տրամվայների երթևեկությունն այդ փողոցներով։ Զինաթափել էսկադրոնները, եթե մոտենան կամուրջին։ Ովքե՞ր են «Ավրորա»-ի հետ կապ պահպանողները։

— Ներկա են,— ոտքի ելան երեք երիտասարդ և մի ծեր նավաստի՝ Ստեֆան Բորգան։

— Կրեյսերը մոտեցնել կամրջին... Հետևել ազդանշանին և անհապաղ կրակել Ձմեռային պալատի կողմը։ Քսան նավաստի ուղարկել ընկեր Անտոնովին՝ պալատի վրա արշավելու...

— Есть,— ասաց Բորգան, առաջին անգամ՝ առանց կապիտանի։ Դռան մոտ մեկն արագ նշանակեց նրանց ազգանունները և տրված հանձնարարությունը։

Մթին պալատների առջևով անխոս գնում էին չորս նավաստի։ Ցուրտ էր. ծովից փչում էր խոնավ ու մառը քամի. փողոցներում հատ ու կենտ լապտերներն օրորվում էին, և նրանց հետ օրորվում էին տների մութ ստվերները։ Կողպ էին դարպասները, պատուհանների փեղկերը, և ձայն չէր լսվում բարձր հարկերից։ Երբեմն նրանք հանդիպում էին զինված գիշերապահների, որոնք նշանաբանից հետո թողնում էին նրանց։

Փոթորկվել էր ծովը։ Վիթխարի ալիքները արշավում էին Նևայի հոսանքին հակառակ, գետն ուռչում էր, խփում ափերի գրանիտին։ «Ավրորա»-ն բոլոր լույսերը հանգցրել և զգույշ լողում էր դեպի արքայական կամուրջը։ Միաժամանակ նավաստիները մթնում հանում էին թընդանոթների պղնձե երախակալները և նրանց պողպատյա փողերը դարձնում դեպի Ձմեռային պալատը...

* * *

*Առաջին զրահապատները գրոհեցին Սենատի հրապարակից։ Նույն ժամին, տաճարի առաջ դաշտային հրետանին հրաման ստացավ կարճ ճանապարհով միանալ պուտիլովցիների զորամասերին։ Ապստամբ զինվորների զորասյուներն արշավում էին Մանեժի և Ինժեներական դղյակի կողմից։ Կարմիր գվարդիականները Ալեքսանդրյան այգուց գնդակոծում էին Ձմեռային պալատի դարպասները։*

*Պալատի ներսից և հարևան շենքերի կտուրներից գնդացիրային կրակով պատասխանում էին յունկերները։ Գնդակները շառաչով դիպչում էին ցուցանակների թիթեղներին, մայթի քարերին և աղմկով փշրում հաստ ապակիները։*

*Վախեցած քաղքենիները փակել էին դուռ ու լուսամուտ, նրանց հետևը շարել բարձեր, սեղաններ, գրքեր։ Եվ դողում էին ահավոր երկյուղից. դողում էին, անիծում և աղոթում։*

*Մոտ երեք-չորս հարյուր հոգու մի բազմություն սպիտակ դրոշը բռնած մոտեցավ կարմիր գվարդիականների դիրքերին։*

*— Կանգնեցե՛ք,— և զրահավոր մեքենան դանդաղ մոտեցավ։*

*— Ճանապա՛րհ,— բազմությունից բղավեցին մի քանիսը։ Նրանց մեջ կանացի մի ձայն կանչեց ամենքից բարձր.*

*— Մենք Պետրոգրադի Դումայի և հասարակական հաստատությունների ներկայացուցիչներն ենք և գնում ենք խնդրելու ժամանակավոր կառավարությանը, որ դադարեցնի այս արյունահեղությունը։*

*— Չկա՛ ժամանակավոր կառավարություն, նա տապալված է։ Կա՛ հեղափոխություն...*

*— Ճանապարհ տվեք մեզ։*

*— Հեռացեք կամուրջից, թե չէ կրակում եմ։*

*— Ավազակներ, հայրենիքի դավաճաններ,— հիստերիկ ճիչով բղավեց այն կինը, որ կոմսուհի Պանինան էր...*

*— Հեռացեք կամուրջից,— և գնդացիրը կրակեց օդի մեջ։*

*— Հեռանանք, պարոններ... Տեղի տանք բռնության ուժին և աղոթենք աստծուն մայր Ռուսիայի փրկության համար,— երկյուղած ձայնով ասաց դավանության մինիստր Կարտաշևը։*

*Բազմությունը հետ նահանջեց։*

*— Կանգնի՛ր,— բղավեց երիտասարդ պահակը և ուղղեց հրացանը։ Մի ավտո կանգնեց։*

*— Իջե՛ք ցած...*

*— Սա ի՞նչ անկարգություն է,— զայրացավ ավտոյի մեջ նստած պորտֆելով մարդը։*

*— Դուք պետք է ոտքով գնաք Սմոլնի,— հանդարտ պատասխանեց պահակը։— Իսկ մեքենան կմնա...*

*— Գիտե՞ք ես ով եմ,— ձայնը բարձրացրեց նա,— ես մինիստր Պրոկոպովիչն եմ... Ինչպե՞ս եք համարձակվում ձեռք բարձրացնել կառավարության անդամի վրա։ Սա անկարգություն է։ Ձեր ազգանո՞ւնը, պարոն,— և գրպանից հանեց բլոկնոտը։*

*— Գնացեք Սմոլնի, այնտեղ ձեզ կասեն...*

*Եվ մինիստր Պրոկոպովիչը, որպես կալանավոր, ոտքով գնաց Սմոլնի։*

*Ժամը երեքից անց բոլոր զորամասերը հրաման ստացան.*

*— Ուժեղացրեք գրոհը, գրավեցեք պալատը... Շուտով Իլյիչը ելույթ կունենա խորհուրդում։ Բանտարկվածներին և գերիներին ուղարկել Սմոլնի։ Ձմեռային պալատը գրավող առաջին կոմիսարին հրամայում եմ անմիջապես ներսը սահմանել խիստ կարգ և առանց խուզարկության ոչ ոքի դուրս չթողնել։*

Հրամանից հինգ րոպե հետո հանկարծ որոտացին «Ավրորա»-ի թնդանոթները՝ մե՛կ, երկու, ապա որոտացին Պետրոպավլովկայի կողմից։ Դաշտային հրետանին, որ արդեն մնացել էր պուտիլովցիներին, հրապարակից զարկեց արքաների ձմեռային տան դարպասներին։ Լսվեց մի հուժկու ուռռա, և բոլոր փողոցներից արշավեց զինված բազմությունը։

Ձմեռային պալատում գնդացիրները լռեցին։

Նավաստիների և կարմիր գվարդիականների մի զորասյուն խիզախ գրոհով մտավ բակը և ռումբերը պատրաստ բարձրացավ մարմարյա սանդուղքներով։ Առաջին գրոհայինների մեջ էին «Ավրորա»-ից տասնյոթ նավաստի, որոնց թվում ծերունի Ստեփան Բորզան։

Գրոհողները մեծ եռանդով փնտրում էին Կերենսկուն։ Արդեն բանտարկել էին ժամանակավոր կառավարության անդամներին, զինաթափ էին արել յունկերներին և շարքի էին կանգնեցնում նրանց պալատից դուրս տանելու,— սակայն բանվորների և նավաստիների առանձին խմբեր Ձմեռային պալատի բազմաթիվ սենյակներում և ներքնահարկում դեռևս փնտրում էին անփառունակ «Բոնապարտին»։

Մեկը հանկարծ ներքևից կանչեց.

— Բռնել ենք, բռնել ենք...

Մի քանի նավաստիներ Ստեփան Բորզայի հետ միասին ներքնահարկի մութ միջանցքում բանտարկել էին երկու հոգու սև վերարկուների մեջ փաթաթված,— և ոգևորված գոռում էին, դղրդացնելով կամարները։

Կոմիսարը նրանցից վկայական պահանջեց։

Ծերունի նավաստու սուր աչքը սև վերարկուի տակ տեսավ էպոլետի ոսկե երիզը։ Նա հետ քաշեց վերարկուի օձիքը։ Նույն րոպեին կոմիսարը կարդաց նրա վկայականը.

—Գեներալ-մայոր Բագրատունի, Պետրոգրադի մարզի շտաբի պետ...

Ստեֆան Բորգան պոկեց գեներալի բրաունինգը և ոսկեզօծ էպոլետները։

Իսկ դրսում, Ձմեռային պալատի բակում, լսվում էր հոմերոսյան քրքիջ։ Հոհռում էր զինված բազմությունը, ծիծաղում էին և սրախոսում։

Զինաթափ էին արել Կերենսկու վերջին հույսը՝ կանանց բատալիոնը։ Նրանց շարքի էին կանգնեցրել և սպասում էին հրամանի՝ որևէ տեղ տանելու։

— Նու, Ֆենյա, հանիր բրյուկդ։

— Իսկ էն տյոտյան նրանց հրամանատարն է։

— Ախ դուք Կերենսկու հարսներ... Գնանք մեր զորանոցները...

Կոմիսարը կարգադրեց առանձնացնել կանանց բատալիոնը։ Ապա հարցրեց.

— Ո՞ւր ուղարկեմ ձեզ...

— Ընկեր կոմիսար, նրանց ուղարկիր իրենց կազարման... Այնտեղ նրանք սնդուկների մեջ կունենան իրենց դեյրաներն ու կոֆտաները։ Կհագնեն և կկորչեն տները,— միջամտեց Բորգանը։

Մեկը բղավեց։

— Պատգամավորները դեպի խորհուրդների շենքը...

Ստեֆան Բորգան հեգնանքով նայեց գերի ընկած կանանց և հեռացավ։ Իսկ մյուս նավաստին չդիմացավ գայթակղության և ծածուկ կամթեց Ֆենյայի հաստլիկ թևը...

* * *

Պետրոգրադի խորհրդի նիստի ժամանակ անսպասելի կերպով ներս մտավ գորշ վերարկուով մի մարդ։ Նա մի վայրկյան նայեց ոգևորությունից հուզված պատգամավորների բազմությանը, որոնց վրա թանձր ծուխը ծփում էր, և օրորվում էին ջահերի ոսկե ժանյակները։ Գորշ վերարկուով մարդը նայեց մի վայրկյան, ապա հաստատ քայլերով մոտեցավ ամբիոնին։

Դահլիճում աղմուկը դադարեց։

— Ընկերնե՛ր,— զրնգաց նրա ձայնը,— բանվորական և գյուղացիական հեղափոխությունը, որի անհրաժեշտության մասին միշտ ասում էին բոլշևիկները, կատարվեց... Ճնշված մասսաներն իրենք են ստեղծում իրենց իշխանությունը... Այսօրվանից սկսվում է պատմության մի նոր շրջան...։

Դահլիճը դղրդաց ծափերի որոտից, և նույն րոպեին Ծովային շտաբի գավիթից, «Ավրորա» կրեյսերից և Պետրոպավլովկայի հեռուներից ողջունեցին թնդանոթները, գործարանների հազարավոր սուլիչներն անհեղագոչ արձագանքեցին, և արձագանքը, որպես նոր պատգամ, սլացավ քաղաքից քաղաք, աշխարհից աշխարհ...

— Այսօրվանից ամբողջ իշխանությունը պատկանում է բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդներին...

Խոսում էր Լենինը։

# ՔԵՌԻ ԴԱՎՈՆ

*Ոչ քո մասին, Հայկ, ոչ Ալեքի և ոչ օղակավար Մարինայի և ոչ էլ նույնիսկ Մխոյի «թռուցիկ բրիգադի» տղաների մասին է, որ ահա գրում եմ, այլ այն մարդու մասին, որը խրճիթում խռնված բազմության մեջ իմ աչքին չէր ընկնում, մինչև ներս վազեր գոմի պահակը և լեղապատառ կանչեր.*

*— Քեռի Դավո, քեռի Դավո, էն անիրավ «խմբապետի» կապ փրթավ. ելիր, թե չէ, Արաբ էնոր փոր-փոր կթափա։*

*Ելավ միջահասակ և ամրակազմ մի մարդ, մեկը նրանցից, որոնք լրացնում են քառասունը, հետև են թողնում հիսունը և նույնիսկ վաթսունին հասնելով չեն փոխում իրենց քայլվածքը, դեմքի արտահայտությունը և առհասարակ իրենց։ Նրանք ունենում են խիստ սև և ձյունի նման սպիտակ մազեր, և սևն ու սպիտակն իրար խառնված, նրանք ապրում են դեռ երկար, և այն տարիքում, երբ ուրիշ ծերունիներն ունենում են զառամյալ մարմին և հենվում են ցուպին,— այդպիսիները դեռ առույգ են և ունեն արթուն միտք։*

*Ելավ այդ ամրակազմ մարդը, որն էր ինքը՝ քեռի Դավոն։ Նրա հետևից դուրս եկավ նաև Մխոն, որին անվանում են «Կես կռիվ», որովհետև նա հանդարտ չի կա-*

*թողանում խոսել և նույնիսկ, երբ ժողովում խոսք է առնում, նույնիսկ այդ ժամանակ թնդում է նրա ահագնաղըղորդ ձայնը, և թվում է, թե գոռում է մի ամբողջ լեռ։ Ես էս դուրս եկա «զկնի», ինչպես ասում են այդ գյուղում։ «Կես կռիվ» Մխոն արդեն որոտալով սլանում էր, և լսելի էր, թե ինչպես նա անարգում էր ինչ-որ լոդր Միհրանի, նրան անվանելով «կուլակի թիկնացու», «կոլխոզի տիզ» և այլ այսպիսի խոսքեր։*

*Իսկ քեռի Դավոն գնում էր միջահասակ մարդու սովորական քայլերով, այն վարժ քայլքով, որով այդպիսի մարդիկ լուսաբացից մինչև օր-կեսօր կարող են կտրել լեռներ և ձորեր և նոր միայն նեղանալով շոգից և ո՛չ հոգնածությունից՝ պառկել մի թփի ստվերում։ Դժվար չէր գուշակել, որ «Կես կռիվ» Մխոն պիտի փոթորիկ գցեր և ավելի բարձր որոտար լոդրերի, ծույլերի, ավարաների և այլ այդպիսի մարդկանց հասցեին, և հենց այդ ժամանակ պիտի վրա հասներ քեռի Դավոն և լուռ ու մունջ գործ աներ։*

*Պատահել էր ահա թե ինչ։*

*«Իմպրապետը», որ մի կիսախելագար երիտասարդ ցուլ էր, անպատիվ համարելով եզների շարքը դասվել և կամ գայթակղված այն ազնիվ և ընտիր կերով, որ ախոռապանները լցրել էին ձիերի առաջ, կտրել էր վզի կապը և հարբած արջի նման ծառս եղել կոլխոզի ընդարձակ գոմում, որից և վախեցած պահակը վազել էր հավարի։ Ձիերից ոչ մեկը նրան մոտ չէր թողնում, իսկ Արաբը, չքնաղ մի նժույգ,—դեռ շարունակում էր զայրագին վրնջալ, դոփելով գոմի սալ քարերը։*

*Երբ քեռի Դավոն ներս մտավ, տեսավ հետևյալ պատկերը։ Գոմի մյուս ծայրին, կիսամութի մեջ, ցուլը կռացրել էր վիզը և բոռում էր. մութի մեջ բոցկլտում էին նրա արնախառն աչքերը։ «Կես կռիվ» Մխոն դռան մոտ աղմկում էր ավելի բարձր, քան վրնջում էր Արաբը։ Եզների և ձիերի երկար շարքերը, որոնց վերջը չէր երևում,*

հանդարտ խժռում էին կերը։ Միայն մի երիտասարդ քուռակ, որին ավելի կվայելեր սնվել՝ օրինակ առնելով հասակավոր և պատկառելի ձիերից,— ջղային անհանգստությամբ ցցել էր ականջները և ուզում էր ցույց տալ, որ ինքը ևս բաժանում է երևելի նժույգ Արաբի գայրույթը։ Իսկ եզներից և ոչ մեկը որևէ կերպ ցույց չէր տալիս իր վերաբերմունքը, և նույնիսկ կարելի է ասել, որ նրանք ատելությամբ էին լցված դեպի «խմբապետը», որին օրերից մի օր պիտի ամործատեին, և նա ևս պիտի դառնար չարքաշ եզ։

Քեռի Դավոն, առանց փոխելու քայլերի ռիթմը, անցավ գոմի երկայնքով և ուղղակի մոտեցավ ցուլին։ Նույնիսկ «Կես կռիվ» Մխոն սարսափից լռեց, և այլևս չվրնջաց Արաբը։ Քեռի Դավոն բռնեց «խմբապետի» ականջներից և առաջ եկավ՝ հետևից ցուլը։ Ապա նա ցուլին հրեց երկու պառավ եզների արանքը, առավ ճիլ խոտից հյուսված թելի կծիկը, գրպանից հանեց կեմրարը և զարմանալի արագությամբ ու ավելի զարմանալի վարպետությամբ ոլորեց այնպիսի ամուր կապ, որ հուրհավիտյան «խմբապետը» չէր կարող քանդել։ Նա ցուլին կապեց երկաթե սեպից, և միայն այդ ժամանակ նորից «փոթորիկ փրթավ» Մխոն ու դուրս գնաց։

Այդ ժամանակ քեռի Դավոն ոչ մի բառ չարտասանեց և միայն, երբ կապեց ցուլը, գրպանից հանեց ծխախոտի տուփը և հաստ մատներով փաթաթեց ծխախոտը և ապա, այն էլ կես հեգնանքով, ասաց գոմի պահակին։

— Հաքա հորի՞ ժողովքին կըսեիր ընցեր է քեռի Դավոյի ժամանակ,— և թեթև զարկեց նրա մեջքին,— սովորի, տղաս, սովորի...

Ապա մոտեցավ մի ծանր ձիու, որն ահագին աղմուկով կրճտացնում էր ատամները, կարծես գարու հատիկները փշրվում էին ջրաղացի քարերի տակ, և շոյեց ձիու բաշը։

— Քրտնած է ձին, տղա,— և ասաց նաև, որ գոմն արդեն նեղ է, հարկավոր է ձիերի նոր գոմ կառուցել։

— Քեռի Դավո, դու ա՞յս բրիգադի մեջ ես։

— Չէ, ես դաշտավար եմ։

— Հապա ինչո՞ւ եկար գոմը։

— Չէ՞ էս էլ մերն է,— և ձեռքը մեկնեց ձիերի ու եզների կողմը.— բոլոր իմ է։

Քեռի Դավոն գնաց։

Գոմի պահակը, որն իսկույն թողեց բարբառը, պատմեց այն ճանապարհի մասին, որով նրանք ընթացել են, սկզբում՝ չորս տարի առաջ՝ միայն տասներկու տուն, որոնք ունեին միայն մի եզ, և որոնց ծաղրելով անվանում էին «չլուտի խումբ»։ Ահա այս գոմը և նրա բակը հուշակված իջևան էր Շարուրից և Օրդուբադից եկող քարավանների համար։ Այժմ այդ ծածկերի տակ հանգչում են մեքենաները և մի ամբողջ գումակ։ Նրանք էին տասներկու տուն և ունեին միայն մի եզ. առաջին հիմնադիրները մեջտեղ դրին ինչ որ ունեին՝ վերջին պարկ գարին ու նույնիսկ փշուր ձավարը փոխեցին գարու հետ, և համայնական առաջին դաշտում սերմնացանը լի բուռով շաղեց սերմը։ Հետո երեսունից անցան, և այս ձմեռ նրանք արդեն հարյուր վեց են, և հիմնադիրները պարծանքով նայում են հետ՝ չորս մեծ տարիներին։

Պահակը պատմում էր այդ տարիների մասին, և այդ թվում էր մի պարզ պատմություն։ Լեռ չի փլվել, չի եղել ամեհի պատերազմ, հրաշք չի եղել, և միայն քրտինք են թափել հողի մշակները, և նրանք, որոնք ունեին միայն մի եզ, այժմ իրենց վաստակով տեր են դարձել երամակի և նախիրի, սայլաշարքի և մեքենաների, ունեն ցորեն և գարի, կանայք կով են կթում, իսկ Նաղաբաշի Զոլոն նրանց զվարճացնում է, և թնդում է «զյոնդը»։ Այդ թվում էր մի պարզ պատմություն, և դժվար է հաղորդել այն ներքին ուրախությունը, որով համակված էր այդ երիտասարդը, ինչպես այն մարդը, որ խեղճու-

թյան, հոգու այլասերման և ծայր չքավորության անդունդի ափից անդարձ անցել է մի ուրիշ ափ և ուրախությունից կոխում է այն՝ հողը, որ իրենն էր, բայց իրեն չէր կերակրում, տեսնում է նույնպիսի մի ձմեռ, երբ լեռները ձյունոտ են, ահա դարձյալ Արագի ափից բարձրանում է տաք գոլորշի, բայց իր դռանն այլևս չի չոքել սովի ահը, և նրա վաղը չի երևում որպես անօգնական կրակ մթագնած բուքի մեջ, այլ բացվում է որպես նորոգ գարնան առավոտ։

Խրճիթում հավաքվածների խորհրդակցությունն ավելի նման էր պարզ զրույցի, բայց այդ հասարակ խոսքերը որոշում էին հարյուրավոր մարդկանց անելիքն ամբողջ տարվա ընթացքում։ Որոշում էին այս տարվա նորմաները և միաժամանակ ուրվագծում էին կոլեկտիվի ողջ արտադրության պլանը։ Նստել էին՝ ով ինչպես ուզում էր, և միայն նրանք էին սեղանի մոտ, որոնք գրում էին։ Նույնիսկ մեկը խրճիթում գնում գալիս էր և երբեմն բարձրացնում էր գլուխը. այդ ժամանակ նա հայտնում էր իր դիտողությունը, և նրան ևս լսում էին այնպես, ինչպես մյուսներին, որոնցից ոմանք նստել էին պատի տակ, ոմանք՝ վառարանի շուրջը, իսկ մի քանիսը հաստ արկղի վրա, որ անհայտ է, թե ինչու էր այդտեղ։ Ամենքից գեղանկար տեղավորվել էր մի թիկնեղ մարդ։ Նա չոքել էր և միևնույն ժամանակ համարյա պառկել մեջքի վրա, այնպես, որ նրա գլուխը ցցված ծնկների հետ հավասար էր։

Եվ ներկաները, որոնք կոլխոզի ակտիվն էին, նրա առաջատար ուժը, բոլորը՝ համարյա առանց բացառության, խոսում էին խելացի ծանրությամբ։ Ննջող չկար, ինչպես գյուղական այն ժողովներում, երբ զեկուցողի միալար ձայնից կախվում էին ունկնդիրների հոգնած գլուխները, և արդեն մի անկյունից լսվում էր մրափի աղմուկ, կարծես այն կողմից գնում էր մի մենավոր սայլ, և սայլը խուլ ճռնչում էր։ Պատասխանատվություն

զգացումի հետ նրանց խոսքերի մեջ կար մի խստություն. և երբ լռում էին՝ այդ լռությունն էլ վկայում էր, որ մարդիկ կշռում և կշռադատում են։ Եվ նույնիսկ «Կես կռիվ» Մխոն այլևս երկար չէր աղմկում, այլ բավականանում էր ընդհատ բացականչություններով, որ թեպետ որոտաձայն էին, բայց և այնպես խեղճացի էին։ Իսկ քեռի Դավոն արդեն գրավել էր իր տեղը և լայն դանակով տաշում էր մի սեպ, տաշում էր և մտածում։

Հեշտ չի այն աշխատանքը, որի համար նրանք ուղեղ էին մաշում։ Ձյունի բարակ շերտի տակ լուռ քնել են այն դաշտերը, որտեղ վաղը նրանք պիտի քրտինք թափեն։ Իսկ հարկավոր է ավելի լավ կազմակերպել համայնական դաշտերի վարը, հարկավոր է բարձր բերք ստանալ։ Հարյուրավոր հեկտար դաշտերի վրա աշխատելու են տարբեր մարդիկ, և ահա պետք է այդ մարդկանց դասավորել այնպես, որ ստացվի առավել արդյունք։ Կա բեղով Տիգրան, կա և Թիմարցի Տիգրան, կա Տիգրան, որ անհայտ է, թե ինչու կոչվում է «հայու տղա», վերջապես չորրորդ Տիգրանին կոչում են «կոմսոմոլ Տիկո», և ահա չկա ավելի լավ ջրվոր, քան բեղով Տիգրանը. Թիմարցուն չի կարելի քաղհանի ուղարկել, որովհետև նա կռվում է քաղհանավոր կանանց հետ, այնինչ նրանից լավ ֆուրգոն քշող չկա. «Հայու տղան» բամբակի «հոգու մեջն է», իսկ կոմսոմոլ Տիկոն օրնիբուն մեքենաների հետ է։ Կա տափ, բամբակի արաթ, պետք է որոշել, թե ո՞ր պատանին ձեռնհաս է հորիկ լինելու, քանի՞ տղամարդ կարող է գետափի խոտատեղը հնձել, ո՞վ է դարսում բարձր բարդոց և այնքան ամուր, որ նույնիսկ հարավի քամին չքանդի։ Սեղանի մոտ նստած մեկը, որ ղեկավարում է խորհրդակցությունը, հարցնում է.

— Քեռի Դավո, երկար արտի ներքևի մա՞սը պիտի թանձր սերմել, թե՞ վերևի։

Քեռի Դավոն մի քիչ մտածում է և պատասխանում։ Եվ դուրս է գալիս, որ ոչ վերևը պիտի թանձր սերմել և

ոչ էլ ներքևը՝ նոսր, այլ երկու ծայրերը հավասար խտությամբ, իսկ մեջտեղը թանձր։

Եվ դեռ հարյուրավոր այսպիսի հարցեր՝ բամբակ ցանողների, քաղհանավորների, սերմնացանների և հընձվորների, դարբնի և սայլապանների մասին, աղյուս թափողների և տուն կառուցող վարպետների աշխատանքի ու նրա վարձատրության չափի մասին և այն մասին, թե ինչպես սերմել, որ արտերում անսերմ «խեց» չմնա, որ հողի բոլոր գուղձերը փշրվեն. ով է քաղցր հնձում, ով է լավ առու քաշում, լար տալիս և մարգոց անում, ե՞րբ է հարկավոր ցելաջուր և ե՞րբ ակոսով ջուր,— և մի՞թե հնարավոր է միառմի թվել աշխատանքի այն բոլոր տեսակները և նկարագրել աշխատանքի կազմակերպման դժվարությունները և նրանց փորձը, որոնք չորս տարվա ընթացքում եփվել են այն դժվարությունների բովում և որոնցից յուրաքանչյուրը փակ աչքերով էլ տեսնում է իրենց հողերը, իրենց մեքենաներն ու մարդկանց, որոնք միացրել են իրենց աշխատանքը։

Եվ դեռ երկար ժամանակ և ոչ թե մի օր, անձրևից ծեծված և արևառ դեմքերով այդ փորձառու մարդիկ, համայնական հողի մշակների այդ նոր ցեղը պիտի ուղեղ մաշի, և նրանց աշխատանքը պիտի ուռճանա լիքը հասկերով։

---

Երբ ներս մտանք քեռի Դավոյի տունը, տնեցիների դեմքի վրա նկատեցինք մեր գալու հետ ընդհատված հետաքրքիր պատմության հետքերը. իսկ քեռի Դավոն այնպես էր նստել, և մյուսներն այնպես էին նայում նրան, որ մատնում էին, թե այդ հետաքրքիր պատմողը հենց ինքը քեռի Դավոն էր, որի երկու կողքին, թախտի վրա քոթոթների նման կծկվել էին երկու թուխ մանուկներ, ըստ երևույթին քեռի Դավոյի թոռները։ Նրանցից մեկը դեռ բավական երկար մնաց այդ դիրքով, և նրա լայն չռած

աչքերից երևում էր, որ մանուկը դեռ պապի պատմածի ազդեցության տակ է։

Նրանց սենյակը շատ բան էր ասում իր տիրոջ՝ քեռի Դավոյի նկարագրի մասին։ Նույնպես ամուր նստել էին պատերը, ինչպես քեռի Դավոյի կազմվածքն էր, և ամեն ինչից հայտնի էր, որ տերը տունը կառուցել է խնամքով, ամեն ինչ իր տեղն էր և մտածված, ինչպես նրա խոսքերը, և դեռ շատ վաղուց, երբ քեռի Դավոն անօթևան, թափառական էր, այդ դաժան նախշը եղել է նրա մտքում։

Տան կառուցվածքի կոշտությունը մեղմացրել էր կանացի մի ձեռք, որը պատուհաններից կախել էր մաքուր վարագույրներ, պատերին նկարներ և գույնզգույն թղթերից զարդեր։ Լիքն էր տան ներսը, դռան մոտ կախված էր մի փափուկ երեսսրբիչ, իսկ վերևից դաշտային չորացած ծաղիկների միջից նայում էր Բուդյոննին։ Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդկանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ փայլուն սամավարը կարծես ավելի զարդ էր և նորափեսայի նման ուռած-փքված նայում էր։

Երկար կլինի պատմել մեր զրույցը, որ սկսվեց, ինչպես սկսվում է պարզ զրույցը․ քեռի Դավոն հայտնեց, որ հենց նույն օրը նրա առաջարկով կոլխոզի ակտիվի խորհրդակցությունը որոշել է կառուցել ձիերի նոր գոմ։

— Էլ ո՞նց ես։

— Գոհություն,— և հաստ մատներով սեղանի վրա հավաքում էր հացի փշրանքները։ Միշտ անհանգիստ են նրա ձեռքերը, միշտ ինչ-որ մի բան է անում․ ահա հավաքեց հացի փշրանքները և սկսեց հարդարել սփռոցի ճմճված ծոպերը։

Նա պատմում է այն, ինչ արդեն հայտնի է, ինչ որ վկայում են նրա տունը, տան իրերը, տանեցիները, նրանց հագուստը, նրա թոռները, և վերջապես իր՝ քեռի Դավոյի անվրդով ու գոհ դեմքը, նրա զրույցի խաղաղ ընթացքը։

Պատահե՞լ է ձեզ ձմռան բուքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ ձյունախառն բուքը ծածկում է բոլոր ճանապարհները, ձյունի փաթիլները սուր ավազների նման ծեծում են ձեր դեմքը, սառչում է ձեր շունչը, և ահա թվում է, որ այլևս փրկության ուղի չկա, փրկության ուղի՝ այդ խավար գիշերը, երբ ոռնում է բուքը. և ահա հանկարծ ցոլում է մի վիթխարի կրակ. դժվարությամբ հասնում եք կրակին, և երբ արդեն տաքացել են ձեր ձեռքերն ու մարմինը, երբ հնարավոր մահը դառնում է անցյալ, իսկ փրկությունը՝ հրաշք, կրակի մոտ ուրիշներին հանդարտ ձայնով պատմում եք այն ուղիների մասին, որտեղ խավար էր, և ոռնում էր մահվան բուքը։ Ահա այդպես, իբրև մի մարդ, որ հասնում է ապահովության ափը, քեռի Դավոն պատմեց իր և իր նմանների կյանքը։ Նրանք և նրանց պապերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք ապրել են մի մութ երկրում, մրոտ տների թոնրածխի մեջ։ Նրանք ունեին եղեգնյա խսիր, որ փռում էին օջախի առաջ, և ամբողջ գերդաստանը պառկում էր խսիրի վրա, ինչպես քարայրի գազանը՝ չոր տերևների վրա։ Եվ նույնիսկ այդ կյանքը շատ եղավ նրանց համար, և ինչպես կրակվող եղեգնուտից փախչող թռչուններ, նրանք հեռացան իրենց բարձր քարափներից և քարափների խեղճ տներից։

Երբևիցե մի գրիչ կպատմի քեռի Դավոյի կյանքը և այդ գրիչը շատ կգտնի հերոսություններ նրա կյանքում։ Եվ նա կզարմանա, թե ինչպե՞ս է, որ բոլոր պատուհասների ընթացքում չի անհետացել քեռի Դավոյի զարմը։ Բարձր ոգևորություն կհոսի նրա երակներում, երբ այդ պատմիչն իր պատմությունը հասցնի մինչև այն օրը, երբ իրար հետ միացան տասներկու ծուխ և այս հողերի վրա վառեցին նոր կյանքի կրակները, և առաջին տասներկուսի հետ քեռի Դավոն լսեց համայնական կյանքի կոչը։

— Իսկ ի՞նչ ես անելու այն ավելցուկը, որ ունես...

Այստեղ մեր զրույցին խառնվեցին և կանայք՝ քեռի Դավոյի կինը և նրա հարսը, այն թուխ մանուկների մայրը, որի կանացի մատները քնքշություն էին տվել Դավոյի կառուցած տան հաստ պատուհաններին և պատերին։ Երևաց, որ կանայք տարբեր կարծիքի են ավելցուկ ցորենի և մյուս մթերքների օգտագործման մասին. նրանք պահանջում էին «կարի մեքենա» և «կռավաթ», իսկ հարսը՝ նույնիսկ պատեֆոն։ Այնինչ քեռի Դավոն հակառակ է մտածում. նա կամենում է իր նոր տան կողքին կառուցել մի ավելի ընդարձակ սենյակ, գետնից բարձր, որ ներքևը լինի մառան, իսկ կտուրի վրա ամառվա չարդախը։ Եվ երբ պատրաստ կլինի այդ սենյակը, այն ժամանակ նա կգնի երկաթյա մահճակալ։ Նրա թոռները գլդոր-մլդոր փաթաթվեցին պապին, կարծես այդ եղանակով հայտնեցին, որ իրենք չեն ուզում ոչ խոր մառան և ոչ երկաթե մահճակալ, այլ միայն ուզում են, որ միշտ ունենան այդպիսի պապ, բարձրանան նրա ուսերի վրա, գլորվեն նրա գոգում, և պապը նրանց զարմանալի պատմություններ պատմի։

Ճրագները վառվեցին։

Երբ սեղանի արկղից հարսը լուցկի հանեց, իմ աչքին ընկավ էլեկտրալարի կապոցը, կոճակները, դեղին պատրոնը և նույնիսկ մի էլեկտրալամպ։

— Ինչո՞ւ ես հավաքել, քեռի Դավո։

— Հաբա մեզ լույս կիտա Սիմիստրոն...

Սիմիտրոն, Ցեմստրոյը, Ցեմշինը...

Քեռի Դավոյի պատուհանից երևում էր հայկական հին գյուղին օտարոտի պեյզաժ։ Դիմացի բլուրների ստորոտում թարթում էին բազմաթիվ ճրագներ, բլուրների վրա երևում էին ավելի զորեղ կրակներ։ Թվում էր, թե ամբողջ դաշտում փռվել է արդյունաբերական մի մեծ քաղաք, և նրա բազմաթիվ կրակները վառվում են գիշերային մթության մեջ։ Պատուհանից նայում էին այդ հոյակապ տեսարանին, իսկ քեռի Դավոն պատմում էր,

որ գործարանի շաղախին քիչ քրտինք չեն խառնել և իրենք. նաև ինքը, և ահա այդ վաստակի փոխարեն «Սիմիտարոն» նրանց լույս է խոստացել։

— Է, բարով մնաս, քեռի Դավո։

— Բարով, բարով տեսանք։

Բակից ավելի փառահեղ էր Ցեմշինը։ Քեռի Դավոյի տան պատուհանից երևում էին միայն տների մի մասը և բլուրները, բայց չէր երևում վիթխարի ծխնելույզը, որից թանձր ծուխը բարդ-բարդ բարձրանում էր։ Լսվում էին պայթյուններ և խուլ աղմուկ. երևի վագոնետների մեջ լցնում էին կրաքար։

Գյուղի նոր թաղով դառնում էի տուն։ Երկու կողմը միանման և մաքուր տներ էին, և յուրաքանչյուր տան զույգ պատուհանից լույսի բարակ շերտ էր ընկել նոր փողոցի վրա։ Եվ ինչպես մի նետ, այդ փողոցը ձգվում էր դեպի եղեգնուտը, և Ջույգ լեռը կարծես փողոցի ծայրն էր։

Մուգ մանիշակագույն շղարշ էր նստել լեռան լանջերին, և նրանց ստորոտներն ընկղմվել էին շղարշի խավար ծալքերում։ Բայց այնքան սպիտակ էր լեռան գագաթը, որ նույնիսկ այդ մութ շղարշի միջից ցոլում էր նրա սպիտակությունը, ինչպես անարատ մարմինը թափանցիկ քողի միջից։ Ոսկեղեն լուսինը, որ արևի նման էր, բայց առանց ճառագայթների,— լուսինը դողդողալով իջնում էր խոր անդունդի վրա։ Այն կողմերում հովիվները հրդեհել էին եղեգնուտը, և թվում էր, թե ծով է բռնկվել։ Այրվող եղեգնուտից թադերը կանչելով պտտվում էին իրենց կրակվող բների վրա։ Քամին բարձրանում էր, այրվող եղեգնի և խավարի մեջ նրանք նման էին հրաթև թռչունների։ Լեռը բարձր էր բոլորից, և նույնիսկ այդ հրդեհվող ծովը չէր լուսավորում նրա խավար լանջերը։

Մի տնից լսվեցին խուլ ձայներ. կարծես բազմաթիվ կանայք միաժամանակ և խմբով ասացին նույն բանը։ Պատուհանից երևաց սենյակի ներսը, որը հիշեցնում էր քեռի Դավոյի տունը. միայն չկային երեխաներ և տղա-

*մարդիկ։ Ութ-տասը գեղջկուհիներ հասարակ սեղանի շուրջ բոլոր նստել էին, և երբ Մարինան բարձրացնում էր ձեռքը, նրանք խմբով ընթերցում էին։ Մեկը նույնիսկ մատը շարժում էր տողերի հետ, ինչպես դպրոցական երեխա.*

*— Մեր կոմունան վար կանի...*

*Եվ խուլ դղրդացին այդ բառերը, ինչպես բազմության սրբազան երդումը, երբ ծովի նման ծփում է այդ բազմությունը, նրանց քայլերից թնդում է գետինը, հրդեհ է բռնկվել նրանց հոգիներում, և հողմը կրակին է մատնել հին եղեգնուտները, և տիղմը և թունավոր ճահիճը, հուրը խանձում է ճահիճների զեռուններին, կրակի լեզվակները ճեղքում են դարավոր խավարը, և կարիքից ազատագրված մարդը ճախրում է որպես հպարտ բազե։*

# ԱՅԼ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐ

# ՄԻՐՀԱՎ

## 1

*Աշուն էր, պայծառ աշուն։ Օդը մաքուր էր, ավելի թափանցիկ, սրբած ապակու պես։ Հեռավոր սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, ասես մեկը սրբել, լվացել էր նրանց լանջերը։*

*Աշուն էր, տերևաթափով, արևի թուլացած ջերմությամբ, ցուրտ քամով։ Դեղնած տերևները քամին քշում էր խմբերով, տանում հեռու։ Ծառերը խշխշում էին քամուց, բոստանում սիմինդրի չորացած տերևները քսվում էին իրար, և արևի տակ վերջին արևածաղիկն էր ժըպտում։*

*Հնձանի առաջ, մամռոտ քարի վրա նստել էր Դիլան դային, միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշխշոցին։ Աշնան արևը ջերմացնում էր նրան, ձորի խաղաղությունը դուր էր գալիս։ Ծառերին փաթաթված վազերն օրորվում էին քամուց, Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ալիքների վրա օրորվող տաշեղի պես։ Հնձանի դռնակը ճռնչում էր, քամին դուռը բաց ու խուփ էր անում։ Աշնան խաղաղ օրին Դիլան դայուն հաճելի էր և սիմինդրի տերևների խշխշոցը, և վազերի օրորը, և հնձանի դռնակի ճռնչոցը։*

*Այդպես մի անգամ էլ ճռնչաց դուռը տարիներ առաջ, երբ Դիլան դային ջահել էր։ Էլի աշուն էր։ Հնձա-*

նի առաջ կողովների մեջ խաղող էր դարսած, ներսում՝ քարե տաշտի մեջ Դիլան դային խաղողն էր կոխ տալիս, և շիրան համեղ, արյան պես կարմիր, քարե տաշտից ծորում էր տակառների մեջ։ Այգում ոչ ոք չկար, մենակ էր աշխատում։ Ոտքերը մինչև սրունքները բաց, տրորում էր խաղողի ողկույզները, քթի տակ մի երգ մռմռում։

Շոգ էր հնձանում, քրտինքի կաթիլները գլորվում էին, կաթում շիրայի մեջ։ Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում էլ արյունը հոսում էր ջահել գինու պես։

Հանկարծ հնձանի դուռը կամացուկ ճռնչաց, Սոնան ներս մտավ, տեսավ նրան, ուզեց ետ դառնալ, բայց Դիլան դային տաշտից թռավ, դուռը դրեց։

Սոնան, տերտերանց հարսը, Սոնան՝ կարմիր հալավով, թևերին զրնգան սուրմեք,— ուզեց դուռը բաց անի։

— Կգան, բաղում մարդ կլինի,— ասաց, բայց Դիլան դային պինդ էր գրկել նրան։ Չիմացավ, գինու հոտից էր, թե հնձանն էր տաք, չիմացավ Դիլան դային։ Սոնայի ականջին փսփսաց, թե՝

— Անխիղճ, կարոտել եմ, էրված եմ...

Փսփսաց, կուռը ճտով պատ տվավ, պաչ արեց Սոնայի թշերից։ Այնքան դուրեկան էր շույը վեր չարած, նոր հագած կարմիր հալավի հոտը, այնքան տաք էր հնձանում...

Սոնան օձի պես կծռումեռ էր անում, աշխատում ազատվել նրա ձեռքից, խնդրում էր, խոստանում։

— Կգամ, գիշերով կգամ,—

Բայց Դիլան դային չէր թողնում։

Չթողեց, մինչև չթուլացավ, չկշտացավ... Երբ Սոնան դուրս եկավ հնձանից, Դիլան դային էլ տաշտին չմոտեցավ, խաղողը կոխ չտվեց։ Նրան թվաց, թե ամեն տեղ Սոնայի հալավի հոտը կա, տաք մարմին էր զգում։

Դիլան դային Սոնային վաղուց էր ցանկանում։ Ուզել էր, չէին տվել, տերտերանք հարուստ էին, ծնողները

նրանց կայքին էին աչք դրել։ Սոնան չէր ուզեցել գնա, հայրն սպառնացել էր։

Հարսանիքի գիշերը, պսակի տակ Սոնան այնքան էր լացել, աչքերը, խաղողի սև հատիկների պես աչքերն ունեցել էին, կարմրել...

Հարսանիքից հետո Դիլան դային տեսել էր Սոնային, մի անգամ էլ բաղումն էր տեսել։ Կանգնեցրել, օրն էր հարցրել, Սոնան ամաչկոտ պատասխան էր տվել ու հեռացել։ Սերը մնացել էր, և Դիլան դային հնձանում թե բաղում, վար անելիս թե լուսնյակ գիշերներին՝ խոտի դեզի վրա պառկած, մի միտք ուներ, մի ցանկություն, մոտիկ, մարմնին շատ մոտիկ ունենալ Սոնային։

Ինչո՞ւ եկավ հնձանը, գիտե՞ր, որ ինքն այդտեղ է, թե՞ պատահմամբ դուռը բաց արեց։ Դիլան դային մինչև վերջն էլ չիմացավ։

Մի երկու անգամ մոտեցավ, ուզեց խոսի, ուզեց սրտինն ասի, բայց Սոնան խույս տվեց։

— Թող, Դիլան, ճամփադ գնա...

Էվ էլ չտեսան։ Սոնան շատ չապրեց, երեխայի վրա մեռավ։ Դիլան դային ուրիշ աղջիկ ուզեց, բայց մտքի մեջ պինդ պահեց Սոնային, հնձանը, կարմիր հալավը և սուրմեքը գրնգան։

...Ջերմացնում էր աշնան արևը, Դիլան դային մտքի ծովն ընկած, լողում էր տաշեղի պես։

Գյուղի վերև գերեզմանատունն է։ Սոնայի գերեզմանաքարի վրա մամուռ կա, գրերը խանգարվել են, քարը խոնարհվել է, կիսով չափ թաղվել հողի մեջ։

Սոնային կարմիր հալավով թաղեցին։ Փտել էր կարմիր հալավն էլ, մախմուրի պես փափուկ մորթն էլ...

Գիշերով տուն գնաց, հայրը հարցրեց, թե ինչքան խաղող է կոխ տվել, չասեց, որ խաղողից ավելի լավ Սոնան էր, մարմինը՝ քաղցր մաճառ։

Տանը քունը չտարավ։ Պառկեց դեզի գլխին, նոր քաղած խոտերի վրա։ Լուսնյակ էր գիշերը, երկինքն առանց

ամպ, գիշերով հով էր փչում։ Խոտը բուրմունք ուներ, հազարավոր չորացած ծաղիկներ խոտի հետ բուրում էին, և նրան լուսնյակ գիշերին այնպես էր թվում, ասես այդ նույն դեզի վրա պառկել է Սոնան և խուրձերի մեջ թողել հալավի հոտը։

Լուսաբացին հալվեցին ամպերը, գունատվեց գիշերվա լազուրը։ Երբ ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից, և ցողը գոհարներ շարեց ճերմակ թերթիկների վրա, արևի առաջին շողերի հետ իր բնում զարթնեց կաքավը։

—Կախ-կղա, շախ-կղա։

Արևածագին, գյուղի դիմաց հնձած արտերում կաքավն էր կարդում, իսկ մի քիչ վերև, անտառի մեջ կանչում էր միրհավը։

Դիլան դային վեր կացավ, կայծքարով հրացանն առավ և գնաց դեպի սարալանջերը, դեպի անտառը մոտակա, ուր միրհավն էր կանչում։

Սիրտ չուներ իջնելու ձորը, հնձանն այգում, բացելու ճռնչան դռնակը։

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հընձած արտերն էր կոխ տալիս, ծղոտները ոսկեգույն, արահետով բարձրանում, սարն ի վեր դեպի անտառը։

Արտերում դեռ չհավաքած խուրձեր կային։ Թուխպն իջնում էր սարից, լիզում գետինը, և թացություն էր կաթում թուխպից։ Արտերում չհավաքած խուրձերը ծլում էին, տաքանում։

Դիլան դային մոտեցավ մի դեզի, ձեռքը կոխեց խուրձերի մեջ, տաքություն զգաց։ Կեծացել էին խուրձերը, խոնավությունից հասկերը ամկել էին։ Դիլան դային գիտեր՝ ում արտն է, կանգնեց դեզի մոտ, գլուխը շարժեց ափսոսանքով։

Երբ որ տերտերանց արտին հասավ, կանգնեց, հենվեց կայծքարով հրացանի վրա, միտք արեց։ Սոնան ամառը քաղհան է արել, կռացել է, մատները փուշը ծա-

կել է, հնձվորի համար ճաշ է բերել շալակով, քրտնել է արևի տակ, և քրտնքից շապիկը փակչել է լանջին։ Լիներ, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, տերտերանց արտը հնձեր, և Սոնան ճաշ բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին։

Ետ նայեց Դիլան դային, եկած ճամփով ետ նայեց, ճամփին եկող չտեսավ։ Թփեր կային ճամփի վրա, տերևները դեղնած թփեր։ Կաքավը թփերի ետև կարդում էր.

— Կախ-կղա, շախ-կղա…

Դիլան դային զգույշ քայլերով, կռացած մոտեցավ թփերին։ Դեղին ծղոտների մեջ, հնձած արտում կաքավները հավաքում էին ընկած հատիկները, թափված հասկերը կտցահարում։ Մեկը չէր, շատ էր. թռչկոտում էին, գեր մարմինները շարժում օրորելով։ Գարնան ճուտեր էլ կային, արդեն մեծացել, թևավորվել էին։

Դիլան դային չոքեց, նշան բռնեց։ Մինչև քարը կայծ կտար, կաքավները թռան հեռու, պտույտ արին, իջան ուրիշ արտում։ Վեր կացավ, ճանապարհը շարունակեց։

Ճամփի եզրի թփերն ավելի էին շատանում, արտերի մեջ հատ ու կենտ կաղնիներ էին երևում՝ ծռված, կռացած։ Վերջին արտերն էր կոխ տալիս։ Արահետը բարակեց, հալվեց անտառի բացատում։

## 2

Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ է սիրում միրհավը, ոսկեգույն փետուրներով միրհավը, բույն դնել, կանչել։

Անտառի մեջ մամռոտ ժայռեր կային, արջաբներ, ամուց ընկած դարավոր կաղնիներ, որոնց վրա սունկերը շարունակ էին բուսել, իսկ մամուռը պատել էր ճղներին, ասես արջի թաթեր լիներ։

Դիլան դային մամռոտ ժայռերին չհասած՝ դիմացից հրացանի ձայն լսեց։

Ձայնից դրնգաց անտառը, դեղին տերևներից ցողի խոշոր կաթիլներ ընկան մամուռի վրա։ Ո՞վ պիտի լիներ. հրացանի ձայնից Դիլան դային որոշեց, որ որսորդը գյուղացի չէ, գյուղում այդպիսի հրացան չկա։

— Տեսնես ո՞վ ա որս անում...

Տերևները խշշացին. Դիլան դային տապ արավ, պահվեց ժայռերի ետև։ Միրհավն էր, հանգիստ քուչուչ էր անում դեղնած տերևների մեջ։ Գլուխը հանեց, նայեց ուղիղ նշան բռնի, միրհավը թռավ, հետո մի ուրիշը, երրորդը, չորրորդը...

Ջգուշ է միրհավը, դժվար է նրան խփել։ Երբեմն այնքան մոտ է գալիս, ուզում ես վրա վազես, բայց մինչև նշան բռնելը, մի թեթև ոտնաձայն կամ խշշոց, բացում է թևերը, թռչում գնդակից արագ և էլի սկսում քուչուչ անել։ Զգուշ է միրհավը. քուչուչ անելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռանում և ապա էլի երկարում վիզը, նայում չորս կողմ։

Դիլան դային պահված տեղից դուրս եկավ, ճանապարհը շարունակեց։ Անտառի խորքն էր արդեն, ծառերը հաստաբուն, խիտ, տեղ-տեղ անանց։ Տերևները հարյուրավոր տարիներ թափվել էին իրար վրա, չէին փտել և ծառերի տակ փռել էին փափուկ գորգ։

Դիլան դային կոխ էր տալիս մամուռը, չորացած տերևները, թաղվում, ասես մարագի դարմանը լիներ, սայթաքում և ճղներից բռնելով ճանապարհը շարունակում։

Հասավ աղբյուրին, կռացավ, մի կուշտ խմեց։ Քիչ հետո հասավ միրհավի ձորին։ Ներքև, քարերի վրա, այնքա՜ն շատ միրհավ կար։ Արևը տաքացրել էր մամռոտ քարերը, միրհավը ոսկեփետուր, թևերին սև պուտեր, թռչում էր քարից-քար, կանչում, կտցահարում հարևանին, վազվզում։

Նշան բռնեց։ Երբ քարը կայծ տվավ, և կայծից բռնկվեց վառոդը, հրացանի փողից բոց ու մուխ դուրս

եկավ, ձորերը դղրդացին, ձորից թռան միրհավերը՝ թևերը լայն, փափուկ բմբուլով, թևերը բաց աշնան արևի շողերի տակ։ Մեկը միայն թպրտաց, մամռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ։

Դիլան դային վրա վազեց և վազելիս նկատեց, որ մի սպիտակ շուն, լեզուն հանած վազում է թփուտների կողմը։ Մի պահ կանգնեց, զարմացավ, բայց քայլերն արագացրեց, թռավ քարերի վրայով, որովհետև շունը թփերին էր հասել։

Որսկան շան բերանն ու Դիլան դայու ձեռքերը միասին ձգվեցին դեպի միրհավն արնոտ, Դիլան դայու մատները դիպան դեղին բմբուլներին, բայց միրհավը հանկարծ թևին տվեց, թռավ վերև։ Երկու փետուր օրորալով վայր ընկան, աշնան դեղին տերևների պես...

Դիլան դային բերանը բաց նայում էր արնոտ միրհավի ետևից, երբ հանկարծ շատ մոտ լսեց ոտնաձայն, ետ նայեց, աչքերը չռեց, հրացանը ձեռքից վայր ընկավ։

Յասաուլն էր, աժդահա, ռեխը՝ լայն, աչքերը՝ չուխտ կրակ, տեղով մի զարզանդ... Մոտեցավ, բղավեց երեսին, ձեռքի մտրակով զարկեց ուսերին, մտրակի ծայրը կպավ երեսին, քթին։ Ոտը գետնով տվավ, թքոտեց։

Շունը, յասաուլի որսկան շունը, մեկ նայում էր տիրոջ, մեկ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց անում, մեկ էլ սկսում հոտոտել թփերի մեջ, որտեղ քիչ առաջ ընկած էր միրհավն արնոտ։

Դիլան դայու լեզուն կապ էր ընկել, չկարողացավ խոսել։ Լեզու չգիտեր, յասաուլը ռուսերեն էր խոսում։ Լեզու իմանար էլ, նա պիտի լռեր, վախը կապել էր նրան։

Երբ ուշքի եկավ, յասաուլն էլ էր հեռացել, իր շունն էլ։ Նայեց նրանց ետևից, մտաբերեց շան փրփրած բերանը և խոսքերն օտար, հասկացավ, թե յասաուլն ինչու է զայրացել։

Նա կարծել էր, թե միրհավն իր խփածն է, շունը

*փնտրել էր երկար ժամանակ, Դիլան դային փորձել էր խլել շան բերանից, փախցրել էր միրհավին։*

*Դիլան դային նստեց քարի վրա։ Նոր միայն զգաց, թե ինչքան խիստ էին յասաուլի մտրակի հարվածները։ Մեջքի վրա ասես շիկացած շամփուրներով դաղել էին, աչքատակը տաքացել էր, կակղել ուռած խմորի պես։*

*Միտք արեց Դիլան դային և գոհ եղավ, որ յասաուլը հրացանը չի տեսել, կայծքարով հրացանը, քարի արանքում ընկած։ Թե չէ կտաներ, հետո կչարչարեր։*

*Արևը մայրամուտի ամպերի հետ էր խաղում, անտառում լռություն կար, միրհավը թռել էր հեռու։ Մամռոտ քարի վրա երկու փետուր կար ընկած, դեղնագույն, սև պուտերով, իսկ թփի չոր ճյուղերին՝ արյան կաթիլներ։*

*Դիլան դային ձորով իջավ ներքև։ Երբեմն երազ էր թվում միրհավն էլ, կաքավն էլ։ Բայց մրմնջում էին մըտրակի տեղերը, աչքի տակ ցավ էր զգում, ոտքերում՝ թեթև դող։ Սեղմել էր հրացանը, տաք էր կայծքարը՝ ինչպես մարմինը միրհավի, որին մի վայրկյան միայն մատների ծայրով շոշափեց, զգաց, որ տաք է, փափուկ բմբուլ։ Մարմինը միրհավի, տաք բմբուլ, մախմուրի պես, ինչպես Սոնան ներքև՝ հնձանում, սուրմեքը զընգան և մարմինը սպիտակ։*

*Տուն չգնաց, ծանոթ ճամփով իջավ այգին, ճռնչաց հնձանի դռնակը, ներս մտավ, փռվեց բոյովը մեկ հատակի վրա։*

*Երբ առավոտյան արևի շողքը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, զարթնեց Դիլան դային, տրորեց աչքերը և աչքատակին ցավ զգաց։ Ուռուցքը չէր անցել։*

*Այդ օրը նա ավելի զայրացած էր կոխ տալիս սև խաղողը քարե տաշտում և չէր նկատում, թե ինչպես քրտինքը գլորվում էր, կաթում ջահել գինու մեջ։*

## 3

*Աշուն էր, պայծառ աշուն...*

*Նստել էր Դիլան դային հնձանի առաջ, գլուխը կախ,*

միտք էր անում արևի տակ անցած-գնացած օրերի մասին։

Քանի՜ աշուն էր անցել այն օրից, համարք չունի։ Գիտե, որ զառամել է արդեն, քայլելիս հենվում է փայտին, աչքը հեռուն լավ չի տեսնում, առաջվա պես ականջը սուր չէ։

Հնձանի առաջ խոխոջելով առվակն էր հոսում, ջուրը գիշեր-ցերեկ աղմկում էր, ասես ինքն իրան թոնթորում էր, վաղուց մոռացված օրերը վերհիշում։

Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր թողեց մամռոտ քարին։ Միրհավի պես էր Սոնան՝ աչքերը խաղողի հատիկներ, տարիներ առաջ, մի արևոտ աշունքի, երբ Դիլան դայու չլուտ ոտքերի տակ խաղողը քամվում էր, արնանման գինի դառնում։ Միրհավի պես թռավ Սոնան, ետքից թողեց աշունքվա հուշեր։

...Իրիկվա հովից խշշում էին տերևները սիմինդրի, չորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում, պտույտ անում, նորից ընկնում։

# ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿ

Գարնանային առավոտը խոստանում էր պայծառ և արևոտ օր։ Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետով և ամեն քայլափոխին փնչում։ Քրտնքի կաթիլներից խոնավացել էր նրանց վիզը, մուգ-կապույտ գույն ստացել։

Արահետն օձապտույտ ոլորվում էր։ Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի խտանում էր անտառը, ավելի հաստաբուն ծառերի էինք հանդիպում, որոնց ճյուղերն իրար էին խառնվել, կախվել կածանի վրա։ Հաճախ էինք կռանում թամբից, գրկում ձիու վիզը, որպեսզի կախ ընկած ճյուղերը չքերծեին մեր դեմքը, փշերը չծակծկեին։

Լուռ էինք։ Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, փրցնում տերևներ, կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և գիշերվա ցողը տերևներից անձրևի պես թափվում էր ձիու վրա, ինձ վրա։

Ընկերս կամացուկ սուլում էր մի երգ, ձիու քայլերի համեմատ էլ օրորվում թամբի վրա։

— Այս կածանով տասներկու տարի առաջ առաջին անգամ իջա Զորագյուղ,— ասաց ընկերս։ Թվաց թե ինքն իրեն է խոսում։

Ետ դարձա, նայեցի նրան։ Ժպտում էր. կարծես միտն ընկավ մի հին դեպք, որին ականատես է եղել կածանը, անտառը։ Հարցրի, թե որ քամին է նրան շպրտել հեռու ձորերում ընկած այս գյուղը։

— Հենց այդ օրը բանտից նոր էի դուրս եկել։ Տասնյոթ-տասնութ տարեկան երիտասարդ էի։ Այնքան եռանդ ունեի աշխատելու, այնպես համարձակ էի։ Եթե այդ եռանդը մնացած լինե՜ր...

Արահետը վերջացավ և անտառի խորքում խառնվեց ավելի լայն ու փափուկ ճանապարհի։ Ձիերը կանգ առան, խոր շնչեցին, շարունակեցին քայլել։

— Գիտես, երբեմն մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես նույնքան պայծառ, ասես երեկ ես տեսել։ Մարդ կորցնում է անունը, տեղն ու տարին, թե երբ է տեսել այդ գլուխը, աչքերը, մոռանում է մանրամասնությունը, մնում է միայն գլուխը, աչքերը, կարծես մանուկ օրերի առաջին տպավորությունն է։

Նա խոսում էր այնպես, ասես մտքի առաջ պարզ տեսնում էր անցած տարիների մի դեմք, մի զույգ աչքեր։

—Հիմա էլ շատ պարզ հիշում եմ այն գիշերը, երբ Զորագյուղ եկա։ Հարկավոր էր քաղաքից հեռանալ, միաժամանակ չերևալ։ Եվ ես սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ հեռու մի գյուղում ուսուցիչ լինել։ Երկու միտք ինձ ոգևորում էր։ Նախ որ ոչ մի աչք ինձ չի հետևի, հետքերս չի փնտրի, և երկրորդ՝ գյուղում աշխատել։

Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Զորագյուղի մասին, թե տեղն անառիկ է, օդը լավ, կողքին մթին անտառներ, ես իսկույն համաձայնվեցի։ Կարծեմ նույն օրն էլ ճանապարհ ընկա։

...Ձմռան սկզբին էր, նոր էր ձյուն եկել։ Գիշեր էր, երբ հասանք արահետի, բաժանվեցինք անտառի ճանապարհից։ Լուսնյակի տակ շափաղ էր տալիս ձյունը, ասես սպիտակ մարմար լիներ։ Զորագյուղի ձիապանը արահետի գլխից մատը մեկնեց հեռուն, ցույց տվավ.

— Հրեն է՛, մեր գյուղը...

Ձյունի սպիտակության վրա վերևից ես նշմարեցի փոքրիկ սև կետեր։ Տներն էին, խոտի և աթարի դեզեր։ Մի տան պատուհանից ճրագի աղոտ լույս էր երևում։ Մի քիչ որ իջանք, լսելի եղավ շան կաղկանձոց։

— Էն մեր Բողարի ձայնն է,— ասաց ձիապանը։ Ձին էլ կարծես հասկացավ, որ գյուղը մոտ է, քայլերն ավելի արագացրեց։

Իսկ ես ուրիշ մտքեր ունեի։ Ինձ թվում էր, թե շատ հեռու երկիր եմ գնում, որի մասին հեքիաթի պես պատմում էր աշխարհագրության դասատուն։ Եվ տարօրինակ թվաց, որ և ոչ մի վագր կամ հովազ չերևաց անտառում։

Մանուկները հաճախ ցնորում են հեռավոր երկրների մասին, ուր կարմրամորթ մարդիկ են ապրում, ծառերի վրա գույնզգույն փետուրներով թռչուններ։ Եվ երբ նրանք տնից մի քիչ հեռու են ընկնում, նրանց թվում է, թե շատ մոտ է ցնորքի այդ աշխարհը։

Ես էլ այդպես էի մտածում, թեկուզ արդեն պատանի էի։ Երևի անտառն էր այդպես տրամադրում, ճյուղերին ձյունի հաստ շերտեր կամ քարաժայռերի տձև կերպարանքը։ Առաջին անգամ Ձորագյուղ գալն իմ կյանքի լավ գիշերներից մեկը եղավ։

Ձիապանը հենց իրենց տունը տարավ ինձ։ Ի՜նչպես անուշ մրափեցի թոնրի մոտ, քուրսու վրա։ Առավոտյան դեմ աչքս կիսաբաց արի, նայեցի երդիկին։ Ձմռան գիշերից մի քիչ դեռ կար։ Նորից կոլոլվեցի վերմակում, ոտքերս կամացուկ կախեցի թոնրի տաք մոխրի վրա։

Ամաչեցի, երբ աչքերս բաց արի։ Վաղուց զարթնել էին մյուսները, սպասում էին ինձ, որ թոնիրը վառեն։ Դուրս եկա, բակից տեսա գյուղը, գիշերվա ճանապարհը։ Հավաբնի մոտ Բողարը մռռաց ինձ վրա։ Նրա գիշերվա կաղկանձոցը ինչո՞ւ ինձ հիշեցրեց վագրին ու հովազին։

Այդ օրն էլ տեղավորեցին ինձ մի տան, որտեղ և պիտի ապրեի։ Նահապետական վարքուբարքով մարդ էր

Օհան ապերը։ Հիմա մեր գյուղերում շատ քիչ են նրա նման մարդիկ։ Ամեն առավոտ շարական էր կարդում։ Նստում էր բուխարու մոտ, շոր փայտը դարսում կողքին, մեկ-մեկ դնում կրակի վրա և պատմություններ անում շահի ժամանակից, անցած-գնացած օրերից, վաղուց մեռած մարդկանց կյանքից։

Տանը չորս հոգի էինք։ Ես, Օհան ապերը, նրա պառավ կինը և տասը տարեկան Աշոտը, որ առաջին ընկերս էր դպրոց գնալիս ու գալիս, քանի դեռ շները վարժ չէին ինձ, հաչում էին կտուրների վրա, եռի ոտքերով ձյուն մաղում ինձ վրա։

Դպրոցը գյուղի ծայրին էր, բլրակի վրա։ Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր։ Մի ընդարձակ սենյակ էր, փայտի հասարակ նստարանների երկու շարք, դիմացի պատից գրատախտակը։ Ուրիշ ոչ մի զարդ չկար անսրվաղ պատերին։ Պատուհաններին ապակու տեղ յուղած թղթի կտորներ էին խմորով փակցրել։

Միակ ժամացույցն ինձ մոտ էր։ Մի օր էլ բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց։ Ես մինչև վերջն էլ մնացի առանց ժամացույցի։ Արև օրերին ստվերներով էինք ժամը որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք…

Երկու շաբաթ հետո քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում, շատերի տունն էլ գիտեի, ոմանց ծնողներին էլ էի ճանաչում։ Ժիր երեխաներ էին, պսպղան աչքերով։ Այնքա՜ն շուտ էին ըմբռնում, և այնպես արագ ընտելացանք իրար։

Օրապահի զանգի զնգոցին ես իջնում էի տան սանդուղքով, բլրակի գլխին չհասած արդեն տեսնում էի դըպրոցի առաջ խմբված երեխաներին։ Խմբով էլ ներս էինք մտնում։

Դասերից հետո համարյա միշտ տանն էի մնում։ Օհան ապերը զոմն էր գնում տավարին ապուռ տալու, Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, պառավն օջախն

էր վառում կամ ընթրիքի ձավարը լվանում։ Օհան ապոր չոր ցախերը դարսում էի բուխարիկում, պառկում կրակի առաջ, նայում, թե ինչպես են մոխրանում փայտի կտորները, ինչպես կրակի լեզվակները իրար հրելով կայծեր էին թռցնում երդիկով։

Մութն ընկնելուց գալիս էին Աշոտն ու Օհան ապերը, երկուսն էլ տրեխները հանում, նստում կրակի մոտ։ Եվ մինչև պառավը ձավարի ճաշը եփեր, Օհան ապերը սկսում էր մի հին պատմություն, որի վերջը լսելու համար շատ անգամ էինք ես ու Աշոտը նրան արթնացնում ննջելուց։

— Հա՛, որտեղ մնացի,— կասեր և մինչև մեր հիշեցնելը՝

— Պառավել եմ, քունս շուտ է տանում,— կավելացներ ինքը և կշարունակեր կիսատ թողած պատմությունը։

* * *

Ես ուշադիր լսում էի ընկերոջս, և թեպետ ծառերն էլի ճյուղերը կախել էին ճանապարհի վրա, բայց ես մտրակով չէի փրցնում կանաչ տերևներ։ Արևը բավական բարձրացել էր, գոլորշիացել էին ցողի կաթիլները։

— Ձորագյուղում մի որսորդ կա, վիզը ծուռ Անտոն են ասում։ Հիմա էլ մնում է, թեպետ ծերացել է, աչքերը լավ չեն տեսնում, էլ որսի չի գնում։

Օհան ապերը շատ էր պատմում նրա մասին։ Մի անգամ անտառում արջի հետ կռիվ է կացել, արջը ջարդել է նրա հրացանը, կռացել է, որ փերանը վերցնի Անտոնին խփելու, Անտոնը փախել է, արջից ազատվել։ Պատմում էր, թե ինչպես է աղվեսին բնում բռնել։

— Իրեն որ տեսնես, կզարմանաս։ Լղար, բոյը կարճ, վիզն էլ ծուռ։ Կասես որ բամփես գլխին, տափից կփակչի,— ասում էր Օհան ապերը նրա մասին։

Ես մտքումս դրի նրա հետ որսի գնալ, թեկուզ կյան-

քունս որս արած չկայի: Պապայն էլ խոստացավ հարևանի կայծքարով հրացանը խնդրել:

Հենց հաջորդ կիրակի, առավոտ կանուխ, երբ դեռ երդիկներից նոր էր ծուխը բարձրանում, ես ու Անտոնը անտառի ճանապարհը բռնեցինք: Այդ օրը ես չորս անգամ կրակեցի: Կրակոցից ծառի ճղներից ձյուն թափվեց, բայց իմ վառոդը չխանձեց ոչ մի աղվեսի մորթի:

Անտոնը սիրտ էր տալիս, թե սկսնակի համար այդ էլ շատ է: Բայց ես տեսնում էի, որ նրա ծաղկատար դեմքը խորամանկ ժպտում է: Ինքը մի ծեր աղվես սպանեց, երկու մշահավ: Ծեր աղվեսն այնքա՜ն չարչարեց մեզ:

Անտոնը կրակեց, մուխի մեջ ես տեսա, թե ինչպես աղվեսը գլորվեց: Վրա վազեցինք, աղվեսը ատամները կրճտացրեց, պոչը ետևի ոտքերի մեջ կոխեց ու փախավ: Ձյունի վրա հետքերն էին և արյան շերտեր: Մի քանի տեղ ուժասպառ ընկել էր, արյունն ավելի շատ էր հոսել, մորթու մազերը թափվել էին ձյունի վրա:

Աղվեսին փնտրելիս Անտոնը մի մշահավ էլ սպանեց: Վազեցինք վերցնելու, մի քիչ հեռու, փոսի մեջ տեսանք և ծեր աղվեսին: Կծկվել, կուչ էր եկել, դունչը մոտեցրել վերքին: Կախ ընկած լեզուն արնոտ էր: Երևում էր, որ լիզել է վերքի արյունը:

Անտոնն աղվեսին ուսով գցեց, մշահավերն ինձ տվավ, և մենք վերադարձանք:

Գյուղին չհասած, անտառի բացատում չոր ճյուղերի կոտրատելու ձայն լսեցի: Ինձ թվաց, թե պախրան է եղջյուրներով ծառի ճյուղերը կոտրատում, դեն հրում, որ ձյունի տակ չոր տերևներ հանի: Ես նայեցի:

Մի տղա, ութ-տաս տարեկան, ցախ էր դարսում պարանին: Մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ, պարանի պես բարակ ճյուղը ձեռքին: Նրանք մեզ ավելի շուտ էին տեսել, կանգնել նայում էին:

Ահա այդ դեմքն է, որ մեխվել է հիշողությանս մեջ,

թեկուզ այն օրից տասներկու տարի է անցել, և այն էլ ի՜նչ տարիներ...

Ընկերս մի պահ լռեց։ Ես նրա դեմքին տեսա երանության նույն ժպիտը, ինչպես առաջին անգամ, երբ մենք դեռ արահետով էինք բարձրանում։ Ասես աչքի առաջ տեսնում էր աղջկան, շոր ցախը ձեռին, ձյունոտ անտառը։

— Տեսա ու կանգնեցի,— դանդաղ շարունակեց նա։— Եվ թեպետ Անտոնն ասաց, թե ում աղջիկն է, ցախի են եկել, բայց ես լավ չլսեցի նրան։ Հիշում եմ, որ մի անգամ էլ ետ նայեցի, երբ բացատն անցանք և իջանք գյուղի կալերի մոտ։ Չգիտեմ՝ աղջիկը ժպտաց թե չէ, բայց ինձ այդպես թվաց։ Գլուխը խոնարհեց, ջարդեց ձեռքի ցախը։

Ես մեր պատշգամբից տեսա նրան ցախը շալակին։ Մեր հետքերով իջավ գյուղի կողմը։ Մոխրագույն շորեր ուներ, գլխին՝ տանը գործած բրդե շալ։ Օհան ապերը հարցնում էր ինձ մշահավի մասին, Աշոտը նրանց փետուրներն էր պոկում, ես կցկտուր պատասխան էի տալիս և պատշգամբից աչքի տակով հետևում, թե որ տունը պիտի մտնի ցախով աղջիկը։

Որքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է դպրոցում։

Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը, որ իմ քառասուն աշակերտներից մեկն էր մինչ այդ, ջոկվեց բոլորից և իմ աչքում դարձավ այն կետը, որի վրա ներքին հաճույքով էր կանգ առնում իմ աչքը։

Նրա անունը չգիտեի։ Դասի ժամանակ ես հարցրի քրոջը, որ տան անդամների անունն ասի։ Եվ որովհետև երկու քույր էին, դժվար չէր իմանալ, որ անտառում տեսածիս անունը Խոնարհ էր։ Մյուս աշակերտներն էլ մատ բարձրացրին իրենց տան մասին պատմելու և շատ զարմացան, երբ գրատախտակի վրա գումարումի մի նոր վարժություն գրեցի։

խոնարհ, խոնարհ... Նայում էի գրատախտակի թվերին, աչքիս առաջ բրդե շալով աղջկա գլուխն էր, ոտները ձյունի մեջ, օձի պես սև պարանը ձյունի ճերմակության վրա։

Այդ դեմքը մերթ սուզվում էր անդունդ, որը սովորական էր դառնում, հիշում էի, որ անտառում մի ծեր աղվես ենք սպանել, երկու մշահավ։ Մեկ էլ դեմքը մոտենում էր, երևում աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալ՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ աչքիս թվաց։

Վիզը ծուռ Անտոնի հետ մի անգամ էլ որսի գնացինք։ Բացուտին երբ հասանք, ես դիտմամբ մոտեցա գերանին, որի մոտ կանգնել էր աղջիկը։ Որսորդը կանչեց իմ ետևից, թե ճանապարհն աջ է ծռվում։ Այն տեղում հետքեր չտեսա։ Ձյունը ծածկել էր ոտքի տեղերը, մի չոր ցախ էր ընկած ծառի տակ։ Կռացա, վերցրի։

Վերադարձին գյուղի ծուռումուռ փողոցներով եկա, որպեսզի նրանց տան առջևով անցնեմ։ Այդ թաղի շները սովոր չէին ինձ, հաչոցով վրա վազեցին։ Բայց և այնպես կիսաբաց դռնից տեսա նրան բակում, մի քանի աթար գրկած։ Ինձ տեսավ, դեմքն իսկույն մյուս կողմը դարձրեց, տուն մտավ։ Ես շատ պարզ նկատեցի, թե ինչպես կարմրեց նրա դեմքը։

Այդ օրն այնքա՜ն ուրախ էի։ Օհան ապերն էլ նկատեց և ծիծաղելով ասաց, թե վիզը ծուռ Անտոնի հետ երևի անտառում մի օյին ենք սարքել։ Ընթրիքից առաջ բուխարու մոտ երբ ննջեց Օհան ապերը, ես արագ թերթեցի նրա շարականի գիրքը, բրդե թելն ուրիշ թերթի արանքում դրի, որ առավոտյան Օհան ապերը կարդա ու զարմանա, թե երբ կիսեց շարականի-հաստ գիրքը, կարդա ու կասկածով նայի մեկ ինձ, մեկ Աշոտին։

Ձմեռվա ընթացքում խոնարհին ես երկու անգամ տեսա։ Մի ամիս հիվանդ էր, բարեկենդանի տոներից մի շաբաթ առաջ լավացավ։ Շատ անգամ էի քրոջից հարցնում նրա մասին։ Եվ ամեն անգամ տարբեր պատրվա-

կով, այնպես՝ հեռվից հեռու, շատ անգամ իբր թե պատահաբար, ուրիշ խոսք մեջ բերելով։

Դժվար էր միշտ պատրվակ գտնել։ Հիշում եմ՝ երեք օր տեղեկություն չունեի, քաշվում էի հարցնել։ Հանկարծ գնար տանն ասեր... Չորրորդ օրը սովորականից շուտ եկա դպրոց, քույրը դեռ չէր եկել։

Կանգնել էի մուտքի դռան մոտ։ Աշակերտները վառարանի կողքին տաքանում էին։ Աչքս բլրակին էր։ Հանկարծ երևաց քույրը, տեսավ ինձ, կարծեց, թե հանդիմանում եմ դպրոց ուշանալու համար։ Քայլերն արագացրեց, ինձ որ հասավ, շնչակտուր ասաց.

— Խոնարհն արդեն վեր է կացել...

Հետո ես իմացա, որ նա դեռ չորս օր էլ պառկել է։ Աղջիկը սուտ է ասել, ինձ ուրախացնելու համար, կարծելով, որ ուշացել է, պիտի նախատեմ։

Բարեկենդանի մի օր տեսա Խոնարհին։ Մեր դիմացի կտրան աղջիկները խաղում էին, իրար ձյունով տալիս, երգեր ասում։ Շատերի ձեռքին խնձոր կար։ Նոր շորեր էին հագել՝ կարմիր, կապույտ, կանաչ։ Խոնարհն էլ նրանց մեջն էր։ Կարմիր չիթ էր հագին, երկար զոլերով։ Ձեռքերը պահել էր գոգնոցի տակ, կանգնել կտուրի ծայրին, նայում էր ավելի փոքրահասակ աղջիկների, որոնք կանչոցով, աղմուկով իրար հրմշտկում էին, վազվզում։

Պատշգամբից ես նրան գունատ տեսա, մի քիչ նիհարած։ Նոր շորի մեջ նա ավելի բարձրահասակ թվաց, մեջքը բարակ, կապույտ գոգնոցի թելերը մեջքին հանգույց արած։ Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը, տեսավ ինձ, կտուրի ծայրից հեռացավ, խառնվեց աղջիկների խմբին։

Նորից տեսա Խոնարհի սպիտակ դեմքը, մանրիկ աչքերը։ Բարձրահասակ մի երեխա թվաց ինձ կարմիր շորերով աղջիկը, գլխին նույն բրդե շալը, ինչ որ առաջ։ Տուն մտա չխանգարելու համար, որովհետև մյուս աղ

չիկներն էլ քչփչացին, փոքրահասակներից մի քանիսը, որոնք դպրոցում սովորում էին, գոգնոցով դեմքը ծածկեցին, պահվեցին մյուսների ետև։

Ի՜նչպես կուզենայի, որ պատը ճեղք ունենար, ճեղքից նայեի կտուրին։ Օհան ապոր տան պատերը շատ ամուր էին, ներսից կրապատ...

* * *

Անտառում արդեն վերջացել, հալվել էր կանաչ մարգագետնի մեջ, որի վրա այս ու այն տեղ բուսած հատուկտոր թփերը ապացույց էին, թե ժամանակին մարգագետնի սևահողում կաղնին իր արմատներն էր խրել...

Մարգագետնի միջով թեթև սահանքով հոսում էր գետակը, որի ակունքները անտառի մթին ձորերի աղբյուրներն էին։ Դրա համար էլ գետակի երեսին կանաչ խոտի հետ լողում էր և հերվա կաղնու չոր տերև։

Ձիերը հոգնել էին։ Մարգագետնի կանաչը գրավում էր և՛ մեզ, և՛ նրանց։

— Իջնենք, ձիերը հանգստանան,— ասաց ընկերս։ Սանձի երկաթները ձիերը լեզվով դուրս հանեցին, ախորժով պոկեցին խոտի մի փունջ։ Գետակի ափին խոտի վրա պառկեցինք։

— Օհան ապերը գրքեր շատ ուներ, հին գրքեր։ Մի կիրակի պատշգամբում նստած կարդում էի նրա հին գրքերից մեկը, սելջուկյան արշավանքների մասին։ Ձյունը դեռ չէր հալվել, բայց արևի ջերմությունն արդեն զգալ էր տալիս, որ գարունը հեռու չէ։ Այդպիսի օրերին կատուն էլ է հեռանում թոնրի տաք քարից և փռվում արևի տակ, աչքերը փակ մռռում։

Մեկը բարձրանում էր սանդուղքով։ Գլուխս վեր հանեցի, գիրքը ձեռքիս դողաց։ Կողքիս կանգնել էր Խոնարհը, մատներով խաղում էր գոգնոցի եզրի հետ։ Երբեք նա ինձ այդքան մոտ չէր կանգնել։ Դրանից էր, որ գրքի տառերը շաղվեցին, տողերն իրար անցան։ Ջգի-

տեր արե՞ն է այդպես քաղցր ջերմացնում, թե նրա ներկայությունը։

— Հայրս խնդրում է՝ մեր տուն գաս ճաշին։

Ինքս էլ չիմացա՝ ինչու կարդալս պատճառ բռնեցի, ասացի, որ չեմ գալու։ Խոնարհը ձեռքի արագ շարժումով գիրքս ծալեց ու ես դեռ ուշքի չեկած, բակից նորից ասաց հոր խնդիրը։

Չգնացի, բայց գիրքն էլ բաց չարի։ Անելիքս չգիտեի։ Փորձեցի տետրակներն ուղղել, տեսա, որ սխալ չեմ գտնում ամենից թույլ աշակերտի տետրակումն էլ։ Ճաշին Օհան ապերը եկավ և մինչև իրիկուն համարյա միասին անցկացրինք։ Այդ օրը ես նրա հետ գոմն էլ գնացի, օգնեցի կովերին խոտ ու գարման տալու։

Չգիտեմ՝ Չորագյուղում գարունն ամե՞ն տարի է այնքան սիրուն, ինչպես այն տարին։ Քարերն էլ էին շընչում գարնան բույրը։ Անտառի հազարավոր լորենիներն այնքան դուրեկան էին հոտում։ Գլխապտույտ էի զգում, երբ դասերից հետո պառկում էի անտառում, լորենիների տակ։

Չորակնե́րում հիմա էլ կան այգիներ։ Խնձորենու բողբոջներն ուռել, հասել էին։ Հարկավոր էր մի շաբաթ էլ տաք եղանակ, որպեսզի բողբոջների բաց կարմիր թերթերը բացվեին, ձորակները բուրային։ Հեռվից ծաղկած ծառերի սպիտակ ճյուղերը ձյունով ծածկված էին երևում, ասես գարունը ձյուն էր թափել ծառերի վրա, գունավոր և հոտավետ փաթիլներով ձյուն։

Գյուղի փողոցներից գարնան արևը աղբաջուրն էր գոլորշիացնում, կովերը ջրի գնալիս շլանում էին արևի լույսից, արջառները մնչում էին, հոտոտում, դեսուդեն վազում, ոտքերով թաց գետինը փորում, իրար պոզահարում։ Եվ ի՜նչ դժկամությամբ էին ներս մտնում գոմի ցածլիկ դռնակներից։

Գարնան արև օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիսն է։ Դպրոցն արձակելուց հետո եկած արահետով

պիտի վերադառնամ և էլ երբեք, երբեք չպիտի գամ Զորագյուղ։

Փոշմանել էի նրանց տուն չգնալուս համար։ Մի օր էլ փողոցում մորը տեսա, խոտի երկու խուրձ շալակին։ Հանդիմանեց, որ հրավերը չեմ ընդունել։ Եթե մեկ էլ կանչեր, թեկուզ մի ակնարկ աներ, ես պիտի հետևեի նրան։

Այն ժամանակ սովորություն կար տարեվերջին դըպրոցում հանդես կազմակերպելու։ Ես էլ էի պատրաստվել, աշակերտները երգ ու ոտանավոր էին սովորել։ Մեծահասակ աշակերտները տախտակներ բերին, տներից գորգ ու կարպետ հավաքեցին, բեմը սարքեցին։ Պատվիրել էի, որ շատ մարդու ասեն, գյուղը տեղով մի գա, թեկուզ սենյակը հարյուր մարդուց ավել չէր տեղավորի։ Ամեն անգամ պատվիրելիս աչքս նրա քրոջն էի դարձնում, մեկ էլ կրկնում։

Կիրակին եկավ։ Անչափ տոնական էր իմ հոգին։ Գուցե և ոչ մի տեղ այդ օրն այնպես զվարթ չանցավ, ինչպես Զորագյուղում։ Բաց պատուհաններով գարունը այգիներից մաշկահոտ էր բերում, դպրոցի կտուրի տակ սարյակները բնից բուն էին թռնում, ճռվողում։ Նրանք էլ էին զուգվել, և այնպե՜ս էին փայլում սարյակների սև փետուրները։

Բազմության մեջ ես միայն մի գլուխ էի տեսնում, այս անգամ առանց շալի, մազերը միջից ճեղքած, խնամքով սանրած։ Եվ ի՜նչ բարակ էին նրա շրթունքները, բերանը որքան փոքր։

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր նրա քույրը։ Կարպետը շարժվեց, բեմի ետևում երևաց Խոնարհը, իր գլխի սանրով կոկեց քրոջ մազերը։

Մանկան զիլ ձայնով և համարձակ ինչ-որ բաներ էր ասում փոքրիկ աղջիկը բեմից, ձեռքերն օդում ճոճում։ Բազմությունը լուռ լսում էր։ Ես չէի լսում։ Կողքիս նո-

նարհն էր։ Նրա աչքերում ուրախության ժպիտ կար, ժպտից սև աչքերը փայլում էին սարյակի փետուրների պես։ Այդ աչքերը, երկու ձիթապտուղ...

Ձեռքը բռնեցի։

— Խոնարհ...— ձայնս դողաց։

— Թող,— ասաց ու ձեռքը քաշեց ծափ տալու համար քրոջը, որի դեմքը անսովոր հաճույքից կարմրին էր տալիս։ Սափահարում էին և դահլիճում, ավելի ճիշտ, գանազան ձայներով, ձեռնափայտի շարժումով իրենց գոհունակությունը հայտնում։

Քիչ հետո հանդեսը վերջացավ, ցրվեցինք։ Ինձ թվաց, թե հանդեսը շատ տխուր վախճան ունեցավ, գարնան օրն էլ պղտորվեց։ Ականջիս տակ նրա խոսքն էր՝ Թո՜ղ։ Ձեռքիս էի նայում, ուզում էի ստուգել՝ բռնե՞լ եմ արդյոք նրա ձեռքը։ Ինչո՞ւ այդքան կարճ էին նրա մատները։

Հանդեսից հետո Խոնարհին մի քանի անգամ էլ տեսա։ Պատահմամբ իմացա նրանց այգու ճանապարհը։ Դասերից հետո ձորակ էի գնում, պառկում Օհան ապոր այգու կապույտ քարին, որից վերև, այգու ցանկապատի կողքով նեղլիկ ճանապարհով նա պիտի այգուց վերադառնար։ Ոչ մի խոսք չասացի նրան, թեկուզ մի քանի անգամ տեսա ցանկապատի ետև։ Հայրն առաջից էր գնում, այգու չոր ցախի մի կապ մեջքին, ինքը ետևից, ջրամանն ու հացի շորը թևի տակ։ Հետս գիրք էի տանում, բայց և ոչ մի երես չէի կարդում, որովհետև ամեն մի ոտնաձայնի վեր էի թռնում, նայում ճանապարհին։

Մի անգամ միայն նայեց ինձ, ժպտաց։ Ինձ թվաց, թե հացի շորը նա դիտմամբ վեր գցեց, որ կռանա, մի քիչ էլ ավել մնա։ Գուցե այդպես չէր, գուցե իրոք շորը սահեց, ընկավ։

Հիմա էլ պարզ տեսնում եմ նրա դեմքը՝ ցանկապատի փշերի արանքից։ Նույն աչքերն էին, ինչ որ բարեկենդանի օրը, կտուրի վրա։ Մանկան արտահայտություն

կար նրա աչքերում, թեկուզ տասնհինգ տարեկան էր, և ամուր կոճկած զգեստի տակ երևում էր հասուն կուրծքը։ Ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան պարզ ես հիշում եմ նրա բարակ շրթունքները, բաց կարմիր, որպես նաև կլեպ։

Ընկերս մի պահ լռեց։ Ձեռքով տրորեց ճակատն ու աչքերը, ասես ուզում էր հեռացնի այն դեմքը, որ վաղուց անցած տարիներից այդպես պայծառ ժպտում էր։

Գարնան ջինջ երկնքի վրայով ամպի սպիտակ մի քուլա սահում էր նազանքով, ասես արար աշխարհին իր ճերմակ կողերն էր ցույց տալիս և հպարտանում, որ ինքը լողանում է արևի շողերի մեջ անհաս բարձունքում։

— Եկավ և վերջին օրը։ Դպրոցն արդեն արձակել էի, բաժանել հին տետրակները։ Վերադառնալու պատրաստություն էի տեսնում։ Օհան ապերն առավոտներն էլ շարական չէր կարդում, լուսաբացին այգին էր գնում, վարուցանքսի հոգս էր քաշում։

Բաժանվելը դժվար եղավ։ Տանն ընտելացել էին ինձ, ես դառել էի մտերիմ մարդ և՛ Օհան ապոր, և՛ Աշոտի, և՛ պառավ Նանու համար։ Բակում ծիրանենը իրերս էր բարձում ձիուն, Նանին պայուսակի մեջ գաթա էր դարսում, սնդուկում պահած խնձոր ու տանձ։

Խոնարհին վաղուց չէի տեսել։ Ինձ թվում էր, թե ես նրան էլ չեմ տեսնելու։ Եվ մի անգամ էլ տեսնելու պահանջը ստիպեց ինձ արագ-արագ անցնել գյուղի փողոցներով, մի վայրկյան կանգնել նրանց դռան առաջ, բաց դռնով բակին նայել, գերանից կախած գզգզված մորթուն։

Խոնարհին բակում չտեսա։ Եթե մեկը խոսեցներ ինձ, գուցե լաց լինեի։ Փողոցում մարդ չկար, բոլորն աշխատանքի էին։ Արտերում քաղհանն էր սկսվել, հորովելի ձայն էր լսվում այս ու այն սարալանջից։ Մի տեղ աշունքվա մուգ-կանաչ արտերն էին, մի տեղ գարնան սև ցելը։

Օհան ապերը մի քանի խրատներ ասաց։ Նրա բարի

աչքերում արցունքներ տեսա, երբ կռացավ ու ճակատս համբուրեց։ Նանին ձիապանին պատվիրում էր ինձ լավ տանել, զգույշ մնալ, որ պայուսակը չընկնի, միևնույն ժամանակ գոգնոցով սրբում էր աչքերից ծլլացող արցունքը։

Անցանք փոքրիկ ձորակը, աղբյուրից առաջ ուռենու հաստ նովը, ուր ձմեռը կովերը ջուր էին խմում։ Ահա և Օհան ապոր այգու դռնակը։ Արագ բարձրացա ձորակով, դռնակը ճռնչաց, մոտեցա այգու կապույտ քարին։ Ցանկապատի ետև մարդ չկար, այգում անդորր կար, ծաղկաթափ էին ծառերը, բողբոջների տեղ նշմարվում էին կանաչ մանրիկ պտուղներ։

Դպրոցի մոտ խմբվել էին երեխաները։ Տեսան ինձ, իջան բլրակով։ Ի՜նչ սրտանց և որպիսի միամիտ պարզությամբ նրանք մոտեցան, բարի ճանապարհ ասացին։ Մի քանի հոգի ծաղիկներ էին քաղել. հենց որ մեկը ինձ մեկնեց ծաղիկը, մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին։ Գիրկս ծաղկեփնջեր էր՝ զանազան ճաշակով կապած, իրար դարսած։

Աղջիկներից ոմանք լաց եղան։ Ժպտում էին, ժպտի հետ արցունքն էր թափվում, սրբում էին, բայց վարար աղբյուրի պես արցունքը նորից էր ծլլում։ Լաց էր լինում և Խոնարհի քույրը։ Ինչո՞ւ ես նրա արցունքները ավելի հարազատ էի համարում։ Ինձ թվում էր, թե փոքրիկն արդեն հասկացել է, թե ինչու ձմռան օրերին ես հաճախ էի հարցնում քրոջ առողջության մասին։

Մեկը թե՝ «ուսուցիչ, մեզ չմոռանաս»։ Լավ հիշում եմ Ծուտիկին, որ միշտ դպրոց էր գալիս հոր մեծ փափախը գլխին, երկար հնամաշ տրեխներով, որ հոր թողած ժառանգությունն էր։ Որբ էր Ծուտիկը, լռիկ-մնջիկ մի երեխա, որին բոլորս էլ սիրում էինք։ Խմբի մեջ Ծուտիկն էլ կար, մյուսների պես մոտեցավ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, քիչ մնաց ընկներ։ Ծուտիկը փաթաթվեց ծնկներիս։ Մեծ փափախի տակից տեսա նրա

*խելոք աչքերը։ Եվ ա՜յնքա՜ն խեղճություն կար Ծուտիկի աչքերում։*

*Ձիապանի կանչը ինձ հիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու։ Մանուկները մի անգամ էլ ձեռք տվին, աղջիկների լացը թնդեց։ Կռացա, Ծուտիկի ճակատը համբուրեցի, ինչպես Օհան ապերը պատշգամբում։ Իմ աչքերում էլ արցունք երևացին, արցունքի միջից մի անգամ էլ տեսա այգու դռնակը, բլրակը, դպրոցի ներկած թիթեղները։ Այգու ծառերը ծածկեցին ամեն ինչ։*

*Քայլում էի ձիապանի ետևից։ Մինչև զառիվայրի աբոտեպը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով։ Կանաչ արտերում քաղհան էին անում, մի քիչ վերև, սարալանջին եզները դանդաղորեն քաշում էին արորը, հանգստացած հողը շունչ տալիս ակոսի մեջ։ Արտերում կանաչի մեջ կարմիր-կապույտ ծաղիկներ կային։ Բացվել էր պուտը։*

*Սպիտակ քարի մոտ, գոգաձև ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մեջ տեսա խոնարհին։ Մեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում այս անգամ ժպիտ չտեսա։ Ի՞նչ էր ասում, դժվա՞ր էր նրա համար, որ ես հեռանում եմ Զորագյուղից, չէ՞ որ ինձ ոչինչ, ոչինչ չէր ասել խոնարհ աղջիկը։ Հագին նույն գորշ զգեստն էր, ինչպես առաջին անգամ անտառում։ Արտի կանաչի մեջ կանգնել էր, ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մորախոտի մի կապ։*

*Ոչինչ չասացի, հեռացա։ Արահետով բարձրանալիս միշտ ետ էի նայում։ Կռացած կանայք կանաչին ընկած ոչխարի էին նման։ Եվ այդ հոտից մեկը, գորշ շորերով մի աղջիկ ավելի հաճախ էր բարձրանում, կանգնում մի պահ, ձեռքը ճակատին դնում, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետին։ Արահետի գլխին կանգնեցի, և, երբ մի անգամ՝ էլ բարձրացավ, նայեց, ձեռքով արի։ Խոնարհն իսկույն կռացավ արտի վրա։ Ձիապանը ձայն տվավ, որ քայլերս արագացնեմ։*

*Երբ որ ընկերս լռեց, ինձ թվաց, թե գետակը նույն հանգով է պատմում, խոսում նույն կերպ, ինչպես ընկերս, որ մեջքին ընկած, փակ աչքերը երկնքին, սահուն անգիր ասում էր ծանոթ մի պատմություն՝ գրված Օհան ապոր հին գրքերում։*

*Վեր կացա, ձիուս թամբի կապերը թուլացրի։ Ձիերը հագեցել էին կանաչից, մեզ նման մեկնվել էին գարնան արևի տակ։*

*— Հետո տասներկու տարի... Եվ ի՜նչ տարիներ։ Կռիվ, քաղց, երկրներ ու քաղաքներ, հազարավոր դեմքեր տարբեր ցեղից, անցքեր՝ մեկը քաղցր, մյուսը դառն հիշողության հետ կապված, և այդ ամենը որպես շարան՝ հյուսված անտես մի ձեռքով... Հաճախ էի մտաբերում նրա դեմքը, ցանկապատի փշերի արանքից, երկու մանրիկ աչքեր, որպես սև ձիթապտուղ և բարակ, կարմիր շրթունքներ...*

*Մի վայրկյան լռությունից հետո հանկարծ ընկերս կողքին դարձավ, վիզը մի քիչ ձգեց, աչքերն ավելի մեծացան։*

*— Գիտե՞ս՝ ես խանարհին տեսա...*

*— Ե՞րբ։*

*—Երեկ։ Վերին գյուղում։ Դու քնել էիր, դպրոցի բակում գյուղացիները հավաքվեցին։ Խոսեցինք հողի մասին, գանգատվում էին, որ հողն առաջվա բերքը չի տալիս։ Այս տարվա ժամանակից էին խոսում։ Շատ կովեր են սատկել, ոմանք գարնան ցելի եզ էլ չունեն։ Նպաստ խնդրեցին։ Հետո մոտեցավ մի կին, ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ, ոտքի կաշին ճաքճքած։ Կնոջ փեշերից կախվել էին երեք երեխա՝ տկլոր, պորտը բաց։ Մեկը մատը բերանում նայում էր մերթ ինձ, մերթ մորը։*

*Կինը արցունքոտ աչքերին չորս փութ ցորեն էր խնդրում մինչև հունձը։*

*— Հետո մի ճար կլինի...*

*Ամուսինն անցյալ տարի էր մեռել։ Ժանտախտից սատկել էր միակ կովը։ Տանն ուրիշ աշխատող չունի։*

*Ես ճանաչեցի խոնարհին... Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլ։*

*Անխոս նստեցինք ձիերը, անցանք գետակը։ Արևն արդեն դեպի մայրամուտ էր կախվել։*

# ՍԱԲՈՒ

## 1

Նրանք անտառում են ապրում, և որովհետև անհիշելի ժամանակից ի վեր գյուղը խիտ անտառների մեջ է տեղավորված, զուրկ բանուկ ճանապարհներից, սարերով բաժանված շրջակա գյուղերից,—Սաբու գյուղի երեխան այնպես է կարծում, թե աշխարհն անվերջ անտառ է, որտեղ մարդը բացատներում կորեկ է ցանում, իսկ արջերը հավաքում են ընկած կաղինները, ծառերը ճղակոտոր անում և հագեցած պառկում կորեկի արտում։

Անտառն իր կնիքն է դրել Սաբուի վրա։ Ոչ միայն ափսեներն են անտառի փայտից, արորն ու շերեփը, այլև անտառից են նրանց ուտելիքի մեծ մասը՝ վայրի տանձն ու սալորը, զանազան ընդեղեններ և արմտիք, որոնք նույնքան համեղ մնում են և անտառի խորքերում ապրող վարազների համար։

Ոչ մի տեղ արջի մասին այնքան շատ չգիտեն, որքան Սաբու գյուղում։ Երեխան էլ կասի, թե արահետի թարմ հետքը արջինն է, թե գայլ է անցել կամ պախրան է իջել ձորը ջուր խմելու։ Նրանց պատմությունների մեծ մասը վայրի գազանների շուրջն են հյուսած։ Ահա առասպել մի հերոս, անունը Գեուշ, որի գերեզմանի սուր քարը հիմա էլ սրբատեղ է Սաբու գյուղում։

Պառավները երիտասարդ որսորդներին պատմում

են Գեուշի պողպատե թրի մասին, որի մի հարվածով նա արջի գլուխն էր կտրում։ Մի ուրիշ հերոս, որի վրա երեք արջ են հարձակվել միանգամից, կռիվ է բռնել նրանց հետ, մեկին սպանել, բարձրացել ծառը, ոտքի մի թաթը թողնելով արջի բերանում։ Շատ տներում արջի մորթիներ կան, պատերից կախ, դռան ճակատին պախրայի գլուխն է մեխած, ճյուղավոր եղջյուրներով, ցանցի խոռոչում՝ խոտ, աչքերի փոսում՝ գունավոր փալաս։ Բաց բերանից չոր խոտի ծղոտներ են երևում, ասես պախրան գիշեր-ցերեկ խոտ է ուտում։ Ով գիտե, գուցե վերջին մամուռն է մնացել ատամների արանքում, երբ Սաբուի որսորդը ծառի ետևից կայծքարով հրացանը կրակեց։

Կա մի հին աղանդ Սաբու գյուղում։ Մթնած այդ աշխարհում հին առասպելների հետ հավասար մինչև այժմ էլ մնացել է այդ աղանդը։ Եվ ինչպես անտառի արջը մնացել է նույնքան վայրի, ինչպես դարեր առաջ, այնպես էլ հնօրյա հավատքը Սաբու գյուղում մնացել է անաղարտ, որպես անտառի կուսական թավուտ։

Մագաղաթյա մի ձեռագիր խոսում է վաղեմի արևորդիների մասին, որոնք Արաքսի ձախ ափի լեռնաշխարհի վրա էին տեղավորված։ Եվ աշխարհն այդ կոչվում էր Արևիք։ Բարձր շինարներ կային արևորդիների աշխարհում, ամեն առավոտ արևածագին շինարների տակ արևին ծունր էին դնում։ Գուցե Իրանի կրակապաշտ օրերի հետքն էր, որ կայծի պես թռել էր Արաքսի մյուս ափը, դարձել ուրույն մի հերձված։

Այդ աշխարհում է Սաբուն։ Ով գիտե՝ հին դարերի ծալքերի տակ ի՞նչ թելեր կան ծածկված, որոնք տանում, հասցնում են մինչև արևորդիների շինարները։ Սաբու գյուղում էլ կան բարձր շինարներ, սակայն արևին ծունր չեն դնում, գուցե նրա համար, որ արևոտ օրեր քիչ են լինում խավարաձոր անտառներում։ Հիմա էլ շինարները սուրբ են, գունավոր փալասներ են կապում չար աչքի դեմ, ցավից զերծ մնալու։

Սաբու գյուղում թուրքեր են ապրում։ Եվ որովհետև աղանդավոր են, հնում միշտ էլ հալածել են նրանց, ծաղր ու ծանակի ենթարկել։ Սաբուն քաշվել է իր պատյանի մեջ և պինդ փակել հին հավատքին։ Տարիներ շարունակ ուրիշ նոր խոսք չեն ասել գյուղում, թավուտները մնացել են սաղարթախիտ, արևի շողը չի թափանցել խորքի ստվերուտը, փտել են ընկած գերանները, հողի հետ բորբոսնել է գերան ու տերև։

Սաբուն մազ չի խուզում. բեղ ու միրուք կտրելը համարում են մահացու մեղք։ Դրա համար էլ մարդիկ երկար-մորուս են, մազոտ։ Մազ է բսնում այտոսկրների վրա, ականջի խոռոչներում։ Ճակատի մազերը կախվում են մինչև ունքերը. ճակատը չի երևում։ Ծիծեռնակի թևի պես սև միրուքներ ունեն, բեղ ու միրուք խառնված իրար։ Եվ ժպտալիս, երբ շրթունքները ետ են քաշվում, բացվում են սադափե ատամները, գույնը նույնքան վճիտ, ինչպես աղբյուրի ջուր։

Սաբուն մռայլ է, անտառն է նրանց վարժեցրել ունքերը կախ լինել, սրածայր կացնի կոթից պինդ բռնած ման գալ ծառերի տակ։ Կացնով կարելի է ոչ միայն գերան կտրել, այլև արջի գանգը ջարդել, առասպել Գեուշի պես։

Խուսափում են ուրիշ գյուղից աղջիկ ուզել։ Շատ հազվագյուտ դեպքում են ուրիշները համաձայնվում աղջիկ տալ Սաբուին, որովհետև աղանդը գաղտնի ծեսեր ունի, որոնց մասին հարևան գյուղերը հազար ու մի պատմություն են պատմում։ Եվ քանի որ ծեսը կատարում են այն ժամանակ, երբ գյուղում օտար մարդ չկա, դրա համար էլ ճշգրիտ ինչ շատ քչերը գիտեն, թեկուզ ոմանք պնդում են, որ իրենք այդ ծեսերին ականատես են եղել։

Սկզբում Սաբու գյուղում ընդունված սովորույթ է եղել, որ մի կին մի քանի մարդու հետ ապրի, բայց Իրանից եկել է աղանդի մեծը և հայտարարել, որ մար-

գարեն այլևս նման ծես չի ընդունում։ Այդ վաղուց է եղել, թեկուզ հիմա էլ շատերը ասում են, որ Սարու գյուղում մոխրի տակ թաղված կրակի պես այդ ծեսը մխում է։

Կա մի գիշեր, երբ ոչ լուսնյակ է երևում երկնքում, ոչ աստղեր։ Ամպ է իջնում անտառների վրա, ձորակներով սողում մինչև գյուղը, ծխի պես փաթաթում տուն ու մարագ։ Այդ գիշեր ամպի հետ գազաններն էլ անցնում են գյուղի փողոցներով։ Արջը թաթն է կոխում թրիքով ծեփած քթոցի մեջ, մեղրը լիզում, գայլը գառան դմակն է հոշոտում և ծծում տաք արյունը։ Շներն իզուր են կաղկանձում և թաքնվում դեզերի գլխին։

Այդ գիշեր Սարու գյուղի երեխաները գլուխները կոխում են բարձի տակ, ոմանք լաց են լինում։ Եթե լույս լիներ, Սարու գյուղի աղջիկներին ու կանանց կարելի էր տեսնել աղոթատան կտուրի վրա, իրար մոտ կանգնած, որպես գայլից խրտնած հոտ։

Ներսում խավարի մեջ մի քանի հոգի մեռելի վրա լացող կանանց պես աղիողորմ հեծկլտում են, արաբերեն բառեր ասում, աղոթքներ կարդում։ Ամեն մի երգից հետո մութի մեջ ձգվում են հարյուրավոր մազոտ ձեռքեր դեպի երդիկը, վերից մի կին ջուր է ձգում ներքև՝ հագի ջրից, գլխի շալը, գունավոր գոտին։ Աշխատում են ջուրը բռնել, և ում բաժին ընկավ շալն ու գոտին, աղոթքից հետո մինչև լուսաբաց շալի տերը իրն է։ Գիշերով անտառ են գնում, լուսնյակ չկա, ոչ էլ աստղալույս։

Ամպը բամբակի վերմակ է հնօրյա աղանդի համար...

## 2

Կար ժամանակ, երբ Արաքսի ափին կազակ սպան էր պահակապետ։ Եվ երբ գետի մյուս ափին երևում էր ոտից մինչև գլուխ կանաչ հագած սեյիդը, այս ափին Սարու գյուղի չքավորներն առաջուց տեսած էին լինում պահակապետին։

Սեյիդն անցնում էր սահմանը, նրա մետաքս զգեստի փեշերին Արաքսը պղտոր կաթիլներ էր ցողում, երբ ձին ոտները թիակներ շինած ճեղքում էր գետը։ Կազակը քթի տակ ժպտալով նայում էր այդ տեսարանին։ Հենց այդ նույն գիշեր Սարու գյուղի տված փողը նա պիտի վերածեր օղու բազմաթիվ շշերի։

Երբ Արաքսը ջուր էր ցայտում մարգարեի ժառանգի փեշերին, իսկ ձիավորները արաբերեն աղոթք էին կարդում, Սաբու գյուղում մանկամարդ մի աղջիկ տորքի առաջ գորգ էր գործում։ Բարակ ծամեր ուներ աղջիկը, ծամերի ծայրից զանգուլակներ կար կախ։

Աղջիկը գլուխը աջ ու ձախ էր դարձնում, դեղնած մատներով բռնում գունավոր թելերից և ճարպիկ շարժումով թելը թելին հագցնում, հանգույցներ անում կտրած թելերը, ապա երկար սանրով կոփում հանգույցներին։ Ասես սարդն էր ոստայն հյուսում տորքի վրա։

Դարսվում էին իրար վրա հանգույցները, նախշեր էր ստացվում, տերևներ, նռան ճյուղեր, տերևի կողքին երկու թև, որ աղջկան երգող թռչուն էր թվում։ Ամեն անգամ, երբ սանրով զարկում էր հյուսածին, շարժվում էին գույնզգույն կծիկները, զրնգում էին ծամերի ծայրից կախ արած զանգուլակները։

Թվում էր, թե տորքի վրա սպիտակ քաթան է փռած, նիհար մի աղջիկ իր գլխից նախշեր է հորինում, մատներով նկարում։ Եվ ամեն նախշ աղջկա մի միտքն էր, թաքուն պահած միտքը, որի մասին Սաբու գյուղում ոչ ոք չպիտի իմանար։

Երբ ձիավորներն անցան փողոցով, շները հաչեցին կանաչ աբայի վրա։ Աղջիկը գլուխը թեքեց, սեյիդը տեսավ խալին էլ, տորքի առաջ նստած աղջկան էլ։ Նրան թվաց, թե աղջիկն էլ գունավոր մի նախշ է խալու վրա։

Այդ տարին էլ եղավ մթին գիշեր, Սաբուն թաղվեց անտառի մեջ։ Եվ երբ մութ սենյակում աղոթքի առաջին երգը դադարեց, կանաչ աբայի երկու թևը ձգվեցին

վեր, դեպի երդիկ։ Կանայք հրում էին ջահել մի աղջկա, մութի մեջ մի քանի ձեռքեր մաշկեցին աղջկա կարճլիկ դեյրան, թեթև փետուրի պես դեյրան ընկավ կանաչ ձեռքերի վրա։ Ծամերի զանգուլակներն իզուր զրնգացին։ Այդ գիշեր էլ գայլը գառան տաք արյուն խմեց։ Եվ երբ անտառում աղջիկը ճչաց, բնի մեջ քնած մի միրհավ զարթնեց, տեղը փոխեց։ Ծիծեռնակի թևի պես սև միրուքավոր մարդիկ բռնում էին մեկը՝ գլխի շալ, մյուսը՝ ծոպավոր գոտի։

Առավոտյան սեյիդը նոր պատգամներ կարդաց։ Նրա ամեն մի խոսքը անգիր օրենքի պես էր Սաբուի համար, և բարձր պատիվ՝ միտաքս փեշերը համբուրելը։ Եվ այն, ինչ հայտնեց նա աղջկա ծնողներին, նույնպես մարգարեի պատգամ համարվեց։

Հարկավոր էր խալին ավարտել, որովհետև խալին պիտի կախվեր սեյիդի տան պատից, աղջիկը պիտի պառկեր խալու մոտ։ Խալու թելի մնացած կտորի նախշերը խառնիխուռն դուրս եկան։ Գույները տեղ-տեղ վառ էին, ասես հրդեհվում էին գույները, տեղ-տեղ ավերված, գորշ։ Աղջկա մատները դողում էին, երբ գունավոր կծիկներից էր բռնում։

Անտառում գիշերով հրեշ դուրս եկավ, բրդոտ մի արջ տրորեց աղջկան, սիրտը վախից թպրտաց, որսկան շան բերանն ընկած լորի պես, հետո հանգավ։ Եվ հոր տնից որպես հիշողություն աղջկա հետ պիտի մնար գունավոր խալին։

Շները մի անգամ էլ հաչեցին, երբ նույն ձիերը գլուխները դեպի հարավ թեքեցին։ Ձիու վրա փռված էր խալին, վրան՝ աղջիկը։ Տեսավ պարապ մնացած տորքը, մորը, խալու նախշերի վրա արցունքներ թափվեցին։

Արաքսը հիմա կաթիլներ չի ցայտում կանաչ աբայի փեշերին։ Անտառների մեջ Սաբուն դեռ մնում է։ Սև միրուքավոր մարդիկ գերաններ են կացնահատ անում և արջի հետ հավասար վայրի տանձ ժողովում։

*Մյուս ափին Իրանի լերկ ապառաժներն են, արևից խանձված տափարակներ։ Գյուղերը կանաչ օազների պես են երևում, ժայռերից կախված պարտեզներ, բարակ առուներ են հոսում պարտեզների միջով և ավազ խառնում Արաքսի պղտոր ջրին։*

*Վերին գյուղում մի պառավ կին առվի ջրում մաշված խալի ու կարպետ լվանալիս, ձեռքը ճակատին դրած, նայում է հեռուն, ուր անտառների մեջ պահված է հայրենի Սարուն։*

*Խունացած գորգի նախշերը առվի ջրում հանկարծ պայծառանում են, և պառավին այնպես է թվում, թե ծամերի ծայրին զանգուլակներ են կախ։*

# ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն բարձր բուրգերն են երևում։ Հեռվից ավերակներ չեն երևում, այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, փոց են ապարանքի երկաթե դռները, մեկը աշտարակի գլխից ձայն պիտի տա զառիվայրով բարձրացողին։

Իսկ երբ քամին գզրարի պես ցրում է ամպերը, ծվեններ է անում, հալածում և ձորերում հալում ամպի բարդան դեզերը, պարսպի վրա երևում են—մացառներ, խոնարհված է աշտարակի գլուխը, տեղ-տեղ պարիսպները կիսով չափ հողի տակ։ Ոչինչ փայտեղեն, և ոչ մի երկաթյա դուռ, ոչ մի պահակ։

Լռություն կա Կաքավաբերդի գագաթին, Բասուտա գետն է ձորում ռռնում, քերում ափերի քարերը և ողորկում կապույտ որձաքարը։ Վերևից գետը սպիտակ քաթանի պես է թվում, ասես սպիտակ փրփուրի տակ ռռնում են հազար գամփռ և կրծում քարե շղթաները։ Դրա համար էլ նեղ հունի մեջ աղմկում է Բասուտա գետը։

Պարիսպների գլխին բույն են դրել ցին ու անգղ՝ կողովների չափ բներում։ Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն են լսում, կռնչյունով աղմկում են, թռչում բներից, պտույտներ անում բերդի գլխին։ Գորշ գույն ունեն անգղն ու ցինը, կտուցները հնօրյա թուրի

պես կեռ, մագիլները՝ սրածայր նիզակներ, փետուրները որպես պողպատե զրահ։

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն։ Քարերի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ։ Արևից տաքանում են քարերը, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը քարին հենում։ Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակի օրորալը ճոճք է թվում, աշխարհը ծիրանագույն բուրաստան։

Ներքև, ձորում, Բասուտա գետի մյուս ափին, քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ։ Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ձգվում կապույտ երիզի պես և վերևում հալվում ամպերի մեջ։ Շոգ կեսօրին գյուղից աքլորը կանչում է, ծոր տալիս որպես բայաթի, աքլորի կանչի հետ պառավ մի շինական, աչքերը ջրակալած, տան ստվերում հորանջում է, ձեռնափայտով ավազի վրա նշաններ գծում, ավերում, նշանների հետ էլ փորփորում գլխով անցածը, մի դեպքից մյուսին թռնում, ժայռից ժայռ ցատկող քարայծի պես։

Գյուղում էլ, բերդի գլխին էլ, ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի հազարավոր տերևներն են, իրար նման։ Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը։ Գետը նույնպես էր աղմկում առաջ, ինչպես հիմա, գյուղի գլխին անանց անտառներ տեսավ, երբ առաջին անգամ գյուղի ծայրին հասավ։ Պապն էլ է ապրել նույն քարի գլխին, ինչպես ինքը։

Եվ դեռ քանի՜ սերունդ պիտի ապրի Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքներ պիտի փռեն ցախերի վրա, եղեգնով պատեն վրանները և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվի ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը տանեն պահելու Կաքավաբերդի լանջերին, պարկը պանրով լցնեն ու ձմռան օրերին կորեկ հացի հետ ուտեն այծի պանիր։

* * *

Արև մի կեսօր Կաքավաբերդի զառիվայրն ի վեր բարձրանում էին երեք ձիավոր։ Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց էլ երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդ են, առաջին անգամ են բարձրանում Կաքավաբերդ։

Երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ նրանք պինդ բռնել էին ձիերի բաշից, համարյա թե կուացել՝ հավասարակշիռ մնալու,— երրորդ ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ, մոտիվը նույնքան միլամաղձոտ ու հուսահատ, որքան ամայի ձորը, զառիվայրի բարակ կածանը, հեռավոր գյուղը։

Բերդի գլխին նստած ամպը վարագույրի պես մեկ ետ էր քաշվում, երևում էին պարիսպները, մեկ էլ ծածկվում։ Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում։ Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքեր իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ, ավերից դարձող համհարզները ճոճում էին նիզակները։ Ակնոցների արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին գրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս, լսում ձիերի դոփյունը։ Ի՞նչ դժվար էր նրա համար զառիվայրը, և ի՞նչքան հեշտ երբեմնի տերերը մագլցում էին այդ նույն կածանով։

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը։ Նա հին կածանն էր փնտրում և չէր տեսնում վրանների առաջ մոխրում խաղացող կիսամերկ երեխաներին, այծերին, որոնք զարմանքից վեր ու վար էին անում գլուխները, մորուսները շարժում։

Ցետրե գլխարկով երկրորդ ձիավորը հնություններ չէր որոնում Կաքավաբերդի գլխին։ Նրա ամբողջ հարըստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը։ Հերիք էր աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի

անկյուն, մամռապատ մի քար, որպեսզի թղթի վրա մատիտի վարժ շարժումով նկարեր այն, ինչ տեսնում էին նրա աչքերը։

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ։

Վրաններին երբ հասան, շները հարձակվեցին ձիավորների վրա։ Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց։ Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաչելով մոտենում էին ձիերին, պոչի մազերից քաշում։ Երրորդ ձիավորն իզուր էր աջ ու ձախ մտրակներով փորձում շներին հեռացնել։ Շները հաչոցով ուղեկից եղան ձիավորներին մինչև բերդի պարիսպների մոտ, հետո իրար հետ խաղալով վերադարձան։

Կաքավաբերդի քարերը ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ։ Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, ինչ-որ գրում, ոտքով հողի փլվածքը փորում, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը։ Բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և ի՜նչքան բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում քարի վրա տեսավ փորագիր խոսքեր։

Երրորդ ձիավորը, որ ձիերի սանձերն արձակել ու պարսպի մոտ նստած ծխում էր, երրորդ ձիավորը հնագետի կանչից վեր թռավ։ Նրան թվաց, թե օձը խայթեց ականոցավոր մարդուն։

Ֆետրե գլխարկով մարդը նկարեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը, պատերի հետքերը։ Բերդի մուտքը նկարելիս մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից անգղը կռնչյունով թևին տվավ, թռավ բնից, պտույտներ արեց բերդի գլխին։ Նրա ձայնին մյուսներն էլ հավաքվեցին, պտույտներ արին։

Ձիերը անգղների կռնչոցից վախեցած խլշեցին ականջները, իրար մոտեցան։ Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի տապա-

նը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը։ Աչքերն անգղների պտույտի հետ էին, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ։ Ի՞նչ ահեղ թափ կար նրանց պտույտում։ Մի պահ մատիտը ձեռքին մնաց, և չնկատեց, թե ինչպես ֆետրե գլխարկը սահեց մազերի վրայից, ընկավ քարին։

Վրաններից մի մարդ, մանգաղը գոտում խրած, գլուխը կեղտոտ թաշկինակով փաթաթած, մահակին հենվելով բարձրացավ բերդի կածանով, մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին։ Մարդը տեսավ ակնոցավորին՝ ընկած մի քար տեղահան անելիս։ Եվ երբ պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը նախ հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին կարասի մեջ թաղած ոսկի գանձեր կան։

Հնձվորը միտք արեց, ուսը քորեց, ետ դարձավ մյուս կածանով դեպի ձորը՝ կորեկի արտը հնձելու։ Ճանապարհին ինքն իրեն խոսելով գնաց։ Ի՞նչ կլիներ, եթե ինքը գանձը գտներ։ Քանի՞ անգամ է նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը։ Եթե իմանար, ամենից շուտ կարդար այն գիրքը, որի մեջ գրված է կարասի գանձերի մասին։ Գանձերը լինեին արխալուղի պատռտած գրպանում, քանի՜ կով կառներ։

Միտք էր անում հնձվորը, մեկ էլ հանկարծ նկատեց, որ կորեկի արտի կողքին է։ Չուխան շպրտեց, չուխայի հետ էլ մտքերը, մանգաղով գրկեց մի կապ կորեկ ու կտրեց։

Բերդի քարերի մոտ ալպիական մանուշակ էր բուսել, ծաղիկը ծիրանի գույն։ Հնագետը չէր տեսնում ոչ մանուշակ և ոչ էլ խոտ։ Նրա կոշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ։

Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկա ոչինչ կենդանի և ոչ մի բզեզ։ Նա պոկոտում էր քարերին փաթաթված քաղեղը, փայտի ծայրով արմա-

տախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում, սրբում։

Հուզմունքից ընդհատ էր նրա շնչառությունը, և ֆետրե գլխարկով մարդուն այնպես էր թվում, թե նրա շնչից են չորանում ծաղիկ ու խոտ, նրա մատները մորթում են մանուշակներին, ցողունը կաքավի կարմիր ոտ, ծաղիկների ծիրանագույն բաժակները դեն շպրտում, որպես մորթած կաքավի գլուխ։

Երբ նա նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնագետի համար, տետրի նոր երեսի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում կողովի չափ ցինի բույնը, պարսպի ոտների տակ ալպիական մանուշակներ։

* * *

Կեսօրից անց նրանք իջան բերդից։ Հնագետը իջնելուց առաջ մի անգամ էլ պտույտ տվավ բերդի չորս կողմը, տետրում մի բան էլ նշանակեց և ապա արագ քայլերով հասավ ձիերին։

Այս անգամ ամենից առաջ գնում էր երրորդ ձիավորը։ Եթե հնագետի գլխում Բակուր իշխանն էր և մատենագրի մագաղաթը, ֆետրե գլխարկի տակ մանուշակներ, մամռապատ քար և Բասուտա գետի խուլ աղմուկը, երրորդ ձիավորի աչքի առաջ թարմ լավաշներ էին, պանիր ու մածուն։

Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն արձակեց, սանձով կապեց ձիերի ոտքը, ներս մտավ վրանի նեղլիկ դռնից։ Քաղցած ձիերն ագահությամբ դունչերը կոխեցին թարմ կանաչի մեջ։

Վրանի մուտքի մոտ, օջախի կողքին փոքրիկ մի տղա մոխրի մեջ սունկ էր խորովում։ Անծանոթ մարդկանց ներս գալը նրան զարմացրեց։ Չիմացավ՝ սո՞ւնկը թողնի կրակի վրա , վազի մո՞ր ետևից, թե՞ սունկն էլ հետը տանի։ Երբ վրանի մոտ լսեց մոր բոբիկ ոտքերի

ձայնը, զգեստի խշշոցը, տղան տիրտ առավ, խորոված մի սունկ հանեց մոխրից, դրեց օջախի քարին։

Մայրը ներս մտավ, գլխի շորը մի քիչ էլ իջեցրեց աչքերի վրա, մոտեցավ և վրանի անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրերին։

Պահակը հնագետի պայուսակից կոնսերվ հանեց։

— Մենք սոված ենք, քույրիկ։ Թե մածուն ունես, տուր, համ էլ թեյ գցիր։ Շաքար ունենք...— ասաց նա։

Կոնսերվի սպիտակ տուփին ի տես հնագետը զգաց քաղց, հիշեց, որ առավոտյան կերածն է։ Մի վայրկյան կոնսերվը նրա մտքում ետ վանեց բերդի պատկերը։ Երբ կինը պղնձե ամաններով մածուն ու պանիր բերեց, ակնոցների տակից նրա աչքերը ամանին ընկան։ Ուտում էր մածուն և մտածում, թե որ դարից են մնացել մածնի պղնձե ամանները։

Կինը մոտեցավ օջախին, տղայի սունկերը դեն դրեց, կռացավ ու փչեց մխացող աթարներին։ Նրա գլխի շորը ետ ընկավ, ֆետրե գլխարկով մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը, աչքերը։

Եվ նրա հայացքը մի վայրկյան սևեռած մնաց մխացող օջախին, մոխրի մոտ չոքած կնոջ։ Ո՞րտեղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր, սպիտակ ճակատ, մուգ մանիշակագույն աչքեր։ Երբ կինը վեր կացավ, եռոտանի կասկարան բերեց օջախի վրա դնելու, ծալքի տակից հանեց ծուխից սևացած թեյամանը, նկարիչը շատ մոտ տեսավ նրա աչքերը, ունքերի վրա, մազերի ծայրին մոխրի փոշի։

Ինչքա՜ն շատ ժամանակ էր անցել այն օրից։ Եվ մի՞թե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույն շրթունքները, վերինը մի քիչ հաստ։ Կաքավաբերդի կնոջ դեմքն արևը մի քիչ այրել էր։ Բայց աչքերը նույնն էին, ինչ որ ուներ մի ուրիշ կին, դարձյալ բարակ մեջքով, բարձրահասակ։

Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս,

տարագ շարժումներով։ Եվ ամեն անգամ երբ նա կռանում էր, բարձրանում կամ բոբիկ ոտքերով քայլում խարի վրայով, զրնգում էին թևերի արծաթագույն սուրմանները, խաղողի հատիկների չափ փոքրիկ զանգուլակների ձայն հանում։ Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին մինչև ցեխից ու ցրտից ճաքճքած նրբանները։

Այն կինն էլ ուներ խշխշան շորեր, գորշ գույնի վերարկու էր հագնում, սև թավիշե գլխարկ, որի երկար քողը նարնջագույն գլուխ ուներ։ Հեռու էր, շա՜տ հեռու։ Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է այն ծովին, որի ափին, ավազի վրա նստել էին մի օր վերարկուով կինը և նկարիչը։

Պահակը կոնսերվի երկրորդը տուփը բաց արեց։ Հնագետը սփռոցից ու պղնձե ամաններից գլուխը չէր բարձրացնում։ Տղան սունկը կերավ և դարան մտած կատվի պես աչքերը տնկեց կոնսերվի փայլուն տուփին, սպասելով, որ դատարկեն։ Պահակը տեսավ նրա հայացքը, հասկացավ ցանկությունը և կոնսերվի տուփը, միջին մի քիչ ապուխտած միս, մեկնեց տղային։

Տղան տուփը թափահարեց, վրանի առաջ պառկած շունը կուլ տվավ ապուխտած միսը, լեզվով քիմքերը լիզեց։ Դատարկ տուփը ձեռքին տղան դուրս թռավ վրանից, մյուսներին ցույց տալու սպիտակ թիթեղյա տուփը, որ չտես նորություն էր Կաքավաբերդի բարձունքներում։

Կինը նստել էր օջախի մոտ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը, նայում տաքացած ջրին։ Խառնում էր կրակը, աթարներն իրար մոտ քաշում, և երբ ծուխն ամպի պես բարձրանում էր, դուրս գալիս կտուրի թաղիքի միջով, եղեգնյա պատերի արանքով, կինը ձեռքը ճակատին էր բռնում, աչքերը մոխից պահելու համար։

Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակից պարզ երևում էին ծունկերը, մուգ-մանիշակագույն աչքերով քրմուհի էր թվում՝

եռոտանու առաջ նստած, աթարի ծխի շարժումները գուշակող։ Կապույտ երիզի պես ծուխը ձգվում էր վեր, հալվում օդի ոլորտում, ասես մի անտես ձեռք վերից քաշում է մետաքս թելերի մի խուրձ, իլիկին փաթաթում։

Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աթարի առաջ։ Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տարուբեր էր լինում, հազար լեզու կովի պես ափերի կրաքարերը լիզում որպես աղաքար։ Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում, տառեր գծում, հետո ավերում։

Ինքը ձեռքին չոր ճյուղ ուներ. ջարդում էր, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու ետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին և չոր ճղան մանրիկ փշուրները։ Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը լայնարձակ մի ծով թվաց, և սիրտը խառնվեց ծովին։

Հետո ուրիշ օրեր եկան։ Այնքան պատահական եղավ ճամփաբաժանը և այնպես պարզ։ Մտքի առաջ մնացին միայն մի զույգ մանիշակագույն աչքեր, գորշ գույնի վերարկու, հովանոցի ծայրը, որով կինը խոստումներն էր գրում ավազի վրա և ավերում։

Թեյամանում ջուրը պլտաց, կափարիչը ձայն հանեց։ Կինը կողովից պնակներ հանեց, մեջքը բարակ ծաղկավոր բաժակներ, սփռոցի վրա թեյ շարեց։ Երբ կռացավ սփռոցի վրա, թիկունքին ընկած ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վեր կրծքի վրա։ Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ և սպիտակ պարանոց, որի բարակ մորթու տակ երևում էին կապույտ թելերի պես երակները։

Տղան ներս վազեց, դատարկ տուփը ձեռին։ Մի խումբ մանուկներ վրանի դռնից զարմանքով նայում էին խսրի վրա նստոտած հյուրերին։ Որքան մեծ եղավ տղայի ուրախությունը, երբ նա երկրորդ տուփն ստացավ։ Այս անգամ նա դուրս չվազեց, նստեց խսրի վրա, մայրը նրա

համար թեյ լցրեց, իսկ ֆետրե գլխարկով մարդը շաքարի մի մեծ կտոր գցեց տղայի բաժակի մեջ։

Տղան զարմացավ, և, երբ շաքարից պղպջակներ ելան, բարձրացան թեյի երես, տղան մատը կոխեց բաժակի մեջ՝ շաքարը բերանը դնելու։ Թեկուզ տաք թեյն էլ վառեց մատը, բայց ծպտուն չհանեց։ Այնքան համեղ էր կիսահալ շաքարը...

Հնագետը ծիծաղեց քթի տակ, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից։ Կինը նորից ջուր լցրեց թեյամանի մեջ, և երբ երեխան շրթունքները ծպպացնելով բաժակը մեկնեց նրան, մայրը ժպտաց։

Ֆետրե գլխարկով մարդը տեսավ այդ ժպիտը։ Ինչքան ծանոթ էր... Երևի նման դեմք ունեցող մարդիկ նույն կերպ են ժպտում։ Վերին հաստ շրթունքը աննկատ թրթռաց, ժպտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպտից աչքերում փայլ երևաց։

Հանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի, քանդակների նկարներ, թերթեց և ցինի բունը պարսպի գլխին և սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին։ Ծանոթ էին դիմագծերը, միտքն այնքա՞ն էր աշխատել նրա վրա տարիներ առաջ։ Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը։

Տղան միայն տեսավ մոր նկարը սպիտակ թղթի վրա։ Նրան այնպես թվաց, թե մարդու գրպանում սպիտակ թղթեր չեն, այլ բարակ հայելի, որի մեջ արտացոլում է ամեն ինչ, ինչպես աղբյուրի ջրի մեջ։

Պահակը հագեցավ, հաց ու պանրից կշտացավ և ակնոցավոր մարդը։ Քիչ հետո ձիերը վրանի առաջ էին, երրորդ ձիավորը սանձերն էր հագցնում ձիերի գլխին, պրնդացնում թամբի կաշե կապերը։ Եվ երբ պայուսակն էլ կապեց թամբին, մոտեցավ մնաս բարև ասելու օջախի մոտ նստած կնոջ։ Կինը տեղից վեր կացավ, գլխի շորն

արագ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երրորդ ձիավորի մեկնած ձեռքը։ Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին։ Այս անգամ կինը մյուս ձեռքը կրծքին դրավ և խոնարհեց գլուխը։ Ֆետրե գլխարկով մարդը բոկոտն տղային արծաթ դրամ տվեց, շոյեց նրա մազերը։

Ձիերն իջնում էին Կաքավաբերդի կածանով դեպի Բասուտա ձորը։ Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք հոգի, որոնցից ամեն մեկը իր միտքն էր փաթաթում փիլիկին, իր նախշը հյուսում։ Կածանի երկու կողքին էլ ալպիական մանուշակ կար։ Ֆետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքին, որի վրա նկարած էր եռոտանին, զրնգան սուրմաներով Կաքավաբերդի քրմուհին։

Ձիերի սմբակների տակից քարեր էին թռնում, քարերն աղմուկով գլորվում էին զառիվայրի թեք լանջով։ Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, անխոս, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ, կիսավեր պարիսպներ, նրանց հիմքի մոտ ալպիական ծիրանագույն մանուշակ...

* * *

Իրիկնացավ։

Կածանով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գոտկում խրած պողպատե փայլուն մանգաղը։ Բեզարած էր մարդը, կարճ ցողունով կորեկ էր հնձել օրնիբուն, մեջքը ցավում էր կռանալուց։ Դրա համար էլ նա կածանով դանդաղ էր բարձրանում, մահակը դեմ տալիս քարին, կանգնում, մի քիչ շունչ առնում։ Կորացած ծնկները դողում էին, երբ կանգ էր առնում։

Հնձվորը ցերեկվա մարդն էր, որին պահակը պատմեց բերդի գանձերի մասին։ Արտում նա տեսավ ձիավորներին. նրան թվաց, թե ձիու թամբին կապած պայուսակում հենց այն գանձերն են, որ հարյուր տարիներ

մնացել են կարասում, քարի տակ, որի վրա շարունակ նստել է, երբ այծ ու ոչխար էր պահում բերդի ավերակներում։

Այդ միտքն էր նրան զայրացրել, թե հոգնածությունը,—մարդը գազազած էր, թոնթորում էր, որպես իրիկնապահին անտառում որսի դուրս եկող սոված արջ։ Հենց արջի էլ նման էր։ Արջն էլ շատ անգամ կածանով բարձրանալիս ետի ոտքերի վրա է կանգնում, կաղնու մի չոր ճյուղ դնում ուսին և թաթերով ճյուղը բռնում։ Հնձվորը փառան մորթե փափախ ուներ գլխին, բրդե չոխա էր հագին, մազոտ էր դեմքը, ձեռքերը որպես արջի թաթ։

Մարդը հասավ առաջին վրանին, ոտով զարկեց շանը, որ պոչը ծռմռտելով մոտեցել էր տիրոջ ոտները հոտոտելու, գոտուց մանգաղը հանեց, շպրտեց մի անկյուն, փայտը դրեց օջախի մոտ և լուռ նստեց խսրի վրա։

Օջախը մխում էր. թեյամանում եռում էր տաք թեյը։ Երկու կտոր շաքար դրած էր ծալքատեղում, բարձի վրա։ Հնձվորը դեռ տրեխները չէր հանել և թափ չէր տվել կորեկի փնջերը գուլպաներից, երբ սուրմեքի զրնգոցով, երկար զգեստի ծալքերն իրար քսելով ներս մտավ կինը, կնոջ փեշից կախված տղան, կոնսերվի երկու դատարկ տուփ ձեռին։

Տղան հոր մոտ վազեց՝ տուփերը ցույց տալու։ Հայրը հասկացավ, որ ձիավորները իր խսրի վրա են նստել, աչքն ընկավ ծալքատեղի երկու կտոր շաքարին։ Տղան ցույց տվեց և արծաթ դրամը, որ տվել էր իրեն բարի մի հյուր։

Հայրը ոտքով դեն հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ։ Գլորվեցին տուփերը, տղան էլ գլորվեց, ապա ցատկեց, վազեց տուփերի ետևից։ Երկու տուփը ձեռքին էր, երբ հանկարծ սկսեց լալ, փաթաթվել մոր փեշին։

Հայրը ձայնը քաղցրացրեց, տղային կանչեց, խնդրեց նրա արծաթ դրամը և խոստացավ նրան շոր առնել։ Որ-

պես մարտ ամսվա օր, ձյունամրրիկից հետո արև երեվաց կամարի վրա, արցունքները սրբելով ժպիտն երեսին մոտեցավ հորը, արծաթը ձեռքին։ Եվ բառերն իրար կապելով տղան պատմեց, թե հյուրի ծոցում կար մի փայլուն իր, մեջը սպիտակ, հայելու պես թերթեր։ Արծաթ տվող մարդը մոր պատկերը հանեց թերթի վրա, ծոցը դրեց։

Կայծակի պես խանդոտ միտքը փայլատակեց գառան մորթե գդակի տակ։ Աչքերը լայնացան, մարդը գունատվեց որպես թան։ Մայրը տղային նայեց, հրդեհվեց դեմքը, հայրը կնոջ դեմքի կարմիրը տեսավ։

Այդ ամենը կատարվեց մի վայրկյանում։ Հաջորդ վայրկյանը գազազած արջի կատաղի ոստյուն տեսավ, մազոտ երկու ձեռք ձգվեցին դռան մոտ դրած մահակին, մահակն անասելի թափով իջավ կնոջ թիկունքին։

Սուրմեքը զրնգացին, ցնցվեցին կնոջ երկար ծամերը։ Եռոտանու վրա դրած թեյամանը մի քիչ թեքվեց։ Մահակի ջարդված ծայրը թռավ ծալքի վրա։ Կինը չծըպտաց, ցավից ծռմռվեց, ձեռքը թիկունքին տարավ, դուրս ելավ վրանի դռանը զսպված հեկեկալու, զգեստի փեշերով արցունքները սրբելու։

Տղան, դատարկ տուփերը գրկին, դուրս ելավ, պահվեց մոր փեշի տակ։ Արջը մի քիչ էլ թոնթորաց, թքոտեց, գարու հացը կերավ, փափախը գլխի տակ դրեց ու քնեց խսրի վրա։

Հետո լռություն իջավ Կաքավաբերդի գլխին։ Օջախներում հանգավ կրակը, գիշերը խավար բերեց։ Շները կուչ եկան վրանների առաջ, ոչխարը պառկեց կանաչի վրա։ Գիշերը ցողի բյուրեղ կաթիլներ շարեց ոչխարի բրդի վրա։

Խսրի վրա պառկեց և կինը, փայտի հարվածի կապույտ հետքերը թիկունքից մինչև ուս, որպես լայն ժապավեն։

Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես

*սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների ծայրերին էլ ամպը ջրի կաթիլներ շարեց։ Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա։*

*Բուրմունքից արբեցած մի թրթուր քնել էր առէջքների մեջ, և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...*

# ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

*Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր, որի ներքևի մասը գետնից մի մետրաչափ բարձր՝ կոկիկ տաշած էր, քարե աթոռի պես սարքած։*

*Կնստեր իր տեղը, երկու ձեռքով հոնի կարմիր մահակի կոթից բռնած, գլուխը մի կողմի վրա կթեքեր և, եթե զրուցընկեր չունենար, ինքն իրեն կխոսեր ու քթի տակ կժպտար։ Նրա կապույտ աչքերը ժպտալիս փոքրանում էին, և աչքի տակ մանրիկ, բարակ կնճիռները ծալվեծալ շարվում էին կողք-կողքի, ակոսների պես։*

*Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր։ Կովերը արոտից էին տուն գալիս, եզները՝ վարից, հոգնած ու դանդաղ քայլերով՝ պառավ ատամների տակ ծամելով ճամփի եզրից փրցրած մի փունջ խոտ։ Ու նստած տեղից մեկ էլ տեսար մեկին ու մեկին մի բան պատվիրեց.*

*— Էգուց Ալա եզը վարի չտանեք,— կամ թե՝*

*— Մի տեսեք էն քուռակն ինչի՞ յա կաղում։*

*Հետո պիտի վեր կենար, ցրված խոտը հոնի փայտով հավաքեր, մոտեցներ Ալա եզին կամ կաղ քուռակի ոտքը շոյեր։*

*Մութն ընկնելուց ժամի զանգերը ծլնգում էին։ Առաջին ծլնգոցին փափախը պիտի հաներ, խաչակնքեր, թեկուզ այդ պահին Ալա եզան կողքին էլ կանգնած լի-*

ներ։ Եվ խաչակնքելիս հոնի փայտը ձեռքից բաց չէր թողնում։

Մենք բոլորս էլ գիտեինք, որ խաչակնքելուց հետո պապս ձայն է տալու.

— Նազու աղջիկ, դռները բաց արա...

Նազու աղջիկը տատս էր, ծերությունից մի քիչ կռացած, ականջի մեկն էլ խուլ։ Եվ Նազու աղջիկը դռնակը պիտի բաց աներ. դռնակը պիտի ճռռար, ծլվլտար, ինչպես սայլի անիվը սառույցի վրա։

Դռան շեմքին նստելը մի ուրիշ նպատակ էլ ուներ։ Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջովն էր անցնում։ Ուրիշ գյուղից եկողը առաջին անգամ մեր տան կողքով պիտի գնար։ Անց ու դարձ անողները, հանդից տուն դարձողները՝ որը մի խուրձ խոտ շալակին, որը՝ լուծի կապերն ուսին ու բեզարած եզներն առաջն արած, որը՝ էշի վրա, ոտները գետնին քսելով,— մի խոսքով, իրիկնապահին ով անցներ փողոցով, պապիս «բարի իրիկուն» պիտի տար։ Պապս էլ նրանց պիտի հարցներ, թե վարը պրծա՞ն կամ թե սարի այս ինչ խոտն ինչպես է։ Ու մենք զարմանում էինք, թե որտեղից գիտի նա՝ ով ուր է գնացել և ինչի։ Մի անծանոթ մարդ եթե անցներ փողոցով, պապս հանկարծ մեզնից մեկն ու մեկին կասեր.

— Հենց էր ղարիբ մարդ լիներ... Մի վազի, կանչի, թող մեր տունը գա...

Վազում էինք և մինչև չիմանայինք, թե ո՞ւմ հյուրն է, նրան բաց չէինք թողնում։

— Պապի, էն ղարիբը Իսաջանենց ղոնաղն էր, նրանց տուն գնաց։

Եվ պապս պիտի միտք աներ, թե նորեկը Իսաջանենց որի՞ հյուրն է, ե՞րբ է եղել նրանց տանը, ի՞նչ ծանոթություն կա նրանց մեջ։ Եթե կասկածեր, կնոջը պիտի հարցներ.

— Նազու աղջիկ, հերու՞ էր թե մեկէլ տարին, էն որ Իսաջանենց Ադամի տղան սարուշենցի բրուտին բերեց։ Էն ղարիբը նմանեցնում էր սարուշենցի բրուտին։

Տատս, եթե խուլ ականջն էր դարձրել նրա կողմը, պիտի գլուխը թեքեր, մի անգամ «հը՞» ասեր ու նոր միայն իր կարծիքը հայտներ սարուշենցի ղարիբի մասին։

Տավարը տեղաց անելուց հետո, եթե ամառվա գիշեր էր, պապս տնքտնքալով պիտի բարձրանար թախտը, արխալուղի կոճակներն արձակեր ու մի սպիտակ շոր գլխին կապեր, արտում շող ցերեկին հունձ անողի պես։ Հողե գավաթի մեջ սառած սպասից մի քանի գդալ ուտելուց հետո պիտի թիկներ բարձի վրա ու քներ։

Առավոտ ծեգին ամենից կանուխ նա էր վեր կենում։ Քաղցր քնի մեջ, մանավանդ երբ լուսաբացի զովն էլ մի քիչ պաղեցնում էր օդը և քունն ավելի անուշ դարձնում, պապիս ձայնն էինք լսում.

— Դե՛ վե՛ր եք, հրեն է՜, արևը դուրս եկավ հա…

Մենք ավելի ներս էինք շուլալվում, կոլոլվում վերմակի մեջ ու սկսում սուտ խռմփացնել։ Ու մեկ էլ մի ձեռք վերմակի տակ խտղտացնում էր մեր ոտքերը, ներբանի կաշին, ծլոնգ էինք անում, նստում անկողնում ու ճմռում քնատ աչքերը։

— Դե հա, վե՛ր եք… տղամարդն էլ էդքան քնի… հրես ձմեռը էնքան արջաքուն տա՜ք…— ասում էր ու հոնի փայտի ծայրով դիպչում մեր մարմնի բաց մասերին, փշտացնում, ինքն էլ մեզ հետ ծիծաղում։

— Վե՛ր եք, ես ձեր ժամանակ կարգին տղամարդ էի… Հրես ձեր պսակվելու վախտը մոտենում ա հա, վե՛ր եք…

Մենք այն ժամանակ 8—10 տարեկան երեխաներ էինք։ Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չջոկեինք, թե ով ում տրեխն է հագնում, պիտի կռվեինք իրար հետ, թե ով է եզներր տանելու, ո՞վ է վարի գնալու։ Բայց, իհարկե, ավելորդ էր մեր խոսքն ու զրույցը, որովհետև պապս արդեն որոշել էր աշխատանքը, իսկ Նազու աղջիկը մեր պաշարը կապել էր, շարել բակում անկած ցից փայտերի վրա։

Ու ամեն արևածագի սկսում էր գյուղի առօրյան՝ չափած, հաշված։

Ձմեռն էր լավ։ Աշխատանք քիչ կար, տավարը փոմումն էր, խոտն ու դարմանը մարագում։ Պապս էլ դարպասի քարին չէր նստում, ոչ էլ պառկում էր բակում՝ թախտի վրա։ Նրա փոխարեն, արև օրերին, հավերը, սառած գետինը կտուց տալով, մոտենում էին, վիզները երկարում, թռչում ու շարվում թախտի վրա, գլուխները ծածկում թևի տակ։

Պապս քուրսու մոտից չէր հեռանում։ Շատ քիչ անգամ կմտներ գոմը, իսկ գյուղի հրապարակը գնալու սովորությունը չուներ։ Կնստեր, մի շալ էլ ուսին կգցեր և կմտմտար, եթե մենակ լիներ, կժպտար քթի տակ՝ բարի և անչար մարդու ժպիտով։

Ձմեռ օրերին հյուրն անպակաս էր։ Ով էլ լիներ, ինչ գործով էլ լիներ, մի օրվա փոխարեն, երկու-երեք օր էր պահում։ Ու եթե հեռու գյուղերից մեկն ու մեկը, իր վաղեմի ծանոթը կամ թուրք «քիրվան» նրան այցի գար, մեր տունը դառնում էր հարսանքատուն։ Նստում էին մինչև աքլորականչ, հին անցած օրերից պատմում, իրար հարցնում, մեռած մարդկանց վերհիշում, վաղուց անցած դեպքեր ու անթիվ անհամար պատմություն։

Մենք էլ նստում էինք այնքան, մինչև քունը հաղթեր, գլուխներս կախ էինք անում քուրսու թախտին, մինչև տատը բոթեր մեզ, զարթնեցներ ու վեր կենայինք, որպեսզի, վերմակի տակ պառկած, մի քիչ էլ լսեինք նրանց զրույցը։

Սնոտիապաշտ ու նահապետական վարք ու բարքով մարդ էր։ Այնքա՜ն անգամ էր պատմել իր գլխով անցածը մեզ ու հյուրերին։ Ու հենց խոսքի կծիկը ետ տար թե չէ, մենք պիտի իմանայինք, թե որն է պատմում՝ այն, ինչ եղավ գյուղի ներքևի ավերակ մատուռում, երբ ջահել ժամանակ ընկերների հետ գրազ էր բռնել, գիշերով գնացել, որ փափախը դնի մատուռի ներսում, ու մի աղվես

դուս էր թռել, վախից գյուղի ճանապարհը կորցրել ու մինչև լույս բոստաններում պտույտ էր տվել. կամ այն, թե ինչպես սարում գայլերը հարձակվել են ձիու երամակի վրա, ինքը պահվել էր ձիերի արանքում, մի կերպ ազատվել։ Եվ պապս պատմությունն անելուց միշտ՝ կամ ջահել օրերին երանի պիտի տար, կամ էլ առանձին շեշտ տալով խոսքին, հայտներ, թե՝

— Աշխարքս միշտ կմնա, սաս մարդը սևերես չլինի...

Աշխարհից, չար ու բարուց անտեղյակ միամիտ երեխաներ էինք։ Ու մեզ համար ամենից հզորն ու սարսափելին գյուղի գզիրն էր։ Տանուտերը, որ հարևան գյուղում էր նստում, մեր գյուղի գործերը գզիր Իբիշի ձեռքով էր տեսնում։ Մեկ էլ կտնկվեր կտուրին կամ կկռանար երդիկի վրա ու կկանչեր.

— Քյոխվից հրաման կա... տերության խարջը երեք օրում ուզում են։ Ձտվողին՝ Սիբիր...

Եթե հրամանը հասարակ էլ լիներ, Իբիշը սպառնալիքով պիտի վերջացներ խոսքը։ Ոչ մի խնդիր, ոչ մի աղերս չէր կարող կակղեցնել նրա սիրտը։

— Ուզում ես թագավորի հողից ինձ քոչացնե՞ս... Չէ, չէ, բեր։ Ես ի՞նչ պատասխան պիտի տամ քյոխվին։ Ուզում ես խալխի մեջ ինձ խայտառակ անի՞։ Չէ, չէ, բեր, չբերողին՝ Սիբիր...

Գզիր Իբիշը մեզ սարսափելի ու հզոր էր թվում, որովհետև պապս, որ մեր աչքում անվախ մարդ էր, գայլի հետ կռիվ կացած,— պապս էլ էր խեղճանում, երբ գզիրը կանչում էր երդիկից կամ թե մոտենում էր դարպասի քարին նստած պապին, շատ չոր ու կոշտ կերպով հայտնում տանուտերի հրամանը։

— Աղ ու հացը քոռացնի աչքերդ, Իբիշ...

Պապս էր ասում, երբ գզիրը հեռանում էր այնքան, որ էլ նրա խոսքը չէր լսի։

Եվ ամեն անգամ, երբ գար ու գնար Իբիշը, պապս

տնքալ էր սկսում, դեմքի ժպիտը կորչում էր, մոռանում էր մեզ էլ, տունն էլ, եզն ու կովն էլ։ Ամեն մի այցից հետո նա խոր թառանչով պիտի ասեր.

— Ախ, Եգոր, մի էստեղից դուրս գայիր... Յարաբ, ա՞չք ա լինելու քեզ տեսնեմ։

Այդ որ ասեր, մենք էլ էինք տխրում, թեկուզ մեզանից ոչ ոք չէր տեսել մեր քեռի Եգորին, որին տարիներ առաջ բռնել ու աքսորել էին։ Մինչև վերջն էլ հայտնի չեղավ, թե ինչու են նրան բռնել։ Գիտեին միայն, որ զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է, իբրև թե հրացան քաշել։ Մեզ համար մութ էր այդ պատմությունը, չէինք տեսել ոչ նրան, ոչ էլ գիտեինք այն երկիրը, որտեղ, ինչպես պապս էր ասում, «ամառ, ձմեռ՝ ձյուն է»։ Իր որդու մասին պապս չէր ուզում խոսել մեզ հետ, և եթե ձմռան գիշերներին, քուրսու մոտ նստած, հյուրերից մեկն ու մեկը պատահմամբ հիշեցներ նրան այդ մասին, անզգույշ հարց տար, պապս «էհ» պիտի աներ, ուսերը թոթվեր և մի քիչ լուռ մնալուց հետո այլ զրույց աներ։

Այդ դեպքը մի ստվեր էր մեր լույս օրերի վրա։ Մեծերը տխրում էին, տատս սանդուղում պահած որդու գուլպաներին նայելիս, աչքերից ծլլացնում էր, գլուխն երերում։ Եվ եթե հարցնեինք նրան, թե հեռու՞ է նրա տեղը, պատասխանի փոխարեն պիտի կռանար, համբուրեր մեզ, մի-մի բան էլ ձեռքներիս դներ, մեզ ուրիշ խոսք ասեր։

Սակայն ամիսներով մոռացվում էր այդ պատմությունը։ Վար ու ցանքի ետևից էինք ընկնում, լուսաբացից մինչև իրիկուն աշխատում էինք, և մեզ թվում էր, թե մեր տանը ոչինչ չի պատահել, ոչ ոք չի պակասել, ոչ մի հոգս չի ծանրացել մեր տան գլխին։

Բայց հերիք էր մի աննշան դեպք, որ պղտորեր պապիս սիրտը ու մեզ էլ դարձներ մոլոր։ Գալիս էին հյուր, ու հանկարծ գալիս էր և մեկը, որի հետ քեռիս ընկերություն էր արել,— միասին ոչխար են պահել կամ գնացել

են անտառից գերան բերելու։ Եվ քեռուս հին ընկերը այդ գիշեր մեր տունը պիտի դարձներ ազի տուն, պապս ընկրճված ձայնով պիտի խոսեր նրա հետ, ավելի շատ հառաչեր, իսկ տատս նրան պիտի հյուրասիրեր առանձին գորովով և ամանը կերակրով լցնելիս, պիտի արցունքը կաթեցներ տաք ապուրի մեջ։

Սարսափելին անհայտությունն էր և այն հակասական լուրերը, որ մերթ ընդ մերթ լսվում էին հարևան գյուղերում և որպես փսփսուկ հասնում պապիս կամ տատիս։ Մերթ լսում էինք, որ նրան տեսնող է եղել, այս ինչ քաղաքումն է ապրում ուրիշի անունով, պապս ձի էր նստում, գնում լուրը ստուգելու և հուսահատ վերադառնում։ Մերթ պատմում էին, թե սահմանն անցել է, գնացել Իրանի հողը, իբր թե նամակ է ուղարկում, բայց նամակը բռնում են, տեղ չեն հասցնում։

Սոսկալին այդ անհայտությունն էր, որովհետև եթե ստույգ իմացվեր, որ նա էլ չկա, լաց կլինեին, ու մորմոքը կհալվեր տարիների հետ։ Անթեղված կրակ էր նրանց վիշտը, որ մերթ բոցավառվում էր, որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմրին տվող տկար կայծ։

Պատահում էր, որ ձմռան գիշերին մեզնից մեկն ու մեկը հանկարծ զարթնում ու գլուխը հանում էր վերմակի տակից։ Այդ գիշերներին շատ անգամ էինք տեսնում տատիս ու պապիս քուրսու մոտ նստած՝ ննջելիս։ Տատս հանկարծ սթափվում էր, աչքերը տրորում, մոտեցնում բրնձով լի ամանը, մի բուռ բրինձ թափում քուրսու կարպետին, մատով մեկ—մեկ բրինձն ընտրում։ Խոսում էին իրար հետ, համարյա ամեն գիշեր նույն ձևով, նույն հանգով։

— Բա ի՞նչ ասաց։

— Կտեսնեմ,— ասում է,— շատ ա դժվար...

— Հը՞։

— Դժվար ա, դժվար...

— Տվածնիս աչքերն առնի, բա հիմա՞ ինչ ա ուզում...

— Ճարներս ի՞նչ, պիտի տանք... Տեսնենք մի խաբար կբերի՞...

Ու մենք հասկանում էինք, թե կա մի մարդ, որ եթե մտքում դնի, ստույգ լուր կբերի Եգոր քեռուց։ Ո՞վ էր այդ մարդը, մենք չգիտեինք։ Հայտնի էր, որ երբեմն գզիր Իբիշը մեր տնից յուղ ու պանիր էր տանում նրա համար։ Մի անգամ էլ երկու ոչխար տարավ ու հենց գոմի շեմքին երդվեց, որ անպատճառ կասի նրան։ Գզիրը միջնորդ էր, ոչխարը քշեց Հարևան գյուղը, որտեղ ապրում էր տանուտերը, և որի տանը շատ հաճախ լինում էր պրիստավը։

Աշնան մի օր պապս, որ առավոտ կանուխ ձի էր նստել ու գնացել Հարևան գյուղը, ուրախ-ուրախ ձիուց իջավ, սանձը շտապով հանեց ձիու գլխից, ու մինչև ձին ներս կմտներ գոմի դռնով, շտապեց մեզ հայտնելու, որ տանուտերից հաստատ տեղեկացել է, որ քեռիս ողջ է և գտնվում է այսինչ քաղաքում։

— Անունն ի՞նչ էր էն անտերի... Տես է, հուշ եմ ասել։ Լեզվիս պտկին էր, ամբողջ ճանապարհին ասում էի, որ մտահան չանեմ։

Հարկավոր էր խնդիր ուղարկել ամենաբարձր տեղը՝ հենց իրեն՝ ռուսաց թագավորին, ինչպես ասել էր տանուտերը։

Մեզ հեքիաթի պես էր թվում պապիս պատմածը։ Եվ մինչդեռ տատս ուրախությունից շփոթվել ու անվերջ աղ էր լցնում ապուրի մեջ և խառնում, մենք զարմանքով էինք նայում մեր կարճլիկ, մազը սպիտակված պապին, որի կապույտ աչքերը պայծառացել, վառվում էին հույսից, հրճվանքից։

Ինչպե՞ս է գնալու նամակը։

— Պապի, թագավորը նամակդ որ ստանա, ի՞նչ պիտի անի։

— Կկարդա, հրաման կտա պրիստավին, որ խուր-

ջուրով Եփրատին որտեղ որ է սաղ-սալամաթ հասցրեք իրեն հորը։

— Բա ո՞նց ա գնալու նամակը։

— Էհ, գուք հլա աշխարքի որտեղն եք։ Փոշտ կա, յասաուլ կա, պրիստավ կա։ Տանելու են, թագավորի ձեռքին դնեն։ Քյոխվան ասում էր, որ պտի լավ թղթի վրա գրել տաս, ղալամն էլ ոսկի պիտի լինի, թե չէ ընդունիլ չեն։

Ու մանկան վառ երևակայությամբ պարզ տեսնում էինք ոսկե գրիչը, որ պապիս խնդիրքն է գրում սպիտակ թղթի վրա, և խոսքերը պսպղին են տալիս, նամակը թռչումն իր թևով, սարերի վրայով հասցնում է ոսկի մի տուն, նամակը դնում է թագավորի ձեռքին։

Այդ իրիկուն տատս պանրի յողտ կտորները ջոկեց, լցրեց մի մոթու մեջ, բերանը պինդ կապեց։ Եվ երբ պապս պատվիրեց պոչը ծաղիկ երինջին առավոտ կանուխ լավ խոտ տալ, մենք հասկացանք, որ նա յուղ ու պանրի հետ քաղաք է տանելու և պոչը ծաղիկ երինջին, որ մեր բոլորի սիրելին էր, մեր աչքի լույսը։

Սակայն ոչ ոք չառարկեց։ Առավոտ կանուխ բոլորս ոտքի էինք, և մեզանից ամեն մեկն աշխատում էր մի քիչ էլ շոյել երինջի մեջքը, խոտի մեջ եղած չոր ծաղիկները ջոկել և տալ նրան։ Պապս ձիու թամքին կապեց յուղն ու պանիրը և երինջին առաջ արավ։ Դարպասից դուրս գալուց, երինջը ետ նայեց գոմի կիսաբաց դռնին ու բառաչեց։ Գոմից նրան ձայն տվեց պառավ Սոնա կովը։

Երբ ձին ու երինջը ծածկվեցին բոստանի պատերի ետև, ու միայն պապիս փափախն էր երևում, որ ասես սև կատվի պես վազում էր պատի վրայով, մի քիչ էլ կանգնեցինք ու մեկ-մեկ ներս մտանք։ Տատս սանդուղի առաջ կանգնել, հանում էր փուլպաները, կրծքին սեղմում, օրորվում, ասես գուլպաներ չէին, այլ որդու գլուխը։

Երկու օր հետո պապս վերադարձավ։ Միրզա-Դավի-

թին էր գրել տվել խնդիրքը ու տանուտերի օգնությամբ հանձնել փոստին: Պոչը ծաղիկ երինջն էլ էր գնացել, յուղն ու պանիրն էլ: Փոխարեն պապս բերել էր թղթի փոքրիկ մի կտոր, որ տվել էին նրան նամակ ընդունելուց հետո:

—Նազու աղջիկ, լավ տեղ դիր, աչքի լույսի պես պահիր: Պատասխանն էդ թղթովն ա գալու... Թե որ կը-րա՜վ...

Եվ փոքրիկ թուղթը, որ մի քանի կտորի մեջ փաթաթելուց հետո տատս դրեց սանդուղի մի անկյունում, մեզ համար դարձավ և ամենից թանկը, և երկյուղալին:

Ի՞նչ կար այդ փոքրիկ թղթի մեջ, ո՞ւր է մեր պոչը ծաղիկ երինջը, մորթեցի՞ն, թե բառաչում է ուրիշի գոմում: Միտք էինք անում այնքան, որ հոգնում էինք, քնում ու երազի մեջ տեսնում, որ երինջը խոտի տեղ թուղթ է ուտում ախոռում...

Մի ձմեռ անցավ, նամակի պատասխանը չեկավ: Ամբողջ գյուղը գիտեր այդ մասին, և պապս մի տեսակ պարծանքով էր ասում, որ ինքը ռուսաց թագավորին նամակ է գրել: Մեր տուն հյուր եկողներին նա պատմում էր՝ թե ինչպես է Միրզա-Դավիթը գրել:

— Է, մենք էլ ասենք ապրո՞ւմ ենք: Էնպես ղալամ ունի անիրավը... Ինձ որ տեսավ, երեսիս նայեց, թե Արություն ապեր, ուզում ես ասեմ, ինչի՞ ես եկել ինձ մոտ: Ասաց թե դու ուզում ես, որ թագավորին նամակ գրեմ Եգորի մասին: Մնացի չորացած: Վերջը գրքերը բաց արեց, կարդաց, կարդաց, մինը դրեց, մյուսը հանեց, օրենքը գտավ: Ոսկի ղալամը դրեց թղթի վրա... Մի զարմացք էր որ... Է՜դպես էլ գիր, է՜դպես էլ զորություն...

Լողն էլ իր հիացմունքն էր հայտնում Միրզա-Դավիթից և պատմում, թե ինչ հրաշք գործեր է կատարել նա:

— Նրա ղալամը քարին էլ դնես, քարը կճաքի...

Ձմեռն անցավ։ Ամենից անհամբերը մենք էինք։

— Պապի, բա պատասխանը ինչու չի գալիս...

— Այ որդիք, հենց իմանում եք, թե թագավորը ունի չունի էդ հոգսն ունի։ Կռիվ կա, ժողովուրդին կերակրել կա։ Օրը ես հազար ասեմ, դու երկու հազար իմացի, էդքան նամակ ու խնդիրք ա ստանում։ Հալբաթ մի օր էլ մերը ձեռքը կհասնի... Բա էս թուղթը ինչի՞ համար են տվել... Էդպես էլ վրան գրած ա.— Արություն Խուրշուդովից նամակ ռուսաց թագավորի վրա։

Գարունը եկավ։ Մի օր էլ գզիր Իբիշը ձայն տվավ, որ հարևան գյուղում ժողով կա։

— Թազա պրիստավ են դրել, այ ժողովուրդ, թազա քյոխվա են ընտրելու, տունը մի մարդ։ Չեկողին՝ Սիբիր։

Տանուտերի ընտրության պապս չգնաց։ Ալա եզը էդ օրը տնքում էր, քթածակերից փսլինքախառն արյուն էր գալիս։ Պապս հաճախ գոմն էր մտնում, նայում եզան, պատվիրում, որ տաք մոխիր բերեն կամ էլ ժամերով շոյում էր մեջքը, փաղաքշական խոսքեր ասում։

Մի քանի օր անց, երբ հիվանդ եզը ոտքի էր կանգնել, ու ոտքերը զգուշությամբ փոխելով, հոտոտում էր գետինն ու բակի քարերը լիզում, պապս իր սովորական տեղում նստած, հոնի մահակին հենած, աչքը ճանապարհին էր, հանդից տուն դարձողներին։ Ու մեկ էլ երևաց գզիր Իբիշը, մոտեցավ ու ասաց.

— Թազա պրիստավը քեզ էգուց առավոտ կանչել ա։ Վախտով էնտեղ լինես։ Թե չէ... ասում են չար մարդ ա...

— Խեր լինի, Իբիշ...

— Հաստատ տեղեկություն չունեմ. ինձ միայն հրամայված ա էդպես...

— Ո՞վ ասեց քեզ։

— Թազա քյոխվեն, Մուքելանց Առստամը...

Պապս էլ ոչինչ չհարցրեց։ Իբիշը հեռացավ, լավ չէր, որ Առստամն է ասել։ Հին հաշիվ ունեն նա պապիս հետ։

— Ի՞նչ էր ասում էն բայղուշը,— հարցրեց տատս։

— Առստամը կանչել ա, Թազա քյոխվան։

— Հը՞.— պապս նորից կրկնեց։

— Պատասխան եկած չլինի՞,— ասաց տատս։

— Կարող ա, վախտն ա, եկած էլ չլինի, հրես որտեղ որ ա կհասնի։ Համա ասեց պրիստավն է կանչում... հը՞— դարձավ նա մեզ։ Մենք հաստատեցինք, որ Իբիշն այդպես էր ասել, և որպեսզի ավելի ստույգ իմանանք, պապս մեզ ուղարկեց Իբիշի մոտ մի անգամ էլ հարցնելու։ Իբիշը նախ թոնթորաց, թե չենք թողնում, որ հանգիստ հաց ուտի, ապա՝ բեղերը սղալելով՝ մեզ հայտնեց, որ պապիս կանչողը պրիստավն է, բայց ինքը հրամանը ստացել է Մուքելանց Առստամից։

— Հենց քու ասածն ա լինելու, Նազու աղջիկ,— ասաց պապս, մեզ լսելուց հետո։— Երևի պատասխանը եկել ա, կամ ո՞վ գիտի Թագավորի կողմից մի հարցմունք ունի։

Քնելուց առաջ պապս պատվիրեց ինձ առավոտյան ավելի կանուխ վեր կենալ։ Ես նրան պիտի ուղեկցեի, ձին պիտի պահեի, մինչև պապս ներկայանար պրիստավին։ Ուրախությունս անչափ էր։ Ես պիտի տեսնեի Հարևան գյուղը, պապիս Թարքին նստած ես պիտի բարձրանայի սարի գագաթը, որ մեր բակից անչափ հեռու էր երևում։ Վերջապես ես պիտի տեսնեի պրիստավին։ Այս մտքին անցնելիս, ուրախությունը տեղի էր տալիս կասկածի, երկյուղի։

Լուսաբացին տատիս մի անգամ ձայն տալուց իսկույն վեր թռա և արագ-արագ հագնվեցի։ Պապս բակում ձիու սանձն էր հագցնում։ Քիչ հետո երկուսով էլ նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք։

Գյուղից երբ մի քիչ հեռացանք, ինձ համար ամեն ինչ նոր էր և անծանոթ։ Հարցերիս վերջ չկար։ Ու դեռ մեկի պատասխանը չստացած, մյուսն էի տալիս, իսկ

պապս դողդոջ ձայնով պատասխանում էր, երբեմն կանչում ձիուն, սանձը ձգում, հենց որ ձիու ոտքը քարին էր դիպչում։

— Հրեն է՛, էն սպիտակ տունը, կտուրն էլ կարմիր,— ցույց տվավ պապս սարի գագաթից դեպի հովիտը,— պրիստավը էնտեղ ա նստում։

— Պապի, որ թագավորը գրած լինի թե իրավունք եմ տալիս, քեռիս քանի՞ օրում կգա։

— Մի աչքը ճպելում։ Թագավորի համար ի՞նչ։ Ուզենա մի օրում հազար ոչխար մորթել տա, կանի։

— Հազար ոչխա՛ր...

Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ էինք։ Ինչքան նորություն կար ինձ համար։ Փողոցները ավելի լայն էին, տներն ավելի սիրուն։ Փողոցում շատ ժողովուրդ կար։ Խանութների առաջ մարդիկ խռնվել էին իրար՝ յուղ էին ծախում, կով, բուրդ, մեկն իր ապրանքն էր գովում, մյուսը բարձրաձայն սակարկում էր գնորդի հետ։ Մի քանի հոգի բարևեցին պապիս։ Այդ ինձ ուրախություն պատճառեց։

—Տես ինչ պապի ունեմ, որ էս հեռու տեղումն էլ են նրան ճանաչում։

Սպիտակ տան առաջ իջանք, ձին քաշեցինք բակի ստվերը։ Սանդուղքի վրա նստոտել էին գյուղացիք՝ հայ, թուրք, ոմանք զրուցում էին իրար հետ, ոմանք պատի ստվերում պառկել էին, գլխատակին՝ աղլուխի մեջ փաթաթած պաշարը։ Պապս մոտեցավ, խառնվեց նրանց։ Մի րոպե ես նրան իմ աչքից կորցրեցի, սիրտս ահ ընկավ, և երբ տեսա նրա սև փափախը, կանչեցի՝

— Պա՛պի։

Ժպիտն երեսին մոտեցավ, պատվիրեց, որ ձիուն լավ նայեմ, չթողնեմ, որ մյուս ձիերին մոտենա։

— Քեզ քացի կտան, աչքդ վրան պահիր։ Թե որ պատասխան եկած լինի, քեզ համար խուրմա եմ առնելու։



409—30

Նրա խոսքը կիսատ մնաց. մեկը սանդուղքի գլխից կանչեց.

— Խուրշուդով Արությո՛ւն։

Տեսա, թե ինչպես պապս արագ քայլերով հասավ սանդուղքին. աստիճանների վրա նստած գյուղացիք տեղ տվին, որ անցնի, հետո պապիս սև փափախը ծածկվեց դռների ետև։

Ձիու սանձից պինդ բռնած, աչքս չէի հեռացնում փակ դռներից։ Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում փայլուն կոճակավոր մարդիկ, աստիճաններին նստոտած մարդկանցից ոմանք ոտքի էին կանգնում, խոնարհ գլուխ տալիս։ Իմ աչքին բոլորն էլ պրիստավ էին, ու ես չէի կարողանում ջոկել, որն է ամենից մեծավորը։

— Պրիստավն էն ա՞,— հարցրի ես կողքիս նստած մի ալևորից, որի գլխին փաթաթած կեղտոտ շորի վրա ու այտոսկրին արյան չորացած կաթիլներ կային։

— Էն ուրյադնիկ Վասոն ա. պրիստավը օթաղումն ա,— ասաց նա։ Ես էլ չհարցրի, թե ուրյադնիկը պրիստավի ի՞նչն է։ Սակայն հետաքրքրությունս ավելի սաստկացավ։ Եթե ուրյադնիկին այդքան շատ ոսկի կոճակ ուներ, ապա ինչեր կլինի պրիստավի հագին։ Իսկ թագավո՞րը...

Ինձ թվաց, թե սպիտակ տան ներսում մեկը գոռգոռում է, ոտքը գետնով տալիս։ Սանդուղքի քարին նստոտած մարդկանցից ոմանք իջան, կանգնեցին բակում։

Հանկարծ դռները բացվեցին, երևացին մի քանի ձեռքեր, իրար խառնված մարմիններ, անթիվ փայլուն կոճակներ և այդ ամենի մեջ պապիս սպիտակ գլուխը։

Ձեռքերն իջնում էին նրա գլխի վրա։

Ու մինչև ես բարձր ծկլտացի, ձիու սանձից բռնած վազեցի սանդուղքի կողմը, պապս արդեն թափ էր տալիս փեշերի փոշին։ Մեկը վերևից ոտքով շպրտեց նրա սև փափախը, ու դռները նորից փակեցին։

Մի քանի հոգի սիրտ արին, մոտեցան։ Սակայն ոչ ոք ծպտուն չհանեց։ Իսկ երբ բակում երևաց ուրյադնիկը, նրանք էլ հեռացան։ Պապս գլխարկը թափահարեց ու դարձավ ինձ՝

— Ձին պահի, բալաս... Պատասխանը դեռ չկա...

Բերանից արյուն էր գալիս։ Ես տեսա նրա ջարդված ատամը։ Եվ արյունը, թքի հետ խառնված, շրթունքների արանքից կաթում էր արխալուղի վրա։

Ձին մոտ քաշեցի։ Մեր գյուղացի մեկը օգնեց ինձ էլ, պապիս էլ ձին նստելու։

Անխոս ճանապարհ ընկանք...

Պապս գլուխը կախել, ձախ ձեռքով բռնել էր ծնոտը։ Ես պինդ գրկել էի նրան, գլուխս հենել մեջքին, լսում էի նրա ընդհատ շնչառությունը. պապս լալիս էր։

Գյուղից դուրս գալուց հանկարծ արցունքներս, ամպարտակը պատռած ջրի պես, դուրս թափվեցին։ Ես ավելի պինդ փաթաթվեցի նրա մեջքին։

Երեկոյան, երբ պապս, ատամների ցավից տնքալով, հազիվ լսելի պատմում էր, թե ինչ եղավ ներսում, երբ ներկայացավ պրիստավին, երբ Մուքելանց Առստամը նրա ականջին մի բան փսփսաց, պրիստավը փրփրեց, հայհոյեց և ոտքերը գետնին տալով, բռունցքները օդում ճոճելով, ասաց՝

— Ես քեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում թագավորին գանգատ ուղարկել պրիստավից...

Իզուր էր պապս փորձել թարգմանի միջոցով հասկանեցնել՝ թե ինքը ռուսաց թագավորին նամակ է գրել միայն իր որդու՝ Եզոր Խուրշուդովի մասին։

— Բերանս բաց արի թե չէ, մի անգամ խփեց. աչքերս սևացան, գլուխս շուռ եկավ։ Էլ միտս չի՝ թե ինչպես դուրս քցեցին... Առստամը ծիծաղում էր բեղի տակ...

Այն օրից շատ տարիներ են անցել։ Պապս վաղուց է

մեռել։ Գերեզմանի հողը նստել է, քարը թեք է ընկել, գրերը մամռոտել են։

Նրանից մի տարի հետո մեռավ և տատս։

Եվ մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է։

Երբ հիշում էր այն օրը, դեմքն այլայլվում էր, հույսն աղոտանում։ Սակայն այդ տևում էր միայն մի վայրկյան։ Հետո նորից էր հույս տալիս իրեն էլ, մեզ էլ.

— Նազու աղջիկ, ես մեռնում եմ։ Հուր հավիտյան պարտական մնաս, եթե պատասխանն ստանալիս չգաս, իմաց չտաս...— ասել էր նա մեռնելիս։

Նազու աղջիկն էլ դատարկ ձեռքով էր պառկել նրա կողքին։ Ու նրա մոտ թաղել էին և թղթի այն կտորը, որը՝ որպես թանկագին ավանդ՝ պառավը պահում էր սնդուկի մեջ։

Եվ երբեք էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Խուրշուդովը... Մնաց որպես անլուծելի առեղծված։

Շատ տարիներ են անցել։ Այդ անցյալը դարձել է հիշողություն, տարիները խունացրել են երբեմնի պայծառ գույները։ Ու մեկ-մեկ աչքիս առաջ է գալիս ծերունի պապս՝ աչքերը կապույտ, բարի, միամիտ ժպիտով։ Հանկարծ ավերվում է պատկերը, ժպիտը դառնում է ցավ... և ջարդված ատամներից ծորում է թքախառն արյունը...

# ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ

Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները։ Նրանք խրտնած փախչում են ձորերով սպիտակ ոչխարի պես։ Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնուսները։ Քարափոր տներից ծխի կապույտ ժապավենը ձգվում է դեպի վեր և մեղուզայի զգուշությամբ փաթաթվում խոնավ ժայռերին։ Լեռան ետևից բարձրանում է արևը, մամուռից կաթկթում է անձրևաջուրը։

Տերրասի ձևով բարձրանում են ժայռերը, մեկը մյուսից տձև, ահռելի։ Ահա մեկը՝ ռնգեղջյուրի նման մռութը հառել է մի ուրիշի՝ որ վիթխարի գորտի է նման։ Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես արձանացել է հեթանոս քուրմը։ Նրանից բարձր՝ քարե արծիվը ճիգ է անում թևերը թափահարելու ու չի կարողանում։

Այս մեր գյուղի, մեր Գյունեյ թաղի թիկունքն է, մի սարսափելի լաբիրինթ, որի խոր ձորերում բարակ առուն վշշում է փրփրած հեղեղի նման, ուր ծտի ոտքի տակից գլորված ավազն անգամ հազար արձագանք է տալիս։

Ավելի խորը Դրնգանն է, լռակյաց, հիվանդոտ և աղքատ մարդկանց բնակավայրը, ուր ամառվա երկար օրն էլ արևը հազիվ մի ժամ ջերմացնում է։ Տարին բոլոր այդ ձորերում ստվեր է, խոնավություն։ Մարդիկ դեռ ապրում են քարանձավներում, բարձրանում են քարե սանդուղքներով։ Ուռենու մամռոտած փչակով ժայռից

*ժայռ ջուր են բերել ու քարերի վրա բազմացրել ընկուզենի։ Երբ հորդ անձրև է լինում, ավազախառն հեղեղը ահագին վշշոցով իջնում է ժայռերից, աղմկում, քամուց ընկուզենիները խշշում են, ձգում են արմատները և կռանում հեղեղի վրա։*

*Մեր Գյումեյ Թաղը արևոտ է, գետի ափին։ Կամարակապ հինգ աչքանի կամուրջը ձգվում է գետի վրայով, այգիների մեջ է մտնում լայն ճանապարհը, բարձրանում ժայռի վրա փորած սանդուղքով և մտնում քաղաք։*

*Ջաղացները սահմանն են։ Իսկ նրանից դեն քաղաքն է... Սահմանագլխին բարձր ժայռի վրա նավթի պահեստն է, որի ստորոտով ջուրը շառաչելով իջնում է ջրաղացների վրա։*

*Արևը չորացնում է ժայռերի խոնավությունը։ Տաք ու փափուկ գոլորշի է բարձրանում աթարի դեզերից, բակերից ու բոստաններից։ Անա զիզին փեշերը շաղաթաթախ, ոտքերը ցեխոտ, դեռ կանաչ պամիդորները քաղում է, գոգը լցնում։ Շեմքի մոտ չոր խսրի վրա կատուն մեկնվել է ու տաքանում է։*

*Անա զիզին տնքտնքալով բարձրանում է քարի վրա և կանաչ պամիդորները շարում պատուհանի փայտերին, որ ավելի շուտ կարմրեն...*

* * *

*Յոթ-ութ տարեկան երկու մանուկ բարձր ժայռի գլխից նայում են Գյումեյ Թաղին, դողդողացող գոլորշուն։ Անա զիզու բոստանին, աթարի դեզերին... Դիմացը, ընդարձակ տափարակի վրա քաղաքն է։ Արևի տակ շողշողում են թիթեղյա կտուրները, կարծես տները ապակով են ծածկված։ Ու այդ սպիտակ փայլի մեջ ավելի պարզ երևում է «ռուսաց ժամի» ոսկեզօծ գմբեթն ու խաչը։ Արևի ճառագայթներն արտացոլում են այնպիսի փառահեղությամբ, կարծես գմբեթն ինքը առև է քաղաքի արծաթյա*

փայլի մեջ։ Իսկ ավելի հեռուն, արևմուտքում երևում է բարձր լեռնաշղթայի թևը։

Գետի ափին կանայք ցորեն են լվանում։ Նրանք կռանում են, ձեռքերը մինչև ուսերը քշտած հետ ու առաջ տանում ջրի մեջ։ Մի քանի կտուրների վրա թեղնին են տալիս դդումները, մի քանիսն էլ փռել են լաթերը, կարմիր, կանաչ։

Մանուկները միատեսակ են հագնված՝ երկուսն էլ տրեխավոր, չթե հասարակ շապիկ, արմունկները կարկատած։ Նրանցից մեկի գոտին ծոպավոր է, կարմիր, կապույտ փունջերով։

Աջ ու ձախ խոր ձորեր են... Ահա Գայլաբունի ձորը՝ հատակը մութ ու խոր. վշշոց է գալիս ներքևից՝ ջու՞ր է վազում, թե ժայռերի ճեղքերում խուլ քամին է շաչում։ Մանուկներից մեկը քար է շպրտում, կռանում են ականջ դնում... Քարը խուլ արձագանքով ընկնում է... Ու դարձյալ չեն կարողանում որոշել, ջուրն է վշշում, թե քամին։ Վայրի աղավնիների երամը փռռոցով դուրս է թռչում անդունդից և, քարի գլորվելուց վախեցած, ճախրում արևի տակ, ապա նորից իջնում մութը։ Մի քանի րոպե արևի տակ փայլփլում են նրանց սպիտակ թևերը։ Մանուկները լուռ լսում են, ու ձայն չի գալիս ներքևից։ Նրանք նայում են իրար և կամաց հարցնում.

— Ո՞ր կորան...

Վեր են կենում մանուկները, հացի կապոցն առնում և բարձրանում դեպի բրուտի քարանձավները։ Նեղ արահետ է, որ գոյացել է մարդկանց ոտքերի հետքից, ամբակների տրոփելուց։ Որտեղ քարը փափուկ է, գոյացել են խոռոչներ։ Կարծր տեղերը պսպղում են կապույտ փայլով։ Այդ արահետի կապերն են՝ սանդուղքաձև, որին հասնելուց ձին մռութը կռացնում է, նախ հոտոտում, զննում և ապա զգուշությամբ ոտը փոխում, ինչպես սառույցի վրա։ Չլինի թե ոտքը սահի։

Եվ ինչ շատ են այդ արահետները, որ կոշտացած

ձեռքի երակների նման ցանց են կապել քարափների, ժայռերի ու քերծերի վրա, ճյուղավորվում են, բաժանվում իրարից, մեկը մի ձոր է իջնում, մյուսը մի քարափ բարձրանում, մի տեղ լայնանում, մի տեղ բարակ առվի չափ նեղանում,— ու դարձյալ միանում իրար։

Կա ձմեռվա ճանապարհ, որ անցնում է արևկող տեղերով, վտակների ավազոտ հունով, կա գարնան ճանապարհ, կա այծի առապար, որ բանուկ է միայն մի ամիս, մինչև քարափի գլխին բուսած թփերի կանաչելը. և ինչ թեթևությամբ այծերը ժայռի ուղղաձիգ լանջով քայլում են, դունչը մեկնում մի ծաղկի, որ գլուխը կախել է անդունդի վրա։

Մանուկները գնում են միայն ծանոթ արահետով, որ տանում է դեպի բրուտի քարանձավները։ Իսկ մնացած արահետները նրանց համար և՛ երկյուղալի են, և՛ անծանոթ, որոնք ով գիտե, ինչ մութ ձորեր են մտնում. այ հենց այս մեկը, որ կեռմաններով իջնում է Հոմբաթի ձորը, այնտեղ, ուր ապրում է լիսեմնը, գանգուր մազերով այն կենդանին, որ գայլի նման չորեքթաթ է գնում, իսկ ծիծաղում է, ինչպես մարդը։

Ջինջ ուրախությունը պատում է ինձ, երբ գրում եմ այս տողերը ժայռերի մեջ կորած երկու մանուկների, գանգուր մազերով լիսեմնի և բրուտների քարանձավի մասին, որ մյուս ժայռերից տարբերվում է մարդու ձեռքով փորած խոռոչներով, որի կիսամութում, ոտքը ժայռի վրա կախած բրուտը պտտեցնում է փայտյա «չարխ»-ի կլոր տախտակը և հողագույն բազուկներով լպրծուն կավից սարքում կուժ ու գավաթ։

Ես և իմ ընկեր Անդոն հաց ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար։ Գոմավոր աղլուխի մեջ Անա զիզին փաթաթել է լավաշ, խորոված սիմինդր, սխտորով լոբի, մի քանի վարունգ և մի քիչ պանիր։

Բրուտի քարանձավը երկու մասից է՝ առաջինն ավելի ցածր, երկրորդը՝ բեմի չափ բարձր։ Առաջին մասում

«շարխն» է, ջրի կուժը և կավե ցեխը. երկրորդ մասում բերանն ի վայր շարված են դեռ չթրծած կժեր, կուլաներ, գավաթներ, դորակներ։ Քարանձավը դուռ չունի։ Դուրս գալուց բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վրա, վերևն էլ դնում ցաքի փուշ, որպեսզի ինչպես ինքն էր ասում «քամին խաղար» և չորացներ ամանները։

Նրա արհեստանոցի կողքի ժայռի բնական ճեղքը հարմարեցված է ամաններ թրծելու համար։ Այդպիսի հորեր ունեն այն հինգ-վեց բրուտները, որոնց արհեստանոցի դռները մութ անցքերի նման երևում են շատ հեռվից։

Բրուտներն այդտեղ են հավաքվել, որովհետև մոտիկ կարմիր կավի հանք կա, բացի այդ, ժայռի մոտով ամառ ձմեռ անցնում է բարակի հաստությամբ առվակ, որից առնում են և խմելու, և ցեխը կոխ տալու ջուր։

Հի՜ն, շատ հին են այդ արհեստանոցները։ Քանի սերունդ է աշխատել քարանձավի խոնավ կիսամթում և որդոց որդի ժառանգություն թողել կավը թրծելու արհեստը։

Տխրություն է պատում, երբ հիշում եմ ցնցոտիների մեջ պատած, ցեխոտ ոտքերով ու ձեռքերով այդ մարդկանց, որոնք օրն ի բուն քարերի մեջ, արևի լույսից զուրկ, կավի կույտերը կոկում էին, քերում, ճզմում բռունցքով, քրտինքը խառնում ցեխին, որ նրանց ոսկրացած մատների տակ ձև էր ստանում։

— Ա՜, արևնիդ կծեմ, եկա՜ք,— կանչում էր բրուտ Ավագը մեզ տեսնելիս։— Այ, ձեզ մատաղ, էս կողմը նստեք, էդտեղ փոս կա... էս ա, հա՜... էս կուժն էլ պրծնեմ, վեր եմ կենալու... Եգոր, հե՜յ, Եգո՜ր...—կանչում էր նա, և քարանձավը հազար բերան արձագանք էր տալիս, նույնիսկ թրծած կժերը մեղմ զրնգում էին։ Եգորը նրա հարևան բրուտն էր. ու կողքից լսվում էր Եգորի խուլ պատասխանը, կարծես գետնի տակից էր գալիս։

— Անդո, բալա, վազի չոլախին ասա, գա հաց ուտենք...

Ու կաղ ոտքը քաշ տալով, չոր ցեխի տախտակ դարձած գոգնոցը թխկթխկացնելով, գալիս էր Եզորը՝ մազերը գզգզված, այտին՝ ցեխի չորացած շիթ։

— Հը՞, բաջօղլի, Գյունեյ թաղը ո՞նց ա... Մեռնողն ա շատ, թե ապրողը...

Այդ դեղնած, սմքած մարդը, որի մազոտ կուրծքը միշտ բաց էր, կրծոսկրները դուրս ցցված,— մեզ հրեշի պես էր թվում, որին բանտարկել էին քարանձավում։ Թեև նա գյուղում տուն ու ընտանիք ուներ, բայց տարվա մեծ մասը դուրսն էր, արհեստանոցում, քար ու քարափի վրա։

—Անդո, աշխարհքում խելոքն է շատ, թե դուռակը...

— Դուռակը,— պատասխանում էր Անդոն։

—Ա՛յ մալադեց... Դե բաց արա, բաց արա տեսնենք Անա զիզին ինչ ա ղրկել... Պա՜հ, պա՜հ, խիա՜ր, կանաչ խիար...

Եվ առողջ ատամներով վարունգը երկու կես էր անում...

* * *

Ահա մեր գետը, մեր զուլալ գետը, որի հունի խիճերը մեկ մեկ կարելի է համարել։ Հորթերը վախվխելով, պոչը վեր պահած մտնում են ծանծաղուտները ջուր խմում և սարսռալով հետ գալիս։ Սառն է ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ է նստում, ամպի տակ սառույցի հաստ շերտեր։

Իսկ երբ վարարում է... Կոճղեր է բերանն առնում, գազազած շան նման շղթան կրծոտում, մեկ այս ափին տալիս, մեկ այն, նոր հուն ճեղքում, ավերում բոստան ու մարգագետին։ Շյուղի նման դողում է փայտյա հին կամուրջը, իսկ գետը ծանր քարերը երախն առած շպրտ-

տում է կամուրջի կամարներին, ապա զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի։

Գարնան մթնկա գիշերներին վշշոցը ահարկու սարսափ է տարածում գետափի տներում, Դրնգանի ձորերում։ Ջաղացները կանգնում են, վառած լապտերները ձեռքին մարդիկ գիշերը մոտենում են գետին՝ տեսնեն չի՞ բարակել։

Գյուղից ներքև, մի բարձր ժայռի մոտ, գետը արմունկ է կազմում ու կորչում ժայռերից պոկված հսկա քարերի արանքում։ Ամեն տարի հեղեղն այդ քարերի վրա կիտում է ջարդված ծառեր, կոճղեր, թփեր, թռչունների քանդված բներ։ Գետը հենց հասնում է քարի այդ մասին թե չէ, կորչում է, ջրերը շառաչյունով ներքև են թափվում և կատաղած, կապույտ փրփուր կտրած դուրս գալիս Նեղը։

Նեղը, Լաստի խութի կարանը... Բնական այդ մեծ քարայրում, որից սև ջուր է դուրս հոսում, իբրև թե ապրում է օձերի թագավորը, գոհարապատ թագը գլխին։ Անա զիզին ձեռքերը ծնկներին է խփում, թուխսամոր նման ձեռքերը տարածում մեզ վրա և լացակումած աղաչում, որ Նեղում չլողանանք, ոչ էլ կարանի մոտ, այլ բաց տեղերը, ուր գետը փռվում է և հանդարտ հոսում ավազուտի վրայով։

— Հա՛, Զիզի, հա... Մոտիկ տեղ ենք գնում...

Եվ Անդոն, սև, ծաղկատար երեսով իմ ընկերը, շըրթունքները հաստ ու կարմիր,—Անդոն նայում է ինձ, ձեռքով նշան անում դեպի ներքև, դեպի գետի արմունկը, փրփուր ջրվեժների մոտ։

Կուրծքը սպիտակ ջրածտերը քարից քար են թռչում, պոչը երերում, ծվծվում ու փնդակի պես իրենց նետում դեպի ջրի երեսին միանման պտույտ անող սև մժղուկների երամը։ Դիտում ենք և զարմանում, թե ինչպես են նրանք մտնում փրփուրի մեջ, կորչում ջրվեժի խոնավ փոշու շղարշում, նստում ցից քարերի ծայրին և անվախ

*ծվծվում, այնինչ շուրջը, գետը մոլտոցով քարերն է կըր-ծում։*

*— Անդո, ա՞յ էն մեկին կարաս խփես...*

*Անդոն կուզեկուզ մոտենում է, փոքրիկ խինճը ձեռ-քին։ Ու միշտ ջրածիտն ազատվում էր անակնկալ վտան-գից։*

*— Թե իմացար նրանք որտեղ են քնո՞ւմ...*

*— Նրանք չեն քնում...— Եվ Անդոն լեզվով ծպծպաց-նում է, գլուխն օրորում։*

*— Նրանք ջրի վրա ճոճք են շինում, մեջը քնում... Թե Ջիզին Թողար մԹնով գայի... Բոլորին էլ կբռնեի...*

*— Բա լիսեմնը...*

*— Լիսեմնը էստեղ չի գալիս... Նրա տեղը վերի ձորն է...*

*Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով է պատած։ Ջրի ցնցուղները թռչում են վերև, հասնում նրանց... Ու երբ ժայռի տակով կուզեկուզ անցնում ենք, մամուռից ջուրը արճիճի ծանրությամբ կաթում է մեր բաց գլխին։*

*— Էն ի՞նչ էր ֆշշաց...*

*— Սո՞ւս... օձ կլինի... էստեղ օձի բներ են։ Որտեղ քեզ կա, էնտեղ էլ օձը...*

*Ու սարսափով, վախից զգույշ կոխելով ցատկում ենք քարից քար, ընկնում գետափի բանուկ ճանա-պարհը։*

*—Անդո, քեղն ո՞վ է տնկում...*

*— Օձերը,— լրջությամբ և մեծի տոնով պատաս-խանում է ընկերս։ Եվ հավատը, որ օձը հողի մեջ Թաղում է քեղի սերմը, ինչպես կոտեմը մեր բոստանում, ու հետո ծլում է, մեծանում լայնեզր, ճեղքված տերևներով քեղը, Թփակալում և անանցանելի դառնում, և վտանգավոր, որովհետև նրա տերևի կպած տեղը մրմռում է, բշտիկներ են առաջանում.— այդ հավատը արմատանում է ինչ-պես Թուփը, որի մազիկները կպել են ծանր քարին։*

*— Անդո, էդ քեզ ով է ասել...*

— Չոլախ Եգորը...

— Բա նրան ով է ասել...

— Ո՞վ պիտի ասի... Իրա գլխից ա դուրս բերել։ Ինչքա՜ն բան գիտի էն չոլախը...

Ու Նեղին դեռ չհասած, շորերս մաշկում ենք, կռնատակին դրած վազում։ Իսկ Նեղն արդեն լիքն է արևից խանձված մանուկներով։

Անդոն քարից քցում է իրեն, օդի մեջ պտույտ անում և թաղվում փրփուրի ամենախոր տեղը... Ապա գորտի նման դուրս է թռչում և պառկում քարի վրա, արևի տակ։

— Անդո, կովը քեզ կուտի՞։

— Չէ... Կսատկի։

— Գոմե՞շը...

— Չէ՛։

— Ձի՞ն։

— Չէ՛... Միենակ ուղտը կուտի։

— Բա նա չի՞ սատկում։

— Չէ՛... Ուղտը ոչ օձից է վախում, ոչ քեղից։ Նրա թուքը որ երեսիդ կպչի կվառի։

— Ո՞վ ասեց էդ... Չոլա՞խը։

— Չէ, ուղտապանից եմ իմացել։

Ու նորից ցատկում է դեպի փրփուրը։

Մեր լողալուն չափ սահմանը կապտելն էր։ Խշրտոցով իրար էին կպչում մեր ատամները, և ինչքան էլ սեղմում էինք ծնոտներս, չէր հաջողվում ատամների կտկըտոցին վերջ տալ։ Արևը թեքվում էր, ստվեր էր ընկնում գետի վրա, ու սկսվում էր բարակ քամին։

— Է, հերիք... Դո՛ւրս եկ։

Վերադառնում ենք այգիների ճանապարհով։ Քար ենք քցում ա՛յս թթենուն, ա՛յն ընկուզենուն, ցանկապատի վրա կախ ընկած մոշն ենք ուտում, ամեն աղբյուրից ջուր խմում, մինչև հասնենք կամուրջի գլուխը։

— Անդո, Անա գիզին հրեն դռանը։

— Դու առաջ անցի... ձեր պատի տակ կսպասես, որ հարցնի, ասա Մեծ ապոր բաղում թութ էինք ուտում։

Իսկ Անա զիզին երեկոյան դեմ թոնթորալով մեր բակն էր գալիս ու մորս հանդիմանում։

— Ուր է էն փուչը, մի ձեռս ընկնի, ականջը մաշկահան անեմ... Թազա հալավը էնքան քար ու քոլի է քցել, թևը ճղել...

— Մերն էլ գոտին է կորցրել,— պատասխանում է մայրս։

Երկուսով անիծում են մեզ, պատմում մեր չարաճճի արարքները, թե առավոտից մինչև իրիկուն անհաց կորչում ենք այգիներում, «վախթուն անգամ մտնում ջուրը դուրս գալիս», և կապտած, սփրթնած վերադառնում։ Նրանք գանգատվում են մեզանից, իսկ Անդոն գլուխը պատից վեր է հանում և աչքով կանչում ինձ։

— Աղջի Մարիամ, ծեծած աղ չունե՞ս, մի բուռ տաս,— վերջացնում էր Անա զիզին։ Նրանք տուն էին մտնում, իսկ մենք ծլկվում էինք դեպի ձիթհանքը, ուր երեխաների իրիկվա խաղի վայրն էր։

* * *

Նստել եմ ծիրանի ծառի տակ, տաքանում եմ, ինչպես քարերը, ձյունից մրսած գետինը, ծառերը, որոնք մերկ են և արևի ջերմությունից թխանում են։

Մերկ ծառերի արանքից երևում է քաղաքը, գունավոր տները։ Քամին փոշի է բարձրացնում փողոցներում, և փոշու ամպի միջից, իբրև ասեղնագործ շղարշի, երևում են հողածածկ տները, այգիների մեջ ընկած ամառվա հնձաններ։

Քամին խշշացնում է չոր տերևները, որոնք դեղին ուլիկների նման վազվզում են, թռչում քարերի վրայով, իրար հրում, փաթաթվում ոտքերիս և քչփչում, ինչպես առվակը. գարո՞ւն է, գարո՞ւն է...

Քամին քաղաքի կողմից ձայներ է բերում... Լսելի է,

թե ինչպես տախտակներ են մեխում, թա՛խկ-թա՛խկ, հընչում է թիթեղագործի փայտե մուրճի խուլ ձայնը։ Մի շուն կաղկանձում է... Լսվում է մի զիլ ձայն՝ չգիտես սուլիչ էր, գնա՞ցք եկավ, թե գետափի հնձաններում աքլորը կանչեց։ Երկու կին լվացք են փռում կապույտ քարերի վրա... Նրանցից մեկը կռանում է, լվացքը ողողում գետի մեջ, իսկ մյուսը փռփռացող քամու առաջ պահում է կապույտ կարմիր լաթի կտորները, և ապա շարում...

Քամին խշշացնում է տերևները... Կարծես մի անտես ձեռք թերթում է գիրքը, ինչպես լուռ ընթերցանության ժամը դասարանում։

Դասարանում... Ծիրանի ծառը ոստերի ստվերն է նետել իմ տետրի վրա։ Եվ արևի մի շող փայլփլում է մատիտի գրաֆիտե ծայրին և արտացոլում եղունգի վրա։ Մեկը բոթում է թևս։

— Մեծատառ Ժ-ն ո՞նց է...

— Է՛, դե իրա նման։

— Մի շվի կտամ։

— Ա՛յ, տես,— և ցույց եմ տալիս տետրակիս ծայրը։

— Վերջի նստարա՛ն, լռությո՛ւն։— Սաստում է ամբիոնին կռթնած ուսուցիչը։ Ճռում են նրա կոշիկները. մենք թեպետ գլխահակ ենք վայելչագրության տետրակի վրա, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս։

Շատ է խանգարում ծիրանի ծառը, որ բուսել է մեր դասարանի միակ պատուհանի առաջ։ Եվ երբ քամին փչում է, ծառն աղմկում է, ճյուղերը քսում պատուհանին։ Նրա ստվերն ու արևի դեղին բծերը թրթռում են իմ տետրակի վրա, օրորվում, ինչպես ջրածտի ճոճքը։

— Վազիր, զանգը տուր,— ասում է ուսուցիչն օրապահին։

Եվ սկսվում է ամենից զվարթ, աղմկալի երկու րոպեն, մինչև զանգը հնչեր, և բակը վազեինք։ Այդ երկու րոպեում բոթում ենք իրար, կսմթում, փռթկացնում,—

*մի խոսքով ելք էր ստանում հոգնությունից և ակամա լռությունից փակված մեր մանկական չարաճճիությունը։*

*Այս շոր ծիրանու տակ նստած, գարնան այս պայծառ օրը, երբ ուրախ արևը մեղմել է պառավ քարերի մռայլությունն էլ, ես գրում եմ իմ մանկության ծիրանի ծառի մասին, իմ ընկեր Անդոյի մասին, և ինչպես դեղնած տերևները խշշալով փարվում են ոտքերիս և քչքչում, այնպես էլ երկու բարակ ձեռքեր ձգվում են դեպի ինձ և խնդրում.*

*— Ինձ էլ գրիր...*

*Նուշիկն է։ Վիզը բարակ, դեղնած աղջիկը։ Նրա սև աչքերը խոշոր են և տխուր։ Նա հաճախ է լաց լինում։ Հայր չունի, իսկ մայրը լվացք է անում ուրիշների դռանը։ Երբ ցրտում է կամ խոնավ է գետինը, Նուշիկը ներս է մտնում կապտած, մրսած մատները գոգնոցի տակ։ Երբեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է՝ հաց է, խորոված կարտոֆել։*

*Նուշիկը մեզ հետ է լինում։ Մնացած աղջիկները վախենում են Անդոյից և նրան ձեռք չեն տալիս։ Մի անգամ Մաշոն (Նրա հայրը միշտ նստում էր նավթի պահեստի առաջ և, երբ հաճախորդ չէր լինում, նարդի էր խաղում «ռուսների» հետ)— Մաշոն մի անգամ դասարանում Նուշիկին ասաց, որ նրա մայրը գողացել է լվացքից մի կտոր։ Նուշիկն արտասվեց։*

*— Մամաս գող չի...*

*Ուսուցիչը ներս մտավ։ Դասն սկսվեց... Իսկ Նուշիկի նիհար ուսերը ցնցվում էին։ Կուչ էր գալիս, կարծես մրսում էր։*

*— Մաշո,— ասաց դասամիջոցին Անդոն,— տեսնում ե՞ս էս դանակը։ Մաշոն տեսավ դանակը, վախից գունատվեց և արտասվելով վազեց ուսուցչի մոտ։*

*— Դու քեզ լավ չես պահում, Անտոն... Փողոցային երեխայի նման ես։*

*Ուսուցիչը խլեց դանակը, իսկ մյուս օրը Աննա զիզին եկավ մեր տուն։*

— Աղջի, մեր ղմալթին ձեր տանը չի՞...

«Ղմալթին»— կեսը ժանգոտ դանակ էր, ոսկորե կոթով։ Անա զիզին նրանով էր քաղհանում կոտեմի մարգը։

Անդոն Մաշոյին ցույց տվավ «ղմալթու» ծայրը և վախեցրեց։

— Թե վարժապետին ասել ե՞ս...

Եվ Մաշոն վարժապետին չասաց։ Անա զիզին գարնանը ղմալթին փոխարինեց սուր ոսկորով։

* * *

Երեկո է... Կապույտ ցոլք է բարձրանում սարերի սպիտակ գագաթներից։ Պարզ երևում է լեռնաշղթայի թեքը, ինչպես կապույտ կայլկի վրա յապոնական տուշի գիծը։

— Հորիզոն կոչվում է երկնքի և երկրի միացման գիծը...

Կրկնում եմ մտքիս մեջ այն, ինչ շատ տարիներ առաջ բարձրաձայն պատասխանում էի աշխարհագրության դասին։

—Դու ասա, Անտոն...

Անդոն կրկնում է...

— Նստի՛ր...

Ներս է մտնում ավագ ուսուցիչը։ Ոտքի ենք կանգնում։ Նա հայտարարում է, որ մինչև շաբաթվա վերջը թոշակ չմուծողը կհեռացվի դասարանից։ Ավագ ուսուցիչը գլուխը բարձրացնում է, նայում մեր կողմը։

Նա հեռանում է։ Կապույտ երկրագունդը պտտվում է աշխարհագրության դասատվի ձեռքին, և մենք խմբով կրկնում ենք։

— Երկրագունդը կլոր է՛...

Նուշիկը ուշանում է և «է»-ն ասում է առանձին՝ դողացող ձայնով։ Աղջիկները ծիծաղում են, Նուշիկը գլու-



409—31

խը խոնարհում է, իսկ վարժապետը քանոնը բարձրացնում է, քանոնի հետ բացվում են մեր բերանները, և մենք նորից կրկնում ենք, որ երկրագունդը կլոր է։

Երեկոն կապույտ է։ Ծուխը ծալվեծալ փաթաթվում է ժայռերին, ինչպես վայրի խաղողի որթը։ Ծխում է Դրնգանը, կրակները շարժվում են։ Այնտեղ մարդիկ իջնում են գետափի գոմերը։ Մի կով աղիողորմ բառաչում է... Բոլորը գիտեն, որ Նարգիզն է, որի հորթը քարովն է ընկել։ Կովը լիզում է հորթի խոտով լցրած մորթին և չի զգում անասնական ջերմություն։

— Անդո՛... բա թռչակը։

— Սպասի նանին վերջացնի։

Նանին կթում է Նարգիզը, աղաչում է նրան, հանգստացնում է, կարծես կովը հասկանում է նրա լեզուն։

— Նանի...

— Հե՛յ։

— Նանի բա թռչակն ուզում են։ Վարժապետն ասել է...

— Նանին քեզ մատաղ։ Նարգիզն էլ ցամաքել է, որ կաթ տանես ծախ։ Նանին ի՞նչ անի... Սպասի հրես հերդ կժերը տանի Գետերը։

Աշնանը բրուտները կուժ ու կարաս են տանում Գետերը և բերում են մի քիչ բրինձ, մի քիչ բուրդ։ Գետերը շատ հեռու է։ Ջոլախ Եգորը մեզ պատմել է, որ այնտեղ բսնում է բրինձ, բամբակ, թևավոր օձեր կան, ամեն քարի տակ սև կարիճ։

Երեկո է... Քաղաքի փողոցները լույս են։ Խանութներում շողշողում են պղնձի սամավարներ, ապակիներ, ափսեներ։ Անդոն հոգնել է։ Ձեռքին թաշկինակն է, միջին դեռ տաք ձվեր։ Վերջացել է վայելչագրության տետրերը... Իսկ ձվերը չեն առնում։

Հոգնած գնում է բարձր տների առաջով։ Մեծ, լուսավոր պատուհաններ են։ Նրանք էլ են շողշողում, ինչպես խանութները։ Այնտեղ ապրում են «ռուսներ», Մաշոն,

խանութի տերերը... Այս մեկը Ներսես բեյի տունն է։ Իսկ նրա կողքին պրիստավն է ապրում։ Շատ շներ ունի, բարակ, նիհար շներ, որոնք օրերով քնում են և թռչկոտում, երբ պրիստավը գնում է որսի։

— Այ տղա, ի՞նչ ես ծախում,— հարցնում է մի կին պատշգամբից։

— Ձո՛ւ։

— Մեզ պետք է, Անդո,— կանչում է մի ծանոթ ձայն։

Մաշոն է։ Աղջիկն իջնում է վերևից։ Դարպասի դուռը բացվում է։

— Էս իմ տյոտյայի տունն է...

— Քանի՞ ես տալիս ձվերը,— հարցնում է կինը։ Անդոն կարմրել է։ Նա չի ուզում, որ Մաշոն իմանա, թե ինքը ձու է ծախում, Անդոն չի ուզում, որ դասարանը խոսի։

Իսկ ուսուցիչը պահանջում է վայելչագրության տետրը։

— Ձուերը ծախու չեն,— կտրուկ ասում է Անդոն և գլուխը բարձր պահած գնում է դեպի կամուրջը, դեպի մեր արևոտ թաղը։

— Ես ուսումնարան չեմ գնա,— հայտնում է նա առավոտը։ Բայց գալիս է ինձ հետ։ Անա զիզին թախանձում է.

—Անդո, նանիկն քեզ մատաղ, դիմացի՛ր... Հրես Նարգիզը կաթ կտա...

* * *

Հայոց «ժամը»։

Սպիտակ կամարներ, ոսկեզօծ շրջանակների մեջ նկարներ։

Նուշիկի մայրը լալիս է... Մի քանի կանայք հեկեկում են, ինչպես անում են ուրիշի դագաղի վրա։

Մեր դասարանը երգում է տխուր երգեր, երկա՜ր, երկա՜ր...

Նուշիկի համար ենք երգում։ Աղջիկը ձեռքերը խա-

*չել է, ինչպես թևերը ծալում է սառած թռչունը։ Գլուխը մի քիչ թեքել է և հանգիստ քնել։ Երեսը առաջվա դեղինն է, բայց գլխավերևը կարմիր ծաղիկներ են, սպիտակ մոմեր։ Ծաղիկների կարմիրը խաղում է նրա դեմքին, երբ թրթռում են մոմի կրակները։*

*Նուշիկի դագաղը հասարակ տախտակ է։ Վարպետը լավ չի ռանդել,— մեխը երևում է։*

*Ոտքը կծակի,— մտածում եմ ես և տխուր երգում Նուշիկի համար։*

*Անդրոն չկա, նա չի եկել։*

*— Ես չե՛մ երգի... Չե՛մ ուզում։*

*— Դու քեզ անկարգ ես պահում, —բարկացավ ուսուցիչը։ Իսկ Անդրոն գրքերը լուռ հավաքեց։ Դասարանը սպասում էր։ Ուսուցիչը նորից պահանջեց, որ նա էլ միանա խմբին, որովհետև Անդրոն ամենալավ երգիչն է, նրա ձայնը զիլ է և քաղցր։*

*— Չեմ գա,— քթի տակ ասաց Անդրոն։*

*Ուսուցիչը դասացուցակը ամբիոնին խփեց և գնաց ուսուցչանոց։ Որտեղ որ է կգա ավագ ուսուցիչը։*

*— Անդրո՛...*

*— Ասացի չեմ գնա։ Դուք գնացեք։*

*Մտնում է «ավագը»։ Նա նրան անվանում է կամավոր, համառ, պնդում է, որ միանա խմբին։*

*— Դո՛ւրս կորիր այստեղից,—գոռում է ավագ ուսուցիչը։ Աղջիկներից մի քանիսը վախից գունատվում են։ Անդրոն հավաքել է գրքերը և գլուխը բարձր բռնած անցնում է նստարանների արանքով դեպի դուռը։*

*— Անպատկա՛ռ,— նրա հետևից ասում է «ավագը»։ Անդրոն դասարանի դուռը հետևից պինդ փակում է։*

*...Մենք ուղեկցում ենք դագաղը։ Փոքրիկ փոս է, ինչպես ծառի համար։ Դագաղն իջեցնում են։ Հեռանում ենք, մնում է մայրը, հարևան կանայք։*

*Գերեզմանատանը շատ մանուշակներ են բուսել։ Մենք մոռացել ենք Նուշիկին և փնջեր ենք կապում։ Պատի*

վրայով ներքև է իջնում Անդոն։ Աղջիկները նրանից փախչում են։ Անդոն մոտենում է ինձ։

— Ես է՛լ ուսումնարան չե՛մ գնա…

* * *

Քաղաքից շոսեն դուրս է գալիս, սլաքի նման ձըգվում, կամուրջի մոտ կեռ տալիս, ապա ոլոր մոլոր բարձրանում բարձր սարը։ Ու գնում է, գնում է շոսեն, ինչպես գետը, բազմաթիվ լեռնային արահետներ խառնվում են նրան, և ինչքան գնում է, այնքան շատ է ծեծված, այնքան հին է ճանապարհը, և բազմաթիվ բանակներ, ժողովուրդներ տրորել են ճանապարհը, անցել մեկը հյուսիս, մեկը հարավ։

— Բռնի էս ճանապարհը, գնա, գնա, ու չի վերջանա։ Աշխարհը մեծ է, աշխարհը ծայր չունի։

Բրուտ Ավագը ինձ հողե փարչ է տվել և հողի մարդու օրհնանք։

— Ծարավես, կխմես։ Կուռդ ղալար մնա…

Գիշերն անձրև է եկել, խոնավ է գետինը։ Կառքը փոշի չի հանում։

Ընկղմվում է Դրնգանը, քարերը ծածկում են մեր արևոտ թաղը, միայն գետափի տներն են երևում և ընկուզենիները։ Եվ ինչքան բարձրանում ենք, այնքան խոյանում է Ցից քարը։ Նրա տակն են բրուտների քարանձավները։

Երեկոյան հորթերն եկան, նրանց հետ հորթարած Անդոն։

— Գնում ե՞ս։

— Հա՛։

— Գնա՛։— Տխուր է Անդոն։ Հոգնել է, բայց չի գնում տուն։

— Էգուց հորթերին էն կուռը կտանեմ…

Կառքը բարձրանում է։ Սարի ետևը ամպ է նստել։ Մեր թաղը չի երևում, այնտեղ արև է։ Շուտով այս ամպը կիջնի սարի վրայով և կնստի ձորերի վրա։

Մեկը ամպի միջից վազում է, ձեռքով է անում, կանչում է։ Զարմացած կառապանը քաշում է ձիերի սանձը։ Կառքը կանգնել է։ Մենք դեռ քիչ ենք հեռացել։ Մեկ մեկ կարելի է հաշվել քաղաքի տները։

— Անդո՛,— և դուրս եմ թռչում կառքից։

Գյուղի երեխաները երբ հրաժեշտ են տալիս, ոչ համբուրում են իրար, ոչ ձեռք են սեղմում։ Նրանք նայում են իրար, ինչպես մունջ մարդիկ։ Հեռացողը հեռանում է, ով մնում է տեղը, նայում է նրա հետևից, մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը։

Կառապանը մեզ բաժանեց.

— Ճանապարհին կուտես,— և Անդոն իր տոպրակից հանում է բոված սիմինդր, որ ամեն առավոտ պատրաստում է Անա զիզին։

— Ունեմ, քեզ պահի...

— Չէ, իմը լավն է...— և անիվները գլորվում են։

Ամպը կախվում է, Անդոն ու մեր հորթերը կորչում են ամպի մեջ։

Ուզում եմ լաց լինել, բայց արցունք չկա։ Ձորը լցվում է կաթնագույն ամպերով։ Թաց գետինը խլացնում է վազող ձիերի դոփյունը։ Իսկ կառքը գնում է. լսվում են զանգուլակների ծլնգոցը, կարծես մանր աղջիկներ ծափ են տալիս։

Հոգնածությունը նինջ է բերում։ Գլուխս հենում եմ մեկի տաք թևին։ Քնում եմ, ինչպես ծիծեռնակի ձագը մոր թևի տակ։ Երազում կառքը ամպերի վրայով է թռչում, դեպի խոր երկինքը։

Ահա աստղերը... Նրանք մեծանում են, նրանք շարժվում են։ Նրանք աստղեր չեն, այլ դեղին ու սպիտակ զառնուկներ, որոնք ձիերից խրտնած փախչում են, և զրնգում են նրանց վզերի պղնձյա զանգակները։

Աչքերս բաց եմ անում։ Մթնում է. ուրիշ սարեր են։ Մեր եկած տեղը ամպ է։ Երևի անձրև է մաղում մեր արևոտ թաղի վրա։

* * *

Քաղաքը տափարակի վրա է։

Դեպի հարավ, ուր մինչև հիմա էլ մնում է անհայտ շենքի ավերակները, տափարակը հանկարծ կտրվում է, կախվում է խոր ձորի վրա, որի հատակին տխուր խոխոջում է մեր գյուղի գետը։

Ձորում բնությունը ավերածություններ է անում։ Փլվում է քարափը, դիմացի ժայռերից ահագին քարեր են գլորվում, խառնաշփոթ դարսվում իրար վրա։ Գարնան հեղեղին ձորը լցվում է պղտոր ջրով։ Կատաղած գետը ահռելի թափով զարկում է քարերին, փշրում, գլորում ցած, և քարերն իրար հրելով, կայծեր են հանում, խուլ գոռոցով քերում ձորի պատերն ու հատակը։

Տափարակը վերջանում է քարափի գլխին։ Ուղղաձիգ ժայռերի լանջով ընկնում է սպիտակ արահետը, որ տաք անձրևից հետո շողշողում է կրաքարի փայլով։

Միայն մարդիկ են անցնում այդ կածանով։ Ոչ ոք չի կարող շալակին բեռ տանել այդտեղով։ Նեղ է, դժվարին կապեր, օձապտույտ կեռմաններ։ Իսկ ներքևը՝ ձորի երկու ափին, այգիներ են՝ քարերի վրա, քարակույտերի մեջ։ Ձորը խոր է, ձորը տաք է... Մինչ քաղաքի փողոցներում դեռ սևացած ձյուն կա,— ձորից տաք գոլորշի է բարձրանում, և սառած օձերը պառկում են քարերի փափուկ մամուռի վրա։

Ձորն ահավոր է, ձորում ամայի տխրություն է։

Մի քանի քարափոր մարագներ կան, որոնց մեծ մասի դռները կանաչել են։ Նրանց տերերը վաղուց չկան, և խոնավ քարայրները նրանց մահից հետո տաք հարդի շեղջակույտ չեն տեսել։ Մարագների առաջ հին թթենիներ են, դարձյալ անտիրական։ Ով սիրտ ունի, ոտքի ջլերը պինդ են, իջնում է կեռմաններով, շաղահարում թթենին և քարերի վրա թափվում են սպիտակ, սև ու կարմիր թութը։

Այդտեղ են կարանները...

Բնական խոռոչներ են, որոնք խոր գնում են քաղաքի տակը։ Ով գիտե որտեղ է վերջը այդ մթին անցքերի։ Ամառվա շոգին այնտեղ սառն է, պատերը լպրծուն։ Բազմաթիվ ոսկորներ կան ներսը, ամբողջ կույտեր ժանիքների, ծնոտների, ողերի։ Դուք վառում եք նավթի կավե ճրագը և կռացած ներս մտնում, կուզեկուզ գնում, քարերի վրայով մագլցում, կորչում քարի հետևը։ Դուք մեկնում եք ձեր ձեռքը մի դեղին կույտի, կարծում եք քար է, ձեր մատները խրվում են թաց ավազի մեջ, որ բարակ շերտով ծածկել է ոսկորների կույտը։ Եվ ճրագի լույսի տակ շողշողում է վարազի փայլուն ժանիքը. ու սարսուռը քարայրի սառնության հետ թափանցում է ձեր ոսկորները։

Առաջներում քաղաքի տափարակը, մեր թաղերը, ամբողջ ձորը խիտ անտառ է եղել, մթին խոռոչներ, թավուտներ։ Մարդուց առաջ ձորերում ապրել են գազանները, և քարայրները եղել են որջեր, սպանդանոցներ, գազանների կատակոմբներ։

Արևը թեքվում է սարի հետևը։ Ինչքան մոտենում է սարի գագաթին, այնքան լեռան ստվերը ձգվում է։ Թվում է, թե գագաթն էլ է երկարում, սրվում, որպեսզի հոգնած արևն ավելի հեշտ անցնի ճանապարհի մնացորդը։

Քաղաքում զարթնում է երեկոյան աղմուկը։ Ջրաղացների կողմից լսվում է գիշերահավաքի փողի ձայնը... Բոլորովին մոտիկ մի դարպաս կողպում են։ Իսկ «ռուսաց ժամի» ոսկեփայլ գմբեթն ու խաչը դեռ լողում են արևի հորիզոնական շողերի ալիքների մեջ։

Քարափի վրայով լայն ճանապարհ է, որ գալիս է հեռվի այգիներից, անտառից, մեր գյուղի ցրված հանդերից։ Գյուղի ճանապարհն է, որ թեև քաղաքի փեշով է անցնում, բայց դարձյալ չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից, նույն խոշն ու խութը, նույն քարերը, տաք փոշին, ջարդված հասկեր, չորացած խոտ, անասունների թրիք։ Նույնիսկ գետինը գյուղի հոտն ունի։

*Այդ ճանապարհը միայն մեր գյուղինն է։ Առաջ, երբ քաղաքը չկար, երբ քարափի կարաններում ապրում էր գանգուր մազերով լիսեմնը, մեր ճանապարհը հեշտ էր, կարճ և անցնում էր այնտեղով, ուր քաղաքի բուլվարն է և «ռուսի ժամը»։ Տարեցտարի ճանապարհը հետ էր քցվում, և եթե մի քիչ էլ քաղաքը հրեր, գյուղի ճանապարհը պետք է ընկներ հեղեղատի ձորով։*

*Ամառվա երեկոները սպիտակ շորերով աղջիկներ ու տղաներ գալիս են, քարափի վրա նստոտում։ Նրանք նվագում են մանդոլին, գիտար, նրանք երգում են ռուսերեն, ապա բարձր ծիծաղում են, և ձորի քարանձավներում նրանց առույգ ծիծաղն արձագանք է տալիս ահավոր կերպ, ասես ձորը քրքջում է նրանց հիմարության հանդեպ։*

*Ելնում են աստղերը։ Երեկոյան դեմ նրանք դեռ աղոտ են, բայց շարժվում են, կարծես տիեզերքի անհուն խորքերից նրանք մոտենում են մեզ, ինչքան մթնում է՝ այնքան ավելի մոտ են աստղերը, այնքան ավելի շողշողում են մեկը դեղին, մյուսը սպիտակ, երրորդը կապույտ փայլով։*

* * *

*Անդոն պառկել է կողքի վրա։*

*Նրա դեմքը փոխվել է, կոշտացել է, շրթունքները հաստացել են, վերին շրթունքի վրա դեղին աղվամազը փայլում է, ինչպես նոր ծլած սիզախոտը։ Աչքերն են առաջվանը՝ սև, ժիր, անհանգիստ։ Նա պոկոտում է խոտը, թափում։ Այդ նրան ձանձրացնում է, աչքն ընկնում է ծղնոտի փշրանքին, ծղնոտը մոտեցնում է շրթունքին։ Հանկարծ լսվում է աղջկա առողջ ծիծաղ՝ բարձր, զրնգուն։ Այդպես ծիծաղում է կինը՝ երբ առողջ է կուրծքը։*

*Ես գլուխս դարձնում եմ այն կողմը։*

*— Ճանաչեցի՞ր,— հարցնում է Անդոն։*

*— Մաշոն է...— ինքն իրեն պատասխանում է Անդոն և ծամծմում է ծղնոտի կտորը։*

— Թիֆլիս է կարդում... Երկու տարուց վերջացնում է գիմնազը։

— Իսկ էն տղերքն ով են։

— Այ էն մեկը Ներսես բեյի տղան է, էն երկուսը ռուսի սմատրիտելի տղերքն են, էն աղջիկն էլ Սոնան է։

— Նա մեզանից մի դասարան ցածր է։

— Ասում են լավ աղջիկ չի։

— Ի՞նչ է անում որ...

— Միշտ տղաների հետ գնում է բաղերը։

Նրանք նվագում են գիտար, Մաշոն երգում է, մի թավ ձայն մեղմ կրկնում է նրա բառերը։

Անճանաչելի է թվում Սոնան, Մաշոն, մեր դասարանը, ծիրանի ծառը, որի տերևների արանքից արևը շողք էր քցում մեր տետրերի վրա։ Նրանք ուրիշ աշխարհից են, մենք ուրիշ։ Առաջ էլ այդպես էր... Չար նախանձ է ծընվում իմ ներսը դեպի այդ խումբը, որ ուրախ նվագում է և երգում։

— Անգո։

— Հեյ...

— Հիշո՞ւմ ես Նուշիկին։

— Նուշիկը լա՜վ աղջիկ էր...

— Մայրը մնո՞ւմ է։

— Հա՛, էլի առաջվա նման լվացք է անում։

Մեր հարևանները հեռանում են, խոսակցությունն ընդհատվում է։ Մաշոն մեծացել, գեղեցկացել է։ Նայեց մեր կողմը, երեսը շրջեց։ Նա թափ է տալիս իր փեշերը, ինչպես առաջ, երբ նստարանից վեր էր կենում։ Նրանք հեռանում են, մթնում դեռ երևում է Մաշոյի սպիտակ սիլուետը, նա մյուսներից առանձնացած է գնում։ Ինձ թվում է, որ գլուխը խոնարհել է որովհետև տեսավ մեզ և հիշեց մեր դասարանը, մեր մանկությունը։

Էլ ուրիշ շատ զգացումներ են զարթնում իմ սրտում, ջերմ զգացումներ։ Իմ սրտում էլ նախանձ չկա, և ես բարի եմ նայում մթնում հալվող սպիտակ շորերով Մաշոյին։

* * *

Ամեն երեկո մենք հանդիպում ենք իրար նույն տեղը՝ ես ու Անդոն։ Նա պառկում է կողքի վրա, ես նստում եմ քարին։ Նա դեպի քաղաքն է նայում, դեպի գյուղի ճանապարհը, որով անցնում են այգիներից և արտերից վերադարձող հոգնած մարդիկ և եզներ։ Ես նայում եմ եզներին, մթին սարին։

Մենք միասին չենք լողանում, էլ այգիները չենք գընում։

Ներքև, ուր հին մարագներն են, առավոտը կանուխ հավաքվում են մշակները։ Անդոն էլ նրանց հետ։ Քար են ջարդում, քարափներ են պայթեցնում նոր առվի համար։ Անդոն գիշերն էլ է քնում տախտակների վրա և հսկում է մուրճերի, քլունգների կույտը։

«Իլիստրիկի» են կառուցում Բաղիրովի տղաները։

Նրանք քաղաքում տներ ու խանութներ ունեն, նրանց մեծ եղբայրը Բաքու հարստություն է դիզել և վերադարձել է մեր քաղաքը էլեկտրական կառուցելու քարափի տակ, ուր գետը սահանքներ է գոյացնում։

Անդոն մշակ է, քար է ջարդում ցերեկը, երեկոյան ինձ պատմում է «իլիստրիկի ղավոդի» մասին, մշակների մասին և այնպիսի բաներ, որ չեմ կարդացել իմ գրքերում։

Երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին։ Ես նրան պատմում եմ գիտեցածիս ամենալավը, կարծես ընծայում եմ իմ վեգերի ամենագեղեցիկը, ինչպես երեխա ժամանակ։ Նա շուռ ու մուռ է տալիս իմ ընծան, և կարծես դժգոհ է, որ ուզածը չեմ պատմում։

Իսկ ինքն ինչքա՜ն գիտե...

Վերին գյուղում ուսուցիչն ասում է, որ պատերազմը շուտով կվերջանա, որ փոշտն անտառով տանելուց երկու զինված մարդիկ վրա են տվել, սպանել են ստրաժնիկին, փոշտը «կտրել», որ ներքին կարանում գիշերը մինչև լույս կարտ են խաղում, որ Միրզա Դավթի տղա գիմնազիստ

*Վանին ամեն օր հուր դախլից փող է փողանում և տանում տալիս, որ մեր հայոց լեզվի վարժապետ Մինասի տանը «կոմիտե» է նստում, և նրանց պաշտպանը լիքը զենք է...*

*— Ո՞վ քեզ ասեց, Անդո...*

*— Իմացել եմ։*

*— Չի կարող լինի։ Որովհետև վարժապետին իսկույն կբռնեն։— Առարկում եմ ես։*

*— Վարժապետը զենքը հենց կառավարությունից է ստանում։*

*Անդոյի աշխարհը ավելի հետաքրքիր է, ավելի խորը։ Մարդիկ մերկանում են իմ աչքին նրա պատմածը լսելուց։ Վարժապետը դաս է տալիս ցերեկը, իսկ երեկոյան պատրոն է համարում, Վանին գրքերը թևի տակ առավոտները գնում է «սմատրիտելի» տունը, բայց գիշերը կարանում թուղթ է խաղում։*

*— Անդո, ուզում ես սովորե՞ս...*

*— Իմ սովորելը վերջացա՜վ... Ապերը հրեն հիվանդ...*

*— Ամառները ես քեզ դաս տամ,— ուրախացած բացականչում եմ ես։*

*— Գիշեր ցերեկ բանի եմ... Ո՞նց սովորեմ... Հրես մասերը որ գա, ես մանտյորություն եմ սովորելու...*

*...Այն ամառը ես մենակ էի բարձրանում բրուտների քարայրը, նստում էի բրուտ Ավագի դռանը, ծերունին ցեխոտ ոտքով դարձնում էր չարխը և անսպառ հետաքրքրությամբ լսում իմ պատմածը։ Երբեմն Զոլախն էլ էր գալիս...*

*Ամպած մի օր մենակ իջնում էի բրուտների կածանով։ Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից վախեցած աղավնիները անհանգիստ ճախրում էին։*

*Ես զգացի մի ծանրություն, որ արդեն ճնշում էր։ Կարծես մի բան հասել էր, ինչպես դեղնած պտուղը. ահա վայր պիտի ընկնի և թեթևացած ճյուղը պիտի ձգվի։ Ես*

չգիտեի, որ իմ սրտի ծանրությունը այդ մռայլ ձորերն էին, տխուր արահետը, որով շատ քիչ մարդ է անցնում։ Ինչքան իջնում էի, այնքան արագացնում էի քայլերս, կարծես հետևում թողնում էի այդ ծանրությունը։

Երբեմն, տարիներ ընդ մեջ, եղել եմ մեր թաղերում։ Սակայն ամպամած այդ օրից հետո մինչև այժմ երբեք չեմ բարձրացել բրուտների ճանապարհով։ Ինձ պատմել են, որ այնտեղ էլ ոչ մի չարխ չի պտտվում, որ մի մեծ ժայռ փլվել է և տակովն է արել այն քարայրը, որտեղ աշխատում էր չոլախ Եգորը։

* * *

Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր։ Դժվարությամբ եմ ճանաչում դեմքը, կապակցում մարդուն ու շրջապատը... Մեր քարափն է, խավար ձորը, որտեղ ոչինչ չի երևում։ Մյուս ափը լույս է. քարերը սպիտակ են, ինչպես ձյունի կույտերը գարնահալոցքի գիշերը։ Կարմիր, դեղին, գորշ եզներ նստոտել են քարերի մոտ, նրանք անշարժ որոճում են, և թվում է, թե քարերը կարող են եզներ դառնալ կամ թե եզները, եթե շատ նստեն, կքարանան։ Մեկը փաթաթվել է մաշված կարպետի մեջ և քարի տակ քնել է...

Որքան պրպտում եմ, չեմ կարողանում որոշել, թե երբ եմ տեսել մթին ձորի լուսավոր ափը, կանաչ խոտերի վրա հանգստացող եզները։

Իսկ քարափի գլխին կանգնած ստվերն իմ ընկերն է, բրուտի տղան։ Նա սեղմում է իմ ձեռքը... Ես փողոցի անկյունից հետ եմ նայում։ Դեռ կանգնել է քարափի գլխին, և դժվար է որոշել, թե որ կողմն է ուղղված նրա հայացքը։ Նա ձեռնափայտ չունի, բայց կռացել է այնպես, կարծես ծնոտը հենել է փայտին։

Նույն կառքը, նույն ճանապարհը, որ շողշողում է մթի մեջ, ինչպես փրփուր ջուրը։ Նույն զանգուլակները, տխուր ձանձրույթը։

Եվ հանկարծ մթնում վառվեցին ճրագները, միանգամից կարծես լույսի ալիքներ ծփացին քաղաքի վրա, ինչպես քամուց ծփում է հասած արտը։

Ես մտածում եմ, որ Անդոն իջել է ձորը, Դամուրի ավերակ մարագը, որ կենդանացել է, խորացել, որովհետև ներսը մեքենաներ են դարսել և պողպատները մեխել ժայռերին։ Հիմա բանտարկված գազանի նման դինամոն մռնչում է խոնավ քարանձավում, որի կտուրից ջուր է կաթկթում։

Անդոն կրակ է անում դուրսը, մուտքի մոտ, որտեղ քարը փորել են և խոռոչում օջախ սարքել։ Նա սևացած չայդան ունի։ Պղինձը հիմա կախել է կրակի վրա, և բոցը թրթռում է ձորում։

Շուտով բոլորովին կմթնի, օջախի կրակը կհանգչի, Անդոն կփաթաթվի չեխոլի մեջ և հոգնած աչքերով, մինչև լույս պիտի նայի կարմիր լամպին, պղնձյա սլաքներին, փոկերին։ Հոգնած կոպերը պետք է ծանրանան աչքերի վրա, սակայն լսողությունն իբրև արթուն պահակ պիտի հետևի մեքենայի աղմուկին։ Ամենաթեթև խանգարումից Անդոն չեխոլը դեն պիտի շպրտի և մոտենա մեքենային։

Սարից փչում է սառը քամին։ Կառքը բարձրանում է դեպի կատարը... Ներքև թարթում են բազմաթիվ ճրագներ, նրանք հսկում են քաղաքի վրա, ինչպես «մանտյոր Անդոն» քարանձավի դինամոյին։ Նրանք հանկարծ ուժեղացնում են լույսը, ապա մեղմում։ Կառքը գլորվում է սարի մյուս երեսը. իմ մտքում հրաժեշտի խոսքեր եմ ասում քաղաքին. Գյումեյ Թաղին, մեր Ցից քարին, իմ մանկության և նրա ընկեր Անդոյին։

— Երեք անգամ լույսերը եթե սպիտակեն, ուրեմն իմացիր...

Այդպես ասաց Անդոն, երբ միասին դուրս եկանք քարանձավից։ Նա ինձ համար էր անում, ինձ հրաժեշտ էր տալիս։

Երրորդ անգամ ես չտեսա, թե ինչպես հանդարտե-

ցին ճրագները։ Քաղաքի վրա սպիտակ լույս էր, կաթնա նման լույս...

Սարի մյուս երեսը խավար էր։ Լուսինը ցածր էր. և սարի կատարը ծածկում էր ձորը նրա սպիտակ մանգաղից։ Կառքը գլորվում էր ցած, թվում էր, թե անդունդն ենք իջնում, անհատակ անդունդը, որտեղից էլ դուրս չենք գալու։

Այսպես անհատակ էր մեր Գյունեյ թաղը, երբ իջնում էր խավարը, քաղաքը ողողվում էր առատ լույսերով, իսկ մեր գյուղում հանգչում էր վերջին կավե ճրագը։

Քարափի գլխից Անդոն նայում էր գյուղի կողմը և դառնացած ասում, որ պղնձե լարերը չեն անցնում գետի մյուս ափը, քարերի մեջ կորած մեր խավար գյուղը։

* * *

Իբրև վաղեմի պատմագիր, դողդոջ ձեռքերով ես սկսում եմ իմ պատմության վերջին էջերը։ Հարկավոր է պատրույգը բարձրացնել, և մինչև հատնի ձեթը, ավարտել անկրկնելի օրերի նկարագիրը։

Հիմա էլ մնում է մեր քարափը, իբրև հսկայի մատ՝ ցից քարը մեր թաղի գլխին։ Ուզում եմ, որ այս անզարդ տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը։

Վրա հասան դառնաշունչ օրերը, ինչպես ցուրտ աշուն։ Արտերում հասած ցորենները ծլում էին, մարդիկ մրսում էին խրամատներում և անվարժ ձեռքերով շարժում հրացանի փականակը։ Արճիճի կարկուտը ծեծում էր քարերն ու քարափները, հրանոթի գնդակը շառաչելով պայթում էր ծմակների խորքում, սարսափահար անում մարդկանց ու գազաններին, ճղակտոր ջարդում հասակավոր ծառերը։

Սկսվեց ձմեռը, մահվան նման սառն ու անողոք։ Քաղաքում գզգզված մազերով մի մանտյոր, մազութից սևացած շորերով, սանդուղքն ուսին, իբրև լապտերավառ, տնե-տուն էր ման գալիս։ Մի տեղ՝ բուքը պղնձե

թելերն էր կտրատել, մյուս տեղը ճրագն էին ջարդել։ Թնդանոթի գնդակը ճեղքել էր սյունը, և սպիտակ բաժակները ցած էին կախվել և աղիողորմ զրնգում էին, երբ քամին իրար էր խառնում թելերը։

Մանտյորն ամեն տան էր լինում։ Նա լսում էր, նա տեսնում էր ինչ են ասում տներում հավաքված մարդիկ, ով ինչպես է ապրում։ Մի անգամ նա տեսավ Մաշոյին ձյունի նման սպիտակ շորեր հագին, մազերի մեջ ծաղիկներ։ Աղջիկը մի տղայի հետ իջնում էր սանդուղքով, իսկ մանտյորը կապկպում էր էլեկտրալարը։

Երբեմն թարթում էին ճրագները, երկու անգամ, երեք անգամ, մերթ ամբողջ քաղաքն ընկղմվում էր խավարի մեջ, և ապա լույսերը նորից բռնկվում էին։ Այդպիսի գիշերներ քաղաքի խուլ թաղերից մի քանի հոգի զարտուղի ճանապարհներով, այգիների արանքով իջնում էին ձորը, և մինչև հավախոսը կարանում լսում տեղեկություններ, որոշումներ անում, նամակներ գրում ու կարդում։

Մանտյոր Անտոն երբեմն վազում էր նրանց մոտ, մի քիչ լսում, իր խոսքն ասում և երբ ոտնաձայն լսեր կամ մեքենան փոխեր աղմուկը,— աննկատելի վերադառնում էր կայանը։

Ամբողջ ձմեռը քաղաքում մերթ ընդ մերթ լույսերը թարթում էին... Եվ շատ քչերն էին հասկանում, թե ուր են կանչում Անտոյի լույսերը։ Այդ քչերը կամաց դուրս էին գալիս դեպի ձորը, դեպի հին քարանձավը։

Բուքը խաղում էր ձորում։ Մրսած գայլերը այգիների պատերից թռչում էին ցած, քարափին մոտենում։ Նրանք սարսափահար փախչում էին մեքենայի աղմուկից և լույսերից, փախչում էին և ոռնում մեր մթին թաղերի վրա։

Անտոն քարի տակից հանում էր տպագիր առաջին լոզունգը։ Նա փակում էր դուռը, թուղթը մոտեցնում կարմիր լամպին։ Խոնացած թուղթը արնագույն էր դառնում, և սև տառերը պողպատի սառնությամբ ասում էին։

— Խաղաղություն խրճիթներին. պատերազմ պալատներին...

Դրսում ոռնում էր բուքը, քաղաքի վրա ձմռան հետ ծանրացել էր թշնամու երկաթե կրունկը։ Իսկ մանտյոր Անդոն իր ապահով անկյունում հանում էր այն թուղթը, որի համար նրան սրախողխող կանեին Մաշոյի սպան, եթե տեսնեին։

* * *

Այն գարնանը ձյունը դժվար վեր կացավ։ Քարերը մերկացել էին, բայց նրանց հյուսիսային փեշերին մնում էր կապտավուն ձյունը, որ լուսնյակ գիշերներին շողշողում էր կաթնագույն փայլով։

Բրուտ Ավագը վերև չէր բարձրանում։ Գետերի ճանապարհը փակ էր, ամեն քարի հետև մահ կար թաքնըված։ Նա մեր թաղի եզների հետն է, ման է գալիս տաք ձորերում, մաշված եզները կոշտ լեզվով տրորում են թարմ կանաչը։ Նրանք հոգնում են ման գալուց, նստոտում են քարերի արևկող երեսին, եզնարած Ավագը փաթաթվում է կարպետի մեջ և ննջում։

Երբեմն եզները մոտ է քշում ձորին։

Հայրը տեսնում է որդուն և կերկեր ձայնով կանչում է նրան ձորի գլխից։

Գարունն անհանգիստ օրեր բերեց։

Զինված մարդիկ վխտում էին քաղաքի փողոցներով, ձիավորներն աջ ու ձախ չափչփում էին։ Պտտվում էին լուրեր, որ ֆրոնտը մոտենում է։

— Գալիս են,— ասում էին իրար։ Ոմանք ավելացնում էին «մերոնք», ոմանք «նրանք», իսկ մնացածները միայն հաղորդում էին, որ գալիս են։

Օրը ցերեկով թնդանոթի գնդակը թռավ քաղաքի վրայով և պայթեց գերեզմանատան հետևը։ Առաջին պայթյունը կարծես նրա համար էր, որ հասկանային, թե գալիս են...

Նշանը բռնել էին զորանոցների կողմը։

Մարդիկ փակում էին դուռ ու լուսամուտ, ովքեր ունեին դուռ ու լուսամուտ։ Փողոցում երևում էին նրանք, որոնց մեծ մասի համար զենքը ծանրություն էր։ Եվ նրանք



409—32

սրտատրոփ սպասում էին այն ժամին, երբ նորից կառնեն մանգաղն ու գերանդին։

Անա գիզին քաղաքի փողոցներում մոլորվել էր՝ վախից, անհանգստությունից... Անդոն չկար, երեք օր առաջ նա չքացել էր։ Լռել էր մեքենան, ձորում մութն էր լինում գիշերները, և այդ մութը տարածվում էր և քաղաքի տափարակի վրա։

Լույսերը չէին թարթում, նրանք չքացել էին։ Միայն լուսնյակն էր շողշողում լամպերի ապակիների և պղնձյա լարերի վրա։

Իսկ քաղաքում, սպան ատամները կրճտացնելով պատմում էր Մաշոյին, որ ամբողջ ձմեռը սիգնալներ է տվել ձորից այն գազանը, որ մանտյորի շորերով տունե տուն ման էր գալիս։

Մաշոն չէր հասկանում սպայի խոսքը, ինչպես դժվար դասը...

...Քանի մնում է քարափը, կմնա և բրուտի որդու առասպելը։ Դեռ երկար ժամանակ բերնե բերան պիտի պատմեն նրանք, որոնք ականատես եղան, իսկ երբ նրանց վերջինը մեռնի, այդ պատմությունը պիտի ավանդվի իբրև պապերից լսած զրույց։

Մյուս առավոտ սարի հետևից թնդանոթները որոտացին։ Մի քանի պայթյուն մի անգամից լսվեց։ Եկեղեցու խաչը թեքվեց, ճռճռվեց ինչպես ճյուղը։ Ապա հանկարծ ընկավ ընկուզենու վրա ու խրվեց գետնին։

Քաղաքում սկսվեց խուճապը։

Միանգամայն անսպասելի կերպով ձորի կողմից քաղաք մտան չորս ձիավոր։ Նրանց առաջից գնում էր մեկը՝ սպիտակ ձիու վրա։

Ձիավորները մի վայրկյան կանգնեցին քաղաքի սահմանագլխին, ապա, երբ որոտացին թնդանոթները, նրանցից երկուսը քշեցին դեպի գերեզմանատունը, փոփռացնելով փոքրիկ կարմիր դրոշակներ։ Նրանք այդ դրոշակները խրեցին գերեզմանատան բլուրի վրա իբրև նշան

թնդանոթաձիգի համար։ Իսկ իրենք քաղաքի վերևով քշեցին դեպի կամուրջը։

Այս անգամ թնդանոթը խփեց ուղիղ քարափին։ Քարից կտորտանք թռավ դեպի ձիավորները։ Ներքևից լսվեց պայթյուն։

— Դրոշակը շարժիր,—գոռաց սպիտակ ձիավորը, նայեց ձորի կողմը։ Մուխի մեջ դեռ կանգուն էր կայանը։ Պայթյունը գետի մյուս ափին էր։

Ու ձիավորը ասպանդակեց փրփրած ձիուն դեպի քաղաքի հրապարակը, դեպի կամուրջը, որտեղով պիտի քաղաք մտներ կարմիր հեծելազորը։

Սպիտակ ձիավորը ճեղքեց ամայի հրապարակը։ Նրան թվաց, թե կանչեցին իրեն։

Այդ վայրկյանին պատշգամբից բացվեց գնդացիրը։ Կինը ճչաց.

— Վա՜յ, բալաս...

Ձիավորը թեքվեց մի կողմի վրա և կախվեց, ինչպես հնձած հասկ։ Փրփրած ձին խրտնեց ու սլացավ։ Հեծվորի ոտքը մնաց ասպանդակի մեջ։ Տաք մարմինը քարեքար, դիպչելով շաղ տվեց արյուն և ուղեղ։

Ճանապարհի վրա շնչահեղձ պառկել էր Անա զիզին և համբուրում էր արյան առաջին հետքը։

* * *

Այն կողմերում այժմ էլ գարնանը ամպ է նստում։ Մեր Գյունեյ թաղը կորչում է, ամպի միջից երևում է Ցից քարը։ Բայց երբ քաշվում է ամպը, երևում են քաղաքի կտուրները։ Ռուսաց «ժամի» տեղը կանաչ պարտեզ է։

Ձորը փոխվել է։

Այնտեղ սպիտակին են տալիս ժամի տաշած քարերը։ Նոր հիդրոկայանն է, լուսավոր և ընդարձակ։ Քարափից ներքև է իջնում լայն ճանապարհը։ Գարունը դպրոցի երեխաներին տանում են ձորը, և ուսուցիչը բացատրում է, թե ինչպես են աշխատում մեքենաները։

Նորոգ երկիր, նոր մանուկներ...

Դիպվածը ինձ էլ նետեց մեր հին Թաղը։

Ես հաստատ քայլերով կոխոտում էի այն կածանները, ուր խաղալով անցել է իմ մանկությունը։ Ահա Նեղը, փրփրան ջուրը, քեղի թումավոր թիերը։ Իմ ընկեր Անդոն պատմում էր, որ օձերը իրենց լեղին նրա տերևներից են շինում։

Բիբլիական Հովքի նման ավերակ տան առաջ նստել էր բրուտ Ավագը։ Նա գրկեց ինձ, շոյեց դեմքս, ինչպես կույրը։

— Անդոն, իմ Անդոն...

Ես երկար դիտում էի նրա դեմքը, որ կծկվում էր։

Արցունք չերևաց նրա դեմքին, թեև ձայնը խուլ հեկեկանքից դողում էր։ Կարծես աչքերի հետ ցամաքել էին և արցունքի ակները։

Մեր Թաղի գերեզմանատանը Անա գիգին է թաղված։ Գերեզմանաքար չկա, ոչ գիր, ոչ մի հուշարձան։ Գարնանը կանաչում է թումբը, մոլախոտերը խեղդում են վաղահաս ծաղիկներին, սակայն միամիտ են, որ չի զարթնի Անա գիգին և ոսկորե կտորով չի քաղհանի նրանց։

Քարափին երեկոները շարվում են ուրիշ աղջիկներ, նրանց մանդոլինը նվագում է նոր երգեր։ Իսկ երբ հոգնում են, սկսվում է անսեթևեթ զրույց, տղաներից մեկը ցույց է տալիս ձորի ճեղքված քարը, կրկնում մանտյոր Անդոյի կյանքն ու մահը։

— Կարմիր հեծելազորը քաղաք մտավ կամուրջի կողմից... Հետևից, հրացանների վրա բերել են նրա արնոտ մարմինը։

Էլի ի՞նչ։ Վայր դնե՞մ գրիչս...

Բայց ինչու՞ են դողում մատներս... Դեռ վախճանը չի. Թրեր պիտի զրնգան և հրազենները պիտի շառաչեն հին խոսքը.

— Խաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին։

# ՍԵՎ «ՀԱՑԸ»

## 1

Քաղաքի աղմուկը հանդարտվում էր։

Կարծես դաշտ էր, ուր լուսաբացին՝ առաջին ավտոյի աղմուկից սկսվել էր ճակատամարտի ժխորը, կեսօրին թեժացել, երեկոյան դեմ՝ միսկարները հավաքել էին պղինձը, դարբինները դարսել էին մուրճերը, մեքենաները լռել, ավտոները, ինչպես եղեգնուտի բադերը, քնել էին գարաժի թիթեղյա ծածկի տակ։

Երեկոյան դեմ գարնան վարար անձրևը նոր ծաղկած ծառերին, մայթի քարերին ու ծանր կավահողին բաշխել էր զով, պղտոր ջրի լճակներ ու լպրծուն ցեխ։

Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք և անգլուխ քարավանի նման դանդաղ ու մունջ պտույտ էին անում փողոցներով, քսվում կտուրներին։

Տների բարձր հարկերը չէին երևում ամպի սպիտակ քուլաների մեջ, որ օրորվում էին, իրենց հետ օրորում տները, հեռագրասյուները, էլեկտրական ճրագները և նրանց ցոլքը՝ անձրևաջրի պղտոր լճակներում։

Ամբողջ քաղաքի վրա բարձր աշտարակից ռադիոն թափում էր գարնանային երգի տաք ելևէջները։ Աշտարակի ներսը առողջ կրծքով մի աղջիկ թավ ձայնով երգում էր բամբակի դաշտերի և հասած արտերի երգը։ Բազմա-

*թիվ ռուպորներ, ինչպես ցնցուղը մաղում էին զվարթ երգը հոգնած քաղաքի վրա։*

*Բարձրախոսների տակ խումբ-խումբ մարդիկ լուռ լսում էին, մշակը՝ մեջքի համետին հենած, լրագրավաճառը՝ թերթերը թևի տակ, տղան՝ աղջկա թևը գրկած, կառապանը «կոզլու» վրա,— նույնիսկ ձիերը ականջները կախել էին, քրտինք էր գոլորշիանում նրանց մարմնից, մրսում էին խոնավությունից,— բայց ձիերն էլ անշարժ էին։*

*Այդպես չէր քաղաքի խուլ փողոցներում, ուր կավի կույտ տներ են, առանց ճրագ, առանց լուսամուտ... Այդ տների բակում ծաղկել էր դեղձենին, ծիրանը։ Գիշերվա այդ ժամին կավի տներում խոր քնի թագավորություն էր։*

*Ռադիոյի մետաղյա փողը այդ տխուր տների վրա երգում էր կարծես ավելի մեղմ։ Ո՞վ գիտե ներսը, մութի մեջ մի անքուն աղջիկ լսում է արտերի երգը, և նրա ականջի տակ հնչում է մի ուրիշ ձայն, հանդա՜րտ, ինչպես հասկերի խշշոցը։*

## 2

*Լևոնը գլխավոր փողոցից ծռվեց դեպի ձախ։*

*Անկյունում նրա ականջն ընկավ երգը, տեսավ լուռ լսողների խումբը։ Նա զարմացած գլուխը վեր բարձրացրեց, կարծես առաջին անգամն էր տեսնում սյունից կապած բարձրախոսը։ Երգը, այդ խումբը կտրեց նրա մտքի թելը, ինչպես ջրի հոսանքը դեմ է առնում վերևից գլորված ժայռի։*

*Բայց հենց ծռվեց դեպի մութ փողոցը, հոսանքը նորից մտավ ծանոթ հունը։ Ու գլուխը կախ գնաց, կոխոտելով թանձր ցեխը, անձրևաջուրը։*

*Թևի տակ պայուսակն էր։ Ու միտքը շարունակում էր հյուսել այն թվերը, հաշիվները, որ շարված էին պայուսակի թղթերի վրա։*

*Նա շատ անգամ է նստում մինչև կես գիշեր այն սենյակում, որի պատուհանից երևում է քաղաքի մեծ մասը, բլուրները, ճանապարհները՝ որոնք ծալվեծալ գնում են կեռումեռ, գնում են անվախճան՝ դեպի ուրիշ քաղաքներ, երկրներ։*

*Այդ սենյակում Լևոնի գրասեղանն է։ Նա փռում է բազմաթիվ աղյուսակներ, ցուցակներ, վերցնում է մատիտը, գլուխը կախում նրանց վրա և հաշվում։*

*Նա հաշվում է տրակտորներ, գութաններ. հաշվում է երկաթե փոցխեր, սերմեր, որ գարնանը թափվում են խոնավ հողի մեջ, ծլում է բամբակը, աղջիկները քաղհանում են, ծաղկում է բամբակը, աղջիկներն իրենց գոգը լցնում են սպիտակ բամբակով, ու բամբակը գնում է, դառնում գույնզգույն չիթ, աղջիկները հագնում են նախշուն չիթը, և երբ խաղում են նրանք, թրթռում է մարմինը, քամին փափռացնում է դեյրան, և ծաղկավոր դեյրան ծփում է ինչպես արտը, չիթի ծաղիկները օրորվում են, երբ խաղում է նրանց մարմինը։*

*Այս վերջին հանգամանքի վարիչը այն թուխ երիտասարդներն են, որոնք գրկում են քաղհանավոր աղջիկներին և չեն կարող ասել, թե ի՞նչն է բուրում՝ աղջկա մարմինը, թե խշխշան դեյրայի ծաղիկները։ Թուխ երիտասարդներն են և բանաստեղծները, որոնք գրում են նրանց մասին։*

*Իսկ Լևոնը միայն սերմորայքի և մեքենաների բաժնի վարիչն է։ Այդ մեքենաները հեռու գործարաններից են գալիս և քաղաքի պահեստներից նրա ստորագրած օրդերներով դուրս գնում բազմաթիվ ճանապարհներով դեպի գյուղերը և նրանց դաշտերը, որտեղ կա ջուր, արև և քրտինք։*

## 3

*Լևոնը կանգնեց դռան առաջ, ձեռքը տարավ գրպանը, շոշափեց բանալին, որ գրպանում տաքացել էր։*

*Բանալին դարձավ երկու անգամ, և ապակյա դուռը բացվեց։*

*Մութ նախասենյակում նա վարժ շարժումով իր մըշտական տեղը հանեց կալոշները։ Մի փափուկ բան քսվեց ոտքերին, մռռաց։ Մաշիտա մայրիկի Վանա կատուն էր։*

*— Փիսո՜...*

*Եվ փիսոն հետևեց նրան մինչև սենյակի դուռը, ապա առաջինը ներս մտավ, երբ Լևոնը քաշեց սենյակի դուռը։*

*Ճրագը վառեց և պայուսակը քցեց սեղանին։*

*— Փիսո՜...*

*Կատուն մեջքը ուռցրեց, նրա ծովի գույնի մորթը ալիքաձև շարժվեց ուսերից մինչև պոչը։*

*Բայց Լևոնը ձեռքով չշոյեց կատվի ուռուցիկ մեջքը։ Կատուն ցած թռավ թախտից և, ծանր պոչը քարշ տալով, դուրս եկավ սենյակից, իր կատվային դժգոհությունն արտահայտելով դանդաղ քայլքով։*

*Լևոնը նստեց թախտի ծայրին... Եվ ինչպես օտարականը ակսեց դիտել իր բնակարանը, իրերը։ Աչքն ընկավ կանաչ ծաղկամանին, որ կնոջ բազուկի ձև ուներ. վերը՝ բարակ մատները բաժակաձև սեղմվել էին իրար, որպեսզի պահեն ծաղիկները։*

*Լևոնի զարմացած հայացքը կանգ առավ ծաղկամանի վրա։ Այդ անշուք սենյակում ծաղկամանը մենակ էր և չէր մերվում կոշտ, չներկած սեղանին, երկաթյա մահճակալին՝ որի նման հազարներ կան հիվանդանոցներում, զորանոցներում։*

*Իսկ գրքերի դարակին հենած հրացանը ուղղակի թըշնամաբար էր թեքվել դեպի ծաղկամանը։ Փողի բերանը գազազած աչքի պես նայում էր կնոջ ապակյա մատներին։*

*Բոլոր իրերը իրենց կարճ և գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանը։ Եթե Լևոնի սենյակի իրերը իրենց կյանքը պատմեին, մահճակալը պիտի ասեր, որ ինքը երկաթից է շինված, չորս տարի վրան պահել է հիվանդ, վիրավոր զինվորների, որոնք իրեն ծոմոտել են, ապա*

նրա վրա պառկել է կուրսանտը, մի համագումարի պատգամավոր, հետո երեք ամիս ընկած է եղել ձյունի և անձրևի տակ, մինչև ընկեր Լևոնի գալը։ Թեթև նորոգումից հետո նա անխռով իր վրա պահում է Լևոնի չորս փութը։

Գրքերի դարակը կարճ կվերջացներ՝ «ուռի էի և դարձա դարակ»։ Սեղանը կգանգատվեր իր մի կոտրած ոտքից և մլեկներից, որոնք ձմեռը քնում էին նրա ճաքճքած տախտակների արանքում, որպեսզի ամառն անհանգըստություն պատճառեն կենվորին։ Մահճակալի տակ ընկած չեմոդանն ու կողովը միայն կարող էին պատմել արկածներով լի ճանապարհորդությունների մասին։

Վերջապես պատից կախած մաշված խալին կարող էր պարծանքով պատմել, որ իրեն հյուսել է Լևոնի մայրը, որ ծոր-ծոր քարափների գլխին թառած գյուղում, երբ իրեն փռում էին արևի տակ, և հավերը կոխոտում էին, մի երեխա չորեքթաթ սողում էր հավերի հետևից, և երբ հավերը հեռանում էին, երեխան աշխատում էր բռնել արևի շողերի մի խուրձ, որ պսպղում էր գորգի վարդերի և նուռների վրա։

Իսկ ծաղկամա՞նը...

Նա օտարական էր, անորոշ հանգամանքով ձեռք բերված։ Փողոցում վիճակախաղ էր անապաստան երեխաների օգտին։ Լևոնը հանդիպեց Լուսիկի ընկերուհուն... Մոտեցավ հարցնի, թե ինչ լուր ունի Լուսիկից։ Իսկ աղջիկը, որ վիճակախաղի կազմակերպողներից էր, և՛ հաղորդեց լուրը, և՛ թևից քաշելով նրան մոտեցրեց սեղանին։

Հինգ տոմս միանգամից վերցրեց, երեքը փուչ էր, մեկին բաժին ընկավ ռետինե տիկնիկ, մյուսին՝ ծաղկամանը։ Տիկնիկը նա հենց տեղն ու տեղը նվիրեց մի փոքրիկ աղջկա, իսկ ծաղկամանը Լուսիկի ընկերուհին դրեց պայուսակը, խոստացավ ծաղիկներ բերել և ավելի մանրամասն պատմել Լուսիկի մասին։

Խոստացավ ու չեկավ։

Այստեղ հրացանը կորոտար և կփշրեր ծաղկամանը,

եթե նրա հետ կապված չլիներ մի ուրիշ անձնավորություն, որի հանդեպ սենյակի բոլոր իրերը, նույնիսկ կողովն ու չեմոդանը խորին երախտագիտություն էին տածում, որովհետև այդ անձնավորությունը ամեն օր սրբում էր փոշին, մաքրում, տեղափոխում, եթե արևը թեժացնում և անհանգստացնում էր նրանց։

Այդ Մաչիտա մայրիկն էր, որի մուտքը այդ սենյակը եղավ ծաղկամանը բերելու մյուս օրը։ Ներս մտավ այդ պառավը, Վանա կապույտ փիսոն հետևից։ Կատվի ոտնաձայնն ավելի խիստ էր, քան Մաչիտա մայրիկը։

— Էնիա խորոտ ի,— ասաց պառավը և առանց թույլտվություն ստանալու ծաղկամանի մեջ խրեց դաշտի ծաղիկների մի փունջ։

Սենյակի տեսքը միանգամից փոխվեց։ Նույնիսկ լերկ պատերը զվարթացան, որովհետև արևը ծաղիկների և ծաղկամանի ստվերը քշում էր պատի վրա, կարծես գրքերի հետևը թաքնվել է մի կին և վեր բարձրացրել մերկ բազուկն ու ծաղկեփունջը։

Միայն մանկության գորգի վարդերը դժգոհեցին։ Թարմ և իսկական ծաղիկները խլում էին նրանց առաջնությունը։

## 4

Վանա փիսոն խռոված դուրս գնաց և նորից ներս մտավ Մաչիտա մայրիկի փեշից կախված թելի հետ խաղալով։

— Իկե՞ր ես, տղա... Ջայ պիրեմ...

— Եթե տաք է...

— Տաք է... Խալիվոր նոր խմեց... Գինա դողցուց իմ խեղճ... իմ ճար ինչխ կելնի, Լևոն։

— Ես զանգահարել էի բժշկին, չեկա՞վ։

— Էկավ, աստծու լուս խասնի էնոր մեռելաց... Դեղ իտուր, էլմ էնի... լերդն է ասաց,— և ապա դառնալով կատվին,— քելի՛ փիսո, քելի՛, չայ պիրենք...

Հիվանդը պառավի ամուսինն էր, նույն միջանցքում ապրող դերձակը, որին համարյա բոլոր տնվորները, մանավանդ երեխաները՝ «պապա» են կանչում։

Նիհա՞ր, բարակ, քնքուշ դիմագծերով մարդ է «պապեն», ամառ, ձմեռ նույն մաշված վերարկուն ուսին, նույն բրդե շալվարը, որ բազմաթիվ կարկատաններից ծանրացել է։

Մաշիտա մայրիկը և «պապեն» Բաղդադից եկած գաղթականներից էին։ «Պապեն» լուռ էր, ավելի հաճախ երեխաների հետ էր խոսում. մեծերին տեսնելուց մի կողմ էր քաշվում, կարծես ամաչում էր։ Իսկ Մաշիտա մայրիկը, կամ, ինչպես «պապեն» էր ասում, «հանըմը» հաճախ էր բակ դուրս գալիս, զրուցում հարևանուհիների հետ։

Նրա խնամքի առարկան հավերն էին, որոնց համար «պապեն» բակում բուն էր շինել։ Հավերը նրա երեխաներն էին,— ծիծաղելով ասում էին հարևանները։

Նրանք շատ էլ սխալ չէին։ Մաշիտա հանըմը ոչ միայն կերակրում էր, այլև հավերին խոսեցնում էր, նրա հավերը անուններ ունեին, բնավորություն։

— Էսօր Կապուտա քեֆսըզ էր.. կուտ իսկի չկերավ։

— Խմոր Թալե առաջը...

— Էն իմանսըզ խորոզը չարչըրեր է գիշերը,— զայրանում էր Մաշիտա մայրիկը։

Եվ ամբողջ բակը պիտի իմանար, որ «խորոզը չարչարել է կապույտ հավին», որ հերվա թխսամայրը ձուի է նստել, որ «էն կանդար կուտ կուտի անիրավ Ջալը, մե խատ ծյու չի թալի»...

Մաշիտա հանըմը սպառնում էր Ջալը մորթել, բայց անցնում էր գարունը, ամառը, հավերը պառավում էին, ծանրանում, իսկ նա սպառնալիքը չէր իրագործում։ Հավը մեռնում էր բնական մահով, Մաշիտա հանըմը լաց էր լինում ճշմարիտ և անարատ արցունքով։

Նրանց կյանքի սկիզբը պարզ և հանդարտ էր հոսել, ինչպես հայրենի գյուղի վճիտ առվակը։ Ապա հանկարծ

երկինքը սևացել էր, սևացել էր և գետինը, պայթել էր ջարդը, հրդեհը, գաղթը։ Անցած ճանապարհներին թողել էին բազմաթիվ անքար դամբարաններ, որոնց մեջ ամփոփված էին սովից, սրից, տապից ու ծարավից մահացած մշակներ, մանուկներ։ Բաղդադում պապեն ստացել էր տենդ, որ հյուծել էր նրան, ինչպես սովը։ Մաջիտա հանըմըն էլ ծանր ոսկրացավ ուներ։

Նրանք փոխն ի փոխ պառկում էին, և ով ոտի վրա լիներ՝ հավերին նա պիտի խնամեր, նա՛ պիտի պտտեր կարի մեքենայի ժանգոտած անիվը։ Երկուսն էլ վախենում էին մահից, սակայն ոչ իր անձի, այլ մյուսի համար, որ նրա մահից հետո պիտի մնար մենակ։

Լևոնի այդ տունը փոխադրվելուց հետո պապեն ու «հանըմը» իրենց հովանու տակ էին առել նրան։

Մաջիտա մայրիկը ավլում էր նրա սենյակը, սրբում էր փոշին, երբեմն, և այն էլ երեկոները, թեյ էր առաջարկում։ Փոխարենը Լևոնը հատուցում էր բժշկին զանգահարելով, բնակարանի, լույսի և այլ մանր առօրյա պետքերին երբեմն աջակցելով։

— Մաջիտա հանըմի հոգևորդին է ընկեր Լևոնը,— ասում էին հարևանները։

Իսկ Մաջիտա հանըմը անկաշառ խանդաղատանքով էր արտահայտվում նրա մասին, ակնածությամբ նրա անունը տալիս և երբեմն պարծենում այդպիսի մարդու բարեկամությամբ։

Լևոնը չէր մերժում այդ բարեկամությունը։ Լարված աշխատանքից հետո հաճելի էր կարճ ժամանակ զրույց անել Մաջիտա մայրիկի հետ այնպիսի բաների մասին, որ կապ չունեն մեքենաների, պլանների, հաշիվների, խորհրդակցությունների հետ։

«Պապեն» նրա սենյակը ոտք էր կոխում տարին մի կամ երկու անգամ և բավականանում էր բարևով։ Իսկ մայրիկը կարող էր պատմել միայն այն աշխարհից, որի սահմանները հասնում էին մինչև դարպասը։ Մանր պա-

*տանհարմներ, կցկտուր խոսքեր, հարևանի տանը լռածը և վերջապես հավերժի գլխովն անցածը—ահա նրա զրույցի առարկան։*

*Սակայն կար և մի խորհրդավոր «թեմա», որի շուրջը խոսակցությունը ակնարկից այն կողմը չէր անցնում, և որին Լևոնը պատասխանում էր անկեղծ ծիծաղով։*

## 5

*— Դհա կուզե՞ս...*

*— Չէ, մայրիկ... Տաքացա։ Էսօր դուրսը քիչ խոնավ է։*

*— Տնավեր, էն կազախի կիսու շափ էլ չկաս... էն կանդար չայ, ես իմ սստված, հավատալու չի...*

*«Ղազախը»— Նույն միջանցքում ապրող ռուս բարձրահասակ ուսանողն էր, որից Մաշիտա մայրիկը քաշվում էր։ Ոչ մի բառ ռուսերեն չիմանալով, Մաշիտա մայրիկը մտերմացել էր միայն նրա փոքրիկ աղջկա հետ, որի թևից բռնած երբեմն տանում էր հավաքունի կողմը և կուտը տալիս աղջկանը, որպեսզի նա ցրի։*

*— Լցե՞մ։*

*— Չէ, մայրիկ...— և Լևոնը տեղից վեր կացավ։*

*— Էսօր չգիտեմ ոտքս ինչու է ցավում...*

*— Յարալու ո՞տքդ է...*

*— Հա՛։*

*— Ոսկորիցն է... Եղանակը որ նամացավ, իսա ոսկորիս մեջն է։ Որ արև էլավ, օդը չոր՝ հեչ...*

*Մաշիտա մայրիկը բաժակը վերցրեց, սեղանից սրբեց շաքարի փշրանքը։ Լևոնը մոտեցավ գրքերի դարակին։ Մեջքը դեպի պառավը։ Չէր երևում, գրքերի՞ն է նայում, թե՞ ծաղկամանին։*

*Պառավի մտքովն անցավ, որ հարմար առիթ է ավելի պարզ ասելու այն բանի մասին, բայց Լևոնը հանկարծ շրջվեց։*

— Խոնավ է, բայց լավ գիշեր է...— և կարծես ինքն իրեն վերջացրեց,— էսօր հոգնած չեմ, թեև շատ եմ աշխատել...

— Գարուն է... Անուշ օր կբացվի վաղը։

— Ամպ է, մի քիչ ցեխ...

— Մասիսի կլոխ պարզ ի... լուսու մոտ լուսնակ կելնի...

— Դա՜-սս...

Այդպիսի անհասկանալի բառերից Մաշիտա մայրիկը խորշում էր։ Նա այնքանն էր հասկանում, որ Լևոնի միտքն այդ րոպեին նրա համար անմատչելի հեռուներումն է։

— Քելի՛, փիսո...— կատուն մռաց։ Լևոնը մատներով թմբկահարում էր դարակի տախտակը։

— Նայի որ «պապեն» շուտ առողջանա...

— Ղուրբան քեզի, Լևոն, որ չուրիլուս միտքս էտա ի։

Եվ պառավը դուրս գնաց «բարի գիշեր» ասելով, գնաց փոշմանած, որ ինչո՞ւ չասաց։ Նա երբեք Լևոնին այդքան պարզ և հասարակ չէր տեսել։ Նույնիսկ ուրախ էր. պառավին թվաց, թե նա մատները քսեց ծաղկամանին։

Իսկ պառավը ուզում էր հիշեցնել... ամուսնությունը։ Նա ակնարկներ էր անում, որ Լևոնին պակասում է «խորոտ կնիկ», այն ժամանակ օրերը ուրիշ կլինեն, ո՜ւրիշ...

Բայց չասաց։ Պառավը կորցրեց ամենահարմար առիթը, որովհետև Լևոնի վրա իջել էր այնպիսի տարօրինակ ժամ, երբ մարդ բացում է ներսը և թերթում հանդարտ, ինչպես ուրիշի ստեղծագործությունը։

Գարնան գիշերն էր, ռադիոյի երգն էր բամբակի դաշտերի մասին, թե ծաղկամանն էր,— դժվար էր ասել։ Գուցե բոլորը միասին, ավելացրած այն խաղաղ տրամադրությունը, որ ունի մարդ, երբ հաջող ավարտում է աշխատանքը։ Գուցե և ուրիշ մութ բան, ինչպես բողբոջի բացվելը, ջրերի խոխոջը։

Լևոնը բաց արեց պատուհանի փեղկը։ Սառը քամին ներս խուժեց խոնավ հողի բույրով։ Մի րոպե թարմացավ ճակատը։ Մոտեցավ սեղանին, քաշեց արկղը։

Թղթերի, գրքույկների, նամակների և նկարների խառնիխուռն կույտեր էին։ Կային նագանի փամփուշտներ, որսորդական դատարկ պատրոններ, մի քանի դատարկ տուփեր և այլ անպետք և պիտանի մանրուք։

Նա հետ տվեց մի փաթեթ։ Փոքրիկ կարտոնի վրայից իրեն էր նայում Լուսիկը, այնպես, ինչպես այն տարին։

— Մեկ, երկու, շուտով երեք տարին կլրանա,— մտքում հաշվեց Լևոնը։

Եվ այն, որ շուտով երեք տարին կլրանա, այն, որ Լուսիկի բաց ճակատին մի խոպոպ էր կախվել և խանգարում էր նրան գրելիս, և այն անկրկնելի գարունը նրա սիրտը լցրին անհանգիստ վրդովմունքով։ Նա աչքերին մոտեցրեց նկարը, ապա դժվարությամբ հետ տարավ, պահեց թղթերի տակ, թափով հետ մղեց սեղանի արկղը։ Թափից երերաց սեղանը ու վրան դրած էլեկտրական ճրագը։

Լևոնը տեղից կանգնեց, ձգվեց, մկանները տրաքտրաքվեցին։ Մի դյուրեկան հոգնածություն իջավ մարմնին։ Չքացավ անհանգիստ վրդովմունքը։

— Էսօր քունս չի տանում... Գնա՞մ Ասաքի մո՞տ...

Եվ նայեց ժամացույցին։ Ժամանակ կար։ Կարծես այն, որ ժամանակ կար, ավելի հաշտ դարձրեց իրեն՝ այդ վրդովմունքի և վերհիշողության հանդեպ։

Լա՛վ, հիշիր, բոլորը, բոլորը... հետո ի՞նչ... Նու հիշի՛ր։

Կարծես հիշողը տարբեր մարդ էր, և ինքը նրան թույլտվություն էր տալիս։

Եվ վարագույրն ընկավ ծածկված նկարներից։ Առաջին պահ նա զարմացավ... Ի՞նչքան բան է մնացել Լուսիկից իր հիշողության խորքում։ Իսկ ինքը կարծում էր, որ ոչինչ են հետքերը։

*Նկարներ են կախված հիշողության պատից։ Ահա կատաղած, պղտոր գետը ձորի մեջ։ Սև քարերը հազիվ են շողշողում գլուխները ցցել փրփուրի միջից։ Այդ հեղեղի վրայով քարից քար ցատկելով անցնում է ինքը Լուսիկի թևից բռնած... Եվ դեռ քրքջում են։ Ահա Լուսիկի ոտքը սայթաքեց, քիչ մնաց գլորվի փրփուրի ավազանը։ Թևից կախվեց, ափը հասան, չոր ցախերը ժողովեցին, փոքրիկ խարույկը թեժացավ, փռեցին Լուսիկի թաց գուլպաները։ Իսկ աղջիկը բոբիկ ոտքերը դրել էր մոխրի վրա։ Բոցը խաղում էր նրա սրունքների վրա, ինչպես աղոտ հայելու մեջ։*

*Այս նուրբ նկարը... Ճանապարհը սպիտակին է տալիս, ինչպես ջուրը լուսնկայի շողերով։ Հորիզոնի խորքում շողշողում է Արարատի սպիտակ գլուխը։ Կապույտ երկինքը կարծես կոր հայելի է, և նրա խորքը արտացոլում է մի ուրիշ գագաթ։ Սայլը ճռռում է ամառվա հանգով։*

*Գյուղից են գալիս... Բացօթյա միտինգ էր, իրիկնադեմին՝ երգ ու խաղ։ Ոմանք ոտով են։ Աղջիկները սայլի վրա են։ Իսկ Լուսիկը երգում է։*

Նռան կլեպ պռոշդ,
Նեյնիմ ա՛ման աման...

*Երգում է հոգնած, բարակ ձայնով։ Սայլը ճռռում է երգի հանգով, օրորալով գնում են եզները։*

*Այս մեկը խավար է։ Այս մեկը ամենաջերմ նկարն է, ներկը վառ, ինչպես Լուսիկի երեսը, երբ ծաղկած ծիրանների փողոցից մտնում էին լուսավոր պողոտան։*

*Ծաղկած ծիրանների փողոցը... Նույնիսկ փողոց չի կարելի հաշվել, որովհետև մի ծայրը աստիճանաբար բաժանվում է բարակ ճանապարհների, որոնք կավե պատերի արանքով տանում են դեպի այգիները, և այնտեղից էլ մի ճյուղը ձգվում է ամայի բլուրի վրայով դեպի առապարները, ուր գարնանը մակաղում էր քրդերի ոչխարը։*

Բլուրի վրայով ձգվում է շոսեն, նրանից ներքև քարակույտեր են, ապա այգիները։ Ձմեռը նապաստակները ցրտից և սովից նեղվելով հանդգնում են իջնել մինչև այգիները, կրծելով կաղամբի մոռացված թուփը, երիտասարդ ծիրանիների մաշկը, և ո՞վ գիտե, նրանցից ամենահամարձակը ձմեռվա գիշերին հասնում է այդ անվախճան փողոցին և շների հաչոցից սարսափած փախչում է դեպի առապարի որջը։

Այդ նկարը խավար է, որովհետև նրանք մութն ընկնելուց էին մտնում այդ փողոցը, որի բնակիչները արևի մայր մտնելու հետ փակում էին իրենց տների և պարտեզների փոքր դռնակները։ Փողոցը մինչև լուսաբաց մնում էր նրանց ու նման զույգերի, որոնք իրար չէին ճանաչում, զուսպ էին խոսում, երբ լսվում էր ոտնաձայն, և քաշվում էին այն խորշերը, որտեղ մութն ավելի թանձր էր, որովհետև ծիրանի ծաղկած ճյուղերը ծածկում էին լուսնյակն ու աստղերի լույսը։

Լսվում էր մի ոտնաձայն, Լուսիկը սեղմվում էր նրա թևին, շունչը պահում։ Անցորդը ուշ մնացած մարդ էր, որ շտապում էր փոքրիկ դռնակներից մեկը բախելու և կամ թե հարբած էր, գնում էր օրորալով, գնում էր՝ կամ հայհոյում, կամ տխուր երգ ասում։

Պատի տակով առուն էր, երեսը բաց, ջուրը սառը։ Սարերից էր գլորվում առուն, և նրա թափը դեռ չէին կոտրում բլուրի լանջի այգիները։ Գուցե թե ներքի տափարակում, բրնձի ու բամբակի դաշտերի մոտ նրա թափը կոտրվեր, աղմկոտ խոխոջը հանդարտվեր։

Նրանք նստում էին առվի եզրին, և երբ հանգչում էր զրույցը, նրանք լուռ ականջ էին դնում առվին։ Նայած թե ի՞նչ էին խոսել, Լուսիկն ի՞նչ էր ասել, Լևոնը նեղացել էր նրա վրա, թե երկուսն էլ ոգևորված խոսել էին սովորելու, աշխատանքի և ո՞վ գիտի էլ ինչ պայծառ նյութերի շուրջը։

Եթե նեղսրտում էին, թվում էր, թե առուն էլ էր չարացել... Երբ խոսք էր լինում Լևոնի Մոսկվա գնալու մա-

սին, կարծես առուն վշտակցում էր Լուսիկին, իսկ երբ ծիրանիների տակ զրույցը դառնում էր առօրյա դժվար աշխատանքի և պայքարի շուրջը, կարծես լսելի էր, թե ինչպես ալիքները խփում են քարերին, որոնք խանգարում էին նրանց սրարշավ ընթացքը։

Եվ ինչ խոսում էին՝ ջուրը տանում էր. բոլորը, նույնիսկ համբուրելը, հանաքները, այն, որ կավի պատը փոշոտում էր Լուսիկի դեյրան, շունը, որ ցած թռավ և նրանց վախեցրեց,— բոլորը չքացել են, մնացել է լազուր հիշողությունը և մի կսկիծ, որ երբեմն մրմռում է, ինչպես ոտքի սպին, բայց նա կարողանում է տեսնել, շոշափել սպին, երբ տրորում է ոտքը, ցավը մեղմանում է։ Իսկ այդ հետքը չի շոշափվում, բայց կա, մնում է։

Այ հենց հիմա... Տրթունքները չեն ասում, բայց մտքում կրկնում է.

— Ինչքա՞ն լավ աղջիկ էր Լուսիկը...

Մտքում կրկնում է, կարծես թե այդ լավ աղջիկը մեռել է։ Բայց Լուսիկը կա. շուտով ինժեներ կդառնա այն միամիտ աղջիկը։ Նրա մատները գծագրում են, տներ են շինել մարդիկ Լուսիկի պլանով։

Այսպես հասարակ եղավ բաժանումը։

—Ցտեսություն, ընկեր Լևոն...

Առաջին և վերջին անգամ նա այդպես ասաց։ Իրեն ուղարկեցին շրջան, Լուսիկը գնաց Մոսկվա։

Հետո ի՞նչ... Խնդրել է, գուցե թե հաջողվի, և ինքն էլ գնա։ Բայց չի կրկնվի ծիրանիների փողոցը։

Անցյալ տարի Լևոնը մեքենայով անցավ այդ կողմերով։ Պատահմամբ ընկավ... փողոցի աջ կողմը բարձրանում էին նոր տները... Նրանց մի մասը կիսավարտ էին։ Փողոցի երկայնքով շարել էին կապույտ որձաքարը։ Մնում էր ծիրանիների փողոցի ձախ պատը, պատի հետևը՝ ծառերը։ Նույնիսկ ջուրը տեսավ և այն պատշգամբը, որի տակ պատսպարվել էին հորդ անձրևին։

Լևոնը գիտեր, որ քաղաքի շինարարությունն այն կողմերում է կենտրոնացած։ Բայց առիթ չէր եղել շրջելու։

Նրա աշխատանքը գյուղերի հետ էր, ցորենի, բամբակի համար։ Նրա մտքում մեքենաներն էին, գործիքները, որոնք վագոններում գալիս էին, որպեսզի իրենց անիվների վրա ցրվեն դեպի դաշտերը, դեպի սարալանջերը։

Նրա հիշողության մեջ ամենավառ ներկով այդ նկարն էր, ծաղկած ծիրանիները, երեսը բաց առուն և կավի բարձր պատերը, որոնք պարփակում էին իրենց մեջ և՛ խոխոջը, և՛ ծաղիկների հոտը, և՛ անթափանց մի լռություն։ Կարծես քաղաքը և նրա ձայները չէին հասնում մինչև այդ խոր փողոցը։

Ցերեկը աշխատանքի ժամերին հիշում էր Լուսիկի խոսքերը, երեկվա պատահածը, ինքն իրեն ժպտում էր՝ ուրախությունից, երիտասարդական ավյունից, և ավելի թեթև էր գնում աշխատանքը։ Եթե սենյակում մարդ չէր լինում, նա երբեմն սուլում էր... Սուլում էր և հեռախոսի փողի մեջ և խնդրում էր, որ փողը Լուսիկը դնի ականջին։

— Կշտացա՞ր,— ծաղրի տոնով հարցրեց Լևոնը և վեր կացավ տեղից։ Կարծես ուրիշն էր հիշում, և նա համբերությամբ սպասում էր, որ այդ ուրիշը հագուրդ տա ներելի թերությանը։

Վարագույրն իջավ նկարների վրա։

Սենյակի մեջտեղը կանգնել էր ուրիշ մարդ։ Նրա աչքը ծաղկամանի վրա չէր, ոչ էլ միտքը՝ ծաղկած ծիրանիների փողոցում։

Այդպես է նա աշխատանքի տեղը։ Ասում են, որ խիստ բնավորություն ունի Լևոնը։ Համառ է, տոկուն աշխատող։ Նա աշխատեցնում է մարդկանց, և նրանք զարմանքով են պատմում նրա անսպառ եռանդի մասին։

Ցերեկը հարյուրավոր մարդիկ ներս են մտնում նրա սենյակը, բազմաթիվ հեռագրեր, գրություններ։ Հեռախոսները զանգահարում են, աղմկում են դռները, մեքենագիրները, մարդիկ։ Մի տեղից շտապ պահանջում են տավոտ և բենզին, մի տեղ հարկավոր է հեռագրել, որ

տրակտորները փոխադրեն մի ուրիշ շրջան, որովհետև այնտեղ պահանջը մեծ է, իսկ գարունը ջերմացնում է, հողը վար է պահանջում։

Մի շրջանի նախագահը մանվածապատ սխում է «նաղլը», իսկ Լևոնը մի քանի կտրուկ հարցերով տեղն է գցում խոսակցությունը, ինչպես շկիվից թռած փոկը։ Լսում է մարդուն, հեռախոսը զանգահարում է նորոգման արհեստանոցը, և մտքի խորշում միաժամանակ շարժվում է նոր գաղափար, նոր գործ, նոր նախահաշիվ։

Սենյակի մեջտեղը ահա այդ մարդն է կանգնած, որի օրը վերջացել է, պիտի հանգստանա վաղվա աշխատանքի համար։ Բայց այսօր տեղաշարժ է եղել նրա առօրյան, և ինքն էլ հետաքրքիր զննում է իր ընթացքը։

— Ասաքի մոտ ուշ չի՞...— նայեց ժամացույցին։

Միջանցքում կախված է շինելը։ Դուրսը խոնավ է, և Լևոնը կախարանից հանում է շինելը և ոչ թե պալտոն։ Հագնվում է և պինդ կոճկում։

Տաք շինելը ձգում է մեջքը, և այդպես նա իրեն կայտառ է զգում։

Հանգցնում է լույսը և զգուշությամբ բացում ապակյա դուռը։ Հարևանները քնել են. միայն «ղազախի» ձայնն է լսվում։ Երևի դասն է սովորում։

## 6

Դիմացը էլեկտրական խոշոր լամպն է, բարձր սյունից կախված։ Սպիտակ մշուշը շարժվում է վերերով։ Նա շարժվում է, իսկ թվում է, թե լամպն է օրորվում։ Եվ մշուշը մաղում է նուրբ անձրև։

Լևոնը գոհ էր, որ շինելը վերցրեց։ Եվ գոհունակությունը նա արտահայտում է ձեռքերը գրպանը կոխելով, թևերն ավելի սեղմելով իրանին։

Նա գլուխը վեր բարձրացրեց։ Դիմացի սպիտակ տունը ձգվել էր և ավելի բարձր էր թվում մշուշի մեջ։

Վերի հարկում մի քանի պատուհաններ լուսավոր էին. նրանք մշուշի միջից էին երևում, և կարծես մի ուրիշ տան հարկ էր։

Մշուշն անցնում էր ծովեններով։ Ահա մեկի վերջին քուլաները՝ շղարշի նման թափանցիկ։ Նրանց արանքից երևում են աստղերը։ Իսկ Արարատի լերկ կատարը շողշողում էր աստղերի լույսից։

— Ճշմարիտ էր Մաչիտա մայրիկը... վաղը արև պիտի անի։

Լևոնը մայթի վրայով գնաց դեպի վեր։ Առվի եզերքին փոքրիկ լորիներ էին, իրարից հավասար հեռավորության վրա, Լևոնը հիշում է նրանց տնկելը։

Աշնանը ծառերը տնկեցին, հաջորդ գարնանը նրանք բոլորն էլ ծաղկեցին, բացի մեկից։ Գիշերն անցնող սելվորները այդ մեկը կտրել էին ճիպոտի համար։

Հիմա ծառերը չորացել են... Երկրորդ գարունն է։ Տասը գարուն հետո նրանք այնքան կբարձրանան, որ կհասնեն երկրորդ հարկի պատուհաններին, և մարդիկ լորիների հովի տակ անց ու դարձ կանեն։ Փողոցը կդառնա անփոշի, մաքուր, լորիների փողոց, նրանք էլ կծաղկեն ինչպես ծիրանին...

Լևոնը ձեռքը մեկնեց մի ծառի. մատներով սեղմեց։ Ծառին ոչինչ չասաց, որովհետև ծառի հետ չեն խոսում, բայց եթե խոսեր, նա աշխատանքի մարդու անսահման ուրախությունը պիտի հայտներ, որ ծառերը մաքրում են օդը, հով են տալիս և շոյում են աչքերը։

Լևոնը կտրեց փողոցը, զգուշությամբ կոխելով անձրևից թրջված և լապտերների լույսից փայլփլող սալքարերը։ Դիմացը վիթխարի շենքն էր, որի կեսը դեռ չեն ծածկել։ Մյուս կիսում աշխատում էին ցերեկները։ Մի քանի պատուհան լուսավոր էր։

Լևոնը նայեց... Դեռ չսպիտակացրած սենյակում սեղանի վրա գլուխը կռացրել էր Սողոմոնը։ Նա կամ հաշվում էր, կամ գրում։ Միայն ձեռքն էր շարժվում։

Ճնշող մեծամասնությամբ Սողոմոնը՝ հաղթանդամ, ծանրախոս, դանդաղաքայլ։ Երկու օր առաջ կոմիտեի նիստում նրա զեկուցումն էր։ Մի քիչ «սեղմեցին». Սողոմոնը նեղն էր ընկել։ Լևոնն էլ ուզեց խոսք վերցնել և ավելացնել, որ ուշադրություն չեն դարձնում, որ շատ գյուղեր տրակտոր, շարքացան չի կարելի տանել միայն ճանապարհ չլինելու պատճառով, բայց ականջին հասավ Սողոմոնի ռեպլիկը, ուղղված մի ուրիշին.

— Բուջե չկա, բուջե չկա... էտ անդերը հինչավ շինեմ...

Հոգնած ժողովը ծիծաղեց նրա բարբառի, նրա պարզամտության և զայրույթի վրա։

Պատուհանի ետևից երևում էր Սողոմոնի գլուխը։ Լևոնը հիշեց այն նիստը, սակայն միտքը թռավ հետ, քաղաքացիական կռիվների տարին, այն լեռնոտ գավառը, որտեղ այն տարին ապրում և պայքարում էին ինքը, Սողոմոնը, որին Սուղի էին ասում, Ասաքը, որին քաղաքում ճանաչում են իբրև ընկեր Սահակ, և ուրիշները... Մի քանիսը սպանված, ոմանք այստեղ, ուրիշները ցրված խորհրդային անծայրածիր երկրներում՝ Թուրքստանից մինչև Սառուցյալ օվկիանոսի ափերը։

Եվ շարունակեց քայլերը, մտքում՝ Սուղին, Ասաքը, այն լեռնոտ գավառը, քաղաքացիական կռիվների տարին։

Սուղին այն ժամանակ հազիվ գրաճանաչ էր։ Ամառ ձմեռ հագին ռետինե տարօրինակ պլաշչ էր, որի նմանը նա անցյալ աշնանը նավի վրա տեսավ մատրոսների հագին։ Որտեղից էր ընկել այդ պլաշչը։ Նստում էր ժողովներին, Սուղին ձանձրանում էր վեճերից, բայց երբ հարցը գալիս էր ապստամբության, նրա աչքերը լայնանում էին, տեղի էր կանգնում, սրան նրան հրմշտկելով մոտենում սեղանին և ձեռքը խփում։

— Հուպ տու... իմ ասմունքն էլ էդ ա...

Առաջին տարիները գավառում նրան այդպես էլ կանչում էին. «Հուպ տու Սուղի...»։

Իսկ Ասաքը ծանր էր, տարիքից ավելի լրջամիտ։ «Ուրբաթախոս» էր, ծխախոտը բերանից անբաժան։ Ինչ էլ ձեռքն ընկներ ծխում էր՝ մախորկա, խոտ, տերև... Նրա ծխախոտի կծու հոտը ջղայնացնում էր Սուղոն։ Երբ մի ժողովում հարց էր դրված թշնամու թիկունքը մարդ ուղարկել, Սուղին Ասաքի թեկնածությանը հակառակեց.

— Նրա բերանից ծխախոտ ա գալիս... Քառասուն վերստի վրա էլ նրան էդ շնահոտի վրա կճանաչեն։

Մի ուրիշ լայն փողոց վերևից գալիս և երկու կես էր անում այն փողոցը, որով գնում էր Լևոնը։ Խաչաձև կտրվածքի մեջտեղը հետ ու առաջ էր գնում հերթապահ միլիցիոները։ Նա ձանձրացած էր քայլում, կարծես կարոտում էր ցերեկվա ժխորին, որպեսզի գոտկից կախ նշանի փայտը աջ ու ձախ դարձնի երթևեկությունը կանոնավորելու համար։

Մայթերի վրայով տուն էին շտապում մարդիկ։ Նրանք ուշադրություն չէին դարձնում միլիցիոների վրա։ Նույնիսկ վերևից մի ավտո սլալով եկավ և, առանց գուդոկը տալու, ածելու պես կտրեց միլիցիոների կանգնած տեղը և իջավ ներքև։

Փողոցի շարունակությունն անցնելուց Լևոնի ընդհատված մտքերն էլ ծանոթ հունն ընկան։

Ասաքը շա՜տ է փոխվել... Այն տարին նրա երեսին ժպիտ չէր երևում, այժմ կենսուրախ է, անհոգ։ Գուցե այդ անհոգությունն է նրա նիհար մարմինը գերացրել, կլորացրել։

Տուն ունի, կին ունի, չորս երեխա... սենյակների ներսը խառնիխուռն, գրքերը երեխաների կոտրատված խաղալիքների կողքին, այստեղ այնտեղ մանր ու մեծ մահճակալներ, որոնց վրայից կախված են լաթեր, երեխաների սպիտակեղենը և ուրիշ շորեր, որ կինը չի հավաքում, երբ Լևոնը ներս է մտնում, որովհետև նրանից ոչ ոք չի քաշվում։

— Երևի երեխաները քնած են... Կիմիկը չէ՞...

Կռմիկը եթե քնած էլ լինի, Լևոնի ձայնից կզարթնի, կկանչի մյուսներին, և կսկսեն կախվելը, քաշվելը, աղմըկելը: Կոկովի, ինչ Ասաքը ծիծաղելով անվանում է «ղարաչու բալար»:

Լևոնը ժպտաց, որովհետև հիշեց, թե ինչպիսի անուններով է կանչում նա իր երեխաներին. «Արի՛ համագումար, արի...» ...«իմ պատասխանը Չեմբերլինին»... իր միակ աղջկանը նա կանչում է «Չերվոնեց», որովհետև աղջիկը ծնվել է չերվոնեցի երևալու առաջին տարին:

Այդ աղմուկի մեջ Ասաքը կարողանում է աշխատել, երեխաները թռչկոտում են, բարձրանում նրա վրա, քաշքըշում, իսկ նա գլուխը պատի կողմը դարձրած կարդում է: Երբ շատ են աղմկում, վեր է կենում դուռը բաց անում և բոլորին քշում բակը: Քշում՝ ինչպես հավերը:

Կենսուրախ է Ասաքը. այդ կենսուրախության մեջ չի կորել նրա երբեմնի լրջությունը: Կես հանաքով, կես լուրջ նա գանգատվում է, որ «փորի մակարդակը նորից է բարձրացել», բայց հանաքից հետո խոսքը դարձնում է առօրյային, կուսակցական ներքին կյանքին, քաղաքական խնդիրներին կամ դատողություններ է անում կարդացածի մասին:

Եվ հին «ուրբաթախոսը» հառնում է Լևոնի առաջ...

Ահա սարալանջը... Հրաբխային ավազ է: Դժվար է բարձրանալ, որովհետև ավազը սահում է, ոտքերը կարծր գետնին չեն հասնում: Բայց նա ոտքի էլ չի կարողանում կանգնել: Նրա մի ոտքը ծանրացել է... Ներքևը տաք է: Լևոնը չի նայում, որովհետև գիտի, որ արյուն է:

Մեկը նրան վեր է քաշում: Գրկել է մեջքից և բարձրացնում: Բարձրացնում է և ամեն րոպե դժվար շնչելով ասում.

—Հրես հա՛... Հրես հա... Շուռ եկանք սարի քամակը:

Ներքևը այգիների կողմից անկարգ կրակոցներ են: Միայն մի գնդացիր շարում է գնդակները լեռան լանջին... Լևոնը հիշում է, որ լուսաբացին ապստամբությունը պայ-

*թեց անակնկալ։ Նահանջեցին։ Բայց ո՞րտեղից հայտնվեց Ասաքը։ Նա ուզում է հարցնել, բայց վերքը ցավում է։ Ու չի տնքում։ Ատամները սեղմել է... Ասաքի գլխին մի շըտեսնված գլխարկ է, ծղնոտից գործած։ Երբեք այդ գլխարկը նա չէր ծածկում, Լևոնն իր կյանքում այդպիսի գլխարկ չէր էլ տեսել։ Եվ սեղմած ատամների արանքից նա հարցնում է։*

*—Որտեղից էդ շլյապը...*

*— Հրես հա՛, հրես հա... Շուտ եկանք սարը...*

*Տարիներ հետո Լևոնը մի անգամ Ասաքին հարցրեց այդ գլխարկի մասին։ Ասաքը քթի տակ դժգոհ ասաց, որ «յուրացրել է» մալական ֆուրգոնչուց։*

*— Գլխումս մեխվել էր, որ գլխաբաց փախչելն ամոթ է...*

*Այլևս չէր հիշվում «մալականի» գլխարկը։*

## 7

*Այստեղից սկսվում են նոր տները։*

*Նրանց բարձր շարքերը գնում են դեպի սարալանջի այգիները։*

*Լամպերի շարքը ձգվում է հեռու։ Ինչքան հեռուն է նայում, լամպերը ավելի սեղմ են իրար։ Վերջին լամպը չի երևում։ Նշանակում է՝ երկար է տների շարքը։*

*Լևոնի սիրտը լցվում է ջերմ ուրախությամբ, ինչպես փողոցի լորենին շոշափելուց։ Տների կառուցմանը նա չի մասնակցել, բայց նրա սրտում զարթնում է հաղթողի զվարթ ուրախությունը։*

*— Մենք ենք շինել... մերն է...*

*Այստեղ էլ մշուշը հոսում է կտուրների վրայով, մաղում է գարնանամուտի տաք շաղը։ Շենքերի պատերը, թիթեղյա կտուրները թացանում են։ Թիթեղն էլ առաջին անգամն է պառկել անձրևի տակ, իսկ քարերը մթին*

ընդերքում ոչ անձրևի տակ են եղել, ոչ մշուշն է նրանց լիզել։

Տները բարձր են, քարակառույց են, տները վիթխարի են։ Այստեղ սկսվում է մի նոր քաղաքի սահման։

Լևոնը կանգնել է սահմանագլխում... Ահա հին տունը, կավե պատեր, փայտե նովդանները ծռվել են։ Դարպասը կախվել է։ Ներսը գուցե մարդիկ դեռ արթուն են, բայց պատուհանները նեղ են, փոքր, ինչպես մութ զնդանի պատուհանը։ Ձայն չի լսվում ներսից, ոչ էլ ճրագ է երևում։

Ահա մի ուրիշը նոր տան կողքին... Քանդել են նրա բակի պատերը, ցանկապատը հանել են, և հազարավոր սայլեր, մեքենաներ այդ հին բակով կրել են ավազ, քար, ցեմենտ, տախտակ։ Կուչ է եկել հին տունը։ Նրա ճակատի կողմը երևում է խոր ճեղքը, կայծակի ձևով։ Կարծես կրնճիռի ծալք է։ Երևի մեքենաների դղրդոցից, քարերի գետնին ընկնելուց հին տունը ճաք է տվել։

Իսկ այս մեկը շրջապատված է տաշած քարերի կույտով։ Ահա փողոցի մի մասը կտրել են տախտակներով և թողել են փոքրիկ դռնակ, որ վանդակի մեջ ընկած տան կենվորները երթևեկեն։ Ուրեմն այստեղ էլ պիտի կառուցեն։

Նոր քաղաքը հրում է։ Բարձր տները նայում են քաղաքի մյուս մասերում անկարգ ցրված հատ ու կենտ նոր տներին և կարծես ձայն են տալիս սեղմելու, իրար միանալու և գետնի երեսից չքացնելու հողաշեն փլեկները։

— Այն փողոցը այս կողմերն է...

Լևոնը վերհիշում է ծաղկած ծիրանիների փողոցը։ Նայում է վեր՝ Ասաքի բնակարանը դեպի վեր է... Մի քիչ տատանվում է և քայլերն ուղղում է ներքև։ Ինքն իրեն ասում.

— Ես չեմ տեսել այն կողմի տները...

Ու քայլում է, ձեռքերը գրպանը։ Քայլում է և չի

*զգում, որ շաղ է նստում շենքի վրա, ոտքի տակից ցեխ է թռչում շենքի փեշերին։ Մի պատուհան բաց է... Լևոնը նայում է վերև։ Նրան դյուր է գալիս, որ կենվորը գարնան այդ մշուշին բաց է արել պատուհանը, և մշուշը ներս է մտնում։*

*Ռադիոն երգում է բաց պատուհանից։*

*— Ուրեմն դեռ ուշ չէ...— մտածում է Լևոնը։ Մի քանի կանայք, տղամարդիկ ծիծաղելով անցնում են դեպի նոր տները։ Նրանք կինոյից են գալիս և ուրախ են, որ նոր տներում լուսավոր, ընդարձակ սենյակներ ունեն։*

*Լևոնը մեխվում է տեղը.*

— Վոտ չորտ,— *ասում է և շարունակում քայլերը։ Ռադիոյի աղջիկը երգում է.*

Նռան կլեպ պռոշդ...
Նեյնիմ աման ամա՜ն...

*Լևոնը դանդաղ է քայլում և ափսոսում է, որ այդ խոսքն ասաց.*

*— Տարօրինակ է...*

*Եվ նա նայում է աջ, ձախ։ Ո՞ւր է ծաղկած ծիրանենիների փողոցը... Ձախ կողմն էլ բարձրացան շենքեր, նույնպիսի բարձր տներ վարդագույն տուֆից, կապույտ բազալտից։ Ահա այն պայտաձև տունը, նրա քարերը եկեղեցու քարերն են։ Տունը երկա՜ր, երկա՜ր պատշգամբներ ունի դեպի բակը։ Պատշգամբները լուսավոր են...*

*Բայց ու՞ր են ծիրանիները։*

*Կարծես երկար տարիների օտարությունից վերադարձել և փնտրում է այն տունը, որտեղ անցել էր իր մանկությունը։ Փնտրում է, և չկա, և որովհետև չկա, ավելի է բարձրանում նրա հուզմունքը, նրա կարոտը։*

*Մինչ այդ, նա երբեմն հիշում էր այդ փողոցը։ Այն միտքը, թե ծառերն ու կավե պատը, փոքրիկ պատըշգամբը դեռ մնում են, նրան օգնում էր, որ հեշտությամբ*

վանի մտքից Լուսիկի հետ կապված հիշողությունները։ Կուզենա, կգնա մի անգամ էլ ծանոթ փողոցը։

Բայց հիմա չկա ոչ պատը, ոչ այն տունը, որի պատշգամբի տակ հորդ անձրևին պահվել էին, իսկ Լուսիկը սառած ձեռքը կոխել էր նրա թևքի մեջ։

Լևոնը հասավ մինչև անկյուն։ Պատշգամբով տան տեղը սև քարից տուն էր, որի մի թևը մյուս փողոցի վրա էր շրջվում։ Նրա կողքին երկհարկանի տուն էր։ Այնտեղ ապրում էին։ Երևում էին թաղարի մեջ դրված տնկերը։ Նրանց կանաչ տերևները կպել էին լուսամուտի ապակիներին։ Կարծես դժգոհում էին սենյակի օդից և կարոտում գարնանամուտի տաք մշուշը։

## 8

Երկհարկանի տան կողքին մշուշի մեջ ցցվում էին բարձր սյուները։ Սպիտակին էին տալիս հանգած կրի գուբերը։ Գետնից մի քանի մետր բարձրացել էր պատերի պլուխը։

— Մեծ տուն է...

Լևոնը տախտակների, քարերի արանքով մոտեցավ։ Մի փոքրիկ սանդուղք էր դրված։ Ցերեկը մշակները մեջքով քար են տանում, մինչև պատերը բարձրանան և սյուներից կախեն վերելակները։

Նա բարձրացավ սանդուղքով... Ու միտն ընկավ մի մոռացված դեպք, որ երբեք, երբեք չէր հիշել։ Ի՞նչպես էր ընկել մտքից... Գնացել էին ձորի կողմը։ Ամառ գիշեր էր։ Այնքան թափառեցի՜ն... Լույսը բացվում էր, երբ իջան քաղաք։ Տների պատուհանները բաց էին։ Առավոտի այն ժամն էր, երբ գիշերվա տապը գիջում է հովին, և խոր քուն են առնում մանավանդ երեխաները։

Այսպիսի մի սանդուղք հենված էր հողե պատին։ Լուսիկը խնդրեց բարձրանալ կտուրը։ Ներքև լույս փողոցներն էին, կիսաքուն դռնապանները ավլում էին փողոցները, ջուր ցանում։

*Ցածր կտուր էր, ներքևը բարդիներ, որոնց տերևները հազիվ էին դողում հովից։*

*— Լավն է մեր քաղաքը, չէ՞...— Հոգնած հարցրեց Լուսիկը։ Լևոնի պատասխանը քաղաքին չէր վերաբերում։ Լուսիկի դեմքին կարմիր պուտեր էին, գիշերվա հետքերը։*

*— Իջնենք սառը ջրով լվացվենք...*

*Բարդիների տակով գնում էր ջուրը։ Մի կին ջուր էր առնում, քանի մարդիկ չէին զարթնել, և չէր պղտորվել առուն։ Նա նայեց, հասկացավ և ժպտալով ասաց.*

*— Փեշքիր բերե՞մ...*

*— Ո՞վ է,— լսվեց մի ձայն տախտակների կույտի հետևից։ Լևոնը կանգնել էր պատի վրա և կիսամութում հիմքերի ձևից, գերաններից փորձում էր հաշվելու սենյակների թիվը։ Մի ստվեր, գորշ անձրևանոցի մեջ փաթաթված մոտեցավ։*

*— Բարև, ընկեր...*

*— Բարև։ Ով ե՞ս,— հարցրեց անձրևանոցի մեջ փաթաթվածը։*

*— Շենքին էի նայում...*

*— Վա՜յ ընկեր Լևոն, չճանաչեցի... Ներողություն։ Գնանք, գնանք բուդկան... Կրակ եմ արել,— և մարդը նորից մեկնեց ձեռքը, իջեցրեց նրան պատից։*

*— Ձայնը ծանոթ է... Բայց չեմ հիշում,— մտածեց Լևոնը և խոսքը փոխեց շենքի վրա։*

*— Ի՞նչ շենք է...*

*— Սա, ընկեր Լևոն... Բնակշինկոոպն է շինում... Համա ասում են ուսումնարան է։ Էդքանը մեզ հայտնի չի։ Էլ ոնց եք։ Լա՞վ եք։ Մի անգամ ձեզ տեսա, ասի մոտենամ, մեկ էլ... Հա՜, հրես իմ բուդկան....*

*Նրանք տախտակների ետևն անցան։ Մարդը տաշեղներից կրակ էր արել, վրան թեյամանը կախել...*

*— Հիմա էլ ըստի եմ բանում... Գիշերապահ եմ։*

*Կրակի մոտ ճանաչեց։ Օսեփն էր, ղազախեցի Օսեփը։ Երեք տարի առաջ նրա սենյակն էր մտել տրեխներով,*

մորթե փափախը գլխին մի մարդ, ծաղկատար երեսով։

— Ինձ քու մոտ են ղարկել...

— Ի՞նչ կա։

— Ինձ պտի ունթունես...

— Որտե՞ղ։

— Հո մեծամեծի գործ չեմ առում... ղարաուլ բան... կարամ լավ փայտոն քշիլ, ձի պահիլ... Մի խոսք, ամեն բան ձեռովս վեր է գալի...

Ծվ իսկույն ավելացրել էր, որ գյուղից նոր է եկել, տնից հեռացել է «կնկա պատճառով»...

Պարզ էր խոսում։ Ժպտում էր միամիտ. երևում էր, որ երեկ է սարից իջել։

Օսեփը դարձավ գիշերապահ, առաջին ամիսը նրա աչքին երևում էր, հետո ինքը գնաց գյուղ, հիշողությունից կորավ։

Մի երեկո, երբ ինքը ներս մտավ հիմնարկը, Օսեփը լեռնցու կոշտ ձայնով միջանցքի ծայրից կանչեց.

— Ընկեր Լևոն... էս սհաթիս մի կնիկ թելեպոնով քեզ հարցրեց։ Ասիստի չի... Նհենց զրինգ էր խոսում... Լուսիկն էր հարցրել...

— Ընկեր Լևոն... բախտս բերեց։ Գնացի Աշտարակուց մի աղջիկ առա, իմ ուզած օղլուշաղն է... Դեյրա եմ առել, մի ջուխտ բատինկա։ Տես,— և նա արձակեց անձրևանոցի կոճակները,— խատակ, մաքուր... էս սաղ նրա շնորհքն է... Համա էս գործս ուզում եմ փոխած... Այսուհետ ինձ հարմար չի։ Ես ըստի մենակ, նա ընդի...— և գդակը խառնելով ավելացրեց.

— Ասենք, պատահած վախտը գալիս է... Դե տան հաշիվը ուրիշ... Ծվ հարցրեց.

— Հմի որդի ես...— Լևոնը պատասխանեց։

— Քո կուշտը որ գործ լինի, էլի կգամ...

Լևոնը նայում էր կրակին։ Նրա ականջովն էր ընկել մի խուլ ձայն, որ գետնի տակիցն էր գալիս։

— Էս ջրի ձայն է՞, Օսեփ...

— Հա՛, տակի մի արխ կար... Մեշատ էր անում, տափի տակը քցեցին: Էս նրա ձենն է...

Սաղկած ծիրանիների փողոցի առուն: Քարերի տակ, մութի մեջ գնում են ջրերը, և նրանց ձայնը խուլ է հնչում:

Լևոնը վեր կացավ:

— Ջայ խմի...

— Չէ, գնում եմ:— Նվ մի քիչ մտածելուց հետո, հարցրեց.

— Օսեփ, էստեղ ծիրանի ծառեր կային...

— Ճշմարիտ, քո ասածն ա, ընկեր Լևոն... Հրե մի հատը մնում է...

Տախտակների կույտի հետևը մնացել էր մի ծիրանի: Երևի նա մնացել էր, որովհետև տախտակները դարսել էին առաջը: Իսկ պատի հետևի շարքը չկար: Նրանց տեղը ավազի, քարերի կույտ էր:

— Ըստի աղաք էլ եկած կլինես, որ հարցրի՞ր...

— Հա՛, ես էս փողոցումն էի ապրում... Ասացի մի տեսնեմ ինչ կա...

— Ինչ կա՞... Պալատներ կան, ընկեր Լևոն... Սրա մի հատը մեր գեղումը լիներ, սաղ ժողովուրդը մեջը կհավաքվեր:

— Էդ էլ կլինի, Օսեփ...

— Էն վախտը կնիկս կառնեմ, կգամ գեղը... Մեր սարերը սիրտս շատ ա ուզում, է՜...

Պահակը նրան ճանապարհ քցեց մինչև փողոցը: Բաժանվելուց նեղացավ, որ Լևոնը մերժեց թեյ խմելը: Լևոնը գլուխը կախ հեռացավ:

Քայլում էր ջերմ ուրախությամբ, գոհ էր իր այցելությունից:

— Եթե Ասատը քնած չլինի... Երևի նա էլ ինձ նման քիչ է լինում այս կողմերը: Մեզնից շատերը չգիտեն այն բոլորը, ինչ կառուցում ենք: Չենք տեսնում... ժամանակ չունենք...

Քայլում էր իր հանդարտ մտքերով և չէր զգում ո՛չ մշուշ, ո՛չ շաղ։ Նա ռադիոյի երգը լսեց։ Ականջներում առաջվա առվի խուլ խոխոջն էր։

## 9

Լևոնը ծռվեց դեպի Սահակի տան կողմը։ Բեռնատար ավտոներ, որոնք շինությունների համար քար, ավազ էին բերում, այդ փողոցով էին անցնում։ Նրանց անիվները խոր ակոսներ էին գծել ցեխի մեջ։

Այդ փողոցով էին անցնում և գյուղերից եկող սայլերը, որովհետև հին ճանապարհը լայնացնում ու նորոգում էին։ Հաղորդակցությունը գետի նման իր հունը փոխել էր և գլուխը շրջել այդ փողոցով։

Լևոնը գնում էր սայթաքելով, ոտքերն զգույշ կոխելով այն քարերի վրա, որ շարել էին ցեխի մեջ։ Լապտերների լույսից ցեխն ու գուբերի պղտոր ջուրը փայլում էին խավար փայլով։

Վերը մութն էր։ Տներն ավելի նոսր էին, լապտերները քիչ։ Շուտով պիտի ծռվել... Արդեն երևում է այն տունը, որտեղ ապրում է Ասաքը... Լույսեր կան, ուրեմն քնած չեն։

Երեխաները պիտի աղմկեն։ Ասաքի կինը պիտի վառի պրիմուսը... Եվ նույնը պիտի ասի, ինչպես միշտ։

— Լևոն, լավ ես անում, որ կին չես առել... Մենակ ապրելուց լավը չկա...

Վերևը մութն էր։ Մթնում լսվեց մտրակի շառաչ։ Անիվներ ճռնչացին։ Մեկը բղավեց.

— Դենը պահի, դենը պահի...

Անիվները ճռնչացին։ Մի րոպե հետո մթնից դուրս եկան մի զույգ գոմեշներ։ Լապտերը լուսավորում էր նրանց հաստ ճակատները և սև եղջյուրները։ Մի քիչ առաջացան։ Երևաց երկրորդ զույգը, բայց սայլը չկար... Ապա երրորդ զույգը, նույնիսկ զրնգաց շղթան, որով կապել էին իրար

լուծերը։ Գոմեշները ուժ էին անում, ձգվում առաջ։ Նրանց ոտքերը աջ ու ձախ սայթաքում էին։ Առաջի գոմեշը կընկներ, եթե լուծը չպահեր։ Մթնից մեկը դուրս թռավ և մըտրակեց։ Գոմեշը փնչաց։

— Ինչ են քաշո՞ւմ...

Լևոնը կանգնել էր քարի վրա և հետաքրքիր նայում էր։ Գոմեշները դանդաղ էին շարժվում։ Խավարի մեջ այնպես էր երևում, կարծես վերջ չունի նրանց շարքը և մի ահռելի ծանրություն գետնի մթին խորքից քաշում են լույս աշխարհ, քաշում են, և դեռ ծայրը չի պոկվել։

Գոմեշները կանգ առան։ Նրանք ձգում էին, լուծը սեղմում էր վիզը, և խոր փնչոցով վիզը այս ու այն կողմ էին շարժում, բայց ծանրությունը ցեխից չէին կարողանում հանել։

Լևոնը մի քանի քայլ արեց։ Մի խումբ երիտասարդներ վազեցին գոմեշների վրա։ Մի քանիսը մոտեցան առաջին անիվներին։ Վերջին անիվները բավական հեռու էին։ Նրանք առաջին անիվների հետ միացված էին հաստ գերաններով, որոնց վրա մի տարօրինակ բեռ էր։ Կարծես փոքր շոգեմեքենա էր, խողովակը ցցված։

— Արտա՛շ, քար դիր տակը, քար...

— Սպասի գոմեշները նաֆաս առնեն...

— Ի՞նչ էլ ցեխ է...

— Սրանց ցեխը մերից շատ է,— ասաց մեկը, որ հենվել էր գոմեշին։

— Ի՞նչ է էդ, ընկերներ,— հարցրեց Լևոնը։

— Սև «հաց», ընկեր,— պատասխանեց նա, որ կանգնել էր առաջի լուծի կողքին։

— Արտաշ, մի հարցրու տեղը... Թալքի իմանա,— մթնից կանչեց մի երիտասարդ։

Առաջին կանգնողը Արտաշն էր։ Եվ նա Լևոնից հարցրեց չգիտե՞ նա որտեղ են հանձնում հավաքած մետաղը։ Լևոնը մտածեց։ Իրենց պահեստի մոտ մի կիսավեր շենք կա։ Նրա իմացածով այնտեղ են կիտում։

— Շրջաբերական են ուղարկում, ալարում են, թե կարգին գրեն տեղը,— նախատեց Արտաշը։

Երիտասարդները Ախտայի շրջանի գյուղերից մեկի կոմերիտականներն էին։ Տարիներ շարունակ նրանց գյուղի ներքևն ընկած էր եղել այդ հնադարյան ձևի կատոկը, որի չորս կողմը գարնանը խոտ էր կանաչում, և հովիվի շները շոգից նեղվելով պահվում էին ներսը։

Ընկած էր եղել, ժանգոտվել էր, ծանրությունից մի քիչ թաղվել հողի մեջ։ Կոմերիտականները մեծ դժվարությամբ հանել էին, դրել գերանների վրա և նույնպիսի դժվարությամբ, ցեխ կոխոտելով, հրելով գոմեշները, կանչելով, աղմկելով իջեցրել էին քաղաք։

— Արտաշ, տեղն իմացա՞ր,— կանչեց նույն ձայնը։

Մթնից կանչողը ծիծաղեց։ Նա ինչ-որ բան ասաց, բայց չլսվեց։

— Բաց կլինի՞ էնտեղ...

— Տո դե սպասի, է՜,— ընդհատեց Արտաշը, որ ոգևորությամբ պատմում էր կրած դժվարությունները։

— Հարյուր փութ կլինի...— և երեսը դարձրեց դեպի հետ։

— Երկու հարյուր չես ասում...— վրա բերեց մի ուրիշը։

Գոմեշների շնչառությունը հանդարտվում էր։ Հոգնած կենդանիները ոտները փոխնեփոխ բարձրացնում էին։ Նրանք մինչև կուրծքը ցեխի մեջ էին։ Կարծես ճեղքել էին ցեխի հեղեղը։

Արտաշն էլ էր ցեխոտված։ Այտի վրա պարզ երևում էր ցեխի չորացած շիթը։

— Իմացա, բայց պարզ չի...

— Դե հա՜... Գոմեշները սառան...

Այդ կանչին բոլորը շարժվեցին։ Ոմանք բարձրացրին մտրակները գոմեշների վրա, ոմանք վազեցին՝ անիվները հրելու...

— Դեհ հա, դեհը...

— Հը՜, հը՜...

— Մարալին, Մարալին։

— Մարալ, հա՜...

Գոմեշները ձգվեցին, շղթան զրնգաց, անիվները ճռնչացին։ Լսվեց մի խոր տնքոց։ Տնքացին մարդիկ, անասունները, և առաջին անիվները գլորվեցին։ Լևոնի ձեռքերը խրվել էին անիվի ճաղերի ցեխին։ Նա մյուսների հետ մի կողմ քաշվեց, երբ անիվները դուրս եկան ցեխից։

Շարժվեցին գոմեշները...

Արտաշի հետ փողոցի մեջտեղով լուռ գնում էր Լևոնը, գնում էր ցույց տալու պահեստի տեղը, գնում էր Արտաշի հետ խոսելով, և երբ գոմեշները դժվարանում էին քաշել, նա հետ էր գալիս, անիվը հրելու։

Ոչ ցեխ կար, ոչ անորոշ կսկիծ...

* * *

Մաչիտա մայրիկը առավոտ կանուխ զարմացած նայում էր Լևոնի շինելին, որից գիշերը ջուր էր կաթկթել հատակին։

— Էս կանդար չամուռ... դյորի կնացե գիշերը մեր տղեն։

Եվ գլուխը խորհրդավոր շարժեց։

Դուրսը արև էր, ինչպես նա գուշակել էր։ Արևի ճառագայթների մի խուրձ պատուհանից ներս էր ընկել և ժամացույցի սլաքի նման շարժվում էր խալու վարդերի և նուռերի վրայով։

Լևոնը խորը քնի մեջ էր։ Թախտի առաջ ցեխոտ սապոգներն էին։ Նա ուշ էր վերադարձել ու չէր հանվել։ Վերարկուն էր քաշել վրան։

Արևի ճառագայթները, երբ վարդերի վրայով սահեին ցած, պիտի խաղային նրա ոտքերի և արտևանունքների հետ, և Լևոնը պիտի զարթներ։

# ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

*Շարմաղ բիբին մի սովորույթ ուներ. իրիկնապահին, երբ ժամհարը ծլնգացնում էր ժամի զանգերը, տան դուռը, եթե փակ լիներ, տնքտնքալով պիտի մոտենար, հաստ դուռը բանար և կամ թե թոռներից մեկն ու մեկին պիտի ասեր.*

*—Զանգերը տվին, դուռը բաց արա...*

*Շարմաղ բիբու ասելով, իրիկնապահին ժամի զանգերի ծլնգոցի հետ աստծու օրհնությունը ներս է մտնում ու մնում սևացած օճորքի տակ։ Եվ այդ սովորույթով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները։ Ժամ չէր գնա՝ հազարից մի անգամ մեռելօրհնենքին թե տերտերի խաչը համբուրեր, այդ էր։ Ոչ աղոթք գիտեր, ոչ էլ ծանոթ էր եկեղեցական տոների ու ծեսերի հետ։ Բայց և այնպես խոր ակնածանք ուներ, մանավանդ ծլնգացող զանգերի հանդեպ։*

*Այդ իրիկուն էլ, երբ Շարմաղ բիբին դուռը ետ քաշեց ու դռան մոտ մի քիչ կանգնեց, տնեցիք, որ սփռոցի չորս բոլոր նստած ընթրում էին, հանկարծ դադար տվին և աչքերը լայն բաց արին։ Նույնիսկ փոքրիկ Եփոն մնաց սառած, աչքը գդալից ծլծլացող ապուրին։*

*— Է-հե՜-հե՜յ, ժողովուրդ... Թագավորի հրաման ա, ձիատերն էգուց ձիով քաղաք, բազար գնա... Զտանողը... է-հե՜-հեյ... Թագավորի հրաման ա։*

*Եվ ձայնը թրթռաց, բարակեց, որովհետև գզիրը ուրիշ*

կտուր բարձրացավ և երեսն ուրիշ թաղի կողմ դարձրեց։ Շարմաղ բիբին չիմացավ էլ, թե զանգերն ինչպես լռեցին։ Դուռը ծածկեց։

— Ձո՛ռ, բա՛յղուշ, հենց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկավ, տեղը նստեց, և Եփոն էլ, զգալը ծծելով, դատարկեց, Միկին քթի տակ, կարծես ինքն իրեն, ասաց.

— Էսօր խոտատեղ գնալիս, Սաքանի տղան էլ ասեց... Ես ասում էի սուտ կլինի։

— Ասի, յանի թագավորին էդքան ձի ինչի՞ յա հավաքում,— հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ութ տարեկան Շողերը։

— Ես ի՞մ,— ուսերը թոթվելով ասաց հայրը,— որբ ա, կռիվ ա, հանաք-մասխարա չի։

— Բո՛ւ բո՛ւ...

Չիմացան թե Եփոն տաք ապուրն էր փչում, թե՞ իր զարմանքն էր արտահայտում։ Միկու կինը պատառը կիսատ թողեց, մոտեցավ և սկսեց փոքրին կերակրել։

— Մեր Չալկան չափումը կգա՞.— հարցրեց նա Միկոն։ Ամուսինը չպատասխանեց։

Չալկան նրանց միակ ձին էր, կարճլիկ ու գնդլիկ, կարմրագույն, պոչը երկար։ Երկու տարի էր, որ Միկին գնել էր, ավելի ճիշտ՝ փոխել էր էշի հետ, վրան էլ տվել մի հորթ, մի կարպետ, երկու բեռ էլ ցորեն։

— Տուն եմ, քուլֆաթի տեր եմ, առանց ձիու հնար չկա,— ասել էր նա՝ ձին առնելիս։ Ու տերն էլ բարի վայելեք էր մաղթել, ձիու հետ էլ հազար տեղից կապկապած. կարկատած մի սանձ բաշխել Միկուն։

— Հայվանն էլ թարսի պես չանով ա,— ասաց Միկին, փեշից հացի կտորտանքը խնամքով սփռոցի վրա թափ տալով։— Տարվա էս ժամանակ ձին էլ էդքան չա՞նով լինի։ Հալբաթ էսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ, փափախի մորթուց ծղնոտները,

խոտի փշրտանքը մեկ-մեկ դեն գցելով, դուրս եկավ գյուղամեջ, հարևանն ու դրկցից իմանալու նոր լուրեր։

Միկին շեմքի առաջ մի քիչ կանգնեց, նայեց ձիուն, որ խոտատեղից վերադարձել, ախորժակով ծամում էր սարի կանաչ խոտի մի խուրձ, երբեմն գլուխը վեր հանում, աջ ու ձախ դարձնում։ Միկին մի անգամ էլ համոզվեց, որ ձին նիհար չի, ափսոսանքով մոտեցավ.

— Սա՛տկած, քիչ կեր է՜լի, տրաքվելու չե՞ս հո...

Ասաց ու խուրձը դրեց գոմի կտրան։

— Հը՞, կասես բոյը կարճ լինի... Չափումը չգա,— դարձավ նա մորը՝ որ հավաբունի մուտքը կալել ու կանգնել էր քիչ հեռու։

— Ես ի՞մ, այ որդի...

— Ռուսի ղազախը սրա վրա որ նստի, ոտները տափով քաշ կգան, —ասաց Միկին ու անցավ բակով դեպի փողոց։

Մութն էր, երբ գյուղամիջից Միկին տուն դարձավ։ Գոմում կապած ձին լսեց տիրոջ ոտնաձայնը, բարակ վրնջաց։ Միկին խղճահարվեց, աչքն ընկավ գոմի կտրան դրած խուրձին։

Հենց ճրագը ձեռքին, խոտը կռան տակին Միկին գոմի դուռը բաց արեց թե չէ, Չալկան վրնջալով մի քանի քայլ արեց, փորձեց կտրել կապը, բայց չկարողացավ։

Չալկան տկլոր էր, և լույսի տակ այնքան ողորկ ու փայլուն երևաց նրա կարմիր մորթը, ասես յուղած լիներ։ Միկին խոտը ախոռի մեջ գցեց, և երբ ձին մռութը կոխեց մեջը, ձեռքով շոյեց Չալկայի փափուկ մեջքը։

Ընդարձակ և հին գոմի մի անկյունում պառավ կովն էր նստել, իսկ երկու այծերը, որոնք կանգնել էին մսուրի վրա, Միկուն տեսնելուց թռան ցած, մկկալով մոտ վազեցին։ Այդ գիշեր Միկին չմոտեցավ ոչ կովին և ոչ էլ այծերին, մի քիչ էլ կանգնեց, Չալկայի ոտերի տակ թափած խոտը հավաքեց ախոռի մեջ և դուռը դրեց։

Երեխաները քնել էին։ Շարմաղ բիբին, աչքերը կկո-

ցելով, իզուր էր փորձում մեծ սանրը թելել Միկու գուլպաները կարկատելու։ Երբ դուռը ճռռաց, մայրը թողեց թել ու սանրը և հարցրեց.

— Հաստատ ա՞...

— Բա հո սո՞ւտ չի...

— Ի՞նչ են ասում։

— Ասում են բոյը հաշիվ չի, թե մեջը սափ լինի, հիվանդ չլինի,— և դառնալով կնոջը,— ծեգին ենք գնալու, հաց ես շինելու, շինիր, կարող ա մի օր ուշանանք։

Եվ երբ կինը հացի տաշտին մոտեցավ, մայրը նստած տեղից ձայն տվավ.

— Մի քանի հաց էլ ավել շինի։

Միկին ինչ-որ բան էր փնտրում տան անկյունում ու, փնտրածը չգտնելով, հարցրեց մորը.

— Նանի, Չալկայի էն մեծ տոպրակը ո՞ւր ա, հետս մի քիչ դարման վեր ունեմ։

Շարմաղ բիբին վեր կացավ մեծ տոպրակի միջի բուրդը թափելու։

Քնելուց առաջ Միկին մի անգամ էլ գնաց գոմ։ Պառավ կովը, այդ անսովոր այցից զարմացած, մինչև վեր կկենար ու որոճալով կմոտենար գոմի դռան, Միկին ձիու փալանն ու պարանները սարքեց, դրեց ախոռի մոտ և դուռը փակեց։

Երբ ճամփի պաշարը պարկի մեջ տեղավորելուց հետո կինը ճրագը հանգցրեց ու մութի մեջ շուլալվեց վերմակի տակ, Միկին մյուս կողքին դարձավ։ Քիչ հետո կինը շշուկով հարցրեց.

— Բա էլ ճար չկա՞...

— Ի՞նչ ճար։ Թե ջանին յարա լինե՛ր... Հակառակի պես անիրավի մեջքը կասես խինայած լինի։

Կինը մի անգամ հանգ արեց խնդրելու, որ Միկին քաղաքից գոտկալի կտոր բերի, բայց չասեց։ Տեղը չէր։

Եվ լռեցին։ Այդ գիշեր շատ ուշ քնեցին։ Երեքով էլ լուռ էին, միայն երբեմն Շարմաղ բիբին կողքից կողք էր

դառնում, տնքում, ասես պառավի ոսկորները փշերի վրա էին։ Փոքրիկ Եփոն էլ քնի մեջ, շրթունքներն իրար տալով, ծծում էր տաք ապուրը։

Ծեգը դեռ չէր բացվել, երբ Միկին ճրագը ձեռին մտավ գոմը, Ջալկային փալանեց ու դուրս քաշեց։ Հարևան բակերումն էլ ճրագներ էին երևում, ինչ-որ ձայներ էին գալիս։ Միկին ճանաչեց Սաքու տղայի ձայնը։ Սաքու տղան բարկացել էր հարսի վրա, թե ինչու չվանը ժամանակին չի գտել։

Դռանը կանգնել էին՝ Շարմաղ բիբին, կինը և նրա փեշից բռնած, առավոտյան հովից սփրթնած քնաթաթախ Շողերը, որ չէր լսել մոր խոսքին, լաց լինելով հագել էր շորերը և դուրս եկել։

Ջալկան գոմից երբ դուրս եկավ, վրնջաց, ականջները խլշեց։ Շարմաղ բիբին ձեռքով կրծքին խփեց և հազիվ լսելի ասաց.

— Ջա՜ն,— ու սրբեց արցունքոտ աչքերը։

Շողերը մոտ վազեց, գետնին թափած երեկվա խոտի փշրանքներից մի բուռ մոտեցրեց ձիուն։ Ջալկայի տաք մռութն այնքա՜ն դուր եկավ Շողերին։

Միկին ճամփի պաշարն էր պնդացնում փալանի վրա և, պարանը քաշելով, տնեցիներին պատվիրում, որ այծերը հեռու չքշեն, որ արև լինելուց՝ խոտի կիտուկները շրջեն և, եթե ջրի հերթն իրե՛նց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն։ Հենց այդ խոսքին էր, երբ ներքևից լսեց Սաքու տղայի ձայնը՝

— Միկի, բա չպրծա՞ր...

— Եկա, եկա...

Եվ Ջալկային քաշեց։ Տնեցիք դանդաղաքայլ հետևեցին, ասես տնից դագաղ էին հանում։ Շարմաղ բիբին մի գլուխ լալիս էր. լաց էր լինում և Շողերը հենց այնպես, որովհետև լալիս էր մայրը։ Փողոցին չհասած, մայրը լսեց Եփոյի ձայնը՝

— Ա՛պի, ա՛պի...

Դռան շեմքին կանգնել էր տկլոր Եփոն, պռոշ էր արել ու լաց էր լինում։

Միկին չլսեց։ Քիչ հետո իջավ ձորը, միացավ Սաքու տղայի և մի երկու ուրիշ ձիավորի հետ։

Մայրը վերադարձավ, գրկեց որդուն ու տուն մտավ։ Շարմաղ բիբին ու Տողերը կանգնեցին այնքան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և անցան սարի ետև։

Արևը նոր-նոր էր շողերով ողողում իր դիմացի սարի կատարը, երբ վերջին ձիավորը երևաց դարի վերի գլխին ու անհետացավ։

Ձիավորները սկզբում լուռ էին։ Ամեն մեկը իր մտքի հետ էր, նայում էր իր ձիուն, համեմատում հարևանի ձիու հետ և մտքում ծանր ու թեթև անում.

— Կտանե՞ն, թե չէ...

Գնում էին մեկ-մեկ, խումբ-խումբ։ Մեկը գրպանից պանիր հաց էր հանում, ուտում, մյուսը չիբուխը չիբուխի ետևից էր լցնում, երրորդն էլ՝ ոտները կախ արած, աչքը ձիու ականջներին, օրորվում էր ձիու հետ։

Բայց երբ արևը մի քիչ բարձրացավ, կարծես լուռ ու մունջ ձիավորների սիրտն էլ բացվեց։ Ամենից առաջ խոսեց բրուտ Ավագի տղան՝ աչքը շիլ Իվանը։

— Ա՜յ մարդ, ես սատծուն ի՞նչ ասեմ... Ի՜մ աչքս քոռ արեց։ Ձիս որ քոռ լիներ, ես էլ հո էտապով չէի գա...

Մի քանիսը ծիծաղեցին։ Սաքու տղան մտքում բարկացավ նրա վրա՝

— Անդարդ շան որդի...

— Հրե՜ն, հրե՜ն... Հիբանի ձիուն տեսեք... կասես ղազախի ձի լինի։ Հի՜բան, պրի՜ստավը որ քեզ էտ ձիով տեսնի, հաշտատա, քեզ էլ հետը կավալեր տանի...

— Ի՞նչ պակաս կավալեր ա որ...— ձայն տվավ մեկը։— էն օրը Քարուտի առվով մի թռավ որ, մնացինք արմացած։

—Մի տեսեք է՞․․ Տերտերն իրա ձին ժամհարին ա տվել։ Ա՛յ ինչ եմ ասել ախպերություն,—խոսքը փոխեց բրուտի տղան։

— Ա՜, քի՛չ յավա-յավա խոսիր, է՛յ...—կանչեց Շուղունց Աքելը, որ գյուղում ավելի անունով հայտնի էր, որպես «Աղվես խեղդող», չահել ժամանակ սարում ձեռքով մի աղվես բռնելու համար։— Տերտերը հիվանդ տեղով կարող ա՞ ձին նստի։

— Դե ասի մնացել ա, որ աղոթք անի է՛լի,—ասաց մի ուրիշը։

Ընդհանուր խոսակցությունից բացի, ձիավորների մեջ մասնակի զրույց անողներ էլ կային։ Ոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար հարևանին մի պատմություն էին անում, ոմանք էլ խոսում էին պատերազմի դաշտից եկող լուրերի մասին։

— Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշավու կողմերից,— պատմում էր Գիլանց Մուքին,— լավ չի գրում, ասում է՝ էս ա մի ամիս ա մի ծմակի մեջ ենք, թոփերը տրաքում են, մինչև անգամ չոլ դուրս գնալն էլ ա երկյուղալի...

— Իմ հորեղբոր Սիմոնն էլ ա գրել․ լազարեթից ա գրում, համա տեղը հայտնի չի։ Մի տեսակ անուն ա տալիս... էն օրը տերտերը ինչքան ման եկավ գրքերում, չգտավ։ Ասում ա էդպես քաղաք Ռուսեթու հողումը չկա։

— Նրա ի՞նչն ա որ...

— Ոտիցն ա կպել։ Գրում ա որ ծանր չի, մի ամիս օտպուսկ են տալու։

— Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիվն ի՞նչ տեղ կկտրի,— դարձավ նրան բրուտի տղան։ Շատերը ծիծաղեցին, ինքը Աքելը մրթմրթաց.

— Անհամ անհա՛մի տղա...

Նրա տեսած երկիրը գյուղի սարերն էին և շրջանի կենտրոնը, ուր նստում էր պրիստավը։

Քիչ հետո խոսք ընկավ ձիերի պետական գնի մասին։

*— Թեկուզ անունը փող, ի՞նչ կառնվի դրանով...*

*— Երկու բեռ գարի...*

*— Է՛դ էլ չես առնի։*

*— Դե գոնյա գինը տային...*

*— Տային էլ, ո՞րտեղից ես ձի առնում։ Մեր գյուղից որ էսքան ձի են պահանջել, բա դու տես սաղ Մհալից քանի՞սն են բերելու...*

*— Ա՛ տղա, էս հո մի կարգին պոլկ ենք...— ասաց բրուտի տղան և բարձր կանչեց՝*

*— Սլուշա՜յ... Ափիցեր Աքել Շուղունցով...*

*— Ա՜, հերիք ա, քիչ տնազ տուր Աքել ամուղ։*

*— Աքել ամիս նեղանալ չի... թե մի շարքով գնացեք, տեսնեմ ով ա ետ ընկել,— ասաց շիլ Իվանն ու ձին ճանապարհից հանեց։*

*— Հաշիվը թամամ ա։ Աբրհամի ձին չկա, էնա բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գելը ցրիվ ա տվել, մեկ էլ Կոստանդ խազեյնի սիպտակ ձին...*

*— Վախիլ մի. Կոստանդը հիմա հլա քնած ա, ձին էլ ոսկի գարի յա ուտում։ Վեր ա կենալու, եղ ու մեղր ուտի, ձին թամքի և Կաթնաղբյուրում մեզ հասնի։ Նա հո քու թայը չի՞.— ասաց Գիլանց Մուքին։*

*— Մի հաշիվ չի՞... էս գլխից հենց նրա ձին են տանելու,— ասաց Միկին։*

*— Իշտահ պահի,— պատասխանեց Իվանը,— քու Ջալկադ պերվի նումերը հանելու ա, Շարմաղ հորքիրն ինչքան ուզում ա թող լաց լինի։*

*— Ուրեմն Կոստանդի սիպտակ ձին ու Ջալկան մի հավասարի է՞ն... Բա նա Ռահիմ բեկին մի բեռը ոսկի յա տվել, սիպտակ ձին առել։ Ես ի՞նչ եմ տվել՝ մի կաղ էշ, մի կարկատած կարպետ։*

*— Էս ա սև ու սիպտակը կջոկվի,— ասաց բրուտի տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց պատմել, թե ինչպես հարևան գյուղից մի զինվոր ֆրոնտից նամակ է ուղարկել և նամակի մեջ էլ գրել, որ ինքն*

իրենց զորամասում տեսել է և ճանաչել իր հորեղբոր ձիուն։

— Տես է՜... Որտեղից որտեղ...

— Կպատահի, ինչ կա որ...

— Տեսնես ձին էլ ճանաչել է՞...

— Չէ՛ մի՝ եկել, վզովն ա ընկել...

Քիչ հետո ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գիլանց Մուքու առաջարկով իջան ջուր խմելու, մի քիչ հաց ուտելու և ձիերին էլ արածացնելու աղբյուրից ներքև ընկած արտերում։

Արևը բավական բարձրացել էր։ Միկին քարի ստվերում թիկն էր տվել, աչքը գցել արածող ձիերին։ Գյուղի ձիերի հետ Չալկան էլ էր արածում...

Միկին աչքի տակով համեմատում էր իր ձիու բարձրությունը մյուս ձիերի հետ։

— Թե Գիլանց Մուքու ձին հավասարվի Չալկայի հետ... Թե չէ՝ նրանից կարճը չկա...

— Միկի, հրեն,— ասաց բրուտի տղան։

Միկին գլուխը ետ դարձրեց։ Ձին խաղացնելով, հեռվում երևաց Կոստանդը։ Երևում էր, որ ձին արագ էր վազում և ոտքերի տակից փոշի հանում։ Թամքի վրա Կոստանդը վեր ու վար էր անում, մեկ առաջ կռանում, մեկ էլ ետ ձգվում և սանձը քաշում։ Կոստանդի սպիտակ ձին, առաջի ոտերը խաղացնելով, թռչում էր քարերի վրայով, գլուխն աջ ու ձախ դարձնում, փորձում սանձն ազատել հեծվորի ձեռքից։ Արևը դիմացիցն էր, և արևի տակ թամքի արծաթ ասպանդակներն ու կապերը փայլփլում էին։

Ձիավորների խոսակցությունը դադարել էր։ Բոլորն էլ նայում էին նրա կողմը։ Շուղունց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր։

— Ա՜յ, ձի... Հազար մանեթ գին ունի...

— Տերն էլ պակաս փող չունի...

— Էտ ձին ինձ տան՝ կռիվ չգնացողը մարդու տղա չի,— ասաց բրուտի տղան։

— Տեսնես ինչ մեծավոր ա նստելու։ Ամենաքաշը գեներալ կլինի։

— Վրան նստողը պակաս գեներալ չի…

Կոստանդը, երբ ձիավորներին հասավ, սանձը ձգեց, մի կերպ ձիուն պահեց։ Կապույտ քրտինքը փրփուր էր դիզել նրա մարմար մորթու վրա։ Ձին փնչացնում էր, ոտքերը դոփում։

— Դուրս գալդ մի սհաթ կլի՞, Կոստանդ,— հարցրեց Շուղունց Աքելը։

— Սհաթի չեմ նայել… մինչև դուք ձիերը նստեք, ես բազար կհասնեմ։ Չեմ էլ կարողանում պահեմ, ձեռքերս կտրվեց…

Բրուտի տղան կամացուկ ասաց՝

— Տուր ինձ, ես պահեմ…

Կոստանդն ուզեց ինչ-որ բան ասի. սանձը մի քիչ թուլացրեց, սպիտակ ձին զգաց այդ և տիրոջ խոսքը կիսատ թողեց։ Ձիավորները սպիտակ ձիու թողնելը տեսան… Մի ակնթարթից հետո ձին պահվեց սարի ետև։

— Այ հրեղեն ձի սրան են ասել…

Քիչ հետո գյուղացիք քաշեցին ձիերն ու ճանապարհ ընկան։

Շրջանի կենտրոնը մի բազմամարդ ավան էր, որի մեջտեղն ընդարձակ հրապարակն էր, չորս բոլորը փոքրիկ կրպակներ։ Երբ ձիավորները հասան, ասեղ գցելու տեղ չկար։ Փողոցներում, արտերի միջնակներում, տների բակերում և հրապարակներում այդ օրը ձիուց բացի ուրիշ անասուն չկար։

Հազար գույնի ձիեր՝ որձ ու էգ, ծանրած, մեծ ու փոքր քուռակներով, թամքած ու փալանած, կապոտել էին՝ որը մի քարից, որը մի ծառից կամ գետնին խրած բիհրից կամ թե իրարից։ Մեկի առաջ խոտ էր, մեկէլինը՝ դարման, երրորդինն էլ՝ ոչ դարման և ոչ խոտ։ Քաղցած ձիերը պոկոտում էին չորացած, հազար սմբակներով տրորված խոտը։ Ձիերն իրար հետ կռվում էին. ամեն ան-

կյունից վրնջոցի ձայն էր լսվում. ձիերի բազմության մեջ քուռակն իր մորն էր կորցնում, արծաթահնչյուն վրնջոցով վազում, մռութը մոտեցնում ուրիշ մատակի պտուկներին։ Որձաձիերը պոկոտում էին կապերը և ամեհի վրնջոցով հալածում մատակներին, աքացի տալիս, իրար կծոտում, արնոտում։

Եվ այդ ժխորին խառնվում էր տերերի կանչն ու աղմուկը, հարայ-հրոցն ու բղավոցը։ Հայ, Թուրք խառնվել էին իրար։ Զինվորական հրամանը բոլոր գյուղերումն էլ կրկնվել էր նույնությամբ, և հազարավոր բակերից, գոմերից կածաններով ու արահետներով ձիերը քշել, հավաքել էին շրջանի կենտրոնը։

Հրապարակի մի անկյունում, տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա մի երկար սեղան էր դրված, որի շուրջբոլոր նստել էին պաշտոնյաները։ Դեպի այդ խմբակն էր ուղղած բոլորի աչքերը, որովհետև այդտեղ էին որոշում ձիու և ձիավորի բախտը։

Գյուղի տանուտերը կարդում էր ձիավորի անունը, բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպես կրկեսում՝ ըմբիշը։ Ձիուն մոտենում էին մի քանի հոգի, տնտղում, ատամներին նայում և ապա թղթի վրա ինչ-որ նշաններ անում։ Մի վայրկյան խորհրդակցելուց հետո՝ պրիստավը ձեռքով նշան էր անում։

Ահա այդ նշանն էր, որ հայտնի էր դարձնում ամեն ինչ։ Եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձին անպետք է, տերը վախվխելով, ուրախությունից դողացող ոտքերով քաշում էր ձին, հեռանում։ Իսկ եթե նշանը տախտակների մոտ կանգնած ռուս զինվորներին էր ուղղած, ապա նրանք իսկույն մոտենում էին, նոր սանձ գցում ձիուն, հինը շպրտում տիրոջ կողմը, մի քիչ հեռացնում և իսկույն պոչը միահավասար կտրում, բաշը կարճացնում և բաշի մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր։

Ձիավորն ընդմիշտ պիտի հեռանար ձիուց, որին տանում, կապում էին ընդունած ձիերի շարքում, մի երկար ու

հասա պարանից։ Տիրոջը մնում էր գլխիկոր վերադառնալ նույն հրապարակով, որով մի քիչ առաջ էր անցել ձիու հետ, ձեռքի մեջ բռնած պրիստավի տված թղթի կտորը, որի վրա նշանակված էր ձիու գինն ու տիրոջ անունը։

Ձիավորները, երբ տեղ հասան, հրապարակից մի քիչ հեռու իջան։ Գիլանց Մուքին և Շուղունց Աքելն առաջ ընկան բազմության մեջ գտնելու իրենց գզիրին ու տանուտերին։

Նրանք հարևան թուրքերից, որոնք առավոտ կանուխ էին եկել, իսկույն հարցրին.

— Հը՞, շա՞տ են տանում...

— Էլ մի ասեք, զուլո՜ւմ ա...

Միկին տեսավ իր վաղուցվա ծանոթ թուրքին, առանձին հարցրեց.

— Ձիդ պիտի ոտը կոտրած լինի կամ մի վերք ունենա, որ ազատեն, թե չէ՝ բոլը հաշիվ չի...

Միկու ոտները թուլացան։ Ջալկան գնա՜ց, տարա՜ն։

Քիչ հետո Գիլանց Մուքին և Շուղունց Աքելը, բազմությունը ճեղքելով, իրար ձեռքից բռնած, եկան.

— Հիմա Քարագլուխն են կանչում, հետո էլ գիլբիրեցիք են գնալու, նրանցից հետո՝ մենք...

Միկին մի վայրկյան մտածեց, տոպրակը ձիու գլխից հանեց ու ձին քշեց։

— Էդ ու՞ր, Միկի,— ձայն տվավ Սաքու տղան։

— Տանեմ ջուր տամ... Կաթնաղբյուրում չխմեց։

Միկին ձին նստեց, հեռացավ։

Մի քիչ հետո երևաց և Կոստանդը։

— Ինչի՞ ես ոտով, Կոստանդ,— հարցրեց Շուղունց Աքելը, մի քիչ ետ քաշվելով։

— Ձիս տարել եմ քարվանատրան...— ասաց ու հեռվից, ծանոթ մեկին ձայն տվավ, գնաց նրա կողմը։

— Էստեղ մի օյին կա,— ասաց բրուտի տղան։

Միկին արդեն հեռացել էր հրապարակից։ Ճանապարհն այնքան էլ դժվար չէր, թեկուզ ամեն տեղ էլ ձիեր

էին կապած։ Ինչքան հեռանում էր, այնքան ավելի էր սանձի ծայրով Չալկային մտրակում։ Բեզարած ձին մի քիչ քայլերն արագացնում էր, իսկ երբ Միկին դադարում էր մտրակելուց, դարձյալ քայլում էր բեռան տակ մեծացած, գյուղական ձիու դանդաղ քայլերով։

Ավանի վերջին տունն էլ ետ մնաց։ Միկին նեղ ճանապարհով, կարտոֆիլի թաղերի արանքով ծռեց դեպի աջ, ուր ձորակի միջով հոսում էր բարակ գետակը։ Չալկան զգաց ջրի մոտ լինելը, քայլերը արագացրեց։

Ջորն իջնելուց առաջ Միկին մի անգամ էլ ետ նայեց, տեսավ, որ ոչ ոք իրեն չի նկատել։ Ու հենց Չալկան գլուխը կռացրեց ջրի վրա թե չէ, Միկին իջավ, սանձը շատ մոտ կապեց Չալկայի առաջին ոտքից, պարանով էլ մյուս ոտքերը կապեց ու սկսեց արձակել փալանի կապերը։

Չալկան ջուր խմելուց հետո փորձեց գլուխը վեր հանել, չկարողացավ։ Եվ մռութը լուռ ու մունջ նորից կախեց դեպի սառը ջրին։

Միկին արագ շարժումով փալանը դեն գցեց, կռացավ ու վերցրեց մի չեչաքար։ Երբ առաջին անգամ Միկին չեչաքարը Չալկայի մեջքին քսեց, ձին հաճույք զգաց, խաղացին նյարդերը, կաշին դողդողաց։

Հանկարծ մեջքին ծակծկոց զգաց։ Չալկան փորձեց հեռանալ, չկարողացավ, ոտքերն ասես պինդ մեխված լինեին։ Ցավը գնալով շատանում էր, միսը կտոր-կտոր պոկոտում էին։

Միկին չեչաքարը տանում բերում էր ձիու մաշկի վրայով։ Մի քանի վայրկյանում մեջքը մաշկահան եղավ, քարն արնոտվեց։

Ձին տնքում էր, պոչն ուժգին խփում, բայց չէր օգնում։ Միկին քարը հա քսում էր, տնքում։ Արյան կաթիլները նոր բացված վերքից դուրս էին ցայտում, իրար միանում և բարակ առվով կախվում, կաթկթում ջրի մեջ։

Չալկան էլ շփմացավ, պառկեց կողքի վրա, բայց Միկին չէր հեռանում։ Ու պառկած տեղն էլ քարը քսում էր,

*քթի տակ մրթմրթում։ Վերջապես դադարեց, քարը շպրտեց ջրի մեջ։*

*Միկին մի պահ վախեցավ, արյունը գնալով շատանում էր.*

*— Ձիինի տամար տրաքեց...*

*Ձալկայի աչքերի առաջը մթնեց։ Պառկել էր և ցավից փնչացնում էր։ Միկին բռով լի ջուր էր վերցնում, վերքը լվանում։ Քիչ հետո Միկին Ձալկայի կապերն արձակեց, ձին ոտի կանգնեց։*

*Նրա մեջքի աջ կողմին մի ափսեի չափ վերք էր բացվել, երևում էր Ձալկայի կարմիր միսը, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած։ Արյունը դեռ գալիս էր, բայց մի քանի տեղ արդեն լերդակալել էր։*

*Միկին արյան հետքերը լվաց, շտապ փալանեց Ձալկային ու ձորով բարձրացավ։ Ձալկան հազիվ էր կարողանում քայլերը փոխել։ Միկին ինչքան էլ մտրակում էր, ոտքով փորին խփում, կանչում, Ձալկան քայլերը չէր արագացնում։ Ականջները կախ, մերթ տնքալով, գնում էր փողոցով, դեպի հրապարակ։*

*Միկին յուրայիններին թողած տեղը չգտավ։ Հարևան թուրքերն ասացին, որ հենց նոր նրանց կանչել են։ Բազմությունը հրելով, ետևից Ձալկային քարշ տալով, Միկին հասավ հրապարակ, որի մի անկյունում խռնվել էին՝ շեն Իվանը, Գիլանց Մուքին, Սաքու տղան և մյուսները։ Պիսերը կարդում էր անունները.*

*— Այ մարդ, ու՞ր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեին։ Ասեցինք հրես կգա։*

*Ամենից առաջ Շուշունց Աքելի անունը կարդացին։ Դողդողալով առաջ անցավ և մի անգամ միայն ետ նայեց։ Այնքան գունատվե՛լ էր...*

*Եկան, մոտեցան։ Ու մեկ էլ այն տեսան, որ զինվորները վրա տվին, փալանն արձակեցին և շպրտեցին Աքելի կողմը։ Ոչ մի խոսք չասաց Աքելը, երբ քիչ հետո ձիու*

փալանը շալակին վերադարձավ։ Եվ երբ բրուտի տղա չիլ Իվանը սրախոսեց.

— Ափիցեր Աքել Շուղունցով,— ոչ ոք չծիծաղեց, Իվանի ժպիտն էլ ծռմռվեց, դարձավ կսկիծ։

Հետո Ռուստամենց ճակատը սպիտակ ձին տարան։ Գնաց և տերտերի ձին։ Ժամհարն եկավ, գլուխը կախ։

— Հիմա ես տերհորն ի՞նչ պատասխան եմ տալու։

Չորրորդ հերթը Կոստանդինն էր։ Գյուղացիք զարմացան, երբ նրա անունը կարդացին, որովհետև Կոստանդը նրանց մեջ չկար։ Չիլ Իվանը նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մեջ ինչ-որ փսփսոց ընկավ։ Ու հանկարծ հրապարակի մյուս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի ետևից քաշ տալով։ Ձնայեցին էլ, ձին ետ տվին։ Կոստանդը դուրս եկավ հրապարակից։

Գյուղացիք մնացել էին սառած, ապշած, Շուղունց Աքելն ուզեց խոսի, բայց լեզուն չորացավ, կապ ընկավ։ Բրուտի տղան մոտեցավ Միկուն, թե՝

— Տեսա՞ր, ես որ ասում էի՜...

Բայց Միկին չլսեց։ Նրա ականջովն ընկավ իր ազգանունը, և Ջալկան ետևից քաշ տալով, մտավ հրապարակ։

Երբ եկան, փալանը վերցնել տվին, որ նայեն, մի ակնոցավոր ռուս, քիթը վեր քաշելով, կռացավ, վերքին նայեց.

— Չտարան,—անցավ Միկու մտքով։ Բայց հանկարծ ռուսը ետ դառավ, Միկու վրա մատը թափ տվավ։ Միկին դողաց, գունատվեց ու թուլացած նստեց փալանի վրա։

Ջալկային տարան։ Միկին տեսավ, ինչպես ձիու երկար պոչը կտրեցին։ Ու դրանով աչքին այնպես երևաց, ասես իր ձին մեծացավ, դարձավ ղազախի ձի։

Մի մարդ գոռաց վրան։ Միկին սթափվեց, ոտքի կանգնեց և փալանն առավ, դուրս եկավ...

Արևը թեքվել էր արդեն, երբ գյուղացիք ճանապարհ ընկան։ Ազատվել էին միայն ութ ձի, որոնց վրա և բարձել

էին մնացած ձիերի փալանները։ Գյուղացիներից շատերն իրենք էին շալակել ձիերի տոպրակներն ու սանձերը։

Ազատված ձիերը, որոնցից երեքը մորուց ծուռ ոտ էին, մեկի մեջքն էր ընկած, երկուսն էլ քոս էին, Սարվանենց ձին էլ պառավ էր, իսկ Հաբիղանց պառավի ձիու երկու կողքաճաղը չկար,— ազատված ձիերը բեռան տակ հազիվ էին քայլում։

Լուռ և անխոս քայլում էին գյուղացիք։ Նրանցից մեկն ու մեկը երբեմն կանգնեցնում էր ձին, բեռն ուղղում կամ թե ետ էր ընկնում, տրեխի թելը կապում։

Միկին գլուխը կախ քայլում էր մյուսների հետ։ Թրուտի տղան էլ էր սուս, որովհետև ոչ ոք սիրտ չուներ լսելու նրան։

Միկին միտք էր անում՝

— Հենց իմ փիսությունս մնաց...

Շալակի տոպրակից ու սանձից Զալկայի քրտնահոտն էր գալիս։

— Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ա... Յարաբ, տեսնես արյունը կտրե՞ց...

Ձեռքին պինդ բռնել էր ստացած թուղթը։

Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, վառել հազար գույնով։ Կաթնաղբյուրի մոտ նստոտել էին բեզարած գյուղացիք։ Ոմանք հացի փշրանքներն էին ուտում, ոմանք էլ լուռ թիկնել էին տոպրակների վրա։ Մութն ընկնելու մոտ էր. ճանապարհ դեռ շատ կար։

Հանկարծ Կաթնաղբյուրի մոտ սմբակների պողպատանալերը զրնգացին։

Կոստանդ աղեն էր, սպիտակ ձիու վրա...

Միայն Շուղունց Աքելն էր, որ կեսբերան պատասխանեց նրա բարևին։ Մյուսները բերան էլ բաց չարին։ Թրուտի տղան, աչքը դիմացի սարին գցած, մտքերի հետ կռիվ էր տալիս։

— Տեսա՞ր, Միկի, սև ու սպիտակը...

Միկին չպատասխանեց։ Սպիտակ ձին խաղալով էր սլանում, ասես սմբակները գետնին չէին դիպչում։ Ու եթե

*մի քիչ էլ վերև թռներ, պիտի կորչեր նարնջագույն ամպերի մեջ։*

*Կես գիշեր էր, երբ տուն հասան։ Դռան մոտ կանգնել էր Շարմաղ բիբին, ճրագը ձեռքին։ Միկին ներս մտավ, տոպրակն ու սանձը գցեց մի անկյուն։ Անկողնում ծլունգ ելավ Շողերը։*

*— Ապի, բա Զա՞լկան...*

*Շարմաղ բիբին լալիս էր։ Ով մինչև մահ էլ ոչ մի անգամ նա իրիկնապահին բաց չէր անում դուռը, որ փանգերի ծլունգի հետ աստծու օրհնությունը ներս մտնի...*

## МИНА - БИБИ

*(От нашего зангезурского корреспондента)*

Мина-Биби сказали, что вечером и сын и невестка приедут в деревню. Еще не спустился вечер, она уже стояла на крыше и, закрывая рукой глаза от солнечных лучей, смотрела на узенькую тропу—не едут ли.

Сын жил в городе, более десяти лет не был в деревне, не видел матери. Ушел он в город еще юношей, еще только пробивались усики и борода, а возвращается домой с женой и ребенком.

— А, старуха, неужели никого не видно?— спрашивал дядя Ован, ожидавший внизу. Ован с нетерпением ждал приезжих и все окликал Мина-Биби.

— Около большого камня видны два всадника и один пеший,—отвечала Биби и еще сильнее напрягала зрение. Несколько мгновений Мина-Биби пристально смотрела, вся вытянулась в стрелку, но вдруг с размаха ударила руками по коленкам и бросилась с крыши вниз.

— Едут, это они!— кричала она, прерывающимся от волнения голосом.

* * *

На следующее утро Мина-Биби проснулась раньше обыкновенного. Ночью она не спала. Она подремывала, просыпалась и внимательно слушала, как

похрапывают гости. Ночью она встала, засветила лучину, подошла к спящим, отвернула подол одеяла, посмотрела, хотела разбудить старика-мужа, чтобы и он взглянул, но не решилась, легла снова.

Рано утром Мина-Биби отправилась за водой, пошла подоить корову —и работа спорилась у нее лучше обычного. Казалось, она помолодела от радости. Иногда она входила в комнату, но сейчас же возвращалась, ибо забывала, зачем вошла, так она волновалась. Когда, перемывая посуду перед очагом, она стукнула тарелками, Ован-дядя рассердился, сказав: «Тише, разбудишь». А Мина-Биби, побледнев, ответила: «Хоть бы отсохла эта рука!». Сказала и остановилась в недоумении, не зная, продолжать ли работу.

Дядя Ован стоял у порога с доброй улыбкой и желал доброго утра приходящим к нему соседям с поздравлениями.

— Вам того же желаю. Да увидите и вы своего кариба (живущего на чужбине).—Приговаривая эти слова, Ован подносил каждому чарку водки и сушеные фрукты.

Еще в прошлом году он решил зарезать быка в случае приезда сына. И когда об этом он говорил со своей старухой и последняя предложила вместо быка зарезать барана—Ован рассердился и сказал, что обещание нужно выполнить. Затем Ован пошел в конюшню. Второпях он утром забыл покормить скот. Он прилежно убрал конюшню, накинул коровам и быкам сена—большие охапки,—ему казалось, что и скот вместе с ним радуется приезду сына. Коровы усердно жевали сено, а Ован с умилением растирал их спины своими жесткими руками.

— Отец, не утомился ли ты,—спросил сын Тигран, который пришел за отцом в конюшню.

— Ступай, ступай, здесь не твое место, запачкаешь сапоги. Да, утомился, не без этого. Но это наше ремесло. Без этого нельзя, чтобы не поработать.

Перед тем, как зайти в конюшню, Тигран посмотрел с крыши на село, вдохнул полной грудью деревенский воздух—тяжелый, пропитанный кизяком, несущийся из затхлых конюшен—и таким заброшенным и несчастным показалось ему родное село. Первое впечатление было неважное. Он долго жил в городе, и у него в памяти сохранились лишь привлекательные стороны жизни деревни,—горы, чистые родниковые воды, громадные ковры цветов.

Тигран стоял у входа в конюшню и смотрел, как отец выносил в плетеной корзине мусор из конюшни. Ему бросились в глаза крепкие жилы на шее отца, отлитые, как бронзовые цепи.

— Ступай, ступай, на чай, мать уже приготовила завтрак.

Спустя много лет, в городе, вспоминая деревню, Тигран представлял себе отца со вздутыми жилами на шее, с глубоко впавшими глазами, с тяжелой корзиной на плече...

* * *

В первые дни родственники и друзья посещали дом Ована. Все они одинаково выражали свою радость, крепко обнимали, целовали крепким крестьянским поцелуем лоб, глаза, брови. Когда как-то поцеловали таким образом Онжик, она вытерла щеку платком. Мина-Биби заметила это. Ей не понравилось, что Онжик имеет белый платок.

—Маленькой девочке платочка не надо; она пло-

хо приучится,—подумала Мина-Биби и загрустила. Ей представилось, что сын, невестка и дочь не будут жить в деревне, скоро должны уехать. Она подумала, что останется одна с Ован-ами, у дымного очага с прялкой, которая вместе с ней плакала по ночам, по долгим зимним ночам. Дети уедут, а она, Мина-Биби, останется в деревне, привязанная к очагу, к маслобойке и коровам...

Однажды Онжик вытерла платком свою ложку. Тетя Шармах заметила эту выходку.

— Видишь, Мина,— сказала она,—что делает внучка?

Тигран постарался сгладить впечатление, сказал, что это привычка Онжик, она и в городе чистила ложку платком. Но Мина-Биби задумалась, загрустила, как и в первый раз, когда Онжик вытерла платком щеку.

* * *

Для Онжик на селе много было ново. Она все расспрашивала отца—почему бабушка заворачивает сахар в бумагу и прячет в сундук, почему уличка деревни так узка и т. д.

Однажды пришел к Тиграну крестьянин, попросил написать бумагу. Подписывая написанную Тиграном бумагу, крестьянин засмеялся. Онжик показались странными его белые зубы и манера держать ручку, которую крестьянин сжимал своими неуклюжими пальцами.

— Папа, в нашей первой группе пишут лучше этого человека.

Прошла неделя, все вошло в свою колею. Деревня перестала говорить о приезжих.

Тигран участвовал в заседаниях сельского сове-

та, рассказывал крестьянам о жизни города, о текущих событиях. Но крестьяне мало интересовались этим. Часто Тигран разочаровывался. Так много было работы в деревне, так она была неустроена.

Эла несла домашнюю работу. Она внимательно слушала рассказы бабушки о деревенских обычаях, о том, как насильно выдают девушек замуж, как лечат больных, какие минуты переживает при родах молодая женщина, имея другого ребенка на руках, у соски. За работой—за прялкой или маслобойкой—Мина-Биби раскрывала перед Элой тысячелетнюю книгу деревни, на каждой странице которой была записана жертва—тайно задушенный ребенок, изнывающая под пятой грозного мужа молодуха.

Онжик часто бывала с дедом. Часто собирались вокруг нее деревенские дети, с удивлением глядели на ее гладко причесанные волосы, на чистенькие, с пуговицами ботинки.

Почти каждый раз, ложась спать, Мина-Биби уговаривала Онжик спать в ее постели, но Онжик отказывалась. Она чувствовала себя лучше в своей постельке, под своим одеялом, привезенным из города, чем в соседстве с бабушкой, от которой несло конюшней, дымом от очага и копотью. Во сне она видела кино, пионерские ряды, улицы города. Под одеялом, привезенным из города, Онжик чувствовала себя в городе и ей было приятно.

* * *

Весеннее солнце уже давало себя чувствовать. Скот в конюшнях уже чувствовал нетерпение, крестьяне все чаще говорили о горах и кочевках. Мина-Биби также готовилась к кочевке. Она решила, когда выйдут на кочевку, повести Онжик в часовню, что стоит на холме. Как возникла у нее эта мысль, она и

сама не знала. Но она твердо решила приобщить внучку к деревенской жизни. «Как было бы хорошо, если бы они остались в деревне»,—думала она. С тайной надеждой думала она о миге, когда ей удастся научить внучку молиться...

Между тем, Тигран все говорил, что нужно ехать в город.

В одно прекрасное весеннее утро Мина-Биби и Онжик пошли к ущелью. Мина-Биби стала говорить Онжик, что она стара, скоро умрет. Мина-Биби скрыла от Онжик, что ведет ее к часовенке. Рассказ бабушки сильно повлиял на ребенка, и Онжик не знала, что сказать. Наконец, они подошли к часовне—полуразрушенной деревенской часовне.

Мина-Биби подошла к закопченному от свечей камню-памятнику, опустилась на колени, благоговейно наклонилась к камню и поцеловала холодные плиты. Онжик с удивлением смотрела на бабушку и спрашивала, почему она целует камень. Мина-Биби встала, попросила Онжик сделать то же самое, поцеловать камень.

— Не хочу, камень грязный,—отвечала Онжик.

Мина-Биби не произнесла ни слова, изумленная ответом подростка. Затем, придя в себя, она вошла в часовню. Онжик за нею последовала. При входе Онжик ударилась головой о косяк двери. Онжик рассердилась на дверь.

— Тут нельзя сердиться, бала,— сказала бабушка.—Бог будет недоволен.

—Бога нет, бабушка,—веско произнесла Онжик.

Мина-Биби показалось, что стены часовни рухнули и громадный камень скатился на ее голову. Она вспомнила, что сын с семьей скоро уедут в город. Старинные стены часовни услышали сдавленные рыдания Мина-Биби.

# ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

**Բնագրային տարբերակներ** *բաժնում, ինչպես նախաբանում է ասված, ներկայացված են Բակունցի մի շարք երկերի այն նախնական խմբագրումները, որոնց տարբերությունները վերջին խմբագրումների համեմատ այնքան շատ չեն, և հնարավոր է այդ տարբերությունները բնագրերից անջատել ու առանձին-առանձին, հերթականությամբ ներկայացնել։*

*Բնագրային այդ տարբերակները հիմնականում արտահայտությունն են երկերի վրա հեղինակի կատարած գրական և լեզվաոճական աշխատանքների։ Բերված են այդ կարգի մեծ թե փոքր տարբերությունները՝ սկսած ամբողջ պարբերությունների հեղինակային կրճատումներից ու նորերի ավելացումից, մինչև մի շաղկապի կամ որևէ բառաձևի փոփոխումը։*

*Բաժինը ավելորդ ծանրաբեռնվածությունից զերծ պահելու նկատառումով չենք ներկայացրել բնագրային այնպիսի տարբերություններ, որոնք բնագրի վրա հեղինակի կատարած աշխատանքի արդյունք չեն կամ, եթե հեղինակային են, բնավ հետաքրքրական չեն գրողի ստեղծագործական, լեզվական աշխատանքը գիտելու տեսակետից։ Այդպես.*

*ա) Չեն ներկայացված նույն երկի տարբեր բնագրերի միջև եղած կետադրական տարբերությունները, այդ թվում վերջակետերի փոփոխությունները, օրինակ, «Մթնաձոր» պատմվածքի առաջին տպագիր տարբերակում ունենք.* **Մի ուռույն աշխարհ է Մթնաձորը: Քիչ է ասել կուսական ու վայրի:** *Երկրորդ տարբերակում («Մթնաձոր» ժողովածու) նույնը դարձել է.* **Մի ուռույն աշխարհ է Մթնաձորը, Քիչ է ասել կուսական ու վայրի:** *Այս և նման տարբերությունները, առնչված կետադրության փոփոխման հետ, չեն նշված։*

*բ) Նշված չեն ուղղագրական տարբերությունները, բացի այնպիսիներից, որոնք ոճական արժեք ունեն։ Բնականաբար, չեն ներկայացված բնագրերի այնպիսի տարբերությունները, որոնք պայմանավորված են վերջին 50—55 տարիների ընթացքում հայերենի ուղղագրության մեջ կատարված փոփոխություններով։ Դրանք նախ 1922 և 1940 թթ. օրենսդրական փոփոխությունների հետ առնչված տարբերություններն են և ապա նաև ուրիշ, զուտ ուղղագրական բնույթի տարբերություններ. օրինակ, «Մթնաձոր» շարքի պատմվածքների նախապես մամուլում տպագրված բնագրերի մեջ գործածված են* **ձմրան, ամրան, դրան** *ձևերը, որոնք առկա են նաև «Մթնաձոր» ժողովածուի տպարանային ձեռագրերում և մեքենագիր օրինակներում, բայց տպագրված ժողովածուի մեջ փոխված են* **ձմռան, ամռան,**

դռան ձևերի։ Այս տարբերությունները նույնպես չեն նշված։ Կամ՝ նույն շարքի պատմվածքների սկզբնական հրապարակումներում կան այսպիսի ձևեր՝ ճամբա, օճախ, մռաց, ծպացնելով, բացօղյա, կեր ու խում, ջարդ ու փշուր, ծուռ ու մուռ, խառն ի խուռն, առ ու ծախ, անց ու դարձ, կես գիշերին, երբոր, բեխ, դոլմա, կոկարդ և այլն, որոնք «Մթնաձոր» ժողովածուի մեջ հաճախ տպվել են փոփոխված՝ ճամփա, օջախ, մռռաց, ծպպացնելով, բացօթյա, կերուխում, ջարդուփշուր, ծուռումուռ, խառնիխուռն, առուծախ, անցուդարձ, կեսգիշերին, երբ որ, բեղ, տոլմա, կակարդ: Այս կարգի տարբերությունները ևս նշված չեն։

Ուղղագրական տարբերություններից ներկայացված են միայն այնպիսիք, որոնց ոճական արժեքն ակնհայտ է. օրինակ, «Մթնաձոր» և «Անձրևը» շարքերի պատմվածքներից մի քանիսում առաջին հրապարակման մեջ կան՝ ֆցի, ֆցում բարբառային ձևերը, որոնք հետո մեծ մասամբ դարձել են գցի, գցում (թեև երբեմն էլ հակառակն է կատարված)։ Մյուս կողմից՝ պատմվածքների առաջին տարբերակների լույս, աղբեր, կոոպերատիվ ձևերը հետո բարբառայնացվել են՝ լուս, ախպեր, կապերատիվ և այլն։ Այսպիսի ուղղագրական տարբերությունները նաև ոճական են, ուստի բնագրային տարբերակներում ներկայացված են։

գ) Չեն ներկայացված տպարանային վրիպակների մեծագույն մասը։ Օրինակ, «Վանդունց Բագին» պատմվածքի առաջին հրապարակման մեջ տպված է «նա էլ չէր սիրում պիսիր անվանեն, որ որսկան շան պես հոտոտում էր...»։ «Մթնաձոր» ժողովածուի տարբերակում (նաև տպարանային ձեռագրում) ունենք. «նա էլ չէր սիրում պիսիր Ավանին, որ որսկան շան պես հոտոտում էր»։ Առաջին տարբերակում անվանեն ակնհայտ վրիպակ է։ Նույն պատմվածքի առաջին տպագիր տարբերակում նավ-ը վրիպակով նակ է տպվել («երկու խոսք գրելու համար մի հակ առնել»), որ ճշտված է պատմվածքի՝ ժողովածուի մեջ տպված տարբերակում։ Միայն այն դեպքում, երբ շատ ակնառու չէ, որ տվյալ տարբերության պատճառը անպայման տպագրական վրիպակն է կամ՝ երբ բնագրային հատվածի տվյալ տարբերակի վրիպակ լինելը թեկուզ փոքր կասկածի տեղիք կարող է տալ, տարբերությունը նշված է։

դ) Չեն նշված որոշիչ հոդի ը և ն ձևերից մեկի կամ մյուսի գործածությունից գոյացած բնագրային տարբերությունները. ինչպես, օրինակ, «Մթնաձոր» պատմվածքի առաջին հրապարակման մեջ ունենք. «Պանինն անտառ չպիտի գար», «ոտքն արջի դիակի վրա», որոնք երկրորդ հրապարակման մեջ դարձել են՝ «Պանինը անտառ չպիտի գար», «ոտքը արջի դիակի վրա»։ Հիմք կա ենթադրելու, որ այս փոփոխությունները հեղինակային չեն։ Դիտվում է, որ «Մթնաձոր» ժողովածուի մեջ ձայնավորով սկսվող բառերից առաջ նախնական, այդ թվում տպարանային բնագրերում եղած ն-երը գրեթե միշտ փոխարինված են ը-ով, որ, հավանաբար, սրբագրիչի կամ խմբագրի փոփոխումներն են։

ե) Բնագրային մի շարք տարբերություններ գոյացել են ետ–հետ, ետև–հետև զուգահեռ ձևերի՝ Բակունցի ժամանակ հայերենում չկանոնավորված գործածությամբ (այդ գործածությունները այժմ էլ լիովին կանոնավորված չեն)։ Ոչ միայն երկի տարբեր հրապարակումներում, այլ նաև նույն հրապարակման մեջ առկա են նման զուգահեռություններ։ Մերթ հեղինակն է այդ ձևերը անհետևողական ըն-

րությամբ գործածել, մերթ այդ ձևերից մեկի կամ մյուսի գերակշռությունը ակնհայտորեն խմբագիրների ու սրբագրիչների միջամտության արդյունքն է։ Այդպես, բնագրային տարբերակներում ունենք ետ քաշեց—հետ քաշեց, ետ գնաց—հետ գնաց, ետ նայեց—հետ նայեց, ետևից—հետևից և նման տարբերությունների բավական մեծաքանակ դեպքեր։ Նպատակահարմար գտանք բերել դրանց միայն մի մասը, որը լրիվ պատկերացում է տալիս մյուս նմանօրինակ տարբերությունների վերաբերյալ։

Բնագրային տարբերությունների ներկայացման կարգը հետևյալն է։

1) Նշված են հիմնական բնագրի էջահամարները ներկա հատորում, ապա և այն տողի կամ տողերի համարը (համարները)[1], որտեղ առկա է բնագրային տարբերություն երկի նախորդ հրապարակման համապատասխան հատվածի համեմատ։

Տողահամարից հետո բերված է հիմնական տարբերակի (ներկա հատորում տպված) տվյալ հատվածը (պարբերություն, նախադասություն, բառակապակցություն, բառ), ապա դրված է թեք գիծ, որից աջ տրված է մյուս տարբերակի նույն հատվածի փոփոխակը։ Թեք գծից աջ բերվող խոսքային հատվածների կամ բառերի կողքին՝ փակագծում պայմանական հապավումով ցույց է տրված բնագրային տվյալ տարբերակի բնույթը (ձեռագիր, մեքենագիր) կամ հասցեն (որտեղ է հրապարակված)։ Ինչպես օրինակ.

էջ 34

18 խրճիթի ներսում / խրճիթի մեջ (ՆԱ)

Նշանակում է, երկի հիմնական բնագրի խրճիթի ներսում բառակապակցությունը գտնվում է ներկա հատորի 34-րդ էջի 18-րդ տողում, իսկ խրճիթի մեջ-ը գտնվում է բնագրային տարբերակում, որ հրապարակված է «Նոր ակոս» պարբերականի համապատասխան համարում (նշված է ծանոթագրության մեջ)։

Կամ՝

էջ 166

27—28 տաշտի ջրի մեջ / տաշտի լեղակ ջրի մեջ (ՏՁ)

Դարձյալ՝ թեք գծից ձախ տրված բառակապակցությունը ներկա հատորի 166-րդ էջի 27—28-րդ տողերում է գտնվում, իսկ գծից աջ տրված է երկի տպաքանային ձեռագրի մեջ եղած տարբերակը։

3-րդ բնագրային տարբերակի առկայության դեպքում դրված է մի նոր թեք գիծ և նույն կերպ նշված այդ տարբերակի համապատասխան հատվածը։

**2)** ∽ նշանը ցույց է տալիս, որ համեմատվող հատվածների մեջ կրճատում ենք արել՝ հիմնական բնագրի և նրա տարբերակի համեմատվող առավել ծավալուն հատվածների ներսից հանված են լրիվ նույնական կտորներ (չկրկնելու նպա-

---

[1] Տողերի համարակալման ժամանակ իբրև մեկ տող հաշված են նաև վերնագրերն ու երկերի առանձին մասերը նշող թվահամարները (1, 2 և այլն), տող չեն հաշված պատմվածքների մասերը միմյանցից բաժանող աստղանիշերը։

*տակով)։ Նշանը համապատասխանաբար դրված է այդ հանված կտորների փոխարեն։*

*3) Եթե հիմնական բնագրում նախնականի համեմատ ծավալուն հատված է պակասում, տողահամարից հետո տրվում են հիմնական բնագրի այն բառերը կամ բառը, որոնցից (որից) հետո նախորդ տարբերակում առկա է՝ հետագայում հեղինակի կրճատած հատվածը. այդ բառերից (բառից) հետո դրվում է գծիկ և բերվում հիմնական բնագրի մեջ բացակայող և տարբերակում առկա խոսքը, ինչպես, օրինակ.*

*էջ 131*

*21 ասաց նա* բառերից հետո — *թեկուզ ինքն էլ չէր տեսել (ԽՀ)։ Նշանակում է հատորում հիմնական բնագրի 131-րդ էջի, 21-րդ տողում «ասաց նա» բառերից հետո չկա «թեկուզ ինքն էլ չէր տեսել» հատվածը, որը առկա է սկզբնական տարբերակում՝ տպագրված «Խորհրդային Հայաստան» օրաթերթում։*

*4) Եթե հիմնական բնագրի որևէ ծավալուն հատված բացակայում է համեմատված սկզբնական տարբերակում, տողահամարից հետո բերվում է հիմնական բնագրի այդ հատվածը (կամ նրա մի մասը՝ շարունակության վերաբերյալ տրված ծանոթագրությամբ) և նշվում, որ տարբերակում այդ հատվածը չկա։ Ինչպես, օրինակ.*

*էջ 37*

*7 Նրան գյուղ տարան* բառերից հետո մինչև վերջ *(էջ 38, տող 7)—ՆԱ-ում չկա։*

*Նշանակում է ներկա հատորի 37-րդ էջի 7-րդ տողի «Նրան գյուղ տարան» բառերից հետո եղած ընդարձակ հատվածը մինչև պատմվածքի վերջը (մինչև հաջորդ՝ 38-րդ էջի 7-րդ տողը) չկա պատմվածքի սկզբնական տարբերակում, որ հրապարակված է «Նոր ակոս» շաբաթաթերթի համապատասխան համարում։*

*«Բնագրային տարբերակներ» բաժնում նախնական տարբերակների մոտ նշված են Բակունցի երկերի բնագրային զանազան աղբյուրներ, նաև երկերի մի շարք հրատարակություններ։ Դրանց մի մասը նշված է հապավումներով։ Երկերի այդ հրատարակությունների մանրամասն ցուցակը և հապավումների ցանկը տրված են* Մատենագրություններ *բաժնի սկզբում։ Այժմ օգտվողին դյուրություն ընձեռելու նպատակով կրկնում ենք այն հապավումները, որոնք գործածված են այս բաժնում. Աժ- «Անձրևը» ժողովածու, ԽՀ- «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Մ- «Մարտակոչ» օրաթերթ, Մժ.- «Մթնաձոր» ժողովածու, ՆԱ- «Նոր ակոս» շաբաթաթերթ, ՍՑՍԳ- «Սև ցելերի սերմնացանը» գրքույկ, ՍՑՍԺ- «Սև ցելերի սերմնացանը» ժողովածու, ՏՁ- տպարանային ձեռագիր (որից շարվածքն է կատարվել), ՏՄՕ- տպարանային մեքենագիր օրինակ (դարձյալ շարվածքի համար օգտագործված)։*

*Յուրաքանչյուր երկի բնագրային աղբյուրների և հրապարակումների մասին մանավոր տեղեկությունները տրված են երկերից ամեն մեկին նվիրված ծանոթագրության մեջ։ Ուստի* բնագրային տարբերակի մոտ նշված աղբյուրի մասին տվյալները (գտնվելու վայրը, բնույթը, եթե տպագիր է՝ պարբերականի թվականն ու համարը և այլն) պետք է իմանալ ամեն մի պատմվածքին նվիրված ծանոթագրությունից։

## «ՄԹՆԱՁՈՐ» ՇԱՐՔ

Ներկա հատորի համար այս շարքի պատմվածքներից 14-ի հիմնական բնագրերը կազմված են ըստ «Մթնաձոր» պատմվածքների ժողովածուի, երեքինը՝ ըստ «Սև ցելերի սերմնացանը» և մեկինը ըստ «Անձրևը» ժողովածուների (տե՛ս «Մթնաձոր» շարքի ծանոթագրությունները)։

Ըստ «Մթնաձոր» ժողովածուի կազմված հիմնական բնագրերից տասը ունեն տարբերակներ. դրանք նախքան ժողովածուի լույս տեսնելը մամուլում կատարված հրապարակումներն են։ Դրանց հետ համեմատել ենք պատմվածքների հիմնական բնագրերը, և ստորև ներկայացված են եղած տարբերությունները։ Հիմնական բնագրերը համեմատել ենք նաև «Մթնաձոր» ժողովածուի տպարանային բնագրերի (ձեռագիր, մեքենագիր, լրագրային կտրոն) հետ և եղած տարբերությունները նշել։ Մամուլում նախնական հրապարակում չունեցող պատմվածքներից մեկի («Լառ Մարգար») «Մթնաձոր» ժողովածուի մեջ տպագրված փոփոխակը որոշ տարբերություններ ունի տպարանային ձեռագրի համեմատ, և վերջինս պայմանականորեն դարձել է պատմվածքի նախնական տարբերակ։

«Մթնաձոր» ժողովածուի մեջ տեղ գտած պատմվածքներից երեքի համար իբրև տպարանային բնագիր ծառայել են «Խորհրդային Հայաստան» լրագրից հանված կտրոնները՝ հեղինակային (ինքնագիր) խմբագրումներով։ «Մթնաձոր» ժողովածվում այդ պատմվածքները տպագրվել են հիշյալ խմբագրումներով։ Ուստի բնագրային տարբերությունների ցանկում լրագրային կտրոնների վրա հեղինակի կատարած ամեն մի փոփոխություն տեղ է գտել թեք գծից ձախ՝ իբրև հիմնական բնագրի տարբերակ. թեք գծից աջ տրված է նույնի լրագրային (նախնական) տարբերակը։

Սակայն մի շարք դեպքերում պատմվածքների՝ «Մթնաձոր» ժողովածուի տարբերակի և լրագրային բնագրի միջև այնպիսի տարբերություններ կան, որոնք լրագրային կտրոնի վրա եղած հեղինակային խմբագրումների արդյունք չեն։ Դա նշանակում է, որ փոփոխությունը կատարվել է ժողովածուի տպագրման ընթացքում։ Նման դեպքերի համար, հիմնական և նախնական (լրագրում տպված) բնագրերի տարբերությունները նշելիս, լրագրային տարբերակի կողքին ԽՀ պայմանական նշանից հետո գրված է՝ ուղղված չէ (այսինքն՝ լրագրային կտրոնի վրա տվյալ տարբերությունը պայմանավորող ուղղում չկա)։

# ՄԹՆԱՁՈՐ

## (էջ 11)

**էջ 11**

4 անտառներում / անտառները (ԽՀ)

4—5 Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան / Մթնաձորում այժմ էլ կան անտառներ (ԽՀ)

12 Թվում է. թե այդ մոռացված մի անկյուն է / Թվում է, թե մոռացված մի անկյուն է (ԽՀ)

17 անհետացած / անհայտացած (ԽՀ)

**էջ 12**

4 արևմուտք / արևմուտ (ԽՀ)

8 զրնգում է / դրնգում է (ՏՄՕ)

15,20 ետ / հետ (ԽՀ), (ՏՄՕ)

23—24 Կատաղի ձիերի պես վարազները վրնչում են / Կատաղի ձիերի պես վրնչում են (ԽՀ)

25 մի գարունքի / մի գարուն (ԽՀ)

27 ծառի բնում / ծառի բնի մեջ (ԽՀ)

27 ծառի ճյուղի / ծառի ճյուղերի (ԽՀ)

30 անտառապետի / անտառապահի (ԽՀ)

32—33 Նա արագ կացնահար է անում ծառը / Նա կացնահար է անում ծառը (ԽՀ)

**էջ 13**

13 այստեղ-այնտեղ խառնիխուռն հետքեր / այս ու այնտեղ խառն ի խուռն հետքեր (ԽՀ)

13—14 խեղդված գայլի դիակ / խեղդած գայլի դիակ (ԽՀ)

16—17 և շներին կշտացնելուց հետո / շներին կշտացնելուց հետո (ԽՀ)

22 Այսպես էր Պանինը / Այսպես է Պանինը (ԽՀ)

25—26 մարդ էր սպանել, նստել էր բանտում / մարդ է սպանել, նստել է բանտում (ԽՀ)

30 Այդպես էին պատմում / Այդպես են պատմում (ԽՀ)

31—32 Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից էր հոգում / Տան ապրուստի մի մասը Մթնաձորի անտառից էր հոգում (ԽՀ), (ՏՄՕ)

**էջ 14**

7 արմատներ պոկում / արմատները պոկում (ԽՀ)

13—15 Հենց որ բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ երկու աղվես։ Մինչև կրակելն աղվեսները փախան։ Այդ Ավու համար վատ նշան էր / Հենց որ բլրակի գլուխը բարձրացավ, տեսավ երկու աղվես։ Այդ Ավու համար վատ նշան էր (ԽՀ)

24 Երևաց երկրորդ շունը, երրորդը / Երևաց երկրորդը, երրորդը (ԽՀ)

28—29 գլուխը ձեռների մեջ առավ / գլուխը ձեռքերի մեջ առավ (ԽՀ)

31 Ետ քաշեց / Հետ քաշեց (ԽՀ), (ՏՄՕ)

32 Մթնաձորում մի սատանա է քրքջում | Մթնաձորի մի սատանա է քըր-
քըջում (ԽՀ)

էջ 15

2—3 շրթունքները ետ տարավ | շրթունքները հետ քաշեց (ԽՀ)

4 ետ գնաց | հետ գնաց (ԽՀ), (ՏՄՕ)

10 ետ նայեց | հետ նայեց (ՄԽՀ), (ՏՄՕ)

18 Ետևից ճյուղի կոտրվելու ձայն լսեց | Ետևից ճյուղի կոտրելու ձայն լսեց (ԽՀ) | Հետևից ճյուղի կոտրվելու ձայն լսեց (ՏՄՕ)

23—24 դեն գցեց | դեն քցեց (ՏՄՕ)

34 ետևի ոտների վրա | հետևի ոտների վրա (ԽՀ), (ՏՄՕ)

էջ 16

1—2 Հանկարծ արջը բերդանի փողը բերանն առավ | Արջը բերդանի փողը բերանն առավ (ԽՀ)

9 վզզաց | վշշաց (ԽՀ)

15 ետ վազեց | հետ վազեց (ԽՀ), (ՏՄՕ)

17—18 ծառի ճղները ճանգռում էին դեմքը | ծառի ճղները չանգռում էր դեմքը (ԽՀ)

20 ետևից | հետևից (ԽՀ), (ՏՄՕ)

21 Ծառի մի ճյուղը | Ծառի մի ճյուղ (ԽՀ)

22—23 Նա մի ծանր հարված զգաց | Նա ծանր հարված զգաց (ԽՀ)

էջ 17

2—3 շատ վարժ կաշին են ծակոտում, կաշվի թելերից հանգույցներ ա-
նում | շատ վարժ կաշի են ծակոտում, կաշվե թելերից հանգույցներ ա-
նում (ԽՀ)

5 առանց մազի, առանց մորթու | առանց մազ ու մորթի (ԽՀ)

6—8 Արջը թաթի մի հարվածով ծոծրակի փափուկ մսի մեջ է խրել սուր ճան-
կերը և վիրավոր արջի ամբողջ զայրույթով իրան քաշել գանգի մոր-
թին | Արջը թաթի մի հարվածով սուր ճանկերը ծոծրակի փափուկ մսե-
րի մեջ է խրել և վիրավոր գազանի ամբողջ զայրույթով իրան քաշել գան-
գի մորթին (ԽՀ)

13 Աչքերի խոռոչներում | Աչքի խոռոչներում (ԽՀ)

17—19 գուցե մարդ չէ, այլ խրտվիլակ, գուցե չուխայի տակ կմախք է և ոչ միս ու մարմին | Գուցե չուխայի տակ կմախք է և ոչ միս ու մարմին (ԽՀ)

22 ատամներն ավելի է դուրս գցում | ատամներն ավելի դուրս ցցում (ԽՀ)

24 Ու չգիտես՝ զայրանում է, թե ժպտում հին որսորդը | Ու չգիտես՝ հին որսորդը զայրանում է, թե՞ ժպտում (ԽՀ)

## ՎԱՆԴՈՒՆՑ ԲԱԴԻՆ

(էջ 18)

**էջ 18**

17 զինվոր էին կանչել / զինվոր են կանչել (ՆԱ)

21 Նախիրն էլ էր լավ ճանաչում / Նախիրին էլ էր լավ ճանաչում (ՆԱ)

**էջ 19**

7—8 ավելուկը կանաչել ա, Սանդ աղբյուրի մոտ մոշը հասել / ավելուկը կանաչել է. Սանդ աղբյուրի մոտ մոշուտը հասել, քաղելու է սպասում (ՆԱ)

15—16 ամեն ինչ, ամեն օր կրկնվել էր այնքան նման իրար / ամեն ինչ, ամեն օր կրկնվել էր այնքան հաճախ, այնպես նման իրար (ՆԱ)

27—28 Հետո Բադին բեզարած մարդու տնքոցով շեմքի մոտ տրեխներն էր հանում / Հետո Բադին ինքն իրեն թոնթորալով շեմքի մոտ տրեխներն էր հանում (ՆԱ)

29—31 Իսկ կինը օջախին էր նայում կամ ճրագի պատրույգը շտկում և մաքուր ավլած գետնին փռում թաղիքը հնամաշ / Մինչ այդ կինը մերթ օջախին էր նայում, մերթ ճրագի պատրույգը շտկում կամ կապում Բադու վաղվա պաշարը (ՆԱ)

**էջ 20**

4—5 գերեզմանս չանիծի / գերեզմանս չհայհոյի (ՆԱ)

16 Նախրում / Նախիրում (ՆԱ)

20—21 պատվով, կայքով մարդ էր / պատվով հարուստ մարդ էր (ՆԱ)

23—24 հոր թողած մեկը երկու են արել / հոր թողածը մեկը երկու են արել (ՆԱ)

28 Հաբուդը չէր սիրում / Հաբուդը մի բան էլ չէր սիրում (ՆԱ)

**էջ 21**

4 — Քանի՞ շաբաթ ա քո ամիսը / — Քանի՞ շաբաթ է քո ամիսը (ՆԱ)

6 ստանալիք չկա / ստանալիք չունես (ՆԱ)

9—10 կանենք / կանեն (ՆԱ)

14 նրանց շվաքում / նրանց շքում (ՆԱ)

17—18 Հաբուդի հարսանիք կար, ապագայում տուն տեղ ունենալ կար / Հաբուդի հարսանիք կա, ապագայում տուն-տեղ ունենալ կա (ՆԱ)

20—21 ու երկյուղով կարոտով նայում էին Հաբուդին / ու կարոտով նայում էին Հաբուդի բոյին (ՆԱ)

24 գյուղում / մեր գեղում (ՆԱ)

25 գյուղից / գեղից (ՆԱ)

29—30 մի ձեռք տեղաշոր կապեմ / մի ձեռք տեղաշոր կապիր (ՆԱ)

33 խրճիթը / հյուղը (ՆԱ)

**էջ 22**

6 չէր ուզում / և չէր ուզում (ՆԱ)

13—14 հենց նրանց խանութում էր գործերը դրստում / հենց խանութում էր գործերը դրստել (ՆԱ)

15—18 *Բայց Հաբուդը թաքուն մի ուրիշ միտք էր անում. գնալ Բաքու, արհեստ սովորել։ Շատ անգամ էր հանգ անում հորից խնդրելու, բայց բերանը չէր զորում մի բան ասելու / Հաբուդը մի ուրիշ միտք էր անում՝ գնալ Բաքու, արհեստ սովորել, բայց ծնողներին էր մեղքանում։ Շատ անգամ հանգ էր արել հորից խնդրել, բայց բերանը չէր զորել մի բան ասելու (ՆԱ)*

19 *Նա / Հաբուդը*

21—22 *Նրանք երկուսով նստում էին ժամերով տան կտուրին / ժամերով նստում էին տան կտուրին (ՆԱ)*

24—25 *և էլ հազար ու մի բան / և հազար ու մի նման բաներ (ՆԱ)*

**էջ 23**

6 *ապավենը միակ / միակ ապավենը (ՆԱ)*

10 *պիտի / պտի (ՆԱ)*

14 *շատ զինվոր / շատ սալդաթ (ՆԱ)*

17 *հավաքվում էին դուքանի առաջ / հավաքվում էին Իսանանց դուքանի առաջ (ՆԱ)*

22 *ախպերն / աղբերն (ՆԱ)*

27 *Հնդստան / Հնդաստան (ՆԱ)*

**էջ 24**

1 *պիսիրն էր ուրախ / պիսիրն էր ուրախ ու համարձակ (ՆԱ)*

5—6 *վրեժների / վրեժի (ՆԱ)*

9 *գառն / գառներ (ՆԱ)*

11—12 *Ներկերը թանկացել էին / Ներկերը թանկացել էր (ՆԱ)*

16 *— Ճամփեքը փակվել ա / — Ճամփեքը կապվել ա (ՆԱ)*

24 *սպառնաց / սպառնացել էր (ՆԱ)*

26 *գիտե՞ք /գիտա՞ք (ՆԱ)*

28 *Հաբուդի աչքում է՛լ ավելի ընկավ / Հաբուդի աչքից էլ ավելի ընկավ (ՆԱ)*

**էջ 25**

1 *ախպերն / աղբերն (ՆԱ)*

1 *գյուղից / գեղից (ՆԱ)*

5—6 *պատերազմի մասին Հաբուդից էր հարցնում / Հաբուդից էր հարցնում պատերազմի մասին (ՆԱ)*

20—21 *կտորվում էր սովից, ցրտից / կտորվում է ցրտից, սովից (ՆԱ)*

**էջ 26**

8—9 *պառկել էր խարի վրա, մտածում էր / պառկել էր խսիրի վրա, գլուխը դրել մոր ծնկան, մտածում էր (ՆԱ)*

12 *Մտքերը—ծա՜նր, անպատասխան / Մտքեր—ծանր, անպատասխան (ՆԱ)*

13—14 *տապլտկում տեղաշորի մեջ / անքուն ու հուզված, տապլտկվում տեղաշորի մեջ (ՆԱ)*

15 *հեծկլտանքով* բառից հետո — *Հաթամի աղջիկն արդեն զգում էր այն վտանգը, որ գալու է մոտալուտ լուսաբացի հետ (ՆԱ)*

16 Մյուս օրը Հաբուղը առավոտ կանուխ քաղաք գնաց / Մյուս օրն ուրիշների հետ Հաբուղը կանուխ քաղաք գնաց (ՆԱ)

22 ցանկացավ / ցանկանում էր (ՆԱ)

32—էջ 27, տող 1 Հաբուղն ուրախ էր, որ քաղաքներ պիտի տեսնի, լեզու սովորի / Հաբուղը սրտով ուրախ էր, երբ հիշում էր, թե նոր քաղաքներ պիտի տեսնի, վագոն նստի, ռուսի լեզուն սովորի (ՆԱ)

էջ 27

5 փսփսում էին / քսփսում էին (ՆԱ)

5—6 Չլինի՞ թե նրանք մի բան խաղացին նրա գլխին / Չլինի՞ թե նոքա հրճվում էին, որ Հաբուղը զինվոր պիտի գնա (ՆԱ)

6 Եվ դառն ատելությունը / Մի դառն ատելություն (ՆԱ)

8 ձեռք էր տվել / ձեռք է տվել (ՆԱ)

9—10 և նրանց պես համփա մարդիկ / և նրանց նման համփա մարդիկ, որոնք Հաբուղին չէին սիրում (ՆԱ)

12—13 ձեռքը մի բանի չէր կարողանում տալ / ձեռքը մի բանի չէր կարողանում դիպցնել (ՆԱ)

28 Ամեն մի իր ձեռք առնելիս / Խեղճը ամեն մի իր ձեռքն առնելիս (ՆԱ)

էջ 28

2 լուս / լույս (ՆԱ)

4—5 Հազար ու մի միտք գալիս-անցնում էր նրա գլխով / Հազար ու մի միտք գալիս անցնում էին նրա գլխով (ՆԱ)

15 մոտերքում բառից հետո — Բաղին տավարը հավաքեց, մի կտոր ցամաք հաց ջեբը դրավ ու քշեց դեպի հանդը։

Երբ իրիկունը դառնա, էլ ոչ ոք չպիտի գա տավարի առաջը պահի, տանը Հաթամի աղջկա սուգին վերջ չպիտի լինի ու ճրագ էլ չեն վառելու, խոսք ու զրույց էլ չի լինելու առաջվա պես (ՆԱ)

21—22 շոր չունեն, ամեն շաբաթ մի դիրքից մյուսն են ուղարկում, հաշտության ոչ մի լուր չկա / շոր չունեն, ոջլի մեջ խեղդվում են, ամեն շաբաթ մի դիրքից մյուս դիրքն են ուղարկում (ՆԱ)

33 հայրը չէր հասկանում / իսկ հայրը չէր հասկանում (ՆԱ)

էջ 29

1 ախպերը / աղբերը (ՆԱ)

5 տղան / տղեն (ՆԱ)

13 ժողովրդին / ժողովուրդին (ՆԱ)

19 գյուղացիք ճանաչում էին / գյուղացիք ճանաչում էին և նրա խոսքին հավատում (ՆԱ)

23 կռիվ մինչև վերջ / կռիվ մինչև վերջ, մահ կամ ազատություն (ՆԱ)

էջ 30

22 կապերատիվ / կոոպերատիվ (ՆԱ)

27 հավաքվեն բառից հետո — և իրենց պետքերի մասին խոսեն (ՆԱ)

էջ 31

3—4 քրտինքն ուտի բառերից հետո — ինչքան ուրիշի արյուն խմող կա պիտի մորթել (ՆԱ)

4 Հաբուզն ուրիշ շատ բան էր գրում / Հաբուզն էլի ուրիշ շատ բան էր գրում (ՆԱ)

8 թե Հաբուզը / որ Հաբուզը (ՆԱ)

24—25 առանց առաջուց հայտնելու / առանց նախօրոք հայտնելու (ՆԱ)

26 Հենց երեկոյան դեմ / Հենց երեկոյան (ՆԱ)

էջ 32

11 չուրախացան / ուրախանալու առիթ չունեին (ՆԱ)

12 Նրանց ասում էր / Նրանց ասել էր (ՆԱ)

14 Եվ գզիր Զաքուն / Գզիր Զաքուն (ՆԱ)

19—20 մի քանի խոսք ասեց / մի քանի կծու խոսք ասաց (ՆԱ)

24—26 Հարկավոր է բանակը զորացնել, կյանքը զոհել հայրենիքի համար / Զորքը կարող է հեռանալ ճակատից. այն ժամանակ թյուրքերը պիտի գան և հայերին կոտորեն։ Հարկավոր է ուրք հավաքել և եթե պետք լինի վտանգի ժամանակ նույն իսկ կյանքը զոհել հայրենիքի համար (ՆԱ)

էջ 33

4 Գյուղում / Գեղում (ՆԱ)

4 տղերք / տղեք (ՆԱ)

11—12 բայց Հաբուզն իզուր չէր մնացել ճակատում / բայց Հաբուզն իզուր չէր տարիներ մնացել ճակատում (ՆԱ)

25 բայց խիղճը չտվավ / բայց հետո խիղճը չտվավ (ՆԱ)

25 մեղք ունի բառերից հետո — Բադին և Հաթամի աղջիկը շատ են անհանգստացել։ Նրանք այժմ հավատում էին, որ Հաբուզը բոլշևիկ է դարձել, գյուղում մի երկու չահել են նրան կողմնակից, իսկ մյուսները, Իսանանց վախից մի խոսք էլ չեն կարող ասել (ՆԱ)

26—28 Տավարը քշելիս Բադին լուռ միտք էր անում, թե ինչո՞ւ Հաբուզը գնաց քաղաք, ի՞նչ թղթեր էր, որ բերել էր նա իր հետ հեռու դիրքերից / Ինչու՞ Հաբուզը գնաց քաղաք, ինչ թղթեր էր, որ բերել էր նա իր հետ դիրքերից (ՆԱ)

30—31 Հաջորդ օրը Հաբուզը տուն եկավ, մի կտոր հաց կերավ ու սկսեց գրել / Մյուս օրը Հաբուզը տուն եկավ, մի կտոր հաց կերավ ու սկսեց գրել ինչ-որ բան (ՆԱ)

34 Լույսը / Լուսը (ՆԱ)

էջ 34

6 Բադին խնդրեց / հայրն աղաղակեց (ՆԱ)

10 Մյուս օրը երեկոյան դեմ / Երեկոյան դեմ (ՆԱ)

18 խրճիթի ներսում / խրճիթի մեջ (ՆԱ)

18—19 և ոչ ոք չէր զորում հարցնել / և ոչ ոք չէր համարձակվում հարցնել

21—22 Նրան էլ են բանտարկել / Նրան էլ են բանտարկել, զորքի մեծը նա է

եղել, նա է վառել կոմիտեի շենքը (ՆԱ)

29 ցցում / քցում (ՆԱ)

էջ 35

2 հայտնեց / հայտնեց ամենքին (ՆԱ)

4 էն ա / Հենա (ՆԱ)

6—7 և իրենք տարան տավարը գյուղի / և իրանք գեղի տավարը տարան (ՆԱ)

8—9 Նա հիշում էր / Նա գիտեր (ՆԱ)

15 կոմիտե / կոմիտեն (ՆԱ)

23 մնացել միայն բառերից հետո — Բաղին նայեց մեկ, երկու ու աչքերին չհավատաց։ Ինչու՞ վառեցին, ո՞վ արեց այդ (ՆԱ)

24 տեսավ մեկին / տեսավ լավ հագնված մեկին (ՆԱ)

25 Ուժ արեց / Բաղին ուժ արեց (ՆԱ)

29 — Ի՞նչ ես անում... / — Ի՞նչ ես անում,— խոժոռ հարցրեց մարդը (ՆԱ)

31 աչքերում արցունք / աչքերին արցունք (ՆԱ)

էջ 36

13 Շենքի ներսից մի մարդ դուրս եկավ, նայեց Բաղուն / Հանկարծ մեկն անցավ փողոցով, նայեց Բաղուն (ՆԱ)

14 — Դու ի՞նչ ես շնթռկել այստեղ / —Դու ինչ ես շնթռկել այստեղ,— ասավ (ՆԱ)

22 զգաց, որ մի ծանր հարված պիտի իջնի / զգաց, որ ահա մի ծանր հարված պիտի իջնի (ՆԱ)

28 էս գիշեր / այս գիշեր (ՆԱ)

29—30 Բաղին մի պահ սուս քարացավ / Բաղին սուս քարացավ մի րոպե (ՆԱ)

31—32 արցունքի երկու շիթ գլորվեցին խորշոմած այտերի վրայով / արցունքի երկու շիթ վար գլորվեցին այտի խորշոմներով (ՆԱ)

էջ 37

7 Նրան գյուղ տարան բառերից հետո մինչև վերջ (մինչև էջ 38, տող 7)— ՆԱ-ում չկա։

### Ա Ք Ա Ր Ո Ւ Մ

### (էջ 39)

էջ 40

7 երկու անգամ / 2 անգամ (ԽՀ)

9 երկու տարի / 2 տարի (ԽՀ)

12—13 կաշինն իր արմատները կխրի / կաղնին իր արմատները կխրի (ԽՀ)

15 կովի հետ / կովերի հետ (ԽՀ)

21 Աքարի քառասուն ծխից մեկն էլ / Աքարի 40 ծխից մեկն էլ (ԽՀ)

32 զառան բուրդի պես մազեր ուներ գլխին / զառան բուրդի պես մազեր ուներ գլխին և չեկ էր մալականի պես (ԽՀ)

էջ 41

18—19 որ թևավոր մի տղա առներ առաջնակին / որ թևավորեն, մի տղա առներ առաջնակին (ԽՀ)

22—23 Հաննեսի աղջիկը հացթուխ էր և քաղհան անող / Հաննեսի աղջիկը և հացթուխ էր, և քաղհան անող (ԽՀ)

23—24 Թեժ թոնիրը խաշել էր դեմքը / Թեև թոնիրը խաշել էր դեմքը (ԽՀ)

էջ 42

11 չուղեր / չուղենար (ԽՀ)

էջ 43

32 առաջից էր գնում / առաջիցն էր գնում (ԽՀ)

էջ 44

25 3 — ԽՀ-ում չկա

էջ 45

1—2 Ինքն իր մեջն էր ամփոփվել / Ինքն իր մեջ էր ամփոփվել (ԽՀ)

13 հյութ չէր հասցրել / Նյութ չէր հասցրել (ԽՀ)

31 Նրա ծամերից մի փունջ սպիտակեց / Նրա ծամերի մազի մի փունջը ճերմակեց (ԽՀ)

## ԾԻՐԱՆԻ ՏԱՓ

(էջ 63)

էջ 63

10 մացառներ են կրծում / մացառներն են կրծում (ԽՀ)

17—18 երկու հարևան գյուղերը՝ Մրոցն ու Միրը / երկու հարևան գյուղ—Մրոցն ու Միրը (ԽՀ)

էջ 64

6 Ներքևի գյուղում էլ / Ներքի գյուղումն էլ (ԽՀ)

12 աղբաչրումն / աղբաչրում

13—14 ալևորներն էլ էին անիծում / ալևորներն էին անիծում (ԽՀ)

21—22 հարս ու աղջիկ / հարս ու աղջիկը (ԽՀ)

32 կարելի էր / եթե կարելի էր (ԽՀ)

34 էջ 65, տող 1 բայց Միրը վերի գյուղի չափ... / Միրը վերի գյուղի չափ (ԽՀ)

էջ 65

3 կովերի լիք կուրծքը /կովերի լիքը կուրծը (ԽՀ)

16 ժայռի շվաքում / ժայռերի շվաքում (ԽՀ)

էջ 66

10—12 Չէ՞ որ խոսքը Ծիրանի տափի մասին էր, գետիափին բուսած մացառների, գյուղի սահմաններն է՛լ ավելի լայնացնելու մասին / Չէ՞ որ խոսքը ծիրանի տափի մասին էր, գետի ափին բուսած մացառների մասին, գյուղի սահմաններն էլ ավելի լայնացնելու մասին (ԽՀ)

էջ 68

1—2 սրան էլ են զոռնով բերե՞լ / սրան էլ ես զոռնով բերե՞լ (ԽՀ)

4 հողերի շարքերին / հողերի շարքին (ԽՀ)

13 երկու գյուղումն էլ / երկու գյուղում էլ (ԽՀ)

28 ականջները խլշեցին / ականջները խլշած (խՀ)
31—էջ 69, տող 1 ճառ ասաց / ճառ ասեց (խՀ)
էջ 69
24 բարի ճանապարհ ասացին / բարի ճանապարհ էլ ասացին (խՀ)
31—32 Զիավորին ճանապարհելիս նա փախչը հանեց / Զիավորին ճանապար-հելիս նա միայն փախչը հանեց (խՀ)
էջ 70
6—7 երկու գյուղումն էլ / երկու գյուղում էլ (խՀ)
12 խոսքն ու զրույցն / խոսք ու զրույցն (խՀ)
13 վերին գյուղից / վերի գյուղից (խՀ)
24—25 ձիու սանձից բռնում էին։ Երբ բռնողը Մրոցից էր / ձիու սանձից բռնում էին, բռնողը Մրոցից էր (խՀ)
26 իսկ եթե Միրից էր / իսկ եթե միրցի էր (խՀ)
էջ 71
4 Միր գյուղին / մեր գյուղին (խՀ.—պետք է որ վրիպակ լինի)
15 գրչով / գրիչով (խՀ)
15 պատմությանը վերջ տալ / պատմության վերջ տալ (խՀ)

## ՀԱՆԱՎԱՆՔ

(էջ 84)

էջ 84
19 երեններով / էրեններով (խՀ)
21 (նաև էջ 85, տող 24, էջ 86, տող 15, 24) յոթերորդ / յոթներորդ (խՀ)
էջ 85
4 երեներ / էրեներ (խՀ)
20 հավասարվեցին / հավասարեցին (խՀ)
էջ 86
16—17 Հանավանքից մի շինական / հանավանքցի մի շինական (խՀ)
30 դուր եկավ / դյուր եկավ (խՀ)
էջ 87
28—29 վանքի տեղն էլ կմաքրեր / վանքի տեղն էլ մաքրեր (խՀ)
էջ 88
17 ապուռ / ապուր (խՀ)
22 գցի / քցի
էջ 89
3 արգելվում է / արգիլվում է (խՀ)

## ԴՅՈՒԼԲԱՀԱՐԻ ՀԱՄԱՐ

(էջ 90)

էջ 92

6 Այ նրա կարգին / Ա նրա կարգին (խՀ)

էջ 93

20 սովորեցրել / սովորցրել (խՀ,— ուղղված չէ)

էջ 94

2 պատերից կախված նկարներին / պատերից կախած նկարներին (խՀ)

20 Յախշին ա մեղավո՞ր / Յախշին է մեղավո՞ր (խՀ,—ուղղված չէ)

էջ 96

10 աղմուկով / աղմկով (խՀ,— ուղղված չէ)

12 տեր Մարուքն / մեր Մուխսին (խՀ,— վրիպակ է)

## «Խ Ա Ղ Լ Ա Ց Ա Վ»

(էջ 107)

էջ 107

19 օքմին /ոքմին (խՀ,— ժամանակի ուղղագրությամբ՝ վոքմին)

էջ 108

4—5 հանկարծակի կորստից /հանկարծակի հասած կորստից (խՀ,— ուղղըված չէ)

13 մղկտում, և հիվանդի սիրտը թուլանում է / մղկտում է հիվանդի սիրտը, թուլանում է (խՀ,— ուղղված չէ)

14 ծլունգ / ծլոնգ (խՀ, —ուղղված չէ)

32 մեկը ձախ, մյուսը աջ, սկսում են փչել / մեկը ձախ, մյուսը աջ կողմից սկսում են փչել (խՀ,— ուղղված չէ)

էջ 109

11—12 չարչարանքին / չարչարանքներին (խՀ)

20—21 մարմինը կապտում է / մարմինը կապտվում է (խՀ)

22 «դուր է գալիս» / «դյուր է գալիս» (խՀ,— ուղղված չէ)

էջ 111

12 դուր ա գալիս / դյուր ա գալիս (խՀ,— ուղղված չէ)

16 դուր է գալիս / դյուր է գալիս (խՀ,— ուղղված չէ)

33 երիցս նզովված / երիցս նզոված (խՀ)

էջ 112

5 ետևում / հետևում (խՀ,— ուղղված չէ)

## Ջ Ո Ր Բ Ա Ն

(էջ 113)

էջ 113

*2—3 Եթե գյուղը ման գաք / Երբ գյուղը ման գաք (Մ)*

էջ 114

*12 պատվաստած / պատվաստված (Մ)*

*26 կարպետ / կապերտ (Մ)*

*34 լցվում է / լեցվում է (Մ)*

էջ 118

*23 խորհրդի / խորհուրդի (Մ)*

էջ 119

*25 կայծքարը / կայծաքարը (Մ)*

էջ 120

*8 իրան / իրեն (Մ)*

## Օ Ր Ա Ն Ջ Ի Ա

(էջ 121)

էջ 121

*2 մաարբենիներն / մաարիներն (ԽՀ)*

*8 մաարբենիներ / մաարիներ (ԽՀ)*

էջ 125

*15 գյուղում էլ / գյուղումն էլ (ԽՀ)*

*22 Այդ երեկո / Այդ երեկոն (ԽՀ)*

էջ 126

*19 թափված խուրձեր / թափած խուրձեր (ԽՀ)*

## Մ Ր Ո Ց

(էջ 127)

էջ 128

*31—32 չոր ցախից լինի / չոր ցախը լինի (ԽՀ)*

էջ 129

*10 գյուղի կոմսոմոլը / Մրոցի կոմսոմոլը (ԽՀ)*

*24 վերևը / վերև (ԽՀ)*

էջ 130

*23 ոչ մի մարդ «չգնա Սիբիր, ռուսանա» / ոչ մի մարդ չգնա «Սիբիր, Ռուսաստան» (ԽՀ)*

էջ 131

*17 բազմությունը տեսավ / բազմություն տեսավ (ԽՀ)*

*19 ցրել չտես բազմությունը / ցրել չտես բազմության, որ հավաքվել էր մեքենայի շուրջ (ԽՀ)*

*21 ասաց նա* բառերից հետո—*թեկուզ ինքն էլ չէր տեսել (ԽՀ)*

էջ 132

*8 բայց արդեն / արդեն (ԽՀ)*

*10 Մրոցը դեռ / Բայց Մրոցը դեռ (ԽՀ)*

## *ԼԱՌ-ՄԱՐԳԱՐ*

*(էջ 162)*

էջ 162

*2 1 — ՏՁ-ում չկա*

էջ 166

*27—28 տաշտի ջրի մեջ / տաշտի լեղակ ջրի մեջ (ՏՁ)*

*30 ետ / հետ (ՏՁ)*

էջ 167

*3 ետևից / հետևից (ՏՁ)*

էջ 168

*9—10 ոչ սայլ կար / ոչ սայլը կար (ՏՁ)*

էջ 170

*24 ծիրանի կորիզներն / ծիրանու կորիզներն (ՏՁ)*

էջ 171

*33 ծիրանի / ծիրանու (ՏՁ)*

էջ 172

*4 խոսիմ / խոսեմ (ՏՁ)*

## *«ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ» ՇԱՐՔ*

*«Սև ցելերի սերմնացանը» պատմվածքաշար-ժողովածուից միայն համանուն պատմվածքի բնագրային փոփոխակների միջև եղած տարբերություններն են նշված։ Ժողովածուի պատմվածքներից չորսի՝ «Նամակ ռուսաց թագավորին», «Բրուտի տղան», «Սև հացը», «Սպիտակ ձին», բնագրային տարբերակները տրված են ամբողջությամբ՝* Այլ խմբագրումներ *բաժնում, պատմվածքներից երկուսը՝ «Միրանի փողը», «Պրովինցիայի մայրամուտը», տարբերակներ չունեն (մյուս երեք պատմվածքներն, ինչպես ասվել է, դրված են իրենց սկզբնական պատմվածքաշարի՝ «Մթնաձորի» մեջ)։*

# ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

(էջ 327)

«Սև ցելերի սերմնացանը» պատմվածքի հիմնական բնագիր է դիտված համանուն ժողովածուի (1933 թ.) մեջ հրապարակվածը։ Դրա առաջին տարբերակը նույն թվականին տպագրվել է «Խորհրդային Հայաստանում». ստորև տրված են դրանց բնագրային տարբերությունները։ Պատմվածքը 1936-ին լույս է տեսել նաև իբրև առանձին գրքույկ, որ «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ հրապարակված բնագրի կրկնությունն է՝ մեկ-երկու աննշան տարբերություններով, որոնք նույնպես նշված են։

**էջ 327**

14 և արևից այրված աչքերը դարձնում / և աչքերը դարձնում (ԽՀ)

**էջ 328**

26 աղբակեր / աղբակեր (ԽՀ)

**էջ 329**

7 կավե հին պատերն / կավի հին պատերը (ԽՀ)

19-ի և 20-ի արանքում՝ ***.— ՍՅՍԳ-ում չկա

**էջ 330**

1—2 ելնում է իր ափերից / ելնում է ափերից (ԽՀ)

13—14 որի կատարին / ու կատարին (ԽՀ)

16 մնացած տների / մյուս տների (ԽՀ)

**էջ 331**

4 արգավանդ տիղմը / պարարտ տիղմը (ԽՀ)

11—12 որ սև սովերը նետել էր ամայի դաշտում / որի սովերը սև էր ամայի դաշտում (ԽՀ)

17—18 մի կողքի վրա / մի կողմի վրա (ԽՀ)

**էջ 332**

2 կնմանվեր / կնմաներ (ԽՀ)

13—15 Մնացել են քարե երեք աստիճանները, որով իջնում են գետնափոր ակումբը / Մնացել են քարե երեք աստիճանները, դեպի գետնափոր ակումբը (ԽՀ)

16 լամպեր / լամպաներ (ԽՀ)

20 ծվարում են / ծվարվում են (ԽՀ)

**էջ 333**

25 հյուսել էին մանյակներ / հյուսել էին ժանյակներ (ԽՀ)

26 հագցրել էին / հագցնում էին (ԽՀ)

28 կախել պատերից / կախում պատերից (ԽՀ)

**էջ 334**

5—6 շշունչով / շշինչով (ԽՀ) / շշնչով (ՍՅՍԳ)

11—12 և, երբ պղնձե փողերը հնչեցին թաղման նվագը, խոնարհվեց նրանց գերեզմանների վրա / և խոնարհվեց նրանց գերեզմանների վրա, երբ պղնձե փողերը հնչեցին թաղման նվագը (ԽՀ)

էջ 335

2 *մութի / մթի (ԽՀ)*

3—4 *թե՞ ջերմություն զգաց / մի ջերմություն զգաց (ԽՀ)*

18 *սուտի / ստի (ԽՀ)*

20 *ժամանակների / ժամանակները (ԽՀ)*

21—22 *Երբ պատմում էր այդ ժամանակներից / Երբ պատմում էր այդ ժամանակները (ԽՀ)*

24 *որդուն / որդին (ԽՀ)*

էջ 336

34—35 *պարզ գիշերներին / պարզկա գիշերներին (ԽՀ)*

էջ 337

2—3 *ամբողջի կարծիքը / ամբողջ կարծիքը (ԽՀ)*

15 *ոսկի հատիկներ / ոսկե հատիկներ (ԽՀ)*

19 *դրված են / դրված է (ԽՀ)*

էջ 338

2 *— Լավ է, որ ոչ ոք չի փշրել այդ առասպելը—* ԽՀ-ում չկա

3 *Հետո Ավագն ինձ պատմում է/ Ավագն ինձ պատմում է (ԽՀ)*

6 *և ես լսում եմ / և լսում եմ (ԽՀ)*

## «ԱՆՁՐԵՎԸ» ՇԱՐՔ

*«Անձրևը» անունը կրող ժողովածուի մեջ մտնող պատմվածքների նախնական տարբերակները տպագրված են «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, վերջնական մշակվածները՝ ժողովածվում։ Վերջինները ներկա հատորում տպված են իբրև հիմնական բնագրեր։ Ստորև տրվում են նրանց և նախնական հրապարակումների միջև եղած բնագրային տարբերությունները։ Բացառություն են կազմում «Սարու» պատմվածքը, որ ներկա հատորում այս շարքի մեջ չէ, այլ «Մթնաձորում» (տե՛ս ծանոթագրությունները) և «Մուրոյի «գրուց»-ը» պատմվածքը, որ առաջին տարբերակից հետո մշակման ենթարկված, նախքան «Անձրև» ժողովածուի մեջ դրվելը, երկու անգամ հրապարակվել է (տե՛ս համապատասխան ծանոթագրությունը)։*

### ՀՅՈՒՄԲԱԹԻ ՁՈՐ

*(էջ 341)*

էջ 341

9 *փուլ եկող դեզի նման / փուլ եկող դեզի պես (ԽՀ)*

12 *լվացել և դարձրել ողորկ, հազար ու մի ձև ավել / լվացել, դարձրել ողորկ և հազար ու մի ձև ավել (ԽՀ)*

13—14 *Թվում է, թե մեկը հեկա թոշուն է / Թվում է, թե այս մեկը հեկա թռչուն է (ԽՀ)*

*19—20 ինչպես հսկումի կանգնած առասպելական հրեշներ / հսկումի կանգնած առասպել հրեշներ (ԽՀ)*

*20—22 Հին քարանձավներից, ուր առաջ մարդն է ապրել, մթնով ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում և երկա՜ր ոռնում / Մութին հին ու կիսով չափ ավերակ քարանձավներից, ուր առաջ մարդ է ապրել, ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում, ոռնում որսի իջնելուց առաջ (ԽՀ)*

*23 Անհիշելի ժամանակներից / Անհիշելի ժամանակներից ի վեր (ԽՀ)*

**էջ 342**

*1—6 Նույն քարանձավում այժմ էլ ապրում է մի սերունդ, որի հին պապերն այդ քարանձավում իրենց մերկությունը ծածկում էին գազանի մորթով, մարդիկ, որոնց բրածո բազուկների հաստ ոսկորները այժմ երանության ու նախանձի ժպիտ են հարուցում մանրացած սերնդի աչքերում / Միևնույն քարանձավում հիմա էլ ապրում է սերունդը վաղուց անցած մարդկանց, որոնք իրենց մերկությունը գազանի մորթիով էին ծածկում և որոնց բրածո բազուկների հաստոցը այժմ երանության ու նախանձի ժպիտ է ծնեցնում մանրացած սերնդի աչքերում (ԽՀ)*

*8 Այնտեղ, ուր այժմ / Եվ այնտեղ ուր այժմ (ԽՀ)*

*10—12 և այն օրերի մասին, երբ Գյունեյի լանջերին խիտ անտառ էր, ձորում շամբուտներ, որտեղ վարազ էին որսում մելիքները / անտառի մասին այն օրերում, երբ Գյունեյ Թաղի տեղն անանց կաղնուտ էր, դիմացի սարերի վրա խիտ անտառ, որի խորքերում մելիքները վարազ էին որսում (ԽՀ)*

*13—15 Այժմ լերկ են լանջերը ∽ անտառի հետ անհետացել են ծառերի ստվերում բսնող խոտերը, կուրացել են աղբյուրները / լերկացել են սարերը ∽ ծառերի շվաքում բսնող խոտերն անհետացել են անտառի հետ (ԽՀ)*

*18 Հյուսիբաթի ձորում ոչ կռիվ է եղել և ոչ կոտորած / Ոչ կռիվ է եղել և ոչ էլ կոտորած Հյումբաթի ձորում (ԽՀ)*

*19 Տարիների հետ պառավել է գյուղը / Պառավել է տարիների հետ (ԽՀ)*

*22 ոչ մի հորթ / և ոչ մի հորթ (ԽՀ)*

*31 գարնան արագ հալոցք / գարնանն արագ հալոցք (ԽՀ)*

*32 և կփլվի խարխուլ պատը / պատը փլցնելու համար (ԽՀ)*

*33 Աղբյուրի կողքին հին ձիթհանքն է / Հին ձիթհանքն է աղբյուրի կողքին (ԽՀ)*

**էջ 343**

*3 քարի տակ տրորել բռված կտավատը / քարի տակ մանրացրել բռված կտավատը (ԽՀ)*

*4—6 Հիմա էլ ժայռի գլխին մնում են Մելիք-Բախտամի ամարաթի բարձր պատերը, նրա բանտը, մելիքի ախոռները / Հիմա էլ մնում են Մելիք-Բախտամի ամարաթի պատերը բարձր ժայռի գլխին, նրա բանտը, մելիքական ախոռները (ԽՀ)*

6—7 *քարերից և գեղեցիկ քանդակներով / քարերից, գեղեցիկ քանդակներով (ԽՀ)*

7—8 *ծաղկանկար քանդակներով / քարերը ծաղկանկար քանդակներով (ԽՀ)*

8—9 *դիմացի պատին՝ ժանգոտ երկաթի օղ / դիմացի պատին խրած ժանգոտ երկաթյա օղ (ԽՀ)*

10—11 *ոսկեհատ գարի / ոսկեգույն գարի (ԽՀ)*

11 *Իրանից քարվանով բերած քիշմիշ / Իրանից ուղտերի քարվանով բերած քիշմիշ (ԽՀ)*

11 *քիշմիշ* բառից հետո — *Այնտեղ որտեղ նստել են մելիքները և դատ արել, շուրջը կիսավեր պատերով մի բակում այժմ խոտ է դարսած, իսկ Մելիք-Բախտամի ախոռի քարերին ծեփած է թրիք (ԽՀ)*

21—22 *ով ոսկի ուներ / ով գրպանում ոսկի ուներ (ԽՀ)*

23—25 *քոշը վայր դրին սպիտակ գորանոցի մոտ և տափարակի վրա փորեցին նոր տների հիմքը / քոշը վայր դրին սպիտակ քարե գորանոցի մոտ և տափարակի վրա նոր տների հիմքը փորեցին (ԽՀ)*

26 *Այսպես առաջացան քաղաքի տները / Այսպես առաջ եկավ քաղաքը (ԽՀ)*

30 *շամբուտները կոխելով / շամբուտները կոխ տալով (ԽՀ)*

35 *ջուր էր խմում քաղաքը / քաղաքն էր ջուր խմում (ԽՀ)*

**էջ 344**

1 *Հյումբաթի ձորի հին կրպակները / Հյումբաթի Ձորում հին կրպակները (ԽՀ)*

4—5 *մելիքների շուկան / մելիքյան օրերի շուկան (ԽՀ)*

5 *անցուդարձը քիչ է / անց ու դարձը շատ քիչ է (ԽՀ)*

8 *Իրանի սարքա* բառերից հետո—*Տզրուկը, երբ հագենում է արյունից, ծծում մինչև ուռչի, կլորանա, ընկնում է իրեն-իրեն, մի քիչ տեղ գլորվում, տապ անում՝ ծծածը մարսելու (ԽՀ)*

10 *գնում էին / գլորվում էին (ԽՀ)*

17 *ուրախ լուր էր բերել / ուրախ լուր բերել (ԽՀ)*

21 *գարու մեջ փնտրում Մելիք-Բախտամի քիշմիշը / գարու մեջ Մելիք-Բախտամի քիշմիշը փնտրում (ԽՀ)*

22 *Թերդի քարերը մեկ-մեկ ընկան / Թերդի քարերը ընկան մեկ-մեկ (ԽՀ)*

24—25 *ժանգը դեղին սերմեր մաղեց / ժանգը դեղին հատիկներ շաղեց (ԽՀ)*

31—34 *Ոչխարները քշացան, ձորում ապրողներին մնաց քաղաքում ձեռք բերել բո՛ւրդն էլ, նե՛րկն էլ և գարնանը պատրաստ գործեր տալ բրդի տերերին / Գուցե դրանից,-էր, որ ոչխարներն էլ քշացան, ձորում ապրողներին մնաց բուրդն էլ քաղաքում ձեռք բերել, ներկն էլ, գարնանը պատրաստ գործեր հետ տալու բրդի տերերին (ԽՀ)*

**էջ 345**

2—6 *և երբ ձմռան գիշերով սպիտակահեր մի կին ձորի աղջիկներին հին նախշերն էր սովորեցնում,— ձմռան գիշերին ճրագի պատրույգի հետ մխում*

էր պառավի սիրտը, երբ հիշում էր չքնաղ գորգերը, որ տարան | և երբ ձմրան գիշերին մաղն սպիտակած պառավ կինը ձորի աղջիկներին հին նախշերն էր սովորեցնում, չորացած մատներով թելը թելին հագցնում, ձմրան գիշերներին ճրագի պատրույգի հետ էլ մխում էր պառավի սիրտը վաղուց վաճառված գորգերը հիշելիս (խՀ)

8 Գյունեյ թաղում | Արևմուտ թաղում (խՀ)

11 սրա—նրա դռանը | սրա—նրա դռան (խՀ)

15 Այսպես հալվեց ձորի գյուղի սատղը | Այսպես թեքվեց Ձորագյուղի աստղը (խՀ)

18—19 հետևից տերը բզում է | հետևից մեկը բզում է (խՀ)

19 կածանի դժվար տեղը | կածանի դժվարին տեղում (խՀ)

21—23 աշնան արևոտ մի օր, երբ երեք թաղն էլ քարափից դիտելուց հետո, իջանք ձորը | աշունքի մի արևոտ օր, երբ երեք թաղն էլ հեռվից տեսնելուց հետո, ձորն իջանք (խՀ)

25 ծլլացող աղբյուրում բառերից հետո—Բնական մահով ու դանդաղ-մեռան նրանք, որոնք զոմեշի հետ հավասար կտավատի բոված հատիկներից ձեթ էին հանում, երեսը լվանում աղբյուրի քարե նովդանում (խՀ)

26 մահը թեթև է թվացել | մահն էլ թեթև է թվացել (խՀ)

28—29 քարերը չեն շինկնել կրակից, և նստել է մամուռը | քարերին մամուռ է նստել և քարերը չեն շիկնել կրակից, ընկած պատերի տակ մարդիկ չեն մնացել (խՀ)

32—էջ 346, տող 1 տեսանք չեն տները՝ հատ ու կենտ, պառավ լնդերի դեղնած ատամների պես | չեն տները տեսանք, հատ ու կենտ պառավ լնդերքի վրա պատահմամբ մնացած ատամի պես (խՀ)

էջ 346

1—2 Հարևանի ավերակ տունը դարձրել են գոմ ու մարագ | Հարևանի ավերակ տունը մեկը մարագ է դարձրել, մյուսը գոմ (խՀ)

4 ծանր կողպեքները վրան | մեծ կողպեքը վրան (խՀ)

6 բուսել է խոտը | խոտ է բուսել (խՀ)

7—8 տեղ-տեղ արևի տակ փռել էին գունավոր լաթեր | տեղ-տեղ գունավոր լաթեր էին փռել արևի տակ (խՀ)

9—10 պամիդոր էին շարել | պամիդոր էին դրել արևի տակ հասնելու (խՀ)

10—11 Եվ միակ ապացույցը, որ կարող էր համոզել | Եվ միակ վկան, որ դրսից կարող էր համոզել (խՀ)

11—12 կիսակարմիր պամիդորն էր բառերից հետո—Մելիքների ամարաթի մոտ ժայռերն ավելի մոտիկ են իրար։ Հիմա էլ ժայռերի տակ ապրողներ կան (խՀ)

13 Թեև քաղաքը հեռու չէր | Թեկուզ քաղաքը հեռու չէր (խՀ)

15—16 որի բնիկները կարծես ուրիշ ցեղի մարդիկ էին | որի բնիկները մեր աչքին առաջին պահ ուրիշ ցեղի մարդիկ թվացին (խՀ)

16—18 Եվ միակ հարցը, որ դառնում էր մեր գլխի մեջ մի «ինչու» է այն մա-

*սին, թե ինչպես են մարդիկ ապրում այս քարերի տակ / Եվ միակ հարցը, որ բուրվառի պես դառնում է գլխիդ մեջ, մի «ինչու» է այն մասին, թե ինչպես են ապրում մարդիկ այս քարերի տակ (**ԽՀ**)*

22—25 *Երբ մեզնից մեկը ջուր ուզեց, ջուր բերող երեխայի անունը հարցրեց, թվաց, թե նա ջուր չէր ուզում, այլ ստուգում էր, թե արդյոք այդ երեխան մեզ նմա՞ն է խոսում / Եվ երբ մեզնից մեկը ջուր ուզեց, ջուր բերող երեխայի անունը հարցրեց, թվաց, թե նա ջուր էլ չէր ուզում, կանգնում էր ստուգել արդյո՞ք նա էլ մեզ նման է խոսում (**ԽՀ**)*

26 *կտուրին / կտրին (**ԽՀ**)*

27—28 *որ կամրջի գլխին միացել էր մեզ / որ մեզ հետ միացել էր կամրջի գըլխին (**ԽՀ**)*

32 *ճրագներ վառվեցին* բառերից հետո*—մոխրի մեջ պեծին տվող կայծերի պես (**ԽՀ**)*

էջ 347

3 *և չի լինում որոշել / չի լինում որոշել*

4 *և 5-րդ տողերի արանքում—(գծիկ), որ չկա **ԽՀ**-ի տարբերակում*

7 *Երբ գզիրը / Եվ երբ գզիրը (**ԽՀ**)*

9 *մի քանի հոգի եկան / մի քանի հոգի էլ եկան (**ԽՀ**)*

12 *խոտերի մեջ լույս տվող բզեզներ / խոտերի մեջ փայլ տվող լուսատտիկ (**ԽՀ**)*

17 *ոգևորում անցնելու / սիրտ տալիս անցնելու (**ԽՀ**)*

20 *առասպելի պես էր / առասպելի պես էր թվում (**ԽՀ**)*

20—21 *Նրանք իրենց հանդերի անուններն էին տալիս / Իրենց հանդերի անուններն էին տալիս (**ԽՀ**)*

25—27 *երբ մեկը ծանոթ բանտի նկարագիրն էր անում և ուրվագծում վաղվա գյուղը, լայն ճանապարհը և ճանապարհի նման ազատ կյանքը / երբ մեկը ծանոթ բանտի պատկերն էր տալիս և նկատում վաղվա գյուղը, լայն ճանապարհը, ավելի հեշտ կյանք (**ԽՀ**)*

28 *Երբ ուշ գիշերին / Եվ երբ ուշ գիշերին (**ԽՀ**)*

էջ 348

2—3 *վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում / վաղվա լավ օրվա հույսը ջերմություն սփռեց սրահում (**ԽՀ**)*

3 *Եվ ուրախ աղմուկով դուրս եկան / Աղմուկով դուրս եկան սրահից (**ԽՀ**)*

13—14 *Լսելի էր, թե ինչպես նա մահակի ծայրով զարկում էր քարերին / Մի պահ լսելի էր, թե ինչպես էր նա մահակի ծայրով զարկում քարերին (**ԽՀ**)*

## Տ Ի Գ Ր Ա Ն Ո Ւ Հ Ի

(էջ 349)

**էջ 349**

1 *Տիգրանուհի*[1] / *Տիգրանուհին (խՀ)*

2—7 *Տնտեսությունը պլանով վարելու համար ձմռան մի գիշեր Վասիլը մտքում դրեց օրագրի պես մի բան պահել ∽ ե՞րբ է ծնելու կովը, քա՞նի ձու է քաղաք տանում ծախելու և այլն / Վասիլը տնտեսությունը պլանով վարելու համար, ձմռան մի գիշեր մտքում դրեց օրագրի պես մի բան պահել∽ ե՞րբ պիտի ծնի կովը, քաղաք գնալիս քա՞նի ձու է տանում ծախելու և այլն (խՀ)*

8 *Ապագա հեռանկարների մասին / Գլանային հեռանկարների մա·ին (խՀ)*

10 *խոր / խորը (խՀ)*

11—13 *որպիսին երևի ունենում է նավի կապիտանը, փոթորկից հետո նավի սարք ու կարգը դիտելով, մինչև խաղաղ նավահանգիստը / որպիսին, երևի, ունենում է նավի կապիտանը վտանգավոր բեյսից առաջ նավի սարք ու կարգը դիտելուց և համոզվելուց հետո, որ նավն ապահով կհասնի մինչև նավահանգիստ (խՀ)*

18—19 *երեխաների մեջ / երեխաների վրա (խՀ)*

18—19 *երեխաների մեջ* բառերից հետո—*Կանոնավոր ընթացքը չուներ և այն պատառը, որ նա պիտի կուլ տար։ Որովհետև պարտատերերին տան պատուհանից տեսնելիս, եթե Վասիլը հաց էր ծամում, պատառը կատիկին պիտի դեմ առներ, նա պիտի հազար, որից հետո միայն խմորը պիտի իջներ աննդատար խողովակով (խՀ)*

21 *միաբերան կոռնային / կոռնային միաբերան (խՀ)*

**էջ 350**

3 *նրա գլխում / այդ գլխում (խՀ)*

11 *արձանագրելով լուսանցքի վրա / արձանագրելով երաշահանի լուսանցքի վրա (խՀ)*

12—14 *Իսկ գարնան սկզբին միշտ էլ քունն է հաղթել, և երկու-երեք բառ գրելուց հետո ∽ կիսատ թողնելով / Իսկ գարնան սկզբին հաղթանակը միշտ էլ քունն է տարել և այն էլ շշմեցուցիչ արագությամբ, որովհետև երկու-երեք բառ գրելուց հետո ∽ կիսատ թողել (խՀ)*

16—17 *կազմված է հաջորդ առավոտյան / կազմված է հենց հաջորդ առավոտյան (խՀ)*

20 *ութ մարդ էր / ութ մարդ է (խՀ)*

21 *չորս երեխան / չորս երեխա (խՀ)*

26—27 *և տան անդամների ցուցակին / տան անդամների ցուցակին (խՀ)*

---

[1] *«Անձրևը» ժողովածուի մեջ, պատմվածքի խորագրում այս վերնագիրն ունի* Տիգրանուհի *ձևը (առանց ն հոդի), նույն ժողովածուի բովանդակության մեջ պահպանվել է սկզբնական ձևը՝* Տիգրանուհին:

30 օրագրից չի կարելի որոշել / օրագրից անհնար է որոշել (խՀ)

33 գրված է մայիսի 6-ին / մայիսի 6-ին է գրված (խՀ)

էջ 351

6—9 Կարելի է ենթադրել Տիգրանուհու տխրությունը չուստեր չունենալու համար, և թե ինչպիսի երազ է թվացել մի զույգ չուստը / Ընթերցողին է վերապահվում ենթադրել, թե ինչքան տխրած պիտի լիներ Տիգրանուհին չուստերը չունենալու համար, և ինչպես այդ չուստերը երազի պես պիտի թվային նրան (խՀ)

9—11 Ստույգ է, որ Տիգրանուհին բոբիկ ոտքերով է գնացել քաղհանի, ինչպես նշանակել է Վասիլը մի քանի օր հետո / Միայն ստուգապես կարելի է ենթադրել, որ Տիգրանուհին արտը բոբիկ ոտքերով է քաղհանել, քանի որ ինքը Վասիլն է գրում մի քանի օրից հետո այդ մասին (խՀ)

13 Նշանակել է. «մայրս գնացել էր / Նշանակել է, որ «մայրս գնացել էր (խՀ)

31—32 Հունիսի 11-ին կիրակի էր / Հունիսի 11-ին կիրակի էր նշանակել (խՀ)

էջ 252

4—5 Այդ ամսին Վասիլն առաջին անգամ հիշատակում է պարտքը / Այդ ամսին է Վասիլն առաջին անգամ հիշատակում պարտքի մասին (խՀ)

5—6 Գրելով, որ թրթուրն ուտում է կաղամբի տերևները / Գրելով այն մասին, թե թրթուրն ուտում է կաղամբի տերևները (խՀ)

9—10 տեղեկությունները հուլիսին կցկտուր են / հուլիսին տեղեկությունները կցկտուր են (խՀ)

26 ամբողջ շաբաթը / ամբողջ շաբաթ (խՀ)

էջ 353

10 ամեն երեսի / ամեն երեսին (խՀ)

16 հիշատակված է / հիշված է (խՀ)

16—17 Թեև Վասիլը / Եվ թեկուզ Վասիլն (խՀ)

17—19 սակայն շատ քիչ են հիշատակումներ Տիգրանուհու և նրա չուստերի մասին / սակայն շատ քիչ են հիշատակումներ չուստերի և Տիգրանուհու մասին (խՀ)

22 իբրև թե / իբր թե (խՀ)

25 թե աշխարհը փուչ է / որ աշխարհը փուչ է (խՀ)

29—30 Նորից բոբիկ ոտքերով («առի ծամոն վերքի համար») արտը գնացել / Նորից բոբիկ ոտքերով, ոտքին էլ վերք («առի ծամոն վերքի համար») արտը գնացել (խՀ)

31 հայրական / հորենական (խՀ)

էջ 354

5—6 Եվ մուտքը գերազանցել է («մարքուր եկամուտ խոտի կողմանից») / Եվ որովհետև մուտքը գերազանցում է (այդպես էլ ասված է նրա օրագրում՝ «մարքուր եկամուտ խոտի կողմանից»), Վասիլն ավելորդ չի համարել ենթադրաբար որոշել այն օգուտը, որ կստացվի, եթե այսինչ (անունն անընթեռնելի է) հողամասը գյուղը հատկացնի առվույտի համար (խՀ)

8—9 գարու հաշիվն / գարու հաշիվներն (խՀ)

16 Տիգրանուհու մասին էլ ուրիշ ոչինչ / էլ ուրիշ ոչինչ չկա Տիգրանուհու մասին (խՀ)

21 մահվան առթիվ / մահվան մասին (խՀ)

22—24 Վասիլը երազահանի այդ երեսն էլ շրջել է նույն բութ մատով, որի կնիքը կա երազահանի շատ երեսների վրա / Երազահանի այդ երեսն էլ Վասիլը շուռ է տվել նույն բութ մատով, որի կնիքը երազահանի շատ երեսների վրա կա (խՀ)

## ԵՎ ԲԱՏՐԱԿԸ ԹՈՒՅԼ ՏՎԱՎ ԻՐԵՆ...

(էջ 355)

**էջ 355**

2 տավարը տեղավորեց / տավարը տեղաց արեց (խՀ)

7—8 մտավ վերմակի տակ, կամաց կսկծալով / շուլալվեց վերմակի տակ, մտքում ափսոսալով (խՀ)

15—16 պատուհանները քցված են / պատուհանները գցված են (խՀ)

16 սանիտարական / սընիտարական (խՀ)

20 Ունքերը իրար հավաքեց / Ունքերը հավաքեց իրար (խՀ)

23—24 ինչպես կարգն է» / ուր որ հարկն է» (խՀ)

**էջ 356**

2 մի սատկած ճանճ / հերվա մի սատկած ճանճ (խՀ)

6—7 մի կրահոր են շինել / մի ջրհոր են շինել (խՀ)

11—12 ճրագից ստվերներ էին թրթռում / պատրույգից ստվերներ էին թրթռում (խՀ)

18—19 հոգնած մրափով քնել էր գյուղը / քնել էր գյուղը բեզարած մրափով (խՀ)

19 Մրոցը՝ հեռու ձորում ընկած / Մրոցը՝ մոռացված, հեռու ձորերում ընկած (խՀ)

22—23 հովը ծեծում էր բաց կուրծքը, և Սրապը լիաթոք շնչում էր / հովը բաց կուրծքն էր թակում, Սրապը լիաթոք շնչում էր (խՀ)

29—30 բայց միտն ընկավ Դավթի բատրակը և օրվա զրույցները նրա մասին / միտն եկավ Դավթի բատրակը, օրվա խոսակցությունը գյուղում (խՀ)

33 ծածկել է և չի գրել / ծածկել է, չի գրել (խՀ)

**էջ 357**

3—4 Տիկոն փոքրուց չոբան էր / Տիկոն մանկուց չոբան էր (խՀ)

5—7 — Տիկոն ուլի հետ ա ծիծ կերել,— ասում էին, ծիծաղում։ Տիկոն էլ էր ծիծաղում։ Իբրև թե Տիկոյին մայրը չի ծիծ տվել, այլ մի պառավ այծ / —Տիկոն ոչխարի տակ ա մեծացել, գառան հետ ծիծ կերել—ասում էին, ծիծաղում։ Տիկոն էլ էր ծիծաղում։ Մայրը մեռել էր, երբ Տիկոն դեռ չոբան չէր։ Ասում էին, որ մայրը ծիծ չի տվել Տիկոյին, այլ մի պառավ այծ (խՀ)

9 չլիներ / չլիներ էլ (խՀ)

14—15 — Տիկոն էլ գյուղում չի երևա՞,— ասում էին ընկերները / Ա՛, մեռած Տիկո, չի էլ երևում գյուղում,— ասում էին գյուղացիք (ԽՀ)
20 և Դավթի ոչխարը / Դավթի ոչխարը (ԽՀ)
21—22 մարդը վերադարձել էր առանց հետքը գտնելու / վերադարձել էր առանց հետքն էլ գտնելու (ԽՀ)
23 — Տեսնես սարն անցավ ո՞ւր գնաց... / — Տեսնես՝ հիմա սարն անցկացավ, ո՞ւր գնաց... (ԽՀ)
24 մթնով գնացել էր / մութին գնացել էր (ԽՀ)
26—27 թե չէ վրադ պրատակոլ կկազմեմ / թե չէ հրես վրադ պրատակոլ կկազմեմ (ԽՀ)

էջ 358

7—8 Սրապը այնպես էլ չիմացավ / Սրապը մինչև վերջն էլ չիմացավ (ԽՀ)
8 Երբ նրան հայտնեցին / Երբ նրան իմաց տվին (ԽՀ)
19—20 Սրապին հանդիմանել էին / Սրապին հանդիմանեցին (ԽՀ)
24—25 գյուղումս պետք է լրբությունը չնջվի / գյուղումս պետք ա լրբությունը չնջվի (ԽՀ)
31—32 կարծես նրան առաջին անգամն էր տեսնում / կարծես առաջին անգամն էր տեսնում նրան (ԽՀ)

էջ 359

7 խաչիեյանցը / խաչիյանցը (ԽՀ)
16—17 բայց նորից կարդաց / նորից կարդաց (ԽՀ)
18—19 «Եվ բարրակը թույլ տվավ իրեն մինչև այն աստիճան...» / «Եվ բարրակը թույլ տվավ մինչև այն աստիճան...» (ԽՀ)
23—24 ինչ որ պատահել է գյուղում / ինչ եղել է փոքրիկ Մրոցում
26 Սրապի միտն ընկավ Մանուշը, և ինքն իրեն ասաց / միտն եկավ Մանուշը, և Սրապն ինքն իրեն ասաց (ԽՀ)

## ՄՈՒՐՈՅԻ «ԶՐՈՒՑ»-ը

(էջ 360)

էջ 360

1 Մուրոյի «զրուց»-ը / Լենինի մասին. Մուրոյի «զրույցը» (ԽՀ)
4—6 Ներքև փռված էր Արազդայանի տափարակից մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափարակը / Չզրահավորված աչքով էլ կարելի է տեսնել Արազդայանի տափարակից մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափարակը (ԽՀ)
7 պարտեզների էին նման / պարտեզների են նման
17 Մեր ետևը Մաղդան էր՝ տափարակ կտուրներով / Դիմացը Մաղդան էր՝ տափակ կտուրներով (ԽՀ)
19—21 Օրը չինչ էր և թափանցիկ. արևի տակ փայլփլում էին ցորենի քիստերն ու թեփը, երբ ոսկեգույն փոշու հետ խառնված ցորենը կանայք մաղում

էին և օրորվում / Օդն այնքան թափանցիկ էր, որ մեր նստած տեղից երևում էր արևի տակ փայլփլող ցորենի քիստերն ու թեփը, որ ոսկեգույն փոշու հետ խառնված հովը քշում էր հեռուն (ԽՀ)

էջ 361

1—2 ինչպես էր բահը զրնգում / ինչպես է բահը զրնգում (ԽՀ)

9—10 Ես փորձեցի երգի ընդմիջումներից որոշել, բայց չկարողացա / Ես փորձեցի երգելու ընդմիջումներից որոշել, չկարողացա (ԽՀ)

15—16 Ոչխարի հոտը բլուրից իջնում էր / Ոչխարի հոտը բլուրից ցածրանում էր (ԽՀ)

24 թևերը կտրած / թևը կտրած (ԽՀ)

27—28 ի՞նչ գիտե / ինչքան տեղեկություն կունենա (ԽՀ)

32 Շունը նստեց / Շունը հեռացավ (ԽՀ)

էջ 362

12—13 Մուրոն գյուղի հովիվն էր / Գյուղի հովիվն էր և որովհետև ինքն էլ չորս ոչխար ուներ, միության մեջ չէին ընդունել (ԽՀ)

13 Գյուղում մի «քուլիկ» ունի / Մի քուլիկ ունի (ԽՀ)

18 մի քիչ սրտնեղեց նա / մի քիչ սրտնեղած ասաց նա (ԽՀ)

20 Ի՞նչ զրուց / Ինչ զրույց (ԽՀ)

25 էղնիմ / եղնեմ (ԽՀ)

32 ինք մնա / ինքը մնա (ԽՀ)

էջ 363

2 էգուց պարզ արև / էգուց պարզ կլինի (ԽՀ)

4 չօգնե / չօգնի (ԽՀ)

10 «էդ վախտ / «էդ վախտը (ԽՀ)

14 լավ խոսք / լավ խոսքեր (ԽՀ)

15 զմմեն լե պատմի / զմենն լե պատմի (ԽՀ)

18—19 տասներկու տարեկան / 12 տարեկան (ԽՀ)

20 իբրև / իբր (ԽՀ)

21 վրան է առնում թաղիքը / վրան է առնում կարպետը (ԽՀ)

21 ճկում էին ծառերը / ճկում են ծառերը (ԽՀ)

22 երեկո լինի / իրիկուն լինի (ԽՀ)

27 հասցուցին / հասուցին (ԽՀ)

32 թագավոր / թագավորը (ԽՀ)

33 Լենինին իմացավ / Լենին իմացավ (ԽՀ)

էջ 364

8—9 որ թագավոր մեր Լենին սպանե / որ մեր Լենին թագավոր սպանե (ԽՀ)

9 ուղիղություն / ուղղություն (ԽՀ)

10 ցուց կիտա / ցույց կիտա (ԽՀ)

12 բանվորներուն / բանվորներին (ԽՀ)

13 կռիվ կէրթանք թագավորի վրա / կռիվ պիտի տանք թագավորի հետ (ԽՀ)

14—15 էդ ֆլան ամիս / էդ ֆլան ամսին (ԽՀ)

15 ուռուս թագավորի պալատ / ուռուսի թագավորի պալատը (խՀ)

21 չքավորներուն ասավ / չքավորներին ասաց (խՀ)

22 Չքավոր բանվորներ ռահաթցան / Չքավոր բանվորներ հանգստացան (խՀ)

23 ժողովք նստան, որոշում գրին / ժողովք նստավ, որոշում գրեց (խՀ)

24 կռիվ / գռիվ (խՀ)

24 էլավ մի բարձր քար, ասավ / էլավ մի բարձր տեղ ասավ (խՀ)

25 — Ժողովուրդ, խաղաղ ապրեք՝ էլ մզի կռիվ չկա… / — Ժողովուրդ, հանգիստ ապրեք… էլ մեզի գռիվ չկա… (խՀ)

29 լեռան հովիվներին / սարի հովիվներին (խՀ)

30 տառերով գրել / տառերով նշանակել (խՀ)

33—34 Մուրոն նաև ձախլիկ էր / Մուրոն ձախլիկ էր (խՀ)

34 այդ նրան չխանգարեց / այդ չխանգարեց նրան (խՀ)

էջ 365

2—3 գլուխները դարձրին / դունչերը դարձրին (խՀ)

5 հարցրի ես / հարցրի (խՀ)

6 Զրուց / Զրույցը

6 Եվ շարունակեց / ասաց և շարունակեց (խՀ)

7 հարուստ չխլսավ / հարուստը չխլսավ (խՀ)

7—8 Որ փախավ / որը փախավ (խՀ)

11 հնարք գտավ / հնարքը գտավ (խՀ)

12 ասավ՝ կուզեմ բառերից հետո—Ասավ առ քե մի կոտ ոսկի, գնա Լենին զարկ (խՀ)

12 Աղչիկ էլավ / Աղչիկ ելավ (խՀ)

15 Լենին իլավ դուրս / Լենին ելավ դուս (խՀ)

16—17 Լենին ասավ դրան մի ապանեք / Լենին ասաց, թե դրան մի սպանեք (խՀ)

18—19 Իմացան, որ էն հարուստ ճամփեց, հարուստի փոր-փոր լե տրո-րին / Իմացան, էն հարուստի փոր փոր լե տրորին (խՀ)

21 կանչեց իր ընկերներ / կանչեց իր ընկերներին (խՀ)

21—22 ասավ / ասաց (խՀ)

22—23 իմ խրատներ, իմ խոսք կմնա աշխարհի երես / իմ խրատներ, իմ հա-մոզմունք կմնա աշխարհի երես (խՀ)

28 — Համլա գրուց / — Համլա գրույց (խՀ)

էջ 366

10 լույսերի շղթաները / լույսերի գիրլիանդները (խՀ)

## ՁՈՐԵՐԻ ԼՈՒՅՍԸ

(էջ 367)

էջ 367

19 խփում էր լեռների լանջերին / խփում էր լեռներից լեռներ (խՀ)

էջ 368

7 և որտեղ գտնես / և որտեղ կգտնես (խՀ)

18 թափած / թափված (խՀ)

էջ 369

6 ասաց / բացատրեց (խՀ)

էջ 370

13 խոտը փարթամ չի բարձրանում / փարթամ չի բարձրանում խոտը (խՀ)

13—14 կաշվե պայուսակը / կավե պայուսակը (խՀ—պետք է վրիպակ լինի)

17—18 Որդին այդ բոլոր վայրերում հորից ավելի եռանդով փնտրեց պղինձ / Որդին հորից ավելի եռանդով այդ բոլոր վայրերում փնտրեց պղինձ (խՀ)

էջ 371

2 — Գցել էր / — Քցել էր (խՀ)

32 երկու կողմը / 2 կողմը (խՀ)

էջ 372

14 Գետի ջրի մեջ նա գտնում է / Բայց նա գետի ջրի մեջ գտնում է (խՀ)

17—18 գարնանը չափից ավելի բարձրացել էր գետը / այդ գարնանը բարձրացել էր գետը չափից ավելի (խՀ)

19—20 լեռներում քերել է / լեռներում մի տեղ քերել է (խՀ)

25 Նորից է հորդանում գետը / Նորից է բարձրանում գետը (խՀ)

էջ 373

3—4 Լեռն ելան պայթեցնողները և մարմարի վարպետները / Լեռն ելան պայթեցնողները, քարտաշները և մարմարե վարպետները (խՀ)

5 լեռան գագաթը բառերից հետո—Ճանապարհի հետ բարձրացան առաջին տնակները (խՀ)

9 դեռ թարմ ավյունով / թարմ ավյունով (խՀ)

12—13 Նա նայում է մինչև սայլերը ծածկվեն լեռան հետևը, ապա նայում է ձորի մեջ ընկած իրենց գյուղին / Երբ քարերով բարձած սայլերն իջնում են նոր ճանապարհով, նա նայում է նրանց հետևից, մինչև սայլերը ծածկվեն լեռան հետևը, ապա նայում է խոր ձորի մեջ ընկած իրենց գյուղին (խՀ)

22 իջնում են / իջնում է (խՀ)

էջ 374

8—9 ավելի պայծառ թարթում են / ավելի պայծառ են թարթում (խՀ)

## Ա Ն Ձ Ր Ե Վ Ը...

(էջ 375)

էջ 375

11—12 երևում են հացենի ծառերը / կան հացենի ծառեր (խՀ)

14 գիշերում է մի գազան / գիշերել է մի գազան (խՀ)

17—19 Անտառում մառախուղ է, Կաթում է խոնավությունը մամուռների վրա,

*ծառերի վրա և քարափների լանջին / Անտառում մառախուղ է, խոնավու-թյունից ծանրացած մամուռներ, ծառերի վրա, քարափների լանջին (ԽՀ)*

էջ 376

6—7 *Քամուց ծփում է որսկանի սպիտակ միրուքը, նրա ոտքերի վրա բուսել է մամուռը / Քամին ծփում է որսկանի սպիտակ միրուքը, նրա ոտքերը պատել է մամուռը (ԽՀ)*

9—10 *չգիտես խեղճ աղերսով, թե՞ անբարբառ աղոթքով / չգիտես, թե խեղճ աղերսով և կամ անբարբառ աղոթքով (ԽՀ)*

16 *տարափով տեղում / տարափով դիզում (ԽՀ-ի տպրբերակում եղած դիզում-ը երևի վրիպակ է)*

18—19 *որ արձագանքի պես / որն արձագանքի պես (ԽՀ)*

31 *խաղաղ խնդությամբ իջնում եմ գետափը / և խաղաղ խնդությամբ իջնում եմ դեպի գետափը (ԽՀ)*

32 *Վերևում՝ քարանձավների առաջ, մնացին / Քարանձավների առաջ, վերևում մնացին (ԽՀ)*

էջ 377

4—5 *ապակիներն արտացոլում են / պատուհաններն արտացոլում են (ԽՀ)*

12 *Զորագետի ջրերը բարձր ժայռից իջնում են / բարձր ժայռից Զորագետի ջրերն իջնում են (ԽՀ)։*

17—18 *լսում եմ տարիների համառ աշխատանքի պատմությունը / լսվում է տարիների համառ աշխատանքի պատմությունը (ԽՀ)*

29 *նոր ներկած / նոր ներկված (ԽՀ)*

էջ 378

25—26 *նայում էր ∞ արահետին / նայում էր ∞ արահետներից մեկին (ԽՀ)*

էջ 379

6—8 *տուն է շինել քարափների վրա, և անձրևախառն քամին ծեծել է նրա հողաշեն խրճիթը / տուն է շինել ճանապարհների վրա և անձրևախառն քամին նորից ավերել է նրա հողաշեն խրճիթները (ԽՀ)*

9—13 *Մեր երկրի ժայռերի վրա հաղթողները անապարծ ոճով փորագրել են ∞ պատմագիրը հորինել է նույնքան անամեջ առասպելներ հին փառքի մասին / Մեր երկրի ժայռերի վրա հաղթողները անապարծ ոճով փորագրել են ավել ∞ պատմագիրը հորինել է նույնքան անապարծ առասպելներ հին փառքի և հայերի երկնառաք շնորհքի մասին (ԽՀ)*

16—17 *և նորից քաշի հին լուծը / և տանի լուծը (ԽՀ)*

## *ՄԻ ԱՆԳԱՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ...*

*(էջ 380)*

էջ 380

**Վերնագրից հետո՝ բնաբան —**

*Երկինքը գորշ է։— Գլտոր Նեան*
*պղտոր խփում է իր ափերին...*
*Ե-եղշե Չարենց (ԽՀ)*

8 Բորզան / Բորդան (ԽՀ-ի տարբերակում ճետագա մի շարք տողերում էլ կա ԲՈՐԴԱ ձևը, որ վրիպակ պետք է լինի. ստորև այլևս այն չենք բերում իբրև տարբերակ)
10 արև էր / արև կար (ԽՀ)
11—12 հրդեհել էին Իսաակիի տաճարի գմբեթը / հրդեհել էին Իսակիի և մյուս տաճարների գմբեթները (ԽՀ)
12 Տախտակամածի պղնձե ճաղերը / Նույնիսկ տախտակամածի պղնձե ճաղերը (ԽՀ)
17 հասարակ նավակները / իրենց հասարակ նավակները (ԽՀ)
19 անհայտ էր / անհայտ է (ԽՀ)

էջ 381

1 շրջվեց / շրջեց (ԽՀ)
7 կարմիր դրոշի առաջին պահակին / առաջին կարմիր դրոշի առաջին պահակին (ԽՀ)
8 և նրա ծանր մարմինն / և նրա մարմինը (ԽՀ)
9 բորտից ներքև բառերից հետո—Ապա հիշեց ծովախորշի այն բարձր ափը, որտեղ թաղված են ապստամբ նավաստիների առաջին զոհերը (ԽՀ)
10 «Զասմա»-ն / «Յասման»
12 Ներքև / Ներքևը (ԽՀ)
20 կազակներ / ղազախներ (ԽՀ)
27 այն հաստլիկ / էն հաստլիկ (ԽՀ)

էջ 382

6—7 Ծրագը ծխի մեջ ավելի աղոտ էր լուսավորում, և նրանք / Առանց այն էլ թույլ ճրագը ծխի մեջ ավելի աղոտ էր լուսավորում, այնպես, որ նրանք (ԽՀ)
8—9 նաև մոմ և լուցկի / և մոմ և լուցկի (ԽՀ)
11 ըստ կարիքի բարձրացնել / հարկ եղած դեպքում բարձրացնել (ԽՀ)
12—14 և մանավանդ զորանոցները, որ պետք էր անհապաղ գրավել / և զորանոցները, որ հարկավոր էր անհապաղ գրավել (ԽՀ)
22 փիշերապահները / պատրուլները (ԽՀ)
28—29 հարկավոր չէ / բոլորովին ձեռնտու չէ (ԽՀ)
31 նռնակներով զինված / ռումբերով զինված (ԽՀ)

էջ 383

1 Նրանք ծանրախոհ մտնում էին / Ծանրախոհ լռությամբ նրանք մըտնում էին (ԽՀ)
5 ձիերը դոփում էին փողոցներում / սուրհանդակների ձիերը դոփում էին փողոցների գրանիտը (ԽՀ)
9—11 իրենց հետ դեպի զորանոցներն էին տանում լուրեր ապստամբության մասին / իրենց հետ մռայլ զորանոցներն էր տանում առաջին տպավորությունները ապստամբության թափի (ԽՀ)
13 զորաշարժերի մասին / զորաշարժումների մասին (ԽՀ)

16 կայարանները / կայանները (ԽՀ)

20 Ծվ երկուսն էլ նայեցին ժամացույցներին / Ծվ երկուսը նայեցին ժամացույցներին (ԽՀ)

24—25 բեռնատար մեքենա / բեռնատար ավտո (ԽՀ)

32 շտապ հանձնարարության / շտապ հանձնարարությամբ (ԽՀ)

Էջ 384

17 Մթին պալատների աջևով / Խավար փողոցներով, մթին պալատների առջևով (ԽՀ)

20—21 օրորվում էին տների մութ ստվերները / դողում էին տների մութ ստվերները (ԽՀ)

24—25 նշանաբանից հետո / պարոլից հետո (ԽՀ)

28 լողում էր դեպի արքայական կամուրջը / լողում էր հուժկու հոսանքի դեմ, դեպի արքայական կամուրջը (ԽՀ)

Էջ 385

1—2 Առաջին զրահապատները գրոհեցին Սենատի հրապարակից / Նավաստիների առաջին զրահապատ մեքենաները գրոհեցին Սենատի հրապարակից (ԽՀ)

9 Պալատի ներսից և հարևան շենքերի կտուրներից / Պալատի ներսից, հարևան շենքերի կտուրներից (ԽՀ)

18 Մոտ երեք-չորս հարյուր հոգու / Մոտ 3—400 հոգու (ԽՀ)

24—25 կանացի մի ձայն կանչեց ամենքից բարձր / կանացի մի ձայն ամենից բարձր բղավեց (ԽՀ)

27—28 և գնում ենք / գնում ենք (ԽՀ)

Էջ 386

12 —Կանգնի՛ր,— բղավեց երիտասարդ պահակը / — Կանգնի՛ր,— բղավեց երիտասարդ պահակը մի ուրիշ փողոցում (ԽՀ)

13 Մի ավտո կանգնեց / Ավտոն կանգնեց (ԽՀ)

19 ձայնը բարձրացրեց նա / ձայնը բարձրացրեց մարդը (ԽՀ)

24 այնտեղ ձեզ կասեն / այնտեղ կիմանաք (ԽՀ)

Էջ 387

4—5 հրապարակից զարկեց / Պալատի հրապարակից զարկեց (ԽՀ)

6—7 և բոլոր փողոցներից արշավեց զինված բազմությունը / և բոլոր փողոցներից զրահավոր բազմությունը սեղմեց մահվան օղակը (ԽՀ)

10—11 և ռումբերը պատրաստ բարձրացավ մարմարյա սանդուղքներով / և մերկ սուսերներով, ռումբերը պատրաստ բարձրացավ մարմարյա սանդուղքները (ԽՀ)

12—13 տասնյոթ Նավաստի / 17 Նավաստի (ԽՀ)

13 որոնց թվում ծերունի Ստեփան Բորզան / որոնց թվում և ծերունի Ստեփան Բորզան (ԽՀ)

14 Գրոհողները մեծ եռանդով փնտրում էին / Գրոհողները ավելի եռանդով փնտրում էին (ԽՀ)

16—17 շարքի էին կանգնեցնում նրանց պալատից դուրս տանելու | շարքի էին հրամայում պալատից դուրս տանելու (ԽՀ)

19—20 Զմեռային պալատի բազմաթիվ սենյակներում և ներքնահարկում դեռևս փնտրում էին | Զմեռային պալատի անհամար սենյակներում և ներքնահարկերում փնտրում էին (ԽՀ)

27 դղրդացնելով կամարները | դղրդացնում կամարները (ԽՀ)

28 Կոմիսարը նրանցից վկայական պահանջեց | Կոմիսարը պահանջեց նրանց վկայականները (ԽՀ)

30 էպոլետի ոսկե երիզը | հաստ էպոլետի ոսկե երիզը (ԽՀ)

30 Նա հետ քաշեց | Հետ քաշեց (ԽՀ)

33—34 Պետրոգրադի մարզի շտաբի պետ | Պետրոգրադի ռազմական մարզի շտաբի պետ (ԽՀ)

**էջ 388**

1 պոկեց գեներալի բրաունինգը | պոկեց նրա բրաունինգը (ԽՀ)

3 պալատի բակում | պալատի բակից (ԽՀ)

4 Հոսում էր զինված բազմությունը | Հոսում էր հազարավոր զինված բազմությունը (ԽՀ)

## ՔԵՌԻ ԴԱՎՈՆ

(էջ 390)

**էջ 390**

15 խիստ սև | թունդ սև (ԽՀ)

**էջ 391**

6 Միհրանի | Միհրանին (ԽՀ)

29—30 տեսավ հետևյալ պատկերը | գոմի մեջ հետևյալ պատկերն էր (ԽՀ)

**էջ 392**

7 և նույնիսկ կարելի է ասել | և նույնպես կարելի է ասել (ԽՀ)

14 չվրնչաց Արաբը բառերից հետո—Քեռի Դավոն նման էր գազաններ սանձահարողին, որն աներկյուղ մտնում է առյուծների վանդակը և նույնիսկ պառկում է առյուծների արանքում։ Բայց քեռի Դավոն ցուլի մոտ չպառկեց (ԽՀ)

14 Քեռի Դավոն բռնեց | Նա բռնեց (ԽՀ)

20—21 Նա ցուլին կապեց երկաթե սյունից | Նա երկաթե սյունից կապեց ցուլին (ԽՀ)

25—26 փաթաթեց ծխախոտը և ապա, այն էլ կես հեգնանքով, ասաց | փաթաթեց մատից ավելի հաստ ծխախոտը, նոր միայն և այն էլ կես հեգնանքով ասաց (ԽՀ)

էջ 393

7 բոլոր իմ է / բոլորը իմ է (ԽՀ)

7 բոլոր իմ է բառերից հետո—Որքան սեր, որպիսի կամք և վճռականություն կար նրա խոսքերում, «բոլորը իմ է», և այդ ամենևին էլ այն ագահությունից չէր, որ ուներ հին գյուղի աշխարհակալ հարուստը. այդ նոր գիտակցության և նոր վերաբերմունքի առաջին շողերն են, որոնք թափանցել են նրա ուղեղը և այնտեղ փայլում են նոր իմաստով (ԽՀ)

25 Լեռ չի փլվել / և լեռ չի փլվել (ԽՀ)

26—27 և միայն քրտինք են թափել / ահա քրտինք են թափել (ԽՀ)

էջ 394

8—9 գարնան առավոտ բառերից հետո — Լեռ չի փլվել, բայց սասանել է հիմքից, ճեղքվել է սեփականատիրության դարավոր բերդը. Քեռի Դավոն, առաջին կոլտնտեսականներից ամենից ալեհերը, կարող է նայել նախիրին և երամակին ու հպարտությամբ ասել, որ «բոլորը իմ է»։ Եղել է և դեռ շարունակվում է հաղթական մի կռիվ հողի մշակների խեղճության դեմ և նրանց լուսավոր կյանքի համար, մի կռիվ, որի բովում թրծվում է ինքը մարտիկը (ԽՀ)

17 մեկը խրճիթում գնում գալիս էր / մեկը խրճիթում գնում էր գալիս (ԽՀ)

էջ 396

15 այն դժվարությունների բովում / այդ դժվարությունների բովում (ԽՀ)

16 որոնցից յուրաքանչյուրը / որոնց յուրաքանչյուրը (ԽՀ)

18 միացրել են իրենց աշխատանքը բառերից հետո—Նրանց մեծ մասը հիանալի հասկանում է աշխատանքի կատեգորիաների տարբերությունը և աշխօրի չափը, եթե նույնիսկ ոչխարը չափվում է տասնորդական կոտորակով։ Ոմանք ռուբլու և կոպեկների օգնությամբ են հասկանում։ Մեջքի վրա գեղանկար պառկած այն թիկնեղ մարդուն «Կես կռիվ» Մխոն բավական երկար բացատրեց խորանարդի և քառակուսու տարբերությունը և մարդը հասկացավ, երբ նրան ցույց տվին սենյակի երեք չափը։ Իսկ մի ուրիշը, որը և դժվար էր հասկանում, և դժվարանում էր արտասանել «ինվենտարիզացիա» բառը, կես լուրջ ասաց.

— Եղավ թամամ Զակսելխոզսնաբ... մինչև անունը սովորինք՝ փակին (ԽՀ)

էջ 397

29 խճճված ծալքերը բառերից հետո—Իրենց կյանքում որքան բարիք են ստեղծել քեռի Դավոյի այդ կոշտ և ծանր ձեռքերը և այդ բարիքներից ո՞ր մասն է նրան բաժին ընկել (ԽՀ)

էջ 398

13 որ հասնում է / որ հասել է (ԽՀ)

էջ 399

8—9 հակառակ է մտածում / հակառակն է մտածում (ԽՀ)

17 բարձրանան նրա ուսերի վրա / բարձրանան նրա ուսերը (ԽՀ)

Էջ 400

27—29 *Քամին բարձրանում էր, այրվող եղեգնի և խավարի մեջ նրանք նման էին հրաթև թռչունների / Քամին բարձրացնում էր այրվող եղեգնը և խավարի մեջ նրանք նման էին հրաթև թռչունների (ԽՀ)*

Էջ 401

1—2 *սեղանի շուրջ բոլոր / սեղանի մոտ շուրջ բոլոր (ԽՀ)*

14 *հպարտ բազե* բառերից հետո—*Լեռը բարձր է, բայց այդ բարձր լեռից ավելի բարձր են հողի մշակները, որոնք արդեն հերկել են համայնական դաշտերը (ԽՀ)*

## *ԱՅԼ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ*

### *Մ Ի Ր Հ Ա Վ*

*(էջ 405)*

Էջ 405

15—16 *Աշնան արևը ջերմացնում էր նրան, ձորի խաղաղությունը դուր էր գալիս / Աշնան արևը ջերմացնում էր դուրեկան, ձորում խաղաղություն կար (ԽՀ)*

16 *դուր էր գալիս / դյուր էր գալիս (ՏՁ)*

23 *Այդպես մի անգամ էլ ճռնչաց դուռը / Այդպես մի քանի անգամ էլ ճռնչաց դուռը (ԽՀ)*

Էջ 406

7 *քրտնքի / քրտինքի (ԽՀ), (ՏՄՕ)*

10 *Հնձանի դուռը կամացուկ ճռնչաց / Հնձանի դուռը ճռնչաց կամացուկ (ԽՀ)*

13—14 *Սոնան՝ կարմիր հալավով / Սոնան՝ կարմիր հալավով խշխշան*

20—21 *պաշ արեց Սոնայի թշերից / պաշ արեց Սոնայի թշերին (ԽՀ)*

31 *տաք մարմին էր զգում / տաք մարմինն էր զգում, Սոնայի մարմինն սպիտակ (ԽՀ)*

Էջ 407

28 *Փտել էր / Փտել է (ԽՀ)*

32 *Սոնան էր, մարմինը՝ քաղցր մաճառ / Սսարն էր, մարմինը քաղցր մահար (ԽՀ-ում* Սսարն, մահար *վրիպակներ են)*

Էջ 408

6—7 *գունատվեց գիշերվա լազուրը / գունատվեց լազուրը գիշերվա (ԽՀ-ում* լազուր-*ը վրիպակ է)*

19 *ճռնչան դռնակը / դռնակը ճռնչան (ԽՀ)*

25,28—29 *խուրձերը / խրձերը (ԽՀ), (ՏՄՕ)*

էջ 409

11 ծղոտների/ ծղնոտների (ԽՀ), (ՏՄՕ)

14 ճուտեր / ճտեր (ԽՀ), (ՏՄՕ)

28—29 սունկերը շարունակ էին բուսել / սունկերը շարանակ էին բուսել (ՏՄՕ)

30 ասես արջի թաթեր լինեն / ասես արջի թաթեր լինեին (ԽՀ)

էջ 410

23—24 կոխ էր տալիս մամուռը, չորացած տերևները / կոխ էր տալիս մամուռը, տերևները չորացած (ԽՀ)

29—30 Արևը տաքացրել էր մամռոտ քարերը / Արևը տաքացրել էր քարերը մամռոտ (ԽՀ)

էջ 411

12 դիպան դեղին բմբուլներին / դիպան դեղին բմբուլին (ԽՀ), (ՏՄՕ)

16 ետևից / հետևից (ԽՀ), (ՏՁ)

17 ետ նայեց / հետ նայեց (ԽՀ), (ՏՄՕ)

30 իր շունն / իրեն շունն (ԽՀ)

31—32 Նայեց նրանց ետևից, մտաբերեց շան փրփրած բերանը / նայեց նրանց ետևից, մտաբերեց ու շունչը, փրփրած բերանը (ԽՀ)

էջ 412

3—4 Նոր միայն զգաց, թե ինչքան խիստ էին յասաուլի մտրակի հարվածները / Դիլան դային նստեց քարի վրա։ Նոր միայն զգաց, թե ինչքան խիստ էին հարվածները յասաուլի մտրակի (ԽՀ)

21—22 և մարմինը սպիտակ / և մարմինը սպիտակ, տաք (ԽՀ)

էջ 413

8 ինքն իրան / ինքն իրեն (ԽՀ)

18 տերևներն անհանգիստ խմբվում էին / տերևներն անհանգիստ խմբված էին (ԽՀ), (ՏՄՕ)

19 Նորից ընկնում բառերից հետո — Թոստանում վերջին արևածաղկի երեսին սառել էր մի ժպիտ անկենդան։

Արևն արդեն մայր էր մտնում (ԽՀ)

## ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿ

(էջ 414)

էջ 414

5 Քրտնքի / Քրտինքի (ԽՀ), (ՏՁ)

7—9 Արահետն օձապտույտ ոլորվում էր։ Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի խտանում էր անտառը, ավելի հաստաբուն ծառերի էինք հանդիպում / Արահետն օձապտույտ ոլորվում էր, ինչքան հեռանում էր գյուղից, այնքան ավելի խտանում էր անտառը։ Ավելի հաստարմատ ծառերի էինք հանդիպում (ԽՀ)

13 չծակծկեին / չծակծկոտեին (ԽՀ)
16 ճյուղերը / ճյուղը (ԽՀ), (ՏՁ)
18 Ընկերս կամացուկ սուլում էր մի երգ / Ընկերս քթի տակ կամացուկ սուլում էր մի երգ (ԽՀ)
20 տասներկու / տասերկու (ԽՀ)

էջ 415

19—20 միառժամանակ / մի ժամանակ (ԽՀ)
33 ցույց տվավ / ցույց տալով (ԽՀ)

էջ 416

2 Տներն էին / Տներ էին (ԽՀ)
4 շան կաղկանձոց / շան կաղկանձոցը (ԽՀ)
6 Ջին էլ կարծես հասկացավ, որ գյուղը մոտ է / Ջին էլ կարծես իմանալով, որ գյուղը մոտ է (ԽՀ)
8—9 թե շատ հեռու երկիր եմ գնում / թե ես շատ հեռու երկիր եմ գնում (ԽՀ)
16 տնից / տներից (ԽՀ)
19 այդպես / այնպես (ԽՀ)
28—29 Վաղուց զարթնել էին մյուսները / Վաղուց արդեն զարթնել էին մյուսները (ԽՀ)
34—էջ 417, տող 1 Նահապետական վարքուբարքով մարդ էր Օհան ապերը / Հին նահապետական մարդ էր Օհան ապերը (ԽՀ)

էջ 417

1 Հիմա մեր գյուղերում շատ քիչ են / Գիտես, հիմա մեր գյուղերում շատ քիչ են (ԽՀ)
2 Ամեն առավոտ շարական էր կարդում / Շարական էր կարդում ամեն առավոտ (ԽՀ)
8—9 առաջին ընկերս էր / առաջին օրերն ընկերս էր (ԽՀ)
10 Հաչում էին կտուրների վրա / Կտուրների վրայից հաչում էին (ԽՀ)
16 պատերին / պատերի վրա (ԽՀ)
16 Պատուհաններին / պատուհաններն (ԽՀ)
18—19 բլրակը բարձրանալիս / բլրակ բարձրանալիս (ԽՀ)
20 գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց / ժամացույցը գրպանիս մեջ փշրվեց (ԽՀ)
20 մինչև վերջն էլ / մինչև վերջ էլ (ԽՀ)
21 սովերներով / սովերով (ԽՀ), (ՏՁ)
23—24 աշակերտներին / աշակերտների (ԽՀ,—երևի վրիպակ է)
28 Օրապահի զանգի զնգոցին / օրապահի զանգի ծլնգոցին (ԽՀ), (ՏՁ)
29—30 տեսնում էի դպրոցի առաջ խմբված երեխաներին / տեսնում էի դպրոցի առաջ, կտուրի տակ խմբված երեխաներին (ԽՀ)։

էջ 418

4—5 կայծեր էին թոցնում երգիկով / կայծեր են թողնում երդիկով (ԽՀ)
21 մի որսորդ կա / մի որսորդ կար (ԽՀ)

էջ 419

4 նոր էր ծուխը բարձրանում / ծուխը նոր էր բարձրանում (ԽՀ), (ՏՁ)
7 չխանձեց ոչ մի աղվեսի մորթի / չխանձեց և ոչ մի աղվեսի մորթի (ԽՀ)
13 մուխի մեջ / ծուխի մեջ (ԽՀ)
15 ետևի / հետևի (ԽՀ), (ՏՁ)
15 ու / և (ԽՀ)
23 լիզել է վերքի արյունը / լիզել է ոտքի արյունը (ԽՀ)
29 ձյունի տակ / ձյունի տակից (ԽՀ)
29 Ետ նայեցի / Հետ նայեցի (ԽՀ), (ՏՁ)
30 ութ-տաս տարեկան / ութ տասը տարեկան (ԽՀ)

էջ 420

11 ետ նայեցի / հետ նայեցի (ԽՀ), (ՏՁ)
15 ցախը շալակին / ցախը շալակած (ԽՀ)
17 բրդե շալ / բրդի շալ (ԽՀ), (ՏՁ)
18—19 Աշոտը նրանց փետուրներն էր պոկում / Աշոտը մշահավի փետուրներն էր պոկում (ԽՀ)

էջ 421

2 բրդե շալով / բրդի շալով (ԽՀ), (ՏՁ)
3 սև պարանը / սև պարան (ԽՀ)
8 երևում / երևում էր (ԽՀ)
11 ես դիտմամբ մոտեցա / դիտմամբ մոտեցա (ԽՀ)
13 ետևից / հետևից (ԽՀ), (ՏՁ)
25 մի օյին ենք սարքել / մի կատակ ենք արել (ԽՀ)

էջ 422

9 տեսավ ինձ / տեսավ հայացքս (ԽՀ)
15 պիտի նախատեմ / պիտի նկատեմ (ԽՀ)
17 աղջիկները խաղում էին / աղջիկները վազում էին (ԽՀ)
22 աղջիկների / աղջիկներին (ԽՀ)
33 բրդե շալը / բրդի շալը (ԽՀ)
34 Տուն մտա չխանգարելու համար / Տուն մտա խաղը չխանգարելու համար (ԽՀ), (ՏՁ)

էջ 423

3 ետև / հետև (ԽՀ)
15—16 գրավում էր և՛ մեզ, և՛ նրանց / գրավում էր մեզ և նրանց (ԽՀ)

էջ 424

1 արև՞ն է այդպես քաղցր ջերմացնում / արև՞ն է այդպես լավ ջերմացնում (ԽՀ)
4 կարդալս պատճառ բռնեցի / կարդալը պատճառ բռնեցի (ԽՀ)
7 Հոր խնդիրը / Հոր խնդիրքը (ԽՀ)
17 Հոտում / Հոտ բուրում (ԽՀ)
21—22 մի շաբաթ էլ տաք եղանակ / մի շաբաթ էլ տաք օրեր (ԽՀ)

23 *բուրային / բուրեին (ԽՀ)*

28 *ջրի գնալիս / ջրի գնալուց (ԽՀ)*

**էջ 425**

6 *կանչեր, թեկուզ մի ակնարկ աներ / կանչեր, մի ակնարկ աներ (ԽՀ)*

7 Նրան բառից հետո — *Բայց նա թեքով սրբեց ճակատը, խոտը շալակեց ու գնաց (ԽՀ)*

14 *Հարյուր մարդուց ավել / Հարյուր հոգուց ավել (ԽՀ), (ՏԶ)*

22—23 *սարյակների սև փետուրները / նրանց սև փետուրները (ԽՀ)*

30 *ետևում / հետևում (ԽՀ), (ՏԶ)*

34 *Բազմությունը լուռ լսում էր / Բազմությունը լսում էր լուռ (ԽՀ)*

**էջ 426**

24 *ետևից / հետևից (ԽՀ), (ՏԶ)*

29—20 *մի քիչ էլ ավել մնա / մի քիչ էլ ավելի մնա (ԽՀ)*

**էջ 427**

1 *տասնհինգ / տասնևհինգ (ԽՀ)*

3 *այսքան / այնքան (ԽՀ)*

9 *արար աշխարհին / օտար աշխարհին (ԽՀ)*

24 *արագ-արագ անցնել / արագ անցնել (ԽՀ)*

26 *գերանից կախած / գերանից կախված (ԽՀ)*

**էջ 428**

6 *աղբյուրից առաջ / աղբյուրի առաջ (ԽՀ)*

12 *կանաչ մանրիկ պտուղներ / կանաչ մանրիկ տերևներ (ԽՀ)*

21 *արցունքն էր թափվում / արցունքներ էին թափվում (ԽՀ)*

**էջ 429**

10 *ետևից / հետևից (ԽՀ), (ՏԶ)*

27 *ետ / հետ (ԽՀ), (ՏԶ)*

27 *կանայք կանաչին ընկած / կանայք արտի կանաչին ընկած (ԽՀ)*

**էջ 430**

1 *Երբ որ ընկերս լռեց, ինձ թվաց / Երբ որ ընկերս լռեց, թվաց (ԽՀ)*

6 *Թամբի կապերը / Թամքի կապերը (ԽՀ), (ՏԶ)*

7—8 *մեկնվել էին գարնան արևի տակ / մեկնվել գարնան արևի տակ (ԽՀ)*

11 *անցքեր՝ մեկը քաղցր / դեմքեր՝ մեկը քաղցր*

23 *գյուղացիները հավաքվեցին / գյուղացիները հավաքվել էին (ԽՀ)*

24—25 *հողն առաջվա բերքը չի տալիս / հողն էլ առաջվա բերքը չի տալիս (ԽՀ), (ՏԶ)*

29 *կախվել էին երեք երեխա / կախվել էին երկու երեխա (ԽՀ)*

## *Ս Ա Բ Ո Ւ*

*(էջ 432)*

**էջ 432**

*21* — ԽՀ-ում չկա

10 հագեցած պառկում կորեկի արտում / հագեցած պառկում (ԽՀ)

11—12 Ոչ միայն ափսեներն են անտառի փայտից / Ոչ միայն ափսեներն են փայտից (ԽՀ)

13 անտառից են / անտառից է (ԽՀ)

18—19 արահետի թարմ հետքը արչինն է, թե գայլ է անցել / արահետի հետքը արջինն է, գայլ է անցել (ԽՀ)

21 շուրջն են հյուսած / շուրջն է հյուսած (ԽՀ)

21—22 Ահա առասպել մի հերոս / Ահա առասպելական մի հերոս (ԽՀ)

24—էջ 433, տող 1 Պառավները երիտասարդ որսորդներին պատմում են / Պառավները երիտասարդներին պատմում են (ԽՀ)

էջ 433

3 կոխ է բռնել / կոխ է կպել (ԽՀ)

9 ծղոտներ / ծղնոտներ (ԽՀ)

10—11 Ով գիտե, գուցե վերջին մամուռն է մնացել ատամների արանքում, երբ Սաբուի որսորդը ծառի ետևից կայծքարով հրացանը կրակեց—ԽՀ-ում չկա

15—16 առասպելների հետ հավասար մինչև այժմ / առասպելների հետ մինչև այժմ (ԽՀ)

21—22 լեռնաշխարհի վրա էին տեղավորված / լեռնաշխարհում էին տեղավորված (ԽՀ)

24—25 ամեն առավոտ արևածագին չինարների տակ / ամեն առավոտ չինարների տակ (ԽՀ)

էջ 434

15 ետ / հետ (ԽՀ), (ՏՄՕ)

16 սաղափե / սաղաֆե (ԽՀ)

28—29 օտար մարդ չկա / օտար մարդ չի լինում (ԽՀ)

29 ճշգրիտ ինչ / ճշգրիտ բան (ԽՀ)

34 Իրանից եկել է աղանդի մեծը / Եկել է աղանդի մեծը Իրանից (ԽՀ)

էջ 435

16 իրար մոտ կանգնած / իրար հետ կանգնած (ԽՀ)

25 տերը իրն է / տերն իրենն է (ԽՀ)

28 2 / *** (ԽՀ)

32 գյուղի չքավորներն / գյուղի ձիավորներն (ԽՀ)

էջ 436

3 թիակներ / թիակ (ԽՀ)

15 կտրած թելերը / կտրում թելերը (ԽՀ)

17—18 Նախշեր էր ստացվում / Նախշեր էին ստացվում (ԽՀ)

20—22 շարժվում էին գույնզգույն կծիկները, զրնգում էին ծամերի ծայրից կախ արած զանգուլակները / շարժվում էին ծամերի ծայրից կախ արած զանգուլակները (ԽՀ)

25 Եվ ամեն նախշ / Ամեն նախշ (ԽՀ)

32—33 *Սարում թաղվեց անտառի մեջ | Սարում թաղվեց մութի մեջ (ԽՀ)*

34 *թևը | թևք (ԽՀ)*

էջ 437

5 *արյուն խմեց | արյունը խմեց (ԽՀ)*

6 *բնի մեջ քնած մի միրհավ | բնում քնած միրհավը (ԽՀ)*

24—25 *Եվ հոր տնից | Հոր տնից (ԽՀ)*

25—26 *աղջկա հետ պիտի մնար գունավոր խալին | պիտի տաներ գունավոր խալին (ԽՀ)*

33 *գերաններ են կացնահատ անում | գերաններ են կացնահար անում (ԽՀ)*

էջ 438

2—3 *կանաչ օազների պես են երևում | կանաչ օազիսներ են թվում (ԽՀ)*

3 *ժայռերից | ժայռից (ԽՀ)*

## ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

*(էջ 439)*

էջ 439

10 *ծվեններ է անում | ծվեններ անում (ԽՀ), (ՏՁ)*

12 *խոնարհված է աշտարակի գլուխը | աշտարակի գլուխը խոնարհված է (ԽՀ)*

15—16 *Բասուտա գետն է ձորում ռռնում | ձորի մեջ ռռնում է Բասուտա գետը (ԽՀ)*

21—22 *կողովների չափ բներում | կողովի չափ բներ (ԽՀ)*

22—23 *Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն են լսում | Բերդի պարիսպների տակ հենց որ մարդու ոտնաձայն են լսում (ԽՀ)*

25 *—էջ 440, տող 1 կտուցները հնօրյա թուրի պես կեռ | կտուցները կեռ՝ հնօրյա թրի պես (ԽՀ)*

էջ 440

10—11 *աշխարհը ծիրանագույն բուրաստան | աշխարհը ծիրանագույն մի բուրաստան (ԽՀ)*

19—20 *նշանների հետ էլ փորփորում | նշանների հետ է փորփորում (ԽՀ)*

21 *ժայռից ժայռ ցատկող քարայծի պես | ժայռից ժայռ թռնող քարայծի պես (ԽՀ)*

27—28 *Գայլն էլ է պառկել նույն քարի գլխին, ինչպես ինքը | Գայլն էլ է պառկել նույն քարի գլխին (ԽՀ)*

էջ 441

1 *Արև մի կեսօր | Արևոտ մի կեսօր (ԽՀ)*

13 *ետ | հետ (ԽՀ), (ՏՁ)*

23—24 *և ի՞նչքան հեշտ երբեմնի տերերը մաղլցում էին այդ նույն կածանով | և ինչքան հեշտ մագլցում էին նույն կածանով երբեմնի տերերը (ԽՀ)*

**էջ 442**

6 *Շների ձայնին / շների ձայնից (ԽՀ)*
8—9 *շները հաչելով մոտենում էին / շները հաչոցով մոտենում էին (ԽՀ)*
9 *Երրորդ ձիավորն / Երկրորդ ձիավորն (ԽՀ)*
18 *Բարձրացավ պարսպի վրա / Հետո բարձրատակ պարսպի վրա (ԽՀ.—* բարձրատակ-ը *վրիպակ պետք է լինի)*
23 *պարսպի մոտ նստած ծխում էր / պարսպի մոտ ծխում էր (ԽՀ)*
26—27 *մարդը նկարեց պարիսպների փլվածքը / մարդը նկարում էր պարիսպների փլվածքը (ԽՀ)*
29—30 *Թևին տվավ / Թևին տվեց (ԽՀ)*
30—31 *Նրա ձայնին / Նրա ձայնից (ԽՀ)*

**էջ 443**

1 *Նկարիչը չհասկացավ նրա խոսքը / Նկարիչը նրա խոսքը չհասկացավ (ԽՀ)*
1 *անգղների / անգղերի (ԽՀ), (ՏՁ)*
16—17 *Հնձվորը միտք արեց, ուսը քորեց, ետ դարձավ մյուս կածանով դեպի ձորը/ Հնձվորը միտ արեց, ուսը քորեց, մյուս կածանով հետ դարձավ դեպի ձորը (ԽՀ)*
19 *այն քարի / այս քարի (ԽՀ)*
20 *որ տեղահան արեց / որը տեղահան արեց (ԽՀ)*
31 *ծաղիկ* բառից հետո — *ինչպես երբեմնի ավարի ժամանակ (ԽՀ)*

**էջ 444**

5—6 *Նրա մատները մորթում են մանուշակներին / Նրա մատներն են մորթում մանուշակներին (ԽՀ)*
11—13 *ատամնաձև քարերի արանքում կողովի չափ ցինի բույնը ∽ ալպիական մանուշակներ / ատամնաձև քարերի արանքում ցինի բույնը մեծ կողովի չափ ∽ ալպիական մանուշակ (ԽՀ)*
25—26 *Ներս մտավ վրանի նեղլիկ դռնից / Ներս մտավ վրանը նեղլիկ դռնից (ԽՀ)*
28—29 *փոքրիկ մի տղա / փոքրիկ տղան (ԽՀ)*
31 *ետևից / հետևից (ԽՀ), (ՏՁ)*

**էջ 445**

4—5 *մոտեցավ և վրանի անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրերին / մոտեցավ և անկյունում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հյուրին (ԽՀ)*
9—10 *Հնագետը զգաց քաղց / Հնագետը քաղց զգաց (ԽՀ)*
11 *ետ վանեց բերդի պատկերը / հետ վանեց բերդի քարերի պատկերը (ԽՀ)*
21—22 *Ուրտե՞ղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր, սպիտակ ճակատ, մուգ-մանիշակագույն աչքեր / Որտե՞ղ էր տեսել նա նման մի դեմք, բարձր, սպիտակ մի ճակատ, մուգ-մանիշակագույն աչքեր, նշաձև ունքեր (ԽՀ)*
25 *ծուխից / ծխից (ԽՀ)*

**էջ 446**

3 *Թևերի / Թևի (ԽՀ)*

4 *խաղողի հատիկների չափ փոքրիկ | խաղողի հատիկների չափ մանրիկ (ԽՀ)*

5—6 *Խշշում էր նրա զգեստը, որի փեշերը իջնում էին | Խշշում էր նրա երկար զգեստը, որ իջնում էր (ԽՀ)*

7—8 *գորշ գույնի վերարկու | կավերկոտե վերարկու (ԽՀ)*

11—12 *նստել էին մի օր վերարկուով | Նստել էին վերարկուով (ԽՀ)*

16 *աչքերը տնկեց | աչքը տնկեց (ԽՀ), (ՏՁ)*

18 *միջին | մեջը (ԽՀ)*

20 *Տղան տուփը թափահարեց | Տուփը թափահարեց տղան (ԽՀ)*

33—34 *պարզ երևում էին ծունկերը | պարզ երևում էին բարձր ծունկերը (ԽՀ)*

էջ 447

1—2 *եռոտանու առաջ նստած, աթարի ծուխի շարժումները գուշակող | եռոտանու առաջ նստած, ծխի շարժումներով գուշակող (ԽՀ)*

3 *հալվում օդի ոլորտում | մաշվում օդի ոլորտում (ԽՀ)*

4 *մետաքս թելերի մի խուրձ | մետաքս թելերի խուրձը (ԽՀ)*

19—20 *Մտքի առաջ մնացին միայն մի զույգ մանիշակագույն աչքեր | Մտքի առաջ մանիշակագույն աչքերը մնացին (ԽՀ)*

21 *վերարկու | վերարկուն (ԽՀ) | վերարկու (ՏՁ)*

25—27 *Երբ կռացավ սփռոցի վրա, թիկունքին ընկած ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վեր կրծքի վրա | Երբ կռացավ, թիկունքին ընկած ծամը թեքվեց, կախվեց ուսն ի վեր (ԽՀ)*

28 *և սպիտակ պարանոց | և նույնքան սպիտակ պարանոց (ԽՀ)*

32, 34 *խսրի | խսիրի (ՏՁ, ԽՀ)*

էջ 448

4 *բարձրացան թեյի երես | բարձրացան թեյի երեսը (ԽՀ)*

7 *կիսահալ շաքարը | կիսամաշ շաքարը (ԽՀ)*

8—9 *Հնագետը ծիծաղեց քթի տակ, ինչ-որ բան հիշեց մարդու նախնական օրերից | Հնագետը քթի տակ ծիծաղեց (ԽՀ)*

10—11 *երբ երեխան ◯ մեկնեց նրան, մայրը ժպտաց | երբ երեխան ◯ մեկնեց նրան, ժպտաց (ԽՀ)*

15—17 *ժպտից շրթունքները կարմրեցին, որպես արնագույն մեխակի թերթեր, ժպտից աչքերում փայլ երևաց | ժպիտից շրթունքներն կարմրեցին, որպես մեխակի արնագույն թերթեր (ԽՀ)*

20 *պարսպի | պարիսպի (ԽՀ), (ՏՁ)*

21—22 *Նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին | Նկարեց կնոջ բարակ մեջքը, գլուխը (ԽՀ)*

25 *Տղան միայն տեսավ մոր նկարը | Միայն տղան տեսավ մոր նկարը (ԽՀ)*

էջ 449

7 *Ջրերի սանձից | Ջրերի սանձերից (ԽՀ)*

16—19 *այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ, մազերը*

*կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, անխոս, թիկունքին երկար ծամեր / այդ ծովն ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլուխ, մազերը կարծես կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր (ԽՀ)*

**24—25** *կարճ ցողունով կորեկ էր հնձել օրնիբուն / օրն ի բուն կարճ ցողունով կորեկ էր հնձել (ԽՀ)*

**26—27** *մահակը դեմ տալիս քարին, կանգնում / մահակը դեմ տալիս քարերին, երբեմն, երբեմն կանգնում (ԽՀ)*

**32—էջ** *450,* տող *3 որ հարյուր տարիներ մնացել են կարասում, քարի տակ, որի վրա շարունակ նստել է, երբ այծ ու ոչխար էր պահում բերդի ավերակներում / որ հարյուր տարի մնացել են քարի տակ, որի վրա շատ է նստել բերդի ավերակներում այծ ու ոչխար պահելիս (ԽՀ)*

**էջ 450**

**5** *մարդը գազազած էր / մարդը գազանացած էր (ԽՀ)*

**8** *ետի ոտքերի / հետի ոտքերի (ԽՀ), (ՏՁ)*

**8—9** *կաղնու մի չոր ճյուղ / կաղնու չոր ճյուղը (ԽՀ)*

**10** *գառան մորթե փափախ / գառան մորթի փափախ (ԽՀ)*

**13** *ծոմռոտելով մոտեցել էր / ծոմռոտելով մոտեցավ (ԽՀ)*

**13** *ոտները / ոտերը (ԽՀ)*

**15** *և լուռ նստեց խսրի վրա / և անխոս նստեց խսիրի վրա (ԽՀ) / և լուռ նստեց խսիրի վրա (ՏՁ)*

**26** *իրեն / իրան (ԽՀ)*

**30** *երկու տուփը ձեռքին էր / երկու տուփն էլ ձեռքին էր (ԽՀ)*

**31** *փեշին / փեշերին (ԽՀ)*

**էջ 451**

**2—3** *արցունքները սրբելով ժպիտն երեսին / արցունքները սրբելով տղան ժպիտն երեսին (ԽՀ)*

**8—9** *Կայծակի պես խանդոտ միտքը փայլատակեց գառան մորթե գդակի տակ / Կայծակի պես մի չար միտք փայլատակեց գդակի տակ (ԽՀ)*

**10** *Մայրը տղային նայեց / Մարդը տղային նայեց (ԽՀ,— մարդը* պետք է որ վրիպակ լինի)

**14** *մազոտ երկու ձեռք ձգվեցին դռան մոտ դրած մահակին / մազոտ երկու ձեռք ձգվեցին մահակին (ԽՀ)*

**18—19** *չծպտաց / չժպտաց (ԽՀ,— հավանաբար վրիպակ է)*

**20—21** *զգեստի փեշերով արցունքները սրբելու / զգեստի փեշով սրբելու արցունքը (ԽՀ)*

**26—27** *Օջախներում հանգավ կրակը, գիշերը խավար բերեց /Օջախներում հանգավ կրակը (ԽՀ)*

**29—30** *ոչխարի բրդի վրա / ոչխարի բրդի մազերին (ԽՀ)*

**31—33** *փայտի հարվածի կապույտ հետքերը թիկունքից մինչև ուս, որպես լայն ժապավեն / փայտի հարվածի հետքը թիկունքի վրա որպես կապույտ ժապավեն (ԽՀ)*

*34—էջ 452, տող 4 Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները, խոնավություն կաթեց քարերի վրա, մամուռների ծայրերին էլ ամպը ջրի կաթիլներ շարեց։ Ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա / Եղեգնյա ցանկապատի արանքից լուսինը ցոլաց կոնսերվի տուփերի թիթեղյա մերկության վրա։ Ամպը ցող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա (ԽՀ)*

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐԻ ԱՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ), ՈՐՈՆՔ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԵՆ ՀԱՏՈՐՈՒՄ


*Մթնաձոր։ [Պատմվածքների ժողովածու]։ Երևան, Պետհրատ, 1927, 184 էջ։*

*Սպիտակ ձին։ [Պատմվածքներ]։ Մոսկվա, ԽՍՀՄ ժող. կենտր. հրատ., 1927, 72 էջ։*

*Սև ցելերի սերմնացանը։ Պատմվածքներ։ Երևան, Պետհրատ, 1933, 203 էջ։*

*Անձրևը։ [Պատմվածքների ժողովածու]։ Երևան, Պետհրատ, 1935, 80 էջ։*

*Սև ցելերի սերմնացանը։ Երևան, Պետհրատ, 1936, 23 էջ (Սկսնակ ընթերցողի գ-րան)։*

*Քեռի Դավոն։ Երևան, Պետհրատ, 1936, 22 էջ։ (Սկսնակ ընթերցողի գ-րան)։*

*Պատմվածքներ։ Փարիզ, 1938, 80 էջ։*

*Երկեր։ Երևան, Հայպետհրատ, 1955, 687 էջ։*

*Ամբողջական գործը երեք հատորով։ Բեյրութ, տպ. Սևան։ Հտ. Ա, 1955, 216 էջ։ Հտ. Բ, 1956, 169 էջ։*

*Եղբայրության ընկուզենիները։ [Պատմվածքների ժողովածու]։ Երևան, Հայպետհրատ, 1959, 183 էջ։*

*Մուրոյի «զրույց»-ը։ Երևան, Հայպետհրատ, 1960, 11 էջ։*

*Ալպիական մանուշակ։ [Երկու պատմվածք՝ Ալպիական մանուշակ, Միրհավ]։ Երևան, Հայպետհրատ, 1962, 36 էջ։*

*Երկեր երկու հատորով։ Երևան, Հայպետհրատ, 1964, հտ. 1, 745 էջ, հտ. 2, 623 էջ։*

*Ալպիական մանուշակ։ [Պատմվածքների ժողովածու]։ Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 256 էջ։*

*Մուրոյի «զրույց»-ը։— Նամակ ռուսաց թագավորին։ Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 20 էջ։*

*Անձրևը։ Երևան, «Հայաստան» հրատ., 1970, 10 էջ։*

## ՀԱՏՈՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

*ԱԺ* — Ա. Բակունց *Անձրևը։ [Ժողովածու]*, Երևան, 1935։
*ԳԱԹ* — *Գրականության և արվեստի թանգարան (Երևան)։*
*ԽՀ* — *«Խորհրդային Հայաստան», օրաթերթ (Երևան)։*
*ՀՆ* — *Հոկտեմբեր—Նոյեմբեր։ Տարեգիրք։ Երևան, 1934։*
*Մ* — *«Մարտակոչ», օրաթերթ (Թիֆլիս)։*
*ՄԺ* — Ա. Բակունց *Մթնաձոր։ [Ժողովածու]։ Երևան, 1927։*
*ՆՈՒ* — *«Նոր ուղի» հանդես։*
*ՆԱ* — *«Նոր ակոս», շաբաթաթերթ (Երևան)։*
*ՍՁԺ* — Բակունց *Սպիտակ ձին։ [Գրքույկ-ժողովածու]։ Մոսկվա, 1929։*
*ՍՑՍԴ* — Ա. Բակունց *Սև ցելերի սերմնացանը. [Դրքույկ]։ Երևան, 1936։*
*ՍՑՍԳ* — Ա. Բակունց *Սև ցելերի սերմնացանը։ [Գրքույկ]։ Երևան, 1936։*
*ՏՁ* — *Տպարանային ձեռագիր, որից 1927 թ. «Մթնաձոր» ժողովածուի մեջ շարվել է համապատասխան երկը։*
*ՏՄՕ* — *Տպարանային մեքենագիր օրինակ, որից «Մթնաձոր» ժողովածուի մեջ շարվել է համապատասխան երկը։*
*ՔԴ* — Ա. Բակունց *Քեռի Դավոն։ [Գրքույկ]։ Երևան, 1936։*

*Հատորում ընդգրկված երեք պատմվածքաշարերից յուրաքանչյուրին հատկացված է ծանոթագրությունների մի հատված. Նրանցից ամեն մեկում նախ տրվում են ամբողջ շարքին, ապա առանձին պատմվածքներին վերաբերող ծանոթագրություններ։ Այս վերջինների մեջ սկզբից նշված են (հապավումներով) տվյալ երկի բնագրային աղբյուրները. Ներկա դեպքում դրանք են՝ կա՛մ պատմվածքի հեղինակային ինքնագրի բնագիրը, կա՛մ տպարանային մեքենագիր օրինակը, կամ էլ հեղինակի կենդանության օրոք երկի հրապարակված բնագիրը։ Այսինքն՝ դրանք այն բնագրերն են, որոնք (բոլորը) ստեղծված են հեղինակի կենդանության ժամանակ, ուստի և նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն արժեք ունի. միևնույն երկի երկու և ավելի բնագրային աղբյուրները մեծ մասամբ ինչ-որ չափով զանազանվում են իրարից։ Այդ աղբյուրները հատորում կա՛մ տպագրված են իբրև հիմնական բնագրեր, կա՛մ ներկայացված են «Այլ խմբագրումներ» ու «Բնագրային տարբերակներ» բաժիններում։*

*Յուրաքանչյուր երկի ծանոթագրության սկզբում նշված է նաև, թե բնագրային աղբյուրներից որն է ներկա հրատարակության համար* հիմնական *դիտված, և* նրանում *ինչ ճշտումներ են արված կազմողի կողմից, ինչի հիման վրա։ Ապա տեղեկություններ են տրվում պատմվածքի հրապարակումների, տպարանային բնագրերի բնույթի մասին, ինչպես և, եթե նյութեր կան, երկի ստեղծման պատմության վերաբերյալ։*

*Վերջում ծանոթագրված են երկի առանձին մասեր, անուններ, անվանումներ և այլն, որոնց վերաբերյալ կազմողի կարծիքով ընթերցողների մեծ մասին հարկ կա բացատրություններ տալու։*

*Բնագրային աղբյուրների մեջ արված մասնակի ճշտումները նախ տարբեր բնույթի վրիպակների և աղավաղումների ուղղումներ են՝ գրեթե միշտ այլ աղբյուրների հիման վրա կատարված։ Այս կարգի բոլոր ճշտումները նշված են ծանոթագրություններում։ Մյուսները ուղղագրական արդիացումներ և շտկումներ են։ Նրանց փոքր մասն է նշված։*

*Հասկանալի է, որ չեն նշված ուղղագրական այն փոփոխումները, որոնք առնչված են 1922 թվականի ուղղագրությունը այժմ ընդունված (1940 թ.) ուղղագրության վերածելու հետ։*

Չեն նշված նաև ուղղագրական առանձին հին ձևեր արդիացնելու դեպքերը։ Օրինակ, ճաչոց-ը փոխված է ճաշոց-ի կամ արձագանգ-ը արձագանք-ի և այլն. որոնց մասին նշումներ չեն արված ծանոթագրություններում։

Չեն նշված ուղղագրական շատ ակնհայտ անճշտությունների և վրիպակների ուղղումները, ինչպես՝ բրբուռ-ը բրբուր, բավագլոր-ը բավալգլոր, պայտառ-ը պայտար դարձնելը և այլն։

Հիմնական համարված բնագրերում ուղղագրական և կետադրական ճշգրտումներ կատարվել են միայն ծայրահեղորեն անհրաժեշտ թվացող դեպքերում, երբ բնագրում եղած այս կամ այն ձևը ուղղագրական սխալ է դիտվել կամ չափազանց հնացած։ Օրինակ, եթե հիմնական ընդունված բնագրերի մեջ հեղինակային խոսքում կան ուղղագրական որոշ բարբառայնություններ, ինչպես՝ քցել, զգուշ, աշխուժ, սառուց և այլն։ Եթե դրանք ոճավորման դեր չեն կատարում, փոխված են գրական ուղղագրության ձևերի (գցել, զգույշ, աշխույժ, սառույց). Նկատի է առնված, որ տպարանային ձեռագրերում և մեքենագիր օրինակներում, ինչպես նաև երկերի նախնական որոշ հրապարակումներում հեղինակային խոսքի մեջ այդ նույն բառերը հիմնականում գործածված են գրական ուղղագրությամբ։ Այս կարգի ուղղումները նշված են ծանոթագրություններում։ ,

Այլ խմբագրումներ բաժնում ներկայացված բնագրերի մեջ աշխատել ենք բարբառային, ինչպես և որոշ հնացած ուղղագրական հեղինակային ձևերը պահպանել, այդպիսիք շտկել ենք հազվագյուտ դեպքերում՝ այդ մասին նշելով համապատասխան ծանոթագրության մեջ։

Մի շարք ուրիշ դեպքերում հիմնական բնագրերի մեջ ենք ձգտել պահպանել հեղինակային ուղղագրությունը. օրինակ, բուն բառը (թռչունի, կենդանու բուն) չենք ուղղել ըստ այժմ գործածվող ձևի՝ առհասարակ սխալ համարելով անցյալի հեղինակների բնագրերում այդ բառաձևը բույն-ով փոխարինելը։ Մեզ անհեթեթություն է թվում, օրինակ, Թումանյանի «Էն ծառում փչակ, Փչակում մի բուն»-ը կամ «Անբուն կկուն» դարձնել «Փչակում մի բույն» և «Անբույն կկուն»։ Նույն կերպ, կարծում ենք, որ ճիշտ չեն վարվել Բակունցի երկերի հրատարակիչները (վերջին երկու տասնամյակում) հեղինակի գործածած բուն ձևը բույն-ով փոխարինելով։ Ներկա հրատարակության մեջ պահպանված է հեղինակի բազմիցս գործածած ձևը՝ Ցինի բունը, ծառի փչակում բուն դրած և այլն։

Պահպանված է նաև, օրինակ, հեղինակային զորքա ձևը, որ պատմվածքի վերնագիր է, նաև բնագրերի ներսում մի շարք անգամ գործածված, և այժմ ընդունված զոռքա ձևով փոխարինելը (ինչպես արել են այլ հրատարակություններում), թվում է, զուտ ուղղագրական փոփոխում չէր լինի, այլ՝ ինչ-որ չափով նաև ոճական։ Սրանից տարբեր է զոռել բայի հարցը. օրինակ՝ «բերանը չէր զոռում մի բան ասելու» («Վանդունց Բաղի»)։ Այս բայի ձևը նույնպես պահպանել ենք անփոփոխ, քանի որ տվյալ դեպքում սխալ կլիներ ր-ն ռ դարձնելը (զոռել այլ բայ է), և ճիշտ չեն որոշ հրատարակություններում արված այդպիսի փոփոխումները։

Պահպանված է փոխառյալ-բարբառային որոշ բառերի հեղինակային ուղղագրությունը, ինչպես, օրինակ սովդաքյար-ը չի դարձված սովդաքար, պամիդոր-ը կամ մաճտյար-ը թողնված են նույնությամբ և այլն։

Որտեղ հնարավոր է եղել, պահպանել ենք բարդ բառերի հեղինակային անջատ գրությունները (հարադրության ձևով), ինչպես՝ հատ ու կենտ, մեկն ու մեկին, օրն ի բուն, ցաք ու ցրիվ, հարց ու փորձ և այլն։ Այսպիսի բառերի ուղղագրության միօրինակություն բնագրային աղբյուրներում չկա, այդ անմիօրինակությունը աշխատել ենք զգուշորեն հաղթահարել հիմնական բնագրերում, թեև որոշ չափով այն մնացել է։

## «ՄԹՆԱՁՈՐ» ՇԱՐՔ

1927 թ. լույս տեսավ Ա. Բակունցի «Մթնաձոր» ժողովածուն, որ պարունակում էր 18 պատմվածք՝ մեծ մասամբ արդեն հրապարակված մամուլում։

Պահպանվել են պատմվածքների տպարանային բնագրերը, որոնցից շարվել է ժողովածուն[1]։ Դրանցից 7-ը ձեռագիր են, մաքուր գրված հեղինակի կողմից, 8-ը մեքենագիր, իսկ 3-ը լրագրային կտրոններ (հեղինակի նշումներով)։ Պահպանվել է նաև ժողովածուի ցանկի (բովանդակության) տպարանային բնագիրը՝ նույնպես գրված հեղինակի ձեռքով։ Պատմվածքների այդ բնագրերը գրված կամ մեքենագրված են ոչ միաժամանակ (տարբեր են պատմվածքներից յուրաքանչյուրը մեքենագրելու կամ գրելու համար օգտագործված թղթերն ու թանաքը, մեքենագրումները կատարված են տարբեր մեքենաներով)։

18 տպարանային բնագրերից ձեռագիր են հետևյալները. «Վանդունց Բագին», «Այու սարի լանջին», «Մինա Բիբին», «Մթնաձորի «շարքը», «Խոնարհ աղջիկ», «Լառ-Մարգար», «Ալպիական մանուշակ»։

Մեքենագիր են՝ «Մթնաձոր», «Աքարում», «Միրանի տափ», «Միրհավ», «Հանավանք», «Օրանչիա», «Մրոց», «Սաբու» պատմվածքները։

Լրագրային կտրոններով են ներկայացված «Խաղլացավ», «Գյուղբանհարի համար», «Ջորբան» պատմվածքները։ Այդ կտրոնները հանված են համապատասխանաբար «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. 263-րդ, 284-րդ և Թիֆլիսի «Մարտակոչ» լրագրի 1925 թ. 227-րդ համարներից։

8 մեքենագիր բնագրերից 6-ը («Աքարում», «Միրանի տափ», «Միրհավ», «Հանավանք», «Օրանչիա», «Մրոց») պատրաստված են միաժամանակ, որ հաստատվում է մեքենագրության և թղթի նույնությամբ (մեջտեղից ծալված սպիտակ, փայլուն, 22,5$\times$36,5 չափի թղթեր, մի քանի դեպքում ծալվածքի տեղից կտրված, մյուս դեպքերում չկտրված)։

Մյուս 2 մեքենագիր բնագրերը («Մթնաձոր», «Սաբու») թղթով և մեքենա-

---

[1] Այդ բնագրերը 1964 թ. հայտնաբերվել են Մաշտոցի անվան մատենադարանի դիվանատանը և այժմ պահվում են ԳԱԹ-ում։

գրությամբ տարբեր են թե՛ իրարից, թե՛ հիշյալ վեց բնագրերից, որ ըստ երևույթին, նշանակում է, թե մեքենագրված են տարբեր ժամանակ և տարբեր առիթներով։

Ձեռագիր բնագրերից միևնույն թղթի վրա և նույն թանաքով են գրված «Ալպիական մանուշակը» և «Լաո-Մարգարը», որ հավանաբար նույնպես նշանակում է, թե դրանք հեղինակը միևնույն ժամանակ է արտագրել։ «Այու սարի լանջին» և «Մինա Բիբին» պատմվածքների թուղթն ու թանաքն էլ նույնն են, բայց տարբեր են նախորդներից, որ ենթադրել է տալիս, թե դրանք արտագրված են նախորդներից տարբեր ժամանակ, բայց միմյանց հետ մոտավորապես նույն ժամանակամիջոցում։ Մյուս ձեռագրերը նույնպես թղթով ու թանաքով տարբերվում են իրարից և վերոհիշյալներից։

Այսպիսով, պարզվում է, որ «Մթնաձոր» ժողովածուի տպարանային բնագրերից առնվազն ինը հեղինակը նախապես այդ ժողովածուի համար չէ, որ պատրաստել է, այլ մեքենագրել ու արտագրել է և կամ լրագրերից հանել (իբրև կտրոն) տարբեր ժամանակ, տարբեր առիթներով և ժողովածուն հրատարակության հանձնելու կապակցությամբ պարզապես օգտագործել իբրև հրատարակության բնագրեր։ Մյուս ինը բնագրերը, ըստ երևույթին, հատկապես «Մթնաձոր» ժողովածուի համար են պատրաստվել. դրանք են՝ վերոհիշյալ վեց պատմվածքները (միաժամանակ մեքենագրված), ինչպես և «Մթնաձոր» պատմվածքի մեքենագիրը և «Ալպիական մանուշակ» ու «Լաո-Մարգար» պատմվածքների ձեռագրերը։

Առաջին ինը բնագրերից մի քանիսը (օրինակ, «Խոնարհ աղջիկը», «Սարուն») ըստ երևույթին, ժամանակին Բակունցը հանձնած է եղել պարբերականների խմբագրություններին և հրապարակվելուց հետո ետ է վերցրել։

Բնագրերից յուրաքանչյուրը, բացի երկուսից («Վանդունց Բաղին» և «Այու սարի լանջին») ունի իր առանձին էջակալումը։ Կա նաև ամբողջական ժողովածուի ընդհանուր էջակալում, որը մինչև 143-րդ էջը գրված է կապույտ մատիտով, հետո՝ թանաքով (բոլորը հեղինակի ձեռքով)։ Ընդհանուր էջակալումից դուրս է մնացել միայն «Մթնաձոր» պատմվածքի մեքենագիրը։

Այդ ընդհանուր էջակալման շնորհիվ հնարավոր եղավ որոշել Բակունցի պատմվածքների անդրանիկ ժողովածուի նախնական կազմը և նյութերի նախնական դասավորությունը։

Բնագրերից մի քանիսի վրա ընդհանուր էջակալման համարները փոխված են՝ ջնջված են նախկին թվերը և գրված նորերը։ Դա, ակներևաբար, նշան է այն բանի, որ հեղինակը ընդհանուր էջակալումից հետո փոփոխություններ է կատարել նյութերի դասավորության մեջ։ Օրինակ, «Այու սարի լանջին» պատմվածքի էջերը ունեն 25—42 համարները, որոնք ջնջված են և փոխարինված 34—51 համարներով։ 1—24 էջահամարներն ունի «Վանդունց Բաղին», որ նշանակում է, թե եղել է ժողովածուի առաջին պատմվածքը։ Երկրորդը եղել է «Այու սարի լանջինը»՝ 25—42, երրորդը՝ «Ջորբան», որի լրագրային կտրոնը նախապես ունեցել է 43 էջահամարը, բայց ջնջվել է և փոխարինվել 25-ով. սա էլ նշանակում է, թե «Ջորբան» պատմվածքը երրորդ տեղից հանվել, դրվել է երկրորդ տեղում։

Գրականության և արվեստի թանգարանում «Մթնաձոր» ժողովածուի բոլոր ձեռագիր բնագրերը առանձնացված էին մեքենագիրներից, իսկ լրագրային մի շարք հայերեն և ռուսերեն կտրոններ, որ պարունակում են հեղինակի տարբեր պատմվածքները, քննադատական հոդվածներ նրա մասին և այլն, պահվում էին մի այլ թղթապանակի մեջ։

Ընդհանուր էջակալման առկայության շնորհիվ մենք վերականգնեցինք ժողովածուի նյութերի նախնական դասավորությունը։

Լրագրային զանազան կտրոնների հավաքածուի մեջ միայն երեքի («Ջորբան», «Գյուլբահարի համար» և «Խաղլացավ») վրա կան կապույտ մատիտով հեղինակի գրած էջահամարները, պետք էր ենթադրել, որ այդ կտրոնները ժողովածուի տպարանային բնագրերից են։

Երբ պատմվածքների ձեռագիր և մեքենագիր բոլոր բնագրերը ընդհանուր էջակալմամբ դասավորեցինք, մնացին ընդհանուր էջահամարակալման մի քանի ընդհատումներ. չկային 61—76, ինչպես և 25, 86, 93, 107 և 115 էջերը։ Այս բացերից երեքը լրացվեցին վերոհիշյալ երեք կտրոնների էջահամարներով, որոնք են՝ «Ջորբան»-25, «Գյուլբահարի համար»-93, «Խաղլացավ»-107։ Մյուս երեք բացերը (61—76, 86, 115) մնացին (չկան համապատասխան էջահամարներ ունեցող նյութեր)։

Ստորև բերում ենք ժողովածուի նյութերի նախնական դասավորությունը՝ վերականգնված բնագրերի ընդհանուր էջակալման օգնությամբ։ Վերնագրերի աջ կողմից նշված են յուրաքանչյուր երկի էջահամարները, փակագծերում՝ ջնջված էջահամարները։ Տրված են նաև էջակալման ընդհատումները (պակասում է կամ պակասում են բառերից հետո)։ Նյութերը ձախից համարակալել ենք։ Քանի որ էջակալման ընդհատումը նշան է այն բանի, որ այդ տեղում նախապես ինչ-որ բնագիր է եղել, ուստի համարակալել ենք նաև ընդհատումները։

1. Վանդունց Բաղին 1—24
2. Ջորբան 25 (ջնջված է 43-ը)
3. Աքարում 26—33
4. Այու սարի լանջին 34—51 (ջնջված է՝ 25—42-ը)
5. Ծիրանի տափ 52—60
6. Պակասում են 61—76 էջերը. ընդամենը 17 էջ
7. Միրհավ 77—85
8. Պակասում է 86-րդ էջը
9. Հանավանք 87—92
10. Գյուլբահարի համար 93 (ջնջված է 75-ը)
11. Մինա Բիբին 94—106 (ջնջված է 61—73-ը)
12. «Խաղլացավ» 107 (ջնջված է 94-ը)
13. Օրանջիա 108—114
14. Պակասում է 115-րդ էջը
15. Մրոց 116—122

16. *Մթնաձորի «շարքը» 123—143*
17. *Խոնարհ աղջիկ 144—158*
18. *Լառ-Մարգար 159—168*
19. *Սարու 169—177*
20. *Ալպիական մանուշակ 178—190*

*Այս ցանկի քննությունից պարզվում է, որ նախապես ժողովածուի մեջ եղել է 20 պատմվածք։ Ինչպես կարելի է դիտել, ցանկում բաց են մնացել՝ երկու տեղ մեկական էջ, իսկ մի տեղ՝ 17 էջ։ Ժողովածուի բնագրերից մեկ էջահամար են ստացել միայն լրագրային կտրոնները, ուրեմն պակասող երկու մեկական էջերը՝ 86-ը և 115-ը, նույնպես պետք է լրագրային կտրոններ եղած լինեն։ Բաց մնացած 17 էջերը մեքենագրված կամ ինքնագիր բնագիր են մատնանշում։ «Մթնաձոր» ժողովածուի տպարանային բնագրերից մեքենագրվածները 6-ից 9-ը էջ են զբաղեցնում[1], իսկ ձեռագրերը՝ 10-ից 24 էջ[2], ուրեմն 17 էջանոց բնագիրը հավանական է, որ ձեռագիր է եղել։ Թե դա ինչ պատմվածք է, այժմ դժվար է ասել։ Հնարավոր չէ որոշել նաև, թե Բակունցի ո՞ր պատմվածքի թերթային կտրոնն է նախապես զբաղեցրել 86-րդ էջը։ Իսկ բաց մնացած էջերից վերջինի՝ 115-ի վերաբերյալ ունենք ենթադրություն, որին կանդրադառնանք ստորև։*

*Երբ ընդհանուր էջակալության օգնությամբ նյութերի վերականգնված վերոհիշյալ նախնական կազմն ու դասավորումը համեմատում ենք «Մթնաձոր» ժողովածվում տպագրված նյութերի վերջնական դասավորության հետ, պարզվում է, որ պատմվածքների հերթականության մեջ տարբերություններ կան. այսպես, տպագիր ժողովածուի մեջ «Վանդունց Բաղին» երկրորդ պատմվածքն է, իսկ դասավորության նախնական տարբերակում՝ առաջինը, տպագրվածում «Ջորբան» 11-րդն է, նախնականում՝ 2-րդը, տպագրվածում առաջին պատմվածքը «Մթնաձորն» է, որը չկա ընդհանուր էջակալմամբ վերականգնված նախնական կազմի մեջ։*

*Նշվեց, որ ժողովածուի տպարանային բնագրերի մեջ կա «Մթնաձոր» պատմվածքի մեքենագրված բնագիրը։ Բայց այն չունի ընդհանուր էջակալման թվեր՝ ոչ կապույտ մատիտով, ոչ թանաքով։ Դա նշան է այն բանի, որ տվյալ մեքենագիրը նախապես չի եղել ժողովածուի բնագրերի կազմում։*

*«Մթնաձոր» ժողովածուի նյութերի ցանկի տպարանային բնագիրը գրված է հեղինակի կողմից մանուշակագույն թանաքով։ Նրա վրա նյութերի դասավորման ճշտումներ են արված՝ կարմիր և կապույտ թանաքներով։ Ցանկի մեջ նյութերի վերջնական դասավորությունն այն է, ինչ առկա է տպագիր «Մթնաձորում»։ Ձեռագիր ցանկում վերջնականապես դասավորված պատմվածքների դիմաց մատիտով նշված են էջերը (չկա միայն «Ալպիական մանուշակ»-ի էջահամարը). այդ*

[1] Մթնաձոր՝ *9 էջ,* Աֆառում՝ *7,* Ծիրանի տափ՝ *9,* Միրհավ՝ *9,* Հանավանք՝ *6,* Օրանջիա՝ *7,* Մրոց՝ *7,* Սարու՝ *9։*

[2] Վանդունց Բաղին՝ *24,* Այու սարի լանջին՝ *18,* Մինա Բիբին՝ *13,* Մթնաձորի «շարքը»՝ *21,* Խոնարհ աղջիկ՝ *15,* Լառ-Մարգար՝ *10,* Ալպիական մանուշակ՝ *13։*

*նշումները կատարվել են ժողովածուն (բացի բովանդակությունից) շարելուց հետո, և դրված էջահամարները լիովին համընկնում են տպագիր «Մթնաձորի» էջակալմանը։*

*Ձեռագիր ցանկում, այդպիսով, առկա է նյութերի դասավորության երկու տարբերակ։ Սկզբում հերթականությունը եղել է այսպիսին. 1 Վանդունց Բադին, 2. Ջորբան, 3. Աքարում, 4. Այու սարի լանջին, 5. Ծիրանի տափ, 6. Միրհավ, 7. Հանավանք, 8. Գյուլբահարի համար, 9. Մինա Բիբին, 10. «Խաղլացավ», 11. Օրանջիա, 12. Մթնաձոր, 13. Մրոց, 14. Մթնաձորի «չարքը», 15. Խոնարհ աղջիկ, 16. Լառ-Մարգար, 17. Սաքու, 18. Ալպիական մանուշակ։ Այս դասավորությունը համընկնում է բնագրերի ընդհանուր էջակալմամբ նյութերի մեր վերականգնած նախնական հերթականությանը, միայն ավել է «Մթնաձոր» պատմվածքը և այլևս չկան ընդհանուր էջակալության այն երեք պակասները, որոնց տեղում ավելի առաջ ինչ-որ բնագրեր են եղել։ Այդ պակասներից մեկը, ինչպես ասվեց, բնագրերի ընդհանուր էջակալության (կապույտ մատիտով արված) 115-րդ էջն է։ Այն գտնվում է «Օրանջիա» և «Մրոց» պատմվածքների արանքում։ Իսկ վերը բերված տարբերակում այդ երկերի անունների միջև «Մթնաձորն» է։ Այստեղից կարելի է ենթադրել, որ 115-րդ էջահամարի տակ սկզբում եղել է «Մթնաձորի» լրագրային կտրոնը։*

*Այս ենթադրությունը լրացուցիչ հիմնավորման է կարոտ։ Բակունցի թղթերում մյուս լրագրային կտրոնների հետ պահպանված է նաև «Մթնաձոր» պատմվածքի մի կտրոնը՝ հանված «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. № 292-ից։ Բայց նրա վրա էջահամար չկա, չկան նաև հեղինակի ձեռքով արված ճշտումներ (որպիսիք կան «Ջորբան», «Գյուլբահարի համար» և «Խաղլացավ» պատմվածքների լրագրային կտրոնների վրա)։ «Մթնաձորի» լրագրային այդ կտրոնը և ժողովածուի մեջ տպագրված բնագիրը մի շարք տարբերություններ ունեն (տե՛ս «Բնագրային տարբերություններ» բաժնում)։ Նշանակում է այդ կտրոնը ժողովածուի բնագրերի կազմում երբեք չի եղել։*

*Գուցե «Մթնաձորի» լրագրային մի այլ կտրոն է եղել ժողովածուի նախնական կազմում, 115-րդ էջահամարի տակ։ Նրա վրա հեղինակը, թերևս, ճշտումներ է արել և հետո տվել մեքենագրելու ու այդպես ասպարեզ է եկել «Մթնաձորի» տպարանային մեքենագիր բնագիրը, որ ընդհանուր էջակալում չունի։ Չի կարելի բոլորովին բացառել նաև այն հնարավորությունը, որ ժողովածուի բնագրերի նախնական կազմում 115-րդ էջահամարի տակ մի այլ պատմվածք է եղել, իսկ «Մթնաձորը» առհասարակ չի եղել ժողովածուի կազմում և ավելացվել է հետո։*

*Այժմ՝ ժողովածուի ցանկի տպարանային բնագրում կատարված հեղինակային ճշտումների մասին։ Ասացինք, որ ցանկում պատմվածքների անունները գրված են մանուշակագույն թանաքով։ Նույն մանուշակագույն թանաքով ջնջված է առաջին պատմվածքի («Վանդունց Բադին») վերնագիրը, և փոխարենը կողքին նույն թանաքով գրված է* **Օրանջիա:** *Ապա կապույտ թանաքով ջնջված է* **Օրանջիա-ն** *և փոխարենը, դարձյալ կապույտ թանաքով, գրված՝* **Մթնաձոր,** *ընդ որում, նույն կապույտ թանաքով 12 համարի տակ ջնջված է* **Մթնաձոր-ը** *և փոխարենը կողքին գրված* **Օրանջիա:**

*Ի վերջո, կարմիր թանաքով ջնջված է երկրորդ պատմվածքի վերնագիրը՝* Ձորբան, *փոխարենը կողքին դարձյալ կարմիր թանաքով գրված է* Վանգունց Բաղին: *Իսկ* Ձորբան *նույն կարմիր թանաքով նորից գրված է 11-րդ համարի տակ, ուր ջնջված է ամենասկզբում եղած* Օրանջիա-*ն*։

*Ուրեմն, ցանկում նախապես առաջինը հանդիսացող* Վանգունց Բաղին *դարձել է երկրորդը, իսկ* Ձորբան *երկրորդ տեղից տարվել է 11-րդ տեղը, որի հետեվանքով* Օրանջիա-*ն մեկ «աստիճան» իջել է և 12-րդ տեղում գրավել* Մթնաձոր-*ի տեղը։ Վերջինս էլ տարվել է առաջին տեղը* Վանգունց Բաղին *վերնագրի փոխարեն։ Ըստ այդմ էլ վերադասավորվել են բնագրերը, և գոյացել է ժողովածուի նյութերի վերջնական հերթականությունը։*

*Այդպես, «Մթնաձոր» պատմվածքը կամ նախապես չի եղել ժողովածուի կազմում, կամ այդ պատմվածքի բնագիրը լրագրային կտրոնի ձևով նախ եղել է 14-րդ (115-րդ էջահամարի տակ), հետո դարձել է 12-րդը և ի վերջո, մեքենագրվելուց հետո, առաջինը։ Երկու դեպքում էլ եզրակացությունն այն է, որ «Մթնաձոր» պատմվածքի դերը, ավելացնենք՝ նաև* Մթնաձոր *անվանման արժեքը, հեղինակի համար աստիճանաբար է նշանակալից դարձել, ժողովածուի նյութերի կազմը, ինչպես և դասավորությունը ճշտելու ընթացքում։ Հավանաբար այդ ընթացքում էլ հեղինակի մեջ ծագել է ամբողջ ժողովածուն* Մթնաձոր *կոչելու միտքը։*

*Այս հարցը ուշագրավ է այն պատճառով, որ* Մթնաձոր *անունը հայ գրականության մեջ հաջող գտնված այն վերնագրերից է, որոնք խորհրդանշում են ամբողջ ստեղծագործական աշխարհ, այնպես, ինչպես Թումանյանի* Անուշ-*ը, Ա. Իսահակյանի* Երգեր ու վերքեր-*ը, Վ. Տերյանի* Մթնշաղի անուրջներ-*ը կամ* Երկիր Նաիրի-*ն։*

Մթնաձոր-*ը խորհրդանշեց նաև Բակունցի պատկերած հայոց գյուղաշխարհը՝ յուրահատուկ, անկրկնելի բակունցյան գույներով, տրամադրություններով, գաղափարով։*

* * *

*Բակունցի կենդանության ժամանակ «Մթնաձոր» ժողովածուի մեջ մտած պատմվածքներից «Վանգունց Բաղին», «Օրանջիան», «Միրանի տափը», «Մրոցը», «Լառ-Մարգարը», «Ձորբան», «Ալպիական մանուշակը», «Մթնաձորը», «Միրհավը» տարբեր բնույթի ու չափի կրճատումներով տեղ են գտել հայոց լեզվի և գրականության մի շարք դասագրքերում (տե՛ս համապատասխան պատմվածքներին նվիրված ծանոթագրությունները)։*

*Հեղինակի կենդանության ժամանակ «Մթնաձոր» ժողովածուի մեջ մտած երկերից ամբողջությամբ, բայց և հիմնովին վերամշակված՝ վերահրատարակվել է չորս պատմվածք՝ «Միրհավ», «Խոնարհ աղջիկ», «Ալպիական մանուշակ», «Սաբու». առաջին երեքը 1933 թ., «Սև ցելերի սերմնացանը», վերջինը 1935 թ., «Անձրևը» ժողովածուներում։*

*Բակունցի վախճանից հետո «Մթնաձոր» ժողովածուի պատմվածքներից «Խոնարհ աղջիկը» (ըստ «Սև ցելերի սերմնացանի» տարբերակի) հրապարակվել է 1938 թ. Փարիզում լույս տեսած «Պատմվածքներ» ժողովածուի մեջ, այնուհետև,*

«Մթնաձոր» շարքի պատմվածքների մի մասը («Խոնարհ աղջիկ», «Ալպիական մանուշակ», «Միրհավ», «Սաքու», «Մթնաձոր», «Վանդունց Բաղին», «Աքառում», «Այու սարի լանջին») տեղ է գտել Բեյրութում 1955—1956 թթ. հրատարակված «Ամբողջական գործը» ժողովածուի 1-ին և 2-րդ հատորներում։

Հեղինակի երկերի 1955 թ. երևանյան հրատարակության մեջ 1927 թվականից հետո առաջին անգամ առանձին ներկայացված է «Մթնաձոր» պատմվածքաշարը, սակայն նրանում չկան այն չորս պատմվածքները, որոնք հեղինակը հետո գրել է իր հաջորդ ժողովածուների մեջ (Երկերի 1955 թ. հրատարակությունում այդ պատմվածքները համապատասխանաբար տեղ են գտել «Սև ցելերի սերմնացանը» և «Անձրևը» շարքերում)։

Բակունցի Երկերի երկհատորյակի (Երևան, 1964) առաջին հատորում «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը» և «Անձրևը» շարքերի բովանդակությունը պահպանված է ըստ 1955-ի երևանյան հրատարակության (միայն վերջին շարքում ավելացված է «Եվ բարակը թույլ տվավ իրեն...» պատմվածքը, որ հանված էր 1955-ի հրատարակությունից)։

1950-ական թվականների կեսերից սկսած «Մթնաձոր» շարքի առանձին պատմվածքներ բազմիցս տպագրվել են պարբերական մամուլում, դասագրքերում, ժողովածուներում։

1929 թվականին «Մթնաձոր» ժողովածուն ամբողջությամբ լույս է տեսել ռուսերեն («Темное ущелье», М—Л., Госиздат)։ Իսկ 1935-ին Բակունցի «Девушка Хонар» վերնագիրը կրող պատմվածքների մոսկովյան ռուսերեն հրատարակության մեջ «Մթնաձորից» տեղ են գտել «Խոնարհ աղջիկը» և «Ալպիական մանուշակը»։

Բակունցի պատմվածքների 1955 թվականի ռուսերեն հրատարակության մեջ (Երևան, Հայպետհրատ) «Մթնաձորի» պատմվածքներից տեղ են գտել «Ալպիական մանուշակը», «Լառ-Մարգարը», «Միրհավը», «Սաքուն», «Խոնարհ աղջիկը»։ .

Քանի որ Բակունցը «Մթնաձոր» շարքի իր վերոհիշյալ չորս պատմվածքները 1933 և 1935 թթ. վերահրատարակել է մյուս ժողովածուների կազմում, ապա առաջին հայացքից կարող է թվալ, թե գրողի երկերի մերօրյա հրատարակիչները այդ պատմվածքները համապատասխանաբար թողնելով «Սև ցելերի սերմնացանը» և «Անձրևը» շարքերում, հավատարիմ են մնում հեղինակի վերջին ցանկությանը։

Բայց և հարց է առաջանում, մեր օրերում ինչպե՞ս կվարվեր ինքը՝ հեղինակը, եթե կենդանի լիներ։ Կարծում ենք, «Մթնաձոր» շարքը կամբողջացներ 1927 թվականի բովանդակությամբ, գուցե որոշ կրճատում և մեկ-երկու լրացում աներ։ Հօգուտ այս կարծիքի կարելի է փաստարկներ բերել, այդ թվում՝ «Մթնաձոր» շարքի, առհասարակ 1920-ական թվականների մթնաձորյան պատմվածքների գեղագիտական-գաղափարական ակնհայտ ամբողջությունը, նաև այն, որ 1933 և 1935 թթ. ժողովածուների կազմում մթնաձորյան պատմվածքներից մի քանիսի մշակված տարբերակների վերահրատարակումը առնչված է եղել պարզապես այդ ժողովածուների լույս ընծայման առիթը օգտագործելու հանգամանքի հետ։

*Այս մտածումները մեզ հանգեցրին վերոհիշյալ չորս պատմվածքները իրենց ակզբնական՝ «Մթնաձոր» շարքը վերադարձնելու հիմնավորվածությունը։*

*Թերևս, վիճելի լինի մեկի՝ «Սարոււի» հարցը. արդյո՞ք ճիշտ է այն մթնաձոր-յան պատմվածք համարելը։ Մյուս կողմից, իրոք, «Մթնաձոր» շարքը կարելի էր գրացնել բնույթով խիստ մթնաձորյան նաև ուրիշ պատմվածքներով (օրինակ, «Նամակ ռուսաց թագավորին», «Ձմռան մի գիշեր», «Սպիտակ ձին»)։*

*Սակայն «Մթնաձոր» ժողովածուի նախնական կազմի որևէ կրճատում կամ գրացում կատարելը, որքան էլ դա հիմնավոր թվա, կամայական մոտեցում կլիներ, մինչդեռ այդ նախնական կազմի պահպանումը, որը և մենք արել ենք, հավանաբար, հեղինակային շարքերը հարգելու տեսակետից լավագույն մոտեցումն է։*

* * *

*«Մթնաձոր» ժողովածուի լույս տեսնելու հետ միաժամանակ սկիզբ առավ Ա. Բակունցի դեմ ուղղված քննադատությունների այն մի շարքը, ուր գրողը մեղադրվում էր քաղաքակրթությունից ու քաղաքից փախչելու և գյուղապահպան տեսակետների, մանրգյուղացիական հոգեբանության, հին գյուղի քայքայման համար ափսոսալու, պահպանողականության, տոլստոյական քարոզի և նման բաների համար (տե՛ս, օրինակ, «Գրական դիրքերում», 1927, № 1, էջ 14—16, 1928, № 11—12, էջ 117—122)։ Նույն մեղադրանքները, հաճախ միևնույն արտահայտություններով, Բակունցի դեմ հարուցվեցին նաև ավելի ուշ, թեև այս անգամ իբրև մեղադրանքների անմիջական հասցեատեր զգուշորեն՝ արդեն մեծ ճանաչում գտած գրողը չէ, որ նշվում էր (տե՛ս օրինակ, «Սովետական գրականություն», 1974, № 11, էջ 102—108,* Հ. Թամրազյան, *Գրական դիմանկարներ, Երևան, 1975, էջ 409—425)։*

## *Մ Թ Ն Ա Ձ Ո Ր*

*(էջ 11)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 21 նոյ., № 269, ՏՄՕ, Մժ:

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 15. տող 15. Մժ-ի բնագրում՝ *սառուցի*—ուղղված է ըստ ՏՄՕ-ի՝ *սառույցի*:

էջ 16, տող 6. Մժ-ի բնագրում *սառուցին*—ուղղված է ըստ ՏՄՕ-ի՝ *սառույցին*։

*Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, 1926 թ. նոյեմբերի 21-ին։ Ապա 1927 թ. հեղինակային որոշ խմբագրմամբ տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ։*

*1927 թվականից հետո, հեղինակի կենդանության օրոք պատմվածքը կրճատումներով տեղ է գտել մի շարք դասագրքերում. մասնավորապես, 1933 թ.՝ 4-րդ, 1936 թ.՝ 7-րդ դասարանների «Հայոց լեզվի դասագրքերում» (վերջինում «Որսորդ Ավին» վերնագրով)։*

Հեղինակի վախճանից հետո պատմվածքն ամբողջությամբ, ըստ «Մթնաձոր» ժողովածուի բնագրի, տպագրվել է 1955 թ. Երևանյան միհատորյակում, 1956 թ. Բեյրութի «Ամբողջական գործը» ժողովածուի 2-րդ հատորում, 1964 թ. Երկերի առաջին հատորում, 1969 թ. «Ալպիական մանուշակը» ժողովածուի մեջ։

1956 թվականից սկսած «Մթնաձոր» պատմվածքը կրճատումներով անընդհատ տպագրվում է դպրոցական դասագրքերի մեջ։

Պատմվածքի տպարանային մեքենագիր բնագիրը բաղկացած է 9 փոքրադիր (7,8×20,2 սմ.) թերթերից. յուրաքանչյուրի մեկ էջում կա 20 տող (միջին հաշվով)։ Մեքենագրությունը մանուշակագույն է։ Թուղթը բարակ, փայլուն, շատ դեղնած։ էջերի վերին ձախ մասում կա համարակալում՝ 1—9 մուգ-մանուշակագույն թանաքով (որ ժողովածուի բնագրերի ընդհանուր համարակալումից դուրս է)։ Վերջում թվական չկա։

Պատմվածքը պետք է գրված լինի 1926 թվականին, բնականաբար մինչև նոյեմբեր (երբ տպագրվեց)։

Պատմվածքի նախակերպարին՝ մաշկազերծ գլխով գյուղացուն, ըստ Ղափանի շրջգործկոմի նախկին քարտուղար Արտաշես Տատուրյանի հուշերի[1], Բակունցը հանդիպել է 1926 թ. վաղ գարնանը, Շիկահող գյուղում, երբ որպես Զանգեզուր գավառի գյուղատնտես շրջելիս է եղել Ղափանի շրջանի գյուղերում՝ շրջգործկոմի այն ժամանակվա նախագահ Սողոմոն Կարապետյանի և իր՝ Ա. Տատուրյանի հետ։

Պատմվածքի համար նյութ է ծառայել մի եղելություն, որը, թերևս, շատ սովորական համարվեր, եթե չլիներ նրա որքան տարօրինակ, նույնքան էլ ողբերգական հետևանքը. մարդու գլուխն ու դեմքը լրիվին մաշկազերծ են լինում, և մարդը մնացած ամբողջ կյանքում ուսերին սովորական գլխի փոխարեն գանգ է կրում։

«Մթնաձորի» ստեղծման օրինակով լավ է դիտվում Բակունց արվեստագետի աշխատանքը փաստական նյութի վրա, եղելությունը գեղարվեստական լիարժեք երկ դարձնելու ուղղությամբ։

Ահա Ա. Տատուրյանի հուշերի այդ հատվածը. «Նրանք նստած էին տան սրահում։ Ավին գլուխը ծածկած սպիտակ սփածանելիքով՝ խոզի կաշվից տրեխ էր գործում, դեմքը միանգամայն քողարկված էր ու խոսելիս թավ ձայնը լսվում էր ինչ որ խուլ քարանձավից։ Երբ մենք մոտեցանք նրան, Կարապետյանը հարցրեց.

— Բա ինչի՞ է դեմքը պինդ քողարկել այդ մարդը և ոնց է առանց տեսողության աշխատում,— չիմանալով, իհարկե, եղելությունը, իսկ ես լսել էի նրա պատմությունը ու գիտեի, թե ինչու է քողարկում դեմքը։

Այդ հարցին որպես պատասխան Ավին վայր դրեց ձեռքի գործը և արձակեց դեմքի սփածանելիքը։

Բոլորս մնացինք ապշած. մեր աչքերի առաջ պատկերացավ մի չոր գանգ կենդանի մարմնի վրա, որը ամեն ոք կարող է միշտ տեսնել քաղաքի մասնագիտական խանութի ցուցափեղկում որպես պլաստմասսայից պատրաստված արտադրանք։ Նրա վրա չկան ոչ աչքունքներ, ոչ քիթ ու շրթունք, դեղնավուն ատամների շարն է միայն միշտ ծիծաղում ոսկրապատ խորշի միջին։ Բակունցն ու Կարապետյանը զարհուրանքով դիտում էին այդ կենդանի կմախքը»։

[1] Պահվում է ԳԱԹ-ում։

Այնուհետև, Ծատուրյանը նկարագրում է գյուղացու և արջի գոտեմարտը, ինչպես ինքը լսել է կամ, ավելի ճիշտ, ինչպես այն մնացել է իր հիշողության մեջ։

Մենք հետաքրքրվեցինք շիկահողցիներից, մաշկազերծ գլխով նրանց համագյուղացու մասին։ Պարզվեց, որ դա եղել է Գաբրիել Մարտիրոսի Հարությունյանը, որ մահացել է 1944 թվականին։ Տարեց շիկահողցիները պատմում են Գաբրիելի գլխին եկածը, թեև այդ պատմությունների մեջ տարբերություններ կան. եղելությունն արդեն բանահյուսական պատումի է վերածվել և ունի տարբերակներ։ Ինչ վերաբերում է դեպքի մասին Ծատուրյանի գրածին, ապա նրա վրա էլ ակնհայտ է Բակունցի պատմվածքի ազդեցությունը, սկսած մաշկազերծ գլխով գեղջուկի անունից (սխալմամբ նրան Բակունցի գրական հերոսի անունով կոչում է Ալի), վերջացրած արջի ու մարդու մենամարտի նկարագրությամբ[1]։

Իմանալով, որ Գաբրիելի երկու որդիներից (Արտեմ և Շամխար) մեկը՝ Արտեմը, բնակվում է Շիկահողում, 1961 թվականին մենք դիմեցինք նրան՝ խնդրելով հնարավորին չափ ճշգրիտ տեղեկություններ տալ հոր մասին։ Արտեմը մանրամասն գիտեր հոր գլխին եկածը։ Նրա պատմածը, որ մեր կողմից մասամբ լրացվել է ու ճշտվել. մի քանի ուրիշ շիկահողցիների վկայություններով, հետևյալն է. 1911 թվականի փետրվարի 18-ի օրը շատ ձյուն էր եկել։ Գաբրիելը մի քանի ուրիշ համագյուղացիների հետ աշխատելիս է եղել Շիկահողի Դշլաղ կոչվող բինայում։ Իրիկնադեմին լուր է տարածվում, թե հարևան գյուղի ադրբեջանցիները մի հսկա արջ են վիրավորել, որը գազազել է և մտել մոտակա Կհոլ կոչվող անտառը։ Գաբրիելը հրացանն առնում է և ընկերոջ՝ Ղազարի հետ գնում անտառ՝ արջին սպանելու։ Անտառի խորքում՝ քայլող մարդկանց հետևից դուրս է գալիս հսկա գազանը և թիկունքից բռնում Ղազարին։ Գաբրիելը անմիջապես կրակում է արջի վրա։ Ոմանց պատմելով կրակում է, ապա հրացանով հարվածում արջին, որից հրացանը ջարդվում է։ Ավելի գազազած արջը Ղազարին թողնում, հարձակվում է Գաբրիելի վրա։ Սկսվում է ծանր գոտեմարտ։ Ղազարը սարսափած՝ թողնում է ընկերոջը մենակ ու թաքնվում։ Գաբրիելի և վիրավոր գազանի մենամարտը բավական երկար է տևում։ Գյուղացին հաջողեցնում է ձեռքը արջի բերանը տանել, բայց անօգուտ։ Գաբրիելը մի քանի անգամ օգնության է կանչում ընկերոջը, սա վախից ոչ մի շարժում չի անում։ Արջը կրծում է մարդու թևի փափուկը, ապա թաթով հարվածում նրա գլխին։ Դրանից Գաբրիելի աչքերը արյունով են լցվում ու խավարում։ Գազանը մի պահ դադար է տալիս. գյուղացին փորձում է մաքրել աչքերը արյունից, բայց հենց այդ պահին արջը թաթով հարվածում է Գաբրիելի ծոծրակին, ճանկերը խրում մաշկի մեջ և քաշելով պոկում մարդու գլխի ու դեմքի

---

[1] Ա. Ծատուրյանի պատմածում կան նաև փաստական հետևյալ անճշտությունները. սխալմամբ գրում է, թե դեպքը Մթնաձոր անտառում է տեղի ունեցել, և իբր այդ անտառը Շիկահող գյուղի մոտ է։ Իրականում Մթնաձոր կոչվող անտառը Շիկահողից հեռու է, իսկ դեպքը տեղի է ունեցել Կհոլ անտառում։ Ճիշտ չէ նշվում նաև դեպքի թվականը՝ 1912 (ճիշտը՝ 1911-ն է), ճիշտ չէ գրված, որ իբր հաշմված Գաբրիելին մասնագիտական բուժօգնություն բնավ ցույց չի տրվել. նա բուժվել է Բաքվում և այլն։

ամբողջ մաշկը մինչև ծնոտ։ Դրանից հետո արջը հեռանում է, իսկ Ղազարը գնում և օգնության է կանչում մարդկանց։ Ղշլաղից գալիս են Գաբրիելի եղբայրը՝ Պապին և ուրիշ գյուղացիներ։ «Պապինը տեսնելով հորս ծնոտից կախված դեմքի կաշին,— պատմում է Արտեմը,— դանակով կտրում է ու շպրտում»։

Գաբրիելին տանում են Բաքու բուժման։ Վերքերը բուժում են, բայց գլուխը մնում է մաշկազերծ, առանց մազերի, աչքերի, քթի ու շրթունքների, այսինքն՝ որպես գանգ։ «Հորս դեմքը միշտ կապած էր,—հիշում է Արտեմը,—ճանաչում էր մարդկանց միայն ձայնից, զբաղվում էր չարուխ գործելով, երբեմն էլ թզբեհներ էր պատրաստում։ Դեպքից հետո ունեցել է երկու տղա և մի աղջիկ»։

Արտաքուստ այս եղելությունը շատ բանով է համընկնում Բակունցի պատմվածքում նկարագրվածին։ Արջի ու մարդու նույն գոտեմարտը, մարդու գլխին նույն ձևով կատարված մաշկազերծում։ Հաշմված մարդու արտաքինի ու ձայնի նկարագրությունը Բակունցի պատմվածքում տրված է տառացիորեն այնպես, ինչպես եղել է իրականում, ինչպես պատմում են Գաբրիելի հարազատներն ու ծանոթները։ Նույնիսկ նրա զբաղմունքն էլ (տրեխ կարելը) Բակունցն անփոփոխ է թողել։

Ի՞նչն է պատմվածքում փոխված։ Նախ՝ Գաբրիելը դարձել է Ավի, այն էլ որսորդ Ավի։ Բակունցին ավելի մոտ ու հարազատ Ծրիշենում (Գորիսի մոտ) եղել է հմուտ մի որսորդ, Ավի անունով, և այս մարդու որսորդական հմտությունն ու անունն է Բակունցը միացրել Գաբրիելին։ Իսկ վերջինս թեև խիզախ մարդ է եղել և որսով երբեմն զբաղվել է, բայց որսորդ, այն էլ հմուտ որսորդ, չի եղել։ Այս փոփոխությունը կարևոր է եղել պատմվածքի դիպաշարը կառուցելու և մտահղացումն արտահայտելու տեսակետից։

Բակունցը փոխել է նաև Կհոլ անտառի անունը՝ դարձնելով Մթնաձոր։ Ավելի ճիշտ, տեղափոխել է դեպքի վայրը Կհոլից Մթնաձոր։ Ղափանի շրջանի Մթնաձոր կոչվող անտառը գտնվում է Շիկահողից ավելի քան 15 կիլոմետր հեռու, ավելի մոտ է Հանդ գյուղին, և այնտեղ նման դեպք չի պատահել։ Այս փոփոխությունն էլ կատարվել է նախ այն պատճառով, որ պատմվածքում պետք էր շատ ավելի խուլ, կուսական անտառ, քան Կհոլն է, իսկ Մթնաձորը հենց այդպիսի անտառ է՝ թե՛ իրականում, թե՛ մանավանդ իր բնորոշ անունով։ Ապա Մթնաձոր անունը Բակունցին շատ պետք էր։ Դա գրողի համար գյուտ է եղել. այդ անունով նա կոչեց նաև ամբողջ պատմվածքաշար՝ այն ի վերջո դարձնելով անցյալի հայ գյուղի ու գյուղացիության խորհրդանիշ։

Եղելության ու պատմվածքի տարբերություններից է նաև այն, որ իրականում անտառ գնացողները երկուսն են եղել, իսկ պատմվածքում որսորդը մենակ է գնում անտառ, որ նույնպես կարևոր է պատմվածքի դիպաշարը հյուսելու և գլխավոր հղացումը դրսևորելու համար։

Սակայն ամենակարևոր փոփոխությունը փաստական նյութի գեղարվեստական մշակման ժամանակ անտառապահ Պանինի ավելացումն է պատմվածքում, որով բոլորովին նոր իմաստ ու գեղարվեստական խորհուրդ է ստացել սովորական որսորդական պատմությունը։

Պատմվածքի սկզբում տրվող Մթնաձոր անտառի նկարագրությունից անմիջա-

պես հետո խոսք է բացվում անտառապահի մասին. «Վայրի վարազի պես էր անտառապահ Պանինը։ Մի հրեշ էր նա անտառապետի տարազով...»,— և ապա տրվում է այդ զարհուրելի մարդու դիպուկ նկարագիրը։ Դրանից հետո է միայն խոսվում որսորդ Ավու մասին։ Պատմվածքում Ավին դառնում է ոչ թե դժբախտ պատահարի զոհ, այլ Պանինի դաժանության զոհը։ Սա է այն էականը, որ մուծել է Բակունցը որսորդական այս պատմության մեջ։

Եթե Բակունցը ոչ թե մի, այլ երկու ոչ որսորդ գյուղացի ուղարկեր անտառ, այն էլ վիրավոր արջ սպանելու դիտավորությամբ (ինչպես իրականում է եղել), չէր ստացվի խուլ անտառում հայ գեղջուկի ու բռնակալ Պանինի երես առ երես հանդիպման շնորհիվ ստեղծվող հակադրությունը, չէր ստացվի նաև գեղջուկ որսորդի նկատմամբ Պանինի ծայր արհամարհանքից առաջացած ողբերգությունը և, առհասարակ, չէր ստացվի «Մթնաձորը»։

Երկի բովանդակության կենտրոնում է որսորդ Ավու և Պանինի հակադրությունը։ Մի կողմում Ավիի անտրտունջ խոնարհությունն է, մյուսում Պանինի ուժն ու անգթությունը հայ գյուղացու նկատմամբ։

Ավին հայ հին գյուղի՝ Մթնաձորի բնորոշ ներկայացուցիչն է հակադրված Պանինին՝ Մթնաձորում օտար այդ մարդուն։ Պատմվածքում, գործ ունենք հայոց Մթնաձորի՝ անցյալի հայ գյուղացիության ու նրա վրա դարերով իշխող օտար բռնապետության հակադրության հետ։ Սա է հեղինակի գլխավոր մտահղացումը, որի համար էլ օգտագործված է շիկահողցի Գաբրիելի հետ տեղի ունեցածը։

Այժմ փաստեր չունենք, բայց և չենք կասկածում, որ նախակերպար ունեցել է նաև անտառապահը. ինչ-որ տեղ Բակունցը պետք է հանդիպած լինի այդպիսի մի մարդու, որին և վարպետորեն մտցրել է Մթնաձոր, առնչել որսորդ Ավու հետ։

Արվեստագետը ոչ թե որսորդական պատահարը «սիրունացրել», «ծաղկեցրել» է, այլ նրա օգնությամբ արտահայտել է ավելին, քան կարող էր իր մեջ պարփակել պատահարի մի սովորական վերապատմումը։ Ստեղծվել է բովանդակությամբ խորունկ երկ, միաժամանակ դեպքերի ու դեմքերի իրականից արված «նկարահանումները» պատմվածքը դարձրել են իրապատում և տպավորիչ։

Բակունցը իր բազմաթիվ ճանապարհորդությունների և գյուղացիների հետ ունեցած զրույցների ժամանակ շատ ուրիշ որսորդական պատմություններ է լսել, բայց օգտագործել է այս մեկը, որը ամենից հարմար է եղել մտահղացումն արտահայտելու համար։ Հետաքրքրական է, որ Մատուրյանի հուշերում խոսվում է նույն ուղևորության ժամանակ գրողի նաև այլ հանդիպումների ու լսած պատմությունների մասին։ Այսպես, Ներքին Հանդ գյուղում մի որսորդ, Ավագ անունով, Բակունցին մի քանի գրավիչ որսորդական պատմություններ է անում, որոնք գրողը լսում է հափշտակությամբ. «Բակունցն ուզում էր էլի լսել Ավագի պատմածները, բայց Կարապետյանը շտապեցրեց, մենք երկուսով գնացինք գյուղխորհրդի գրասենյակը գյուղի հարցերով զբաղվելու, Բակունցը մնաց Ավագի հետ զրուցելու։ Ավագի պատմություններից մեկն, օրինակ, այն մասին է եղել, թե ինչպես մի որսի ժամանակ որսորդները նկատում են արջին, որը գերան է դնելիս լինում ձորի մի ափից մյուսը և ապա մի մեծ քար է վերցնում, որ իր «պատրաստած»

*կամրջից գցի ձորում գտնվող հովազի վրա։ Բայց գերանը ջարդվում է, արջն ընկնում է ձորն ու սկսում կռվել հովազի հետ։ Որսորդները երկուսի վրա էլ կրակում են։ Երբ մոտենում են, արջը դեռևս կենդանի է լինում, որսորդը հրացանը բարձրացնում է, որ մեկ էլ կրակի, բայց տեղի է ունենում անսպասելին. «մահամերձ արջը թաթը բարձրացրեց ու ծածկեց աչքերը, որ հրացանի զարկը չտեսնի»,— պատմում է Ավագը։ Ապա արջը սատկում է։*

*Դրավիչ պատմվածքներ գրելու հակում ունեցող մի հեղինակ Գաբրիելի պատմության հետ միասին պատմվածքի կվերածեր նաև այս պատմությունը և սրա նման շատերը։ Բայց Բակունցն ամեն հետաքրքրական պատմություն չէ, որ գեղարվեստական երկ է դարձրել, այլ միայն այնպիսիները, որոնք օգնել են արտահայտելու հեղինակային ասելիքը։*

էջ 14, տող 4. *Բերդանի գնդակը*—*բերդան* ռուսերեն *берданка* բառից է. դա անունն է 10,67 միլիմետր տրամաչափով միալիցք հրացանի, որով XIX դարի երկրորդ կեսին (1869—1891 թթ.) զինված էր ռուսական բանակը: Բերդանկան գործածվել է նաև իբրև որսորդական հրացան:

էջ 15—16. Պատմվածքում միալիցք *բերդանը* կրակում է երեք անգամ: Պատկերելով մարդու և գազանի գոտեմարտը՝ Բակունցը ոչինչ չի ասում միալիցք հրացանը երկրորդ ու երրորդ անգամ լիցքավորելու մասին, և կարող է թվալ, թե հեղինակային թյուրիմացության հետ գործ ունենք: Սակայն իրականում այդպես չէ: Պատմվածքի հետևյալ նախադասությունը (էջ 16, տող 11—12)՝ «Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ», ակնարկում է, որ երկրորդ և երրորդ կրակոցներից առաջ էլ, գոտեմարտի թեժ պահին Ավին հասցրել է երկու անգամ լիցքավորել հրացանը:

## *ՎԱՆԴՈՒՆՑ ԲԱԴԻՆ*

*(էջ 18)*

Բնագրային աղբյուրներ՝ ՆԱ 1924, 10 օգոս., № 7, ՏՁ, Մժ:

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի: Կատարված է հետևյալ ուղղումը.

էջ 26, տող 32—էջ 27 տող 1. Մժ-ի բնագրում. *Հարուգն ուրախ էր, որ նա քաղաքներ պիտի տեսնի, լեզուն սովորի։* Ուղղված է ըստ ՆԱ-ի և ՏՁ-ի՝ *Հարուգն ուրախ էր, որ քաղաքներ պիտի տեսնի, լեզու սովորի։*

*Առաջին անգամ տպագրվել է «Նոր ակոս» շաբաթաթերթի (Երևան) 1924 թ. օգոստոսի 10-ի համարում։ Ապա կրճատված տեղ է գտել դասագրքերի մեջ. 1925-ին՝ Ս. Հակոբյանի կազմած «Կարմիր արև. 4-րդ տարի» դասագրքում (2-րդ հրատ.), 1926-ին և 1927-ին՝ նույն դասագրքի երրորդ և չորրորդ հրատարակությունների մեջ։*

*1927-ին հեղինակային որոշ մշակմամբ տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ։ Այնուհետև, հեղինակի կենդանության օրոք կրճատումներով կամ հատվածա-*

բար տպագրվել է մի շարք այլ դասագրքերում, ինչպես՝ 1928, 1929 թթ.՝ «Կարմիր արև. 4-րդ տարի» դասագրքի հրատարակություններում, 1929-ին՝ Մ. Գասպարյանի կազմած «Խորհրդային գյուղ»-ում, («Պատկերազմի համար զորահավաք» վերնագրով), 1930-ին՝ Ե. Զարենցի կազմած «Գրականության դասընթաց»-ի մեջ (2-րդ աստիճանի 7-րդ խմբերի և տեխնիկումների համար), ինչպես նաև՝ «Պատանի կոլխոզնիկ» (Ուսուցման Գ տարի) ու «Կյանք և աշխատանք» դասագրքերում, 1932-ին՝ «Գրականության և լեզվի դասընթացում» (ուսմ. 7-րդ տարի), 1933-ին՝ «Լեզվի և գրականության դասագրքի» մեջ (6-րդ տարի) և այլն։

1955 թ. տպագրվել է հեղինակի Երկերի միհատորյակում, 1956-ին «Ամբողջական գործի» (Բեյրութ) 2-րդ հատորում, 1964-ին Երկերի երկհատորյակի 1-ին հատորում՝ բոլորն ըստ Մժ-ի բնագրի։

Պատմվածքի տպարանային ձեռագիրը բաղկացած է 24 փոքրադիր (18,5×22,8 սմ.) թերթերից, յուրաքանչյուրի մեկ էջին բնագիրը մաքուր գրված է հեղինակի ձեռքով, մանուշակագույն թանաքով։ Թուղթը սպիտակ, փայլուն, քիչ դեղնած։ Մեկ էջում կա 33—35 տող։ էջերի վերին ձախ մասում՝ էջակալում կապույտ մատիտով՝ 1—24։ Վերջում հեղինակի ձեռքով և նույն թանաքով գրված է թվական՝ 1924, 9. III, ապա կապույտ մատիտով վրան գիծ է քաշված (որպեսզի չշարվի)։

Այդ թվականը երկը գրելու (հավանաբար ավարտելու) օրն է ցույց տալիս։ 1924-ի մարտին Բակունցը բնակվում էր Երևանում, սակայն պատմվածքի նյութը գրողը բերել էր Գորիսից, որտեղ Խորհրդային Հայաստան վերադառնալուց հետո նա բնակվել է 1923 թ. հուլիսից մինչև նույն թվականի աշունը։ Այդ ժամանակամիջոցում Բակունցը պետք է լսած լիներ այն պատմությունը, որն օգտագործված է «Վանդունց Բաղին» պատմվածքում։ Ավելի վաղ դա լինել չէր կարող, քանի որ գրողը 1917 թ. աշնանից մինչև 1923 թ. չի եղել հայրենի քաղաքում, մինչդեռ պատմվածքի հիմքում դրված գլխավոր դեպքը կատարվել է 1918—1920 թթ. ժամանակամիջոցում։

Պատմվածքի նախակերպարներն են Գորիսի նախրապան Շաբաղաթը, նրա կինը և որդին՝ Հաբուղը։ Վերջինս ցարական բանակից վերադառնալով (հավանաբար 1918 թվականին), մասնակցել է ընդհատակյա հեղափոխական շարժմանը և գնդակահարվել։ Իրական փաստերի համեմատ գրողը մի շարք փոփոխություններ է մտցրել պատմվածքում։ Նախ Շաբաղաթը դարձել է Բաղի (որ ավելի դյուրարտասանելի է), ապա դեպքերի գլխավոր վայրը Գորիսից տեղափոխված է հարևան գյուղերից մեկը (հավանաբար՝ Երիցեն)։ Բակունցն ուզել է շեշտել Բաղու լիակատար նահապետական գյուղացի՝ մբճածոցի լինելը՝ խոնարհ, հեզ բնավորությամբ։ Գորիսը պատմվածքում ներկայացված է իբրև մոտակա քաղաք, որտեղ և գնդակահարում են Բաղու որդուն։

Այնուհետև, Հաբուղին Բակունցը դարձրել է ծնողների միակ զավակը, այնինչ իրականում նա քույր է ունեցել. հասկանալի է, որ Հաբուղին լրիվ միայնակ ներկայացնելով, հեղինակն ավելի ողբերգական է դարձրել պատմվածքի ավարտը՝ սրել Բաղու և նրա կնոջ հոգեկան տառապանքը որդու գնդակահարության առիթով։

Այնուհետև, հայտնի է, որ իրական Հաբուքը դրամով թուղթ խաղալու սովո-

ռույթ է ունեցել և թղթախաղի առիթով մարդ է սպանել։ Բակունցին, բնականաբար, իրական Հաբուզի այս հատկությունը պետք չէր՝ հերոսական դրական կերպար ստեղծելու համար։

էջ 29, տող 11—12. *տեր-Գևորգը, որ սաղմոս ու շարական անգիր գիտեր։* *Սաղմոս* ասելով հասկանում են Հին կտակարանի (Աստվածաշունչ) «Սաղմոսների գրքի» (Սաղմոսարանի) մեջ տեղ գտած հին հրեական հոգևոր երգերը, որոնցից յուրաքանչյուրը *սաղմոս* է կոչվում: *Շարական* կոչվում են հին հայկական հոգևոր երգերը, որոնք միջնադարում ամփոփվում էին շարակնոցներում:

## *ԱՔԱՐՈՒՄ*

*(էջ 39)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 1 օգոս., № 177, ՏՄՕ, Մժ:**
**Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի:**

*Առաջին անգամ հրապարակվել է 1926 թ. օգոստոսի 1-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա 1927 թ. հեղինակային մասնակի խմբագրմամբ տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ, այնուհետև՝ 1955 թ. Երկերի երևանյան միհատորյակում, 1956 թ.՝ «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության 2-րդ հատորում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*Տպարանային մեքենագիրը բաղկացած է 7 փոքրադիր (18,2×22,5 սմ.) թերթերից (մեծադիր թերթերը ծալված են, ապա երկու մասի բաժանված)։ Յուրաքանչյուր թերթիկի մեկ էջում կա 20 տող (միջին հաշվով)։ Մեքենագրությունը՝ մանուշակագույն է։ Թուղթը՝ սպիտակ, փայլուն։ Էջերի վերին ձախ մասում կա ընդհանուր էջակալում կապույտ մատիտով՝ 26—33։ Վերջում թվական չկա։*

Աքար *հավանաբար* Ագարակ *անվան բարբառային ձևն է. այս (Ագարակ) անունով Սյունիքում մի քանի գյուղեր են եղել։*

## *ԱՅՈՒ ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ...*

*(էջ 46)*

Բնագրային աղբյուրներ՝ ՏՁ, Մժ:
Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի:

*Առաջին անգամ հրապարակվել է «Մթնաձոր» ժողովածուի մեջ, ապա 1955 թ.՝ Երկերում, 1956-ին՝ «Ամբողջական գործը» ժողովածուի (Բեյրութ) 2-րդ հատորում, 1964-ին Երկերի 1-ին հատորում։*

*Պատմվածքի տպարանային ձեռագիրը բաղկացած է 18 փոքրադիր (17×23 սմ.) թերթերից (մեծադիր թերթերը բաժանված են երկու մասի). յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը գրված է հեղինակի կողմից, մանուշակագույն թանաքով։*

Թուղթը՝ սպիտակ, փայլուն։ Մեկ էջում կա 33 տող (միջին հաշվով)։ Էջերի վերին ձախ մասում՝ ընդհանուր էջակալում կապույտ մատիտով, նախ՝ 25—42, ապա ջնջված նույն մատիտով և նորից համարակալված՝ 34—51։ Վերջում հեղինակի ձեռքով գրված է թվական՝ 6. IX. 25, ապա վրան գիծ է քաշված կապույտ մատիտով (որպեսզի չշարվի)։

Թվականը ցույց է տալիս պատմվածքը գրելու (հավանաբար ավարտելու) օրը։

Այս պատմվածքը իր հակապատերազմական բնույթով, ավելի ճիշտ՝ ամեն տեսակ պատերազմը մերժելու հակումով, համահնչյուն է հեղինակի «Աշուղը» «Անտառում» և «Աղոթք» ստեղծագործություններին, որոնք հրապարակվել են 1918 թ. («Ժողովուրդ», № 13, 15, 27), երբ Բակունցը գործող բանակում 1918 թվականի գարունը անցկացրած, նոր էր զորացրվել և ուժեղ արտահայտված հակապատերազմական տրամադրություններ ուներ։

Պատմվածքը, ինչպես ձեռագրի թվականն է ցույց տալիս, գրված է Գորիսում (1925 թ. Բակունցը բնակվել է հայրենի քաղաքում)։ Պատկերված է 1914—1918 թվականների զանգեզուրյան մի գյուղակ, հավանաբար նկատի է առնված Երիշենը, իսկ քաղաքը, որտեղ պատմվածքի գլխավոր հերոսը՝ Պետին «մի անգամ էր եղել», Գորիսն է։ Անկասկած, Պետին ունեցել է նախակերպար, և ամբողջ պատմվածքը՝ նախապատմություն։

Պատմվածքում օգտագործված են նաև 1904—05 թվականներին Զանգեզուրում ռոնկած՝ խոշոր եղջերավոր անասունների համաճարակի հետ առնչված իրադարձությունները, երբ հարյուրավոր անասուններ մահացան կամ այրվեցին իշխանությունների կողմից։

## ԾԻՐԱՆԻ ՏԱՓ

### (էջ 63)

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 16 հուն, № 140, ՏՄՕ, Մժ։

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 66, տող 28. Մժ-ում և ՏՁՕ-ում՝ *խղճությամբ*—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ *խեղճությամբ*։

էջ 70, տող 2, Մժ-ում և ՏՁՕ-ում՝ *իրենց*—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ *իրենք*։

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում 1926 թ. հունիսի 16-ին։ Այնուհետև տեղ է գտել՝ 1955 թ. Երկերում, 1956-ին բնության «Ամբողջական գործի» 2-րդ հատորում, 1964 թ. Երկերի առաջին հատորում։

Հեղինակի կենդանության ժամանակ կրճատումներով տպագրվել է նաև դասագրքերի մեջ, ինչպես, օրինակ, 1927-ին՝ Ս. Հակոբյանի կազմած «Կարմիր արև. 5-րդ տարի» դասագրքում, 1928 և 1929 թթ. նույն դասագրքի վերամշակված հրատարակությունների մեջ, 1930-ին Ա. Բակունցի կազմած «Կարմիր արև» դասագրքում (ուսմ. 5-րդ տարի), 1933-ին «Հայոց լեզվի դասագրքում» (Դ. տարի)։

Տպարանային մեքենագիր օրինակը բաղկացած է 9 փոքրադիր (18,2×22,5 սմ.) էջերից, որոնք ծալված և չկտրված մեծադիր (22,5×36,4 սմ.) թերթերից են գոյացել. վերջին 3 էջերը կտրված են։ Յուրաքանչյուր էջում կա 20 տող (միջին հաշվով)։ Մեքենագրությունը՝ մանուշակագույն։ Թուղթը բարակ, փայլուն, շատ դեղնած։ Էջերի վերին ձախ մասում կա ընդհանուր էջակալում կապույտ մատիտով՝ 52—59։ Վերջում թվական չկա։

Պատմվածքը գրվել է 1926 թ. մայիսի վերջին կամ հունիսի սկզբին։

Պատմվածքի համար նյութ է ծառայել Սիսիանի շրջանի Լոր և Շենթաղ (այժմ Լեռնաշեն) գյուղերի միջև եղած հողային հինավուրց վեճը և նրա լուծումը Բակունցի կողմից։

Լոր գյուղում Բակունցը շուրջ 7 ամիս ուսուցիչ է աշխատել 1915—16 ուսումնական տարում, նա ծանոթ է եղել թե՛ այդ գյուղի և թե հարևան Շենթաղի հողային ու, առհասարակ, տնտեսական վիճակին։

1926 թ. մարտին Գորիսից Երևան տեղափոխվելով՝ Բակունցը աշխատանքի է անցել Հողժողկոմատի հողբաժնում և շուտով գործուղվել Զանգեզուր՝ հողաշինարարական որոշ հարցերի կապակցությամբ։ Նրան հատկապես հանձնարարված էր լուծել հիշյալ գյուղերի հողային վեճը, որը հետևյալն էր։ Երկու գյուղերի միջև գտնվում է Տորքար կոչվող մոտ 3000 քմ տարածությամբ սարահարթը (Տորքար անվան պատճառն այն է, որ սարահարթում եղած մեծ քարի տակից հանքային ջուր է բխում)։ Գյուղերից յուրաքանչյուրն այդ արոտատեղին իրենն է համարել, և անհիշելի ժամանակներից նրանց միջև տեղի են ունեցել վեճեր, որոնք երբեմն ավարտվել են մահակակռիվներով։ Հաղթող գրեթե միշտ դուրս են եկել շենթաղցիները։ 1923 թ. Զանգեզուրի գավգործկոմը որոշել է սարահարթի մեծ մասը հանձնել սակավահող Լորին։ Բայց շենթաղցիները չեն համաձայնել որոշմանը, և վեճերը շարունակվել են։

Բակունցին, որպես Ալեքսանդր վարժապետի, լավ էին ճանաչում թե՛ Լորում, թե՛ Շենթաղում։ Նրա նկատմամբ գյուղացիների ունեցած հարգանքը պատճառ է դառնում, որ հարգվի Բակունցի ընդունած որոշումը։ Նա կարողանում է շենթաղցիներին համոզել, որ հողամասի հիմնական մասը պետք է հանձնվի Լորին, որպես ավելի սակավահող գյուղի։ «Մտածում էի, թե ի՞նչ ուժ ունի Ալեքսանդր վարժապետը, որ նրա առաջ շենթաղցիները ծպտուն չհանեցին, այլ ընդհակառակը սիրով հրավիրեցին և տարան իրենց գյուղը»,— հիշում է բանաստեղծ Հ. Սահյանը, որ ականատես է եղել վեճի լուծման իրադարձությանը[1]։

Այս եղելությունները «Միրանի տափ» պատմվածքում գեղարվեստական յուրովի արտացոլում են գտել։ Լոր և Շենթաղ գյուղերը երկում դարձել են Միր և Մրոց, իսկ վիճելի Տորքարը՝ Միրանի տափ։

Մրոց անունով բնակավայր հնում եղել է Լորի մոտ (տե՛ս «Մրոց» պատմվածքի 1-ին ծանոթագրությունը), այդ անվան հետ առնչված այժմ այնտեղ կա՝ Մըրցաղուզ, Մրցաջուր։ Բակունցը «Միրանի տափում» ձգտել է վերանալ Լորի ու Շեն-

1 «Գրական թերթ», 1959, № 43։

թաղի որոշակի հողավեճից, ներկայացնել ընդհանրապես հայ հին գյուղերին հատուկ հողային անպտուղ վեճերի բնորոշ մի պատկեր։ Մասամբ նաև դրանով է բացատրվում իրական տեղանուններից խուսափելը։

Միաժամանակ պատմվածքի մեջ հիմնականում ճիշտ է տրված երկու գյուղերի դիրքի նկարագրությունը՝ մեկը վերև, մյուսը՝ ցած, ճիշտ է, որ ցածի գյուղը՝ Միրը (Լոռը) ավելի աղքատ է եղել, ընդհանուր առմամբ ճիշտ է պատկերված նաև վիճելի հողամասը։

Թակունցի պատմվածքը երգիծական է, հեղինակը կատակով է խոսում հայ գյուղացու հողային մանրախնդրության մասին։ Ցույց է տալիս, թե ցարական պաշտոնյաները ինչպես են կարողացել օգտվել հայ գեղջուկների այդ թուլությունից և երկու գյուղերից էլ կաշառքներ կորզել։

Պատմվածքում խոսք չկա, որ քաղաքից եկած հողաչափը ինքը՝ Թակունցն է։ Խոսք չկա նաև այն մասին, որ նախքան պաշտոնական թուղթ ստանալը գյուղացիները գիտեին հողաչափի վճռի մասին։ Պատմվածքը վերջանում է նրանով, որ հողաչափը շաբաթից ավելի լինելով երկու գյուղերում, վերադառնում է, և ապա քաղաքից հայտնում են. «Միրանի տափն ամբողջովին տալ Միր գյուղին, որպես աղքատ և հողազուրկ գյուղի»։

Փոքրիկ թուղթը, որի վրա գրված էր այդ նախադասությունը, վստահություն չի ներշնչում հնուց վիճող ու կռվող գյուղերին։ Պատմվածքի վերջում Միրից պատգամավորներ են գնում քաղաք, խնդրում, որ իրենց տան Միրանի տափի միայն կեսը։

Իրականում Լոռի գյուղխորհրդի այն ժամանակվա նախագահ Ե. Հարությունյանն է խնդրել հողժողկոմատին «հավասարության համար» հողամասը կիսել երկու գյուղերի միջև։ Հեղինակն այս իրողությանն այլ գունավորում է տվել, ստեղծելով պատմվածքին գեղարվեստականորեն շատ հարմարվող վերջ։

Թակունցը հողաշինարարական հարցերին հաճախ է անդրադարձել իր հոդվածներում ու ակնարկներում, որոնցում հանդիպում ենք «Միրանի տափում» նկարագրվածի բնույթի այլ վեճերի, հայ գյուղացիների այն հոգեբանական հատկանիշներին, որոնք երևան են եկել անպտուղ հողային հակամարտությունների ժամանակ։ Ահա մի այդպիսի օրինակ. «Հողային վեճ կա, ավելի ճիշտը, մի ծառի հարց։ Ծառը երկուսի սահմանում է բուսել, արտի միջնակում։ Հին վեճ է. ամեն տարի նույն բանը կրկնվում է, երբ պատերը նորոգում են, փլվածը պատում։ Մեկն ասում է, թե՝ ծառն իմն է, մյուսն էլ՝ իմն է։ Չեն էլ ուզում ծառը կտրել, բայց այնքան պինդ են պատել ծառի շուրջը, որ ծառի բունը չի հաստանում։

Վեճին վերջ են տալիս, ծառը համարում դպրոցի սեփականություն։ Կողմերը մի պահ վարանում են, հետո համաձայնում.

— Թող ձեր ասածը լինի...» («Արտելիա»)։

Կարծես գործ ունենք «Միրանի տափում» նկարագրված վեճի վախճանի ավելի փոքր չափի մի տարբերակի հետ։

## Մ Ի Ր Հ Ա Վ

(*էջ 72*)

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 6 հուն., № 132, ՏՄՕ, Մժ, ՍՅՍժ։

Տպագրվում է ըստ ՍՅՍժ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 74, տող 27. ըստ ՍՅՍժ-ի՝ *Որպես եղեգ ճոճեց նրա դալար մարմինը*—ուղղված է՝ *Որպես եղեգ ճոճվեց նրա դալար մարմինը։*

էջ 76, տող 20. ՍՅՍժ-ի բնագրում՝ *քցեց*—ուղղված է *գցեց* (ըստ նույն ժողովածուի մեջ միևնույն բառի այլ գործածումների)։

էջ 79, տող 11, 16. ՍՅՍժ-ի, ԽՀ-ի, Մժ-ի բնագրերում՝ *զգուշ*—ուղղված է ըստ ՏՄՕ-ի՝ *զգույշ։*

*Առաջին անգամ հրապարակվել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1926 թ. հունիսի 6-ին, ապա՝ որոշ մշակմամբ, 1927 թ. տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ։ Ավելի արմատական վերամշակումից հետո 1933-ին պատմվածքը զետեղվել է «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ։ Հեղինակի կենդանության ժամանակ կրճատ տպագրվել է Մ. Մկրյանի և Լ. Վարդունու կազմած «Հայ գրականության քրեստոմատիայում» (10-րդ դաս. համար, Ե., 1934)։ Այնուհետև, 1955 թ. տեղ է գտել Բակունցի Երկերի երևանյան հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» բեյրության ժողովածուի Ա հատորում, 1959 թ.՝ «Եղբայրության ընկուզենիներ» ժողովածուի մեջ, 1960 թ.՝ «Սովետահայ գրականության ընտիր էջերում», 1962-ին «Ալպիական մանուշակ» վերնագիրը կրող գրքույկում, 1964-ին հեղինակի Երկերի 1-ին հատորում, 1969-ին «Ալպիական մանուշակ» ժողովածուի մեջ։ Մի շարք անգամ տպագրվել է պարբերական մամուլում (ինչպես՝ «Ավանգարդ» 1959, № 71, «Սովետական Հայաստան» ամսագիր, 1959, № 7 և այլն)։*

*1927 թվականից հետո, բոլոր դեպքերում «Միրհավը» տպագրվել է ըստ 1933 թ. տարբերակի։*

*«Մթնաձոր» ժողովածուի տպարանային մեքենագիրը բաղկացած է 9 փոքրադիր (18,2×2,5 սմ.) էջերից. դրանք միջից ծալված մեծադիր թերթերի էջեր են, մի քանիսը ծալված տեղից կտրված։ էջերի վերին մասում՝ ընդհանուր էջակալում կապույտ մատիտով՝ 77—85։ Վերջում թվական չկա։ Մնացած բնագրային հատկանիշներով այս մեքենագիրը համընկնում է «Աքարում», «Միրանի տափ» (տե՛ս ծանոթագր.) «Օրանջիա», «Մրոց» պատմվածքների տպարանային բնագրերին։*

*Ներկա հատորում («Այլ խմբագրումներ» բաժնում) «Մթնաձոր» ժողովածուի լույս ընծայումից հետո առաջին անգամ տպագրվում է պատմվածքի 1927 թվականի տարբերակը, որը թեև իր արժանիքներով ընդհանուր առմամբ զիջում է 1933-ի տարբերակին, բայց և ունի բակունցյան 1920-ական թվականների ոճին հատուկ մի շարք ուշագրավ հատվածներ, բացի դրանից, հետաքրքրական է հեղինակի ստեղծագործական զարգացումը դիտելու տեսակետից։ Իբրև օրինակ համեմատենք գլխավոր հերոսի՝ Դիլան դայու և անտառապահի հանդիպման տեսարանը երկու տարբերակներում։*

### ՎԵՐՋԻՆ՝ 1933 Թ. ԽՄԲԱԳՐՈՒՄ

«Դիլան դային ափսոսանքով նայում էր արնոտ միրհավի ետևից, երբ հանկարծ, շատ մոտիկ լսեց ոտնաձայն։ Հետ նայեց, աչքերը զարմանքից լայնացան, և հրացանը բնազդմամբ ձեռքից վայր սահեց ծառի ետևը։

Անտառապահն էր աչքերը՝ կաս-կարմիր ածուխ…

Մոտեցավ, բղավեց, և մինչև ուշքի կգար, նրա մտրակը օդը ճեղքելով չափեց Դիլան դայու ուսը, մինչև թիակների ոսկրը, մրմուռը ծակծկեց, ինչպես եղինջի հարվածը բաց մսերի վրա։

Անտառապահը հարվածում էր նըրան և զայրանում, որ Դիլան դային փախցրել էր նրա զարկած միրհավը։

Անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ՝ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց՝ հուզմունքից հորանջում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թպրտում էր արնոտ միրհավը»։

### 1927 Թ. ՏԱՐԲԵՐԱԿ

«Դիլան դային բերանը բաց նայում էր արնոտ միրհավի ետևից, երբ հանկարծ շատ մոտ լսեց ոտնաձայն, ետ նայեց, աչքերը չռեց, հրացանը ձեռքից վայր ընկավ։

Յասաուլն էր, ածդահա, ռեխը՝ լայն, աչքերը՝ ջուխտ կրակ, տեղով մի զարզանդ… Մոտեցավ, բղավեց երեսին, ձեռքի մտրակով զարկեց ուսերին, մըտրակի ծայրը կպավ երեսին, քթին։ Ոտը գետնով տվավ, թքոտեց։

Շունը, յասաուլի որսկան շունը, մեկ նայում էր տիրոջ, մեկ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց անում, մեկ էլ սկսում հոտոտել թփերի մեջ, որտեղ քիչ առաջ ընկած էր միրհավն արնոտ։

Դիլան դայու լեզուն կապ էր ընկել, չկարողացավ խոսել։ Լեզու չգիտեր, յասաուլը ռուսերեն էր խոսում։ Լեզու իմանար էլ, նա պիտի լռեր, վախը կապել էր նրան»։

1927 թ. տարբերակի լեզվական-ոճական որոշ «կոշտությունները» 1933 թ. խմբագրմամբ մեղմված կամ վերացված են (օրինակ, բերված հենց առաջին պարբերությունում «բերանը բաց նայում էր» դարձել է «ափսոսանքով նայում էր», «աչքերը չռեց» դարձել է «աչքերը զարմանքից լայնացան»), և առհասարակ խոսքի գեղագիտական մակարդակը բարձրացել է վերջին խմբագրմամբ։ Սակայն և 1927 թ. տարբերակն էլ իր յուրահատուկ բույրն ունի, թեկուզ որոշ «կոշտություններով» հանդերձ և բնութագրական է գրողի այն շրջանի գրելակերպի համար։ Օրինակ, «որտեղ քիչ առաջ ընկած էր միրհավն արնոտ» խոսքը իր ետադաս մակդիրով (ընդգծել ենք) գրողի այդ շրջանի լեզվի կարևոր հատկանիշն է, որը նվազեց կամ հիմնականում վերացավ 30-ական թվականներին։ Կամ՝ 1927 թ. տարբերակում յասաուլին տրվող մակդիրները («ածդահա, ռեխը՝ լայն, աչքերը՝ ջուխտ կրակ, տեղով մի զարզանդ»), 1933-ի խմբագրմամբ մեղմված են (միայն ունենք՝ «աչքերը կաս-կարմիր ածուխ»), որով երկը թեև ընդհանրապես գեղագիտորեն շահել է, բայց և ակնառու է, որ 1927-ի այդ մակդիրները այն շրջանի բա-

կունցյան ոճի և գեղարվեստական մտածողության բնորոշ արտահայտությունն են։ Դժվար չէ նկատել, որ Դիլան դայու և անտառապահի (յասաուլի) հանդիպման տեսարանը նման է «Մթնաձոր» պատմվածքում Ավու և Պանինի հանդիպմանը, ընդ որում, «Միրհավի» այդ հատվածի 1927 թ. տարբերակը շատ ավելի է հիշեցնում «Մթնաձորի» (որի այդ թվականի տարբերակը վերջինն է) հիշյալ տեսարանը, ինչպես և նախապես զարհուրելի պատկերված յասաուլը՝ նույնքան զարհուրելի Պանինին։

«Միրհավը» գրելու ստույգ ժամանակը որոշելը դժվարանում է հետևյալ պատճառով։ «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ տեղ գտած պատմվածքների տակ հեղինակը գրել է տարեթվեր, որոնք ցույց են տալիս, թե երկը երբ է գրվել և վերամշակվել։ Եթե գրված է երկու տարեթիվ, առաջինը ցույց է տալիս երկը գրելու, երկրորդը՝ վերամշակելու տարեթվերը[1]։ «Միրհավի» վերջում գրված է 26—32, որ նշանակում է, թե պատմվածքը 1926 թվականին է գրվել։ Բայց կան այդ թվականը կասկածի ենթարկելու հանգամանքներ։ Առաջինն այն է, որ «Սև ցելերի սերմնացան» ժողովածուի մի ՛քանի թվականներ ակնհայտորեն սխալ են. օրինակ, ըստ այդ թվականներից մեկի «Ալպիական մանուշակը» հիմնական վերամշակման է ենթարկվել 1927-ին, որ դժվար է պատկերացնել, քանի որ այդ թվականին պատմվածքը երկու անգամ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում և «Մթնաձոր» ժողովածվում տպագրվել է (մասնակի տարբերություններով), և հնարավոր չէ, որ այդ նույն թվականին էլ հեղինակը պատմվածքը արմատական մշակման ենթարկած լինի մի նոր տպագրության համար (որը եղավ 1933-ին)։

1926-ը իբրև «Միրհավը» գրելու թվական կասկածի տակ առնելու ավելի լուրջ պատճառն այն է, որ Բակունցի կնոջ՝ Վարվառա Ջիվիչյանի վկայությամբ, ամուսինը «Միրհավ» պատմվածքը իրեն է մատուցել 1924 թ. մարտի 9-ին, իբրև ծննդյան օրվա նվեր։

Անկասկած է, որ պատմվածքի համար հիմք է ծառայել ինչ-որ իրողություն, ինչպես և Դիլան դային ու Սոնան ունեցել են իրական նախակերպարներ։

Բակունցի «Գավառական նամականի» ակնարկաշարի երրորդ ակնարկը (Մարտակոչ, 1925, № 89) կարծես որոշ տեղեկություն տալիս է «Միրհավի» նախակերպարի մասին։ Ակնարկը բաղկացած է երեք մասից, որոնցից երրորդում գլխավոր դերը կատարում է մի ծեր գյուղացի՝ Դիլան դայի անունով։ Նրա հետ միասին հեղինակը գիշերով անցնում է Ուզուն մեշա կոչվող անտառով և ապա

[1] Որ այդ տարեթվերից առաջինը ցույց է տալիս ոչ թե երկը առաջին անգամ տպագրելու, այլ՝ գրելու թվականը, երևում է հետևյալից. «Ալպիական մանուշակի» տակ գրված է 25—27։ Առաջին անգամ այս պատմվածքը տպագրվել է 1927 թ. հունվարին (ուրեմն 25-ը տպագրության թվականը չէ)։ «Խոնարհ աղջիկը» պատմվածքի տակ գրված է 26—28։ Այդ պատմվածքը առաջին անգամ տպագրվել է 1927 թ. փետրվարին։ Մնում է ենթադրել, որ առաջին դեպքում 25-ը, երկրորդում 26-ը երկը գրելու ժամանակն են ցույց տալիս։

գիշերում Ջեյվա գյուղում, նույն Դիլան դայու տանը։ Երկար զրուցում է նրա հետ։ Դիլան դային բնության ուժեղ զգացողություն ունի և սեր բնության նկատմամբ։ «Է՜, էս ճանապարհով հազար անգամ եմ անցել... Հրես մեռնելու եմ, համա աչքս մեջին կարոտ մնաց»,— ասում է նա անտառով անցնելիս։ «Օրեր տեսած, կյանքում եփված»,— այսպես է նա բնութագրված ակնարկում։ Եղել է չարքաշ աշխատավոր, զգացել է «սորաժնիկի» մորակի հարվածների «զորությունը» («որ մի քիչ եռանում էի պլետով էր տալիս»)։ Ինչպես տեսնում ենք, ընդհանրություններ կան այս Դիլան դայու և «Միրհավի» հերոսի միջև։ Եվ կարելի էր վստահ ենթադրություն անել, որ հենց «Գավառական նամականիում» նկարագրված Դիլան դային է եղել «Միրհավի» նույնանուն հերոսի նախակերպարը։ Ծերունին կարող էր իր կյանքի շատ դրվագների հետ Բակունցին պատմած լինել թերևս ամենակարևորի՝ Սոնայի նկատմամբ տածած սիրո, ինչպես նաև հնձանի դիպվածի, վիրավոր միրհավի ու սիրած էակի մահվան մասին։ Բակունցը ծերունի Դիլանի սիրո պատմությունը, նրա կյանքի այդ, թերևս, ամենապայծառ էջը ակնարկում կարող էր չներկայացնել և դարձնել պատմվածքի նյութ։ Այս ամենը կարելի էր գրեթե հավաստի համարել, եթե չլիներ Վ. Ջիվիջյանի վերոհիշյալ վկայությունը 1924 թ. մարտի 9-ի վերաբերյալ։ Ակնարկը «Մարտակոչում» տպագրվել է 1925 թ. ապրիլի 19-ին։ Միաժամանակ ակնարկից իմանում ենք, որ հեղինակը «Ուզուն մեշայով» Ջեյվա է գնացել ձմռան վերջին, գարնան ամենասկզբին, երբ դեռ ձյունը նստած էր («Ձյունը փայլում է լուսնի լույսի տակ»)։ Դա կարող էր փետրվարի վերջը լինել, և դրանից հետո հեղինակը կարող էր գրել «Միրհավը» ու մարտի 9-ին մատուցել կնոջը։ Միայն այս դեպքում պետք է ենթադրել, որ Վ. Ջիվիջյանի հիշողությունը մի տարով առաջ է գցել նվերն ստանալու օրը։

Վ. Ջիվիջյանը իր հուշերը մեզ մանրամասն շարադրել է 1959 թվականին։ Նրա հիշողությունը լավ էր պահպանել անցյալի բազմաթիվ դրվագներ՝ ճշգրիտ թվականներով։ Բայց և այնպես, «Միրհավին» վերաբերող հուշը այն ժամանակ ավելի քան 30 տարվա վաղեմություն ուներ. և եթե մարտի 9-ին ծննդյան օրվա առթիվ «Միրհավն» իբրև նվեր ստանալը կարելի է միանգամայն վստահելի հուշ համարել, ապա տարեթվի ստույգ լինելու վրա կարելի է, այնուամենայնիվ, կասկածել. գուցե այդ նվերը մատուցվել է 1925-ի մարտի 9-ին։ Այդ դեպքում Դիլան դայու նախակերպարի մասին վերոհիշյալ ենթադրությունը լիովին հիմնավոր կարող է համարվել։

էջ 72, տող 1 (և այնուհետև). *Միրհավ*—Փասիան թռչունի մի տեսակն է, որ տարածված է Զանգեզուրում։ Ղարաբաղի բարբառով (նաև Զանգեզուրի խոսվածքով) *մըրհավ* է արտասանվում. *միրհավ* հազվագյուտ գործածվող ձև է։

## *ՀԱՆԱՎԱՆՔ*

*(էջ 84)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 10 ապր., № 84, ՏՍՕ, Մժ։

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 86, տող 3. Ըստ ՏՄՕ-ի և Մժ-ի *լորձունքով*—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ *լորձունքոտ*։

էջ 88, տող 30. ըստ Մժ-ի՝ *ձորից հով կբերի*—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ *ձորից հովը կբերի*։

*Առաջին անգամ հրապարակվել է 1926 թ. ապրիլի 10-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում։ Ապա հեղինակային մասնավոր խմբագրմամբ 1927 թ. տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ։ Այնուհետև՝ 1955 թ. տպագրվել է Երկերի միհատորյակում, 1964-ին՝ երկհատորյակի առաջին հատորում։*

*Տպարանային մեքենագիրը բաղկացած է 6 փոքրադիր (18,2×22,5 սմ.) էջերից (դրանք մեծադիր թերթեր են երկու մասի բաժանված)։ Էջերի վերևում՝ ընդհանուր էջակալում կապույտ մատիտով՝ 87—92։*

*Պատկերված է Հովհաննավանքը (*Հաճավանք *բարբառային արտասանությունն է), որը գտնվում է Արագածի լանջին, համանուն գյուղի մոտ (Աշտարակի շրջան)։ Հովհաննավանքի դիրքը այնպիսին է, ինչպես նկարագրված է պատմվածքում. Քասախի ժայռոտ ձորի աջ քարափին վանքն, իրոք, որ խոյացել է վեր, նաև կարծես կախվել անդունդում գալարվող գետի սահանքների վրա։*

*Վանքի համալիրի մեջ մտնող բազիլիկ եկեղեցին կառուցվել է V դարում, ապա վերակառուցվել VI-ի մեջ։ Գլխավոր տաճարը կառուցվել է XIII դարում. իշխան Վաչե Վաչուտյանի օրոք և նրա ջանքերով։*

*Բակունցը պատմվածքում փաստերի որոշ «հարմարեցում» է կատարել։ Գրելով «...բարձր ժայռերի գլխով անցավ նախարարը և որոշեց կառուցել մի հոյակապ տաճար»,— ըստ երևույթին նկատի ունի Վաչե իշխանին (գուցե և Քուրդ Վաչուտյան իշխանին, որ նույն վայրում մի ժամատուն է կառուցել տվել)։ Բայց և ավելացնելով, թե՝ «քարափի գլխով նախարարը յոթերորդ դարում անցավ...»— գրողը, ըստ երևույթին, նկատի է ունեցել Հովհաննավանքի հին կառույցները, որոնք Վաչուտյանների հետ առնչություն չունեն։ Ավելի նոր ժամանակի փաստը «հարմարեցված» է հին ժամանակին. եթե հայտնի է, որ XIII դարում իշխանը որոշել է Քասախի ափի ժայռերին տաճար կառուցել և կատարել է իր որոշումը, ապա Հովհաննավանքի հնագույն տաճարը նույնպես կարող էր կառուցվել մի նախարարի, կամ, ինչպես հեղինակն է գրում, մի եպիսկոպոսի որոշմամբ (նշենք, որ հեղինակի ակնարկած VII դարը նույնպես ստույգ չէ, իրականում, ինչպես ասվեց, V—VI դարերին են վերաբերում Հովհաննավանքի հնագույն շինությունները)։*

*Հովհաննավանքի տարածքում ծառեր տնկելու և բանջարանոց մշակելու պատմությունը, ինչպես և դրա արգելումը պետության կողմից իրողություններ են, որոնց առնչվել է Բակունցը իր հողաշինարարական աշխատանքների ժամանակ։*

էջ 84, տող 2 (նաև ներքև) *Քասախ*—Հայաստանի գետերից, որ սկիզբ է առնում Փամբակի լեռների արևմտյան մասից, հոսում Արագածի լանջերով, ապա Արարատյան դաշտով հասնում մինչև Արաքս:

էջ 84, տող 11. *Կարդան շարական ու սաղմոս*—տե՛ս «Վանեցունց Բաղին» պատմվածքի ծանոթագրությունը:

էջ 86, տող 12. *Արայի լյառը*—լեռ Քասախ գետից ձախ, Արագածից հարավ-արևելք:

## *ԳՅՈՒՂԲԱՀԱՐԻ ՀԱՄԱՐ*

*(էջ 90)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1925, 13 դեկտ., № 284, Մծ:**

Տպագրվում է ըստ Մծ-ի բնագրի: Ուղղում.

**էջ 92, տող 11. Մծ-ի և ԽՀ-ի բնագրերում՝** *զգուշ*—**ուղղել ենք՝** *զգույշ:*

*Առաջին անգամ հրապարակվել է 1925 թ. դեկտեմբերի 13-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում: Ապա հեղինակային մասնակի խմբագրումներով՝ 1927-ին «Մթնաձոր» ժողովածուի մեջ: Երրորդ անգամ տպագրվել է 1955 թ. Երկերի միհատորյակում, ապա 1964 թ. Երկերի երկհատորյակի 1-ին հատորում:*

*«Մթնաձոր» ժողովածուի համար իբրև պատմվածքի տպարանային բնագիր ծառայել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի կտրոնը, որի վրա կան մուգ-մանուշակագույն թանաքով հեղինակի արած խմբագրումները և ընդհանուր էջակալման թիվը՝ գրված կապույտ մատիտով՝ նախ 75, որ ջնջված է, փոխարինված 93-ով:*

էջ 90, տող 17—19. *Պատահել է ճիշտ այնպես, ինչպես մանկական հեքիաթումն է գրված. «Երկինքը փուլ եկավ, մի կտորն էլ պոչիս ընկավ»*—նկատի ունի «Աշխարհի կործանումը» հեքիաթը, որը հավանաբար Հովհ. Թումանյանն է մշակել: Այդ հեքիաթը տպագրված է «Լուսաբերում» (տե՛ս «Լուսաբեր» Ա տարի: Կազմեցին Ստ. Լիսիցյան, Հ. Թումանյան, Լ. Շանթ, Թիֆլիս, 1909, էջ 49—51): Ահա հեքիաթի սկիզբը.

Լինում է, չի լինում մի ճուտիկ-ճուտիկ:

Էս ճուտիկ-ճուտիկը մի օր ծածուկ մտնում է դրացու պարտեզը, որ քչուչ անի:

Մեկ էլ հանկարծ թփից մի վարդ է պոկվում, ընկնում պոչին:

Ճուտիկ-ճուտիկը վախեցած դուրս է փախչում: Վազում է, վազում հասնում է Հավիկ-մարիկին:

— Վա՜յ, Հավիկ-մարիկ,— կանչում է հեռվից,— երկինքը փուլ է գալիս:

— Ա՜, ճուտիկ-ճուտիկ, էդ ո՞րտեղից իմացար,— հարցնում է Հավիկ-մարիկը:

— Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ»:

էջ 91, տողեր 8—9

*Գէնա բահար, այլի բահար,*
*Այլի կուտան սիրոյ խաբար...*

Հովհաննես Թլկուրանցու մի տաղի սկիզբն է. Քառատողի հաջորդ տողերն են.

*Ծով-ծով աչեր և լուս բնար,*
*Ունքն է կեռեր քան ըղկամար։*

(Հովհաննես Թլկուրանցի, Տաղագիրք, Երուսաղեմ, 1958, էջ 19, նաև՝ Տաղեր, Երևան, 1960, էջ 157)։

էջ 92, տող 12—13. *«ելանեն, լեռնանան և իջանեն դաշտանան»*— արտահայտություն Սաղմոսարանից (Աստվածաշունչ ՃԴ սաղմոս, տողեր 8—9) ամբողջ նախադասություն է՝ *«Ելանեն լեռնանան և իջանեն դաշտանան ի տեղի յոր հաստատեցեր զնոսա»*։

## *ՄԻՆԱ ԲԻԲԻՆ*

*(էջ 97)*

Բնագրային աղբյուրներ՝ ՏԶ, Մձ.

Տպագրվում է ըստ Մձ-ի բնագրի։ Ուղղում.

էջ 104, տող 18. Մձ-ի բնագրում՝ *աշխուժ*—ուղղված է ըստ ՏԶ-ի՝ *աշխույժ*։

*Առաջին անգամ տպագրվել է ռուսերեն, «Զարյա Վոստոկա» օրաթերթում (Թիֆլիս), 1925 թ. նոյեմբերի 5-ին (№ 1021)[1]։ Ապա 1927 թ. տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածուի մեջ։ Պատմվածքի՝ «Զարյա Վոստոկա» լրագրում տպագրված ռուսերեն թարգմանության և «Մթնաձոր» ժողովածուի մեջ տեղ գտած հայերեն բնագրի բովանդակությունների միջև որոշ տարբերություններ կան։*

*Ռուսերեն տարբերակը զետեղված է հատորիս «Այլ խմբագրումներ» բաժնում։ Թարգմանիչն անհայտ է։ Պարզ նկատվում է, որ թարգմանությունը հեղինակը չի կատարել. ստույգ չեն թարգմանված որոշ հատվածներ, ճիշտ չեն տառադարձված* Անժիկ *և* Ավան ամի *անունները (առաջինը՝* Онжик, *երկրորդը՝* дядя Ован*) և այլն։ Առհասարակ թարգմանությունը որակյալ չէ, բակունցյան խոսքն անհաջող է վերարտադրված ռուսերեն։*

*Պատմվածքի տպարանային ձեռագիրը նույնական է «Մթնաձոր» ժողովածուի տպագիր բնագրի հետ։*

*Այնուհետև, «Մինա Բիբին» տեղ է գտել գրողի երկերի 1955 թ. հրատարակության մեջ, ինչպես և Երկերի 1964 թ. հրատարակության առաջին հատորում։*

*Տպարանային ձեռագիրը բաղկացած է 13 փոքրադիր (17,5×23 սմ.) թերթերից, յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը մաքուր գրված է հեղինակի ձեռքով, մանուշակագույն թանաքով։ Թուղթը՝ սպիտակ, փայլուն, քիչ դեղնած։ Մեկ էջում կա 29—32 տող, էջերի վերևում՝ ընդհանուր էջակալում կապույտ մատիտով, նախ՝ 61—73, որոնք ջնջված են, փոխարինված նոր համարակալմամբ՝ 94—106։ Վեր-*

---

*[1] Մեր որոնումները ժամանակի պարբերականներում այս պատմվածքի հայերեն բնագրի հրապարակումը գտնելու ուղղությամբ ապարդյուն անցան։ Այնուամենայնիվ, չենք բացառում նման հրապարակման (նախքան «Մթնաձոր» ժողովածուի լույս տեսնելը) հնարավորությունը։*

*չում հեղինակի ձեռքով գրված է թվական՝ 3.1. 25 թ., որի վրա կապույտ մատիտով գիծ է քաշված (որ չշարվի)։*

*Թվականը նշում է պատմվածքը գրելու (հավանաբար ավարտելու) օրը։ 1925 թ. Բակունցը բնակվել է Գորիսում, պատմվածքը գրել է հայրենի քաղաքում և փոստով ուղարկել Թիֆլիս տպագրության։ Որ թվականին է գրված (արտագրված) տպարանային ձեռագիրը, դժվար է ասել։ Նրա թուղթը, թանաքի գույնը նույնն են, ինչ «Ալյու սարի լանջին» պատմվածքի տպարանային ձեռագրինը (տե՛ս համապատասխան ծանոթագրությունը)։*

## *«ԽԱՂԼԱՑԱՎ»*

*(էջ 107)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1925, 19 նոյ., № 263, Մժ:**
**Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի:**

*Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, 1925 թ. նոյեմբերի 19-ին, ապա՝ 1927 թ. «Մթնաձոր» ժողովածուի մեջ, 1955-ին՝ Երկերի միհատորյակում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*«Մթնաձոր» ժողովածուի համար իբրև տպարանային բնագիր է ծառայել լրագրային կտրոնը, որի վրա կան հեղինակի ձեռքով մուգ-մանուշակագույն թանաքով արված խմբագրումներ։ Կապույտ մատիտով դրված է ընդհանուր էջակալման թիվը. նախ՝ 94, որ ջնջված է, փոխարինված՝ 10-ով։*

## *ՋՈՐԲԱՆ*

*(էջ 113)*

**Բնագրային աղբյուրներ՝ Մ1925, 3 հոկ., № 227, Մժ:**
**Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի:**

*Առաջին անգամ հրապարակվել է «Մարտակոչում» 1925 թ. հոկտեմբերի 3-ին, ապա Հ. Սուրխաթյանի կազմած «Հայ գրականություն։ Արևելահայ» ժողովածուի մեջ (Երևան, 1926)։ Այնուհետև, 1927 թ. տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածվում։ 1933 թ. կրճատ տպագրվել է «Հայոց լեզվի դասագրքում» (Դ տարի)։ 1955 թ. տեղ է գտել Երկերի միհատորյակի մեջ, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*«Մթնաձորի» մեջ պատմվածքը շարվել է «Մարտակոչից» հանված լրագրային կտրոնից։ Վրան կապույտ մատիտով դրված է էջահամար. նախ՝ 43, որ ջնջված և փոխարինված է 25-ով։*

**էջ 119, տող 30—էջ 120, տող 4. Արևելյան առակ, որի մի տարբերակն օգտագործել է Լ. Տոլստոյն իր հայտնի «Ինչքան հող է պետք մարդուն» երկի մեջ:**

## *Օ Ր Ա Ն Ջ Ի Ա*

*(էջ 121)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 20 մայիսի, № 117, ՏՄՕ, Մժ։

*Առաջին հրապարակումը՝ 1926 թ. մայիսի 20-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա 1927 թ. տպագրվել է «Մթնաձորում»։ Կրճատումներով տեղ է գտել մի շարք դասագրքերի մեջ («Կարմիր արև», 5-րդ տարի, Երևան 1927, «Կարմիր ուղի. հայերենի աշխատանքի քրեստոմատիա», Երևան, 1929, «Կոլեկտիվ ուղի», Երևան, 1930, 1931, «Սոցշինարար», Երևան, 1932 և այլն)։ Այնուհետև տպագրվել է հեղինակի երկերի 1955 թ. հրատարակության մեջ, 1959 թ. «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում (№ 8), 1964 թ.՝ Երկերի առաջին հատորում։*

*Տպարանային մեքենագիրը բաղկացած է 7 փոքրադիր էջերից, վերևում կապույտ մատիտով ընդհանուր էջակալում՝ 108—114։ Վերջում թվական չկա։ Բնագրային մյուս հատկանիշները նույնն են, ինչ «Ծիրանի տափ» (տե՛ս ծանոթագրութ.), «Միրհավ», «Հանավանք», «Մրոց» պատմվածքների տպարանային բնագրերինը։ Պատմվածքում նկարագրվածը Երիշեն գյուղն է, մոտակա քաղաքը՝ Գորիսը։*

Էջ 121, տող 1. *Օրանջիա*—Այս անունը հնարավոր է, որ ռուսերենի միջոցով Հայաստան եկած ֆրանսերեն *orangerie* (ռուս.՝ оранжерея) բառի (նշանակում է ջերմոց, բույսերի և ծաղիկների աճեցման ջերմատուն) հայ բարբառային ձևափոխումը լինի։ Պատմվածքում նկարագրված Օրանջիա ձորակը բնական ջերմոց է հիշեցնում։

## *Մ Ր Ո Ց*

*(էջ 127)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 30 մայիսի, № 126, ՏՄՕ, Մժ։
Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի։

*Առաջին անգամ հրապարակվել է 1926 թ. մայիսի 30-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա՝ 1927 թ. «Մթնաձոր» ժողովածուի մեջ։*

*Հեղինակի կենդանության ժամանակ կրճատված տեղ է գտել դասագրքերի մեջ (ինչպես՝ Հ. Սուրխաթյանի «Կարմիր արև։ 7-րդ տարի» դասագրքում Երևան, 1928, Տ. Վանյանի «Կոլեկտիվ ուղի» ձեռնարկում, Երևան, 1930)։ Ապա տպագրվել է Երկերի 1955 թ. հրատարակության մեջ, 1959 թ.՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում (№ 8), 1964 թ. Երկերի առաջին հատորում։*

*Տպարանային մեքենագիրը բաղկացած է փոքրադիր 7 էջերից, որոնց վերևում կա ընդհանուր էջակալում, արված կապույտ մատիտով՝ 116—122։*

էջ 127, տող 1 (և այնուհետև). *Մրոց*—Այս անունով գյուղ 1920-ական թթ. Զանգեզուրում չի եղել: Նախկինում *Մրուց* անունով գյուղ եղել է Սիսիանի շրջանում (տե՛ս Ս տ ե փ ա ն ն ո ս Օ ր բ ե լ ե ա ն, Պատմութիւն նահանգին Սիսական, *գլ. ՀԴ*): Հավանաբար այդ լքված գյուղի անունն է Բակունցն օգտագործել այս, «Ծիրանի տափ», «Եվ քառակը թույլ տվավ իրեն» պատմվածքներում:

էջ 131, տող 4. *տրիեր*—սերմազտիչ մեքենա (*տրիեր* ֆրանսերեն նշանակում է զտիչ):

էջ 132, տող 5. «*Made in U. S. A.*»— պատրաստված է ԱՄՆ-ում (մակնիշ ամերիկյան արտադրանքների վրա):

## *ՄԹՆԱՁՈՐԻ «ՁԱՐԿԸ»*

*(էջ 133)*

Բնագրային աղբյուրներ՝ ՏՁ, Մձ:
Տպագրվում է ըստ Մձ-ի բնագրի:

*Առաջին անգամ տպագրվել է 1927 թ. «Մթնաձոր» ժողովածուի մեջ[1], ապա տեղ է գտել Երկերի 1955 և 1964 թթ. հրատարակություններում (վերջինի 1-ին հատորում)։*

*Տպարանային ձեռագիրը բաղկացած է 21 փոքրադիր (17×23 սմ.) թերթերից, որոնց յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը մաքուր գրված է հեղինակի ձեռքով՝ մուգ-մանուշակագույն (սևավուն) թանաքով։ Թերթերը պոկված են տետրից. սկզբի 19 էջը՝ միտողանի, վերջի 2-ը՝ քառակուսի։ Մեկ էջում (միտողանի) գրված է 21 տող։ Էջերի վերևի ձախ և աջ անկյուններում կա առանձին համարակալում (2-րդ էջից) ձեռագրի թանաքով՝ 2—21, ապա կապույտ մատիտով գրված ընդհանուր էջակալում՝ 123—143, Վերջում թվական չկա, կա* Ակսել *ստորագրությունը, որի վրա կապույտ մատիտով գիծ է քաշված (որ չշարվի)։*

*Կարելի է ենթադրել, որ տպարանային այս բնագիրը հեղինակը պատրաստել է որևէ պարբերականի ուղարկելու նպատակով և ոչ իր անդրանիկ ժողովածուի համար. դրա ապացույցն են* Ակսել *ստորագրությունը և էջերի առանձին (սկզբնական) համարակալումը։ Հետագայում հեղինակը այդ ձեռագիրը օգտագործել է՝ պատմվածքը «Մթնաձոր» ժողովածուի մեջ տպելու համար։*

*Կարելի է ենթադրել, որ պատմվածքի հերոսուհու՝ ընկեր Ասյայի նախակերպարը եղել է հեղինակի ավագ քույրը՝ Աննան, որը 1920-ական թվականներին Զանգեզուրի գյուղական կանանց մեջ աշխատանք էր տանում։*

---

1 *Ժամանակի պարբերականներում նախնական հրապարակում գտնելու ուղղությամբ մեր կատարած որոնումները անարդյունք մնացին։*

## ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ

(*էջ 145*)

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1927, 1 փետր., № 24, 2 փետր., № 25, ՏԶ, ՄԺ, ԱՑԱԺ:

Տպագրվում է ըստ ԱՑԱԺ-ի: Կատարված ուղղումները.

էջ 146, տողեր 26—27, ըստ ԱՑԱԺ-ի՝ *Հարկավոր էր քաղաքից հեռանալ, միաժամանակ չերևալ այնտեղ.* ուղղված է ըստ ՄԺ-ի՝ *Հարկավոր էր քաղաքից հեռանալ, միաժամանակ չերևալ այնտեղ։*

էջ 150, տող 13. ԱՑԱԺ-ի բնագրում՝ *կայծաքարով*—ուղղված է ըստ ՄԺ-ի բնագրի և ՏԶ-ի՝ *կայծքարով*:

էջ 156. տող 20. ԱՑԱԺ-ի բնագրում՝ *աշխուժ*—ուղղված է *աշխույժ*։

էջ 158, տող 24. ԱՑԱԺ-ի, ՏԶ-ի, ՄԺ-ի բնագրում *զգուշ*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *զգույշ*:

էջ 160, տող 7. ԱՑԱԺ-ի բնագրում՝ *թռչուններին էին նման*—ուղղված է՝ *թռչունների էին նման* (ՄԺ-ում՝ *ոչխարի էին նման*,—ն հոդ չկա):

*Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1927 թ. փետրվարի 1-ի և 2-ի համարներում, ապա 1927 թ. հեղինակային որոշ մշակումից հետո տեղ է գտել «Մթնաձոր» ժողովածվում։ Ավելի արմատական վերամշակումից հետո 1933-ին տպագրվել է «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ։ 1938 թ. տեղ է գտել հեղինակի «Պատմվածքներ» ժողովածուի փարիզյան հրատարակությունում։ 1955 թ. տպագրվել է Երկերի երևանյան հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» ժողովածուի (Բեյրութ) Ա հատորում, 1959 թ.՝ «Եղբայրության ընկուզենիներ» ժողովածուի (Երևան) մեջ, 1964 թ.՝ երկերի երևանյան երկհատորյակի 1-ին հատորում, 1969 թ.՝ «Ալպիական մանուշակ» ժողովածվում (Երևան)։*

*«Մթնաձոր» ժողովածուի տարբերակի տպարանային ձեռագիրը բաղկացած է 15 փոքրադիր (17,3×23 սմ.) թերթիկներից. յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը մաքուր արտագրված է հեղինակի ձեռքով. թանաքը մանուշակագույն։ Թուղթը հասարակ, շատ դեղնած։ Մեկ էջում կա 39—40 տող, էջերի վերևի ձախ անկյունում՝ առանձին համարակալում (երկրորդ էջից)՝ 2—15։ Ձեռագրի թանաքով, ապա մանուշակագույն մի այլ թանաքով կա նաև ընդհանուր համարակալում՝ 144—158։ Վերջում թվական չկա։*

*Առանձին էջակալման առկայությունը, ինչպես և թղթի տարբերությունը ժողովածուի մյուս բոլոր տպարանային բնագրերի թղթից՝ ենթադրել են տալիս, որ հեղինակը այս բնագիրը նախապես «Մթնաձոր» ժողովածուի համար չի պատրաստել։*

*«Խոնարհ աղջիկը» պատմվածքի՝ «Մթնաձորում» հրապարակված տարբերակը*

գրված է Այլ խմբագրումներ բաժնում, նրա մեջ կատարված մասնավոր ճշգրտումները նշված են համապատասխան ծանոթագրության մեջ։

«Խոնարհ աղջիկը» Բակունցը գրել է 1926 թվականին։ Այն գրելու ազդակ է հանդիսացել նույն թվականի գարնանը հեղինակի կատարած այցելությունը Սիսիանի շրջանի Լոր գյուղը։

Հողժողկոմատի գործուղմամբ հողային վեճեր կարգավորելու համար Լոր և հարևան գյուղեր Բակունցի կատարած այդ ուղևորության մի արդյունքն էլ եղել է «Միրանի տափ» (տե՛ս ծանոթագրությունը) և «Խոնարհ աղջիկ» պատմվածքների ստեղծումը։ Այդ ուղևորությունը առիթ է տվել, որ հեղինակի հիշողության մեջ կենդանանան 10 տարի առաջ Լոր գյուղում նրա անցկացրած ամիսները։

Գեղարվեստական երկեր տարբեր եղելությունների օգտագործմամբ ստեղծելը առհասարակ բնորոշ է Բակունց արվեստագետին։ Ընդ որում, այդ օգտագործումը տարբեր չափեր է ունեցել։ «Խոնարհ աղջիկը» հետաքրքրական է նրանով, որ ամբողջովին, եթե կարելի է ասել, գեղարվեստականացված փաստագրություն է։ Գրեթե բոլոր գործող անձինք, բոլոր վայրերը, ժամանակը իրական են, ավելի ճիշտ՝ իրականից են պատկերված։ Մի գլխավոր հերոսը՝ գյուղի ուսուցիչը ինքը՝ Բակունցն է, որ Լորում յոթ ամիս ուսուցիչ է աշխատել (1915—1916 ուս. տարում)։

Պատմվածքում Լոր գյուղը նկարագրված է ճշգրտությամբ. «Դպրոցը գյուղի ծայրին էր, բլրակի վրա։ Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր»,— սա լիովին համապատասխանում է իրականությանը։ Ճիշտ է արված դեպի գյուղ իջնող ճանապարհի նկարագրությունը (Գորիսից Լոր տանող հին ճանապարհը), իրականին համապատասխան է պատմվածքում նկարագրված այն տան դիրքը, ուր ապրել է հեղինակը և այլն։ Հիմնականում ճիշտ են ներկայացված հեղինակի՝ առաջին անգամ Լոր գնալու ժամանակն ու հանգամանքները։ Կա միայն մի փոքր շեղում։ Պատմվածքում կարդում ենք, «Այս կածանով տասներկու տարի առաջ գնացի Զորագյուղ» կամ՝ «—Հետո տասներկու տարի.... Եվ ի՞նչ տարիներ։ Կռիվ, քաղց...»։ Իրականում Բակունցը առաջին անգամ Լոր է գնացել 1915 թ. ուշ աշնանը, նոյեմբերի մեջ, իսկ Հողժողկոմատի կողմից հողային վեճի առիթով այդ գյուղն է գործուղվել 1926 թ. գարնանը, ուրեմն՝ անցել էր ոչ թե տասներկու տարի, այլ առավելագույնը՝ տաս ու կես։ Պատմվածքը գրելու ստույգ ժամանակը հայտնի չէ։ Գուցե այն գրվել է 1926-ի վերջում կամ, նույնիսկ, 1927-ի ամենասկզբին։ Այդ դեպքում, պատմվածքի մեջ իրողությունից կատարված ժամանակային շեղումը ավելի փոքր է դառնում։ «Հենց այդ օրը բանտից նոր էի դուրս եկել»,— շարունակում է հեղինակը։ Սա նույնպես մոտ է իրողության։ Բակունցը՝ 1915 թ. ամռանն ու աշնանը Գորիսի քաղաքապետ Մատթեոս բեյի հետ ունեցած անախորժությունների պատճառով կալանավորվում է և 34 օր մնում բանտում։ Ազատվելով՝ նշանակվում է Գորիսին շատ մոտ գտնվող մի գյուղում ուսուցիչ, բայց գերադասում է գնալ ավելի հեռավոր գյուղ՝ Գորիսից հեռու գտնվելու նպատակով։ Ուստի Լորում աշխատելու առաջարկն ընդունում է սիրով և անհապաղ մեկնում։

Պատմվածքում ուսուցիչը գյուղից հեռանում է հաջորդ թվականի գարնանը, որ նույնպես իրողություն է։

Վերջապես, իրական է եղել գլխավոր հերոսուհին՝ Խոնարհը, այն էլ իրոք, բարակ ու բարձրահասակ և անունն էլ Խոնարհ։ Խոնարհենց այգին եղել է այն տեղում, ուր նշված է պատմվածքի մեջ։ Խոնարհի փոքր քույրը՝ Անահիտը (այժմ մահացած) եղել է Բակունցի աշակերտուհին[1], ինչպես պատմվածքում է։ Ամեն ինչ ասում է այն բանի օգտին, որ ճշգրիտ են պատկերված նաև Բակունցի ու Խոնարհի հարաբերությունները, ընդհուպ մինչև դպրոցական տարեվերջի հանդեսին աղջկա ձեռքը բռնելը։

Պատմվածքում իրականի համեմատ՝ հեղինակը փոփոխել է հետևյալը։ Հակառակ իրողության, պատմվածքում մեկ ուսումնական տարի ուսուցիչ եղածը և այդ տարին վերհիշողը ոչ թե հեղինակն է, այլ նրա ընկերը. սա, իհարկե, իրականի ձևական, եթե կարելի է ասել, արտաքին փոփոխություն է, որ արվել է ընտրված պատմելաձևի կապակցությամբ։ Ավելացնենք, որ 1926 թ. գարնանը Բակունցի՝ Լոր կատարած ուղևորության ժամանակ նրան ուղեկցել է պատմաբան Մորուս Հասրաթյանը՝ գրողի ընկերը։

Այնուհետև, պատմվածքում իրականի համեմատ փոխված են որոշ անուններ, օրինակ, Լորը դարձել է Ջորագյուղ, Բակունցի իրական տանտեր Հակոբ ապերը (Հակոբ Հովհաննիսյան) դարձել է Օհան ապեր, որոնք նույնպես ձևական բնույթի փոփոխություններ են։

Թերևս ավելի էական է մի ուրիշ շեղում իրողությունից. պատմվածքում նկարագրված Աշոտի դերը իրականում կատարել է Հակոբ ապոր դուստր Անահիտը։ Բակունցի՝ Լորում գտնված ժամանակ Հակոբն ունեցել է ոչ թե տասը տարեկան որդի, ինչպես պատմվածքում է, այլ տարիքով քիչ ավելի մեծ մի դուստր, Անահիտ[2] անունով, որը երբեմն ուղեկցել է Ալեքսանդր վարժապետին որսորդության ժամանակ, նրա հետ միասին լսել հոր զրույցները, այսինքն՝ արել այն, ինչ պատմվածքում անում է Աշոտը։

Իրականից Բակունցի կատարած այս շեղումը հետևյալ հասկանալի պատճառն ունի. «Խոնարհ աղջկա» մեջ գեղարվեստական տեսակետից հարմար չէր լինի Խոնարհի գրեթե հասակակից մի ուրիշ աղջկա հանդես գալը, այն էլ հենց վարժապետի ապրած տանը։ Իսկ տասնամյա մի տղա՝ Աշոտը այս նկատառումով շատ հարմար է պատմվածքում։

Բակունցը փոխելով երկրորդական անձանց անունները, անփոփոխ է թողել գլխավոր հերոսուհունը։ Այս հանգամանքն էլ հասկանալի է. Խոնարհ անունը ոչ միայն համապատասխանում է այն կրող կերպարի էությանը, այլ նաև

---

1 Խոնարհի, ինչպես և նրա հետ կապված բոլոր հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները հավաքել ենք անձամբ Լոր և Դարաբաս գյուղերում 1961 թ.։ Մեզ հատկապես շատ է օգնել Խոնարհի եղբայր Դավիթ Առուստամյանը։

2 Հակոբ Հովհաննիսյանի դուստրը՝ Անահիտը, մինչև վերջերս բնակվում էր Բաքվում։

ընդհանրապես նկատելի երանգ, թերևս, քնքշություն է հաղորդում ամբողջ պատմվածքին, սկսած վերնագրից։

«Խոնարհ աղջկա» մեջ փաստերից հեղինակի կատարած մյուս էական շեղումը ցույց տալու համար անհրաժեշտ է երկու խոսք ասել իրական Խոնարհի մասին։ Խոնարհի հայրը՝ Սուքիասը ունեցել է հինգ զավակ՝ երկու որդի, երեք դուստր։ Խոնարհը եղել է երրորդը. ծնվել է 1899-ին, այսինքն՝ Լոռում Բակունցի գտնվելու ժամանակ եղել է 16—17 տարեկան (պատմվածքում ասված է, որ Խոնարհը 15 տարեկան է. հավանական է, որ այդ կարծիքին է եղել հեղինակը, որ կարող էր և չիմանալ աղջկա ծննդյան ստույգ տարեթիվը)։

Լոռից Բակունցի հեռանալուց մեկ տարի հետ՝ 1917-ին Խոնարհին հայրը ամուսնացնում է հարևան Շնողաղ գյուղից մի մարդու հետ, որը սակայն շուտով մահանում է։ Խոնարհը երկրորդ անգամ ամուսնացել է Դարաքաս գյուղից Սուլթան Անդրեասյանի հետ։ Ունեցել է երկու որդի, մահացել է 1926 թվականին, քսանյոթ տարեկան հասակում։ Սուլթանը նոր կին է բերում տուն։ Իսկ Խոնարհի որդիները զոհվում են Հայրենական պատերազմում։ Լոռում մեր եղած ժամանակ (1961 թ.) Խոնարհենց գերդաստանից ողջ էր միայն նրա մեծ եղբայրը՝ Դավիթը, մի բարեհամբույր անձնավորություն, որ մինչև վերջերս, որպես որմնադիր, աշխատում էր Լոռում։

Այժմ շեղման մասին. դա տեղ է գտել պատմվածքի վերջավորության մեջ։

«Գիտե՞ս, ես Խոնարհին տեսա»,—ընկերոջն ասում է նախկին ուսուցիչը և պատմում, թե ինչպես է «Վերին գյուղում» հանդիպել Խոնարհին. «...ինձ մոտեցավ մի կին, ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ, ոտքերի կաշին ճաքճքած։ Կնոջ փեշերից կախվել էին երեք կիսամերկ երեխա։ Նրանք մերթ ինձ էին նայում, մերթ մորը։

Կինն արցունքն աչքերին չորս փութ ցորեն էր խնդրում, մինչև հունձը։

— Հետո մի ճար կլինի,— ասաց։

Ամուսինն անցյալ տարի էր մեռել։ Ժանտախտից սատկել էր նրանց միակ կովը։ Իսկ տանն ուրիշ աշխատող չկար։

Ես ճանաչեցի Խոնարհին... Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլի։ Ես ճանաչեցի Խոնարհին։ Բայց չգիտեմ, նա ինձ ճանաչե՞ց, թե՝ ոչ»։

Պատմվածքում նախկին ուսուցիչը իր վերհուշը պատմում է այն ժամանակ, երբ ուղեկից ընկերոջ հետ արդեն վերադառնում էր Ջորագյուղից, այսինքն՝ Լոռից։ Նա Խոնարհին կարող էր հանդիպած լինել հարևան գյուղում (որ պետք է Դարաքասը լինի)։ Այնտեղ, ինչպես ասվեց, Խոնարհը ամուսնացել էր երկրորդ անգամ։ Թեև գիտենք, որ Խոնարհը մահացել է 1926-ին, բայց մահվան ստույգ ամիսն ու օրն անհայտ են. այդ թվականի գարնանը նա կարող էր դեռևս ողջ լինել։ Պատմվածքի սկզբնական տարբերակում (տպված «Խորհրդային Հայաստանում») կնոջ փեշերից կախված երեխաները երկուսն են, առաջին մշակումից հետո նրանք դառնում են երեքը։ Իրական Խոնարհը, ասացինք, որ երկու որդի է ունեցել, երրորդն ավելացրել է հեղինակը՝ իր հերոսուհու ճակատագրի դառնությունն ավելի շեշտելու և աղջիկ ու մայր Խոնարհների հակադրությունն ավելի սրելու նպատակով։ Այս նույն նպատակով հեղինակի կողմից հնարված է նաև

Խոնարհի որբևայրի լինելը. իրականում նրա ամուսինը (երկրորդ) այն ժամանակ և դրանից հետո երկար ժամանակ ողջ և առողջ է եղել։

Բակունցը իրականությունից այսպիսի շեղումներ կատարել է իր հիմնական մտահղացումը գեղարվեստականորեն ավելի ներգործուն մատուցելու համար։ Հոգեկան հարստություն և գեղեցկություն փնտրել ու գտնել ոչ բարեկեցիկ և ոչ գեղեցիկ, աղքատ ու հետամնաց միջավայրերում,—Բակունց արվեստագետի գեղագիտական-գաղափարական ամբողջության մի կարևոր մասն է սա, որ տարբեր ձևերով դրսևորվել է նրա շատ պատմվածքներում՝ «Միրհավ», «Այու սարի լանջին», «Ալպիական մանուշակ» և այլն։ «Խոնարհ աղջիկը» պատմվածքում հոգեկան գեղեցկություն, նուրբ կանացիություն Բակունցը բացահայտում է՝ խուրձ անող, ցախ կրող գյուղական «հասարակ» աղջկա մեջ։ Ապա ասելիքը շեշտելու համար պատմվածքի վերջում այդ աղջկան բոլորովին թշվառ վիճակում է ներկայացնում՝ կարծես ընդգծելով, որ ահա այսպիսի ցնցոտիավոր, որբևայրի, խեղճ ու կրակ կանանց մեջ էլ լինում է նուրբ հոգի, ներքին մեծ հարստություն, հաճախ ավելի, քան քաղաքակրթված ոչ քիչ կանանց մեջ։

էջ 148, տող 21. *շարականի գիրքը*—Տե՛ս «Վանդունց Բաղին» պատմվածքի ծանոթագրությունը:

էջ 154, տող 29. *Հուստինիանոս Թագավորի մասին*—Այս՝ անունով նշանավոր են եղել Հուստինիանոս Ա՝ Բյուզանդական կայսր 483—565 թթ., Հուստինիանոս Բ՝ Բյուզանդական կայսր 685—695, 705—711 թթ.:

## Լ Ա Ռ-Մ Ա Ր Գ Ա Ր

### (էջ 162)

Բնագրային աղբյուրներ՝ ՏԶ, Մժ:

Տպագրվում է ըստ Մժ-ի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 165, տող 4. Մժ-ի բնագրում՝ *խոսեմ*—ուղղված է ըստ նույն բնագրի վերջին մասի (տե՛ս էջ 172, տող 4)՝ *խոսիմ*։

էջ 168, տող 34. ըստ ՏԶ-ի և Մժ-ի՝ *Մարգարն էլ խոսք չասեց Թորոսիկի մասին*—Բացահայտ անճշտություն է. ուղղել ենք՝ *Մարգարն էլ խոսք չասեց որդու մասին*։

Առաջին անգամ տպագրվել է 1927 թ. «Միթնաձոր» ժողովածուում[1], հեղինակի կենդանության ժամանակ կրճատված տեղ է գտել դասագրքերում (ինչպես՝ 1932 թ. «Դասագիրք լեզվի և գրականության։ 6-րդ տարի» ձեռնարկում, 1933-ին՝ «Լեզվի և գրականության դասագրքում», 6-րդ տարի)։ Այնուհետև մտել է հեղինակի երկերի 1955 թ. երևանյան հրատարակության մեջ, 1959 թ. տպվել է «Եղբայրության ընկուզենիները», ժողովածուում, 1964-ին Երկերի երկհատորյակի առաջին հատորում, 1969-ին «Ալպիական մանուշակ» ժողովածուի մեջ։

Տյարանային ձեռագիրը բաղկացած է 10 փոքրադիր (18,5×23) թերթերից.

---

[1] Ժամանակի պարբերականներում նախնական հրապարակում գտնելու ուղղությամբ մեր կատարած որոնումներն անարդյունք մնացին։

*յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը մաքուր գրված է հեղինակի կողմից, սև թանաքով։ Թուղթը՝ սպիտակ, փայլուն («Ալպիական մանուշակը» պատմվածքի տպարանային բնագրի թղթից)։ Մեկ էջում՝ 38—39 տող։ Էջերի վերին ձախ անկյունում առանձին համարակալում (2-րդ էջից սկսած) ձեռագրի թանաքով՝ 2—10, ապա էջերի վերին մասի կենտրոնում՝ ընդհանուր համարակալում մանուշակագույն թանաքով՝ 159—168։ Վերջում թվագրություն չկա։*

*Հայտնի չէ, թե «Լառ-Մարգարը» երբ է գրվել։ Գիտենք միայն, որ պատմվածքի գլխավոր հերոսի (Նախակերպարի) հետ Բակունցը ծանոթացել է այն ժամանակ, երբ աշխատելիս է եղել Երևանի սերմնաբուծարանում (1923 թ. աշնանից մինչև 1924 թվականի հոկտեմբերը)։ Պատմվածքում նկարագրված գլխավոր հերոսի արտաքինն ունեցող անձը՝ արևմտահայ վերաբնակիչ Մարգարը, այն ժամանակ աշխատելիս է եղել իբրև ջրբաշխ սերմնաբուծարանում կամ, ավելի հավանական է, մոտակա գյուղում։ Նա և Բակունցը բավական մտերմացած են եղել, և Մարգարը մանրամասն պատմել է գլխով անցածը։*

էջ 162, տող 1 (և հետո). *Լառ* (կամ *լառի*)—բարբառային բառ. ըստ Հ. Աճառյանի «Գավառական բառարանի»՝ «տեսակ մը խոշոր հավ, որ լավ կռվող կըլլա»։ Այդպես կոչվում է նաև աքաղաղի մի տեսակը։

էջ 171. տող 7—8. *Կավալայի մոտերքն էին ապրում, վրանների տակ*—Կավալլա քաղաքը Հունաստանում է՝ Էգեյան ծովի հյուսիսային ափին. նրա շրջակայքում 1915—20 թթ. կոտորածներից հետո հայ գաղթականության մի զանգված էր հավաքվել։

## *ՍԱԲՈՒ*

*(էջ 173)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, 16 նոյ., № 264, ՏՄՕ, Մժ, Աժ։

Տպագրվում է ըստ Աժ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 177, տող 24—25. Ըստ Աժ-ի *Գորգի թելի մնացած նախշերը* — ուղղված է ըստ Մժ-ի՝ *Գորգի թերի մնացած նախշերը...։*

էջ 177, տողեր 25—26. Ըստ Աժ-ի՝ *Գույները տեղ-տեղ վառ էին, ասես հըրդեհում էին գույները* — ուղղված է ըստ Մժ-ի՝ *Գույները տեղ-տեղ վառ էին, ասես հրդեհվում էին գույները։*

*Առաջին անգամ հրապարակվել է 1926 թ. նոյեմբերի 16-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա 1927 թ. «Մթնաձոր» ժողովածուում։ Այնուհետև, ավելի արմատական վերամշակումից հետո, 1935 թ. տպագրվել է «Անձրևը» ժողովածուի մեջ։ 1955 թ. լույս է տեսել Երկերի երևանյան հրատարակությունում և «Ամբողջական գործը» ժողովածուի (Բեյրութ) առաջին հատորում։ 1964 թ. մտել է հեղինակի երկերի 1-ին հատորի մեջ։*

*Տպարանային մեքենագիրը («Մթնաձոր» ժողովածու) բաղկացած է 9 նեղ, փոքրադիր (14,5×24,3 սմ) թերթերից, որոնց յուրաքանչյուրի մեկ էջում կա-*

24 տող։ Մեքենագրությունը մուգ-մանուշակագույն է, վրան կարմիր թանաքով հեղինակի ուղղումները։ Թուղթը սպիտակ, փայլուն, քիչ խունացած։ Էջերի վերին կենտրոնական մասում մեքենագրված են էջահամարներ՝ 1—9, ապա գրված է ընդհանուր էջակալում մանուշակագույն թանաքով՝ 169—177։ Վերջում թվագրություն չկա։

«Սաքու» պատմվածքի մեքենագիր օրինակի թուղթը և մեքենագրությունը նման չեն «Մթնաձոր» ժողովածուի բնագրերից ոչ մեկին։ Այս հանգամանքը առանձին էջակալման առկայության հետ միասին վկայում են, որ պատմվածքի այս մեքենագիրը նախապես «Մթնաձորի» համար չէ պատրաստված եղել, այլ, ժողովածուի ամբողջական բնագիրը կազմելիս, հեղինակը նրա մեջ է դրել այլ նպատակով կատարված այդ մեքենագրությունը։

Պատմվածքի՝ «Մթնաձոր» ժողովածուի մեջ տեղ գտած տարբերակը այս հատորում դրված է **Այլ խմբագրումներ** բաժնում։ **Բնագրային տարբերություններ** բաժնում բերված են այդ խմբագրման և «Խորհրդային Հայաստանում» տպագրված օրինակի տարբերությունները։

Ըստ «Անձրևը» ժողովածուի, պատմվածքը գրվել է 1926 թվականին (պատմվածքի վերջում գրված է՝ 26)։ Ավելի հավանական է, որ այն գրված լինի այդ թվականի սկզբներին, երբ հեղինակը դեռևս Գորիսում էր բնակվում։ Պատմվածքը գրելու ազդակ է հանդիսացել Ա. Բակունցի, իբրև գյուղատնտեսի այցը Բիչանագ ադրբեջանական գյուղը (այժմ՝ Նախիջևանի ԱՍՍՀ-ում) 1925 թ. գարնան վերջերին։ Այդ ուղևորությունից հետո Բակունցը Թիֆլիս՝ «Մարտակոչ» օրաթերթին է ուղարկել իր «Բիչանագ» ակնարկը, որը և տպագրվել է թերթի 1925 թ. հունիսի 10-ի համարում (№ 130)։ Ակնարկը գրված է զգացմունքով. նկատվում է, որ անտառների մեջ ծվարած ադրբեջանական խուլ գյուղակում երիտասարդ գյուղատնտեսի վրա ազդել են դեռատի աղջիկների և ծեր տղամարդկանց՝ գլխավորապես սեյիդների, ամուսնության փաստերը։ Ակնարկը տպագրելուց հետո այս նույն հարցը հեղինակը դարձրել է նաև պատմվածքի նյութ. այդպես երևան է եկել «Սաքուն»։ Պատմվածքում հեղինակը շեղումներ է թույլ տվել փաստականի համեմատ, բայց և դժվար չէ նկատել ընդհանրությունները ակնարկի և պատմվածքի միջև։

«Բիչանագում» կա ծերունի Սեյիդ, որ բացի ծերացած կնոջից ունի նաև մի մանկամարդ կին։ Միաժամանակ նույն Սեյիդն ունի դուստր, որը գրեթե նրա մանկամարդ կնոջ հասակակիցն է։ Սեյիդի դուստրը կարպետ է գործում՝ իր օժիտը։ Շուտով նրան էլ պետք է ամուսնացնեն մի ծերունու հետ. «...բակում՝ դիմացի սենյակից լսեցինք կուփիչի հավասար զարկերի ձայն։ Սենյակի ներսում, գերանների վրա կարպետի հենք էր ամրացված, որի դիմաց նստել էր մի աղջիկ։ Նա նուրբ ու բարակ մատներով գույնզգույն թելեր էր հագցնում հինածին և կարպետ գործում։

Մեզ որ տեսավ, գլուխը կախեց, գլխի շալն ավելի քաշեց, որ երեսը չտեսնենք։ Լղարիկ, բարակիրան մի աղջիկ էր։

— Սեյիդի աղջիկն է, մայրը հերու մեռավ,— ականջիս փսփսաց Աբոն։

Աղջիկն իր օժիտն էր գործում։ Սեյիդն ասաց, որ շուտով քյաբինը կտրելու է։

— Տեսնես ինչ քաֆթառ մարմին պիտի գրկի այս փոքրիկին, ո՞ր ծերունու չորացած շրթունքները պիտի համբուրեն սրան,— զայրացած ասաց ընկերս ու դուրս եկավ։

Ես էլ դուրս եկա սենյակից։ Դռան մոտ ետ նայեցի, աղջիկն էլ նայեց։ Ու այնպե՜ս ծով խեղճություն, անտերունչ զառան վիշտ կար նրա աչքերում։

Հանկարծ լեզու առներ կարպետը գունավոր ու պատմեր, թե ինչ մոքեր է հյուսել աղջիկը հենքին, ինչպես ծանր հառաչել է կուփիչի զրնգան ձայնի հետ ու ինչպես նրա բարակ, դեղին մատները ամեն մի թելի հետ մի մանր միտք են կապել կարպետին։

Բակունցը զգացված է եղել, և, ըստ երևույթին, հենքի դիմաց նստած աղջկա խոհերը հանգիստ չեն տվել նրան, մինչև որ ստեղծվել է «Սարու» գողտրիկ պատմվածքը։

Պատմվածքում միևնույն այլանդակ երևույթի երկու տարբեր զոհերին Բակունցը «միավորել» է մի կերպարի մեջ. իրական Սեյիդի մանկամարդ կինը և նույն Սեյիդի չամուսնացած, բայց նույնպիսի ամուսնության պատրաստվող մանկամարդ դուստրը «Սարուի» մեջ դարձել են մի հերոսուհի։ Ակնարկում ցույց է տրված, որ Սեյիդի դուստրին պետք է վիճակվեր իր հոր մանկամարդ կնոջ բախտը։ «Սարուի» մեջ միևնույն հերոսուհին է ցույց տրված թե՛ չամուսնացած, թե՛ ամուսնացած վիճակներում։ Փաստական նյութի այսպիսի «խտացումը» իրականի պատկերումը զգալիորեն գեղարվեստականացրել է։

Առհասարակ պատմվածքը ակնարկի համեմատ ավելի ուժեղ է՝ փաստերի գեղարվեստական վարպետ մշակման շնորհիվ։ Պատմվածքում նաև ավելի բանաստեղծական է նկարագրված աղջիկը գորգի առաջ։ «Այդ գիշեր Սարու գյուղում մանկամարդ մի աղջիկ տորքի առաջ գորգ էր գործում։ Բարակ ծամեր ուներ աղջիկը, ծամերի ծայրից կախ էին մետաղյա բոժոժներ։ Աղջիկը գլուխը աջ ու ձախ էր դարձնում, դեղնած մատներով բռնում գունավոր թելերը, թելը թելին հագցնում, ապա ծանր սանրով կոփում հանգույցները։ Դարսվում էին իրար վրա հանգույցները, ծնվում էին նախշեր, նռան ճյուղեր, տերևներ, տերևների մեջ երկու թև, որ աղջկան թվում էր երգող թռչուն։ Ամեն անգամ, երբ աղջիկը սանրը վարկում էր հյուսածին, շարժվում էին գույնզգույն կծիկները, զրնգում էին և ծամերի բոժոժները։

Երբ ձիավորներն անցան փողոցով, շները հաչեցին կանաչ աբայի վրա։ Աղջիկը գլուխը թեքեց, Սեյիդը ճրագի լույսով տեսավ և գորգը, և տորքի առաջ նստած աղջկան։ Նրան թվաց, թե աղջիկն ինքը մի գունավոր նախշ է գորգի վրա»։

Ակնարկի համեմատ պատմվածքում աղջկա ողբերգությունը միայն այն չէ, որ նրա ջահելությունը զոհաբերվում է Սեյիդի ծերությունը «քաղցրացնելուն»։ Այս հիմնականը հեղինակը պատմվածքը գրելիս սաստկացրել է. նախ կաբնոր տեղ է գրավել գյուղում իշխող աղանդը, որի համաձայն տարվա մեջ մի գիշեր զոհհիկ ծես է կատարվում։ Անմեղ աղջիկը այդ գիշերներից մեկում դառնում է Սեյիդի կրքերի զոհը։ Ապա՝ պատմվածքում աղջկա ողբերգական վիճակը

սաստկացված է նաև այն բանով, որ նրան գրկում են հարազատ միջավայրից, տանում օտար երկիր։

Արդյոք հեղինակը ունեցե՞լ է սրա համար ևս փաստական նյութ, թե ինքն է հնարել այդ՝ երկն ուժեղացնելու համար, դժվար է ասել։

«Սարուխ» վերջին երկու պարբերությունները ամփոփում ու կենտրոնացնում են ողբերգականությունը. Բակունցը դիմում է խոսքի քնարականությունն ուժեղացնող իր սիրելի հնարանքին՝ վերհուշին («Այն ափի գյուղում մի պառավ կին, երբ առվի ջրի մեջ լվանում է մաշված գորգը, ձեռքը ճակատին դրած, նանայում է հեռու, ուր անտառների մեջ պահված է հայրենի Սարուխ։ Խունացած գորգի նախշերը առվի ջրում հանկարծ պայծառանում են, և պառավին այնպես է թվում, թե ծամերի ծայրին հնչում են մանկության անուրախ բոժոժները»)։ Սա գուցե և ընդհանուր փաստական հիմք ունեցել է, այսինքն՝ Արաքսի մյուս ափը մանկամարդ աղջիկներին կնության տանելու փաստեր երևի ծանոթ են եղել հեղինակին, և նա կարող էր ենթադրել նրանց հետագա ճակատագիրն ու զգացած կարոտը մանկության օրրանի հանդեպ։

## ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

(էջ 179)

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1927, 1 հունվ., № 1, 4 հունվ., № 2, ՏՁ, ՄԺ, ՍՅՍԺ։**

**Տպագրվում է ըստ ՍՅՍԺ-ի բնագրի։**

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1927 թ. հունվարի 1-ի և 4-ի համարներում, (թերթի 2-րդ համարը լույս է տեսել հունվարի 4-ին), ապա նույն թվականին՝ հեղինակային որոշ խմբագրումից հետո՝ «Մթնաձոր» ժողովածուի մեջ։ 1933-ին լիովին վերամշակված և Արփենիկ Չարենցի հիշատակին նվիրագրությամբ տեղ է գտել «Սև ցելերի սերմնացանը» ժողովածվում։ Հիշյալ նվիրագրության պատճառը կամ պատճառներից մեկը, հավանաբար, եղել է այն, որ Ե. Չարենցի կինը՝ Արփենիկը, մահացել է «Ալպիական մանուշակը» հրապարակվելու ընթացքում՝ հունվարի 2-ին. Նախորդ օրը լույս էր տեսել պատմվածքի առաջին մասը, շարունակությունը տպագրվում է «Խորհրդային Հայաստանի» հաջորդ համարում, որտեղ տպագրվել է նաև Արփենիկի մահվան ազդը։

Հեղինակի կենդանության ժամանակ տպագրվել է նաև «Հայ գրականության քրեստոմատիայում» (10-րդ դասարանի համար, Երևան, 1934)։ 1955 թ. տեղ է գտել Երկերի երևանյան հրատարակության մեջ և, «Ամբողջական գործը» ժողովածուի (Բեյրութ) Ա հատորում, 1959 թ.՝ «Եղբայրության ընկուզենիներ» ժողովածվում, 1962 թ. լույս է տեսել «Ալպիական մանուշակ» գրքույկում «Միրհավի» հետ, 1964 թ. տեղ է գտել Երկերի առաջին հատորում, 1969-ին՝ «Ալպիական մանուշակ» ժողովածուի մեջ։ Տպագրվել է նաև մամուլում, ժողովածուների մեջ. ինչպես, օրինակ, «Ավանգարդ» թերթում (1959 թ., № 128), «Սովե-

տական գրականություն. քրեստոմատիա» դասագրքի մի շարք հրատարակություններում՝ սկսած 1956 թվականից և այլն։

«Մթնաձոր» ժողովածուի տպարանային ձեռագիրը բաղկացած է 13 փոքրագիր (18,5×23 սմ) թերթերից, յուրաքանչյուրի մեկ էջում բնագիրը մաքուր գրված է հեղինակի ձեռքով, սև թանաքով։ Թուղթը սպիտակ, փայլուն։ Մեկ էջում 36—40 տող։ Էջերի վերին ձախ անկյունում՝ առանձին էջակալում (2-րդ էջից) ձեռագրի թանաքով՝ 2—13, ապա նաև՝ ընդհանուր էջակալում մանուշակագույն թանաքով՝ 178—190։ Թուղթը, թանաքը, առանձին էջակալման եղանակը նույնն են, ինչ որ «Լառ Մարգար» պատմվածքի տպարանային ձեռագրինը։

«Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ պատմվածքի վերջում դրված է՝ 25—27։ Այս թվականներից առաջինը պետք է ցույց տա պատմվածքը գրելու, մյուսը վերամշակելու ժամանակը (տե՛ս «Միրհավ» պատմվածքի ծանոթագրությունը)։ Երկրորդն անվստահելի է։ Հավանական չէ, որ 1927 թ. երկու անգամ լույս տեսած պատմվածքը նույն տարում էլ հեղինակը արմատական վերամշակման ենթարկեր մի նոր ժողովածուի մեջ տպագրելու համար և դրանից հետո այլևս անփոփոխ թողներ մինչև 1933 թվականը, երբ լույս տեսավ այդ ժողովածուն։ 1927-ին Բակունցը չէր կարող նախատեսած լինել «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուն, որի պատմվածքների մեծ մասը գրված կամ վերամշակված է 1930-ական թվականներին։ Մեզ թվում է, որ «Ալպիական մանուշակի» հիմնական և վերջին վերամշակումը կատարվել է 1930 կամ 31 թվականին։

Իբրև «Ալպիական մանուշակը» գրելու թվական նշված 1925-ը նույնպես հարկ եղածին չափ համոզիչ չի թվում, քանի որ այդ երկը գրվել է Մեղրու շրջան հեղինակի կատարած մի ուղևորությունից հետո։ Այդ ուղևորությունը Բակունցը կատարել է իր բարեկամի՝ երկրաբան Տիգրան Ջրբաշյանի հետ միասին։ Նրանք մի երրորդ անձի ուղեկցությամբ այցելել են Մեղրու շրջանի մի շարք վայրեր, այդ թվում ավերակ բերդեր։ Ըստ մեր ունեցած տեղեկությունների այդ ուղևորությունը կատարվել է 1926 թ. ուշ գարնանը կամ ամռանը։ Բակունցի մի այլ բարեկամի՝ պատմաբան Մորուս Հասրաթյանի վկայությամբ ևս այդ ուղևորությունը 1926 թվականին է տեղի ունեցել։ Հայտնի է նաև, որ «Ալպիական մանուշակը» հեղինակն առաջին անգամ կարդացել է իր ընկերուհի Ժենյա Գյոզալյանին, Երևանում, իսկ դա ամենից ավելի հավանական է, որ տեղի ունեցած լինի 1926 թ. գարնանից հետո, երբ Բակունցը Գորիսից տեղափոխվել էր Երևան և բնակություն հաստատել այստեղ։ Ժ. Գյոզալյանը, որը նաև՝ «Ալպիական մանուշակում» նկարչի կողմից վերհիշվող «սև թավշե գլխարկով» կնոջ նախակերպարն է, Երևանում Բակունցի պատմվածքի առաջին ունկնդիրը կարող է եղած լինել 1926 թվականի երկրորդ կեսին, երբ նա գտնվել է այս քաղաքում։

«Ալպիական մանուշակում» իրական փաստերի համեմատ կարևոր փոփոխությունն այն է, որ ինքը՝ գրողը դարձել է նկարիչ, իսկ երկրաբան ուղեկիցը՝ հնագետ։ Նկատի ունենալով, որ Բակունցը գրեթե միշտ իր կերպարների հատկանիշները իրականից էր պատկերում, այսինքն՝ իրական անձանց էր նկատի ունենում և երբեմն էլ մեկ կերպարի մեջ միավորում երկու, նույնիսկ երեք իրական անձանց հատկություններ, կարելի է չկասկածել, որ «Ալպիական մանու-

շակի» նկարիչը՝ իր հակումներով, նաև մի այլ իրական հիմք ունի. պետք է որ իրողություն լինեն լեռնային գեղջկուհու և ալպիական մանուշակների ճեպանկարները հանելու, ինչպես և հնագետի որոնումների նկարագրությունները։ Հնարավոր չեղավ պարզել, թե Բակունցը ինչ նկարիչի է նկատի ունեցել և նրա՝ որտեղ ու ինչ առիթով կատարված ճեպանկարները։ Ինչ վերաբերում է «Բակուր իշխանի դամբարանը» որոնող հնագետին, ապա գրողը հնարավոր է, որ նկատի է ունեցել պատմաբան-հնագետ Մ. Հասրաթյանին։ Ավելի ճիշտ, իր իրական ուղեկից Տ. Ջրբաշյանին, ըստ պատմվածքի բովանդակության պահանջի, փոխարինել է հնագետով։

*Հնարավո՞ր է արդյոք, որ Բակունցը իր նշած 1925 թվականին մի այլ նախնական պատմվածք գրած լիներ նկարչի, հնագետի ու լեռնային գեղջկուհու մասին՝ առնչված մի այլ վայրում կատարած իրողության հետ, իսկ հետո, Մեղրու շրջանից ստացած տպավորությունները օգտագործելով, վերափոխեր պատմվածքը, դեպքերի վայրը դարձնելով Կաքավաբերդն ու նրա շրջակայքը։ Այդպիսի հնարավորությունը, կարծում ենք, բացառված չէ։*

**Էջ 179, տող 1.** *Ալպիական մանուշակ*—Բույս գինարբուկազգիների ընտանիքից (cyclamen eurapaeum), հայերեն կոչվում է նաև *արանց ծաղիկ*, տարատեսակները Հայաստանի տարբեր վայրերում՝ *լոշ, արջտակ, մանուշ*։ Զանգեզուրում կա *սարի մրնիշակ*, որ տարբեր է Բակունցի նկարագրած ծաղկից, բայց հնարավոր է, որ այդ անունը վերափոխելով գրողը օգտագործած լինի արանց ծաղիկը անվանելու համար։ Պատմվածքի բովանդակությունը և գեղարվեստական արժեքը շատ բանով են պայմանավորված ծաղիկը *ալպիական մանուշակ* անվանելու փաստով։

**Էջ 179, տող 3 (և հետո).** *Կաքավաբերդի գլխին...*— Կաքավաբերդը (Կքեբերդ) եղել է Սյունիքի ամենանշանավոր բերդերից։ Գտնվել է Արևիքի (այժմյան՝ Մեղրու) շրջանում։ Ստույգ վայրը որոշված չէ, ենթադրում են, որ Մեղրու շրջանում Կալեր-Վանքի մոտակայքում եղած ավերակներն են միջնադարյան այդ անառիկ բերդի մնացորդները։

**Էջ 179, տող 16 (և հետո).** *Թասուտա*—Զանգեզուրի գետերից. գրավոր աղբյուրներում՝ *Թասուտ*, այժմ պաշտոնապես կոչվում է *Ծավ գետ*։ Մենք Զանգեզուրում լսել ենք *Թասուտա* անվանաձևը։ Սկիզբ է առնում Մեղրու լեռների արևելյան մասից, թափվում Արաքսը։

**Էջ 182, տող 24.** *Բակուր իշխանի դամբանը*—Բակուր անունով Սյունյաց իշխանների մեջ նշանավոր են եղել՝ Բակուր Սյունյաց նահապետը՝ II դար և Բակուր Սյունին՝ V դար.։

## «ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ» ՇԱՐՔ

*Այս պատմվածքաշարը ձևավորվել է 1933 թ., համանուն ժողովածուի լույս ընծայմամբ և անխախտ պահպանվել Բակունցի երկերի 1955, 1964 թթ. հրատարակություններում։ Այժմ, այդ շարքի պատմվածքներից 3-ը վերադարձված*

*են իրենց սկզբնական պատմվածքաշարի՝ «Մթնաձորի» մեջ (տե՛ս այդ պատմըվածքաշարի ծանոթագրությունները)։*

*«Սև ցելերի սերմնացանը» ժողովածվում միայն «Ծիրանի փողը» և «Պրովինցիայի մայրամուտը» երկերն են, որ տպագրվել են առաջին անգամ, մյուսները նախքան ժողովածուն կամ լույս են տեսել պարբերական մամուլում և 1929 թ. Մոսկվայում հրատարակված գրքույկում, կամ «Մթնաձոր» ժողովածուից են վերամշակմամբ անցել այս գրքի մեջ։ Բացի «Միրհավ», «Խոնարհ աղջիկը» և «Ալպիական մանուշակ» պատմվածքներից, 1933 թ. այս ժողովածուի մեջ գրողի 1920-ական թթ. ստեղծագործական աշխատանքն են ներկայացնում նաև «Նամակ ռուսաց թագավորին» և «Սպիտակ ձին» պատմվածքները։*

*Բակունցի գրական գործունեության 1930-ական թվականների որակը բնութագրում են «Ծիրանի փողը», «Բրուտի տղան», «Սև «հացը», «Պրովինցիայի մայրամուտը» և «Սև ցելերի սերմնացանը» երկերը։*

*Ի տարբերություն «Մթնաձոր» ժողովածուի, այստեղ յուրաքանչյուր երկի տակ դրված է գրության, իսկ երբեմն նաև վերամշակման թվականը, թեև ոչ միշտ վստահելի (տե՛ս «Միրհավ» և «Ալպիական մանուշակ» պատմվածքների ծանոթագրությունները)։*

*Այս ժողովածուի տպարանային բնագրերն առայժմ չեն գտնված։*

## *ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ*

*(էջ 193)*

**Բնագրային աղբյուր՝ ՍՑԱժ։ Ուղղումներ.**

Ըստ ՍՑԱժ-ի բնագրի՝ էջ 195, տող 22 և էջ 200, տող 14՝ *սառուցներից*, էջ 197, տող 16՝ *սառուցների*, էջ 201, տող 2՝ *սառուցները*— ուղղված է ըստ ՍՑԱժ-ի այլ բնագրերում *սառույց* բառի ուրիշ գործածությունների. համապատասխանաբար՝ *սառույցներից, սառույցների, սառույցները*։

էջ 198, տող 25. ըստ ՍՑԱժ-ի *աշխուժ*—ուղղված է՝ *աշխույժ*։

*Առաջին անգամ հրապարակվել է 1933 թ. «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի կազմում։ 1936 թ. տեղ է գտել հեղինակի «Պատմվածքներ» (Փարիզ) ժողովածուի մեջ, 1955 թ.՝ Երկերի Երևանյան հրատարակությունում և «Ամբողջական գործը» ժողովածուի (Բեյրութ) Ա հատորում, 1959-ին՝ «Եղբայրության ընկուզենիները» ժողովածվում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում, 1969-ին՝ «Ալպիական մանուշակ» ժողովածուի մեջ։ 1933 թվականից հետո պատմվածքը մեծ մասամբ տպագրվել է որոշ կրճատումներով։*

*Համաձայն ՍՑԱժ-ի մեջ պատմվածքի վերջում դրված թվականի՝ գրվել է 1931 թ.։*

*«Ծիրանի փողը» 1930-ական թվականներից դարձավ Ա. Բակունցի դեմ կատարվող հարձակումների գլխավոր պատրվակը (տե՛ս, օրինակ, «Գրական թերթ», 1934, № 19, 1936, № 19, 22, «Գրական սերունդ», 1936, № 4, էջ 15—19, № 5—6, էջ 35, «Խորհրդային արվեստ», 1934, № 7, 1936, № 15—16, էջ 204, № 17, էջ 224,*

*«Խորհրդային գրականություն», 1936, № 3—4, էջ 196—199, 18.* Первый *всесоюзный съезд советских писателей,* М., 1934, *էջ 630 և այլն)։*

էջ 196, տողեր 12—13.

*Քանց լուսին ամպի տակով,*
*Դու ջուր կերթաս ջուխտ դորակով։*

Ժողովրդական երգ-խաղյակի առաջին երկտողը: Նույն երգի շատ ուրիշ տարբերակներ տեղ են գտել Մ. Աբեղյանի կազմած «Ժողովրդական խաղիկներ» ժողովածուի մեջ, ինչպես, օրինակ,

Քան լուսին ամպի տակով
Դու ջուր կերթաս դորակով,
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտս կերես կրակով:

կամ՝

Ջուր կերթաս ջուխտ դորակով,
Սիրտս կերես կրակով.
Ջանս էղնի քեզ դուրբան,
Եկ տանեմ քեզ շալակով:

(Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940, էջ 51I):

էջ 197, տող 5—6. *Մոտկանա երկիր, Տալվորիկ*—Տեղանուններ Սասունում:

էջ 199, տող 18. *Ցավն*—Հին ռոմեական դիցաբանության մեջ անտառների, լեռների, դաշտերի աստվածը, անասունների հովանավորը: Հունական Պանի (բնության հովանավորի) ռոմեական տարբերակը:

էջ 199, տող 29. *Ջենով Օհան, Մսրա Մելիք, Թլոր Մանուկ*—«Սասնա ծռեր» ժողովրդական դյուցազնավեպի հերոսներն են:

էջ 200, տող 24—25. *Նստում էր Մարութա բարձր սարին*—Մարութա սարը Սասունի լեռներից է, որ կարևոր դեր ունի «Սասնա ծռեր» դյուցազնավեպում:

## *ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ*

*(էջ 206)*

Բնագրային աղբյուրների՝ ՍՁ, ՍՅՍԺ:

Տպագրվում է ըստ ՍՅՍԺ-ի: Ուղղում.

էջ 211, տող 10. ըստ ՍՅՍԺ-ի՝ *անզգույշ*—ուղղված է՝ *անզգույշ*։

*Առաջին անգամ հրապարակվել է 1929 թվականին «Սպիտակ ձին» վերնագիրը կրող պատմվածքների ժողովածուի մեջ (Մոսկվա), ապա 1933 թ. հիմնովին վերամշակված տեղ է գտել «Սև ցելերի սերմնացանը» ժողովածվում։*

*Պատմվածքի առաջին տարբերակը (ՍՁ) գրված է այս հատորի* Այլ խմբագրումներ *բաժնում։*

Համաձայն ՍՅՍԺ-ի մեջ, պատմվածքի վերջում դրված թվականի՝ գրվել է 1927 թվականին։

Պատմվածքն ինքնակենսագրական է, բոլոր հերոսները ունեն նախակերպարներ, նկարագրված են իրական վայրեր, պատմվածքի հիմքում դրված է եղելություն։

Բանտարկված, ապա փախստական դարձած Եգորի մասին Գորիսի մերձակա Երիշեն գյուղում շատ պատմություններ են շրջել։ Մինչև օրս էլ հասակով մարդիկ պատմում են Եգորի մասին, նույնիսկ նրան նվիրված երգեր կան[1]։ Ըստ էության, Եգորը դարձել է բանահյուսական հերոս։ Վիպական գույներով են պատմում, օրինակ, նրա փախուստը բանտից. իբր տարբեր ազգության երեք բանտարկյալներ կտրում են բանտախցի պատուհանի երկաթե ճաղերը, սպիտակեղենից պարան են պատրաստում ու իջնում պատուհանից, մտնում ջրատար խողովակի մեջ, և քանի որ երեքից ամենանիհարը Եգորն է լինում (մյուսները գեր են լինում), միայն նրան է հաջողվում փախչել։ Վիպական են, հաճախ հուզիչ Եգորի փախստական կյանքի, նրա թափառումների և հատկապես նրա ու հոր հանդիպման և բաժանման մասին եղած պատմությունները։ Մի խոսքով, հյուսվել է ժողովրդական վեպ, իր տարբերակներով։ Եթե մի տարբերակում Եգորը զինվորական ծառայության մեջ եղած ժամանակ սպանում է մի սպայի՝ նրա կնոջը տիրանալու համար, մի այլ տարբերակում, ընդհակառակը, Եգորը իր սիրուհուն է սպանում, մի երրորդ տարբերակի մեջ սպան Եգորին վիրավորում է (նրան «արմյաշկա» կոչելով), և Եգորը բռունցքի մի հարվածով սպանում է սպային։ Կամ՝ մի տարբերակում Եգորին Սիբիր են աքսորում, մյուս դեպքում նա լինում է Կարսի (կամ Ալեքսանդրապոլի) բանտում, մի դեպքում հենց այդ բանտից էլ Եգորը փախչում է, մի այլ դեպքում Սիբիրի ճանապարհին է փախչում, երրորդ դեպքում նա լինում է Սիբիրի աքսորում, ուր նրան միանում է սիրուհին՝ սպանված սպայի կինը և այլն։

Եգորի հարցով մենք բավական զբաղվեցինք՝ աշխատելով հնարավորության սահմաններում պարզել նրա կյանքի ստույգ փաստերը։ Որքան մեզ հաջողվեց որոշել, դրանք հետևյալներն են. Եգորը եղել է երիշենցի Հարություն (Արթին) Խուրշուդյանի՝ մոր կողմից Բակունցի պապի, որդին (Ա. Բակունցի քեռին)։ 1891-ին նրան կանչում են բանակ։ Եգորը ծառայում է Ալեքսանդրապոլում։ Այստեղ նա սիրային կապի մեջ է մտնում մի կնոջ հետ, ապա բռնելով նրան դավաճանության ժամանակ, սպանում է։ Դրա համար դատապարտվում է տաժանակրության։ Փախչում է բանտից, մի կերպ հասնում Գորիս, ծպտված ապրում է Երիշենում։ Մինչ այդ նրա նշանածին՝ Մանուշակին ամուսնացրել էին ուրիշի հետ։ Դա մեծ վիշտ է պատճառում Եգորին։

Շուտով Եգորի վերադարձի մասին իմանում են Հարությունի եղբոր որդի

[1] Երգերից մեկը (ադրբեջաներեն), որը մենք լսել ենք Երիշենում, Եգորի հարսնացու Մանուշակի ամուսնությանն է վերաբերում։ Եգորը պատմում է հարսնացուին կորցնելու պատճառով իրեն համակած վշտի մասին։

Համբարձում բեյը, որը Գորիսում ցարական աստիճանավոր էր, և գյուղի քյոխվա Առստամը։

Եգորը միաժամանակ ապրում է Գորիսի շրջակայքի լեռներում։ Նրա համար կեղծ անձնագիր են ձեռք բերում, որով և նա Երիցենից փախչում է Շուշի, ապա Բաքու, Աշխաբադ, այստեղից էլ անցնում է Պարսկաստան, ուր ամուսնանում է Թագուհի Ստեփանյան անունով մի կնոջ հետ և ապրում Պարսկաստանի Ռաշտ, ապա Էնզելի քաղաքներում։

Եգորի փախուստի լուրը զայրացնում է Գորիսի պաշտոնավորներին։ Ուրյադնիկը Համբարձում բեյի, քյոխվա Առստամի հետ, ստրաժնիկների ուղեկցությամբ գնում են Երիցեն, խուզարկում Հարությունի տունը, վերջինից պահանջում, որ նա ասի որդու տեղը։ Հարությունին ծեծում են։

Հարությունը թագավորին նամակ է գրում՝ խնդրելով ներել որդուն։ Նամակի պատասխանը գալիս է գավառապետի հասցեով։ Վերջինից պահանջվում էր պարզել թիապարտ Եգորի գտնվելու վայրը։ Հարությունին նորից են ծեծում, նորից խուզարկություն է կատարվում նրա տանը, գտնում են Եգորի երկու նամակը։ Ի վերջո, Եգորը ինքն է նամակ գրում իշխանություններին, հայտնում իր տեղը, որից հետո նրա հորը հանգիստ են թողնում։

1903 թ. Հարությունը կարողանում է գնալ Պարսկաստան, որտեղ տեսնվում է որդու հետ։ 1906-ին Եգորը կարճ ժամանակով լինում է Երիցենում, ապա մեկնում է Միջին Ասիա, ապրում Անդիջան քաղաքում, իսկ 1916 թ. վերջնականապես հաստատվում է Գորիսում։ Կնոջ՝ Թագուհու մահից հետո երկրորդ անգամ ամուսնացել է Գայանե անունով մի գորիսեցի կնոջ հետ։ Մահացել է 1934-ին։

Ահա այս Եգորն է դարձել թե՛ Բակունցի ստեղծագործության և թե ժողովրդական պատումների հերոս։ Կարելի է ասել, որ Բակունցի պատմվածքն էլ Եգորի մասին հյուսված պատումների մի տարբերակն է, զուտ բակունցյան տարբերակ և ամենաուժեղն ու իմաստալիցը։ Բակունցյան պատումի ամենակարևոր հատկանիշն այն է, որ այդտեղ գլխավոր հերոսը ոչ թե Եգորն է, այլ Արթին պապը։ Մինչդեռ Երիցենում այսօր էլ Եգորի պատմությունն անելիս Արթին պապին երրորդական տեղ են հատկացնում, միայն մեկ, թե երկու անգամ հիշատակում նրա անունը. ուշադրության կենտրոնում Եգորն է իր փախստականի կյանքով, հետաքրքրաշարժ արկածներով, հերոսություններով։ Բակունցի երկում Եգորի ամբողջ պատմությունը մի պատրվակի, առիթի դեր է կատարում հայ նահապետական գեղջուկի՝ Արթին պապի կերպարը բացահայտելու համար։

Պատմվածքը շարադրված է առաջին դեմքով՝ Արթին պապի թոռան անունից, որ նույնպես իրողության ճշգրիտ պահպանումն է, քանի որ իրական հեղինակն իրոք Արթինի թոռն է։

«Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքում նույնությամբ պահպանված են բոլոր նախակերպարների անունները։ Ընդ որում, պապի՝ Արթինի, տատի՝ Նազուի՝ և քեռու՝ Եգորի անունները թողնելով անփոփոխ, Բակունցը պատմված-

քի երկրորդ տարբերակում փոխել է նրանց ազգանունը՝ Խուրշուդյան-ը դարձնելով Ադամով[1] (առաջին տարբերակում Խուրշուդով է)։

Պատմվածքում իրականից են արված նաև մյուս նկարագրությունները։

Մինչև այժմ էլ Օրիշենում պահպանված է այն կամարակապ դարպասը, նաև նրա անկյունում քարը (նիշը), որի վրա պատմվածքում նստում էր Արթին պապը։ Միայն փոխված է գյուղի մեծ ճանապարհի տեղը, որն այլևս այդ դարպասի առջևով չի անցնում, ինչպես նախկինում է եղել (հիշենք. «Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր, որի ներքևի մասը գետնից մետրաչափ բարձր, կոկիկ տաշած էր, քարե աթոռի պես սարքած։

Կնստեր իր տեղը, կկռթներ հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեքեր, և, եթե զրուցընկեր չունենար, ինքնիրեն կխոսեր ու քթի տակ կմռթ-տար.... Կովերը արոտից էին տուն գալիս, վարից՝ հոգնած ու դանդաղ քայլերով եզները, պառավ ատամների տակ ծամելով ճամփի եզրից պոկած խոտը։ Ու նստած տեղից պապս մեզնից մեկին մի բան էր պատվիրում...»)։

Պատմվածքում իրողություն է Արթին պապի հյուրասեր բնավորությունը. ըստ բոլոր վկայությունների, իրական Հարությունը մոլի հյուրասեր է եղել, նա հաճախ իր շեն տանը օրերով պահել է հեռու և մոտիկ շատ ծանոթների, ազգականների, քիրվաների, անծանոթների։ «Աշխարհը կմնա, սաս մարդս սևերես չմնա»,— սիրել է կրկնել Հարությունը։ Պատմում են, որ նա նույնիսկ ներողամիտ է եղել գողերի նկատմամբ, որոնք նույնպես երբեմն «այցելել են» նրա տունը։ Մի անգամ, երբ գիշերով զինված ավազակներ են հարձակվում նրա տան վրա, ծերունին շապկանց դուրս է գալիս և հարցնում. «Արյուն թափելո՞ւ եք եկել, թե թալանի»,— «Թալանի»,— լինում է պատասխանը։ Եվ Հարությունը տնեցիներին կարգադրում է թույլ տալ գողերին վերցնել ինչ ցանկանում են։

Պատմվածքում ճիշտ է նաև այն փաստը, որ պրիստավը նստել է հարևան բնակավայրում, որ Գորիսն է։

Իրական փաստերի մի մասը հեղինակը փոփոխել է իր գեղարվեստական մտահղացման համեմատ։ Այդ շեղումներից կարևոր են հետևյալները։

Ամենից առաջ պատմվածքում Եգորի փաստական արարքը և նրա անձը թողնված են մշուշի մեջ։ «Նրա աքսորման մասին հակասական պատմություններ կային, որոնցից ոչ մեկը ճշմարիտ չէր։ Գիտեինք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է և իբրև թե հրացան է քաշել հրամանատարի վրա»,— կարդում ենք պատմվածքում։ Եգորի սիրային կապերի և կատարած մարդասպանության մասին խոսք չկա։ Հասկանալի է, որ հեղինակը մեղմել է Եգորի իրական արարքը, որպեսզի նրան համակրելի դարձնի ընթերցողին։ Իսկ դա էլ արվում է դարձյալ գլխավոր կերպարն ամբողջացնելու նպատակով։ Այն մարդը, որի համար այդքան հոգում է կենտրոնական հերոսը՝ Արթին պապը, պատմվածքում չպետք է հիշվի իր վանող կողմերով։ Միաժամանակ պատմվածքում ոչինչ որոշակի չի ասված փախուստի վերաբերյալ, դարձյալ խոսվում է զանազան

[1] Եգոր Ադամով է կոչվել Հարությունի փեսաներից մեկը, որի ընտանիքի հետ մոտ է եղել Բակունցը. ըստ երևույթին, Ադամով ազգանունը նա վերցրել է այդտեղից։

լուրերի մասին («Մերթ պատմում էին, թե սահմանն անցել և գնացել է Իրանի հողը և իբր թե նամակ է ուղարկում մեզ, բայց նամակը ճանապարհին բռնում են»)։ Շատ հավանական է նաև, որ Բակունցը երեխա ժամանակ հենց այդպիսի լուրեր է լսել քեռու մասին, քանի որ վերջինիս փախուստը, նամակագրությունը և գտնվելու վայրը, համենայն դեպս, մինչև 1905 թվականը խիստ գաղտնի է պահվել։ Բայց Բակունցն ավելի ուշ, նախքան պատմվածք գրելը իմացել է Եգորի ճիշտ պատմությունը, տեսել ու զրուցել է նրա հետ, մինչդեռ պատմվածքում հարմար է գտել նրա փախուստի մասին խոսել մշուշապատ։ Նպատակը դարձյալ Արթին պապի կերպարն ամբողջացնելն ու պատմվածքի գլխավոր մտահղացումը մինչև վերջ հասցնելն է։ Պատմվածքում Արթին պապը մեռնում է՝ բնավ չկորցրած թագավորից նամակի դրական պատասխանն ստանալու միամիտ հույսը։ Մինչև մահ էլ պատմվածքի Արթին պապը հոգով մնում է մանկան պես մաքուր, բարու նկատմամբ հավատով լի։ Պապի այդ միամիտ հավատն ու հույսն ընդգծելու հնարավորությունը չէր լինի, եթե պատմվածքում ասվեր իրողությունը Եգորի փախուստի, ամուսնության և Իրանում անցկացրած ապահով կյանքի մասին։

Բակունցին անհրաժեշտ էր նաև ողբերգական վերջ, որը պետք է է՛լ ավելի հուզիչ դարձներ պապի կերպարը և հակակրանք առաջացներ նրա հետ դատաստան տեսած պաշտոնյաների նկատմամբ։ Այս տեսակետից էլ գեղագիտորեն նպատակահարմար չէր պատմվածքում ասել Եգորի կյանքի բոլոր իրական փաստերը, խոսել նրա կատարած հանցագործության և փախուստի մասին։ Պատմվածքի վերջավորության ողբերգական տպավորությունը առաջ է գալիս նաև այն բանից, որ, ինչպես ասված է այնտեղ, «Եվ այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եգոր Աղամովը»։

Պատմվածքում Արթինի մահից մի տարի անց մահանում է նրա կինը Նազուն (իրականում Նազուն մահացել է ամուսնու մահից հինգ տարի անց)[1], որդու վիճակից անտեղյակ։

Հանձին Արթին պապի պատմվածքում մարմնացած է Բակունցի մի հիմնական մտահղացումը. հայ նահապետական գյուղի՝ Մթնաձորի բնորոշ մի ներկայացուցիչ, մի չապականված հոգի կանգնել է ապականության և ապականացման դեմհանդիման՝ մնալով անաղարտ։ Ամեն ինչ արված է այդ կերպարը գեղարվեստականորեն ավելի կատարյալ դարձնելու համար, և իրական փաստերից այն ամենը, ինչ որևէ կերպ կարող էր խանգարել դրան, բաց է թողնված կամ փոփոխված է հեղինակի կողմից։

Միաժամանակ, Արթինի այն հատկությունները, որոնք ներկայացված են պատմվածքում, մեծ մասամբ մոտ են իրողությանը, և իրական Հարություն Խուրշուդյանը շատ բանով է նման պատմվածքի Արթին պապին։ Բակունցն իր պապին լավ գիտեր, և երբ նրան իբրև կերպար պետք է ընթերցողին ներկա-

[1] Երիշենի հին գերեզմանոցում մնում է Բակունցի պապի և տատի շիրմաքարը՝ հետևյալ մակագրությամբ՝ «Հանգիստ Յարութիւն Խուրշուդեան վճ. 1915 թ. 83 ամաց և նորա կին Նազուն վճ. 1920 թ. 75 ամաց»։

յացներ շատ փոքրիկ պատմվածքում, անհրաժեշտ էր ընտրել այնպիսի դիպաշար և իրողությունների այնպիսի հատված, որ պապի հիմնական և հեղինակ Բակունցին հուզող հատկությունները միանգամից, խտացված ձևով հրամցվեին ընթերցողին: Դրա համար անհրաժեշտ էր գեղարվեստականորեն ճիշտ օգտագործել Եզոյի անվան հետ կապված ասքերը, վերցնել նրանցից այն, ինչ առավելագույն չափով կարող էր օգնել գրողի նպատակի իրականացմանը։

«Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքում հեղինակը սոսկ օգտագործել է եղելությունը (և ոչ գեղեցկացրել կամ հետաքրքիր դարձրել)՝ ստեղծելու համար իր բնորոշ կերպարներից մեկը։ Մյուս կողմից իրական դեպքերի, իրական մարդկանց ու վայրերի նկարագրությունները երկը դարձրել են ճշմարտապատում, անմիջական. սիրելի իրական պապի ու տատի մասին գրելիս հեղինակը «ինքնըստինքյան» հույզ պիտի խառներ տողերին։

Արթին պապին ու Նազուին կրկին հանդիպում ենք «Ձմռան մի գիշեր» պատմվածքում, որը գրվել է «Նամակ...»-ի հետ միաժամանակ և նրա հետ էլ տպագրվել «Սպիտակ ձին» գրքույկի մեջ։

## ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ

(էջ 222)

Բնագրային աղբյուրներ՝ ՆՈՒ, 1931, գիրք 2, ՍՅՍԺ։

Տպագրվում է ըստ ՍՅՍԺ-ի բնագրի: Կատարված է հետևյալ ճշտումը.

էջ 232, տողեր 25—27. Ըստ ՍՅՍԺ-ի՝ *եթե այդ կինը բլրակի վրա լիներ և տեսներ, որ շունը վերադարձել է, պառկել փակ դռան առաջ*—ուղղված է՝ *եթե այդ կինը բլրակի վրա լիներ, կտեսներ, որ շունը վերադարձել է, պառկել փակ դռան առաջ։*

*Առաջին անգամ տպագրվել է 1931 թ. «Նոր ուղի» հանդեսի 2-րդ գրքում, հաջորդ տարին կրճատված տեղ է գտել մեծահասակների համար կազմված մի դասագրքում («Դասագիրք հայ լեզվի և գրականության», 3-րդ տարի)։ 1933 թ. հիմնովին վերամշակված տպագրվել է «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ, ապա՝ մի շարք դասագրքերում, ինչպես՝ 1934 թ.՝ Մ. Դուրգարյանի «Ընթերցարանում», 2-րդ դասար. համար («Բրուտանոցում» և «Հին դպրոցում» վերնագրերով) և 5-րդ դասարանի «Գրականության քրեստոմատիայում»՝ («Իմ ընկեր Անդոն» վերնագրով), 1935 թ. կրկին տպագրվել է նույն քրեստոմատիայի նոր հրատարակության մեջ և այլն։ 1955 թ. տեղ է գտել երկերի երևանյան հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» բեյրության ժողովածուի Ա հատորում, 1959-ին՝ «Եղբայրության ընկուզենիները» ժողովածուի մեջ, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում, 1969-ին՝ «Ալպիական մանուշակը» ժողովածուի մեջ։*

*1933 թվականից հետո պատմվածքի բոլոր վերատպությունները կատարվել են ըստ ՍՅՍԺ-ի բնագրի։*

*Պատմվածքի առաջին տարբերակը (ՆՈՒ) հրապարակվում է այս հատորի* Այլ խմբագրումներ *բաժնում։*

Պատմվածքը գրվել է 1931 թ., Երևանում, մասամբ Նորքում, որ եղել է գրողի սիրելի հանգստավայրը։

«Բռուտի տղան» Բակունցի ինքնակենսագրական բնորոշ պատմվածքներից է։ Առաջին դեմքով պատմողը թե՛ պատմվածքի հերոսներից է, թե՛ միաժամանակ իրական հեղինակը։ Անդոն (կամ Անտոնը) Բակունցի հորեղբոր՝ բրուտ Ավագի թոռն է։ Նրա հայրը՝ Մուխանը (Միքայելը), նույնպես բրուտագործությամբ է զբաղվել։ Պատմվածքում Ավագի թոռը դարձել է նրա որդին։ Բակունցն իր երկում ոչինչ չի ասում իր ու Անտոնի (Անդոյի) ազգակցության մասին։ Միաժամանակ հեղինակն իրականությունից չի շեղվում, երբ Անդոյին իր մանկության ընկերն է համարում։ Իրողություն է և այն, որ Անտոնը ուսումը թողել է կիսատ, Գորիսում աշխատել է որպես էլեկտրամոնտյոր, մասնակցել հեղափոխական շարժմանը։ Այնուհետև, նա փոխադրվել է Բաքու, երկու անգամ ամուսնացել. առաջին կնոջից ունեցել է մի դուստր, երկրորդից՝ երկու որդի։ Անտոնը մինչև վերջին տարիները բնակվում էր Բաքվում, մեկ-մեկ էլ այցելում Գորիս։

Պատմվածքում նկարագրված կամ հիշատակված բոլոր վայրերը իրական են. Գյունեյ թաղը, որի նկարագրությամբ սկսվում է պատմվածքը, Գորիսի Շենի (Կյորեսի) գլխավոր արեգունի թաղամասն է եղել։ Շենի մեջ կամ նրա շրջակայքում խոյացող բրգաձև, երկարավուն ժայռերը՝ նկատի ունի հեղինակը, երբ գրում է. «Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի կոնուսները» կամ «Տերրասաձև բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահռելի»։ Ճշգրիտ նկարագրված են Շենից դեպի Գորիս (նոր կառուցված քաղաքը) գնացող ճանապարհը («ձգվում է գետի եզրերով...» և այլն), Շենը քաղաքից բաժանող գետը՝ Վարարակնը, նրա վրա գցված կամուրջը, ջրաղացները («Ջրաղացները սահմանին են»), որոնցից հետո սկսվում է նորակառույց Գորիսը։ Ճշմարիտ են նկարագրված Շենից դեպի հնադարյան բրուտանոցները տանող ճանապարհները (ձմեռվա, գարնան), բրուտի քարանձավը, աշխատանքը նրանում։

Լաստի խութը Շենի թիկունքին վեր խոյացած ամենաբարձր ժայռն է, Նեղը՝ Վարարակն գետի սահանքային մի հատվածը։ Այդ գետում ամռանը լողանում էին Շենի երեխաները, նրանց հետ նաև մանուկ Սանդրին (Ա. Բակունցը), ուստի այն նվիրական է հեղինակի համար («Ահա մեր գետը, մեր զուլալ գետը...»)։

Ճշգրիտ են արված նաև Գորիս քաղաքի նկարագրությունները. «քարափի գլխին նավթի պահեստն է»,— սա իրողություն է։ Ճիշտ են հայոց եկեղեցու և ոսկեփայլ գմբեթով ռուսաց ժամի, քաղաքի՝ արևի տակ շողշողացող թիթեղյա կտուրների, Գորիսից դուրս եկող (Դեպի Սիսիան) խճուղու և մյուս նկարագրությունները։ Պատկերված է նաև Գորիսի հայոց ծխական դպրոցը, որտեղ սովորել են Բակունցն ու Անտոնը։

Իրականի համեմատ որոշ անուններ են փոփոխված։ Գորիս կատարած մեր ուղևորությունների ժամանակ չկարողացանք հայտնաբերել Շենի այն թաղամասը, որ Բակունցն անվանում է Հյումբաթի ձոր (այդ մասին տե՛ս համանուն պատմվածքի ծանոթագրություններում)։ Պատմվածքում հիշատակվող Դոնգան ան-

*վանումը տարեց կյորեսցիները արտասանում էին Դընգըղընգան: Պատմվածքում մի քանի անգամ հիշված Ցից քարը նույնպես փոփոխված տեղանուն պիտի լինի: Գորիսում կա Ցից քար, որի ընդունված անունն է Պոռտաքար (չբեր կանանց այցելավայր է), բայց այն գտնվում է ոչ թե պատմվածքում նշված վայրում, այլ Սիսիան գնացող խճուղու մոտակայքում և շատ ավելի փոքր է, քան Բակունցի պատկերածը:*

*«Բրուտի տղայում» հեղինակը քնարական շնչով է վերհիշում մանկությունը, մանուկ օրերի սիրելի դեմքերը, հարազատ վայրերը: Այդ մարդիկ մեծ մասամբ չկան, իսկ Շենը ամբողջովին ավերակ է, բրուտանոցները լքված, չի վշշում Գյունեյ թաղի թիկունքի առուն, չկան ընկուզենիները, ամբողջովին լքված է ու մռայլ Գյունեյ թաղը: Բայց հինավուրց Շենը շարունակում է ապրել Բակունցի այս երկում, իրականից կատարված բնանկարները կենդանի են, չհնացող:*

*Պատմվածքում անընդհատ ուժեղանում է հուզականությունը: Պետք էր միայն ճիշտ ավարտել ազատատենչ Անդոյի պատմությունը, տալ պատմվածքին այնպիսի վերջ, որ հուզականությունը հասներ գագաթնակետին, և հերոսականությունը ոչ թե մնար կես ճանապարհին, այլ հանգեր մի սխրական վախճանի: Այդպիսի վերջ Բակունցը գտել է. դա Անդոյի եղերական մահն է, նրա մոր՝ Անա գիզիի և հոր՝ Ավագի վիշտը: Թեև այս ամենը ոչ մի առնչություն չունի իրական Անտոնի հետ:*

*Հավանական է թվում, որ իր հերոսի սպանության հանգամանքը Բակունցը նույնպես ինչ-որ իրողության վրա է կառուցել: Մի հոդվածում գրողը հիշում է քաղաքացիական կռիվներում զոհված իր մի ընկերոջ մասին («Լիտերատուրնայա գազետա», 1936, 15 հունիսի): Թերևս, այս սպանության փաստն է մասամբ օգտագործվել պատմվածքում այն ուժեղ վերջացնելու նպատակով:*

*Պատմվածքը կթուլանար, գեղագիտական առումով լիովին կայլակերպվեր, եթե նրա վերջում իրողությունը պատմվեր, այսինքն՝ հերոսացած Անդոն Բաքու գնար, ամուսնանար, այն էլ երկու անգամ, անվրդով կյանք վարեր մինչև ծերություն: Անդոյի ողբալի մահով նրա կերպարը ոչ միայն տպավորիչ, այլ նաև մի տեսակ ողբերգականորեն դյուցազնական է դառնում:*

էջ 228, տող 6. *Պրոմեթևս*—(նաև՝ Պրոմեթես) Հին հունական դիցաբանության հերոս. տիտան, որ աստվածներից կրակը գողացավ ու մարդկանց տվեց: Դրա համար Զևսը պատժեց նրան՝ գամելով Կովկասյան լեռներին, որտեղ անգղը կրծում էր նրա լյարդը: Ազատվեց Հերկուլեսի կողմից:

էջ 244, տող 32. *Վերի գյուղի ուսուցիչն...*—Նկատի ունի Գորիսի մերձակա Ծրիշեն (Վերին Շեն) գյուղը:

էջ 255, տող 11. *Բիբլիական Հովբի նման*—Հովբը (կամ Հոբը) Աստվածաշնչի հերոսներից է, որի կյանքի նկարագրությունը տրված է Հին կտակարանի «Գիրք Յոբայ» բաժնում:

## ՍԵՎ «ՀԱՅԸ»

*(էջ 257)*

Բնագրային աղբյուրներ՝ ՆՈՒ 1931, գիրք 1, ՍՅՍԺ։

Տպագրվում է ըստ ՍՅՍԺ-ի բնագրի։ Ուղղումներ.

էջ 262, տողեր 20—21. ըստ ՆՈՒ-ու և ՍՅՍԺ-ի *երեխաներն էին*—ուղղված է՝ *երեխաներն են*։

էջ 281, տող 11. ըստ ՍՅՍԺ-ի *շինանյութերի*—ուղղված է ըստ ՆՈՒ-ի տարբերակի՝ *շինությունների*։

*Առաջին անգամ հրապարակվել է 1931 թ. «Նոր ուղի» հանդեսում (գիրք 1), 1933 թ. վերամշակված տպագրվել է «Սև ցելերի սերմնացանը» ժողովածվում։ Այս տարբերակը 1955 թ. տեղ է գտել Երկերի երևանյան հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» բեյրության ժողովածուի Ա հատորում, 1964 թ.՝ երկերի առաջին հատորում։*

*Պատմվածքի առաջին տարբերակը տպագրվում է այս հատորի* Այլ խմբագրումներ *բաժնում։*

*Գրվել է 1930 թվականին և պատկերում է այդ շրջանի երևանյան կյանքը։*

էջ 266. տողեր 32—33, էջ 276, տողեր 15—16.

*Նաան կլեպ պոռշգ,*
*Նեյնիմ, ամա՞ն, ամա՞ն...*

Հատված ժողովրդական երգից, որի մի տարբերակը տեղ է գտել Մ. Աբեղյանի «Ժողովրդական խաղիկներում», էջ 222, № 716։

## ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

*(էջ 285)*

Բնագրային աղբյուրներ՝ ՍՁԺ, ՍՅՍԺ։

Տպագրվում է ըստ ՍՅՍԺ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 290, տող 21—22. ըստ ՍՅՍԺ-ի՝ *որ անսել էր մոր խոսքը*—ուղղված է ըստ «Սպիտակ ձին» գրքույկի բնագրի՝ *որ չէր լսել մոր խոսքին*։

էջ 301, տող 4. ՍՅՍԺ-ի բնագրում՝ *պիտի քցեին*—ուղղված է՝ *պիտի գցեին*,

էջ 303, տող 9. ՍՅՍԺ-ի բնագրում՝ *քցեց*—ուղղված է՝ *գցեց*։

Ուղղումների հիմք՝ ՍՁԺ-ի բնագրում *գցել* բայի միայն *գ*-ով տպված լինելը։

*Առաջին անգամ տպագրվել է 1929 թ. Մոսկվայում, «Սպիտակ ձին» խորագիրը կրող գրքույկի մեջ։ 1933 թ. հիմնովին վերամշակված տեղ է գտել «Սև ցելերի սերմնացանը» ժողովածվում։ Այնուհետև, 1938 թ. տպագրվել է հեղինակի «Պատմվածքներ» ժողովածուի (Փարիզ) մեջ, 1955-ին՝ Երկերի երևանյան միհատորյակում և «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության առաջին*



409—42

*Հատորում, 1959 թ.՝ «Եղբայրության ընկուզենիները» ժողովածվում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում, 1969-ին՝ «Ալպիական մանուշակ» ժողովածուի մեջ։*

*1933 թվականից հետո պատմվածքի բոլոր վերատպությունները կատարվել են ըստ «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի։*

*Պատմվածքի առաջին տարբերակը տպագրվում է այս հատորի* Այլ խմբագրումներ *բաժնում։*

*Գրվել է 1928 թ.։ Պատմվածքում պատկերված գյուղը Եղիշենն է, մոտակա քաղաքը (կամ «գավառական ավանը»), որտեղ կատարվում է ձիահավաքը, Գորիսը։ Հեղինակն օգտագործել է պատերազմի կապակցությամբ, 1915 թ. տեղի ունեցած ձիահավաքը և նրա հետ առնչված որոշ դեպքեր։ Ձիահավաքի օրը, ինչպես հիշում են տարեց գորիսեցիները, սանձակոտրուկ մի ձի, հավաքատեղիից փախչելիս, ընկել է փշալարի վրա, որից ամբողջովին ճեղքվել է նրա որովայնը։ Այդ եղելությունը ևս օգտագործված է պատմվածքում։*

## *ՊՐՈՎԻՆՑԻԱՅԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ*

*(էջ 310)*

Բնագրային աղբյուր՝ ՍՑՍԺ: Ուղղում.

էջ 319, տող 25. ըստ ՍՑՍԺ-ի *առտնի*—ուղղված է՝ *առտնին*։

*Առաջին անգամ տպագրվել է 1933 թ. «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ, 1955 թ. տեղ է գտել Երկերի երևանյան միհատորյակում և «Ամբողջական գործը» բեյրության ժողովածուի Ա հատորում, ինչպես և 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*Գրված է 1932 թ.։ Պատկերված է նույն ժամանակաշրջանի Երևանը։ Պատմվածքի գլխավոր «հերոսներից» է Աստաֆյանը, որ երկար ժամանակ եղել է Երևանի գլխավոր և ամենաբարեկարգ փողոցը։ Երեկոյան Աստաֆյանը վեր էր ածվում քաղաքի գլխավոր զբոսավայրի։ Պատմվածքը գրվելու ժամանակ փողոցն արդեն վերանվանված էր Աբովյան, և Բակունցը գործածում է նաև այս անունը, բայց և ցույց է տալիս, որ դեռևս ավելի գործածական էր* Աստաֆյան-*ը։ Իրական է նաև քաղաքում տրամվայի առաջին գծի անցկացման վերաբերյալ ամբողջ ավանդը։ Պատմվածքում հիշատակված մյուս տեղանունները՝* Գետառ, Տպագրիչների փողոց, *նույնպես իրական են։*

էջ 314, տողեր 11—12. *երևելն արեգական անէանան աստեղունք*—պետք է ճշտել՝ «Ի երևիլն արեգական...»: Կան նաև «Ի ծագելն արեգական խաւարին աստեղք», «Ի ծագելն արեգական կորնչին աստեղք» (համապատասխանաբար նշանակում են՝ «Արեգակի երևալու ժամանակ աստղերը անէանում են», «Արեգակի ծագելու ժամանակ աստղերը խավարում են», «...աստղերը կորչում են»):

էջ 315, տողեր 3—14. Կարելի է ենթադրել, որ *նշանավոր պոետը* Ե. Չարենցն է, *իսկ մի այլ բանաստեղծ-ը*՝ Գ. Մահարին:

## *ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ*

*(էջ 327)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1933 սեպտ. 6, № 207, ՍՑՍԺ, ՍՑՍԳ:

Տպագրվում է ըստ ՍՑՍԺ-ի բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 327, տող 2. ՍՑՍԺ-ի բնագրում չկա 1-ը —դրված է ըստ ԽՀ-ի և ՍՑՍԳ-ի բնագրերի:

էջ 333, տող 15. Ըստ ԽՀ-ի, ՍՑՍԺ-ի և ՍՑՍԳ-ի՝ *դռնակներով*—ուղղված է՝ *դռնակով*։

էջ 335, տող 19. ՍՑՍԺ-ի բնագրում՝ *այլասեռման*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *այլասերման*։

*Առաջին անգամ տպագրվել է 1933 թ. սեպտեմբերի 6-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա որոշ մշակումից հետո, նույն թվականին՝ «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուի մեջ։ 1934 թ. տպագրվել է «Հայ գրականություն քրեստոմատիայում» (10-րդ դաս. համար), 1935-ին՝ «Հայաստանի գրողները տասնհինգամյակին» ժողովածուի մեջ (Երևան), իսկ 1936 թ. լույս է տեսել առանձին գրքույկով։ 1938 թ. պատմվածքը տեղ է գտել հեղինակի «Պատմվածքներ» ժողովածվում (Փարիզ), 1955-ին՝ Երկերի երկանյան հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» բեյրության ժողովածուի Ա հատորում, 1964 թ.՝ Երկերի առաջին հատորում, 1959 թ.՝ «Եղբայրության ընկուզենիները», 1969 թ.՝ «Ալպիական մանուշակ» ժողովածուներում։*

*Գրված է 1932 թ.։*

էջ 328, տող 26. *աղբակեր սկարաբեյը* (առաջին տարբերակում՝ *աղբակիր սկարաբեյը*)—լատիներեն *scarabaeus* բառից: Հայերեն՝ *աղբաբզեզ* կամ *կոյաբզեզ*։ Միջատների այս տեսակը հին Եգիպտոսում համարվում էր սրբազան, իբրև արևի աստվածության մի դրսևորում: Հեղինակի ակնարկը հին եգիպտացիների պատկերացման մասին *(«հավատում էին, թե նա է գլորում երկրագունդը, ինչպես այս կլոր աղբը»)* իրողություն է:

էջ 329. տող 12. *Հին Բաբելոն*—Միջագետքի հնագույն պետություններից, որ ձևավորվել է մ. թ. ա. XIX դարում և գոյատևել մինչև VIII—VII դդ. (մ. թ. ա.): Ավելի ուշ՝ մ. թ. ա. VII դարի վերջում ստեղծվեց Նոր Բաբելոնի թագավորությունը, որը VI դարում (մ. թ. ա.) նվաճվեց պարսիկների կողմից:

էջ 329, տող 12. *էլամների աշխարհը*—ընդունված անվանաձևն է *էլամ*։ Ասիայի հնագույն երկրներից և պետություններից, որ զբաղեցրել է արդի Իրանի հարավարևելյան մասը, գոյություն է ունեցել մ. թ. ա. 3-րդ հազարամյակից մինչև VII դարը: Ունեցել է բարձր քաղաքակրթություն, որ ժառանգել են իրանցիները:

էջ 329, տող 13. *Աղի լիճը*—նկատի ունի *Մեռյալ ծով* կոչվող լիճը, որ գտնվում է Պաղեստինում (ունի 1 ք.կմ մակերես): Նրա ջրերում եղած աղի մեծ քանակի (260%) պատճառով կենդանական կյանք գոյություն չունի:

էջ 329, տող 13. *Միջագետք*—երկու գետերի՝ Եփրատի և Տիգրիսի միջին ու ներքին հոսանքների միջև գտնվող տարածքը, որ եղել է մարդկային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկը: Այժմ Իրաքի տարածքի մեջ է:

# «ԱՆՁՐԵՎԸ» ՇԱՐՔ

*Բակունցի պատմվածքների երեք շարքերից այս վերջինը, իբրև առանձին գրքույկ, «Անձրևը» վերնագրով լույս է տեսել 1935 թ. և ընդգրկում է 9 պատմվածք, որոնցից 8-ը նախապես հրապարակվել են «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, իսկ մեկը՝ «Սաքուն» այստեղ էր տեղափոխված «Մթնաձոր» շարքից։ Տեղափոխության պատճառը գուցե և այն է եղել, որ «Սաքուն» «Մթնաձորի» միակ պատմվածքն է, որ, ըստ երևույթին, շատ էլ չի ներդաշնակվում այդ շարքի ընդհանուր «մթնոլորտին», մինչդեռ «Անձրևը» շարքում այն կարծես իր տեղում է՝ տարբեր ազգությունների պատկանող հերոսներ ունեցող այլ պատմվածքների կողքին («Ձորեքի լույսը», «Մի անգամ հոկտեմբերի 25-ին»)։ Ներկա հատորի մեջ «Սաքուն» դրված է իր նախկին շարքի մեջ (տե՛ս «Մթնաձոր» շարքի ծանոթագրությունը)։*

*«Անձրևը» ժողովածուի մեջ ևս (ինչպես «Սև ցելերի սերմնացանում») պատմվածքների վերջում կա գրության թվականը, բացի «Հյումբաթի ձոր» և «Մուրոյի «զրույց»-ը» երկերից։*

*1955 թվականին հեղինակի երկերի երկանյան հրատարակության մեջ «Անձրևը» շարքը տեղ գտավ առանց «Եվ բարակը թույլ տվավ իրեն...» պատմվածքի։ Երկերի 1964 թ. երկհատորյակում շարքը տպագրվեց ամբողջությամբ՝ ըստ 1935 թ. կազմի։*

## ՀՅՈՒՄԲԱԹԻ ՁՈՐ

*(էջ 341)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ 1926, դեկ. 26, № 298, Աժ։

Տպագրվում է ըստ Աժ-ի բնագրի։ Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 341, տողեր. 3, 17, էջ 343, տողեր 14—15, էջ 345, տողեր 7—8, էջ 347, տող 1. Ըստ Աժ-ի բնագրի՝ *Մահլա*—ուղղված է ըստ նույն բնագրում միևնույն քառի այլ գործածությունների՝ *մահլա*։

էջ 343, տող 9, էջ 344, տող 25—26. Ըստ Աժ-ի՝ *Մելիք Բախտամ*—ուղղված է համաձայն ԽՀ-ի բնագրի և Աժ-ի բնագրում եղած այլ գործածությունների (էջ 343, տող 4, էջ 344, տող 21, էջ 348, տող 19)՝ *Մելիք-Բախտամ*։

*Առաջին անգամ տպագրվել է 1926 թ. դեկտեմբերի 26-ին «Խորհրդային Հայաստան» լրագրում։ Ապա որոշ կրճատումներով տեղ է գտել դասագրքերի մեջ, ինչպես՝ 1929-ին «Կարմիր ուղի. հայերենի աշխատանքի քրեստոմատիայում», 1931-ին՝ «Նոր աշխարհ» դասագրքում (Ե տարի), 1932-ին՝ երկու դասագրքերում՝ «Դասագիրք լեզվի և գրականության, 5-րդ տարի» և «Դասագիրք լեզվի և գրականության. Դ տարի»։ Լրջորեն վերամշակվելուց հետո 1935-ին տեղ է գտել «Անձրևը» ժողովածուի մեջ։ Այնուհետև, այդ վերջին խմբագրմամբ 1955 թ. տպագրվել է Երկերի միհատորյակում, «Ամբողջական գործը» բերրության հրատարակության Ա հատորում, Երկերի 1964 թ. առաջին հատորի մեջ։*

Գրելու ստույգ թվականը հայտնի չէ։ «Անձրևը» ժողովածվում այս երկի վերջում թվական չի դրված։ Բակունցի երկերի 1955 թ. հրատարակության մեջ «Հյումբաթի ձորի» վերջում կազմողի կողմից դրված է 1926 թ., որ ճիշտ պետք է լինի։

Բնականաբար, «Հյումբաթի ձորը» գրվել է նախքան 1926 թ. դեկտեմբերի 26-ը (այսինքն՝ նախքան հրապարակվելը)։ Առավել հավանական է թվում, որ այն գրված լինի 1926 թվականի աշնանը կամ դեկտեմբերի սկզբներին։ Երկի մեջ հեղինակն իրեն ներկայացնում է իբրև դրսից, կենտրոնից եկած, որ ուղեկիցների հետ շրջում է Գորիսի Շենում, ապա մասնակցում իր գալու առիթով գումարված ժողովին և այլն։ Նշանակում է, ակնարկը հեղինակը գրել է այն ժամանակ, երբ այլևս Գորիսում չէր բնակվում, այլ՝ Երևանում, այն է՝ 1926 թ. մարտից հետո։ Երկում կա այսպիսի նախադասություն. «Գետի ափին կանայք ցորեն էին լվանում աշնան արևոտ մի օր, երբ երեք թաղն էլ քարափից դիտելուց հետո, իջանք ձորը»։ Նշանակում է այցը կատարվել է աշնանը։ Դա կարող էր լինել միայն 1926 թվականի աշունը։ Երկը կարող էր գրվել կամ այցից անմիջապես հետո, կամ փոքր-ինչ ավելի ուշ։

«Հյումբաթի ձորը» ավելի շատ ակնարկի բնույթ ունի, քան՝ պատմվածքի։ Նկարագրված է Գորիսի Շենի (Կյորես գյուղի) մի թաղամասը (Շենի թաղամասերից երեքը ձորերում են եղել և այդպես էլ կոչվել են՝ ձոր), որը հեղինակն անվանում է Հյումբաթի ձոր։ Մեր ջանքերը պարզելու համար, թե հինավուրց Շենի որ թաղամասն է այդ անունով կոչվել, արդյունք չտվին։ Գորիսում զրուցել ենք մի շարք տարեց մարդկանց հետ, հին կյորեսցիներ Դանիել Ղուկասյանի և Աթանաս Սարդարյանի հետ շրջել ենք ավերակ Շենում։ Բակունցի տարբեր երկերում («Կյորես», «Բրուտի տղան», «Հյումբաթի ձոր» և այլն) նկարագրված շենը՝ իր բոլոր թաղերով ճիշտ-ճիշտ համապատասխանում էր մեր ուղեկիցների տված բացատրություններին. Գյունեյ թաղը, Միջին մահլան, մելիքների բերդը, ձիթհանքը (սրանոց), դեպի բրուտանոցները տանող ճանապարհը, բրուտների քարանձավները և առհասարակ Շենի բոլոր մասերը լիովին համընկնում են նրանց նկարագրություններին՝ տրված Բակունցի կողմից։

Մեր ուղեկիցները ցույց տվեցին անգամ Բակունցի նկարագրած մի շարք հին կյորեսցիների, այդ թվում նշանավոր Ցուլ Օհանի (Քյալա Օհան) և Գյուրջի Օբու ավերակ տները։ Սակայն Հյումբաթի ձոր անունով թաղամաս ոչ մի տարեց գորիսեցի չհիշեց։ Շենի այն թաղամասը, որ Բակունցն անվանում է Հյումբաթի ձոր, ըստ մեր վերոհիշյալ ուղեկիցների կոչվում է Շաքարամին ձոր կամ Քյալա Օհանի ձոր։ Նրան կից է Տոռոզի ձորը, որով և վերջանում է Շենը։ Գորիսում կան նաև Դրնգանի (Դընգըընգանի), նույնիսկ Քյումբաթի ձորեր, բայց ոչ՝ Հյումբաթի։ Արդյոք սխալվե՞լ է հեղինակը կամ գուցե Քյումբաթ-ն է մի փոքր փոփոխած օգտագործել Շենի թաղերից մեկն անվանելու համար։ Հնարավոր է։ Բեև չի կարելի լիովին բացառել, որ, այնուամենայնիվ, Բակունցի գործածած Հյումբաթի ձոր անվանումը իրական է և պարզապես մոռացված թեկուզ տարեց գորիսեցիների կողմից։

*«Հյումբաթի ձորում» նկարագրված է 1926 թվականի այն ժամանակաշրջանը, երբ որոշվել էր հին Շենից բնակչությունն ամբողջովին տեղափոխել գետի մյուս ափը, որտեղ օր-օրի մեծանում էր նոր Գորիսը։ Ա. Բակունցն իր այս երկում ներկայացնում է այդ առիթով Շենում կայացած՝ նրա բնակիչների ժողովներից մեկը։*

*Հնադարյան Կյորեսի քարանձավային տները աստիճանաբար լքվեցին, Շենը լիովին ավերվեց։ Միայն 1950-ական թվականներին այնտեղ նորից հայտնվեցին հատուկենտ բնակիչներ (Ղարադաղից վերաբնակված), իսկ այժմ սկսել են Շենի տարածքն օգտագործել բնակելի նոր շենքեր կառուցելու նպատակով։ Բայց, ինչարկե, հին Կյորեսը անդարձ անցել է պատմության գիրկը՝ իր գեղանիստ թաղամասերով, մարդկանցով, ավանդներով։*

էջ 343, տող 4 և հետո. *Մելիք-Բախտամ*—Արցախ-Սյունիքի նշանավոր մելիքներից: 1781 թվականից Դիզակի իշխանը:

էջ 343, տող 27. *Քիրմանի շալ*—Քիրման (Քերման) քաղաքը գտնվում է Պարսկաստանի հարավ-արևելքում, հայտնի է բարձրարվեստ գորգերի և շալերի արտադրանքով:

էջ 344, տող 17. *Մորոզով*—Մորոզով եղբայրները արդյունաբերողներ էին, Ռուսաստանի տարբեր մասերում հիմնել էին մանածագործական գործարաններ, որոնց արտադրանքը աշխարհում հայտնի էր բարձր որակով:

## *ՏԻԳՐԱՆՈՒՀԻ*
## *(էջ 349)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1927, հունվ. 16, № 12, ԱԺ:

Տպագրվում է ըստ ԱԺ-ի բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 349, տողեր 2—6. ԱԺ-ում այս պարբերության մեջ *ինչքան, քանի, երբ* բառերի վրա հարցականներ են դրված, ԽՀ-ի տարբերակում՝ չեղտեր: Ուղղել ենք ըստ ԽՀ-ի տարբերակի:

էջ 351, տող 18. ըստ ԱԺ-ի բնագրի՝ *հանգստացնելու*—ուղղված է ըստ ԽՀ-ի տարբերակի՝ *հանգստանալու։*

էջ 351, տողեր 26—27. ԱԺ-ի բնագրում՝ *հետևյալ խորհրդակցությունն անել*—համարել ենք վրիպակ և ուղղել՝ *հետևյալ խորհրդածությունն անել։*

էջ 352, տողեր 30—31. Ըստ ԽՀ-ի և ԱԺ-ի՝ *«Գիշերս մահացավ նորածինը, առանց անուն դնելու»*— ուղղված է ըստ նույն բնագրի վերջում եղած այդ նախադասության կրկնության՝ *«Գիշերս մահացավ նորածինն առանցի անունը դնելու»։*

*Առաջին անգամ հրապարակվել է 1927 թ. հունվարի 16-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա հեղինակային մշակմամբ 1935 թ. տեղ է գտել «Անձրևը» ժողովածուի մեջ, 1955-ին տպագրվել է հեղինակի Երկերի երևանյան*

*հրատարակության մեջ և «Ամբողջական գործը» բնյրության ժողովածուի Ա հատորում, 1964 թ. տեղ է գտել Երկերի 1-ին հատորում։*

*Գրված է (ըստ «Անձրևը» ժողովածուի մեջ պատմվածքի վերջում հեղինակի արած նշումի) 1925 թ.։*

## *ԵՎ ԲԱՏՐԱԿԸ ԹՈՒՅԼ ՏՎԱՎ ԻՐԵՆ...*
## *(էջ 355)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1926, ապր. 22, № 94, Ածւ:**
**Տպագրվում է ըստ Ած-ի բնագրի: Կատարված է հետևյալ ուղղումը.**
**էջ 356, տող 3. Ած-ի բնագրում՝ *քցեց*—ուղղված է՝ *գցեց*։**

*Առաջին անգամ հրապարակվել է 1926 թ. ապրիլի 22-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, մշակումից հետո 1935 թ. տպագրվել է «Անձրևը» ժողովածուի մեջ, 1955 թ. տեղ է գտել բնյրության «Ամբողջական գործի» Ա հատորում, 1964-ին Երկերի 1-ին հատորում։*

*Ըստ «Անձրևը» ժողովածուի մեջ՝ պատմվածքի վերջում դրված թվականի գրվել է 1925-ին (այս հատորում պատմվածքի վերջում եղած 26-ը տպագրական վրիպակ է, պետք է լինի* 25):

**էջ 355, տող 11. *Մրոց* տեղանվան մասին տե՛ս «Մրոց» պատմվածքի առաջին ծանոթագրությունը:**

## *ՄՈՒՐՈՅԻ «ՋՐՈՒՑ»-Ը*
## *(էջ 360)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1930, հունվ. 22, № 19, ՀՆ, Ած:**
**Տպագրվում է ըստ Ած-ի բնագրի:**

*Առաջին անգամ հրապարակվել է 1930 թ. հունվարի 22-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում։ Ապա 1932 թ. «Հոկտեմբեր—Նոյեմբեր» տարեգրքում (Երևան), 1934-ին՝ «Լենին։ Գրողները Լենինի մասին» ժողովածուի մեջ (Երևան) և դասագրքերում (ինչպես, օրինակ. 1934, 1935 թթ.՝ միջն. դպրոցների 5-րդ տարվա «Գրականության քրեստոմատիայում»)։ Մշակումից հետո, 1935 թ. տեղ է գտել «Անձրևը» ժողովածվում, այնուհետև մի շարք անգամ հրապարակվել է պարբերականներում, ժողովածուներում, դասագրքերում։ 1955 թ. տեղ է գտել Ծրկերի երևանյան հրատարակության մեջ և բնյրության «Ամբողջական գործի» Ա հատորում, 1957-ին «Լենինը մեր սրտում» գրական-գեղարվեստական ժողովածուի մեջ, 1959-ին՝ «Ողբայրության ընկուզենիները» ժողովածվում, 1960-ին լույս է տեսել առանձին գրքույկով, ինչպես և տպագրվել է «Սովետահայ գրականության ընտիր էջեր։ Արձակ» հրատարակության մեջ, 1964 թ.՝ Երկերի առաջին հատորում, 1969-ին՝ «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի հետ հրատարակվել է առանձին գրքույկով։*

Գրողի վախճանից հետո պարբերական մամուլում պատմվածքի մի շարք հրապարակումներից կարելի է նշել հետևյալները՝ 1955 թ. «Սովետական գրականություն», № 4, 1959՝ «Ավանգարդ», № 48, 1960՝ «Սովետական Հայաստան», № 32, «Երևան», № 96։

«Անձրևը» ժողովածուի մեջ պատմվածքի վերջում թվական չկա։ Երկերի 1955 և 1964 թթ. հրատարակություններում պատմվածքի վերջում դրված է 1932, որ չի կարող լինել պատմվածքը գրելու ճիշտ թվականը թեկուզ այն պատճառով, որ երկն առաջին անգամ հրապարակվել է 1930 թ. հունվարին։

Պատմվածքում եղած նկարագրությունները ցույց են տալիս, որ հեղինակը Մաղդա գյուղում եղել է և իր հերոսի՝ Մուրոյի նախակերպարին հանդիպել ամռանը կամ աշնան սկզբին։ Դա պետք է լինի 1929 թ. ամառը կամ աշունը, ուստի երկը պետք է գրված լինի այդ ժամանակ կամ դրանից հետո մինչև հրապարակվելը։

Բակունցի այս պատմվածքը ևս իր նախապատմությունն ու նախակերպարն ունի։ Աշտարակի շրջանի լեռնային Մաղդա գյուղում (այժմ՝ Լեռնաշեն) սասունցի վերաբնակիչներ են ապրում։ Մինչև վերջերս այնտեղ 38-րդ խորհտնտեսությունում աշխատում էր Գևորգ Ավետիսյան անունով մի սասունցի, որ և բակունցյան Մուրոյի նախակերպարն է, արտաքինով շատ նման նրան։ Գևորգը լավ հիշում էր հանդիպումը քաղաքից եկած երկու մարդկանց հետ։ Նա ծանոթ էր նաև Բակունցի պատմվածքին։ Դժգոհ էր, որ հեղինակը իր մասին գրել է, թե ոչ մի հարազատ չունի, քանի որ իրականում ունի եղբայր։ Բակունցը իրողությունից այս շեղումը, բնականաբար, կատարել է գեղարվեստական նկատառումով. որևէ հարազատ չունեցող արևմտահայ վերաբնակիչ հովիվը «Մուրոյի «զրույց»-ում ավելի տպավորիչ պետք է լիներ։

Գրողը փոխել է նաև իր նախակերպարի անունը՝ անվանելով նրան Մուրո, որ նույնպես գեղարվեստական նկատառումով է արված. այդ անունը ավելի «հովվական» է հնչում պատմվածքում և համապատասխան գունավորում տալիս։ Իրականում Բակունցն ունեցել է մի այլ ծանոթ հովիվ, քուրդ՝ Հակո Շամիլով, որին նաև Մուրո են ասել։ Այս մարդը առնչություն չունի «զրույց»-ի հետ, նրանից հեղինակը միայն Մուրո անունն է վերցրել և այդպես կոչել իր գրական հերոսին։ Դա, ի դեպ, պատճառ է դարձել, որ Հ. Շամիլովը նույնպես պնդի, թե Բակունցի Մուրոն ինքն է։ Մամուլում բակունցյան այդ հերոսի նախակերպարի վերաբերյալ մի քանի նյութեր են տպագրվել (հմմտ. «Ավանգարդ», 1960, № 117 և 1964, № 109)։

Էջ 360, տող 5. *Արագդայան*—ավան և կայարան Հայկ. ՍՍՀ-ում, Նախիջևանի ԱՍՍՀ-ի սահմանի մոտ։ Նույն անունով կոչվում է ճարքավայրը։ Այժմյան անունը՝ *Երասխ*։

Էջ 366, տողեր 11—12. *Այղրի ջրհանը*—խոսքը Այղր լճի ջրհան կայանի մասին է (Հոկտեմբերյանի շրջան)։

## ՁՈՐԵՐԻ ԼՈՒՅՍԸ

*(էջ 367)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1933, օգոս. 18, № 191, Ած:**
**Տպագրվում է ըստ Ած-ի բնագրի:**

*Առաջին անգամ տպագրվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, 1933 թ. օգոստոսի 18-ին, ապա 1935 թ. մշակված՝ տեղ է գտել «Անձրևը» ժողովածուի մեջ, 1955 թ. Երկերի երկանյան հրատարակությունում և «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության Ա հատորում, 1964 թ.՝ Երկերի առաջին հատորում։*

*Նկարագրված է Աղվերանի մարմարի հանքի հայտնագործումը, որ ժամանակին մեծ աղմուկ հանեց։ Պատմվածքի հերոսը իրական անձ է, Միխայնա (այժմ Հանքավան) գյուղից։ «Ձորերի լույսը» ըստ էության ակնարկ է։ Բակունցն այն գրել է նույն՝ 1933 թ. հուլիս—օգոստոս ամիսներին Խոտորջուրի կամունայում (Միխայնայի մոտ) գտնված ժամանակ։*

Էջ 369, տող 10 և հետո. *Ֆալլուս*—ճիշտը՝ *ֆալլոս*,—այսպես կոչվում էր առնամասի հին հունական պատկերը, որ խորհրդանիշ էր պտղաբերության և բնության բարեբեր ուժի:

Էջ 370, տողեր 5—7. *Շիրվան*—պատմական անունը ներկայիս Ադրբեջանի մի ընդարձակ գավառի, որ ընկած է Քուռ գետից հյուսիս և ընդգրկում է Շամախի քաղաքը: *Իմերեթ*—պատմական անունը Վրաստանի արևմտյան շրջանների: *Գիլան*—գավառ Պարսկաստանում, որ զբաղեցնում է Կասպից ծովի հարավ-արևմտյան տարածքը Ռեշտ քաղաքի հետ:

## ԱՆՁՐԵՎԸ...

*(էջ 375)*

**Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1932, նոյ. 15, № 266, Ած:**
**Տպագրվում է ըստ Ած-ի բնագրի:**

*Առաջին անգամ հրապարակվել է 1932 թ. նոյեմբերի 15-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, 1935-ին մասնակի վերամշակումով տեղ է գտել «Անձրևը» ժողովածվում, 1954-ին Բեյրութում հրատարակված համանուն գրքույկի մեջ, 1955-ին՝ Երկերի երկանյան միհատորյակում և «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության Ա հատորում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*Գրվել է 1933 թ. նոյեմբերին, Զորագէսը շահագործման հանձնելու առիթով և այդ իրադարձությանը նվիրված՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի համարում էլ տպագրվել է։*

*«Անձրևը» ըստ էության ակնարկ է. գեղարվեստական բարձրարժեք բնապատկերներն այն հասցնում են պատկեր-պատմվածքի մակարդակի։ Պատկերվածը Լոռու ձորն է, Ձորագետը (Դեբեդը) և այն ժամանակ նորակառույց էլեկտրակայանը (Ձորագէսը)։*

էջ 376, տողեր 20—23.

*... Էս խոր ձորերում*
*Էս է՝ չորս քսան տարիս լրացավ,*
*Ոչ մի խնդություն տեսա իմ օրում,*
*Ոչ էլ մի անգամ աչքս լիացավ։*

Քառատող Հ. Թումանյանի «Հառաչանքից». հանված է առաջին տողի սկզբի մասը՝ «Ես քեզ օրինակ»:

էջ 376, տողեր 33—34. *ամեն մեռնողին երանի տալով*—տող Հ. Թումանյանի «Հառաչանք» վիպերգի ծերունու խոսքից.

Ես մեռած հո չեմ, ապրում եմ էլի,
Ամեն մեռնողի երանի տալով:

էջ 378, տող 15—16. *Մի տուն լիքը մանուկներ*—տող Հ. Թումանյանի «Գութանի երգը» բանաստեղծությունից.

Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

էջ 378, տողեր 17—19. *Ապա կանցնի նորոգ օրերի պատմությունը, երբ Լոռու ձորում մի խեղճ Զատի սպանեց Թավադին և «զակոնը» նրան քշեց Սիբիր*—Չոբան Զատին Հ. Թումանյանի «Հառաչանք» վիպերգի հերոսն է, որ թավադին կոպտելու համար ձերբակալվում է.

*Քննություն արին, բռնեցին գյադին,*
*Թե ինչպես ուշունց կտաս թավադին.*
*Բաց արին, տեսան գրած զակոնում,*
*Թե չոբան Զատին Սիբիր է գնում։*

Այնուհետև, «Հառաչանքի» պահպանված հատվածները ոչինչ չեն ասում Զատիի հետագա ճակատագրի մասին. արդյոք գնա՞ց Սիբիր, թե «ֆանի-ֆանի» մարդկանց հետ նա էլ «կորավ իր տնից», «դառավ մարդասպան», այսինքն՝ ավազակ: Բակունցը գրելով «նորոգ օրերի պատմության» մասին, երբ «Զատին սպանեց թավադին» և «զակոնը» նրան «քշեց Սիբիր», թումանյանական արտահայտությունները օգտագործելով, ակնարկում է Լոռու հեղափոխական շարժումը XX դարում:

## *ՄԻ ԱՆԳԱՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ...*

*(էջ 380)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1932, նոյ. 7, № 261, Աժ:

Տպագրվում է ըստ Աժ-ի բնագրի: Ուղղումներ.

Ըստ Աժ-ի բնագրի. էջ 380, տող 20՝ *կոզակների*, էջ 381, տող 20՝ *կոզակներ*—ուղղված է այլ երկերում (տե՛ս, օրինակ, «Օրանժիա» պատմվածքը) նույն բառի ուրիշ գործածությունների համաձայն՝ *կազակներ* (որ և ճիշտ ձևն է):

էջ 385, տողեր 19—20. Ած-ի բնագրում՝ *կարմիր գվարդիականներին դիրքերին*—ուղղված է՝ *կարմիր գվարդիականների դիրքերին։*

*Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1932 թ. նոյեմբերի 7-ի համարում՝ Հոկտեմբերյան հեղափոխության 15-ամյակի առթիվ։ Այնուհետև, 1935 թ. հեղինակային մշակումից հետո, տեղ է գտել «Անձրևը» ժողովածվում, 1955 թ. տպագրվել է Երկերի միհատորյակի մեջ և «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության Ա հատորում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*Պատմվածքն իրապատում է։ Հերոսները պատմական անձեր են, ռազմանավերի անունները նույնպես իրական են («Ավրորա», «Իմպերատոր Պավել», «Վիոլա»), իրական են պետերբուրգյան բոլոր վայրերի և շենքերի անունները։*

# ՔԵՌԻ ԴԱՎՈՆ

*(էջ 390)*

Բնագրային աղբյուրներ՝ ԽՀ, 1934, հունվ. 10, № 9, Աժ, ՔԴ:

Տպագրվում է ըստ Աժ-ի բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 390, տողեր 8—9. Աժ-ի բնագրում՝ *«խմբապետի»*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *«խմբապետ»։*

էջ 394, տող 1. Ըստ Աժ-ի՝ *այլասեռման*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *այլասերման։*

էջ 395, տող 34, 396, տող 1. Ըստ Աժ-ի՝ *ոչ վերևը պիտի սերմել և ոչ էլ ներքևը նոր։*— Ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *ոչ վերևը պիտի թանձր սերմել և ոչ էլ ներքևը՝ նոսր։*

էջ 396, տողեր 17—18. Ըստ Աժ-ի բնագրի՝ *որոնք միացրել են աշխատանքը*—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ *որոնք միացրել են իրենց աշխատանքը։*

*Առաջին անգամ հրապարակվել է 1934 թ. հունվարի 10-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում, ապա վերամշակված տեղ է գտել «Անձրևը» ժողովածվում։ Այնուհետև, 1936 թ. Երևանում տպագրվել է առանձին գրքույկով, **1955 թ.** տեղ է գտել Երկերի միհատորյակում և «Ամբողջական գործը» բեյրության հրատարակության Ա հատորում, 1964-ին՝ Երկերի առաջին հատորում։*

*Գրվել է 1934 թ.։ Պատկերված է Դավալու գյուղը, որի բնակչության զգալի մասը 1930-ական թթ. արևմտահայ վերաբնակիչներ էին։*

*Այս պատմվածքը «Միրանի փողի» հետ միասին 1930-ական թվականներին դարձավ Ա. Բակունցի դեմ կատարվող հարձակումների գլխավոր թիրախը (տե՛ս «Գրական սերունդ», 1936, № 5—6, էջ 33—35)։*

էջ 393 տող 14. *Շարուր*—բնակավայր և գավառ Արաքսի հովտում: Այժմ կոչվում է Նորաշեն և մտնում է Նախիջևանի ԱՍՍՀ-ի կազմի մեջ: *Օրդուբադ*—բնակավայր Արաքսի ձախ ափին, Ջուղայից (հին) դեպի արևելք:

## ԱՅԼ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐ

*Բակունցյան պատմվածքների այլ խմբագրումներից ութը բնագրային փոփոխակներ են, որ մյուսներից ավելի են տարբերվում վերջնական բնագրից, իսկ մեկը՝ «Մինա բիբի» պատմվածքի առաջին հրապարակումն է ռուսերեն, որ նկատելիորեն տարբեր է պահպանված վերջնական բնագրից։ Այդ պատմվածքների և նրանց այլ խմբագրումների վերաբերյալ ծանոթագրությունները տրված են համապատասխան տեղերում։ Այժմ նշվում են հրապարակվող յուրաքանչյուր բնագրի աղբյուրը և այն մասնակի ճշգրտումները, որոնք արել ենք այլ խմբագրումների բնագրերի մեջ՝ հենվելով կա՛մ նրանց տպարանային ձեռագրի (մեքենագրի), կամ տպագիր նախնական և կամ էլ վերջնական տարբերակների վրա, իսկ որոշ դեպքերում սոսկ նկատի առնելով, որ անճշտությունը ակնհայտ է՝ տպագրական վրիպակ կամ հեղինակային վրիպում։*

*Այստեղ ևս որոշ ուղղագրական ճշտումներ չեն նշված։ Օրինակ, «Մթնաձոր» ժողովածուի տպագիր բնագրերում եղած* **միքանի, միքանիսը, միքիչ, իվեր, իտես, ոչոք, ճուղեր** *և այլ ուղղագրական ձևերը այժմ հրատարակվող բնագրերում ճշտված են պատմվածքների ամենավաղ հրապարակումների կամ ըստ հեղինակի տպարանային ձեռագրերի (մեքենագրի)՝* **մի քանի, մի քանիսը, մի քիչ, ի վեր, ի տես, վեր կացա, ոչ ոք, ճյուղեր** *և այլն։ Բայց այս և նման ուղղումները ներկա ծանոթագրություններում ներկայացված չեն։*

*Այս բաժնում ևս ուղղումները ներկայացված են հետևյալ կերպ. սկզբում տրրված է ուղղված բառի կամ հատվածի էջը և տողը, ապա օգտագործված գլխավոր աղբյուրում այդ բառի կամ հատվածի անճիշտ ձևը, որից հետո նշված է, թե ըստ որ աղբյուրի է կատարված ճշտումը, և տրված է բառի կամ հատվածի ուղղված տարբերակը, որ տեղ է գտել հատորում հրապարակված բնագրի մեջ։*

### ՄԻՐՀԱՎ
### *(էջ 405)*

**Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի:**

### ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿ
### *(էջ 414)*

**Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի: Կատարված ուղղումներն են.**

**էջ 417, տող 25. Ըստ Մժ-ի և ՏՁ-ի՝** *ոմանց ծնողներին էլ ճանաչում*—**ուղղված է ըստ ԽՀ-ի՝** *ոմանց ծնողներին էլ էի ճանաչում* **(վերջին՝ ՍՑՍԺ-ի տարբերակում՝** *ոմանց ծնողներին ճանաչում էի*)։

**էջ 424, տող 29. Ըստ Մժ-ի** *լուսից*—**ուղղված է ըստ ԽՀ-ի տարբերակի և ՏՁ-ի՝** *լույսից*։

**էջ 426, տող 9. Ըստ Մժ-ի՝** *իրանց*—**ուղղված է ըստ ԽՀ-ի տարբերակի և ՏՁ-ի՝** *իրենց*։

## ՍԱԲՈՒ

(*էջ 432*)

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի: Կատարված ուղղումներն են.

էջ 434, տողեր 11—12. Ըստ Մժ-ի և ՏՄՕ-ի՝ *Մազ է բսնում սրտոսկրներք վրա*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *Մազ է բսնում այտոսկրների վրա* (վերջին՝ Աժ-ի տարբերակում—*մազ է պատել այտոսկրներին*)։

էջ 436, տող 7. Ըստ Մժ-ի և ՏՄՕ-ի *Երբ Արաքսը ջուր էր զատում*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *Երբ Արաքսը ջուր էր ցայտում* (վերջին՝ Աժ-ի տարբերակում՝ *Արաքսի ջուրը ցողեց պղտոր կաթիլներ*)։

էջ 437, տող 33. Ըստ Մժ-ի և ՏՄՕ-ի *մարդիկ գերաններ են կաղնահատ անում*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *մարդիկ գերաններ են կացնահատ անում* (ըստ վերջին՝ Աժ-ի տարբերակի՝ *մարդիկ գերաններ են կացնահատում*)։

էջ 438, տող 1. Ըստ Մժ-ի և ՏՁ-ի՝ *Մյուս ափին Իրանի լերկ ապառաժներ են*—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ *Մյուս ափին Իրանի լերկ ապառաժներն են* (ըստ վերջին՝ Աժ-ի բնագրի՝ *...ապառաժներն են*)։

## ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

(*էջ 439*)

Տպագրվում է ըստ Մժ-ի բնագրի: Ուղղում.

էջ 439, տող 25—էջ 440, տող 1. ըստ Մժ-ի՝ *կտուցները հնօրյա զուրի պես կեռ*—ուղղված է ըստ ՏՁ-ի՝ *կտուցները հնօրյա թուրի պես կեռ*։

## ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

(*էջ 453*)

Տպագրվում է ըստ ԱՁժ-ի բնագրի: Ուղղված է մի քանի վրիպակ և ձեռնայլ բառաձևը (որ երևի նույնպես վրիպակ է).

էջ 463, տող 20. Բնագրում՝ *հոտրտում էր*—ուղղված է՝ *հոտոտում էր*։

## ԲՐՈՒՏԻ ՏՂԱՆ

(*էջ 469*)

Տպագրվում է ըստ ՆՈՒ 1931, գիրք 2-ի բնագրի: Կատարված են ձեռնայլ մասնակի ուղղումները.

էջ 476, տող 4. Բնագրում՝ *կուզե-կուզ*—ուղղված է ըստ նույն բնագրում բառի այլ գործածության (նույն էջ, տող 17)՝ *կուզեկուզ*։

էջ 476, տող 31—32. Բնագրում՝ *բշտիկներ են առաջացնում*—վրիպակ պետք է, լինի, ուղղել ենք՝ *բշտիկներ են առաջանում*։

էջ 476, տող 33. Բնագրում՝ *կպչել են*—վրիպակ է, ուղղված է՝ *կպել են*։

էջ 479, տող 7. Բնագրում՝ *փոփրացող քամու*—ուղղված է՝ *փոփոխացող քամու*:

էջ 480, տող 7. Բնագրում՝ *խշալով*—ուղղված է ըստ նույն բնագրում բառի այլ գործածության (էջ 479, տող 9)՝ *խշշալով*:

էջ 488, տող 10. Բնագրում՝ *ծածկվել է ոսկորների կույտը*—վրիպակ պետք լինի, ուղղված է՝ *ծածկել է ոսկորների կույտը*:

էջ 494, տող 15—16. Բնագրում՝ *հոգնած աչքերով լույս պիտի նայի*—վրիպակ է, ուղղված է՝ *հոգնած աչքերով մինչև լույս պիտի նայի*:

էջ 496, տողեր 3—4. Բնագրում՝ *քամին իրար էր խառնվում թևերը*—վրիպակ է, ուղղված է՝ *քամին իրար էր խառնում թևերը*:

## *ՍԵՎ «ՀԱՑԸ»*

*(էջ 501)*

Տպագրվում է ըստ ՆՈՒ 1931, գիրք 1-ի բնագրի: Կատարված են մի քանի աննշան ուղղումներ (ուղղագրական բնույթի և վրիպակների ճշտում):

## *ՍՊԻՏԱԿ ՋԻՆ*

*(էջ 532)*

Տպագրվում է ըստ ՍԶԺ-ի բնագրի: Կատարված են մի քանի աննշան ուղղումներ, ինչպես.

էջ 536, տող 11. Բնագրում՝ *սպրդնած*—ուղղված է՝ *սփրթնած*:

էջ 537, տող 30. Բնագրում՝ *հավատանց*—ուղղված է՝ *հավատա*:

## МИНА—БИБИ

*(էջ 549)*

Տպագրվում է ըստ *«Заря Востока»*, 1925, նոյեմ. 5, № 1021-ի բնագրի: Կատարված են վրիպակների ուղղումներ, այդ թվում.

էջ 551, տող 19—20. ըստ «Զարյա Վոստոկայի»՝—*Ступай, ступай, я чай, мать уже приготовила завтрак—ուղղված է՝—ступай, ступай на чай, мать уже приготовила завтрак (ՄԺ-ի բնագրում՝* —Գնա՛, գնա՛ տուն... նանին հիմա չայը գցած կլինի...,— *էջ 100, տողեր 12—13)*:

էջ 552, տող 10. Ըստ «Զարյա Վոստոկայի»՝ *Тетя Шарнаш*—ուղղված է ըստ ՄԺ-ի բնագրի՝ (էջ 101, տող 4)՝ *Тетя Шармах*:

էջ 552, տող 25. Ըստ «Զարյա Վոստոկայի»՝ *Онжик показались странными его белые руки—ուղղված է՝ Онжик показались странными его белые зубы (ՄԺ-ի բնագրում՝* Անժիկի աչքին ընկավ նրա սպիտակ ատամները,— *էջ 101, տող 19)*:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Երկեր | Բնագրային տարբերակներ | Ծանոթագր. |
|---|---|---|---|
| Ինստիտուտի կողմից | 5 | | |
| **Մթնաձոր** | 9 | 561 | 609 |
| *Մթնաձոր* | 11 | 562 | 616 |
| *Վանդունց Բադին* | 18 | 564 | 621 |
| *Աքարում* | 39 | 568 | 623 |
| *Այս սարի լանջին...* | 46 | — | 623 |
| *Ծիրանի տափ* | 63 | 569 | 624 |
| *Միրհավ* | 72 | — | 627 |
| *Հանավանք* | 84 | 570 | 630 |
| *Գյուլբահարի համար* | 90 | 571 | 632 |
| *Մինա բիբին* | 97 | — | 633 |
| *«Խաղլացավ»* | 107 | 571 | 634 |
| *Ջորբան* | 113 | 572 | 634 |
| *Օրանջիա* | 121 | 572 | 635 |
| *Մրոց* | 127 | 572 | 635 |
| *Մթնաձորի «չարքը»* | 133 | — | 636 |
| *Խոնարհ աղջիկը* | 145 | — | 637 |
| *Լառ-Մարգար* | 162 | 573 | 641 |
| *Սարու* | 173 | — | 642 |
| *Ալպիական մանուշակ* | 179 | — | 645 |
| **Սև ցելերի սերմնացանը** | 191 | 573 | 647 |
| *Ծիրանի փողը* | 193 | — | 648 |
| *Նամակ ռուսաց թագավորին* | 206 | — | 649 |
| *Բրուտի տղան* | 222 | — | 654 |
| *Սև «հացը»* | 257 | — | 657 |
| *Սպիտակ ձին* | 285 | — | 657 |
| *Պրովինցիայի մայրամուտը* | 310 | — | 658 |
| *Սև ցելերի սերմնացանը* | 327 | 574 | 659 |
| **Ակծերը** | 339 | 575 | 660 |
| *Հյումբաթի ձոր* | 341 | 575 | 660 |
| *Տիգրանուհի* | 349 | 580 | 662 |
| *Եվ բատրակը թույլ տվավ՞ իրեն...* | 355 | 582 | 663 |
| *Մուրոյի «զրուց»-ը* | 360 | 583 | 663 |
| *Ջորերի լույսը* | 367 | 585 | 665 |
| *Անձրևը...* | 375 | 586 | 665 |
| *Մի անգամ հոկտեմբերի 25-ին...* | 380 | 587 | 666 |
| *Քեռի Դավոն* | 390 | 590 | 667 |
| **Այլ խմբագրումներ** | 403 | 592 | 668 |
| *Միրհավ* | 405 | 592 | 668 |
| *Խոնարհ աղջիկ* | 414 | 593 | 668 |
| *Սարու* | 432 | 596 | 669 |
| *Ալպիական մանուշակ* | 439 | 598 | 669 |
| *Նամակ ռուսաց թագավորին* | 453 | — | 669 |
| *Բրուտի տղան* | 469 | — | 669 |
| *Սև «հացը»* | 501 | — | 670 |
| *Սպիտակ ձին* | 532 | — | 670 |
| Мина-Биби | 549 | — | 670 |
| **Բնագրային տարբերակներ** | 555 | | |
| **Ծանոթագրություններ** | 603 | | |
| *Բակունցի երկերի այն հրատարակությունները, որոնք հիշատակված են հատորում* | 605 | | |
| *Պայմանական հապավումներ* | 606 | | |

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ
АКСЕЛЬ БАКУНЦ

# Երկեր
Հատոր I

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարիչ
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ
Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՎՖ 05510 Պատվեր 409 Հրատ. 4161 Տպաքանակ 20.000

Հանձնված է արտադրության 11/V 1975 թ.։ Ստորագրված է տպագրության 28/IV 1976 թ.։ Տպագրական 42,0 մամուլ+4 ներդիր, պայման. 39,1 մամուլ, հրատ. 31,13 մամուլ։ Թուղթ № 1, $60\times84^1/_{16}$։ Գինը 2 ռ. 16 կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24
Издательство АН Арм. ССР, Ереван 19, Барекамутян 24
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24